Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

7580
7581

329.14
4L-29

[illegible]010

Uh.S.

329.14
Վ-29

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

ՎԵՐԱԾՆՈՂ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ՄԵՐ ԴԵՐԸ

(ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

I

Հրատ.
Հ. Յ. Դաշնակցութեան

1910
ԺԸՆԵՎ

17799
17800

2/18/24

2002

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍԽՀ — Арм. ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

93527-ԱՐ

1662-2002

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ

ԴԷՄՔԵՐ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԳԼԽԱՒՈՐ ՀԻՄՆԱԴԻՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

(Նահատակուած 1905 թ.)

Տես գրքի 22, 55, 153, 407 երեսները:

Կենսագրութիւնը եւ գործերը տես „Դրօշակի" հրատ. գրքոյկի մէջ՝ *„ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՄՏՔԵՐ"*:

ՀՍՍՌ–Арм. ССР

ՇԱՐԺՄԱՆ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ

ՍԻԲԻՐ

ԿՈՒԿՈՒՆԵԱՆ ԽՄԲԻ ՄԻ ՀԱՏՒԱԾԸ

Սիբիր աքսորուած՝ ռուս-թրքական սահմանագլխի ծանօթ ընդհարումից յետոյ (1890 թ.: Խմբի անդամներից շատերն արդէն նահատակուած են:

1. Սարգիս Կուկունեան՝ Նիժեցի, 2. Կոստանդին Լիսինեան՝ սղնախեցի, 3. Ռուբէն Յովհաննիսեան՝ թիֆլիսեցի, 4. Մանուկ Գալստեան՝ մշեցի, 5. Իլյաս Մինասեան՝ խնուսցի, 6. Աւետիս Մարտիրոսեան, 7. Ս. Յարութիւնեան, 8. Մկրտիչ Հանի Դանիէլեան. 9. Մանուկ Գալստեան՝ մշեցի, 10. Դօրօեան՝ մշեցի. 11. Աւետիս Մանուկեան՝ բասենցի, 12. [illegible] Դաւթեան՝ բասունցի (պարսկական կռիւների հերոսը), 13. Զալչեան, 14. Մուրատ Ղարամանեան՝ հոռոմցի, 15. Հանի Կարապետ Բալչեան՝ Տ. Հայ, 16. Ռուբէն Դերձիկեան՝ Տ. Հայ. 17. Բարսեղ Գամանչեան, 18. Վարդան Բոշեանց՝ շիրակեցի, 19. Մինաս Օզբազեանց՝ կարնեցի, 20. Պետրոս Գրիգորեան՝ Տ. Հայ, 21. Մովսէս Մելքումեան՝ գեառարցի, 22. Արգամ Պետրոսեանց՝ Տ. Հայ, 23. Գրիգոր Էմմէնչեան՝ ախալցխացի:

Տես գրքի 61 երեսը: Մանրամասներ՝ „Դրօշակի" հրատարակած բրօշիւրի մէջ՝ „Կուկունեան խմբի արշաւանքը":

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

ՏԱՐՕՆ· ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ· ԿՈՎԿԱՍ

(Կենսագր· տես «Դրօշակի» մէջ

Սերոբ
Նահատակուած 1899 թ.
(Եր. 51)

Սաքօ
Վախճանուած 1908 թ.
(Եր. 51, 52, 53)

Հրայր
Նահատակուած 1904 թ.
(Եր. 47, 48, 49)

ԴԱՐԱՆ
ЛИОТЕКА

ԿԱՐԻՆ, ՄԱՐԶՈՒԱՆ, ՍԱՍՈՒՆ

Արամ Արամեան
Կախուած 1899 թ., Էրզրում
(Եր. 40, 41)

Բարսեղ Զաքարեան (հնչակեան)
Նահատակուած 1893, Մարզուան
(Եր. 44, 45)

Վահան -- Մանուէլեան
Նահատակուած 1904 թ., Սասուն
(Եր. 49, 50)

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴ.
Гос. Библ.
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Ա բ ր օ
Թաղուած Սասնոյ ձիւների տակ, 1896 թ.

Աւօ — Մալօյեան
Մահացած բուքի մէջ, սահմանագլխ. 1896 թ.

Ե ր կ ա ր
Նահատակ. 1904 թ., Արճէշի կռուում

Վամիարեան
Նահատակուած 1905 թ. Շուշայ կռւում

Կարօ-Աստրախանցի
Կախուած 1908 թ., Դումբաձէի հրամանով

ԳՐԱԴԱՐԱՆ
...ИОТЕКА
АРМ. ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Վաղարշակ (Կայծակ)
Նահատակուած 1904 թ.

Խ ա Ճ
Նահատակուած 1904 թ.

ԲԱՍԵՆԻ ԿՌԻՒՆԵՐԸ

„ՏԱՐՕՆԻ ՎԱԳՐԸ ԵՒ ԻՐ ՁԱԳՈՒԿՆԵՐԸ“

Աւետիս (կրտսեր որդին) **Սերոբ** (հայրը) **Յակոբ** (մեծ որդին)

Նահատակուած երեքով Բասենի ճակատամարտում, 1904 թ.

ԳՐԱԴԱՐԱՆ
ССР

Տ Ե Ր Ս Ի Մ

Ք Ե ռ ի
Կախուած 1907 թ., Երզնկա

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՅԿ. ՍՍՌ

ԿՌԻՒՆԵՐ ՏԱՐՕՆՈՒՄ

Գէորգ Չաւուշ
Նահատակուած 1908 թ.

ԷՋ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Ջ ն դ օ

Համերաշխութեան զինուոր Սայդօի եւ Ջաւէնի հետ դաւաճանօրէն խողխողուած՝ իրենց հիւրընկալող Քիւրդ բէկի բնակարանում: (1907 թ.):

ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека

ՏԱՃԿԱԿԱՆ ԲԱՍՏԻԼԻ ԶՈՀԵՐԻՑ

Ս. Չըկգեօզեան

Մեռած թոքախտից Աքիայի բանտում, 10 տարւայ բերդարգ. յետոյ, 1908 թ.

БИБЛИОТЕКА

ԲԱՆԿ-ՕՏՏՕՄԱՆ, ՍԱՄԱԹԻԱ, ԽԱՆԱՍՈՐ

Բաբկէն-Սիւնի
Նահատակուած 1896 թ.

Գ ն ո ւ ն ի
Նահատակուած 1896 թ.

Կարօ-Զօրեան
Նահատակուած 1897 թ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴ.

ԴՐԻԱԳ ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ

(ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿՌԻՒՆԵՐԸ)

Պետօ
Նահատակուած 1906 թ.

Վազգէն
Նահատակուած 1908 թ.

Մարտիկ (հնչակեան)
Նահատակուած 1896 թ.

Աւետիսեան (արմենական)
Նահատակուած 1896 թ.

ՀԱՅ ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԻՒՆ

(ԿՌԻՒԻ ԴԱՇՏՈՒՄ ԵՒ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԻ ՎՐԱՅ)

(*Տես գրքի 66, 67 երեսները*)



Պետօ Սուրմջեան
կախուած 1901 թ., 9 դեկտ.



Սօխօլ (Ցանաստ. 1901 թ. Արիխնոմակի մօտ)

ՀԱՅ-ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Մ ե ր ջ ա ն օ վ

Կախուած Պետօի եւ Թոռոսեանի հետ Ադրիանուպոլսում, 1901 թ. 9 դեկտ.

ՅԵՏԱԴԱՐՁ ԱԿՆԱՐԿ

Կուլտուրական եւ քաղաքական վերածնութիւն.—Վերջինը՝ տրամաբանական շարունակութիւն առաջինի.—Ուժ եւ իրաւունք.—Հայ մտաւոր կազմակերպութիւնը, նրա միսիան. — Թիւրքիայում, Ռուսաստանում, Պարսկաստանում. — Մօտիկ անցեալը. — Դիւանագիտութիւնը եւ մեր դասը. —

Խօսենք մենք և „Հայրենիքի վերածնութեան" մասին, խօսենք նաև — գէթ ընդհանուր ու թռուցիկ ակնարկներով — մեր կատարած ու կատարելիք դերի մասին, խօսենք առանց ունայնամտութեան; բայց և առանց կեղծ համեստութեան։

„Վերածնունդ" է — ոչ միայն մտաւոր-կուլտուրական, այլ և քաղաքական-հասարակական։ Երկու հօսանքները վաղ թէ ուշ գտնում են իրար՝ ազգայնական էւօլիւցիայի միևնոյն մեծ աւազանի մէջ։ Մէկը առանց միւսի թերի է, անուժ, արատաւոր։

Քաղաքական ինքնիշխանութիւնը, առանց ներքին կուլտուրական վերածնութեան՝ նախնի բարբարոս վիճակն է, որ այսօր վերարտադրում են աֆրիկեան դահօմէնները, Մարօկկօն, Չինաստանը և ուրիշ անթիւ կիսավայրենի „ազգութիւն-պետութիւններ"։

Բայց և ներքին կուլտուրական վերա-

ծնութիւնը, եթէ զուրկ է միանգամ ընդմիշտ ինքնօրինութեան, քաղաքական ինքնիշխանութեան բարիքներից՝ անյոյս, երբեմն մի վիճակ է, որ չի կարող յարատեւօրէն ապահովել մի ազգի ազատ, ներդաշնակ ու ամբողջական զարգացումը։

Մէկը միւսի անհրաժեշտ լրացուցիչ..

Մէկը—մտաւոր-կուլտուրական վերածնունդը—մենք ապրում ենք արդէն տասնեակ տարիներից ի վեր և մինչև իսկ սիրում ենք յաճախ հպարտանալ նրանով հանդէպ օտարների և յետամնաց դրացիների։ Իրենք օտարները — Հաքստհաուզէններ, Բօլլէն Ժակմեններ, Ջեյմս Բրայսներ — յաճախ շեշտել ու գրւատել են „հայ առաջադէմ տարրի" դերը խաւար Արևելքում և հիացումով արձանագրել նրա մտաւոր-քաղաքակրթական սրարշաւ առաջադիմութիւնը։ Դեռ 1860-ի „Ազգային Սահմանադրութեամբ" հայ տարրը Տաճկաստանում տւեց արդէն իր շրջապատող ցեղերին Self government-ի, ինքնավարութեան մի հրահանգիչ օրինակ և դրանով, կարելի է ասել, մի անգամ ևս շեշտեց իր յատուկ առաքելութիւնը Արևելքում.. Առաջադիմութեան, մտաւոր վերածնութեան հոսանքն այնքան ուժեղ էր, որ առիթ էր տալիս Հաքստհաուզէնի պէս հռչակաւոր ճանապարհորդ-սօցիօլօգին՝ յայտարարելու, թէ հայը միակ քրիստոնեայ ժողովուրդն է Տաճկաստանում, որ ընդունակ է կազմակերպւելու, իբրև ճշմարիտ հասարակութիւն։

Չը յափշտակւե՛նք օտարների այդ ներբողալի ու չափազանցրած յայտարարութիւններով, մանաւանդ որ, աւա՜ղ, նրանք վերաբերում են վաղուց անցած օրերին. դա 50 տարի սրանից առաջ էր, մի պատկառելի սերնդի օրով.—մի սերնդի՝ որի առջև նսեմանում է թիւրքա-

հայ մտաւորականութեան արտասուելի ներկան։ Այդ ներկան՝ գռեհկութեան տիրապետութիւնն է մտքի ու զգացումի աշխարհում, Թայֆայական այլասերումը, կղերականութեան յարձակողական „ռըվանշը“, արեւմտեան թարմ հոսանքի գրեթէ կատարեալ բացակայութիւնը... Զանց ենք առնում յարգելի բացառութիւնները։ Քաղաքական վերածնութեան մեծ վայրկեանը գտնում է, տարաբախտաբար, փոքրիկ սերունդ...

Այո՛։ Մտաւոր-կուլտուրական վերանորոգման հոսանքը, որ մօտ հարիւր տարուց ի վեր շարժուել է ռուսահայ, թիւրքահայ և պարսկահայ հօրիզոններում, որ տուել է ստեղծագործող մտքի ու երևակայութեան պատկառելի հարստութիւններ, որ հիւրընկալել է իր ծոցում Աբովեաններ, Ալիշաններ, Խրիմեաններ, Րաֆֆիններ ու Արծրունիններ — այդ մեծ, փառահեղ հոսանքը չէր կարող ինքնիրեն բաւել, չէր կարող լինել մի տեսակ ինքնանպատակ, այլ նա միայն մի միջոց էր դէպի աւելի մեծ, աւելի դժւարին նպատակը — դէպի քաղաքական վերածնութիւնը։

Ազգը ոչինչ է կամ գրեթէ ոչինչ, երբ նա չի օժտուած պետականութեան, քաղաքական ինքնիշխանութեան ստորոգելիներով։ „Ազատ զարգացման“ իրաւունքը ոչինչ է կամ գրեթէ ոչինչ, քանի դեռ ազգային մարմինը կը դեգերէ անպատիւ հպատակութեան մէջ հանդէպ գերիշխող մի տարրի, քանի դեռ նա ստիպուած կը լինի իր շարժման իւրաքանչիւր քայլափոխում համակերպել օտար կամքերի, հրամանների ու հրահանգների...

Արդարև. անցեալ դարի 50-ական թւականներում, իրենց իսկ թագաւորների բերնով հռչակուած „ազգայնութեան սկզբունքը“ (*le principe des nationalités*)

ուսուցանում էր, որ իւրաքանչիւր ազգ, որքան էլ լինի նա փոքրաթիւ, սակաւանդամ՝ ձգտում է բնականօրէն իր բաժին մասնակցութիւնն ունենալ քաղաքական իշխանութեան, պետական և վարչական մեքենայի մէջ, ձգտում է, ուրիշ խօսքով, ինքը վարել իր սեփական ճակատագիրը: Քաղաքական անկախութիւն, ինքնօրինութիւն (autonomie), Փէդէրացիա, տեղական, գաւառական ինքնավարութիւն և՛ն — դրանք այլևայլ ձևերն ու արտայայտութիւններն են „ազգ-պետութեան“ այդ անկապտելի իրաւունքի: Նայեած միջավայրին, հանգամանքներին՝ ազատագրուած ազգութիւնները իրագործել են այս կամ այն ձևը, իսկ նրանք, որոնք դեռ չեն իրագործել, կռւում են այսօր կատաղի նախանձախնդրութեամբ — Աւստրիայում, Ունգարիայում, Գերմանիայում, Բրիտանիայում, Ռուսաստանում — յանուն այդ սուրբ իրաւունքի:

Եւ ահա նոյն իրաւունքի հրամայական պահանջն էր, որ ժամանակին ասպարէզ կոչեց Հայ յեղափոխական կազմակերպութիւնը: Նա եկաւ լրացնելու Ալիշանների ու Աբովեանների գործը: Հայոց վերածնութեան բազմապիսի ռահվիրաները նպաստեցին — ոմանք առնաբար, գիտակցօրէն, ուրիշները թերևս ակամայ, անգիտակցօրէն — արտադրելու յեղափոխական և դեմօկրատ (ժողովրդապետական) այն հոսանքը, որ այսօր անձնաւորուած է Հայ մարտական կազմակերպութեան մէջ:

„Սեպարատիզմ“, անջատականութիւն չէր գրուած այդ վերջինի դրօշի վրայ: Հայ գիտակից մտաւորականութիւնը վաղուց արդէն հրաժարուել էր անիրագործելի և վտանգաւոր ցնորքներից. „ազատ, վերածնուած Հայրենիքը“ նա ըմբռնում էր, որպէս անբաժան մի հատուած համաօսմանեան, համառուսական, համապարսկական

օրգանիզմի, որպէս մի հատուած, որ պահանջում էր իր ուրոյն տեղը, իր ազգային իրաւակարգը՝ ընդհանուր, համապետական իրաւակարգի սահմաններում։

Կռի՛ւ — յանուն իրաւունքի։ Բայց... Macht geht vor Recht — վաղուց հռչակել են Երինգներն ու Լասսալները... Ուժն ընթանում է իրաւունքից առաջ, ուժը, կոպիտ, բռնի ուժը, պէտք է միշտ սպասաւորէ իրաւունքին, այդ վերջինի յաղթանակն ապահովելու համար։ Այդպէս էր ասում աշխարհի փորձը. լոկ մտաւոր, քաղաքակրթական առաքինութիւնները դեռ բաւական չէին — պէտք էր ստեղծել իրական ուժ...

Հ. Յ. Կազմակերպութիւնը այդ ուժն էր։ Ահեղ, ամենայաղթ մի զօրութիւն չէր դա — և մեր գործիչները չէին էլ տարուած այդպիսի ցնորքով։ Խիստ սակաւ են պատմութեան մէջ այնպիսի դէպքեր, ուր ստրուկ ժողովուրդները փիզիկապէս, ճակատ առ ճակատ պատերազմի մէջ յաղթահարել են իրենց բռնաւոր հակառակորդին։ Բայց երբեմն, մի չնչին, արիասիրտ փոքրամասնութիւն աջողել է, մի քանի յանդուգն ժեստերով, մի քանի ազդու, շեշտակի հարուածներով՝ շանթահարել իշխողներին, „յեղափոխական վիճակ“ ստեղծել երկրի մէջ և մղել բռնապետութիւնը դէպի զիջում...

Երբ հայկական „խոհեմ, բարեմիտ“ չէզոքութիւնը Աբդուլ Համիդի ռէժիմի օրով մեղադրում էր հայ մարտական կազմակերպութիւնը դօնքիշոտութեան ու քաղաքական տհասութեան մէջ, երբ մեր բոլոր „ազգընտիր“ ասպետները — ինտելիգենտ և անուս, Ռուսաստանում և Թիւրքիայում — „հրաժարի՛մք ի սատանայէ, յեղափոխութենէ“ արտասանելով, ճառում էին „ուժերի ռէալ յարաբերութիւնների“ և անհաւասար կռուի մասին, շեշտում էին մեր փոքրութիւնը թշնամու

ճնշող զօրութեան հանդէպ և խարանում ու անարգում էին տաք տեղերից „խելառ, տաքգլուխ ըմբոստներին“, երբ մեր ուրիշ „քաղաքագէտ-փիլիսոփաները“ տարիների և տասնեակ տարիների ընթացքում խորիմաստօրէն պատճառաբանում էին „ընդհանուր, համազգային ապստամբութեան“ անհրաժեշտութիւնը, երբ նրանք թելադրում էին իրենց անդորր առանձնասենեակներից, թէ ժողովուրդը, յիրաւի, կարող է և պարտաւոր է կամաց-կամաց, լուիկ-մնջիկ պատրաստուել ու զինաւորուել, որպէսզի մի օր պայթէ ահեղ, հրաբղխային որոտումներով և տապալէ հակառակորդին, — նրանք բոլորն էլ անգիտանում էին վերոյիշեալ իրողութիւնները, անգիտանում էին պատմութիւնը։

Անգամ իտալական մեծ հայրենիքը, իր բազմամիլիոն ազգաբնակութեամբ, իր հոյատիպար Մաձձինիներով ու Գարիբալդիներով՝ անզօր էր Աւստրիայի դիմաց և վերստացաւ իր անկախութիւնը միայն Ֆրանսիայի աջակցութեամբ։ Թողնենք դեռ մի կողմ՝ բալկանեան ազգերին, թողնենք մի կողմ՝ և Կրետէի, Լիբանանի, Կուբայի ու այլ փոքրիկ հայրենիքների քաղաքական վերածնութեան այնքա՜ն հրահանգիչ օրինակները...

Հայ յեղափոխական կուսակցութիւնը սկզբից ի վեր, իր ամենօրեայ հոգսերի մէջ, իր ծրագրային ու տակտիկային խնդիրներում՝ միշտ ռէալիստ էր, իրապաշտ, հեռու ուտօպիական պատրանքներից, կանգնած կենդանի և անողոք իրականութեան հողի վրայ, գիտակ նաև պատմական ու սօցիօլօգիական իրականութեան։

Թիւրքիայում նա մղեց միշտ իր կռիւը, յենուած մի կողմից՝ հայ ժողովրդի, միւս կողմից՝ միջազգային դաշնագրութիւնների վրայ, միանգամայն հրահանգուած լինելով նոյն „պատմական իրա-

կանութիւնից", որ մարդկային արիւն-արցունքով շաղախուած դիւանագիտական յօդուածները եղել են միշտ արեւելեան ստրուկ ազգերի ազատագրական կռիւների մէջ մի տեսակ վճռող, իրաւարար, երրորդ գործօն, որ գրեթէ միշտ, դրդուած այս կամ այն շարժառիթներից, վճռել է յօգուտ զոհերի, ի վնաս դահճի...

Ռուսաստանում... Հայ մարտական կազմակերպութիւնը այն փոքրիկ ու հոյակապ խիզախն էր, որ բեմ ելաւ առաջին անգամը զանգուածօրէն մի վիթխարի բռնապետութեան դէմ, մի ահաւոր վայրկեանի մէջ, երբ Պլէվէի պէս գազանն էր վարում նրա ղեկը, երբ տակաւին հանգիստ էր ռուս յեղափոխական մթնոլորտը, առանց խոշոր ալէկոծումների, մասսային խլրտումների...

Ո՛չ, անշուշտ, ոչ. երբ 1903-ի աշնան օրերին Դաշնակցութիւնը—դարձեալ բոլոր „խոհեմների" անախորժ վայնասունի մէջ—տանում էր ժողովրդին կօզակների սւինների դէմ, երբ նա պատժի սպառնալիքով ոտքի էր հանում նաև մեր մեղկ ու վեհերոտ հոգևորականութիւնը, մղում էր նրան դէպի բողոք ու դիմադրութիւն, թէկուզ արեան ու հալածանքի գնով... նա չէր զիջանում ինչ որ կարմիր ցնորքների, չէր հնազանդւում ինչ որ խելառ ու ռազմամոլ դօնքիշօտութեան բնազդի,—նա չէր խիզախում յաղթահարել ճիրանաւոր Գազանին... „Ուժերի ռէալ յարաբերութիւնները" գուցէ իրօք մոռցուած էին... Բայց յամենայն դէպս, նրանք մոռցուած էին ի պատիւ հայ ժողովրդի և ի պատիւ նրա ղեկավարների. և եթէ յետագայում Պետերբուրգի կառավարութիւնը „շնորհ արեց", „բարեհաճեց"—մեր տիրապաշտ մամուլի ար-

տայայտութեամբ—վերադարձնել հայ ժողովրդին նրա անկապտելի սեփականութիւնն ու մի քանի ազգային ստացւածքները, եթէ յետագայում ցարիզմի կովկասեան սպասաւորները հարկադրւած եղան փոքր ինչ աւելի զգուշաւոր դիրք բռնել դէպի հայութեան խղճի, մտքի ու կուլտուրայի խնդիրները, եթէ փոխարքայ Վօրօնցօվ-Դաշկօվ իր գահակալութեան առաջին օրերից իսկ պարտք համարեց հրապարակով նշաւակել գօլիցինեան քաղաքականութիւնը, իբրև վնասակար ու աղէտալի *)—այդ պատմական volte-face-ի պատճառն այն չէ, որ իբր ցարի կառավարութիւնը յանկարծակի, ինքնաբերաբար որոշել էր քաղցր աչքով նայել հայ ժողովրդի վրայ... Պատճառն այն էր, որ հայ ժողովրդական կազմակերպութիւնը 1903-ին ստեղծել էր իրօք „յեղափոխական կացութիւն", որի առջև գօլիցինեան խենթ ու անզուսպ մոլեգնութիւնն անգամ յետ էր նահանջել ճարահատ: Պատճառն այն էր, որ յետագայ թւականներում, 1905—906-ին, թաթարական զուլումների չղթայազերծ բռնկումին՝ հայ կռւող կազմակերպութիւնը, միշտ յենւած ժողովրդային ընդհանրութեան վրայ, դիմագրաւեց մի այնպիսի ուժով ու աջողութեամբ, որ ստիպեց վերջ ի վերջոյ յետ նահանջել թէ դրացի անգիտակից խուժաններին և թէ նրանց գիտակից առաջնորդին, ներշնչողին — բռնապետութեանը: Այդ վերջինը տեսաւ մի օր, որ յեղափոխական մի կազմակերպութիւն, ծաւալելով հետզհետէ իր տիրական ազդեցութիւնը ամբողջ ազգի, ժողովրդի վրայ, դառնում էր օրէցօր աւելի և աւելի վտանգաւոր „ընդհանուր խաղաղութեան" համար, որ նա զինում ու մարզում

---

*) *Cette désastreuse politique de Golitzine!*... Այսպէս է արտայայտւել Կովկասի այժմեան կառավարչապետը 1906-ին, Լուիջի Վիլլարիի հետ ունեցած իր տեսակցութեան միջոցին:

էր ամբողջ հայ ազգաբնակութիւնը, ստեղծում էր մի տեսակ Միլիցիա, համաժողովրդական մի բանակ, որ այսօր կուրծք տալով թաթարական յորձանքին, վաղը, մի գեղեցիկ օր, կարող էր ուղղուել բուն իսկ թշնամու՝ բռնապետական նենգաւոր ու խառնակիչ ռէժիմի դէմ.

Ցարական բիւրոկրատիան, այո՛, մի օր սթափուեց և զգաց, որ դիւրին բան չէ կատակ անել մի ժողովրդի հետ, որ կարող է արտադրել և պահպանել իր ջերմագին համակրութեամբ մի այդպիսի կազմակերպութիւն։

Կովկասահայը միշտ հպարտութեամբ կը յիշէ այդ անզուգական — թէկուզ և տխուր — օրերը, երբ մի մեծ, նուիրական գաղափարի անունով, համազգային պաշտպանութիւնը վարելու նպատակով կատարւում էր Ռուսահայաստանի բոլոր ծայրերում մի հոյակապ զօրաշարժ, — մէկը, գուցէ հզօրագոյնը, այն սակաւաթիւ զանգւածային թռիչքներից, որոնք Վարդանանց պատերազմից ի վեր փոքր ինչ փայլ ու հրապոյր են հաղորդում մեր լացող, հեծկլտացող պատմութեան...

Դաշնակցութիւնը այդ զօրաշարժի հոգին էր և մարմինը։

Աւելի, արիւնի այդ օրերում՝ նա սովորեցրեց հային կռուել, ըմբոստանալ՝ նոյնիսկ ամենավտանգաւոր, արիւնարբու ճանաչւած ոսոխների դէմ, սովորեցրեց հարւածին աւելի ուժեղ հարւածով պատասխանել. „արժէքների վերգնահատման ու յեղաշրջման“ այդ օրերում՝ նա սրբեց հայ մարդու ճակատից այն պատմական արատը, որ յաւիտենօրէն աղաղակում էր նրա ստրկութեան ու դիւրաթեք համակերպութեան մասին, բարձրացրեց հայ գեղջուկին ու քաղաքացուն տրորւած և անարգւած էակի աստիճանից մինչև արժանաւոր, մարդավայել այն վիճակը, ուր նա կարող է քայլել ի տես իր խուժդուժ հարևանների՝ ոչ այլևս կորագլուխ, վեհերոտ ու թուլամորթ, այլ խրոխտ, ճակատը

բաց, գլուխը բարձր, որպէս ազատ, պատուաւոր մարդ, որպէս ռազմիկ-քաղաքացի։

Այդ մետամօրֆօզը — Դաշնակցութեան գործն էր։

Ա՜հ, թող այն անզուսպ դատախազները, որոնք այսօր գլխապատառ արշաւում են մեր դէմ և „հարուածում“, „վարկաբեկում“, „ոչնչացնում“, թող այն դաւաճան անզգայութիւնը (*inconscience*), որ ի դէմս հայութեան մշտադալար թափթփուկների ամենուրեք աղմկում է մթնոլորտը հակադաշնակցական լօզունգներով ու կոչերով. թող բոլոր նրանք, որոնք այսօր քննադատի ծիրանին հագած մի գերագոյն հաճոյք են զգում՝ վեր հանելու կեանքի հսկայ լաբիւրինթոսից մանր, գձուձ միջադէպեր կամ հանրային ուշադրութեանը մատնելու այս ու այն դաշնակցականի երևակայական արարքները — թող նրանք համարձակւին հիւսել իրենց մեղադրանքները պատմական մեծ, անմոռանալի այդ անցքերից. հիմնել իրենց ինսինուացիաները այդ հօյակապ ու պերճախօս դրուագների վրայ և քար գցել ղեկավարների ու ռազմիկների այն կուռ ու կազմ շարքերին, որոնք ոչ միայն Թուրքահայկական աշխարհադղորդ ճգնաժամին, այլ և Հայոց բովանդակ *Risorgimento*-ի, ազատագրական շարժման բովում քայլել են միշտ ժողովրդի հետ գրկախառնուած, բաժանել են նրա վշտերն ու տանջանքները, սիրտ տւել նրան օրհասական վայրկեաններում, սիրել նրան, սիրւել նրանից…

Քարերը շա՜տ ցած կ՚ընկնեն. նրանք չեն հասնի ազատութեան բանակի գարշապարին իսկ… *On ne crache pas sur les cimes de la montagne…*

Ռուսաստանում, այդպիսով, մի շարք արիւնոտ

թևականների իրողութիւնները ցոյց տուին բռնակալութեան ու անգիտակից հարևաններին, որ հայ ժողովուրդը, հայ յեղափոխական կազմակերպութիւնը, նոյնիսկ ռազմական տեսակէտից, չեն ներկայացնում այն „արհամարհելի քանակը", որ երևակայում էին նրանք՝ նախ քան դէպքերը։ Ընդհակառակը։ Դաշնակցութիւնը, յեղափոխական փոթորիկների այդ եզակի շրջանում, հանդէս եկաւ Կովկասի մէջ, որպէս ընդհանուր, համառուսական շարժման խոշոր գործօններից մինը, որի աջակցութեանը կոչ էին անում Ռուսաստանի, Լեհաստանի, Ֆինլանդիայի կուսակցութիւնները, և որը իր կողմից սիրով մտնում էր վերջինների հետ համերաշխ գործակցութեան բանակցութիւնների մէջ — այլևայլ մանր ու խոշոր կօնգրէսներում — յանուն ընդհանուր նպատակի ու յաղթանակի։

Պարսկաստանում... Ո՛րպիսի յուսահատ մաքառումներ, խանդավառութեան ու վհատումի ելևէջներ և թանկագին, անմոռանալի զոհեր... Ու դարձեալ հայ մարտական բանակը առաջապահ շարքերումն է, հայ ինտելիգենտ ռազմիկները միշտ քով քովի մահմեդական հռչակաւոր ռազմիկների, հրամանատարների հետ — ներշնչողի, թելադրողի, ղեկավարի պաշտօնում, մտաւոր ու բարոյական, նիւթական ու մարտական օժանդակի գործօն դերում...

Ապագայ պատմութիւնը միայն կը կարողանայ լիակատար լոյս սփռել Դաշնակցութեան խաղացած այդ դերի վրայ՝ Պարսկաստանի երկունքի տարիներում... մի դեր, որ ամենից աւելի անախորժ էր հիւսիսային բռնապետութեանը, որի առթիւ այնքան աղմուկ ու վայնասուն հանեցին Պետերբուրգի ու Թիֆլիսի կառավարչական շրջաններում... Ցարի՛զմը՝ ատող ամեն յեղափոխա-

թեան, ցարի՛զմը՝ գարշող ամէն վերիվայրումից, սահմանադրական ուրւականներից, չէր կարող, բնականաբար, հանդուրժել, որ սահմանակից մահմեդական պետութիւնները սթափւին, բարձրանան, փարին արեւմտեան քաղաքակրթութեան դրօշակին... Ի՛նչ ահաւոր հեռապատկեր էր, արդարեւ, պետերբուրգեան Բաստիլի համար՝ լինել բոլոր կողմերից պաշարւած սահմանադրութիւններով ու յեղափոխութիւններով. լինել իսպառ կղզիացած թէ քաղաքակիրթ եւ թէ նոյնիսկ կիսավայրենի աշխարհում... Ի՛նչ անողոք ու պատմական անակնկալ էր Պետերհօֆի կալանաւորի համար—տեսնել իր գոռոզ թագակիցներին, Բօսֆորի Մարդասպանին, Մեհմեդ Ալի Շահնշահին՝ մատնւած ի սաստ յեղափոխական փոթորիկների, գահավիժւած... մէկը դէպի սեւ, դժնդակ մոռացութիւն Սալօնիկեան վիլլայի մէջ, միւսը դէպի անարգ աքսոր Ռուսաստանի հարաւում...

Ահա թէ ինչու անկարելի էր հանդուրժել պարսկական վերածնութիւնը: Ահա թէ ինչու ցարի կառավարութիւնը ամէն բան արեց, բոլոր հնարաւոր միջոցներն ի գործ դրեց՝ խեղդելու համար փոքրիկ երկրի ազատական շարժումը, յաճախ նոյնիսկ ոտնահարելով քաղաքական այն դաշինքը, որ կապել էր Անգլիայի հետ:

Ի՞նչ զարմանք՝ որ Պարսկաստանի այդ մոլեգին ու յարատեւ երերումները ատամների կրճտոց հանեցին Թիֆլիսից մինչեւ Պետերբուրգ... ընդդէմ դարձաւ այն ժողովրդի, ընդդէմ դարձաւ այն կազմակերպութեան՝ որի մատը տեսնում են միշտ Ռուսաստանի դահիճները կովկասեան ու արեւելեան թատերաբեմում խաղացւող բոլոր խոշոր անցքերի մէջ:

Ի՞նչ զարմանք՝ որ մի այնպիսի կղզիացած իրողութիւն, ինչպիսին է դաշնակցական զօրավարի նշա-

նակումը Թեհրանի և շրջանի ոստիկանապետի պաշտօնում, կատաղութեան փրփուր էր հանում մի Իզվօլսկու բերանում, որ պարիզեան օրագրողի interview-ի միջոցին յայտարարում էր անհնարին գարշանքով, թէ պարսկական մայրաքաղաքը յանձնուած է մի „հայ անարխիստի քմահաճութեան“։

Ի՞նչ զարմանք, վերջապէս, որ ազատագրական այդ բուռն անցքերից յետոյ և տակաւին նրանց միջոցին հնչեց ամբողջ Ռուսաստանում ահազանգը Դաշնակցութեան դէմ, որ Դաշնակցութիւնը պետ. Դումայի հռչակաւոր „Կովկասեան հարցապնդումի“ կենտրոնն եղաւ ու տենդային վիճաբանութեան առարկան ամբողջ մի շարք նիստերի ընթացքում, որ աջակողմեան վոհմակները պահանջեցին հրով ու սրով ոչնչացնել „դաշնակցական ուրուականը“, որ կովկասեան կառավարչապետի ներկայացուցիչ բարօն Նօլդէն հանդիսաւոր զայրագնութեամբ հռչակեց մեզ, որպէս մի տեսակ միջազգային ահաւոր կազմակերպութիւն, որի դէմ պիտի մաքառել բոլոր ուժով... որ, վերջապէս, „ազատամիտ“ Վօրօնցով Դաշկօվը, տեսալով աջակողմեան այդ վայրենի հաւա՜րին՝ սկսեց անողոք հալածանքը ամբողջ հայ մտաւորականութեան դէմ...

Դաշնակցութեան „միջազգային“ բնաւորութիւնը իր դերն ունի այդ խելագար արշաւանքի մէջ և այդ հանգամանքը շեշտում էր նոյնիսկ Լօնդօնեան նշանաւոր օրգանը, Գլադստօնի Daily News-ը, որ անցեալ սեպտեմբերի 14-ի համարում, խարանելով Ռուսաստանի հակահայկական քաղաքականութիւնը, առաջ էր բերում իբրև դրա միակ պատճառ՝ Դաշնակցութեան կատարած դերը Թիւրքիայի ու Պարսկաստանի վերածնութեան գործում։

„Միջազգայի՛ն կուսակցութիւն“... Հետաքրքրականն

այն է՝ որ բարօն Նօլդէնները տալիս են մեզ այդ ածականը ոչ այն պատճառով, որ Դաշնակցութիւնը ընդունւած է միջազգային ընկերվարական ընտանիքի մէջ, այլ որովհետև նա կռիւ է մղում—գործօն, սիստեմատիկ, ստէպ յաղթական մի կռիւ — այն երեք պետութիւնների մէջ, որոնց սահմաններում շարժւում է հայ ժողովրդի—միևնոյն ազգի—ճակատագիրը…

Առաջ քաշենք մեր խորհրդածութիւնների թելը։

Այդպէս ուրեմն, հայրենիքի բոլոր երեք հատւածների մէջ, յաջորդաբար—նոյն անձնւէր թռիչքները, նոյն մեթօդիկ, նպատակաւոր աշխատանքը՝ ուժ տալ ամենուրեք քաղաքական վերածնութեան, նւաճել ամենուրեք պ ե տ ա կ ա ն ո ւ թ ե ա ն, իշխանութեան մի մասնիկը, ստեղծել ամենուրեք հարազատ ժողովրդի համար այն անհրաժեշտ պայմանները, այն քաղաքական-սօցիալական մթնոլորտը, ուր նա կարողանայ ազատօրէն զարգանալ, բարգաւաճել, միացած, ձեռք ձեռքի տւած դրացի, բախտակից ժողովուրդների հետ։

Այո, գալոց պատմութիւնը միայն կը կարողանայ ազատօրէն վերլուծել և, մանաւանդ, ը ս տ ա ր ժ ա ն ւ ո յ ն գ ն ա հ ա տ ե լ այդ բարդ ու դժւարին առաքելութիւնը, միսիան, որ ստանձնել է Դաշնակցութիւնը վերջին 20 տարիների ընթացքում։ Գուցէ երբեք, գուցէ ոչ մի տեղ մի յեղափոխական կազմակերպութիւն չի շարժւել այնքան ահռելի մի միջավայրում, չի մաքառել այնքան ծանր խոչընդոտների դէմ, չի ունեցել այնքան հսկայ կնճիռներ՝ լուծելու, այնքան պատնէշներ՝ խորտակելու, այնքան զոհեր՝ մատուցանելու…

Գուցէ երբէք, նոյնիսկ յունական ազատագրական շարժման հզօր ծփանքների մէջ, Յեղափոխութեան Աստւածը չի եղել այնքան դաժան, այնքան

անորոշ ու խստապահանջ դէպի մի կուռ ժողովուրդ, դէպի մի կուռ կազմակերպութիւն։ Ապահովաբար, ընթերցող, դուք չէք գտնի ամբողջ համաշխարհային պատմութեան մէջ մի շրջան, մի դրուագ, որ ցաւերի, տագնապների ուժգնութեամբ, ներգօրութեամբ (intensité) նըմանուէր մեր ապրած այդ 20-ամեայ ողբերգական անցեալին։ Դուք չէք գտնի մի այլ ժողովուրդ, որ դրուած լինէր ազատագրական պայքարի տեսակէտից այնքան ձախորդ պայմանների մէջ—պայմաններ աշխարհագրական, ցեղագրական և մանաւանդ քաղաքական, և մանաւանդ դիւանագիտական... Անդրադարձէք մի վայրկեան այն հօյակապ էպօպէի վրայ, որ խաղացուեց Թիւրքահայաստանում։ Մտաբերեցէք այն րիթմային ու խօլական թուիչքները, մերթ բերկրանքի ու խանդավառութեան, մերթ սրտաճմլք յուսահատութեան... Արդեօք կռուելու կորո՞վն էր, որ պակսեց մեզ։ Արդեօք ա՞յդ էր պատճառը թիւրքահայոց դատի սիստեմատիկ ու շառաչուն պարտութիւնների։ Արդեօք կա՞ր յոների, բուլգարների, կրէտացիների ի գործ դրած մեթօդի մէջ՝ որևէ բան, որևէ հիմնական յատկանիշ, որևէ բնորոշ առաւելութիւն, որ բացակայում էր մեր կիրառած մեթօդի մէջ...

Չը կար։ Մենք ևս ամեն բան փորձեցինք — բոլոր միջոցները, բոլոր մեթօդները։

Դաւադրութիւններ՝ որ ոչնչով պակաս չէին արևմտեան կարբօնարիական յղացումներից։

Ճակատամարտներ՝ որ ոչնչով պակաս չէին բուլղարական, նոյնիսկ յունական ճակատամարտներից։

Քարոզիչներ և ռազմական առաջնորդներ, որոնց առջև թերևս նսեմանային Լէվսկիներն ու Միաուլիսները։

Մի եզակի դիւցազներգութիւն, որի մասին արտաքին աշխարհը քիչ բան գիտէր, գրեթէ ոչինչ։ Դա մեր մե-

1662-2002
Гос. Библиотека

ծագոյն դժբախտութիւններից մէկն է եղել։ Հայաստանը շա՜տ էր հեռու մեծ ու բանուկ ճանապարհներից, քաղաքակրթութեան հօրիզոններից. ամեն ինչ խեղդւում էր այն խուլ, լքուած վայրերում—թէ տանջանքի հեծեծանքը և թէ հերոսութեան թռիչքները։

Քանի՞ եւրոպացի թղթակիցներ գնացին տեսնելու Զէյթունի և Սասունի գեղեցիկ ընդվզումները։—Եւ ոչ մէկը։ Եթէ երբեմն հայ կտրիճների գործողութիւնները հատուկտոր նկարագրուել են արևմտեան այս կամ այն օրգանի մէջ—դա էլ եղել է բոլորովին պատահաբար։

Հարկաւոր էր, որ 90-ական թւերի վերջերում, բախտի բերմամբ մի գերմանացի դօքտոր Բելք՝ գար հայկական բարձրավանդակի վրայ հնագիտական պեղումներ կատարելու, որպէսզի նրա միջոցով „Ս ե ր ո բ-Փ ա շ ա յ ի“ սխրագործութիւնների գէթ մի մասը արձագանք տար եւրոպական մեծ մամուլի էջերում (*Frankfurter Zeitung*, 1899 թ. մի շարք ֆելիետօններ՝ „*Armenische Streifzüge*“ խորագրով)։

Հարկաւոր էր, որ նոյնպէս դիպուածով մի գերմանացի պաստոր՝ Ֆիշեր՝ երևան գար 1897-ի ամառը թիւրք-պարսկական սահմաններում, որպէսզի Խանասորի արշաւանքը փառաբանւէր գերմանական մի հանդէսում (*Die Zukunft*, 1897 թ. „*Ein Sieg der Armenier*“), և համեմատւէր „Մօլտկէյեան կանոնաւոր ռազմափորձերի“ հետ։

Իսկ քանի՞ն են ականատես եղել Արաբօների, Դումանների, Վարդանների և Անդրանիկների յանդուգն արշաւներին, նրանց մղած անհաւասար ճակատամարտներին արիւնարբու աշիրէթների հետ... Պաշտօնական դօկումենտներն անգամ—„Կապոյտ“, „Դեղին“ գրքերը — գրեթէ միշտ լռութեամբ են անցել Հայաստանի մէջ կատարուած ապստամբական կռիւները,

կամ թէ յիշել են, խեղաթիւրելով նրանց էութիւնն ու նպատակը... Մէկը միայն դիւանագիտական այդ դօկումենտներից (1904-ի անգլ. Կապոյտ գիրքը) փորձեց աւելի ճշգրիտ լինել հայ ազատագրական շարժման մասին, թոթովեց մի քանի խօսք 1903-ի հերոսական ընդհարումների վերաբերեալ — Բասենի դաշտում — խօսքեր՝ յարգանքի ու հիացմունքի...

Ոչ, կուսելու կորովը չէր, որ պակսեց մեզ։ Եւ ոչ էլ պայքարի յարատեւութիւնը, յեղափոխական տոկունութիւնը։ Այդ կողմից գուցէ մենք շատերին էլ գերազանցեցինք։ Հայ մարտական կազմակերպութիւնը վերջին երկու դժոխային տասնամեակներում, կարելի է ասել, եղաւ կենդանի անձնաւորումը իր ժողովրդի կորովի, նրա սքանչելի տոկունութեան, նրա անօրինակ կենսունակութեան։

Վայրկեաններ կային, երբ նրան իսպառ մեռած էին հռչակում, բայց նա միշտ դուրս էր լողում պարտութեան ալիքներից և հասցնում էր թշնամուն նորանոր հարուածներ։

Մեծ ջարդերի ուրագանից յետոյ՝ մեզ ասում էին, թէ ամեն ինչ վերջացած է արդէն, հայ ժողովուրդը գետնատարած ու արիւնաքամ, հայ երիտասարդութիւնը իսպառ հնձուած, հայ յեղափոխական հոսանքը ցամքած... Բայց այդ տխուր օրերից յետոյ ըմբոստների բանակը—ի դէմս Հ. Յ. Դաշնակցութեան—ցոյց տուեց, անգամ իր շատ սահմանափակ միջոցներով, որ կարելի է ամբողջ տարիներով պահել Հայոց միջնաբերդ— Սասունը անկախ վիճակում և ապա ամիսներով կռիւ մղել այնտեղ կանոնաւոր զօրքի ու տասնեակ հազարաւոր քրդական աշիրէթների դէմ (1903—1904 թ.), մղել նոյն կռիւը միաժամանակ, կազմակերպուած արշաւա-

խմբերով, ամբողջ Հայկական բարձրավանդակի վրայ, Սասունին ձայնակցելու, երկրորդելու նպատակով…

Սասունը, այո, այս անգամ մենակ չը մնաց, մենակ, արիւնլուայ ու անարձագանք, ինչպէս 1894-ի սև թւականին։ Հայկական դիմադրութիւնը, բարբարոսաբար ճնշւած բարձր լեռներում, շարունակւեց պարտիզանական կռւի ձևով, դաշտերի վրայ և հեռագիրները անընդհատ ծանուցին եւրոպական մամուլին արիւնահեղ ճակատամարտներ ֆէդայիների ու զօրքերի միջև, մերթ Էրզրումի, մերթ Բիթլիսի, մերթ Վանի վիլայէթում։ Յիշենք Կ ա յ ծ ա կ ի ձիաւոր խմբի անմոռանալի ճակատամարտը Զ ի վ ի ն ի ա ւ ե ր ա կ ն ե ր ո ւ մ, 40 հազարի չափ զօրքերի ու քրդերի դէմ—որ խլեց մեզնից 25 քաջեր, թշնամու կողմից՝ հարիւրներ։ Յիշենք Ա շ ո տ Ե ր կ ա թ ի խումբը, նրա ռմբային կռիւը Արճէշի մօտ. Յիշենք Զ օ ր ի ու Մ օ ս ո ւ ն ի կռիւները, 102 դաշնակցականների արշաւը, զօրանոցների գրաւումը, քրդերի ու զօրքի մասսային ջարդը (27 զոհ միայն մեր կողմից)։ Յիշենք 61-ի արշաւախումբը, Ո ր ս ո ր դ ի ու Թ ո ր գ ո մ ի առաջնորդութեամբ, Օլթիի շրջանում, ոչ հեռու ռուսական սահմանագլխից—մի արշաւանք, որ այնքան ցնցող, ողբերգական վախճան ունեցաւ, գնդապետ Բըկօվի տմարդութեան շնորհիւ… Յիշենք, վերջապէս, Բասենի, Դալիբաբայի արիւնահեղ ընդհարումը, որի մի քանի մանրամասները գտնում ենք անգլիական „Կապոյտ գրքում" և որի միջոցին 150 հոգուց բաղկացած դաշնակցական արշաւախումբը 500-ի չափ զոհեր խլեց թշնամու շարքերից…

Եզակի թւական էր, — ամենազւարթ, „ամենայեղափոխական" թւականը հայ ազատագրական շարժման։ Ռազմի տենդը երիտասարդութեան մէջ հասել էր չը տեսնւած սահմանների. գուցէ երբէք հայոց լեռ-

նադաշտը վկայ չէր եղել այնքան կազդուրիչ, սրտապնդող տեսարանների, այնքան արագութեամբ իրար յաջորդող բուռն, հերոսական ճակատամարտների... Մշոյ դաշտից մինչև ռուսական ու պարսկական սահմանագլուխը -- ամենուրեք լսւում էր կուի շռինդը. Դաշնակցութեան „Թռուցիկները“ գերմարդկային ճիգ էին թափում օգնութեան հասնելու հոգեվարք լեռնավայրին, բայց ճանապարհը ամենուրեք՝ ցանած զօրքերով ու քրդական հրոսակներով: Հարկաւոր էր անսովոր վճռականութիւն ու խիզախութիւն՝ այդքան ահաւոր մի փորձութեան դիմագրաւելու—և այդ՝ գրեթէ միևնոյն ժամանակ, երբ Անդրկովկասը փոթորկւել էր եկեղեցական գոյքերի յափշտակութեան ուկազով, երբ այդպիսով Դաշնակցութիւնը գտնւում էր երկու ֆրօնտի վրայ կուելու սոսկալի անհրաժեշտութեան մէջ..

Եւ այնուամենայնիւ, հայ ժողովրդական կուսակցութիւնը պատմութեան դատաստանի առջև մեղապարտ չը մնաց, նա չը լքեց ոչ մէկը ժողովրդի նւիրական դատերից, նա արեց, ինչ որ կարող էր անել, նա տւեց իր ուժերի մաքսիմումը, որ, աւա՜ղ, դարձեալ բաւական չ՚եղաւ յաղթահարելու սուլթանական բանակի դիմադրութիւնն ու եւրոպական դիւանագիտութեան չարագործ անտարբերութիւնը... Բայց անգամ իր սահմանափակ միջոցներով, Դաշնակցութիւնը կարողացաւ պատւով դիմաւորել անցքերին. նա ստեղծեց Տաճկահայաստանում կանոնաւոր պատերազմական կացութիւն, նա շարժման մէջ դրեց ամբողջ չորրորդ զօրաբանակը և քրդական գրեթէ բոլոր աշիրէթները, նա ճանաչւեց պատերազմական կողմ: Մինչ հայ ռազմիկի, հայ ֆէդայու հռչակը տարածւում էր կայսրութեան ամենախուլ անկիւններում և մեր ամենաբիրտ

թշնամիներին անգամ՝ ներշնչում էր երկիւղ ու պատկառանք...

Եւ այնուամենայնիւ, մենք չը հնձեցինք այդքան հերոսական ճիգերի արդիւնքը. Սասունի երկրորդ ապըստամբութիւնն էլ վիժեց: Եւրոպան նորէն մատնեց մեզ սուլթանական եաթաղանին և խանդավառութեան սանձարձակ թռիչքներին միանգամ ևս յաջորդեց հայ շարքերում — անողորմ յուսախաբութիւն...

Մեզ ասացին այդ ցաւագին պարտութիւնից յետոյ ևս, թէ ամեն ինչ կորած է անդառնալի կերպով, բոլոր ճիգերը խորտակուած, բոլոր յոյսերը մարած.—և դարձեալ մահաշունչ երեմիականներ, դարձեալ մեղկ յոռետեսութեան աղաղակ... Բայց յեղափոխական նոյն անվկանդ փոքրամասնութիւնը — ի դէմս նոյն Դաշնակցութեան — շարունակեց իր ընթացքը, վարեց դարձեալ մի շարք փայլուն պաշտպանողական ու յարձակողական կռիւներ Հայաստանում և գնաց հասաւ մինչև Բռնութեան ամենաահեղ միջնաբերդը — այն, որ համարւում էր բացարձակապէս անմատչելի — գնաց հասաւ մինչև Կարմիր Գազանի որջը, ուր 1904-ի մարտի 8-ին կատարւեց սուլթանի դէմ ամենամեծ դաւափորձը, դժոխային մեքենայի պայթումով, որ սակայն, մեծ աւերած պատճառելով հանդերձ, չը հասաւ, տարաբախտաբար, իր նպատակին... Եւ չը հասաւ այն պատճառով, որ այդ եզակի դաւադրութեան հոգին, նրա յղացող վարպետը, բախտի մի չար հարւածով, վաղաժամ նահատակւել էր բուլղարական Վիտօշի լանջերում...

Ահա պատմական, անմոռանալի դրւագներ: Ահա փաստեր, որ շատ էլ, ըստ երևոյթին, չեն զբաղեցնում ժամանակակից հայ մտաւորականութիւնը — մանաւանդ չէզոք, ապայեղափոխական, հակայեղափոխական մտաւորականութիւնը — բայց որոնց, սակայն, չի մոռանայ

հայ ժողովուրդը, չեն մոռանայ և մահմեդական ժողովուրդները, որոնք արդէն իսկ, ազատութեան օրերից ի վեր, սիրում են յաճախ—ի դէմս իրենց շիտակամիտ ու գիտակից ներկայացուցիչների—հռչակել ու դրւատել հայ յեղափոխական անցեալը, արձանագրել ու ներբողել հայ „առաջապահ“ դերը օսմանեան ազատագրական պատմութեան մէջ։

Այդտեղ—մեր բարոյական, անջնջելի յաղթանակը…

*

Ի ր ա կ ա ն, ֆիզիկական յաղթանակի առջև—ասացինք արդէն—ցցւած էին ահաւոր խոչընդոտներ։ Հարկ կա՞յ արդեօք բացատրելու երկարօրէն այդ խոչընդոտների էութիւնը, բնորոշելու մասնաւորապէս, նրանցից մէկը — դիւանագիտական անյաղթելի արգելքը, որ սկզբից ի վեր հալածեց մեզ, որպէս մի ահեղ ճակատագրական պատուհաս…

„Ճակատագրին“ հաճելի եղաւ, որ 1878 թւին Սան-Ստեֆանոյի յայտնի դաշնագրի 16-րդ յօդւածը փոխարինւէր, մի քանի ամիս յետոյ, Բերլինի դաշնագրի 61-րդ յօդւածով։ Թիւրքաց Հայաստանը այդ հանդիսաւոր ակտի զօրութեամբ հանւում էր Ռուսիայի մասնաւոր խնամակալութիւնից և դրւում Եւրոպայի հաւաքական հովանաւորութեան տակ։

Մեղադրականներ չենք ուզում արտասանել։ Մեր քաղաքական անձերի և նրանց քայլերի գնահատութիւն չենք ուզում անել։ Կը գայ ժամանակ, երբ հայ պատմագիրը ընդունակ կը լինի պաղ ու օբ՚եկտիվ, ազատ ամեն տեսակ համակրանքներից ու հակակրանքներից, քննադատել մեր մօտիկ անցեալի իրողութիւնները և նրանց հեղինակ-դէմքերը։

Այսօր դեռ չը կայ այդ պատմագիրը։ Այսօր կիրքը,

կուսակցական հակառակորդութիւնը և զուտ-հայկական մեծամտութիւնը այնքա՛ն հեշտութեամբ կուրացնում են մարդկանց, ստիպում նրանց՝ պաշտպանել վայրիվերոյ, անհեթեթ դատողութիւններ։ Դեռ երէկ հայ գրական հրապարակը լցուել էր դիլլետանտ քննադատներով, որոնք sans gêne մտրակում, խարանում էին Վարժապետեաններին ու բոլոր նրանց, որոնք որևէ մասն են ունեցել հայկական հարցի ստեղծագործութեան մէջ։

Թոթովախօս քաղաքական մանուկներն անգամ — սովորաբար հայ սօցիալ-դեմօկրատ մարքսիստների քանակից — մի քանի լղարիկ բրօշիւրների հետ ծանօթանալուց, օտար ու թռուցիկ գրականութեան մէջ մի քանի թեթև յօդուածիկներ կարդալուց յետոյ, հրապարակ էին նետւում, ապլօմբով, ինքնավստահութեամբ՝ „իրենց հեղինակաւոր խօսքն“ ասելու, „իրենց կարծիքը“ յայտնելու հայոց պատմութեան ամենափափուկ, ամենացաւոտ, ամենակնճռոտ խնդիրների մասին... Եւ խարազանում ու ջարդում էին հայկական շարժման ռահվիրաներին, գրչի մի հարուածով „ոչնչացնում“ էին կազմակերպութիւնները և „քաղաքական տհասութեան“ վկայական տալիս նրանց շէֆերին։

Այդ անզուսպ դատախազները՝ իրենք, անշուշտ, թափանցել էին դիւանագիտութեան խորախորհուրդ գաղտնիքների մէջ, իրենք, հարկաւ, այնպէս չէին վարուի 1878-ին և յետագայում, ինչպէս վարուեց Վարժապետեանը, ինչպէս վարուեցին Րաֆֆիներն ու նրանց հաւատարիմ կատարող՝ յեղափոխական կօմիտէները... Ո՛չ, նրանք այլ կերպ կը տնօրինէին, նրանք աւելի լաւ կըմբռնէին համաշխարհային քաղաքականութեան կնճիռները և 80-ական թւերից արդէն կ'ասէին ձեզ, թէ հայոց հարցը անլուծելի է, թէ Ռուսաստանը „իր կենսական շահերից մղուած“ պիտի բռնէր ճակատագրօրէն բացա-

սական, դաւաճան դիրք, կ՚ասէին ձեզ, թէ բոլոր միւս պետութիւնները ևս, մղւած դարձեալ իրենց „կենսական, ռէալ շահերից“՝ պիտի միայն անկարեկիր հանդիսատես հայ ժողովրդի աղեխարշ նահատակութեան հանդէպ, կ՚ասէին ձեզ, մի խօսքով, թէ ինչ պիտի լինէր, ինչ դիւային մեռելապար պիտի կատարուէր հայկական հարցի շուրջը, 14—20 տարիներից յետոյ:

Ուրիշներն էլ — ցարական դրօշի և րէժիմի սիրահարներ—պնդում էին, թէ Թիւրքահայաստանը վաղուց արդէն կ՚ազատուէր ու կը բարգաւաճէր, եթէ առաջ չը գար 1878-ի բերլինեան „վրիպումը“, եթէ անխախտ մնար Սան-Ստեֆանօի դաշնագիրը, եթէ Թիւրքահայը մնար ցարիզմի առանձին հովանաւորութեան տակ...

Մարգարէանալու, գուշակելու յաւակնութիւնը ինքն ըստ ինքեան վատ բան չէ, միայն թէ հանճարեղ „մարգարէութիւններն“ անգամ արժէք չունին, երբ կատարւում են post factum, արդէն կատարուած իրողութիւնից յետոյ...

Իրողութիւնն այն է, որ անցեալ դարի 80-ական թւականներից, Ալէքսանդր III-ի օրով փչեց ամբողջ ռուսական կայսրութեան վրայ հիւսիսային դաժան հողմը, որ ամրապնդելով րէակցիայի պատնէշները ներսում, ունեցաւ իր ուժգին անդրադարձումը նաև արտաքին քաղաքականութեան վրայ: Ծայր տւեց կամաց-կամաց Պետերբուրգի սառնաշունչ դահլիճի մէջ մի նոր ըմբռնում „արևելեան առաքելութեան“, մի նոր մեթօդ „քրիստոնեաների հովանաւորութեան, խնամակալութեան“:

Մնաս բարեա՛ւ ասացին նախկին „վեհանձն“ լօզունգներին. նրանք այլ ևս ձեռնտու չէին... Ցարիզմը չէր մոռենում իր աւանդական նպատակակէտին — Կ. Պօլսին. ռուսաց արիւնով ազատագրուած բալկանեան պետու-

թիւնները, ի տեղի ճորտանալու, հնազանդւելու ագատարարի քմահաճոյքին, ի տեղի ծառայելու որպէս էտապ, հանգրւաններ Ստամբուլի ճանապարհին, շեշտեցին, ընդհակառակը, իրենց կատարեալ անկախութեան դաւանանքը և դարձան մի մի անանցանելի պատնէշներ:

Յոյսերը չ՚արդարացան – սկսեց ճակատագրական շ ր ջ ո ւ մ ը... որ և դարձաւ ճշմարիտ աղբիւրը բոլոր այն դժոխային յղացումների, բոլոր այն քստմնելի, աշխարհասասան ոճիրների, որ նիւթեց ռուսական դիւանագիտութիւնը Փոքր-Ասիայում պաղ, ստոյիկեան անտարբերութեամբ:

Յոյսերը չ՚արդարացան — էլ ոչ մի ձգտում ստեղծելու իր սահմանին կից՝ ինքնավար երկիրներ:

Հայ ժողովրդի քաղաքական իդէալը հեռու էր Բուլգարիայի, Յունաստանի իդէալներից. փոյթ չէ. նոր, լօբանօվեան ըմբռնումը թելադրում էր հալածել նաև այդ ժողովրդին, խեղդել „բարենորոգումների“ ամենահամեստ ծրագիրները, խրախուսել անգամ հայոց մասսային բնաջնջումի համիդական Եղեռնափորձը...

„Ռէալ շահե՞ր“... Ամենևին: Քաղաքական անհրաժեշտութի՞ւն... Բնա՛ւ: Ռուսաստանը, անգամ ցարական, բռնապետական Ռուսաստանը, եթէ չը լինէր կոյր ու կարճամիտ յանձին իր խղճուկ դիւանագէտների, եթէ ըմբռնէր իր կենսական, պատմական շահերը, պէտք է հակառակ ընթացքը բռնէր, պէտք է պաշտպանէր աւերածից ու սրածութիւնից մի խելացի, քաղաքակրթւող ժողովուրդ, որ միշտ տածել է դէպի „քրիստոնեայ մեծ երկիրը“ ջերմ, անխառն համակրանք, և որը ամբողջ առաջաւոր Ասիայում պիտի լինէր միշտ ռուսական լեզւի, կուլտուրայի, ապրանքների ու ազդեցութեան տարածող:

„Լօբանօվշչինան“ չըմբռնեց այդ և 90-ական թւերին

մեկնեց կարմիր Համիդին, կազմակերպելով անողորմ ու սիստեմատիկ մի արշաւանք տաճկահայ շարժման, կօմիտէների, գաղթականների, ամբողջ ժողովրդի դէմ...

Որքա՜ն արիւն ու արցունք է ամփոփւած այդ կարճատև պատմութեան էջերում...

Ո՞վ կարող էր գուշակել այսքան արհաւիրք։

Ո՞վ կարող էր կարծել 80-ական թւականներին, այն շրջանում, երբ հիւսիսի հզօր „քրիստոնեայ հովանաւորը“ դեռ առժամանակ աշկարայ նպաստաւորում էր հայոց ազգային տենչանքները, հայկական առաջադիմութիւնը Կովկասում ու Թիւրքիայում, երբ դեռ այնքան թարմ էին եւրոպական աղատարար միջամտութեան յիշողութիւնները արևելեան աշխարհում—ո՞վ կարող էր գուշակել, որ մեր դժբախտ ժողովրդի տարրական ապահովութեան խնդիրը այն աստիճան պիտի խճճւէր, այն աստիճան պիտի բարդանար, թէ նրա պաշտօնական հովանաւորները այնքան աղաղակող ցինիկութեամբ պիտի դրժէին իրենց հանդիսաւոր յանձնառութիւնները։

Ո՞վ կարող էր նախատեսնել անգլօ-ռուս հակամարտութեան այնքան չարաշուք ու մարդասպան մի ծաւալում, գերմանական Drang-ի, վիլհելմեան ստորաքարշ քաղաքականութեան այնքան տխուր անակնկալներ, ֆրանսիական անպատիւ, ուխտադրուժ համակերպում և այլն և այլն։

Այսպէս թէ այնպէս, իրերի մի պաղ, երկաթէ, զարհուրելի տրամաբանութեամբ, հայ ժողովուրդը, 6 դարու անարգ գերութեան շրջանը բոլորելուց յետոյ, 30 տարի գամւած մնաց քաղաքական մրցումների ու հակամարտութեան կախարդական շրջագծի մէջ, 30 տարի պառկած մնաց չարչարանքի մահճի վրայ, ուր ճաշակեց դժոխքի բոլոր արհաւիրքները։ Ռուսաստանը—թշնամի,

Գերմանիան—թշնամի, Ֆրանսիան հակւած դէպի Ռուսաստանը, Աւստրիան հակւած դէպի Գերմանիա, Իտալիան էլ—չէզոք, Անգլիան մնաց մեն-մենակ.. Հանրային կարծիքի բուռն հոսանքից սթափւած, բրիտանական առիւծը մռնչաց, բայց արդէն ո՜ւշ... Նրա ձայնը էլ չէր լսւում Բոսֆորի ափերում. Նրա բոլոր քայլերը հանդիպեցին Ռուսաստանի դիմադրութեան, նրա բոլոր նախաձեռնութիւնները վիժեցին, խորտակւեցին։

Ու եղաւ այն, ինչ որ եղաւ...

Մի խոր գիշեր իջաւ հայրենիքի վրայ — մի մահաբեր, գերեզմանային անդորրութիւն.. Բոլոր ձայները մարեցին, թւում էր թէ կեանքն իսպառ դադարեց։ Ի՜նչ ահռելի հիասթափութիւն.. Անձնուրացութեան, հերոսութեան այնքան բուռն թռիչքները — խորտակւած ու գահավիժւած անէութեան անդունդների մէջ։ Ի՜նչ չարաշուք ճակատագիր... Բայց դա հայկական առանձնայատուկ դրաման է, ընթերցող, իր արիւնաբոյր վեհութեան մէջ, դա հայ յեղափոխական եզակի ողբերգութիւնն է՝ պարզ, գրանդիօզ, սասանեցուցիչ... Եւ դարձեալ մնացին մեր շարքերում զգօն, լաւատես հոգիներ, որ այդ անողորմ ու մահաշունչ ձմրան հանդէպ, այդ համատարած ու սրտաճաք գիշերի մէջ պահպանում էին իրենց հաւատը, ասում էին միշտ, որ այդ մահը իրօք մահ չէ, այլ ապագայ վերանորոգում, վերածնութիւն... Եւ պատմութիւնը շարունակեց տանջանքի ու արցունքների միջից, նա գնաց մինչև վերջ, արիւնելով ու միշտ ապրելով, առանց որ բախտի դժնդակ հարւածները շեղէին նրան իր սկզբնական ուղղութիւնից...

Դարձեալ ա պ ր ե ց ի ն ք...

Ա՜հ, երբ ասում են, թէ այդ փոքրիկ, հալածական ժողովուրդը օժտւած է յարատեւելու մի չնաշ-

խարհիկ կարողութեամբ—ճիշտ են ասում։ Հայ համայնքը ցոյց է տուել, արդարև, իր դարաւոր, անօրինակ հալածականութեան մէջ մի կորով, մի բնատուր տոկունութիւն, որ շատերի զարմանքն է շարժել, որ իր մեծութեամբ, կարելի է ասել, հաւասարուել է նրա կրած տագնապներին, նրա վայրկենական ու խօլական յուսահատութիւններին...

Նա դարձեալ *ապրեց*։ Ապրեց, ինչպէս տեսանք, և հայ մարտական կազմակերպութիւնը. անլուր փորձութիւններից, հակայեղափոխական մահաբեր ուրագաններից, ժամանակաւոր պարտութեան, յուսահատութեան անդունդներից՝ նա ճողոպրեց իր անաղարտ, գաղափարական մեծութեամբ, իր գործիչների, հերոսների մշտազուարթ պլէադներով... փորձութիւնները մերթ ընդ մերթ ճարակում էին նրա շարքերը, բայց նա շուտով վերստին կազդուրւում էր և ծառանում թշնամու դէմ... Եթէ անգամ մարէր նրա մէջ հաւատը, դէպի իր դատի վերջնական յաղթանակը—կար վրէժի անյագ, ամենազօր ծարաւը, որ պիտի մղէր յարաժամ ու տարերայնօրէն դէպի նոր, խիզախ ու օրհասական յղացումներ...

Քսան տարի՜...

Պայքարի ու տառապանքի ահագնութեամբ—մի փոքրիկ յաւիտենականութիւն։

Եւ այսօր մենք նայում ենք անցած քարոտ ու արիւնոտ ճանապարհի վրայ, նայում ենք հպարտ գիտակցութեամբ, որ կատարել ենք—մեր ուժերի չափ—մեր ստանձնած առաքելութիւնը, նայում ենք հպարտ վստահութեամբ, որ դեռ ևս պատկառելի դեր ունինք կատարելու՝ կեանքի և պարտքի անծայրածիր դաշտի վրայ... Ջո՜ւր, պարապ զբաղմունք է՝ կուրծք ծեծել, երեմիականներ արտասանել այդ արիւնոտ անցեալի առթիւ, երանի տալ

„Հին, բարի ժամանակին“, երգել Նախայեղափոխական Հայաստանի իդիլլիան, հովուերգութիւնը...

Տիեզերական էւօլիւցիայի մեծ խորհուրդը դէմ է իրերի այդ տեսակ գնահատումների, դէմ է „մօրալի“ այդ տեսակ ընդվզումների... Դա կը նմանէր որոշ կարգի Ֆրանսիացիների ու ռուսների խելակորոյս վայնասունին, 1789—93-ի և 1905-ի աշխարհադղորդ անցքերից յետոյ—մարդկանց, որոնք մի միամիտ ցասումի և մի ջինջ, վարդագոյն զառացանքի մէջ՝ յաւակնում են ղեկավարել աշխարհի, մարդկութեան, քաղաքակրթութեան ընթացքը զուտ „րէզօնի“, բանականութեան պատգամներով, նշաւակում, անարգում են կ ր ք ի ահեղ բռընկումները, ըմբոստութեան խօլական թափահարումները, ռմբակոծում են մեծ Յեղափոխութիւնների աշխարհահռչակ դերակատարներին, Ռօբեսպիէռներին ու Դանտօններին, Ժելեաբօվներին ու Սազօնօվներին, ռմբակոծում են անգամ նրանց հոգևոր վարպետներին՝ Ռուսօններին ու Լավրօվներին...

Պարա՛պ, անմիտ խարազանումներ։ Բոլոր երկրներում նրանք կատարել են իրենց ողբալի պաշտօնը—մեր երկիրը ևս բացառութիւն չը կազմեց այդ օրէնքից, մեր Ռուսսօն ևս—„Կայծերի“ հեղինակը—ենթարկեց հայ սանձարձակ իդէօլօգների „քննադատութեան“ ու մըտրակման, օստրակիզմի ու անաթեմայի...

Կեանքը գնում է, պաղ, անխռով, իր անխուսափելի ճանապարհով, մեծ անցքերը շղթայազերծւում են յաճախ բնական տարրերքների ճակատագրականութեամբ ու մոլեգնութեամբ, յեղափոխութիւնները բռնկւում են յաճախ անկախ իդէօլօգների ծրագիրներից ու բաղձանքներից, բարի կամ չար կամեցողութիւնից, ուրախութեան աղաղակներից և տագնապի հաւա՛րներից։ Իպպօլիտ Տէնը Ֆրանսիայում, Ստրուվէներն ու Բեր-

գլխաճիճները Ռուսաստանում, կարող են վա՛յ տալ իրենց երկրների կրած, ապրած յեղափոխական աղէտների առթիւ, կարող են թափել ըմբոստների, „ժակօբինների", „տեռօրիստների" հասցէին աշխարհի բոլոր նախատինքները,—դա չի փոխի այն համոզումը, որի համեմատ Ֆրանսիան—իր բովանդակ պատմութեան ուժով, իր մասսային խառնուածքի ու հոգեբանութեան զօրութեամբ—պիտի կատարէր անխուսափելի անհրաժեշտութեամբ արեան, ահաբեկման, տանջանքի, սարսափների այն վիթխարի թափօրները, որ առաջ եկան այդ երկրում Յեղափոխութեան առաջին մի շարք թւականներում։ Դա չի փոխի այն համոզումը, որի համեմատ Ռուսաստանն ու Հայաստանը ևս պիտի ունենային իրենց *Sturm und Drang-Periode*-ները... Նրանք առաջ կը գային նոյնիսկ այն դէպքում, եթէ Ռուսսօն ու Վօլտերը, Հերցենը և Լավրօվը, Րաֆֆին և Պատկանեանը իրենց թէօրիական քարոզների մէջ բացարձակապէս մերժած լինէին „կօնսպիրատիվ" մեթօդները, բռնի ուժի կիրառումը ևայլն։

Մարդիկ, ուժեղ մտաւորական ու բարոյական առաջնորդները, իրենց խոշոր բաժինն ունին անցքերի նախապատրաստութեան մէջ, բայց նրանց տւած դեղատոմսերով, նրանց կազմած նախագծերով չէ, որ պայթում են յեղափոխական փոթորիկները։ Վրայ են հասնում վայրկեաններ, երբ նրանց ուժը նսեմանում է տարերային, օբ՛եկտիվ ուժերի հանդէպ։ Երիտասարդ Թիւրքիան ուզեց կատարել իր հայրենիքում խաղաղ, „Իդէալ-Յեղափոխութիւնը" Օգիւստ Կօնտի „կարգ ու պրօգրէս" նշանաբանի համաձայն, քսան տարի շարունակ նրա մտաւոր պարագլուխը պարիզեան „Մեշվերեթի" մէջ խունկ էր ծխում այդ „խաղաղ ու անարիւն յեղափոխութեան", բայց վրայ հասաւ ճակատագրական մի վայր-

կեան—մարտի 31-ը—երբ յաղթական կուսակցութիւնը, դէպքերից բռնադատուած՝ նետեց իր զրահաւորուած վաշտերը մայրաքաղաքի վրայ… և հրացանները որոտացին և արիւնը հոսեց..

Կարելի է քննադատել յեղափոխական կուսակցութիւնների տակտիկը, ծրագիրները, նրանց լրջութիւնը, գաղափարական պարունակութիւնը, անձնազոհութեան չափը և այլն, բայց յեղափոխութիւնն ամբաստանելու և անիծելու կարիք չը կայ… Չրի, անարժէք ենթադրութիւններ են և այն մարդկանց փիլիսոփայութիւնները (մեզ մօտ նրանք շեշտուել են առանձնապէս խոհեմների ու չէզոքների կողմից), որոնց համեմատ, պէտք էր թողնել իրերը՝ իրենց „բնական“ հոսանքին, պէտք էր սպասել, մինչև որ ազգը հասունանար, արտադրէր յեղափոխական ճնշող մեծամասնութիւն և.. ընդհանուր ապստամբութեան շեփորը հնչեցնէր։ Յաճախ ենք ջրել յեղափոխական օրգանների մէջ այդ և նման անհեթեթութիւնները։ Եթէ այդ կերպ տրամաբանէր Երիտասարդ Թիւրք կուսակցութիւնը—ընդամենը մի քանի հազար գիտակից անհատներ՝ տասնեակ միլիոնաւոր անգիտակից ու յետադէմ մահմեդական ընդհանրութեան մէջ—պէտք է սպասէր գուցէ էլի մի 100 տարի… Եթէ այդպէս տրամաբանէին իսկզբանէ մարդկութեան լաւագոյն գործիչները—աշխարհը պիտի մնար յաւիտենօրէն վայրենութեան ու բարբարոսութեան մէջ։

*

Չ'ողբա՛նք անցեալի առթիւ… Այդտեղ, այդ յեղափոխական անցեալի մէջ է, այդ հերոսական մաքառումների և այդ խօլական նահատակութիւնների մէջ—որ մեր գալոց սերունդները պիտի գտնեն մշտնջենաւոր

աղբիւրը իդէալական ներշնչումների և անձնուրացութեան թափերի... Այստեղ մեր ուժն է — ոչ թուլութիւնը։ Այստեղ մեր պատիւն է և մ ե ր պ ա ր ծ ա ն ք ը։

Ժամանակը դաժան եղաւ, անտարակոյս, բայց նա ունեցաւ և իր բարերար արդասիքը։ Ի՞նչ էինք մենք՝ նախ քան Յեղափոխութիւնը։ Յիշեցէք միայն Հայ ճակատագրի յեղյեղումները, նրա տխուր, արտասուելի էւօլիւցիան։ Թերթեցէք այդ դժգոյն, անփառունակ պատմութիւնը — Հայկական պատմութիւնը — աչք ածեցէք այդ աղեխարշ, սրտաճմլիկ էջերի վրայ։ Միշտ մօնօտօն աղերսանք, միշտ ողբ ու կական, գրեթէ միշտ անպատիւ համակերպում.

Մի ժողովուրդ, որ անթիւ դարերից ի վեր ունեցել է միայն խաղաղ կեանքի առաքինութիւններ, որ զուրկ է եղել ընդհանրապէս ռազմական հակումներից, զուրկ առնական ինքնապաշտպանութեան բնազդներից, որ դիւրութեամբ ճկել է իր պարանոցը այլազան բռնաւորների առաջ, որ փախել, պատսպարուել է շատ յաճախ, ի տեղի կռուելու, դիմադրելու, որ ապրել է գրեթէ միշտ կրաւորական դիմադրութեամբ... Բացառութիւնները յիշատակելի են, բայց քիչ են։ Անգամ փառքի ու ռազմական հմայքի գագաթնակէտին, երբ — Տիգրան Մեծի օրով — առաջին և վերջին անգամ նա տիրել էր հսկայական տարածութիւնների վրայ, խոնարհեցրել բազմաթիւ դրացիներին և դարձել մի տեսակ ահարկու իրաւարար ամբողջ առաջաւոր Ասիայի մէջ՝ անգամ „փառքի“ այդ գագաթին, նա հանդիսանում էր ռ ա զ մ ա կ ա ն, դ ի մ ա դ ր ա կ ա ն տ ե ս ա կ է տ ի ց մի փխրուն, վաղանցուկ գոյութիւն, որ կարծես միանգամայն պատահաբար, թիւրիմացութեամբ դրել էր իր լուծը հարևան ցեղերի վրայ, բայց արդէն իսկ կրում էր

իր մօտալուտ խորտակման սաղմերը — և, արդարև, աւազի վրայ կառուցւած այդ շէնքը, „հզօր, ամենայաղթ“ Տիգրանի կայսրութիւնը, օդը ցնդեց, առանց լուրջ դիմադրութեան, Հռոմի ամենաթեթև գրոհի դիմաց։

Կրաւորական դիմադրութի՛ւն... Այդ էլ, անշուշտ, պատկառելի մի ուժ է, որ հնարաւորութիւն է տւել ցեղին՝ ապրելու, յարատևելու, բայց այդ ուժը չի բարձրացնում, չի ազնւացնում ժողովուրդներին, աւելի յաճախ նսեմում է նրանց լոկ բուսական գոյութեան և հոգեկան անէացման անդունդը։ Եղան ուրիշ գործօններ, բարեբախտաբար, որ արգելեցին այդ „անէացումը“...

Կրաւորականութիւնը եղել է հայութեան ճակատագրի էութիւնն իսկ, նրա տխուր հոգեբանութեան գաղտնիքը։ Զարնել են մէկ երեսին — նա դարձրել է միւս երեսը։ „Հայ-քրիստոնեայ“ արտայայտութիւնը սքանչելիօրէն բնորոշում է այդ հաղւագիւտ պսիխօզը, այդ եզակի հոգեբանութիւնը... „Հայ-քրիստոնեայ“ — դա նրա ճշգրիտ որակումն է, նրա հարազատ ատրիբուտը։ Գուցէ ոչ մի ժողովուրդ չի ապրել այնքան ներդաշնակ, այնքան համաձայն քրիստոնէութեան պատւիրաններին, ինչպէս Հայը։ Այդպէս՝ պատմութեան, այդպէս՝ և նախապատմութեան մէջ... Հայը եղել է քրիստոնեայ, նախ քան Քրիստոսի երևալը...

Բողոքը, որ կաս-կարմիր ժապաւէնով անցնում է հնդկաեւրոպական ցեղերի բովանդակ պատմութեան միջից, որպէս խոշոր, կենսատու, առաջադիմական մի գործօն, որ արտայայտւել է պարբերաբար, երբեմն գոռ ու աւերիչ ցնցումներով — բողոքը՝ առնական, ազնւացնող բողոքը ընդդէմ օտար կամ հարազատ իշխողների, բռնաւորների՝ չափազանց թոյլ է շեշտւում, երբեմն ասես իսպառ ջնջւած, անդամալուծւած է Հայ

ժողովրդի պատմութեան մէջ, — մի պատմութիւն, որ սակայն, լեցուն է այդ այլազան բռնաւորների նուիրած արհաւիրքներով, ժողովրդասպան դաւերով ու նախճիրներով...

Այդպէս էր հայ տարրը իր հոգու ամբողջ ֆոնով, իր էական պարունակութեամբ, այդպէս էր նա մինչև վերջին ժամանակ։ Եւ դեռ 70-ական թուականներին, յեղափոխութիւնից փոքր ինչ առաջ՝ նրա ցաւերի ու տանջանքների օտար, պաշտօնական քրօնիկեօրները ապշանք էին արտայայտում՝ ի տես այդ բութ, անօրինակ, զուտ-քրիստոնէական համակերպութեան (résignation), որ հայութիւնը ցոյց էր տալիս թիւրք ռէժիմի դժոխային ճնշումների հանդէպ։

1880 թուի սեպտեմբերի 23-ին բրիտանական հիւպատոս Էվերստ զեկուցագրում էր Էրզրումից կոմս Գրանուիլին.

„Միմիայն ժողովրդի համբերութեամբ, երկչոտութեամբ և նրա զանազան խաւերի մէջ եղած կապի թուլութեամբ կարելի է բացատրել այն հանգամանքը՝ որ արևելեան սանջակները անցեալ տարի, հարկերը բաժանելու միջոցին, չ'ապստամբեցին կառավարութեան դէմ, ոտքի կանգնելով իբրև մէկ մարդ“։

Դա՛ռն, վիրաւորակա՛ն, բայց ճշմարտախօս վկայութիւն...

Սակայն ինչպէ՛ս փոխւում է ոճը դիւանագիտական զեկուցումների մէջ, ընդամենը 10 տարի յետոյ։ Յեղափոխական փոքրամասնութիւնը բեմ էր նետուել և սկսել էր արծարծել դժգոհութեան կրակը մասսաների մէջ։ Մեղկ, անմռունչ համակերպութեան բազմադարեայ գիշերից յետոյ՝ թոյլ ու երկչոտ փայփլել էր ըմբոստացման արշալոյսը հայի խաւար հօրիզոնի վրայ. և, այո, արդէն 1890-ին տ ո ն ը փոխուել էր հիւպատոսական

ու դեսպանական հաղորդագրութիւնների մէջ. Նրանց միակերպ նկարագրութիւնների տխուր շարանը ընդհատւում էր, վերջապէս.. և հայկական մարտիրոսագրութեան սոսկումնալի էջերի մէջ մտնում էին նոր շեշտեր — մօտեցող դիւցազներգութեան խրոխտ շեշտերը։

1890-ին, նոյն Էրզրումից, բրիտ. հիւպատոս, գնդապետ Չերմսէյդ հաղորդում էր իր կառավարութեանը.

„Վերջին տարիներս Էրզրումի ու այլ գաւառներում կազմակերպւող գաղտնի ընկերութիւններն ու կոմիտէները, զէնք ձեռք բերելու դիտաւորութիւններն ու փորձերը, նմանապէս վերջերս Վանում ու շրջակայքում տեղի ունեցած դէպքերը—այդ ամենը ցոյց է տալիս, որ իրօք կայ խոր դժգոհութիւն։ Եւ, յիրաւի, տարօրինակ կը լինէր սպասել այլ բան, քան դժգոհութիւն“։

Վերջապէս, ահա 1894 թւականը. Ֆրանսիական դեսպան Կամբօն իր կառավարութեան ղրկած մի զեկուցման մէջ ասում է ի միջի այլոց.

„Իր անգթութեամբ Բ. Դուռը սրբագործեց հայկական շարժումը, որ այժմ արդէն ունի իր նահատակները“...

Դիւանագիտական ոճի փոփոխութիւնը—հայ իրականութեան և հոգեբանութեան փոփոխութիւնն էր։ Ո՛ւշ էր գալիս նա, չափազանց ուշ, այնպէս որ օտարների համբերութիւնն իսկ յոգնել էր և ցասկոտ ժեստեր էր անում։

Ուշ էր գալիս—բայց բարո՛վ...

Դիւրին բան չէր փոփոխել մի այդպիսի ժողովուրդ, յեղաշրջել արատներով, բացասական յատկութիւններով ծանրաբեռնւած մի այդպիսի հոգեբանութիւն, պատրաստել զանգւածները ազատութեան կռւի համար, կռել ու մարզել շարքերը մի այդպիսի միջավայրում, ուր դարերով զէնքի երես չէին տեսել, ուր այնքան թոյլ էր

ազգային, հասարակական համերաշխութիւնը, բնաւորութիւնները՝ անդիսցիպլին, անհատապաշտ ու դաւամոլ, սիրահար երկպառակութեան, վարժուած տիրասիրութեան, յաճախ նոյնիսկ մատնութեան, դաւաճանութեան... բոլոր այն յատկութիւնները, որոնք, ըստ Բայրընի, ստրկական կացութեան արգասիք են։ Գերութեան դարհուրելի փտախտը բուն էր դրել հայկական օրգանիզմի մէջ և տանում էր նրան—չը նայած մտաւոր վերածնութեան ճաճանչներին—դէպի խեղաթիւրում ու այլասերում։

Հնո՛ց պէտք էր ստեղծել, մի անողոք ու ճարակող քուրա՝ որ լափէր աստիճանաբար հին, ստրկական գոյութեան ախտերն ու գարշանքները և դնէր հայութիւնը քաղաքական ու քաղաքացիական վերանորոգման ճամբու վրայ...

Յեղափոխական շարժումը այդ հնոցն եղաւ։ Հերոսների պաշտամունքը—վերամկրտութեան աւազանը...

II

ՀԵՐՈՍՆԵՐԸ

Ո՞ւր է հայկական պանթէօնը.—Հայրենիքը՝ մի համատարած գերեզմանոց.—Դէմքեր.—Արամեանը.—Հայոց կեանքի „կօնտրաստը“.—Աւօ.—Հայրենասիրութիւնը՝ միստիկական մի հաւատամք.—Սովորական կռիւները եւ հերոսների կռիւը.—„Վանական իմպերատիվ“.—Տիպարներ ու հակոտնեաներ.—Զաքարեան եւ Մարտիկ.—Ժողովրդական քարոզչի տիպը.—Հրայր.—Պետօ Սարուխանեան եւ Պետօ Սերեմչեան.—Վահան Մանուէլեանը.—Դարձեալ „հակադրութեան“ ձայնը.—Կարօ-Զօրեան.—Ռաֆֆիի հերոսները եւ մերոնք.—Լեռների արծիւը.—„Փաշա“ եւ „Փադիշահ“.—Դաւադիր յեղափոխականը.—Բաբկէն Սիւնի.—Դերոյեան.—Հերոսացանքը Կովկասում ու Պարսկաստանում.—Դաւադիրներ եւ ահաբեկիչներ.—Ժամհարեան, Մարտիրոս, Ստեփանեան, Կարօ-Աստրախանցի.—Անանուն հերոսները.—„Վիտօշի բազէն“.—„Աստուածատանարը“ ժողովրդի սրտում.—Բանտարկեալները.—Դանտէեան դժոխք.—Ողջերի պլէադը.—

Отъ ликующихъ, праздно болтающихъ,
Обагряющихъ руки въ крови,
Уведи меня въ станъ погибающихъ
За великое дѣло Любви! *).

Некрасовъ.

Կա՛նգ առէք այդ պաշտելի շիրիմների առջեւ, մտէք այդ վեհ պանթէօնը, ուր ամփոփուած են մեր թանկագին մեռելները, մեր նորագոյն պատմութեան զարդն

*) Թո՛ղ խրախճանքի հերոսներին եւ դատարկ պոռոտախօսներին,
Թո՛ղ եւ նրանց, որոնք սովոր են կարմրեցնել իրենց ձեռքերը
մարդկային արիւնի մէջ,
Տա՛ր ինձ այնտեղ, նահատակուողների բանակը,
Ուր մեռնում են Սիրոյ մեծ գործի համար:

ու պարծանքը։ Ընչեցէք այդ անաղարտ մթնոլորտում, եթէ կուզէք ազնւանալ և „վերանալ“ կեանքի գձուձ մտահոգութիւններից՝ դէպի մաքուր, եթերային բարձունքները…

Բայց ո՞ւր է նա — այդ պանթէօնը, ո՞ւր հայկական ա ս տ ւ ա ծ ա տ ա ճ ա ր ը, մեր սրբերի հանգըրւանը, սերունդների ուխտավայրը…

Դա մեր ամբողջ վատաբախտ հայրենիքն է — ծայրէ ծայր սերմանւած, պարարտացած հերոսների նշխարներով…

Հայ հերո՛սը, որի միտքը զառանցել է միշտ „հայրենիք“, „ազատութիւն“ և „արիւն“, որ իբրև մարմնացած անձնազոհութիւն, զինւած մեռնելու մի հաղւագիւտ պատրաստակամութեամբ, կուրծք է տւել աշխարհի ամենավայրագ, ամենատմարդի բռնակալութեան հարւածներին, քայլել է միշտ գրկախառնւած իր պաշտամունք-ժողովրդի հետ, մասնակից նրա վշտերին, վայրկենական ուրախութիւններին, հայ հերո՛սը, որ իր ճխլւած, պատառոտւած դրօշակով, բուքերի ու բուրանների մէջ թափօր է արել արիւնաներկ հայրենիքում, արբել է վառօդի պաղ ու դաժան բուրմունքով, գրկել է կրօնական ջերմեռանդութեամբ իր հրացանը և սլացել դէպի վտանգ միշտ համարձակ, անվեհեր, միշտ երգելով կռիւների արշալոյսին… Գնացէ՛ք հարցրէ՛ք Վասպուրականի և Տարօնի անդնդախոր ձորերին, ականջ դրէք գետերի, աղբիւրների կարկաչիւնին — նրանք բոլորը կը պատմեն ձեզ Հրայրների ու Ապրօների, Վազգէնների ու Սերոբների արկածները, նրանց վսեմ վշտերը, նրանց վսեմ ուրախութիւնները… Լեզո՛ւ տւէք հերոսների ոգիներին, որ թափառում են այդ անհամբոյր լեռների մէջ — դուք կ'իմանաք իւրաքանչիւրի ինտիմ կեանքից սիրտ կտրատող պատմութիւններ, դրամաներ…

Ահա նրանք՝ հոգեվարք, մահամերձ՝ մրմնջում են դաշտերի մէջ, ձորերում, անհաւասար կռւից յետոյ թողնւած ի սաստ ճակատագրի. ահա նրանց ընկերները մի ուրիշ տեղ նոյն անվեհեր վճռականութեամբ դէմ են գնում նոյն ահեղ, անհաւասար ընդհարումներին. ուրիշները, կեանքի բոլոր վայելքներից հրաժարւած, գիշեր-ցերեկ որոճում են ծրագիրներ, եռում են յոյզերով ու յոյսերով. ուրիշները ճօճւում են կախաղանից, գալարւում են բանտերի նկուղներում... Միշտ պայքարել և տանջւել, միշտ մտածել ու տնքալ, երբէք լալ, յուսահատւել — հայ հերո՛սը, նման բոլոր հերոսներին, այն ընտիր, աստւածաշունչ տիպերից է, որ Կարլայլ անմահացրել է իր հանճարեղ տողերով և որոնց յիշատակը անցել է սերնդէ-սերունդ, դարէ-դար, ժողովուրդների սրտերի ու երգերի մէջ...

Ա՜հ, կարլայլեան գրիչ է պէտք՝ մեր հերոսներին նկարագրելու, նրանց դէմքերը յաւերժացնելու, նրանց գործերը ջատագովելու...

Մէկիկ մէկիկ սահում են ահա մեր աչքերի առջև նրանց պաշտելի ստւերները, որպէս մի հսկայ գալերէյի մէջ — ջինջ, անաղարտ հոգիներ, իրենց թովիչ բարձրութեամբ ու անյաղթելի կորովով։

Ահա Ա ր ա մ ե ա ն ը։ Քնքոյշ ու բարեկազմ, բանաստեղծական արտաքինի տակ — մի քնքոյշ ու սիրող սիրտ, գրեթէ կանացի մեղմութիւն։ Բայց այդ սիրտը վրէժի ու թոյնի մի հրաբուխ է ժողովրդի ոսոխների հանդէպ... Այդպէս չէ՞ն արդեօք մեր բոլոր, գրեթէ բոլոր հերոսները. ի բնէ մեղմ, մարդասէր ու խաղաղասէր, բայց կեանքի տարրալուծող յորձանքից խեղաթիւրւած ու մոլեգնած... Պատանեկան հասակից արդէն՝ Արամեանը ճաշակում է արեան հոտը, նա տերրօրիստ

է, մարդասպան։ Եւ այնուհետեւ՝ էլ չը թողեց արեան ճամբան, այնուհետեւ տասնուհինգ տարի կրեց անտրտունջ յեղափոխութեան ծանր խաչը, մինչեւ եղերական կախաղանը, որի ծայրից նա նոյն յանդուգն մոլեգնութեամբ շանթահարեց հայ ժողովրդի դահիճներին եւ մինչ ւ վերջին շունչ „կեցցէ՛“ գոռաց Յեղափոխութեանը...

Ահա Մ ա լ օ յ ե ա ն ը։

Կռուո՞ղ — ոչ. պրօպագանդի՞ստ — ոչ. կազմակերպո՞ղ, տերրօրի՞ստ — երբէք։ Բայց հերոս — անտարակոյս։ Մէկը այն համր ու մոռացուած տիպարներից, որոնք մեծ են հէնց իրենց համրութեամբ ու կորածութեամբ։

Հերոսի ատրիբուտները միմիայն գոռ ճակատամարտներն ու յաղթանակները չեն, ոչ էլ ամեն բան դիմագրաւող յանդգնութիւնն ու իմացականութիւնը։ Բաւական է և մ ե ծ հ ո գ ի ն. բաւական է անյողդողդ վճռականութիւնն ու որոշումը — ժխտել „եսի“ բոլոր կենսատենչ պահանջները, մերժել կեանքի ամեն վայելք, մերժել անգամ հարազատների, անօգնական ծնողների աղերսանքն ու վայնասունը եւ զոհաբերել յանուն աւելի բարձր, վսեմ մի իրականութեան, զոհաբերել գիտակցօրէն ու ինքնաբերաբար, ներքին անդիմադրելի մղումով...

Այդպէս էր Մալօյեանը.. Շատ էր լսել իր շուրջը ունայնամիտ բացականչութիւններ, շատ էր տեսել ֆրազային հերոսների պերճախօս ըմբոստացումներ — ինքը միշտ լուռ ու դարտոտ, գրեթէ միշտ անմռունչ հանդիսատես՝ թէ հրապարակական ժողովներում եւ թէ իր պաշտօնակից-ուսուցիչների շրջանում... Չէր խօսում — խօսելու ձիրք էլ չունէր — միայն ներքուստ կսկծում էր, արիւնում.. Եւ մի օր նա անհետացաւ հայրենա-

կան օճախից, թողնելով ծերունի հօր՝ լաց ու շիւանի մէջ.. Եւ մի օր Ասօի դիակը փռւեց սահմանի միւս կողմը, այն խորհրդաւոր հողի վրայ, որ երկար տարիներից ի վեր Նրա երազների առարկան էր և ուր գնացել էր պառկելու, „հանգստանալու“, որովհետև կեանքն այլապէս մի դժոխք էր Նրա համար, մի անհանդուրժելի տաղտուկ և մի անվերջ խղճահարութիւն...

Fu grande, perchè buono...
(Մեծ եղաւ, քանզի բարի)...

Ահա Նեվրուզը։

Ո՞վ է տեսել այդ վիթխարիին և չի հմայւել Նրա հոյատիպ կերպարանքով և Նրա սրտի բիւրեղանման մաքրութեամբ։ Նա էլ Ասօի պէս... Ոչ ուժեղ մի գլուխ էր, ոչ էլ ճարպիկ մի կռւող, Նորագոյն մեթօդներով։ Իր հերքուլեսեան մարմինն ունէր միայն, իր հոլանի բազուկները, և կարող էր բռունցքամարտի մէջ գետին գլորել մի տասնեակ մրցակիցներ։

Մի պարզ, ազնիւ հայ աշխատաւոր... Նրան էլ այրում, լափում էր նոյն տիրական բաղձանքը—գնալ զոհւել Հայաստանի հողի վրայ։ Թէ Ռօդօստօի գետնայարկերում, ուր կուսակցութեան ժողովարարն էր, թէ Ռումանիայի ու Բուլգարիայի ճաշարաններում, ուր պարապում էր խոհարարութեամբ, թէ Ժընեվում, ուր „ուխտի էր եկել“ խմբագրութեան, թէ Կովկասում, ուր գնացել էր մի այլ ուխտով... Ընդհանուր Ժողովին՝ „գէթ հեռուից“, „գէթ մի անգամ նայելու տենչով“—ամեն տեղ իր աքսորական ու թափառական գոյութեան ընթացքում Նա ման է ածում իր այդ հիմնական բաղձանքը և աղերսում է կազմակերպութեանը՝ ղրկել իրան բուն Հայաստանում կռւելու, Նրա խորանին զոհաբերւելու։

Նա էլ ի վերջոյ հասաւ մուրազին, մտաւ 1904-ի ամառուայ մեծ արշաւախմբի մէջ և մի կատաղի ու արիւնալի ճակատամարտից յետոյ՝ գտաւ իր վաղաժամ գերեզմանը գուրգուրած, Նւիրական հողի վրայ, Թասենի լեռնադաշտում, յայտնի չէ ուր…

Իւ քանի՜ այդպիսիներ…

Ցուզիչ մի բան կայ Մալօյեանների ու Նեմրուզների այդ տխուր ու անփառունակ կարիէրի մէջ։ Հայրենասիրութիւնը նրանց համար մի կրօն է, միստիկական մի հաւատամք, զերծ այն բոլոր տարերքներից, որոնք նսեմացնում, գռեհկացնում են մարդ-էակին. ջինջ, անխարդախ մի կրօն, որ առհասարակ անհաշիւ է, ինքնայորդոր, տարերային..

Գրեթէ բոլոր կրօնները ենթադրում են „հատուցման“, „վարձատրութեան“ անհրաժեշտութիւնը. քրիստոնէութիւնը պահանջում է հնազանդութիւն իր պատւիրաններին՝ դրախտի խոստումներով և դժոխքի սպառնալիքով։ Կրօնաւորները, միսիօնարները, բոլոր բարեպաշտ, աստուածավախ քարոզիչները կատարում են իրենց այս կամ այն ալտրուիստական պարտականութիւնը, միշտ ունենալով իրենց աչքի առաջ պատժի ու հատուցման այդ անհրաժեշտ հեռապատկերը։

Այլ է հերոսների կրօնը։ Իւ մանաւանդ մեր նկարագրած հերոսների։ Փնտրեցէք „եսի“ ու „հատուցման“ մտահոգութիւններ Մալօյեանի, Նեմրուզի գլխապատառ ու անհաշիւ վազքի մէջ։ Նրանք կարծես հնազանդւում են մի աւելի բարձր կատեգօրիայի, մի աւելի վսեմ տարերքի, քան թէ այն՝ որ առաջադրում է Էմանուէլ Կանտ, իր „վճռական հրամայականների“ մէջ։ Կանտի երևակայած հերոսների մօտ՝ զոհելու կամքն ու որոշումը բղխում են Պարտակա-

նութեան գիտակցութիւնից. այստեղ—ասես հակառակն է. այստեղ կամքը առաջնական և տիրական գործօնն է։ Մարդիկ զոհաբերւում են յանուն իրենց դաւանած գաղափարի ոչ թէ այն պատճառով, որ մի „գերագոյն պարտականութիւն“ վճռականօրէն հրամայում է նրանց, այլ որովհետև զոհւելու կամքը այնքան ուժեղ է շեշտւում նրանց մէջ, զգացումները այնքան յորդացած ու տիրական են, որ անհնարին է ընդդիմադրել նրանց յորձանքին։

Ասե՞լ արդեօք, որ նրանք մղւած են անձնական տառապանքից ու վրէժխնդրութեան ծարաւից, որ այդ մեծ, անձնուրաց հոգիները տանջւել են նախ և առաջ իրենց ծնողների, հարազատների մահւան ու տառապանքի տեսարաններով... Կան, անշուշտ, այդպիսիները հայ հերոսների շարքերում. բայց և քանի՜սը կան, որ այդ տանջանքը չեն ճաշակել, չեն ապրել, այսպէս ասած, իրենց սեփական կաշւի վրայ... Դրանցից են մեր Թւածները։

Ահա Զաքարեանը... Դուրս ենք գալիս կուսակցութեան շրջանակներից՝ փնտրելու հերոսային առանձնատիպարներ այլ շարքերում։ Դասաւորում ենք, ընթերցող, մեր դէմքերը ոչ ըստ մեծութեան, առաջնութեան, այլ միանգամայն պատահաբար և այն՝ անձնական ծանօթութեան սահմաններում։

Զաքարեանը—մի ճոխ ու շարժուն իմացականութիւն, որ կոչւած էր մեր մտաւոր կեանքի զարդերից մինը լինելու։

Զաքարեանը—ահա Կանտի „կատէգօրիկ իմպերատիվի“ անձնաւորումը։ Այդ նրբամիտ և կրթւած երիտասարդը, դեռ նոր բազմած բախտի բերմամբ համալսարանական նստարանի վրայ, ծանուցանում է բարձ-

բաձայն. որ ժամանակակից հայ սերնդին վիճակուած չէ պարզելու ուսման ու „կուլտուրականութեան“ դրօշակը, այլ որ կայ մի աւելի բարձր, հրամայական պարտականութիւն—թիւրքահայոց ազատագրական պայքարը—որին պէտք է հպատակուին և որի շուրջը պիտի կենտրօնանան մեր բոլոր ուժերն ու ճիգերը։

Եւ նա ինքը տալիս է առաջին օրինակներից մինը. նա ինքը դառնում է այդ կ ա տ ե գ օ ր ի կ հ ր ա մ ա յ ա կ ա ն ի ողջակէզը... Զաքարեանը՝ արեան դաշտում, թէկուզ քարոզչի պաշտօնով... Թւում էր անհեթեթութիւն, ֆէնօմեն... Մի մարդ, որին ատրճանակի տեսքն անգամ արհաւիրք էր ազդում... Շուշու արքունական դպրոցի մէջ 80-ական թւականներում ընկերներին պէտք էր լինում շարունակ հսկել, պաշտպանել նրան խուժդուժ տարրերի սովորական յարձակումներից. այդ քնքշատիպ էութիւնը բնաւ ստեղծուած չէր արկածաւոր ու աճաւոր մարզանքների համար. բայց կեանքը նրան էլ կերպարանափոխեց... 90-ական թւերի արշալոյսին „ձայնը հնչեց Էրզրումի լեռներէն“ և այդ ձայնի հետ հնչեց նաև Թիւրքահայոց հեծեծանքը։ Զաքարեանը ծընեվ է գալիս կարծես միայն վերջնականապէս համոզուելու իր համոզման մէջ՝ որ բարձր ուսումն ու զարգացումը սահմանուած են մեր ապագայ սերունդներին միայն։ Սիսատ է թողնում համալսարանը և... դէպի երկի՛ր... Գնալն ու նահատակուելը համարեա թէ մէկ է լինում...

Ecce homo!... Բնութիւնն ամեն բան տուել էր նրան՝ կեանքը վայելելու և փայլուն, նախանձելի դիրք ստեղծելու, բայց նա իր ներքին հրամայականի մղումով՝ գրեթէ անզէն նետուեց արիւնոտ արկածների դաշտը, թոյլ՝ ֆիզիկական կարողութեամբ, բայց ուժեղ՝ իրաւունքի գիտակցութեամբ։ Բռնակալութեան գռեհիկ

ձեռքը հնձեց այդ ընտիր ծաղիկը ևս, ընդամենը 24 տարեկան հասակում... Խե՜ղճ Զաքարեան նա կարող էր Մեծ Յեղափոխութեան օրերի լացող Անդրէ Շենիէի պէս բացականչել.

Au banquet de la vie à peine commencé
Un instant seulement mes lèvres ont pressé
La coupe en mes mains encore pleine *)..

Ահա Մարտիկը: Մի բոլորովին տարբեր տիպ, Զաքարեանի հակոտնեան: Երկուսն էլ հասակակիցներ, երկուսն էլ փթթւում են նոյն միջավայրում: Զաքարեանը աշակերտութեան աստղերից է, սիրուած, գուրգուրուած, գաղափարական և հաղորդական (*sociable*). Մարտիկը՝ մռայլ, ինքնամփոփ ու փոքր ինչ եսապաշտ. հեռու գաղափարական թռիչքներից, զուրկ հասարակական ամեն բնազդից, յաճախ հալածուած ընկերներից իր անհամբոյր բնաւորութեան համար. չունի Զաքարեանի ոչ պերճ լեզուն, ոչ էլ հարուստ ընդունակութիւններն ու զարգացումը: Բայց արկածասէր է, մոլեգնոտ, ատրճանակը միշտ գրպանում: Այն ժամանակ, երբ Զաքարեանը հայրենասիրական ամենաբուռն յափշտակութեան մէջ՝ գիշեր-ցերեկ տնքում է Րաֆֆիի ու Պատկանեանի վրայ, անգիր է անում „Կայծերի“ ու „Սամուէլի“ ամբողջ էջեր—Մարտիկը հրացանը ճտին, որսորդական պարկը կապած, թափոր է անում Ղարաբաղի, Վարանդայի անտառներում:

Ճակատագիրը միացրեց երկու երիտասարդ հակոտնեաներին—երեք տարուայ տարածութեան վրայ—հայ ազատագրական մարտադաշտի երկու հակադիր բևեռ-

---

*) Հազիւ սկսուած կեանքի խնջոյքին՝
Մէկ վայրկեան միայն իմ շրթունքները
Սեղմեցին ձեռքիս բաժակը՝ դեռ լեցուն...

ներում. մէկը՝ Մարզւան, 1893 թ., միւսը Վասպուրական, 1896 թ.։ Երկուսն էլ կիսատ թողին համալսարանը, որպէս զի երթան ծնրադրելու Հայրենիքի ու ցեղափոխութեան աստուծու առջև։ Երբ տարածւեց, որ Պետօի և Աւետիսեանի հետ կռւող ու նահատակւող խմբապետը ղարաբաղցի Մարտիկն է,—անակնկալի մի ժպիտ սահեց ծանօթների դէմքերին... Բայց հայկական իրականութիւնը շատ է ունեցել այդ տեսակ մետամօրֆօզներ (կերպարանափոխումներ) և կօնտրաստներ։ Կօնտրաստը (հակապատկերը) մեր կեանքի ամենախորունկ իմաստն է...

Ահա և ժ ո ղ ո վ ր դ ա կ ա ն տաղանդաւոր պրօպագանդիստներ, առաքեալներ։

Հ ր ա՛ յ ր ը, Ո ւ ր ո ւ ա կ ա՛ ն ը, Դ ժ ո խ ք ը... Երեք անուն և մէկ բնութիւն։ Երեք մակդիրներն էլ բնորոշում են միևնոյն անհատին։ Հրայրը ուրուականային պատկեր ունի, ուրուականը՝ հրացայտ աչքեր. երկուսն էլ դժոխային ատրիբուտներ են, որ մշտապէս վրէ՛ժ ու ատելութիւն են շնչում, դա՛ւ, երկաթ, թոյն, ուժանակ... Ահա տեսնում եմ նրան Ղարսի մի խուլ անկիւնում, իր պաղ, խորունկ, մելամաղձոտ հայեացքով, շրջապատւած իր զինւորներով։ Այդտեղ է և Արամեանը։ 1895-ի աշունն է, մեծ փոթորիկների նախօրեակը. պատրաստւում են 100 հոգով անցնելու սահմանագլուխը. Սերոբն անցել էր քիչ առաջ իր սեփական արշաւախմբով։

Տեսնում եմ այդ փոքրիկ, վտիտ մարմինը, ընկած հոյակապ ռազմիկների առաջ, որպէս շէֆ, հրամանատար։ Հրա՜յրն է։ Ժպիտ չը կայ երեսին, հայրենական թախիծը դրել է վրան իր անջնջելի կնիքը. խօսում է հանդարտ, անոյշ ձայնով և անսովոր դիւրութեամբ, աչքերը յառած տարածութեան մէջ, խօսում է պերճ

դարձւածներով և բազմաթիւ զինւորները լսում են խոր ու պատկառոտ ուշադրութեամբ... Ժողովրդական հազւագիւտ քարոզիչներից էր. սկզբից ի վեր, արդէն շարժման արշալոյսին, նա ժողովրդի ծոցումն է, մշակում է նրան, դաստիարակում ու պատրաստում գալիք „հարսանիքների“ համար, խմում է առատութեամբ նրա արցունքի ու տառապանքի ովկիանից, վառում է նրա մէջ մթերւած ատելութեան կրակով...

Եւ այդ կրակը ցոլում է հզօր, կարմրավառ բոցերով՝ Հրայրի դիւթիչ նամակներում։ Այդ նամակները մի իսկական շեդեօվր են մեր յեղափոխական գրականութեան մէջ. լեզւի, ոճի գոհարներ։ Հայ յեղափոխականը ողբում է իր ժողովրդի անյատակ վիշտը և բոցաշունչ տողերով արտասւեցնում ամենակարծր սրտերն անգամ... Տասնուհինգ տարի շարունակ նա հաւա՛ր էր գոռում Հայաստանի խորքերից, ցնցում էր անտարբերներին, ոգևորում, վառում և քարշում դէպի իրեն՝ զգայուն երիտասարդութիւնը։

1904-ին—վերջին հաւա՛րն էր... Երկու ամսւայ օրհասական մաքառումներից յետոյ՝ ազատութեան բանակը սկսել էր իր տխուր, ճակատագրական նահանջը դէպի Տալւորիկ և Անտոք։ Դժոխքը — առաջին շարքերում՝ Վահանի, Անդրանիկի, Ջաւուշի հետ... Վտիտ մարմինը նորէն ու վերջին անգամ ցցւեց Սասունի լերկ ապառաժներին և արձակեց իր սրտառուչ ու ցնցող յորդորը դէպի անտարբեր հայութիւնը, իր թունոտ ու սասանեցուցիչ անէծքը՝ դէպի անտարբեր աշխարհը, Եւրոպան, դիւանագիտութիւնը։ Ապա մի գնդակ... մի չարաշուք ու մահառիթ սուլոց... մի գռեհիկ քրդի կամ զինւորի հրացանից ընդհատեց այդ մեղանոյշ ու պերճախօս ձայնը, որ այնքա՜ն երկար հնչել էր Տարօնի հովիտներում իր ողբագին ու ռազմաշունչ դայլայլներով...

Ամբողջ կեանքը—դառնութիւն։ Ամբողջ կարիէրը—փուշ ու տատասկ, մի անդադրում նահատակութիւն։ Այդպէս են հայկական վիպերգութեան գլխաւոր և տիրական դէմքերը։ Եւ ի՞նչ հերոս էին նրանք, եթէ այլ կերպ լինէին…

„Վա՜յ հերոսին—ասում է Կարլայլ—եթէ նա դիտէ կեանքը իբրև աղբիւր ուրախութիւնների, իբրև կարիէր, ասպարէզ իր եսը բարձրացնելու։ Վա՜յ հերոսին, եթէ նա չեղւի անհրաժեշտ պարտաւորութիւնից՝ ընդունելու մարտիրոսութեան պսակը, յանուն իր համոզումների“…

Վ ա հ ա ն Մ ա ն ո ւ է լ ե ա ն ն է պատկերանում աչքերիս՝ 1897-ին, Դանուբի եզերքում, ռումանական Ջիւրջեօվօի մօտ, տխուր ու երազուն, աքսորականի կեանքից բէզարած և անողոք nostalgie-ն սրտի մէջ… Ո՞վ կարող էր գուշակել, թէ այդ ջարդուած, տրորուած գոյութիւնից պիտի ծնուէր յետագայում Սասունի Վահանը։ Կեանքն ասես հանգչել էր նրա մէջ, գանգատուելու անգամ ուժ չունէր և հազիւ էր բերանը բաց անում։ Բայց ահա նորէն խօսեց հայկական իրականութեան կ օ ն տ ր ա ս տ ի ձայնը, „սրբազան հուրը“ մի օր սկսեց լափել նաև այդ լքուած էութիւնը… Վահանն առաւ ցուպը և—ճանապա՛րհ… դէպի այնտեղ, ուր շատերը չէին հասնում ու կէս-ճամբուն նահատակւում էին, դէպի այնտեղ, ուր Սերոբի մահից յետոյ որբացած թառել էին մեր փոքրաթիւ արծուիկները… դէպի „Ապրօի գերեզմանը“… Կովկաս, Պարսկաստան, Վասպուրական—Սասուն… Մի գեղեցիկ Ոդիսսիական…—և հայատիպ մետամֆօրմօզի մի նոր նմուշ։ Դիւցազնական լեռնավայրը վերածնում է Վահանին, նոր ոգի է ներշնչում նրան — և նա ինքը դառնում է այնուհետև պատրաստուելիք շարժման հո-

գին, գործում է անզուգական եռանդով, մինչև վերջին, եղերական վայրկեանը, երբ նա էլ շատերի պէս ընկնում է գնդակների տարափի տակ և անհետանում Սասունի ամենակուլ անդունդներում։

Հապա Պետօ՜ն... Րաֆֆիի Ասլանը... Նրա երկարամեայ ու „սոորերկրեայ“ մարտիրոսութիւնը և ողբերգական վախճանը։ Մէկը տաղանդաւոր „ռահվիրաներից“, որ Գօլօշեանի ու Ագրիպպասեանի ձախորդ, ցաւագին փորձերից յետոյ գնացել էր մշակելու խոպան, անշնորհակալ հողը ամենահայաշատ կենտրօնում. մէկը առաջին „առաքեալներից“, որ իր անդուլ, հերոսական ճիգերով, գաղտագողի գործունէութեան անբաւ զրկանքների մէջ, կարողացաւ դպրոց ստեղծել երիտասարդ ու խանդավառ գործիչների և դրանով իսկ պատուաւոր տեղ գրաւեց մեր նորագոյն պատմութեան մէջ։

Հապա մի՞ւս Պետօն, բուլգարացին, Խանասօրի Սեբեոջեանը, որ Ադրիանուպօլսի կախաղանից մռնչում էր իր դահիճներին.

—„Ինձ կը կախէ՜ք, Թշուառականներ, բայց Գ ա ղ ա փ ա ր ը չ է ք կ ա խ ի“...

Հապա Կ ա ր օ՜ ն—Ա ր ի ս տ ա կ է ս Զ օ ր ե ա ն ը... Գաղափարի ֆանատիկոսը և յանդուգն մարտնչողը։ Խանասօրում՝ վագրի պէս ոստոստում է և աջ ու ձախ դիակներ փռում իր չեշտակի հարուածներով։ Զարագործ աշիրէթը մեծ մասամբ ջնջուել է արդէն, մնացածը փախուստ տուել. ընկերները յորդորում են շտապել դէպի սահմանագլուխ, մինչև նորանոր խուժանների ու զօրքերի ժամանումը. բայց կտրիճը արհամարհում է զգուշութեան խորհուրդները և հետամտում փախչողներին, էլի՛ զարնում, էլի՛ հովացնում վրէժխնդրու-

թեամբ այրւող սիրտը․․ Վերադարձ չը կա՛յ... Նա պաշտում էր վտանգը և զոհ գնաց այդ պաշտամունքին...

Քանի՛ այդպիսի Կարօններ. . .

„Կայծերի“ հեղինակը կը ցնծար ի տես այդ կուռ ու փառահեղ բոյլերի․․ Նա կը տեսնէր թերևս իր Կարօններին ու Ասլաններին գ ե ր ա զ ա ն ց ւ ա ծ, աւելի ծանր ու խորհրդաւոր առաքելութեամբ, աւելի մեծ ու հրապուրիչ կերպարանքով... Օ՛, Րաֆֆին իր խօլական երազների մէջ չէր կարող նախատեսնել, թէ ինչ անպատմելի արհաւիրքների, ինչ լեռնացած խոչընդոտների պիտի զարնուէին հայ ազատագրութեան զինուորները...

Ահա և լեռների Արծիւը, հայկական Ց ա ւ ե լ լ ա ս ը... Ամբողջ տարիներ թառած Նեմրութի անառիկ գագաթներին. սարսափը կառավարութեան ու աշիրէթների, պարծանքն ու մխիթարութիւնը ահաբեկւած և վշտատանջ ժողովրդի... Միքել Անջելօի վրձինն է պէտք՝ ծեփելու համար Նրա առնական կերպարանքը, Նրա աչքերի մոլեգին փայլատակումը. Նրա կեանքը մի հոյակապ քերթւած է, Նրա գործը—պատմութեան ամենաչքնաղ էջերից մինը... „Սերոբ-փաշա՛ն“, որին Պրեսսանսէն մի օր ֆրանսիական պարլամենտում, իր մի հուժկու և զգացւած ճառի մէջ անւանեց՝ „*le légendaire Sérob*“...

Մինը՝ „փաշա“, միւսը՝ „փադիշահ“...

Մինը՝ Տարօնի բարձունքներում, միւսը՝ Ղազախի գաւառում...

Մի տեղ քրդի, մի այլ տեղ թաթարի ասիական երևակայութիւնը անսովոր յատկանիշներ է հաղորդում հայ ռազմիկ-հրոսակապետին։ Սա՛քօն, մեր անմոռանալի Սաքօն... Ի՜նչ անողոք մահ էր դա և ինչ անդարմանելի սուգ։ Ահա մի կեանք—նոյնպէս հիւսւած հերոսու-

թիւնից ու նահատակութիւնից։ Երեք տարի Մուշի բանտում, կախաղանի պարբերական սպառնալիքի տակ։ Դ՞ա կեա՛նք էր...

Եւ քանի՛ տարւայ դիւցազներգութիւն... Հերոս՝ առանց „ձեւերի“, հերոս՝ առանց ցուցամոլութեան ու յաւակնութեան։ Ուժեղ՝ սրտով ու կամքով, ուժեղ՝ մտքով ու բազուկով։ Երբեք չ՚ընկճւող դժբախտութեան ու վշտի բեռների տակ, միշտ ուրախ ու կենսաթարմ, միշտ անտրտունջ սպասաւոր կուսակցութեան ու գաղափարի։ Մուշի տանջալի նահատակութիւնից յետոյ նա նոյն զւարթ Սաքօն է, սազը ձեռին և մեղեդին շրթունքներին... „Կովկասեան Վանդէաի“ դժոխային օրերում՝ նա նորէն իր տեղն է, իբրև ժողովրդի զինւոր։ Բայց նա սոսկ զինւոր չէ, այլ փ ա տ ի շ ա հ... Մի „դիւցազն“, լեգենդական մի ոգի, իր ոսկեփառ ու շլացուցիչ զինաւորութեան մէջ, աներևոյթ ու անպարտելի... Նրանից դողում ու պատկառում են,—պատկառում են անգամ իր ոսոխները... Սաքօ-փատիշահը լանկթամուրական գծերով օժտւած մի հրոսակապետ չէ, այլ և բարոյական մի կախարդիչ հմայք, այլ վեհանձն մի մարտիկ. նա միայն չի զարնում, այլ և յաճախ հանդէս է գալիս, հաշտարարի դերի մէջ, խաղաղութեան ձիթենին իր ձեռին...

Մի փոթորկից—դէպի միւսը... 1908-ի վերջերին պատրաստւում է անցնելու Մայր-Արաքսը և օգնութեան հասնելու նոյն հարազատ ժողովրդին, նրա երբորդ բեկորին, որ ապրում էր յեղափոխութեան փոխանցումի տագնապը։ Մահը շանթում է նրան կէսճանապարհին...

Ի՞նչ գեղեցիկ կարիէր։ Որպիսի՛ ջինջ, բիւրեղ հոգի։ Քիչ չենք հանդիպում այդպիսիներին մեր հերոսների շարքերում։ Դրանք կենսարար օվազիսներն են

մեր անփառունակ իրականութեան մէջ... Սաքօն ոչ միայն մարմնացած անձնազոհութիւն է, այլ և մարմնացած դ ի ս ց ի պ լ ի ն, հնազանդութիւն։ Ահա մի բան, մի խոշոր առաքինութիւն, որ պակասում է մեր „անարշիկ“ իրականութեան մէջ։ Դիսցիպլին՝ հանդէպ կազմակերպութեան, հնազանդութիւն՝ հաւաքական կամքին ու վճիռներին։ Առանց դրանց՝ գաղափարական ոչ մի գործ չի պսակւել յաղթանակով...

„*Sono pronto, fratello, ditemi quando, dove, come!*“... „Պատրա՛ստ եմ, եղբայրս, ասացէք միայն—ե՞րբ, ո՞րտեղ, ի՞նչպէս“... Այս պարզ, անպաճոյճ խօսքերով էր պատասխանում Գարիբալդին այն պատմական օրը, երբ Մաձձինին առաջին անգամը կանչել էր նրան տեսակցութեան։

„Պատրա՛ստ եմ, հնազանդւո՛ւմ եմ“—դա Սաքօի սովորական նշանաբանն էր Կուսակցութեան կոչերի հանդէպ։ Հնազանդութիւն՝ առանց աւելորդ առարկութիւնների, առանց թուլամորթ վարանումի։

Այդպէս է մեր ամենասիրելի հերոսներից մինը... Նա փառք չը փնտրեց և սակայն հասաւ փառքի ու հմայքի գագաթնակէտին, արժանացաւ ժողովրդական միահամուռ ապօթէօզի...

*

Երկա՛ր, շատ երկար կարող է ձգւել կարմիր շարանը՝ Բայց մենք պատմութիւն չենք գրում։ Կը գայ ժամանակ, երբ լոյս կը հանւին անյայտութիւնից, մոռացութիւնից՝ հայկական դրամայի բոլոր անանուն գործողները։

Ինչպէ՞ս, սակայն, մոռանալ Թ ա բ կ է ն-Ս ի ւ ն ի ի ն, որ դաւադիր-յեղափոխականի բուն իսկ տիպարն էր Թիւրքահայոց մէջ։ Ինչպէ՞ս մոռանալ նրա սրտառուչ նամակը, որ ուղղում էր մեզ, Ժընեվ, 1896-ի օգոս-

տոսին, մահուան պատրաստուելիս... Մեռնելու գնացողը իր „վերջին նամակն“ էր գրում ընկերներին, իր վերջին հրաժեշտի ողջոյնը։ Նա վճռել էր coûte que coûte իրագործել սարսափելի յղացումը— և այլ ևս ողջ չը պիտի դառնար Թանկայից, եթէ չը լինէր իսկ մուտքի դժբախտ պատահարը...

Ի՞նչպէս մոռանալ Դերօյեանին, մեր աննման Վ ա զ գ է ն ի ն... Ռէակցիայի մի զարհուրելի թւականում, Վանի ու Վասպուրականի ջարդերից, Պետօի, Աւետիսեանի մահից յետոյ, գրեթէ մենակ հայրենական խեղդուկ մթնոլորտում, հալածուած շարունակ կառավարութիւնից, որ գնահատել էր քաջի գլուխը, հալածուած և հայրենակից աղաներից ու լրտեսների վոհմակներից, շարունակում է ծածանեցնել կարմիր դրօշը և կռւել ու չեփորել մինչև վերջ.

„Յառա՜ջ, ընկերներ, քաղաքակրթութիւնը զոհեր է պահանջում“...

Իսկ ի՞նչ ասել կովկասեան և պարսկական ճակատամարտներում նահատակւած դէմքերի մասին։ Ի՞նչ ներբողանք կարող է սպառել նրանց հոգու թռիչքները, անձնուրացութեան ու յանդգնութեան խոյանքը... Ժ ա մ հ ա ր ե ա ն ը — կովկասեան Թաքէն-Սիւնին, Մարտիրոսը — խօլական տերրորիստը, Նիկօլը, Արտէմը, Ստեփանեանը — կտրիճ խմբապետներն ու առաջամարտիկները. Կարօն, միւս Կարօն, աստրախանցին, որ գիտցաւ Արամեանի ու Պետօի անվեհերութեամբ մեռնել Դումբաձէի ցցած կախաղանի վրայ. Քանի՞սն են նրանք...

Անհամար են հայկական ազատութեան հերոսատիպ զոհերը—կռւողներ, դաւադիրներ, տերրորիստներ, զինակիրներ, քարոզիչներ, Տաճկաստանում, Կովկասում, Պարսկաստանում,—բոլորն էլ կոչւած քաղաքակրթական

մի ազնիւ աշխատանքի, բոլորն էլ հնձւած բռնակալութեան մի գռեհիկ ու զազիր մանգաղով։

Եւ այդ անհամար շիրմերի վրայ, հերոսների այդ սըրբազան պանթէօնի բարձունքներում՝ հպարտ, թեւատարած սաւառնում է „Վիտօշի Բազէն“,—մեր մեծ, անմոռանալի վարպետը, նա, որ կարողացաւ ոգի տալ այդ այլազան շարքերին, որ յղացաւ ու կազմակերպեց պատմութեան ամենամեծ դաւերից մինը և որ ընկաւ կէս-ճանապարհին... մեռաւ, որպէսզի ապրի մի ուրիշը—սալօնիկեան վիլլայի մենաւոր Չարագործը... փոխն ի փոխ՝ քարոզիչ, կազմակերպող, բանտարկեալ, աքսորական, նորէն քարոզիչ, խմբագիր ու հրապարակախօս, ապա դաւադիր, ռմբագործ և նահատակ—նա վերարտադրեց, կարելի է ասել, իր հմայիչ անձնաւորութեան մէջ՝ մեր շարժման բոլոր ձեւերը, մեր կռւի արկածալի ճակատագիրը, և դարձաւ հայ յեղափոխութեան ս ի ն թ ե զ ը, համադրութիւնը...

Gloria victis!... փա՛ռք նրանց, բոլոր յաղթւածներին, գաղափարական պատերազմի բոլոր զոհերին...

Դաւադիր, վրիժառու, տերրօրիստ — նրանք բոլորը նախ և առաջ մ ա ր դ են։

Պատերազմի, բռնի ուժի սիրահար—նրանք բոլորը էապէս խ ա ղ ա ղ ա ս է ր են, տենչացող համաշխարհային եղբայրութեան։

Մահացած գրեթէ միշտ իրենց ծաղիկ հասակներում—նրանք գրկում են ա ն մ ա հ ո ւ թ ի ւ ն ը, յաւերժանում են ժողովրդական աւանդութիւնների ու տաղերի մէջ։ Բռնակալութիւնը անդամալուծում է նրանց ձեռքը—երբե՛ք հոգին...

Հայ ժողովուրդը չի կարող, աւա՜ղ, ուրիշ, երբեմն իր բախտակից ժողովուրդների պէս, մի օր հաւաքել այդ

անթիւ ու թանկագին նշխարները և ամփոփել ընդհանրական. հոյակապ մի սրբարանում: Քանի՜ նւիրական դամբարաններ, ձգւած հապճեպ ու դողացող ձեռքերով, հեռու, անյայտ վայրերում, քանի՜ դիակներ՝ մնացած անտէր, անթաղ, անշիրիմ... Ո՞ւր են Պետօ, Ջաքարեան, Աւետիսեան, ո՞ւր է Արաբօն, ո՞ւր Սերոբը, Քեռին, Վահանը, Կայծակը, ո՞ւր են կայծակի խմբի ռազմիկները՝ Բուլանըգցի Աւգալը, Ռաշօն, Սև Համօն, Ռուբէնը, Խաչիկը, Յարօն, Գլօյեանը, ո՞ւր են Կրետացին, Սաղաթելը, Ոսկանեանը, Բիձան, Վանեցի Գասպարը, Ղարաբաղցի Նիկօլը, ո՞ւր Խանը, Նեմրուզը, Մալօյեանը, ո՞ւր Կարօն ու Թորգոմը, ո՞ւր Քէնդէրեանը, Երկաթը, ո՞ւր կորաւ Արշաւիր Կամսարականը, ո՞ւր են Ապրօն, Գուրգէնը, Սայդօն, ո՞ւր Ազիզօֆը, ո՞ւր են Խաստուրի Խաչատուր վարժապետն ու Ցարօն, Մարգար վարժապետը, Ալպէրը, Թէքիրդաղցին և հարիւրաւոր զինակիցները և հարիւրաւոր անանուն հերոսները... Վաղո՜ւց նրանք փոշիացել ու կուլ են գնացել Հայաստանի բուրաններին... Վաղո՜ւց հողը եռում է նրանց սրբազան աճիւններով—և եթէ այսօր հայրենիքի լայնարձակ տարածութիւնները չորցած, ամայացած են բարբարոսութեան համայնաջինջ ուրագաններից, ապա մի օր, ոչ հեռու ապագայում, այդ հողերը պիտի ծաղկին, կանաչին ու բարգաւաճին, որովհետև նրանք ոռոգւած են... մեր հերոսների արիւնով:

Պատի՜ւ քեզ, հայ ժողովուրդ: Պղտոր, տղմոտ հոսանքներ շատ ես տեսել քանի անգամ դարաւոր կեանքիդ մէջ. լէգէօններո՜վ ես արտադրել վատ, դաւաճան տիպարներ, թշնամիներ գաղափարի, թշնամիներ ազգայնութեան ու մարդկութեան,—բայց քո վերջին 20 տարւայ պատկառելի հերոսացանքը մոռցնել կը տայ շատ անպատիւ իրողութիւններ, ջնջել կը տայ շատ բարոյական արատներ, և դու կը բարձրանաս աստիճա-

նաբար, համարձակ՝ արժէքների ու առաքինութիւնների մացառապատ սանդուխով ու տեղ կը բռնես — յանձին քո մեծ, գաղափարական զաւակների — համամարդկային հոյակապ պ ա ն թ է օ ն ո ւ մ...

Ի՛նչ փոյթ, թէ մեր անզուգական, „աստուածատաճարը“ դուրս է մնում, նիւթից, տարածութիւնից։ Ի՛նչ փոյթ, թէ նա խուսափում է մեր տեսողութիւնից, մեր բարեպաշտ ուխտաւորութիւնից ու ծնրադրութիւններից...

Թո՛ղ նա կերտուի ժողովրդի արթնացող գիտակցութեան մէջ։

Թո՛ղ նա ամուր խարսխուի սերունդների հոգիներում։

* * *

Նահատակնե՛ր, նահատակնե՛ր...

Հապա բ ա ն տ ա ր կ ե ա լ ն ե՞ ր ը... Դեռ փա՛ռք մեռելներին։

Ո՞վ է չափել հայ կալանաւորի խօլական տագնապները չարչարանքի անկողնի վրայ, դահճի ճիրաններում, հարկադրուած դժոխային սպառնալիքի տակ բաց անելու իր սիրտը, բայց և միշտ ըմբոստ ու գաղտնապահ... Բաստիլը, Շիլիօնը, Վենետիկեան միջնադարեան նկուղները կը նսեմանան հայկական տանջարանների, ինկվիզիցիայի այդ մահահոտ զնդանների առջև։ Այդտեղ՝ ստօյիկեան համբերութեան հետ՝ օրէնք է ասիական զարզանդեցուցիչ երևակայութիւնը, տանջանքը՝ իր այլազան յղացումներով, գազանութիւնը՝ իր նրբացրած մեթօդներով։

Յիշեցէ՛ք 101 տարի՛ն... Որքա՛ն արցունք է քամել այդ զարհուրելի, տրաժիկօմիկ թիւը, որ իր դաժան հեռապատկերով բաժին է ընկել մասնաւորապէս հայ քաղաքական յանցաւորներին... Եւ ապրել են այդ յաւի-

տենական դատապարտեալները, զինուած գերմարդկային արիութեամբ, ապրել են, որպէս կենդանի նահատակներ, տարուբերուելով շարունակ կեանքի ու մահուան միջև, մեռել են ամեն օր և ամեն վայրկեան, մի անյոյս ու սրտաճաք գժոխքի մէջ, գիտակցելով, որ նրա դռները երբէք, երբէ՛ք չը պիտի բացուին, մինչև մահ... Եւ մեր բանտերը դարձել են յաճախ գերեզմաններ...

Ի՛նչ է Շիլիօնի հերոսների կրածը՝ համեմատած մեր դժբախտ ընկերների այդ անօրինակ մարտիրոսութեան հետ։ Ի՛նչ սրտառուչ երգեր կը հիւսէր Շիլիօնի երգիչ Բայրոնը՝ Նչըրգեօզեանի դամբարանի մօտ։ Ի՞նչ ներբողներ կը յօրինէր նա՝ մեր ուրիշ, մեռած ու ողջ ազատուած ընկերների ցնցող, արտասուելի արկածների առթիւ..

Դժո՛խք — ծայրէ ծայր դանտէեան վիթխարի մի դժոխք... Գրիչը սահում է արագ ու դիւրութեամբ նրա բիւրաւոր խորշերից, առանց նոյնիսկ մօտաւորապէս կարողանալու սպառել նրա անհուն, անանդունդ զարհուրանքը։

Խոնարհուելու ենք նաև այդ գաղափարային դժոխքի առջև, մեր հայկական Շիլիօնների առջև։ Բանտերը եղել են, անտարակոյս, Գաղափարի որրաններ, ինչպէս որ կախաղանները եղել են Ազատութեան հրդեհի վառելիք...

*

Փոքրիկ ժողովուրդ — հսկայական պանթէօն։ Հերոսների ու նահատակների մի հարուստ, անսովոր ցանքս... Ո՞վ է ասում, թէ մի այդպիսի ժողովուրդ կարող է մի օր չքանալ տիեզերական կեանքի բեմից...

Եւ մահը դեռ իր չարաշուք մագիլներով չի խեղդել, անդամալուծել մեր ուժեղ կենսունակութիւնը, չի ցամաքեցրել հերոսութեան աղբիւրները։

Մեռելների շարանից յետոյ՝ յիշե՞լ արդեօք ողջերին... Դեռ կան, փա՛ռք բախտին, հայկական հրապարակի վրայ—կծկուած իւրաքանչիւրը համեստօրէն իր նոր աշխատանքի շուրջը — հինաւուրց ժողովրդական ռազմիկներ, ճողոպրած հազար ու մի արկածներից...

Կան դրանց հետ և անթիւ գործիչները, — երիտասարդ, տաղանդաւոր, չարքաշ, հերոսական պրօպագանդիստներ ու վարիչներ։ Պատի՛ւ նրանց։ Չեն հիասթափուել, չեն յոգնել... Քսան տարուայ հայ յեղափոխութեան անօրինակ փոթորիկը, հարկաւ, փոքր ինչ տրորել է մեր վաղեմի ռազմիկներին. բայց նրանք տակաւին գարշում են ինվալիդական գոյութեան „հրապոյրներից“ և դեռ երեկ կանգնած էին շարքերի մէջ, մի արիւնալի մարտի դաշտում։ Այսօր եւս, իրենց խաղաղ կացութեան մէջ, ականջնին միշտ ձայնի վրայ, աչքերը միշտ դէպի հեռու հօրիզոնը—պատրաստ են նոյն երիտասարդական խանդավառութեամբ արձագանք տալ ազատութեան նոր շեփորին, կրկնելով մեծ, համաշխարհային Ռազմիկի անմոռանալի խօսքը՝

— „*Sono pronto!*“...

III

Ի՞ՆՉ ԱՐԻՆՔ ԵՒ Ի՞ՆՉ Չ'ԱՐԻՆՔ

Համազգային ինքնագիտակցութիւն.—Մէկ իդէալ եւ մէկ նշանաբան.—Դաշնակցութիւնը՝ սինթեզ հայ ժողովրդի երեք հոսանքների.—Միջկուսակցային համերաշխութեան փրփուրներ ու պատճառը.—Միջազգային համերաշխութեան աջողութիւնները.—Դաշնակցութիւնը եւ մակեդոնացիք. — Դաշնակցութիւնը եւ թիւրքերը. — Պրօպագանդը Եւրոպայում.—Քննադատութիւններ աջից ու ձախից.—Եզրակացութիւն.—

Հնոց—արդարև...

Ահագին է յեղափոխական շարժման դերը մեր ժողովրդի բարոյական յեղաշրջման մէջ։ Ահագին է նրա կշիռը և մեր ապագայ հանրային դաստիարակութեան համար։ Տարիները, հարկաւ, չը ջնջեցին դարերի և տասնեակ դարերի աւերածը։ Բայց այդ տարիները ևս շատ բան փոխեցին։ Դրւեց առողջ, արգասաւոր մի սկզբնաւորութիւն։

Յեղափոխութիւնը ոչ միայն աղբիւր եղաւ բարոյական մաքրագործման — անձնւիրութեան, զոհողութեան անդուլ մարզանքների մէջ—այլ նա խթան եղաւ և մեր ազգային հաւաքական ինքնագիտակցութեան, միութեան... Ո՞վ չի

յիշում հերոսական մօմէնտները մեր ազատագրական շարժման մէջ, երբ մի ցոյց Կ. Պօլսում, հրոսակային մի արշաւանք, ժողովրդական մի ապստամբութիւն երկրի մէջ՝ կայծակի պէս փայլատակում էր հայկական երկնքի վրայ, լուսաւորում ամբողջ ցիր-ցան հայութիւնը, Արաքսից մինչև Կովկասեան ու Տաւրոսեան լեռնաշղթաները, մինչև հեռաւոր գաղութները...

Յիշեցէ՛ք թէկուզ կովկասահայ ժողովրդի համաճարակ խանդավառութիւնն ու ցոյցերը Կ ո ւ կ ո ւ ն ե ա ն ի անդրանիկ արշաւանքի միջոցին... Ահա դարձեալ մի սիրելի անուն, որի հետ կապուած են այնքան յուշեր, նուիրական բաղձանքներ. ահա դարձեալ մէկը համեստ „ռահվիրաներից“, որի գեղեցիկ ժեստը զուգադիպւում է „Դաշնակցութեան“ հիմնադրութեան հետ և որը սահմանագլխի աղէտաւոր ընդհարումից յետոյ գնաց քաւելու իր անհաշիւ ու վեհանձն խիզախութիւնը 16 տարի շարունակ Սիբերիայի տունդրաներում... ու վերադարձաւ գրեթէ աւերակ։

„Ազգային համերաշխութեան“ յորձանքն ահագին էր մանաւանդ այդ առաջին օրերում։

Հայ ժողովուրդը երեք խոշոր բեկորներ ունէր, որ վաղուց հետէ ապրում էին իրարից անջատ, իւրաքանչիւրը իր առանձնայատուկ, եսական մտահոգութիւններով ու իղձերով։ Չը կար ընդհանուր ի դ է ա լ, չը կային ընդհանուր նշանաբաններ։

Ո՞վ պիտի տար նրանց այդ իդէալը, այդ ընդհանուր նշանաբանները, ո՞վ պիտի մկրտէր նրանց բոլորին մի ընդհանուր աւազանի մէջ, խառնէր արցունք ու տառապանք, ո՞վ պէտք է իրագործէր իսկական եղբայրակցութիւնը, միացնէր բոլոր երեքին միևնոյն մեծ ու նուիրական պայքարի շուրջը, յանուն ընդհանուր ազգայնական

իրաւունքների,—եթէ ոչ ինքը, յեղափոխական կազմակերպութիւնը։

Այստեղ ևս մեր նորագոյն պատմութիւնը սրտագրաւ էջեր ունի արձանագրելու։ Քսան տարւայ արիւնոտ մենամարտի ընթացքում՝ Դաշնակցութեան երբներանգ շարքերի մէջ, արդարև, մենք տեսնում ենք միացած ազգի երեք հատուածները — թիւրքահայ, ռուսահայ, պարսկահայ... Արիւնի եղբայրութիւնը՝ ուժեղացած, կրկնապատկուած՝ գաղափարի եղբայրութեամբ։

Ո՞վ կարող է ջնջել տիեզերական պատմութեան էջերից՝ արիւնակցութեան, ազգային համերաշխութեան այդ հոյակապ ժեստերը... Ամեն տեղ եղել են նրանք,— մենք ևս բացառութիւն չը կազմեցինք։ Մերը գուցէ աւելի սրտառուչ էր ու հազւագիւտ... Ընկած տարբեր միջավայրերում, ապրած դարերով տարբեր գոյութեամբ, գրեթէ իրարից խորթացած, տարբեր բարքով, կրթութեամբ՝ հայ ժողովրդի այդ երեք հատուածները մէկէն ի մէկ, ռազմի շեփորը հնչելուն պէս, զիրար գտան,— յանձին իրենց գիտակից առաջադէմ տարրերի — համակուեցին մէկ տենչանքով, համախմբուեցին մի մեծ, դժբախտ դատի շուրջը, որ նրանցից իւրաքանչիւրի համար լոկ եսական, հատուածային մտահոգութիւն չէր, այլ ընդհանուր, գաղափարական, համազգային։

Դաշնակցութիւնը եղաւ իրօք հայ ժողովրդի երեք մասերի դաշնակցութիւն. Նա եղաւ նրանց շաղկապը, համադրութիւնը։

Եւ մենք տեսնում ենք երեքին քսան տարուց ի վեր քով քովի՝ թէ Տարօնի ու Վասպուրականի մարտադաշտերում, թէ կուսակցական համագումարներում և թէ վարչական կենտրոններում, խմբագրատներում... Մէկ տեղ ապրեցինք, տառապեցինք, մէկ տեղ ոգևորւեցինք

ու տխրեցինք և կենդանի գործի շուրջը՝ իրար ճանաչեցինք, գնահատեցինք...

...„Եղբայր եմք մենք,
Որ մրրկաւ էինք զատուած.
Բախտի ամեն ոխ չարանենգ,
Ի մի համբոյր ցրւին ի բաց"...

Պեշիկթաշլեանի այդ սիրուն խօսքը իր ուժի ապացոյցը տուեց տասնեակ տարիներ յետոյ... Թիւրքաց Հայաստանը գերեզման դարձաւ բազմաթիւ ռուսահայ երիտասարդների համար. Հայրենիքի խորանին ինքնաբերաբար զոհուեցին Պետոները, Զօրեանները, Գուրգէններն ու Թորգոմները։ Բայց... ճակատագրի մի դըժբախտ „ռըվանշով"՝ վրայ հասաւ եղբայրական հ ա տ ո ւ ց մ ա ն ժ ա մ ը Անդրկովկասում, ուր Թաթար խուժանների համատարած գրոհի միջոցին՝ Թիւրքահայ ընկերները Մուրադների ու Սեպուհների առաջնորդութեամբ հերոսաբար կուրծք տւին աղէտին, կոտորեցին ու կոտորուեցին կովկասահայ ռազմիկների շարքերում...

Իսկ 3—4 տարի յետոյ՝ Դաշնակցութիւնը փոխադրուեց Պարսկաստան, ուր նոյնպէս յեղափոխական փոթորիկների միջոցին շեշտուեց կռուի դաշտում երեք տարբեր հատուածների արեան, շահերի, նպատակի ու տենչանքների մ ի ո ւ թ ե ա ն գիտակցութիւնը... Ոչ մի անջրպետ, ոչ մի սահմանագիծ չի կարող բաժանել միևնոյն ազգի, ժողովրդի այդ բեկորները, որ կազմում են մի Ներդաշնակ օրգանիզմ, կոչուած աշխատելու թև թևի՝ յանուն ընդհանուր ու լիակատար վերածնութեան, կոչուած բարձրանալու թև թևի՝ կուլտուրական սանդուխի աստիճաններով, մինչև լուսագոյն հասարակակենցաղը, երբ ա զ գ ի շահը կատարելապէս կը Ներդաշնակւի մ ա ր դ կ ո ւ թ ե ա ն շահի հետ...

*

Մէկ կէտի վրայ միայն՝ չենք կարող անդրադառնալ առանց ցաւի… Միացնելով մի ներդաշնակ համադրութեան մէջ հայ ժողովրդի ցիր ու ցան բեկորների գաղափարական ու մարտական ուժերը, նպաստելով, այսպէս ասած, համազգային ա մ բ ո ղ ջ ա ց մ ա ն (*intègration*), մենք, սակայն, չ՚աջողեցինք միացնել մի ընդհանուր դրօշակի տակ հ ա յ յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն կ ո ւ ս ա կ ց ո ւ թ ի ւ ն ն ե ր ը։ Ծրագրային տարբերութիւնները չէին, ի հարկէ, որ կարող էին արգելք լինել ուժերի համախմբման, գէթ համերաշխ գործակցութեան։ Բայց նա երբէք չ՚իրագործւեց, գրեթէ երբէք։ Ո՞վ է մեղաւոր… Հանդէս գալով յեղափոխական շարժումների արշալոյսին՝ Դաշնակցութիւնը, հաւատարիմ իր ընդունած անունին իսկ, ամեն ջանք ի գործ դրեց՝ միացնելու այլ և այլ յեղափոխական հատուածները, նա պիտի լինէր բոլոր այդ գործօն հատուածների „դաշնակցութիւնը“։ Ապարդիւն անցան բոլոր ջանքերը. բանակցութիւնները, սկսուած տակաւին 1890-ից՝ վիժեցին. հատուածները առաջ գնացին իւրաքանչիւրը ջոկ դրօշակով և դա թուլացրեց մի յայտնի չափով մեր կռիւը, դիմադրութիւնը։ Ո՞վ է դարձեալ մեղաւոր, որ յետագայում, երկար ու ձիգ տարիների ընթացքում՝ գրեթէ չը տեսանք մեր հակառակորդ հատուածների մէջ գաղափարական ուժեր՝ ժողովրդական դատին նւիրւած, որոնց հետ հնարաւոր լինէր իրաւախոհել, միանալ, առանց վտանգելու մեր սեփական գոյութեան խարիսխները, առանց հետևաբար վտանգելու ընդհանուր գործի ապահովութիւնն ու յարատևութիւնը…

Անցեալն է անց… Չէինք ուզի այս հանդիսաւոր օրերին նորէն խառնել հին վէրքերը, բայց համոզւած ենք, որ մեր հակառակորդ կուսակցութիւնների շիտա-

կամիտ անհատները—այդպիսիք դեռ կան, բարեբախտաբար, նրանց շարքերում—անդրադառնալով մօտիկ անցեալի իրողութիւնների վրայ, իրենք իսկ գոհ են, պէտք է լինեն գոհ՝ որ այդ չարատանջ, մեր արիւնոտ օրերի մէջ հազար անգամ հոլովւած ու ներբողւած „Միութիւնը" գլուխ չ'եկաւ...

Մեղաւոր չենք, որ ստիպւած եղանք յետ մղել միշտ միութեան առաջարկները այնպիսի մարմինների կողմից, որոնց մէջ վաղաժամ բուն էին դրել կազմալուծման սաղմերը և որոնք կէս-ճանապարհին պառակտւեցին մի ողբալի ճակատագրականութեամբ ու թունաւորեցին յեղափոխական մթնոլորտը... Թունաւորեցին այն աստիճան, որ մի օր—նզովքի արժանի մի շաբաթ—պարզեցին քաղաքակրթւած աշխարհի առջև ներքին երկպառակութեան զարհուրանքը, կազմակերպելով Լօնդօնի արուարձաններում վայրենի, անարգ, ժողովուրդների տարեգրութեան մէջ չը տեսնւած, եղբայրասպան որսախուճապը... Ա՜հ, անշուշտ, դարձեալ մեծագոյն մեղապարտը, պատասխանատուն՝ մեր մահաբոյր անցեալն է—արատների, բարոյական այլանդակութիւնների այն ահռելի բագաժը, որ կրում ենք սերնդէսերունդ։ Դարերի ստրկութիւնը, ինչպէս ասացինք, իր անջնջելի կնիքն է դրել մեր համայնքի մօրալի վրայ—և այդ հանգամանքն անդրադարձել է մասնաւորապէս յեղափոխական մօրալի վրայ...

Դաշնակցութեան մարմինները չափազանց գիտակ էին այդ տխուր իրողութեան և նրանց մշտական մտահոգութիւնն էր՝ ազատ պահել գէթ իրենց շրջանակները կազմալուծող հոսանքներից։ Պառակտիչ ոգին այդտեղ ևս փորձեց մերթ ընդ մերթ՝ սաղմնաւորւել ու զարգանալ—բարեբախտաբար, ապարդիւն. կազմալուծման

բոլոր փորձերը զարնւում էին առողջ, մաքուր կորիզներին և օդը ցնդում..

Մի համեստ բանակ ունէինք, մի թանկագին աւանդ, որ պահպանում էինք գուրգուրանքով ու ծայրայեղ նախանձախնդրութեամբ, որի շարքերի մաքրութիւնը մեր ուշադրութեան կենտրոնակէտն էր. մի աւանդ, որ ստեղծուած էր ի գին մեծ զոհողութիւնների, որ ունէր, անշուշտ, իր թերութիւնները, բայց որ հարկ էր առանձնաբար մշակել, կատարելագործել, հեռու վնասակար ազդեցութիւններից, հեռու միութեան վտանգաւոր րիսկերից, արկածներից։ Ահա թէ ինչու, անդադար յայտարարելով մեր անվերապահ ցանկութիւնը՝ գործակցելու բոլոր ճշմարիտ յեղափոխական հատուածների ու անհատների հետ, մենք միևնոյն ժամանակ սիստեմատիկաբար մերժեցինք միութիւնն ու ձուլումը գոյութիւն ունեցող մարմինների հետ։ Եւ ապագան իր արիւնոտ իրողութիւններով, տարաբախտաբար, աւելի քան արդարացրեց այդ զգուշաւոր ձեռնպահութիւնը...

*

Անաջողակ՝ հայ ուժերը միացնելու, համադրելու աշխատանքի մէջ՝ Դաշնակցութիւնը միւս կողմից աջողութեամբ առաջ մղեց համերաշխութեան գաղափարը ուրիշ ազգերի դիմադրական հատուածների մէջ։

Մակեդոնական յեղափոխականների հետ „միութիւնը“ իրագործւեց արդէն վաղաժամ և ստացաւ իր արիւնոտ սրբագործումը կաւի դաշտում ու Ադրիանուպօլսի կախաղանների վրայ (1901 դեկտեմբեր)։ Ամենամտերմական յարաբերութիւններ ստեղծւեցին վերջին տասնըհինգ տարիներս մեր ու բուլգար-մակեդոնական յեղափոխականների միջև, Ժընեվից մինչև Սօֆիա և Ֆիլիպպէ

—մի հանգամանք, որ քիչ չը նպաստեց մեր ազատ գոյութեանն ու պրոպագանդին՝ Բուլղարիայում։ „Դրօշակի“ խմբագրատունը մի տեսակ նուիրական այցելավայր էր Սարաֆօվների, Լեապօվների, Չակալարօվների համար և—հակադարձաբար—մեր ընկերները գտնում էին միշտ եղբայրական ընդունելութիւն ու աջակցութիւն երկրի մէջ, բուլղար-մակեդօնական շրջաններում։ Եղբայրնե՛ր էինք նոյն վշտոտ ու արիւնոտ ճակատագրի, եղբայրնե՛ր գաղափարի և կռւի... Նրանց յաղթութիւնները ուրախացնում, ոգևորում էին մեզ, պարտութիւնները՝ ցաւեցնում... „Դուք մեր նախորդներն, ուսուցիչներն էք, ձեզնից մենք սովորեցինք կռւի մեթօդը“, ասում էր մեզ յաճախ Բորիս Սարաֆօվ, որի դէմ կատարուած հակամարդկային ոճիրը սուգ պատճառեց նոյնքան մեր, որքան իրենց, բուլղար ու մակեդօնական շարքերին։ „Աշակերտները“ գործեցին շատ աւելի նպաստաւոր աշխարհագրական ու քաղաքական միջավայրում և սակայն շատ էլ առաջ չը գնացին „ուսուցիչներից“ ու նոյնպէս կրեցին սիստեմատիկ, աղէտալի ֆիասկօ...

Ոչ այդ աստիճան, ի հարկէ, բայց դարձեալ մտերմական էին մեր յարաբերութիւնները վերջին 15 տարւայ ընթացքում՝ թիւրք ու քիւրդ դիմադրական տարրերի հետ։ Ժընեվը դարձեալ ժամադրավայր էր, ուսկից անցնում էին Միւքիւթինները, Տունալիները, Աբդուրահմանները և անվերջ բանակցում ու յօրինում գործունէութեան ծրագիրներ։ Վարանումի շրջան էր նրանց համար, ծոյլ ու անգոյն փրազամոլութեան, „Թղթային յեղափոխութեան“ շրջանը։ Շատ ջանացինք բերելու նրանց մեր հաւատքին—ապարդիւն։ „Մեշվերեթեան“ խաղաղ, անարիւն յեղափոխութեան դաւանանքը

մտել էր բոլորի ուղն ու ծուծը, թունաւորել, մեղկացրել։

Բայց ժամանակը տեսաւ իր գործը։ Կամաց-կամաց երևան եկան այդ ճապաղ ու ծանծաղ շարքերի մէջ աւելի սրտոտ, կորովի ու գաղափարական հոգիներ։ Պարիզի առաջին կօնգրէսին (1902 թ.) արդէն մի մասը մահմեդական պատգամաւորների՝ յարում էր յեղափոխութեան և բռնի գործողութիւնների գաղափարին։ Միւսը — Ահմեդ-Րիզայի առաջնորդութեամբ — բացարձակապէս դրան հակառակ։ Հակայեղափոխութեան հետ՝ այդ առաջին կօնգրէսից բուրում էր և մի անհնարին շօվինիզմ, համիսլամական ազգայնամոլութիւն։ Դաշնակցութեան պատգամաւորները վատ զգացին իրենց՝ այդ մթնոլորտում, միութիւնը վիժեց։

Ժամանակը, սակայն, փոքր ինչ դարձեալ առաջ գնաց. Նա մեղմեց Րիզաների այդ հակայեղափոխական աշխարհահայեացքը։ Երկիրը տեղ-տեղ ցնցւում էր արդէն մասսային յուզումներով — և այս անգամ մահմեդական ժողովուրդն էր, որ ըմբոստանում էր բռնակալ պաշտօնէութեան դէմ — Էրզրում, Բիթլիս, Կաստեմունի — ու արիւն թափում..

Դա „սկիզբն էր վերջաւորութեան“։ Դա մի արտառոց անակնկալ էր — „ցածից“ եկող այդ կորովի ազդանշանը, որ մտածել տւեց անգամ „Մեշվերեթի“ խաղաղասէր բարենորոգչականներին։ Եւ ահա Իթթիհատի մտաւոր պարագլուխը նոյնպէս իր հերթին բռնեց Ծընեվի ճանապարհը... Դա վճռական շ ր ջ ա կ է տ ն էր, մի ճըշմարիտ ուղևորութիւն „դէպի Կանօսսա“։ Դա յաղթանակն էր և „Դաշնակցութեան“, երկար տարիներ նրա քարոզած գործելակերպի։ Հաճութեամբ, ի հարկէ, նա դիմաւորեց վաղեմի ուժեղ հակառակորդի դաւանանքային այդ volte-face-ին, և նախաձեռնեց նոր համա-

գումարի։ Պարիզի երկրորդ կօնգրէսի մէջ (1908 Թ.) արդէն միաձայն հռչակուեց բուն յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն ծ ր ա գ ի ր ը բոլոր ներկայ մահմեդական ու քրիստոնեայ պատգամաւորութիւնների կողմից։ Միանգամ ընդմիշտ խորտակուած էր հակայեղափոխական սառոյցը... *L'idée en marche, rien ne l'arrêtera*.

Բայց կեանքն արդէն պատրաստում էր եռանդով, ճակատագրական հետեւողութեամբ այն ինչ որ եղաւ... Անցքերը գահավիժեցին իրարու ետեւից, մակեդօնական խնդիրը սպառնալի կերպարանք առաւ, Ռեվելը, Թագաւորների տեսակցութիւնը ծանուցեց Թիւրքիոյ նոր անդամահատման հեռանկարներ, ցնցեց տաճիկ զինուորականութեան բարձր խաւերը—և բռնկեց օսմանեան Յեղափոխութիւնը։ Թիւրքերը, նախորդուած, տասնեակ տարիներից ի վեր պատրաստուած հայերի ու մակեդօնացիների անբաւ ու արիւնալի ճիգերով՝ իրենք հասցրին վճռական հարուածը, *coup de grâce*-ը իրենց հարազատ բռնակալութեան,—բայց Դաշնակցութեան և Երիտասարդ Թիւրքիայի նախայեղափոխական համաձայնութիւնը, նրա հանդիսաւոր հռչակումը, առաջին անգամը պատմութեան մէջ, թողեց ուժեղ տպաւորութիւն և ունեցաւ իր բարոյական ահագին նշանակութիւնը նոյնիսկ մահմեդական աշխարհում։ Այսօր, կատարուած զոյգ յաղթական յեղափոխութիւններից յետոյ եւ՝ այդ համաձայնութիւնը շարունակւում է, յօգուտ երկրի անդորրութեան, սահմանադրական նուաճումների յարատեւութեան։

***

Երկրի մէջ և ե ր կ ր ի ց դ ո ւ ր ս...

Չը մոռանանք և Եւրոպան, մեր պրօպագանդը Եւրոպայում, մեր յոյսերն ու յուսախաբութիւնները... Այդ-

տեղ ևս—Արևմուտքում—իրերի մի տխուր, ճակատագրական անհրաժեշտութեամբ՝ կազմակերպութիւնը ստիպուած եղաւ պարզելու իր դրօշակը, ծաւալելու իր գործունէութիւնը։

Հասարակական կարծիքը պէտք էր մի կողմից լուսաւորել, միւս կողմից խթանել, հրահրել։ Այդ անհրաժեշտութիւնը մեր շարժման սկզբում մոռացուած էր, գրեթէ արհամարհուած։ Ինչո՞ւ... Որովհետև կարմիր, խանդավառ իլլիւզիոնները, ցնորքները—ե՞րբ չեն եղել նրանք, ո՞րտեղ չեն եղել — պաշարել էին հայ յեղափոխական ինտելիգենցիային, հայ շարժման ղեկավարներին, որովհետև այդ երջանիկ, անմոռանալի օրերում Յ ա ղ թ ա ն ա կ ը շա՛տ մօտ էր թւում և շա՛տ դիւրին — մի քանի հապճեպ բռնկումներով, մի քանի աջող արշաւանքներով ու ցոյցերով—և որովհետև միւս կողմից էլ հայ յեղափոխականը մասամբ նոյնիսկ իր արժանապատուութիւնից ցած էր համարում՝ դիմումներ անել օտարներին, հայցել նրանց միջամտութիւնը, թէկուզ և յանուն դիւանագիտական, միջազգային դաշնագրութեանց...

Շտկւեց այդ տակտիկային վրիպումը ևս։ 1899 թւից սկսւեց Արևմուտքում հայկական դատի շուրջը մի այնպիսի պրոպագանդ ու ագիտացիա, որպիսին չէր տեսնւել Յունաստանի ազատագրութեան օրերից ի վեր։ Կազմակերպութիւնը մեծ զոհողութիւններ արեց և այդտեղ։ Պարիզը դարձաւ պրոպագանդի կենտրոն. գրեթէ բոլոր արևմտեան երկրներում—անգամ հեռաւոր Դանեմարկի մէջ — հաստատւեցին մարմիններ, կոմիտէներ։ „Pro Armenia“-ն ուժգին զանգահարութեամբ համախմբեց մեր դժբախտ դատի շուրջը եւրոպական մտքի ու սրտի ամենափայլուն ներկայացուցիչներին։ Պիէռ Կիառի տոկուն ու հեղինակաւոր խմբագրութեամբ և անզուգա-

կան Պրեսանսէի մշտնջենաւոր ներշնչումով՝ մեր ֆրանսերէն օրգանը իր կենդանի փաստերի հեղեղով և կորովի յօդւածներով՝ հարկադրում էր պաշտօնական ու կիսապաշտօնական շրջաններին, պատասխանատու մարմիններին—գէթ Ֆրանսիայում—ուշադրութեան առնել բազմատանջ հայ ժողովրդին, հսկել նրա ճակատագրի վրայ, թոյլ չը տալ գէթ նոր մարդկային հեկատոմբներ։

Հսկայական, չը տեսնուած միտինգներ թնդացրին Պարիզի ու Լօնդօնի սրահները, նրանք տեղի ունեցան և իտալական ու շվէյցարական մի շարք քաղաքներում, աւելի փոքր ծաւալով՝ նաև Գերմանիայում։ Բրիւսէլի մէջ գումարուեց հայասէրների միջազգային, պատմական խորհրդաժողովը, ուսկից Ժօրէս, Պրեսանսէ, Կիառ, Սեվերին, Լօրան Ըլն, պերճ ու ցասկոտ ճառերով խարանեցին հայաջինջ անորակելի ռէժիմը և մի անգամ ևս կոչ արին լուսաւոր աշխարհին։ Վերջապէս—հարցապնդումների մի երկար շարան՝ Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի, Բելգիայի ու Հօլլանդիայի պարլամենտներում... Դա ճ ի գ ե ր ի մ ա ք ս ի մ ո ւ մ ն էր, որ կազմակերպեց Դաշնակցութիւնը այդ մռայլ, սարսափելի թւականներում, Եւրոպայի ամենաազնիւ, գաղափարական շրջանների մէջ։ Աւելին՝ անհնարին էր անել մի հալածական դատի համար։

Հ ա ր ց ի լ ո ւ ծ մ ա ն տեսակէտից՝ բոլոր այդ բուռն ու վեհանձն ճիգերը մնացին, աւա՜ղ, անհետևանք։ Ապարդիւն—նրանք չէին սակայն... Պրոպագանդի զուտ բարոյական վաստակներից դուրս՝ նրանք կարողացան ազդել նոյնիսկ որոշ չափով կ ա ց ո ւ թ ե ա ն վրայ, աջողեցին կազմակերպել Եւրոպայի սրտի մէջ որոշ կօնտրօլ, հսկողութիւն. մեր բարեկամները կարողացան մի քանի տարի շարունակ—երբ Համիդը դեռ խաղացնում էր

իր գիւղային ձեռքերի մէջ արիւնաթաթախ դանակը, յղանալով նոր-նոր դաւեր հայութեան դէմ—նրանք կարողացան այդ ծանր, տագնապոտ շրջանում բռնած պահել ֆրանսիական կառավարութեան ուշադրութիւնը տառապանքի երկրի վրայ. երբեմն նրանք կանխեցին սպառնացող նոր աղէտներ, երբեմն էլ օգնութեան հասան սովի ու կախաղանի դատապարտուած զոհերին: Այո, անգամ Թագակիր Մարդասպանը միանգամայն անզգայ չէր այդ հզօր, համատարած շարժման հանդէպ, նա ստիպուած էր յայտնի չափով սանձահարել իր բորենու ախորժակները...

Մեր աշխատանքն ունեցաւ մի այլ դրական հետեւանք:

Որքա՜ն մոռցուած ու վարկաբեկուած էր հայ յեղափոխական գործը Եւրոպայում: Մեր կռիւը, ինչպէս տեսանք, միանգամայն անծանօթ էր աշխարհին, մեր նպատակները շատ յաճախ խեղաթիւրուած, մեր լաւագոյն ռազմիկները—ամբաստանուած ու անարգուած: Մենք տեսնում էինք անգամ սօցիալիստ մամուլի մէջ (Vorwarts!...) անբացատրելի ու անորակելի ինսինուացիաներ հայ ամբողջ ապստամբական շարժման դէմ, նրա մաքուր, անշահախնդիր կրողների դէմ, որոնք յաճախ ներկայացւում էին, որպէս ռուսական „ժան-պրօվօկատօրներ“ ու լրտեսներ, որպէս ցարիզմի սպասաւորներ... Վիլհելմ Լիբկնեխտ, դօքտօր Բելք եւ „Մեշվերեթի“ խմբագիրը — երեք տարբեր հակոտնեաներ — իրենց հաւատարիմ ընթերցողներով ու համախոհներով, միացած էին այդ անօրինակ ու աղաղակող ինսինուացիայի շուրջը... Եւ այդ՝ այն ժամանակ՝ երբ ցարի կառավարութեան իսկական „ժանները“ տանջում էին մեզ իրենց անդադրում ու անողորմ հետապնդումներով, երբ մեր մարտիկները Թիւրքական սահմանագլուխն անցնելիս զարնւում էին ռուս սահմանապահ զինուոր-

ների հրացաններին, երբ մեր կոմիտէները լուծւում էին Անդրկովկասում և մեր հարիւրաւոր գործիչները լըցնում էին բանտերն ու աքսորատեղերը, յոկ Թիւրքահայ եղբայրներին օժանդակելու պատճառով... Օ՛, հայ յեղափոխականի նզովեալ ճակատագիր...

Տգիտութիւնը և կանխակալ կարծիքները, յետադէմ ու չարակամ հրապարակախօսութիւնը և մանաւանդ, Աբդիւլ Համիդի ոսկիները երկա՛ր ժամանակ աշխատել էին այդ ինսինուացիայի ուղղութեամբ։

Պէ՛տք էր վերականգնել հայկական արիւնափայլ դիւցազներգութեան պատիւը, պէտք էր անհագին աշխատանք՝ ջնջելու համար հին չարագործ նախապաշարումները, ստեղծելու համար գնահատութեան նոր չափեր ու ն ո ր կ ա ր ծ ի ք։

Դաշնակցութիւնը կատարեց այդ անհրաժեշտ աշխատանքն և։ Տաս տարի շարունակ նա գոռաց Եւրոպայի երեսին, ալէկոծեց հրապարակը և մամուլը քաղաքական մեծ կենտրոններում—Հռոմից մինչև Պարիզ ու Բերլին, Լօնդօնից մինչև Ժընեվ ու Բուդապեստ—ոչ թէ ճապաղ ու անպատիւ աղերսանքներով, ոչ միայն վշտի ու տանջանքի յաւիտենական պատմութիւններով, որոնք այնքան առատութեամբ ցուցադրւել էին առաջներում մեր ազգային չէզոք, հակայեղափոխական դիւանագէտների ձեռքով—ոչ. դաշնակցական պրօպագանդը ալէկոծում էր ունկնդիրներին հայկական ը մ բ ո ս տ ա ց մ ա ն արիւնավառ էջերով, պատմում էր Պրէսանսէների, Կիառների, Լօրանների ու Ֆրապանների բերանով՝ հայոց նորագոյն պատմութեան հերոսական դրւագները, մի ժողովրդի օրհասական երերումները՝ յանուն ամենասուրբ, ամենատարրական Իրաւունքի, յանուն մարդկային ազատագրութեան...

***

Հարուստ, չափազանց բարդ ու բազմաբովանդակ մի քարտէզ — դաշնակցութեան 20-ամեայ գործունէութիւնը…

Ի՞նչ զարմանք՝ որ այդ ահագին քարտէզի վրայ կարող են նշմարուել տեղ-տեղ նաև վրիպումներ — գուցէ աւելորդ ու խուսափելի։ Ի՞նչ զարմանք՝ որ քննադատութիւնների տարափը տարիներից ի վեր անընդհատ տեղում է կազմակերպութեան վրայ… Չեն սխալւում միայն նրանք, որ չեն գործում։ Այդ ճշմարտութիւնը յաճախ են մոռանում մեր հայրենակից ու հակառակորդ դատախազները։ Եւ միշտ էլ չարաչար մեղանչում են։

Քննադատութիւններ — թէ աջից և թէ ձախից։

Աջից՝ սովորաբար հռչակում են մեզ խիստ ձախակողմեան, ձախից՝ խիստ աջակողմեան։

Մեզ մեղադրել են և շարունակում են մեղադրել այսօր մեր բարեպաշտ „ազգայինները“, բոլոր նրանք, որոնք երկունքի, յեղափոխական շրջանի գալարումների մէջ մնացել են միշտ խոհեմօրէն չէզոք, ձեռնպահ, դողացել են միշտ կուի ու զոհաբերութեան գաղափարի առջև, — մեղադրում են մեզ իբր ազգադրուժ, երբեմն նոյնիսկ իբր ազգակործան մի կազմակերպութիւն, որ խորթ, օտար գաղափարներ է մտցնում հայկական իրականութեան մէջ։

Ի՞նչ արած… „Ազգ“ հասկացողութիւնը տարբեր է նրանց մօտ և մեզ մօտ։ Տարբեր է և ժողովրդական շահի ըմբռնումը։ „Ժողովուրդ“ և „ազգ“ բառերը նրանք ունին միշտ շրթների վրայ, հոլովում են ամեն պարագայում — և՛ կղերը, որ „աղօթում է“ այդ ժողովրդի համար, ապրելով նրա աշխատանքի արդիւնքներով, չը կարողանալով մի նշանախեց անգամ մեղմել

Նրա տառապանքները, և՛ աղաները, որ վայելում են նոյն ժողովրդի վաստակը, և՛ անգամ վաշխառուները — բոլոր տզրուկ, ձրիակեր դասակարգերը ամեն տեղ և ամեն ժամանակ, մարդկային էւօլիւցիայի անյիշատակ դարերից ի վեր՝ խօսել են ժողովրդի անունով, առել են իրենց վրայ „ազգ“ ու „ժողովուրդ“ տիտղոսները, յաւակնել են մենաշնորհ դարձնել „ազգային գործունէութիւնը“, ձգտել են առնել իրենց „հայրական“ խնամակալութեան տակ խեղճ ու տգէտ ընդհանրութիւնը, ոչ թէ նրան իրօք պաշտպանելու, նրա համար զոհաբերելու, տանջւելու, այլ միայն ու միայն շահագործելու — իրենց գրքի ու գրպանի համար — այդ ընդհանրութեան տգիտութիւնն ու աշխատանքը։

Ի՞նչ արած, որ Դաշնակցութիւնը համակրանք չունի այդ կեղեքիչ դասակարգերի համար, որ նրա բոլոր խորհրդածութիւնների ու ճիգերի առանցքն է կազմում բուն տանջւող, աշխատաւոր ժողովուրդը, որ ոչ ոքի չի ճնշում, չի շահագործում, որ ինքը հանդիսանում է բոլոր ճնշումների ու շահագործումների յաւիտենական զոհը… լինելով հանդերձ բոլոր հարստութիւնների արտադրողը…

Այդ իրաւազուրկ, հարստահարւած ընդհանրութեան դատն ենք միշտ պաշտպանում. սօցիալիզմը մեզ համար — ինչպէս և ամբողջ առաջադէմ մարդկութեան համար — պահանջ է արդարութեան և միանգամայն բանականութեան։

Արդարութիւնը ասում է, որ չի կարելի սրբագործել ու յաւերժացնել հասարակական մի կացութիւն, մի սիստեմ, ուր ազգութեան, համայնքի մի փոքրիկ բեկորը ունենալով դիրք ու դրամագլուխ՝ ապրէ առատութեան ու վայելքի մէջ, իշխէ, հրամայէ, հարստահարէ, մինչդեռ ահագին աշխատաւոր մեծամասնու-

թիւնը—որ „ազգի“ բուն իսկ կենսահիւթն է, նրա թանկագին հատուածը—քարշ տայ իր կեանքը չքաւորութեան ու տառապանքի մէջ, իր օրական պարէնը հայթայթելու. սարսափելի անհրաժեշտութեան տակ։ Արդարութիւնը հրահանգում է, որ պէտք է ձգտել, էտապ առ էտապ, աստիճանական բարենորոգումներով, դէպի հասարակական սիստեմի արմատական վերիվայրումը, դէպի այն Իդէալը—վաղուց երազած մարդկութեան լաւագոյն զաւակների կողմից—ուր իշխողի և հպատակի, կեղեքողի ու կեղեքուողի յարաբերութիւններն ու անունները միանգամ ընդմիշտ պիտի չքանան, և մարդիկ, առանց դասակարգերի հակամարտութեան ու կռիւների, պիտի ապրին հաւասարութեան միահեծան ռեժիմի տակ, հաւասար՝ աշխատանքի մէջ և հաւասար՝ վայելումի մէջ...

Սոցիալիզմն այդ է—ուրիշ բան չէ նա։ Մեր հասարակական դաւանանքն էլ այդ է — ուրիշ բան չէ նա։

Արդարութիւնը այդպէս է հրամայում։ Բանականութիւնն էլ գալիս է իր գերագոյն հեղինակութեամբ՝ նուիրագործելու արդարութեան այդ պահանջը։ Նա գալիս է յայտարարելու, տնտեսական էւօլիւցիայի և հասարակական գիտութեան ցուցմունքներից հրահանգուած, որ այդ իդէալը մի սոսկ անհող բանդագուշանք չէ, այլ միանգամայն իրագործելի մի հնարաւորութիւն, որ ամբողջ մարդկային զարգացումը առաջնորդում է դէպի այն, որ ապագան չի պատկանում կապիտալին, առանձնաշնորհման ու կեղեքման, այլ աշխատանքին ու նրա բիւրաւոր սպասաւորներին, որոնք տառապում են ամենուրեք կրկնակի ու եռակի լծերի տակ—քաղաքական, տնտեսական, կրօնական — բայց որոնց վիճակուած է՝ աստիճանաբար

բարձրանալով հասարակական արժէքների սանդուխով, աստիճանաբար նուաճելով տիրապետութեան գործօնները, պարլամենտ, քաղաքային ու գիւղական խորհրդարաններ ևայլն, իրագործել վերջ ի վերջոյ հաւասարութեան այն իդէալական րէժիմը, ուր ոչ ոք այլևս չը պիտի կարենայ շահագործել իր նմանի աշխատանքը, ուր ոչ ոք այլ ևս չը պիտի ունենայ հնարաւորութիւն՝ յղփանալու ուրիշների արիւնով, ուր ամենքն էլ հաւասարապէս պիտի աշխատին, հաւասարապէս պիտի վայելեն...

„Ազգասէր" բառը մեր բառագրքի մէջ ձևափոխւում է և դառնում „ժողովրդասէր": „Ազգային համերաշխութեան" փաստի գոյութիւնն ու անհրաժեշտութիւնը ուրացողը չենք: Մենք ենք յաճախ ծանրացել— հաւաքական հոգեվարքի ժամերին—այդ ցաւատանջ ու միշտ կանգուն խնդրի վրայ: Մենք ենք յաճախ փողահարել ու թնդացրել մթնոլորտը ազգայնական միահամուռ գործակցութեան աղաղակներով... հանդէպ հայաջինջ կատաստրոֆների:

Չենք մերժում, ո՜չ, որ կան պատմական, հոգևոր ստացուածքներ, կան դարաւոր, հաւաքական հարստութիւններ, որ պատկանում են ամբողջ համայնքին, առանց խտրութեան դասակարգերի և որոնց համար պարտաւոր են — որոշ, ծանր վայրկեաններում, երբ խախտւում է նրանց գոյութեան կամ բնականոն առաջադիմութեան իրաւունքը — ոտքի կանգնել մէկ մարդու պէս և թափահարել բողոքի դրօշը: Երէկուայ մեծ „զուլումներին"՝ կազմակերպութիւնը շատ յաճախ բեմ էր գալիս համայն ազգի շահերի անունից և երբեմն աջողում էր քարշել իր հետ ամբողջ թալանուող ու բռնաբարուող ազգութիւնը:

Բայց եղել են և այլ վայրկեաններ: Եղել է, որ նոյն կազմակերպութիւնը, իր նւիրական ու պատմական

դատը առաջ մղելու համար՝ սպառազինուել է ազգի որոշ խաւերի դէմ և մետաղի սուր, ցնցող հարուածներով յիշեցրել նրանց՝ իրենց մարդկային պարտականութիւնը՝ հանդէպ արիւնող ու բնաջնջւող ժողովրդի։

„Զուլումների" վայրկեանից դուրս՝ ազգը դադարում է, այսպէս ասած, մի միապաղաղ ամբողջութիւն լինելուց, միակերպ մտածելուց և միակերպ զգալուց։ Կամ աւելի ճիշտ՝ այդ միապաղաղութիւնը թուլանում է և դուրս են լողում ասպարէզի վրայ այդ ամբողջութիւնը կրծոտող դասակարգային հակամարտութիւնները։

Նոյնիսկ այդ մեծ զուլումներին, աւա՜ղ, հայոց նորագոյն պատմութիւնը ցաւով ու ցասումով է արձանագրում մեր այսպէս կոչուած „բարձր" խաւերի գրեթէ կատարեալ բացակայութիւնը գործի, կռուի կրկէսից։ Յիշե՞լ արդեօք մեր փողատէր բուրժուազիայի ապիկար ձեռնպահութիւնը մեր ամբողջ ազատագրական շարժման ընթացքում, նրա քար, ապառաժ լռութիւնը մարտնչող փոքրամասնութեան օրհասական կոչերի հանդէպ…

Դատը ընդհանուր, ազգայնական էր և այդտեղ աւելի քան ուր և իցէ, պիտի միանային մի ներդաշնակ գործակցութեան մէջ միևնոյն համայնքի բոլոր դասակարգերն ու կուսակցութիւնները, ազգի ձախակողմն ու աջակողմը։ Այդպէս է համաշխարհային էւօլիւցիայի պատուիրանը. այդպէս են կատարուել ազատագրական շարժումներն ու յաղթանակները բոլոր երկրներում։ Բայց մեզ մօտ այդ օրէնքն ևս վրիպեց այլանդակօրէն, մեզ մօտ այնպէս եղաւ, որ ձ ա խ ա կ ո ղ մ ը գրեթէ շարունակ մեն-մենակ մնաց փոթորկի դաշտում, ընդհանուր ազգային սեփականութիւն-դատը մնաց ծանրացած նրա ուսերին… Այն ինչ՝ հարիւր միլիոնների վրայ իշխող հայկական բուրժուազիան միշտ կծկուած մնաց իր ամրակուռ սնդուկների մօտ, նա երբէք չը թողեց

խրախճանների մթնոլորտը, որպէսզի երթայ․․ „այնտեղ, անձնուրացների բանակը, ուր մեռնում են յանուն Սիրոյ մեծ գործի“... Քար ու ապառաժ անտարբերութիւն—թէ շարժման ուրախ, գւարթ վայրկեաններին և թէ մեծ, աշխարհագղորդ ճգնաժամերին, երբ Ամերիկայից մինչև Դանեմարկ ու Շվէյցարիա մարդկային բարեգործութիւնը հրաշքներ էր գործում, ի նպաստ մերկ, յօշոտւած ու սովամահ հայաստանցիների․․ Սա իրողութիւն է, տարաբախտաբար, և այդ իրողութիւնը յաւիտենական արատի պէս դրոշմւած կը մնայ հայ բուրժուազիայի ճակատին...

Այսօր — նոյնը չէ՞․․ Ազատութեան ձայնը տարածւեց ամենուրեք հզօր շեփորումներով, հայրենիքի դռները բացւեցին, ամենուրեք կեանք ու շարժում, բայց „ազգը“ չը կայ հրապարակի վրայ, այն դասակարգը, որ սիրում է իր վրայ առնել „ազգ“ տիտղոսը, շարունակում է անտարբերութեան մրափը։ Մինչև օրս նա փախչում էր պայքարող երիտասարդութիւնից, մերժում էր նրան իր աջակցութիւնը, պատրւակելով „պայմանները“, „երկիւղը“... Այսօր սակայն վերացւած են այդ պայմանները, սահմանադրութիւն է Տաճկաստանում, վերականգնել է և ազգային սահմանափակ ինքնօրինութիւնը, ասպարէզը ազատ ու արձակ. ահռելի բացեր կան լցնելու, աւերակների վերաշինութեան, ազգային կուլտուրայի հըսկայական աշխատանք կայ կատարելու արեան ու արցունքի հովիտներում. կայ նախ և առաջ ժողովրդի ֆիզիկական յարատևութեան ցաւոտ խնդիրը... կարո՞ղ է լինել ազգերի կեանքում աւելի հանդիսաւոր մի վայրկեան, աւելի հրապուրիչ ու հրամայական մի առիթ՝ հոսեցնելու հարստութեան աղբիւրները, վեհանձնութեան թռիչքներով ամոքելու թշւառութիւնը, արբեցնելու կիսանահատակ, հաշմանդամ, միլիօնաւոր հարա-

ղատներին։ Բայց վեհանձնութեան այդ թափերը չեն տրւած հայ բուրժուազիային. այսօր նա նոյնն է, ինչ որ երէկ էր — հայ մարտնչող բանակի գերմարդկային պայքարի ու չարչարանքի օրերում։ Նա դարձել վատաբար թաքնւում է, երբեմնապէս շպրտելով ողորմելի գրօշներ, ի պատասխան աղիողորմ կոչերի…

Հայ ժողովրդի և ազգի կուշտ ու շահամոլ դասակարգի միջև՝ անդունդը յարատևում է. նա մենակ պիտի հոգայ իր ծով ցաւերը, մենակ պիտի հարթէ իր ճանապարհը անհնարին խոչընդոտների միջից, յենւած միմիայն իր գաղափարական տարրերի, իր անձնազոհ մտաւորականութեան վրայ։ Այսօր դարձել այդ գաղափարական երիտասարդութիւնն է հրապարակի վրայ, հայրենիքի փլատակների մէջ, գեղջկական մութ ու ծխոտ խրճիթներում. նա է՝ որբ ու աւեր հայրենիքի միակ զարդը, նա,—ազգի լաւագոյն յոյսերի մարմնացումը…

Յանուն ժողովրդի՛…

Աշխատաւոր ժողովուրդն է, որ իր ցաւերով ու իղձերով, իր խոշոր առաքինութիւններով և իր խոշոր արատներով եղել է միշտ, լինելու է միշտ մեր կարդինալ հոգսի առարկան։ Նրա անունով ենք հրապարակ եկել ամբողջ քսան տարուց ի վեր, նրա անունով են մեր բազմաթիւ հերոսները գնացել դէպի բանտ ու կախաղան, նրա համար են բարձրացել մարտիրոսութեան խարոյկները մեր արիւնաներկ հորիզոններում։ Նա է, այդ աշխատաւոր ընդհանրութիւնն է, որ կոչւած է մեր հայրենիքում և բոլոր ուրիշ հայրենիքներում իրականացնել մարդկայնութեան ամենավսեմ իդէալը—ճշմարիտ հաւասարութիւնը, ազատութիւնն ու եղբայրութիւնը… Նրան է, որ պիտի նւիրենք այսուհետև ևս մեր բոլոր ուժերը։ Բարձրացնել նրա ինքնագիտակցութիւնը, ալ-

տել նրան քաղաքական ու կրօնա-կղերական ամեն տեսակ ճնշող, բռնաւոր խնամակալութիւններից, կազմակերպել նրա ուրոյն պայքարը, կռւել նրա բազմապիսի հարստահարիչների, նրա աշխատանքը շահագործող ամեն տեսակ վամպիրների դէմ, պատրաստել նրան համաշխարհային սօցիալական մեծ ու վճռական ճակատամարտի համար... Սօցիալիզմն այդ է, ուրիշ բան չէ նա։

Ի՞նչ արժէք ունին այնուհետեւ հայ բուրժուա-կղերական շրջաններից նրա դէմ արձակած անաթեմաները, ի՞նչ արժէք ունի Դաշնակցութեան հակառակորդների վայնասունը Կովկասում ու Թիւրքիայում, թէ իբր այդ կազմակերպութիւնը իր ծրագրով, սօցիալիստական, հակակղերական աշխարհահայեացքով դաւաճանում է հայրենիքին, քանդում է ազգ ու օճախ... Նոյն պարապ մեղադրանքները ուղղւում են 100 տարուց ի վեր ամբողջ համաշխարհային սօցիալիզմի դէմ, որ սակայն, գնալով, միշտ աւելի և աւելի տիրանում է ժողովուրդների, գիտակից մտաւորականութեան սրտին և ուղեղին։

Բայց քարերի կարկուտը գալիս է մեզ վրայ և... ձ ա խ ի ց.

Անհնարին է — ասում են մեր ձախակողմեան հակառակորդները, երբեմն նոյնիսկ ծայր-ձախակողմեան ընկերները — անհնարին է, որ մի սօցիալիստ կուսակցութիւն ազատագրական շարժումների ընթացքում կոչ անէ հանուր ա զ գ ա յ ի ն հ ա մ ե ր ա շ խ ո ւ թ ե ա ն, դիմումներ անէ ազգի ունեւոր դասակարգերին, եւրոպական դիւանագիտութեան եւայլն։ Այդ մեղադրանքը լսեցինք առատութեամբ վերջին 4—5 տարիների ընթացքում, երբ Ռուսաստանի Յեղափոխութիւնը վերցրեց փականքները հայ լեզուներից։ Մենք նրանց վրայ երկար

չենք ծանրանում. Նրանք գրւում ու ջրւում են իրենք իրենց

Անգամ ռուսական ուլտրա-անհաշտ սօցիալիստները իրենց այս կամ այն ընկերոջը կախաղանից փրկելու համար—երբ նշմարում են որևէ ելք—ուղղակի կամ անուղղակի դիմումներ են անում... Ստօլիպինին: Իսկ Դաշնակցութեան դիմումները 15—20 տարիների արիւնոտ աշխատանքի ընթացքում երբէք չեն էլ ուղղւել Ստօլիպինի պէս դահիճներին, ոչ իսկ Բիւլօվներին ու Էրենթալներին. Նրանք ուղղւել են—սովորաբար յիշատակագիրների ու պահանջների ձևով և միջազգային յանձնառութիւնների ու յօդւածների անունով — արևմտեան ռամկավար կառավարութիւններին՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի պատասխանատու մինիստրներին և Նրանք ուղղւել են կամ յեղափոխական գործողութիւնների նախօրեակին ու վաղորդայնին, կամ թէ ծանր ճգնաժամերին, երբ ոչ թէ մէկ անհատի, այլ մի ամբողջ ժողովրդի բախտն է խաղացւել Աբդիւլ Համիդի մարդախոշոշ ճիրաններում...

Ա՛հ, որքա՛ն դիւրին է փիլիսոփայել և ճախրել ժամանակից ու տարածութիւնից դուրս, զուտ թէօրիաների ու „կանտեան հրամայականների“ բարձունքներում: Տարաբախտաբար, նոյնքան դիւրին չէ գործելը մի անիծապարտ ու արիւնապարտ աշխարհում...

Ո՞ւր էր, թէ հնարաւոր լինէր առաջ գնալ կեանքի բոլոր կնճիռների մէջ ուղիղ գծով, համաձայն Սկզբունքի վճռական պատւիրաններին... Բայց ո՞վ չը գիտէ, որ յաճախ սկզբունք և տակտիկ շեղւում են իրարից և գնում առժամապէս տարբեր ճանապարհներով — ճանապարհներ, որոնք ի վերջոյ ծառայում են նոյն գերագոյն Սկզբունքի շահերին: Ականջ դրէք այն պերճախօս, ամենօրեայ հրահանգներին, որ

գալիս են քաղաքակիրթ օձախներից, դիտեցէք սօցիալիստական տակտիկը արեւմտեան երկրներում, երբ խօսք է լինում ազգայնական ստացւածքների մասին, երբ վտանգւում է նրանցից մէկնումէկը։

Պաշտպանել, ապահովել ազգային գոյութիւնը—նախ և առաջ։ Պաշտպանել այդ գոյութեան գաղափարական խարիսխները—երկրորդ։ Արգելք լինել բոլոր միջոցներով—մինչեւ զինւած ընդդիմադրութիւն—երբ փորձում են ծայրատել, ոչնչացնել ազգայնական ստացւածքները... Ահա վայրկեաններ, ուր նսեմանում, յետ են մղւում ժամանակաւորապէս տարաձայնութիւններն ու հակամարտութիւնը ազգի այլեւայլ դասակարգերի ու կուսակցութիւնների միջեւ և նրանք բոլորը, միեւնոյն ջերմ նախանձախնդրութեամբ համակւած, ոտքի են կանգնում, որպէս մէկ մարդ, մէկ ներդաշնակ ու ամբողջական բանակ։

Դա ազգային համերաշխութեան մեծ իրողութիւնն է, որին մենք դեռ կը վերադառնանք այլ առիթով։

Անհնարին է—ասում են նաեւ—իրաւախոհել, համաձայնութեան գալ, նոյնիսկ ժամանակաւոր դաշինքներ կապել „բուրժուազական“ կուսակցութիւնների ու հատւածների հետ։ Ահա դարձեալ բնագանցական րէզօնեօրութեան մի նմուշ — նոյն անհաշտ ու *pur sang* սօցիալիստների կողմից։ Դաշնակցութեան հինգերորդ Համագումարը թելադրում է՝ ամեն տեղ—Թիւրքիայում, Ռուսաստանում և Իրանում—թէ պարլամենտների մէջ և թէ դուրսը՝ համաձայնութեան գալ, ժամանակաւոր բլօկներ կազմել ուրիշ, ճշմարիտ սահմանադրական հատւածների հետ։ Եւ դեռ նախ քան ընդհանուր ժողովը՝ կազմակերպութեան Կ. Պօլսոյ Պատասխան. Մարմինը

այդպիսի մի համաձայնութիւն էր կնքել արդէն օսմանեան „Իթթիհատ“ կուսակցութեան հետ։

Ի՞նչ ասել կուզէ, թէ՛ Թիւրքիայում և թէ՛ Իրանում մեր դիմաց՝ բոլոր միւս հատուածները բուրժուազական են։ Բայց և ի՞նչ խօսք՝ որ մեր և նրանց մէջ, չը նայած խորունկ տարբերութիւններին աշխարհայեացքի, ազգայնական ու կուսակցական դաւանանքի, պետութեան ծանրակշիռ խնդիրների հասկացողութեան վերաբերմամբ՝ կայ շփման մի խոշոր գիծ—սահմանադրութեան ու ժողովրդական գերիշխանութեան պաշպանումը։ Եւ այդ գիծը կարող է միացնել առժամանակ տարբեր հատուածներին, նոյն ընդհանուր թշնամու՝ Ռէակցիայի դէմ։

Սա „օպպորտիւնիզմ“ է, եթէ կուզէք, բայց մի օպպորտիւնիզմ (պատեհապաշտութիւն), որի տակ կըստորագրէին մեր պայմաններում, մեր նշովեալ իրականութեան մէջ՝ նոյնիսկ ֆրանսիական հերվէիստները... Այդ իրականութիւնը հայրենիքի բոլոր երեք հատուածներում զուրկ է դեռ բուրժուա-ռամկավար իրաւակարգի ամենատարրական երաշխիքներից. այդ իրականութիւնը բոլոր երեք հատուածներում համարեա դեռ աւատապետական միջնադարն է, իր խակ ու բիրտ կերպարանքով, իր մարդասպան արտայայտութիւններով... Այդտեղ արդէն չէք կարող սակարկել ձեր աջակցութիւնը նոյնիսկ այնպիսի կուսակցութիւնների՝ որոնք թէև հասարակական իրենց դաւանանքով սար ու ձոր հեռու են ձեզնից, բայց դրա փոխարէն՝ պատրաստ են թումբ կանգնել հակայեղափոխական, հօրդային հոսանքների դէմ..

Քննադատութիւններն ու մեղադրանքները շարունակւում են։ „Օստրակիզմը“ հալածում է միշտ Հ. Յ.

Դաշնակցութիւնը. դա նրա ճակատագիրն է։ Քանի՛ անգամ „թաղել են“ նրան մեր ազգային երևելիները ամբաստանութիւնների ու խնախնուացիաների կոյտերի տակ։ Վերջերս էլ եռանդով թաղում են նրան՝ Բոսֆորի ափերում...

Մենք ոչ մի անպատեհութիւն չենք տեսնում այդ պարբերական յուղարկաւորումների մէջ։ Իրողութիւնն այն է, որ թաղման այդ արարողութեամբ՝ Դաշնակցութիւնը միշտ աւելի է կենդանանում, ուժովանում, ամրապնդւում։

Անմիտնե՛ր... Կարո՞ղ էք թաղել հայ ժողովուրդը, նրա դատը, նրա լաւագոյն աւանդութիւնները, նրա նւիրական տենչանքների զօրավիգը...

***

Ի՞նչ ենք իմանում մեր այս թռուցիկ ու յետադարձ տեսութիւնից։ Այն՝ որ այդ կազմակերպութիւնը բաւականաչափ խորունկ ու զօրաւոր արմատներ ունի հայ կեանքում, հայ նորագոյն պատմութեան մէջ... Այդ պատմութիւնը դրել է նրա վրայ խիստ դժւարին մի լուծ. կռիւ մղել երկու-երեք ֆրօնտի վրայ, շեշտել միաժամանակ երեք տարբեր միջավայրում — Ռուսաստանում, Թիւրքիայում, Պարսկաստանում — իբրև մի տեսակ պատերազմող կողմ, իբրև մէկը իրաւարար գործօններից. իսկ խաղաղութեան շրջանում՝ աշխատել ամենուրեք, որպէս խաղաղ վերածնութեան մի ազդակ։

Ի՞նչ ենք տեսնում մեր յետադարձ ակնարկից...

Այն՝ որ ձգտել ու կարողացել ենք, մեր ուժերի համեմատ, առաջ մղել մեր փոքրիկ ժողովրդի առաջադիմութեան անիւը, կեանքի կոչել նրա թմրած, դարերով սորկացած գիտակցութիւնը, տեղ տալ նրան բա-

ղաքական արժէքների միջազգային մրցարանում... Գիտակ այդ ծանր կոչումին և միշտ կանգուն պարտքի քարոտ դաշտի վրայ, — երբէք մենք չենք չափազանցրել մեր ուժերը, չենք էլ ուրացել արհաւրալի խոչընդոտները։

Քայլել ենք միշտ տոգորուած բոլոր ճշմարիտ յեղափոխականների այն աւանդական նշանաբանով, այն կորովատու գիտակցութեամբ՝ որ խիզախ և անձնուրաց փոքրամասնութիւնը, ուր որ էլ լինի, ինչ պայմաններում էլ որ շարժւի, կարող է յամառ ու յարատև ճիգերով ճանապարհ բանալ լեռնացած արգելքների միջից և առաջնորդել ժողովուրդներին դէպի ազատութեան ու արդարութեան հանգրւանները։ Այդ հաւատը մի վայրկեան անգամ չը լքեց մեզ՝ բազմամեայ երկարաձիգ և դրամատիկ ուղիի վրայ. յեղափոխական հինաւուրց դաւանանքը ապացուցեց հետզհետէ իր փրկարար իմաստութիւնը և մենք ունեցանք վայրկեաններ, երբ այդ խիզախ փոքրամասնութիւնը մէկէն ի մէկ ուռճանալով, կերպարանափոխւելով, դարձաւ ահեղ ու յաղթական մեծամասնութիւն, ձուլեց ամբողջ փոթորկւող, ըմբոստացող ժողովրդի հետ, իսկ փոթորիկն անցնելուց յետոյ, ազատութեան կարճատև մեղրամիսում, հանդէս եկաւ—ռուսահայոց Կենտրոնական Ժողովի և Պետական Դումայի ընտրութիւններին — որպէս միակ ղեկավարը ժողովրդական ճակատագրի։

Եւ այսօր մեր բաղձանքն է՝ շ ա ր ու ն ա կ ե լ ապագայում, յարատևել նոյն ուժով ու հմայքով, նոյն տիրական և միշտ աւելի այլազանւող պաշտօնով, առաքելութեամբ։

Երբ Ռուսաստանում Հոկտեմբերեան Մանիֆեստը բաց արեց սահմանադրութեան ու ազատութեան նոր դարագլուխ, եղան մարդիկ մեր հակառակորդների բանակում, որ ասում էին. „Դաշնակցութիւնը այլ ևս

չունի գոյութեան իրաւունք Կովկասում, այդ իրաւունքը ծնում է միայն Թիւրքիոյ մէջ“։ Յուլիսեան յեղափոխութիւնից յետոյ էլ, նոյն մարդիկ մտածում էին. „Թիւրքիայից է՞լ Դաշնակցութիւնը վերացաւ, պիտի վերանայ, քանի որ այլ ևս պէտք չը կայ մարտական-դաւադրական կուսակցութեան“...

Խիստ դիւրութեամբ էին լուծում նրանք մի մարմնի գոյութեան հարցը և միանգամայն տրամաբանօրէն՝ իրենց չափով ու տեսակէտով։ Իրենց չափը — իրենց սեփական գոյութիւնն էր, անսկզբունք, անծրագիր, անդաւանանք, առանց որոշ սոցիալական աշխարհահայեացքի, առանց որոշ ու յարատև ուղղութեան։ Եւ նոյն չափը կիրառում էին հակառակորդ մարմնի վրայ... „Նա պատահական մի խմբակցութիւն է, որ ապրել է իր շրջանը և պիտի լուծւի“...

Սակայն, այդպիսի „պատահականութեան“ իմաստով չէ, որ Դաշնակցութեան հիմնադիրները ըմբռնել են իրենց թանկագին ստեղծագործութիւնը։ Եւ նրա համար չեն հայ ժողովրդի հերոսական զաւակները տասնեակ տարիներով պայքարել ու նահատակւել կազմակերպութեան դրօշակի տակ, որպէսզի իրենց ծնողի նւիրական առաջադիմութեան դատը թողնւի մի գեղեցիկ օր հակաժողովրդական, գաղափարազուրկ տարրերի ձեռքը...

Դաշնակցութիւնը յարատևում է նոյնքան հզօր ու պերճախօս raison d'être-ով, որքան առաջ։ Մինչև օրս, բռնակալութեան շրջանում, նա եղել է, այսպէս ասած, հայ *ազատագրական* շարժումների խորհուրդը, այսուհետև, սահմանադրութեան շրջանում—նա դառնում է խորհուրդը հայ-ժողովրդական *առաջադիմութեան*։ Մենք քիչ յետոյ կը դիմենք այդ առաջադիմութեան մի քանի գործօններին ու մեր դերին։ Այդտեղ կազմակերպութեան ծրագիրը նոյնքան յստակ է, որքան

առաջ: Այդտեղ նրա սօցիալական-փիլիսոփայական աշխարհահայեացքը նոյնքան կուռ, հրապուրիչ ու արգասաւոր է, որքան Նախկին դաւադրական-յեղափոխականը:

Հարկ կա՞յ յիշելու, որ այդ „Նախկինը" մեր ալեծուփ ու երերուն իրականութեան մէջ դեռ պահպանում է իր ահարկու այժմէութիւնը, դեռ մերթ ընդ մերթ նշմարել է տալիս իր պաշտպանողական կամ յարձակողական վ ե ր ա դ ա ր ձ ի հնարաւորութիւնը: Ռուսաստանում՝ նա նոյնիսկ մի տեսակ կենդանի ու յարատև անհրաժեշտութիւն է...

Ահա թէ ինչու հայ ժողովրդական կուսակցութիւնը միշտ անխռով կ'անցնի թշնամիների ու հակառակորդների իր դէմ հանած պատնէշներից և կը շարունակի իր դերը, որպէս հայ կեանքի մի կ ա տ է գ օ ր ի կ հ ր ա մ ա յ ա կ ա ն, որի գոյութիւնը չեն քննադատում, չեն խարանում՝ առանց մեղանչելու տարրական ողջմտութեան դէմ:

Արգահատանքով կը սահի նա բոլոր շահախնդիր յարձակումների վրայից և կերթայ իր ճանապարհը, հետևելով Փլօրենտինեան մեծ հանճարի հրահանգին՝

Segui il tuo corso e lascia dir le genti! *).

---

*) Դանտէի խօսքը „Աստուածային Կատակ"-ից. „Շարունակի՛ր քո ճանապարհը եւ թող մարդիկ խօսեն, ինչ որ կուզեն":

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՄԵՐ ՀԱՒԱՏԱՄՔԸ ԵՒ ՄԵՐ ԱՆԵԼԻՔԸ

I

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ՀԱՐԻԱԾ ԵՒ ՀԱԿԱՀԱՐԻԱԾ

Սահմանեան վերիվայրումի համաշխարհային արժէքը.—Անդրադարձումները դրսում եւ ներսում.—„Հուրրիէթ“ եւ „Ադալէթ“.—Խօսքերի ուժը.—Յաղթական բանակը, նրա մեծաւոր պարագլուխները. — Աղէտալի վրիպումներ.—Յուսախաբութեան ալիքը. — Պառլամենտական ընտրութիւնները եւ տիրողի ու նպաստակի իրաւունքը.—Պանթիւրքիզմ.—Նախաապրիլեան Սահմանադրութիւնը եւ հայ ժողովուրդը. — *coup d'état*-ի նախապատրաստում եւ ժայթքում.—Պատասխանատուութիւններ. — Բռնաւորի յուղարկաւորումը. — Ադանա. —

Il rumore d'infrante catene
Sulla fronte die truce tiranno
D'ogni suono è il più grato...
Garibaldi: Le Mille.

Լսեցէ՛ք շառաչիւնը այդ խորտակուող շղթաների,
Որ փշրում են դաժան բռնաւորի ճակատին.
Կա՞յ արդեօք այս աշխարհում աւելի հանելի երաժշտութիւն...
ԳԱՐԻԲԱԼԴԻ, Հազարը:

Հազուագիւտ և տիեզերական մի անակնկալ եղաւ Թուրքական յեղափոխութիւնը։ 1908 թուականը ոսկէ տառերով կ'արձանագրուի համաշխարհային պատմութեան էջերում։ Նոր հորիզոններ բացուեցին Ազատութեան գաղափարի առջև, մարդկային

նոր զանգւածներ վեր բարձրացան մրափի ու անէութեան անդունդներից և գրկեցին համամարդկային քաղաքակրթութեան դրօշը։

Պառաւ, մահամերձական Արևելքն էր, որ երկար դարերից ի վեր առաջին անգամ արտադրում էր մի այդպիսի առնական թռիչք, առաջին անգամ յաղթականօրէն ծանուցանում էր Ֆրանսիական Յեղափոխութեան նշանաբանները։ Պառաւ, զառամեալ Արևելքն էր դա, որ մի ժամանակ տուել էր աշխարհին մտքի և արուեստի գանձեր, բայց որ յետոյ, բախտի մի քմահաճ տնօրինութեամբ, մի արատաւոր յետաշրջումով՝ վերստին նետուել էր ֆատալիստական անշարժութեան ծոցը, ուր և խարխափում էր տասնեակ դարերով, ստրուկ, անարգ ու արգահատելի, որպէս զազիր պարիաների մի անմռունչ հօտ, որպէս քարացած մի Վիթխարի։

Ռամկավարութիւնն աճեց, հաստատւեց նոր նուաճումով, արդարութեան և միջազգային եղբայրակցութեան դարաւոր յոյսը նոր յորձանք տւեց և տիեզերական բռնապետութեան սև ուրւականը զարհուրանքով մի քայլ ևս յետ նահանջեց, — մի խոշոր քայլ՝ նրա համար նշանակալի և աղէտաբեր...

Արևմտեան նոյնիսկ „քաղաքակիրթ“ բռնակալութիւնը յոյսեր ունէր իր արևելեան եղբայրակցի վրայ՝ իր գոյութիւնը մշտնջենաւորելու համար։ Հաստատած դարաւոր փորձով, նրբացած և հզօրապէս օժանդակւած կապիտալիզմի պարգևներով՝ նա ձգտում է իր կեղեքիչ տիրապետութեանը ենթարկել ամբողջ վայրենի ու բարբարոս երկրագունդը, ամբողջ հեռաւոր ու մերձաւոր Արևելքը, ձգտում է ամրապնդել շղթաները այն բոլոր հում, նահապետական ժողովուրդների, որոնք քանի դեռ դեգերում են ստրկական մրափի մէջ, անսահման շահագործման նիւթ են տալիս քաղաքակրթւած գիշա-

տիչներին, իսկ երբ արթնացան, սթափւեցին, իրենց ձեռքն առան իրենց սեփական ճակատագիրը, երբ բողբոջեց նրանց գրկում սեփական նախաձեռնութեան շինարար ոգին, երբ նրանք զարկ տւին իրենց ուրոյն կուլտուրային, ստեղծեցին իրենց ուրոյն ճարտարարւեստը՝ արդիւնաբերութիւնը, փոխ առնելով Արեւմուտքից անհրաժեշտագոյն գործօնները, երբ այդ տրորւած, նահապետական ազգութիւնները միահեծան տէր դարձան իրենց սեփական հողերին, հանքերին, հարստութիւններին—դա արդէն, կարելի է ասել, „սկիզբն է վերջաւորութեան"... Արեւմտեան կապիտալիզմը, որ իր գոյութիւնը յարատեւելու համար, միշտ աւելի ու աւելի հարկադրւած է „արտահանւել", նոր հօրիզոններ նւաճել, որ հարկադրւած է միլիտարիզմի, յարաճուն զինաւորութեան և հսկայական զոհերի գնով նորանոր սպառող շուկաներ գրաւել իր անկանոն արդիւնաբերութեան լեռնացած պտուղները շահեցնելու համար—պէտք է այլ ևս կամաց-կամաց յետ նահանջի, պէտք է հեռզհետէ հրաժեշտ տայ „համաշխարհային շուկային", գաղութներին, բոլոր „վայրենի ժողովուրդերին", բոլոր „կաթնատու կովերին", պէտք է ամփոփւի իր մայր-երկրում, մայր-պետութիւնների շրջանակներում, որոնք չափազանց անձուկ լինելով, վերջ ի վերջոյ պիտի ճայթին աշխարհաշառաչ տագնապներով ու „սօցիալական" կատաստրօֆներով։

Այդպէս է մեծ, անզուգական կարեւորութիւնը այն յեղաշրջման, որ կատարւեց մերձաւոր Արեւելքում և որ արդէն զգալ է տալիս իր ուժգին, անխուսափելի անդրադարձումը ամբողջ արեւելեան, նոյնիսկ ամբողջ ասիական ու աֆրիկական մարդկութեան վրայ։ Ահա արդէն ալէկոծւում են մահմեդական զանգւածները Հնդկաստանում, Եգիպտոսում, Մարօկկօյում, օսմանեան

վերիվայրումի հզօր ազդեցութեան տակ… Այն ինչ՝ հեռաւոր Եապօնիան, որ բնազդային հրճուանք զգաց „արեւմտեան ոսոխների“ դարաւոր ողջակէզ Տաճկաստանի յարութեան առթիւ՝ այսօր ձգտում է մտերմական կապ հաստատել ասիական նոր „տիտանի“ հետ։

„Հիւանդ մարդը“, նա, որին դիւանագիտութիւնը իր լաւագոյն ներկայացուցիչների—Գլադստօնի, Սօլսբիւրիի—բերանով դատապարտել էր անշարժութեան ու մահւան, որին Great OldMan-ը ուրիշ բնակավայր չէր մատուցել երկրագնդի սահմաններում, բայց եթէ Ասիայի անապատները—„Հիւանդ մարդը“ մէկէն ի մէկ, հզօր ու գեղեցիկ մի ժեստով շտկում էր իր կորացած մէջքը և հաստատում Արևի տակ իր գոյութեան ու յարատևութեան իրաւունքը… Ցնծութի՜ւն ամբողջ ազատասէր և դեմօկրատ մարդկութեան մէջ։ Խանդավառ ծափեր՝ բոլոր ճշմարիտ խաղաղասէրների բանակում… Մի երկիր՝ որ իբրև չարաղէտ կռւածաղիկ, այնքան ժամանակ արիւնալի մրցումների թատր է եղել օտար, գիշատիչ ոսոխների միջև—այժմ նա սթափւած դարերի մրափից, ուզում է թումբ դնել բոլոր արտաքին միջամտութիւնների առաջ, ուզում է սանձ դնել եւրոպական կապիտալիզմի արիւնատենչ ախորժակներին, ուզում է կռել սեփական ձեռքով իր սեփական ճակատագիրը, լուծել ներքին բոլոր վէճերն ու կնճիռները՝ հանուր ազատութեան ու արդարութեան մէջ։ „Իթթիհատը“ չէր բաւականանում Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան երրորդութիւննշանաբանով. „Ազատութեան“, „Հաւասարութեան“ և „Եղբայրութեան“ շարանին նա աւելացնում էր՝ „Արդարութիւն“. „Հուրրիէթի“ հետ՝ „Ադալէթ“…

Խօսքերի ուժը դիւթական էր, ինչպէս ամեն տեղ, նոյնանման պարագաներում… Համաշխարհային անակն-

կալի տպաւորութիւնը եւ առաւել զօրաւոր էր՝ որ այդ եզակի ժեստը կատարւում էր զինւորական *pronunciamento*-ի ձեւով։ „Հասարակութիւն“ չը կար բեմի վրայ,--բ ա ն ա կ ն էր այն ահեղ նեմեզիդան, որ մի սքանչելի դիմադարձութեամբ չոքեց յանկարծ իր բարբարոս հրամանատարի կրծքին և քաւել տւեց դարաւոր ոճիրները... Այն բութ, անողոք Գործիքը, որի վրայ յենւած ժամանակակից ներոնը կատարում էր անպատիժ կերպով իր դժոխային նախճիրները, որով նա հնձում էր տասնեակ տարիներից ի վեր հպատակ ժողովուրդների ազատատենչ սերունդները, աւերում էր շէն ու կենդան հայրենիքներ և ողբի ու յուսահատութեան բառաչիւնով սասանեցնում տիեզերքը — այդ հզօր, շնչաւորւած Գործիքը մի օր զգաց իր ընդարձակ ծալքերի մէջ, իր ամրակուռ զանգւածներով, որ ի ր ա ւ ո ւ ն ք ո ւ ն ի հայ յեղափոխականը երկար տարիների իր մոլեգին մաքառումներով, իրաւունք ունի մակեդոնացին, Եմենի արաբը, ալբանացին, իրաւունք ունին բոլոր ըմբոստները, բոլոր այն հոյակապ ու հոգեվարք ժողովուրդները, որոնք իրենց արիւնազանգ գերեզմաններից իսկ՝ շորունակում էին թափահարել ապստամբութեան դրօշը վամպիր-սուլթանի տիրապետութեան դէմ...

Այո՛, և ծափ զարկեց հայ ժողովուրդը եւ գինովութեան այդ օրերում, նա որ ամենամեծ զոհերն էր տւել Ազատութեան խորանին, նա, որի մէջքին ամենից շատ էին տեղացել համիդեան լախտի հարւածները... Մոռացաւ նա մօտիկ անցեալի զարհուրանքը, պոկեց սրտից քէն ու ատելութիւն և ջինջ, անխռով լաւատեսութեամբ ձեռք մեկնեց իր մահմեդական դրացիներին։ Ջոհն ու դահիճը գրկախառնւեցին, համբուրւեցին... Ընաշխարհիկ էր տեսարանը...

Եւ ո՞ւմ սիրտն էր ամենից ուժգին բաբախում այդ եզակի տեսարանի հանդէպ, ո՞վ էր ամենից ինտենսիվ և սրտագին ցնծում ու ծափահարում այդ պատմական օրերի մէջ, եթէ ոչ հայ գիտակից զինուորները, հայ ազատութեան բանակը․․ Տասնեւութ երկար տարիներ, մեն-մենակ Հայաստանի, Փոքր-Ասիայի անհամբոյր տարածութիւնների վրայ, սառցային մի դժնդակ մթնոլորտում, յեղափոխական մի խեղդիչ անապատի մէջ, հալածուած մշտնջենապէս բրդական հրոսակներից, հալածուած թիւրք զօրքից, ոստիկանութիւնից, խուժանից, հալածուած երբեմն նոյնիսկ „Երիտասարդ տաճիկներից“, անգիտակից իդէօլօգներից, կարօ՜տ մի ազատ կայանի, ծարա՜ւ մի ջերմ, անկեղծ ընդունելութեան, մի տաք կոչի ու խրախոյսի իր մահմեդական դրացիների կողմից՝ նա այժմ հրճուանքով դիտում էր այդ ցնծագին ողջագուրումները, յեղափոխական այդ խանդավառ ցոյցերն ու հանդէսները, որ կատարւում էին ազգերի միջև, կիսալուսնի մայրաքաղաքում՝ Մեծ Մարդասպանի ապշահար աչքերի առջև… Երբէք գուցէ մարդկային պատմութիւնը չէր մատակարարել այդքան սրտագրաւ, այդքան ցնցող ու կազդուրիչ մի դրուագ…

Իսկ անդին՝ Եըլդըզի մահահոտ պարիսպների մէջ՝ խաղացւում էր օսմանեան դրամայի մի այլ արարուածը, որ լրացուցիչ էր նախորդ տեսարանի… Անդին՝ կարմիր Գազանը ստորագրում էր իր անպատիւ գահավիժումը, իր բարոյական և քաղաքական անէացումը․․ Յետ է լիզում իր թափած բոլոր գարշանքները և աղուեսային ցածութեամբ համբոյրներ է դրոշմում այն մարդկանց ճակատներին, որոնց հալածել է ամբողջ կեանքը բանտով, աքսորով, մահով։ Նա սիրահարւում է Իթթիհատի վրայ և, աւա՜ղ, տարաբախտաբար իթթիհատեան պա-

բագլուխները ևս կատարելապէս սիրահարւում են պառաւ աղւէսի վրայ ու իրենց անձայր միամտութեամբ սկզբից իսկ պատրաստում գալոց փոթորկի մի քանի սաղմերը... Երիտասարդ Թիւրքիայի հեղինակաւոր առաջնորդները իրենց յաղթութեան առաջին օրերում ցոյց չը տւին ոչ միայն յեղափոխական հասունութիւն, այլ և քաղաքացիական տարրական ինքնագիտակցութիւն... Աբդիւլ Համիդը նրանց աչքում մէկէն ի մէկ կերպարանափոխւեց, դարձաւ օրինակելի սահմանադրական վեհապետ, ազատ միանգամայն թունաւոր ատամներից,—մի Էդուարդ VII, մի Նախագահ Ֆալիէր... Եւ մենք ականատես եղանք ԵԼԴԸԶի համբաւաւոր ճաշկերոյթին, ուր Համիդ, բռնաբարելով համաշխարհային խղճմտանքը, յայտարարեց երդումով, որ պատրաստ է իր կեանքը զոհելու „ազգի համար“... Ո՞վ է մոռացել այն հորթային բերկրանքը, որով բռնւել էին այդ պատմական նշանակալի խրախճանին՝ յեղափոխական Թիւրքիայի մտաւոր պարագլուխները... Խօսում է Ահմէդ Րիզան, բուռն, անկեղծ խանդավառութեամբ գովք է կարդում կարմիր խալիֆին, նրա շրթունքներից մեղր է ծորում օսմանեան „փառապանծ“ արքայատոհմերի մասին խօսելիս, յիշատակւում են տենդենցիօզ ոգևորութեամբ „երկրագնդի 500 միլիօն մահմեդականները“, փառաբանւում է նրանց գերագոյն առաջնորդը, համիսլամական բարձրագոչ զառանցանքները համեմւում են ժէօն-թիւրքական հայրենասիրութեան պոռթկումների հետ և ԵԼԴԸԶը թնդում է ծափահարութիւնների որոտից...

Դևը, որ պահպանում էր ամբողջ սրահը իր իժային հիպնօզի տակ, ներքուստ արդէն որոճում էր *coup d'état*-ի ծրագիրները... Եւ սրահը—օսմանեան, մահմեդական ներկայացուցչութիւնը—մի բութ, աղա-

ղակող անդիտակցութեամբ պատրաստում էր հողը՝ Համիդեան դաւերի իրագործման համար։

Արդէն այն ձեւը, որով առաջ եկաւ այդ պարլամենտական ներկայացուցչութիւնը, մէկ հարուածով բաց էր անում նոր-նոր կազդուրւող „ազգային վէրքերը", զարկ էր տալիս ոչ-թիւրք ազգերի դժգոհութեան ու թշնամութեան։

Ընտրութիւնները սկսւեցին ու վերջացան անորակելի գեղծումներով։ Աբդիւլ Համիդի մեռցնող րէժիմից յետոյ՝ „հպատակ" ազգերը զգացին շուտով մի նոր ուժի — „համաթիւրքութեան" (*panturquisme*) — ճնշող լուծը։ Իշխող տարրը շատ շուտով—յանձին իսկ իր ամենաառաջադէմ ներկայացուցիչների—մոռացաւ „հաւասարութեան" նշանաբանը և ցոյց տւեց ոչ-թիւրք տարրերին իր յարձակողական շովինիզմի բռունցքը։ Յոյների, հայերի, արաբների իրաւունքները մկրատւեցին, սխմւեցին։ Յոյն ու հայ պատգամաւորների քանակը պարլամենտում պէտք է լինէր եռապատիկը, քան է այսօր։ Երիտասարդ Թիւրքիայի յաղթական կօմիտէն հոգաց ամենայն եռանդով, մայրաքաղաքում ու գաւառներում, որ այլազգիների ներկայացուցչութիւնը հասնի անհրաժեշտ մինիմումին, որպէսզի միայն թիւրք կուսակցութիւնը հնար ունենար ծանուցանելու արեւմտեան աշխարհին, որ քրիստոնեաները ևս տեղ ունին պատգամաւորական ժողովի մէջ... „Օսմանեան քաղաքացի", „օտտօման" և այլ բառերը սկզբից իսկ՝ հանդէս եկան, որպէս կեղծիք, խաբէութիւն, ցեղի ու կրօնի տարբերութիւնները պայթեցին մի տխուր ճակատագրականութեամբ և կացութեան միահեծան տէր հռչակւեց տ ա ճ կ ու թ ի ւ ն ը իր գործօն, քաղաքական կուսակցութեամբ։ Դա առաջին մեծ արատն էր օսմանեան Սահմանադրութեան և նա տակաւին շարունակւում է...

պանթիւրքական, ատրամերժ շօվինիզմի հետ՝ յաղթող կազմակերպութիւնը մատնեց աշխարհին մի անխռով, ծայրայեղօրէն միամիտ օպտիմիզմ, լաւատեսութիւն, կատարեալ վերիվայրումի նկատմամբ։ Նա չը կարողացաւ հաշիւ տալ իրեն՝ որ Յուլիսեան խաղաղ ժեստը ինքնըստինքեան մակերեսային մի նուաճում էր, կատարեալ մահմեդական ստուար մեծամասնութեան կամքի դէմ։ Նա չը կարողացաւ հաշւի առնել կացութեան զօրաւոր գործօնները և համոզուած՝ որ կատարել էր պատմութեան ամենաիդէալական, անարիւն յեղափոխութիւնը, համաձայն „Մեշվերեթի“ ու պօզիտիվիզմի հրահանգներին՝ նա պառկեց հանգիստ սրտով իր դիւրանուաճ դափնիների վրայ։

Այն ինչ՝ իրերի տարերային հոսանքը լուիկ-մնջիկ իր գործը տեսաւ։

Եւ ոչ ոք այնքան լաւատեղեակ չէր կացութեան այդ „տարերքներին“, ինչպէս Եըլդըզի մենաւորը։ Հին վարպետը ընկճուած ձևացաւ, բայց երբէք չը կորցրեց յոյսը։ Այն դիւային, հնարագէտ իմացականութիւնը, որ երեսուն տարի շարունակ խաբխբել էր եւրոպական ամենաճարպիկ դիւանագէտներին, չը պէտք է անձնատուր լինէր թիւրքական իդէօլօգների առջև, առանց իր վերջին հնարքները սպառելու։ Այն անողորմ ու չարագործ հանճարը, որ իր ամբողջ գոյութեան ընթացքում զերծ է եղել ամեն տեսակ „սանտիմենտալիզմից“, խղճի ամեն մտահոգութիւնից, անգամ իր հարազատների, արիւնակիցների հանդէպ՝ չը պէտք է նահանջէր նոյնիսկ քաղաքացիական մի աւերիչ պատերազմի ծրագրի առջև... Յամենայն դէպս նա լաւ գիտէր, որ տակաւին բազմաթիւ են հաւատարիմ խալիֆականները օսմանեան կայսրութեան մէջ, որ ստուար է յետադէմ տարրերի լէգէօնը, որին բնաւ հաճելի չէ

նոր սահմանադրական կարգուսարքը, թէկուզ միայն խօսքով յայտարարուած:

Եւ Մակեավէլլի վերջին, հանճարեղ շառաւիղը, մեթօդով, հմտութեամբ, իր լքաւեր կղզիացումից իսկ պատրաստեց հողը ապագայ գործողութիւնների համար ու սպասեց ցնցող պատրուակների:

Իսկ պատրուակներ, ինչպէս տեսանք, առատութեամբ մատակարարում էր իշխող կուսակցութիւնը իր գրգռիչ քաղաքականութեամբ: Գրգռումներ ազգերի դէմ ընտրողական օրերում, գրգռումներ, սիստեմատիկ անարդարութիւններ՝ և պարլամենտական շրջանում: Կուսակցական դիկտատորութիւնը, միացած ամենավատթար նացիօնալիզմի, ազգայնականութեան հաւատամքին, ձգտում էր բոլոր միջոցներով՝ իրականացնել անկարելին, ձուլել բոլոր այլազան տարրերը օսմանցիութեան մէջ, ստեղծագործել ամբողջ կայսրութիւնից ոչ միայն մէկ, միաձոյլ պետութիւն, այլ և մէկ ազգ... Բառերը խեղաթիւրւում էին կիսակիրթ իդէօլօգների աշխարհում, կորցնում էին իրենց սովորական իմաստը և նետւում աջ ու ձախ՝ հետևողների հլուերամի մէջ, որ ընդունում էր նրանց, որպէս գերագոյն քաղաքական ճշմարտութիւններ: Այդպէս—„միութիւն" բառը: Ի զուր հայ, թիւրք, բուլգար ու այլ հատւածներ աղաղակում էին անդադար, որ այդ միութիւնը ներդաշնակ այլազանութեան մէջ է, որ օսմանեան պետութիւնը կարող է իրօք առաջադիմել ու բարգաւաճել միայն այն դէպքում, երբ նրա այլևայլ հատւածները կը վայելեն որոշ չափով ինքնօրինութիւն ու ինքնավարութիւն, երբ պատշաճ չափով գոհացում կը տրւի երկրի այլազան ցեղերի ազգայնական ու քաղաքակրթական պահանջներին:

„Նախ միութի՛ւն"... Եւ այդ „միութիւնը" թիւրք

նորագոյն օրէնսգէտների ու ընկերաբանների աչքում՝ պարզապէս ձուլումն է… Նրանք ուզում են իրագործել այն, ինչ որ բարձր քաղաքակիրթ ազգային մեծամասնութիւնները մինչև օրս չեն աջողել այլացեղ փոքրամասնութիւնների վերաբերմամբ. Նրանք միանգամայն հնարաւոր են գտնում—այդտեղ է քաղաքագիտական կուրիօզն ու անհեթեթութիւնը — որ մի օր, վերջապէս, օսմանեան կայսրութեան այդ այլազան տարրերը, թէկուզ և աւելի բարձր իրենց մտաւոր, հասարակական պաշարով, կուլտուրական բազմադարեայ ստացւածքներով, կը ձուլւին, կուլ կը գնան „տիրապետող տաճկութեան“ մէջ... Եւ մինչ այն, *en attendant*, Երիտասարդ Թիւրքիայի իշխող հատւածը բոլոր ներելի և աններելի միջոցներով ձգտում է կերտել բացարձակ կենտրօնացման մի սիստեմ, թիւրք տարրի գլխաւորութեամբ (*hégémonie*)։

Ութ-ինն ամսւայ պարլամենտական շրջանը, նախ քան Մարտեան հակահարւածը, բնորոշւում է խոր ու ընդվզիչ անտարբերութեամբ դէպի այլացեղ ազգութիւնների ամենակենսական պահանջները։ Հայ տարրը հին րէժիմի ամենամեծ զոհն էր, և մենք չը տեսանք Նոր քաղաքականութեան մէջ մի հատիկ ձեռնարկ, մի հատիկ լուրջ ու շիտակ փորձ՝ օգնութեան գալու այդ տարրի հոգեվարք-գոյութեանը, դարմանելու նրա արիւնահոս վէրքերը։ Հայ երկիրը հին րէժիմի ամենաոճրալի օճախն է, ուր վխտում են պաշտօնական համազգեստներով բոլոր հինաւուրց ու հռչակաւոր բորենիները, ջարդի ու թալանի կազմակերպողները. և սակայն մենք չը տեսանք սահմանադրական վարչութեան կողմից ոչ մի անկեղծ նախաձեռնութիւն՝ գէթ մասամբ մաքրագործելու այդ տարաբախտ անկիւնը, գէթ հեռացնելու, եթէ ոչ պատժելու, բիւրօկրատ-մարդասա-

պաններին, թարմացնելու վարչական, ոստիկանական, դատաստանական մթնոլորտը։ Ոչինչ չը փոխուեց, ամեն բան մնաց ըստ հնոյն։ Միակ համակրելի քայլը, որ արուեց Քեամիլ փաշայի մինիստրութեան օրով — Հայաստան ղրկուելիք քննիչ Յանձնաժողովի տնօրինումն էր. բայց այդ էլ մնաց լոկ ցանկութիւն և լցրեց հիասթափութեան բաժակը։

Աւելի վատթարը տեսանք։ Տեսանք հանրածանօթ աւազակներ, հայ ժողովրդի արիւնարբու դահիճներ.. համաօսմանեան պարլամենտում. տեսանք նրանց՝ „ծածկուած“, հովանաւորուած պարլամենտական մեծամասնութեան կողմից՝ ընդդէմ հայկական աղաղակող մերկացումների ու ամբաստանութիւնների։ Կարճ.——ոչինչ չ՚արեց նոր ռէժիմը՝ հայ ժողովրդին ու կուսակցութիւններին սիրաշահելու համար. ընդհակառակը, ամեն բան արեց՝ նրանց գրգռելու համար։

Գրգռումի քաղաքականութիւնը առաջ մղուեց և ուրիշ հակառակորդ հատուածների վերաբերմամբ։ „Ահրարները“ հռչակուեցին հայրենիքի դաւաճաններ, բոլոր նրանք, որոնք պաշտպան էին ապակենտրոնական սիստեմի և ազգերի ճշմարիտ իրաւահաւասարութեան, հրատարակուեցին իբրև պարզ „թշւառականներ“, իբրև պետութիւնը կործանողներ... Մի մեծ արգասաւոր նուաճումն էր մնում — խօսքի ու մամուլի ազատութիւնը, այն էլ „մկրատելու“ փորձեր արեց նոր մինիստրութիւնը, պարլամենտական մեծամասնութեան միշտ նոյն պատրաստ ու բարեհաճ հաւանութեամբ...

Մթնոլորտն արդէն էլեքտրականացել էր և „Սերբեստիի“ տաղանդաւոր խմբագրի սպանութիւնը եղաւ այն կայծը, որ բռնկեցրեց փոթորիկը...

„Ցնցող պատրուակը“ ինքնին եկաւ և Կարմիր Գազանը, որ ԻԼԴԸԶԻ իր կղզիացումից դիւային հոտառու-

թեամբ շրջակայում էր կուսակցական արիւնոտ մրցումների կրկէսում, որոշեց բեմ հանել իր վերջին սպառազինւած ուժերը և շեփորեց իր արքայական „հատուցման ժամը“։ Եւ եղաւ, ինչ որ եղաւ։ Սօֆտաների փոհմակները, միացած սուլթանակաշառ ու սպայազուրկ բանակի հետ, արշաւեցին վանդէական ոռնոցներով և մի ակնթարթում հաստատեցին պատմութեան մէջ չը տեսնւած զինուորական անարխիա, մի տեսակ *գինուորապետութիւն*։

Անակնկա՞լ... Երբե՛ք։ Ռէակցիայի այդ մոլեգին դիմադարձութիւնը մեզ համար անակնկալ չէր, այլ միանգամայն հասկանալի, տրամաբանական մի երևոյթ՝ խոպան, անապատ մի միջավայրում, ուր ճշմարիտ կուլտուրայի, գաղափարականութեան սերմերը դարերից ի վեր ընկել են միշտ ապառաժների վրայ, ուր կրօնը եղել է միշտ գրեթէ միակ ու գերագոյն ղեկավարը մարդկանց մտաւոր ու բարոյական համայնակենցաղի, ուր մինչև օրս, կարելի է ասել, չը կայ տակաւին մտաւորականութիւն, բառիս իսկական նշանակութեամբ — մտաւորականութիւն, իբրև դասակարգ, իբրև հասարակական վարիչ, առաջնորդ ժողովրդական զանգւածների։ Ոչ, անտարակոյս։ Յեղափոխութիւնը չէր կարող մոգական գաւազանի մի հարւածով վերածել արճիճը ոսկու, յեղաշրջել մի զարհուրելի, բազմադարեայ հոգեբանութիւն, քաղաքակրթութեան ու ազատութեան գիրկը նետել նահապետական, խաւարակուռ մի գոյութիւն, որի բարձրագոյն անսխալական հրամանատարն է մի հզօր ու բռնակալ ուժ, մի բութ ու անողոք գործիք, նորին Մեծութիւն — *Սօֆտան*...

Առաջ եկաւ, տարաբախտաբար, այդ պատմական, եղերական վայրկեաններում՝ մտքերի, գիտակցութիւնների մի յանկարծական ու համատարած խաւարում։

Ահրարները մի վայրկեան յայտնեցին սուլթանական բանակի հետ թև թևի։ Կուսակցական կռիւների յորձանքի մէջ օսմանեան ազատամիտները գործեցին մի շարք վրիպումներ, որոնք քիչ էր մնացել՝ դառնային ճակատագրական։ Դեռ փոթորիկը բռնկելուց առաջ, նրանք կոչ էին անում — Իթթիհատին տապալելու համար — ամենամութ ու բացարձակապէս յետադէմ տարրերին։ Հակառակորդութիւնը կուրացրել էր ահրարներին և նրանք բնաւ չէին նշմարում մութի մէջ դաւող *tertium gaudens*-ին, որ գալիս էր աննման վարպետութեամբ „օգտագործելու" երկու մեծ կուսակցութիւնների խելայեղ մենամարտը...

Աւելի երկար չենք ծանրանում դէպքերի վրայ։ Պատմութիւնը իր ժամանակին կը շտկէ իւրաքանչիւրի պատասխանատուութիւնը այդ ծանր տագնապի մէջ, որ այսօր, բարեբախտաբար, լուծուած է ոչ ի նպաստ համիդիականութեան...

***

Վերջին ճիգերը խորտակուեցին, դաւը վիժեց։ Կրօնն ու շարիաթն էլ չ'օգնեցին Մարդասպանին. չ'օգնեց նրան և եւրոպական միջամտութիւն առաջ բերելու փորձը։ Հասաւ, վերջապէս, նրա համար ևս քաւութեան ժամը։ Եւ գնա՛ց նա դէպի իր երկրորդ աքսորավայրը, տանելով իր հետ տիեզերական նզովքն ու ցասումը, գնա՛ց թերևս կնքելու իր անիծակուռ մահկանացուն...

Մահապարտի այդ կենդանի յուղարկաւորումը փայլեց մի անսովոր դրամատիկական վեհութեամբ։

„Շղթաները շառաչով խորտակուեցին բռնաւորի ճակատին" և ախորժալուր երաժշտութեան ձայնը հնչեց

բիւրաւոր արձագանքներով ամբողջ օսմանեան կայսրութեան մէջ, ամբողջ աշխարհում: Մի վայկեա՛ն էր դա— պատմութեան ամենացնցող, ամենահանդիսաւոր վայրկեաններից մինը — արժանի արձանագրուելու հսկայ տառերով ժողովուրդների տարեգրութեան մէջ... Ո՛ւր էր, թէ մեր անթիւ մեռելները, մեր հարիւրաւոր սգատանջ հերոս-նահատակները գէթ մի վայրկեան տեսնէին այդ գեղեցիկ գահավիժումը,—նրանք, որ ընկան օրհասական մաքառումների մէջ, Հայաստանի արիւնաներկ մարտադաշտերում, միշտ „վրէ՛ժ“ զառանցելով, միշտ „հատուցո՛ւմ“ մրմնջալով: Ո՛ւր էր, թէ տեսնէր մեր սիրելի, անմոռանալի Վետերանը, նա, որ ուխտել էր, իր թանկագին կեանքը զոհաբերելով, իրագործել այդ սըրբազան ռըվանշը *)— ամենամեծը պատմութեան բոլոր ռըվանշներից...

Նեմեզիդան անողոք եղաւ դէպի Հայութեան չարաշուք Ռսոխը: Նա չ'արժանացաւ Կարլոս I-ի ու Լուդովիկոս XVI-ի վիճակին — որ փրկութիւն էր — այլ գնաց քաւելու իր լեռնացած ոճիրները մի անարգ ու դժնդակ մոռացութեան մէջ... դեւերի, ուրուականների, մշտնջենական տանջանքի և խօլական զառանցանքների աշխարհում... Իսկ ի՛նչ այլանդակ թշուառութիւն... Ի՛նչ աղերսանք, գետնատարած հայցումներ: Որքա՛ն փոքրիկ, ցած ու երկչոտ հանդիսացաւ, իր օրհասի վայրկեաններին, հայ ժողովրդի դահիճը, նորագոյն ժամանակների ամենաարիւնռուշտ բռնաւորը, նա, որի կեանքն սկզբից ի վեր արեան անհատնում մի խրախճան էր, նա, որ այնքան դիւրասրտութեամբ հրահանգում էր հարիւր հազարաւորների խողխողումներ ու սրածութիւններ և որին Արևմուտքի զազիր գրչակները ներկայացնում էին յա-

*) Վրիժառութիւն, հատուցում:

ճախ, որպէս ուժեղ, աննկուն, անպարտելի մի նկարագիր․․․

Գնա՜ց… Ո՜րպիսի յուզիչ նմանութիւն բռնակալների ճակատագիրների միջև։ Յուզիչ՝ անգամ իրենց նիւթած ատելութեան ու գարշանքի հողմերի մէջ․․ Յիշեցէ՛ք սև, քստմնելի շարանը… Ներոն, Տիվերիանոս, Կալիգուլա, Կարակալլա, Կարլոս I, Լուդովիկոս XVI, Բօնաբարտ, Պօղոս III, Նիկօլա I, Ալէքսանդր II և III, Մէհմեդ Ալի և անթիւ ուրիշներ։ Իրենց սեփական բռնակալութեան զոհ գնացին բոլորն էլ։ Իշխելու անյագ, անյաղթելի տենչից մղուած, սպանելու և աւերելու աշխարհասասան բնազդով օժտուած, Էըլդըզի Ոճրագործը շարունակեց մեր ժամանակում մարդկութեան հին և գազան հրամանատարների աւանդութիւնը, նրանց պէս առաջնորդեց իր երկիրը դէպի աստիճանական կազմալուծումն ու հոգեվարք և նրանց պէս փորեց ի վերջոյ իր սեփական գերեզմանն ևս․․

Աւա՜ղ։ Մեզ չէր վիճակուած վայելել ամբողջութեամբ դեսպօտի գահավիժման այդ հեռևանք-ցնծութիւնը։ Մենք դատապարտուած էինք այդ հանդիսաւոր ժամերին իսկ՝ ազգովին սուգ հագնիլ ու ողբալ մեր նոր աւերակները և մեր հազարաւոր մեռելները։ Բռնակալը, իր անկումից առաջ, նորէն յղփացաւ հայ արիւնով։ Նա նիւթեց Ա դ ա ն ա ն… Եւ մինչ Բօսֆօրի շրջակայքը թնդում էր ազատութեան խրախճանների մէջ, անդին՝ Կիլիկիան բռնուած էր հրդեհով, ամբողջ գաւառներ՝ վերածուած մոխրակոյտի ու սպանդանոցի…

Մի անգամ ևս վանդէական հակաշարժման փոթորիկը պայթեց ահարկու կատաղութեամբ հայութեան գլխին։ Միանգամ ևս՝ իշխանութիւնների, զօրքերի ու խուժանների ներդաշնակ գրոհ՝ յաւիտենական „քա-

ւութեան Նոխազի" դէմ և զոհերի խօլ, յուսահատ բառաչիւն... Հայ ժողովուրդը—բոլոր ազատասպան խարոյկների վառելիք։ Հայ ժողովուրդը—բոլոր օրհասական վայրկեանների ու վերիվայրումների ողջակէզ... Եւ, ի լրումն ամենայնի, գտնւեցան այդ զարհուրելի տագնապի միջոցին, հին, նողկալի գիշակերներ, ոչ միայն Թշնամու բանակում, այլ և ազատ Եւրոպայի մէջ — Թուք ու անարգանք մարդիկ, որոնք ի տես այդ նոր արեան վտակների՝ աղաղակեցին ի լուր աշխարհի՝ դարձեալ „հայկական դաւերի" մասին և աղէտի թատերաբեմից մի անգամ ևս չեփորեցին զ ո հ ե ր ի մ ե ղ ս ա կ ց ո ւ թ ի ւ ն ը, նրանց „ըմբոստ ծրագիրները", „հայկական սեպարատիզմի" ուրւականը...

Ողջակէզ—և յանցաւոր։ Մեր յաւիտենակա՛ն ճակատագիրը...

Ի՞նչ արինք արդեօք այդ անողորմ ճակատագրի դէմ մաքառելու համար. ի՞նչ ենք անում այսօր և ինչքան տեղ ունին իրականութեան ու ճշմարտութեան մէջ հայ ժողովրդի ոսոխների այդ չարաշուք կռնչոցները...

II

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Հին վէրը.—Ինքնապաշտպանութեան քարոզները՝ „ձայն բարբառոյ"—Զարդի կօշմարը չի փարատել.—Ոչ մռայլ յոռետեսութիւն, ոչ ինէրտ անտարբերութիւն.—Քաղաքական հորիզոնը.—Վտանգալի հեռանկար և մեր քաղաքական վիճակը.—Ապրել՝ նախ և առաջ.—Ի՞նչ ենք ձեռնարկում.—Հայի պաշտպանութիւնը՝ յաւիտենական վերսկսումն.—Ժողովուրդ և յեղափոխական.—Հայ զանգուածը նոյնքան մաշալիս, որքան իր դրացին.—Ինքնապաշտպանութիւնը Ռուսական Հայաստանում—V Համագումարի որոշումը.—Ազգովին ելք.—

—

Primum vivere...

Կիլիկեան եղեռնը մի նոր փորձաքար եղաւ մեր ազգային ինքնագիտակցութեան համար։ Նորէն հին վէրքը, լայնաբերան, արիւնահոս, փռւեց մեր աչքի առջև, նորէն և աւելի թափ ու կսկիծով զգացինք մեր հաւաքական կամքի ու նախաձեռնութեան աղաղակող անզօրութիւնը... Յուլիսեան հարուածից յետոյ, ութ ամիս շարունակ կուսակցութիւնը հաւա՛ր էր գոչում՝ կազմակերպւելու, զինւելու, արթուն կանգնելու հաւանական պատահարների հանդէպ։ Ձայն բարբառոյ յանապատի... կամ—գրեթէ։ Ադանան, անշուշտ, պաշտպանւեց որոշ չափով, հերոսական ինքնապաշտպանութեան փաստեր տւեց և Չոք-Մարզւանը։ Տարբերութիւն, անշուշտ, կար հին և նոր կացութեան միջև։

Բայց որքա՜ն դարձեալ տխուր, անմխիթար է հայկական դիմադրութեան ընդհանուր պատկերը... Որքա՜ն խեղճալի էր ժողովրդական զինաւորումը: Նա խղճական, անհատական էր, երբ կարող էր լինել մասսային: Եւ որքա՜ն սակաւ՝ զէնքով դիմադրողների թիւը... Կարելի է ասել, մի բուռն կտրիճներ, լայնատարած ու ցանցառ ազգաբնակութեան մէջ, որի ահագին տոկոսը—տղամարդիկ, առնական, թանկագին ուժեր—զէնքի կամ կռուի չգոյութեան շնորհիւ, խուճապն սկսելուն պէս, ձգում էին վատաբար երկիրը և դիմում անպատիւ փախուստի դէպի ծովեզերքը մինչև Եգիպտոս, լաց ու շիւան տարածելով դէպի աշխարհի չորս բոլորը: Հին, ծանօթ պատկե՜ր... Եւ թերի կողմերը լրացնում էր նոյն հինաւուրց միամտութիւնը, որ մակեդոնական վաշտերի Ադանա ժամանելու միջոցին՝ յանձնում էր զէնքերը հիւպատոսական յորդորների առջև և այդպիսով պատճառ լինում գազանութիւնների կրկնապատկման ու կատաստրոֆի վիթխարի ծաւալումին...

Եւ էականը դեռ այդ չէր: Կիլիկիան, իբրև մի վայր, որ աշխարհագրական իր դիրքի շնորհիւ, վաղուց ի վեր դրուած է եղել համեմատաբար աւելի նպաստաւոր պայմանների մէջ, ուր նոյնիսկ 95-ի մեծ ջարդերի ժամանակ հայ տարրը շատ քիչ է տուժել համեմատաբար— Կիլիկիան դեռ ունէր մի քանի զէնք, դիմադրութեան մի քանի թոյլ միջոցներ: Աւելի սարսափելին կար: Կար դողացնող հեռանկարը... բուն երկիրը, Հայաստանը... Մի վայրկեան կար, երբ դժոխային մտածումները սառցնում էին արիւնը մեր երակներում, երբ սպասում էինք, թէ ահա ջարդի ուրագանը կ'անցնի դէպի Բարձր Հայք և կը լրացնի 95-ի աւերածն ու զարհուրանքը: Տասնեակ Ադանաներ կարող էին պայ-

թել ամենայն դիւրութեամբ և ոչ մի տեղից օգնութիւն չը պիտի հասնէր։ Եւրոպայի՞ց... Եւ մեր միամիտ ժողովուրդը դարձեալ պիտի մորթոտւէր ոչխարի պէս, զուրկ կռւելու միջոցներից, անընդունակ դիմադրելու, վարժւած՝ միայն իր վիզը երկարելու դանակների ու եաթաղանների առջև... Այդպէս է նա, տարաբախտաբար, իր խոշոր մեծամասնութեամբ — տակաւին այսօր։

Անցե՞լ են արդեօք նման վայրկեանները... Ջարդի կօշմարը փարատւե՞լ է արդեօք մեր կարմիր հօրիզօններում։ Ինքնապաշտպանութեան հաւարը կորցրե՞լ է իր այժմէութիւնը։

Ո՞վ է, որ կարող է հաստատական պատասխան տալ այդ նզովեալ հարցումներին...

Չենք ուզում ողբերգական գոյն հաղորդել կացութեանը և տոգորել մթնոլորտը չարագուշակ մարգարէութիւններով։ Չենք էլ ուզում իսպառ սևցնել, *tabula rasa*-ի հաւասարեցնել օսմանեան ժողովրդի քաղաքացիական ու բարոյական քարտէզը։ Այդ ըմբռնումը չի համապատասխանում իրականութեան։ Նոյնիսկ կիլիկեան դրամայի պատմութիւնը արձանագրում է մարդասիրութեան ու անձնազոհութեան բազմաթիւ օրինակներ մահմեդական աշխարհի մէջ։ Այդտեղ կան, բարեբախտաբար, ոչ միայն արիւնարբու, խուժանային բնազդներ, այլև առողջ, բնականոն զարգացման սաղմեր։ Ինչ վերաբերում է մահմեդական լայն ամբոխին, զանգւածներին՝ այդտեղ էլ կայ հոգեբանական տիրապետող մի իրողութիւն, որ վճռական է կացութեան համար. դա աւանդական հնազանդութիւնն է, կոյր, անպայման հնազանդութիւնը դէպի կենտրոնական իշխանութեան հրամանները, մի իրողութիւն՝ որ ինքնին թերևս բացասական է, բայց որ փոխանցման այս

ահարկու ժամանակներում կարող է դառնալ միանգամայն գրական ու բարեբեր մի գործօն, եթէ այդ իշխանութիւնները, կենտրոնական կառավարութիւնը կանգնած մնան իրենց կոչման բարձրութեան վրայ, ցոյց տան իրենց՝ ուժեղ, շիտակ, անաչառ և ամենից առաջ՝ ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն։

Ո՛չ, տեղիք չը կայ արծարծելու սև, անյոյս յոռետեսութիւնը և զարկ տալու արհեստականօրէն՝ գաղթի խելագար, ազգայնասպան հոսանքին։ Բայց միւս կողմից պարտաւոր ենք զգաստ ու լուրջ նայել կացութեան վրայ, պարտաւոր ենք լուրջ ընդունել վտանգները, հնարաւոր, ձախորդ պատահարները, որպէսզի վերստին զոհ չը լինինք մեր անորակելի անփութութեան։ *Rien au tragique, tout au sérieux!*

Քաղաքական հօրիզոնը դեռ բոլորովին չի խաղաղուել։ „Վտանգը“ ոչ միայն ներքին է, այլ և արտաքին։ Վայրագ, գիշատիչ ախորժակները դեռ կատաղօրէն մրցում են Թիւրքիոյ հիւանդ մարմնի շուրջը։ Ահա Աւստրո-ռուսական ու այլ համաձայնութիւններ, ինչ որ խորհրդաւոր բանակցութիւններ ու շշուկներ, ուր նորէն մերթ ընդ մերթ արտասանւում են հին, ահազդեցիկ ֆօրմուլները՝ „օսմանեան ամբողջութիւն“, „անդամահատում“, „բաժանում“… Ասես նորէն դուրս է լողում հնութեան ալիքներից Պետրոս Մեծի հռչակաւոր կտակը, ցարական արշաւանքի ու տիրապետութեան ուրուականը Բօսֆօրի եզերքներում։ Ահա յունական հարց, կրէտական, մակեդօնական, արաբական, ալբանական. ահաւասիկ ուժեղ ու ամբարիշտ Բուլգարիայի անդիմադրելի մղումը դէպի Մակեդօնիա… Մի մի հզօր ու պայթուցիկ կնճիռներ, որ սպառնում են վաղ թէ ուշ վերսկսել Արևելեան Դրամայի հսկայ խաղը՝ նոր ու արիւնոտ արարուածներով։

Ահա, վերջապէս, ինքը պառաւ Ցաճկաստանը՝ իր

բաշիբօզուկ խուժաններով, չարխաթապաշտ սոֆթաներով, փաթթոցաւոր ճիւաղներով՝ որ դեռ հեռու է կապիտուլասիօնից, համակերպումից, որ մշտապէս դաւում է սահմանադրութեան ու ազատութեան դէմ, որ ըսպասում է պատեհ վայրկեանին, որպէսզի նորէն գրոհ տայ ազատասէր և անպաշտպան „գեավուրի“ դէմ...

Ուզո՞ւմ ենք ապրել, իբրև ազգութիւն—թէ չենք ուզում... Եւ եթէ պատասխանը դրական է, եթէ գիտակցում ենք յարատեւութեան ու ինքնօգնութեան անհրաժեշտութիւնը, անում ե՛նք արդեօք ազգովին, հաւաքականօրէն այն բոլորը, ինչ որ հնարաւոր ու անհրաժեշտ է այդ ինքնօգնութիւնը կազմակերպելու համար։

Տարաբախտաբար, մեր ազգային մտավիճակը, մեր ժողովրդի ինքնատիպ հոգեբանութիւնը չի ցոյց տալիս այդպիսի փրկարար գիտակցութեան նշոյլներ։ Մեր թղթակիցները—երբ խօսք է լինում հին, մահառիթ „վէրքի“ մասին—միշտ ցասումով են նկարագրում այն անասնական անտարբերութիւնը, որ ցոյց են տալիս շատ տեղերում մեր զանգւածները՝ ամենակենսական, ամենահրատապ խնդրի մէջ։ Ինքնապաշտպանութիւնն աւելորդ է, աւելորդ՝ բոլոր քարոզները... Ո՛չ մի ինիցիատիվ։ Ի՞նչ զէնք, ի՞նչ պատրաստութիւն. հապա ճակատագի՞րը... Աստուած ողորմած է... մանաւանդ—հայի Աստուածը... Ա՜հ, ողբալի, տիրացուական հոգեբանութիւն...

Իսկ „ազգը“, իր „կրթւած“, տիրացուատիպ հրապարակախօսներով նւիրագործում է այդ ստրկական հոգեբանութիւնը. „ազգը“ իր յայտնի ու անյայտ ցեցերով այսօր մէկ գերագոյն մտահոգութիւն ունի՝ ոչնչացնել հայ քաղաքական կուսակցութիւնը, վարկաբեկել այն ամենը, ինչ որ կապ ունի ժողովրդային գոյութեան, ինքնապաշտպանութեան ցաւոտ հարցի հետ։

Եւ ահա նրանք, այդ ցեցերը, կրկէս են իջել ազատ մամուլի թեւերի վրայ, գոտեմարտում են յեղափոխական կազմակերպութեան հետ, որի լռիկ արհամարհանքը միշտ աւելի ամբարտաւացնում, խրախուսում է նրանց։

***

Մենք յաւէտ մանուկ, անփորձ մի ազգ ենք։ Ոչինչ չենք սովորում պատմութիւնից, գրեթէ ոչինչ։ Եւ վա՜յ այն ազգին, որ դիւրութեամբ կը մոռանայ անցեալի փորձութիւնները, վա՜յ այն ժողովրդին, որ թուլամորթ անհոգութեամբ կը գոցէ աչքերը պատմութեան ցնցող, ստիպողական հրահանգների առջեւ։ Արատը խոստովանենք,—մեր հիմնական, հաւաքական արատը. նա, որի առթիւ այնքան նիզակներ են ջարդել յեղափոխական կուսակցութիւնները. նա, որ յաճախ զզւանքով ու ցասումով է նշաւակել և հայասէր եւրոպացիներից... Դա մեր „ինքնապահպանութեան բնազդի“ թուլութիւնն է, երբեմն գրեթէ անդամալուծումը, ծիւրումը (*atrophie*)։ Գուցէ ոչ մի ազգ այնքան անտարբեր չէ դէպի իր ֆիզիքական գոյութեան հարցը, ինչպէս հայ ազգը։ Եւ սակայն դա ամենամեծ խնդիրն է, բոլոր խնդիրների խնդիրը։ *Primum vivere*... „նախ պէտք է ապրել“... Ի՞նչ արժէք ունին մեր բոլոր կուլտուրական մտահոգութիւնները, մեր ծրագիրները ժողովրդային առաջադիմութեան ու բարգաւաճման մասին, ի՞նչ արժէք ունին մեր քաղաքական ու սօցիալական դեղատոմսերը, քանի դեռ ապահովւած չի լինի ազգայնութեան ֆիզիքական յարատեւութիւնը... Սրանք այբբենական ճշմարտութիւններ են, բայց մենք տխուր հարկի մէջ ենք— նոյնիսկ այսօր—շարունակել արծարծելու նրանց...

„Այսօրը“ մեզ մօտ չափազանց նմանում է „երե-

կին“, մեր պատմութիւնը յաւիտենական վերսկսումն է։ Սուր, ցաւոտ դրւագները վերադառնում են պարբերաբար, յուսահատեցուցիչ միօրինակութեամբ... Եւ միշտ նոյն ուրոյն, բացառիկ գծերով, որ յատուկ են մեր բացառիկ ճակատագրին։ 1909 թւականը վերարտադրեց 1895-ը և 96-ը, ողբերգական, սոսկումնալի հետևողականութեամբ։ Ոմանց ասելով՝ Ադանան նոյնիսկ գերազանցեց իր նախորդներին․ գերազանցեց տանջանքի խորութեամբ, բարբարոսութեան թափով ու մոլեգնութեամբ...

Բացառիկ ճակատագիր—այո... Մէկից աւելի ուժեր են կռում այդ զարհուրելի „ճակատագիրը“։ Պատմութիւնը, աշխարհագրութիւնը, ցեղագրական ու քաղաքակրթական պայմանները դարբնել են այն՝ մի անողորմ, երկաթեայ անհրաժեշտութեան սարդոստայնի մէջ, որից ելնելը դժւարին է.. երբեք՝ անհնարին։

Երբէ՛ք։ Միջավայրի տարկանոնութիւնները, կուլտուրական աստիճանների տարբերութիւնը, կրօնի, մօրալի հասկացողութիւնների նոյնիսկ ամենախիստ հակամարտութիւնը և բոլոր նման ուժերը չեն հանդիսանում իբրև մի տեսակ „նախախնամութեան“ թարգմաններ, միահեծան և տիրական, կոչւած յաւէտ սարկացնելու մի ժողովրդի և տիրեցնելու այլ ժողովուրդների։ Կան ուրիշ տեսակ „նախախնամութիւններ“, որ բղխում են ոչ թէ „գերբնական“, այլ մարդկային էութիւնից. կայ բուն, գործօն, վճռող ուժը, որ մրափում է դարերից ի վեր կրաւորականութեան անդունդներում, որ մերթ ընդ մերթ փայլատակում է շանթալի հակազդումներով, որ վաղ թէ ուշ պիտի աջողէ չէզոքացնել մի համայնքի մէջ՝ և՛ պատմութեան, և՛ աշխարհագրութեան, և՛ ցեղագրական ու կուլտուրական բոլոր դըժբախտ տարկանոնութիւնները և յեղաշրջել ճակատա-

գիրը՝ ազատ կեանքի ու ֆիզիքական յարատեւութեան գրաւականներով... Վաղ թէ ուշ, այո՛, պիտի գայ, այդ մեծ ուժի յաղթանակը,—այնպէս պէտք է իսպառ յուսահատուէինք ու խաչ դնէինք „պրօգրէսի“, յառաջխաղացութեան գաղափարի վրայ...

Ժողովուրդների իմաստութիւնը—ահա նրանց ճակատագրի հզօրագոյն դարբինը: Ժողովուրդների հաւաքական, միահամուռ կամեցողութիւնը—ահա մի ուժ, որի գրոհին չի դիմանայ ինքը ամենազօր նախախնամութիւնը, ինքը „ֆատումը“: Ճակատագիրը չէ, որ հրամայում է մարդկանց ու ժողովուրդներին, — այլ մարդիկ ու ժողովուրդներն են, որ հրամայում են ճակատագրին և տալիս են նրանց՝ իրենց ուզած ընթացքը: Անշուշտ, պարապ ֆրազասիրութեան համար չէ, երբ փիլիսոփաները տրամաբանում են, որ մարդիկ տէր են իրենց ճակատագրին և կարող են տալ նրան իրենց ցանկացած դրօշմը... Պէտք է միայն իմանան, պէտք է միայն կամենան:

Ո՞ւր էր, թէ մեր մէջ հասունացած լինէր այդ կորովի և իմաստուն կամեցողութիւնը... Տաշեղի պէս թաւալւել ենք միշտ մրրիկների յորձանքներում, առանց հակազդել կարողանալու և կամենալու: Ամեն մի յորձանք վրայ է հասել աւելի հուժկու, աւելի թափով և ամեն մէկը գտել է մեզ յաւիտենօրէն նոյն տեղում ցցւած, ծոյլ ու անպատրաստ, հէգ ու աղերսող: Չենք արել, ինչ որ պէտք է, արել ենք միշտ, ինչ որ պէտք չէ: Խօսքս ազգային ընդհանրութեան մասին է, ոչ յեղափոխական փոքրամասնութեան: Զարնւել ենք միշտ պատերին, փշերին, մացառներին. Թափել ենք անբաւ կորով, անհուն եռանդ՝ ապարդիւն ու անպատիւ աշխատանքի վրայ. սիզիֆեան յամառութեամբ երազել ենք խորտակել մարդկային

ապառաժ-կոշտութեան հսկայական սառոյցը... միշտ լացով ու վայնասունով... Մոռանա՞լ այդ անպատիւ էպիզոդները: Մոռանա՞լ անարգանքի այն օրերը, երբ—1895-ի խուճապին—Տրապիզոնի պատերի վրայից Թիւրք ամբոխը մէկ առ մէկ վար էր քաշում հայ զոհերին—յաղթանդամ, կենսալի տղամարդիկ—և մորթոտում դիւային խրախճանքի մէջ, ա ռ ա ն ց ո ր այդ Թշուառ պարիաները գէթ մի անգամ, գէթ իրենց հուժկու բազուկներով փորձէին անխուսափելի մահից առաջ, մի հարուած տալ դահիճներից մէկին ու մէկին...

Այդ փաստերը զզուանքի դրոշմով են արձանագրուած եւրոպական մամուլի, գրականութեան ու հրապարակային ատենախօսութիւնների մէջ, և շատ տեղերում կարծիք է ստեղծուել—փոքր ինչ չափազանցրած, բայց ընդհանրապէս ճիշտ — Թէ կոտորածի միջոցին հայ զանգուածները մատնում են սպանդանոց առաջնորդուող ոչխարների հոգեբանութիւն.. „Ile se laissent assommer"... Մեր սուգը կրկնապատկւում էր այդ դժոխային օրերում, մենք ոչ միայն կոտորւում էինք Ֆ ի զ ի ք ա պ է ս, այլ և ջնջւում, ոչնչանում էինք բ ա ր ո յ ա պէս: Մոռանալ անհնարին է: Եթէ մենք մոռանանք, Լեպսիուսները հրապարակի վրայ են իրենց փաստալի, հաստահատոր գրուածքներով և նրանք միշտ կը յիշեցնեն աշխարհին, կը յիշեցնեն և մեզ՝ մեր անօրինակ, ստըրկական համակերպութեան այդ իրողութիւնները, որոնք յաւիտենական ու մտրակող անարգանքի պէս պիտի շշնջան մեր ու մեր սերունդների ականջներին...

Լաց ու աղերսանք—որքան կուզէք: Լացել ենք խուժանի առաջ, գետնատարած հայցել ենք նրա գութը, մարդասիրութիւնը, բայց երբ գազանը արհամարհել է այդ ստրկական լացն ու բառաչը,—Թափել ենք քար ու կարկուտ... միշտ խօսքով: Քար ու կարկուտ—և Եւրոպայի

դէմ։ Այդպէս արինք նաև վերջին աղէտի ժամանակ։ Պոլսից մինչև Կիպրոս ու Եգիպտոս՝ քափով ու փրփուրով բացեցին հայկական որոտաշունչ լեզուները — Նրանք՝ որոնք սովորական ժամանակ դրական միջոցի ոչ միայն չեն ձեռնարկում աղէտները կանխելու, կամ գէթ սահմանափակելու համար, այլ և արհամարհում են յեղափոխական կազմակերպութեան աշխատանքը, նրա ամենօրեայ քարոզը, նրա յուսահատ ճիգերը՝ կազմակերպելու ժողովրդին, զինելու, պատրաստելու. . . Եւ թափեցին տղայամիտ խրոխտանքներն ու յիշոցները դրացու հասցէին, „շուն“, „վայրենի“, „բարբարոս“ ածականներով. ռազմի փքուն ու ճոռոմ հրաւէրներ, մեծամիտ ու ցաւագար ժեստեր, սանտիմենտալ վայնասուն։ Բռունցքի անուժ թափահարումներ... գրպանի մէջ։

***

Վե՛րջ պիտի տալ այդ ստրկական մօրալին, այդ ախտաւոր մտայնութեան։ Խարազանե՜լ ամենից առաջ պէտք է—*մեզ*։ Ոչ ոք այնքան յանցաւոր չէ մեր կրած տառապանքների մէջ, ինչպէս մենք. ինչպէս ամբողջ ժողովուրդը, ամբողջ թիւրքաց հայութիւնը։ Նա է մեծագոյն պատասխանատուն իր արիւնոտ ճակատագրի համար, քանի որ նա է իսկական կռողը այդ ճակատագրի։ Արժէք չունին այդ յուսահատ բռնկումները, այդ ճոռոմ ու ցասկոտ որոտումները, որ տեղում են „անգութ, բարբարոս“ խուժանների դէմ, որ ուղղւում են բոլոր *արտաքին* գործօններին, ուժերին։ Անարժէք են և արգահատելի... Նրանք գալիս են միայն լրացնելու մեր անյատակ, գետնատարած խեղճութիւնը։ *Սառուցը* չի խորտակւի ոչ լալկան աղօթքներով, ոչ էլ ունայն բողոքներով ու սպառնալիքով... Բողոքեցէ՛ք

բնութեան, փաստ և մահաբեր տարրերների դէմ. Արգելեցէք հողմերին՝ նիւթել իրենց աւերածները։ Հրամայեցէ՛ք ուրագանին՝ որ նա փոխէ իր ուղղութիւնը։ Կարո՞ղ էք անել... Խուժանը իր յարաբորբոք ախորժակներով ու բնազդներով մի այդպիսի տարերք է, կոյր ու անսիրտ, բութ ու մոլեգին։ Այդպէս է արդէն եւրոպական, „քաղաքակրթւած“ խուժանը. իսկ մահմեդականը—ո՞ւր առաւել։ Ցոյս չը դնե՛նք նրա էւոլիւցիայի, նրա կրթութեան ու փոփոխութեան վրայ. խուժանային էութիւնը ըմբոստ է կրթական բոլոր մեթոդների, բարոյական բոլոր խրատների հանդէպ. երբ նա գտնէ ազատ, անարգել միջավայր, երբ ի վերուստ շըղթայազերծեն նրա բնազդները, մատակարարեն „բարեյաջող“ պայմաններ—նա նորէն պիտի թնդացնէ աշխարհը իր վագրային հռնդիւններով... Ոչ մի ուժ չի կարող չէզոքացնել նրան։ Մեստաղի հակահարւածները միայն—ահա ազդու և իրական մեթոդը.

Թողնենք քարերի կարկուտը—և Եւրոպայի դէմ։ Ա՛հ, եթէ մեր բոլոր բողոքները, բոլոր այդ ջղոտ ու կենտրոնախոյս ճիգերը իսկզբանէ, մեր ազատագրական շարժման առաջին օրերից ի վեր, ուղղած լինէինք դէպի միևնոյն, մեծ, փրկարար, արգասաւոր հոսանքի դաշտը, եթէ համիդեան բռնակալութեան իւրաքանչիւր հայ զոհի մէջ, երեսուն տարւայ արհաւրալի փորձութիւնների ընթացքում, գէթ թոյլ չափով արծարծւէր ինքնապաշտպանութեան բնազդը,—մեր ճակատագիրը այսօր այլ կերպ անօրինւած կը լինէր, մենք չէինք դողայ աշնան տերևի պէս՝ գահավիժւող փոթորիկների հանդէպ։

Այդպէս չ՚եղաւ։ Զ՚արծարծւեց այդ փրկարար կրակը և մենք տուժեցինք ահեղօրէն 15 տարի սրանից առաջ, տուժում ենք նաև այսօր։ Զ՚արծարծւեց այդ կրակը,

չը նայեած յեղափոխական փոքրամասնութեան գերմարդկային ճիգերին, շարունակական հաւա՛քներին ու պաղատագին յորդորներին։ Անդունդ կար այդ փոքրամասնութեան և որոճող ու մրափող մեծամասնութեան միջև։ Մինը միւսի համար ասես խորթ էր... Եւ զարմանալի չէ, որ 1895-ի խուժանային երկարատև նախճիրների ընթացքում, երբ հայ մարդիկ, հազարաւոր և տասնեակ հազարաւոր տղամարդիկ, առանց որևէ դիմադրութեան, նախիրների պէս մղւում էին սպանդանոց և մորթոտւում, երբ միևնոյն ժամանակ մի քանի կարիճ հրացանաւորների, մի քանի սրտոտ յեղափոխական երիտասարդների դիմադրութիւնը փրկում էր ամբողջ գիւղեր ու գաւառներ—զարմանալի չէ, որ այդ արտասուելի օրերում, հանդէպ այդ անարգ ու կամաւոր նահատակութեան, հանդէպ մասսային այդ անօրինակ ոչխարամտութեան, գտնւում էին յեղափոխականներ, որ ցասման, զայրագնութեան մէջ բացականչում էին. „անարժա՛ն ժողովուրդ, ջարդւելու ժողովուրդ“...

Պատկերը շատ քիչ է փոխւած մեր օրերում։ Յեղափոխական փոքրամասնութիւնը դարձեալ գրեթէ մենմենակ է, առանց ժողովրդի լայն ու գործօն աջակցութեան։ Յեղափոխական և ժողովուրդ՝ ասես տարբեր, երբեմն նոյնիսկ հակամարտ, կատէգորիաներ են։ Որքան մէկը ըմբոստ, շարժուն ու նախաձեռնող, նոյնքան միւսը՝ անշարժ, կրաւորական և համակերպող։ Այդ չարաբախտ հակօրինութիւնը (*antinomie*) մեր պատմական վերջին շրջանի ամենացայտուն, ամենաաղէտալի գծերից մինն է.. Տրամաբանօրէն անհեթեթ է թւում մօր և զաւակի այդ հակադրութիւնը, բայց նա փաստ է։ Եթէ մի կողմից—*par excès du mal*. մի տեսակ կօնտրաստի, հակազդեցութեան օրէնքով — հայ ժողովուրդը արտադրել է իր խորունկ ծալքերից

Հրաշալի կորովներ, հերոսութեան ու անվեհերութեան չքնաղ տիպարներ, որոնց վրայ կանգ առանք նախորդ էջերի մէջ և որոնցով նա վերականգնել է մի յայտնի չափով իր վարկը աշխարհի առաջ—ապա միւս կողմից այդ ժողովուրդը իր խոշոր մեծամասնութեամբ, իր զանգուածային ընդհանրութեամբ եղել է միշտ և այսօր էլ շարունակում է լինել մի իներտ, ճակատագրապաշտ անշարժութիւն, գերի Ֆատումին, ապաւինած նախախնամութեան, աւետարանին ու բոլոր աստուածներին, որոնցից երբէք չը լսեց նա ըմբոստութեան ու մարդկային արժանապատուութեան փրկարար խօսք, այլ միշտ միայն հնազանդութեան և նախրային համակերպութեան պատուիրաններ։

Ֆատալի՛ստ, ճակատագրապա՛շտ—գուցէ աւելի, քան իր մահմեդական դրացիները...

Այդպէս—Տաճկաստանում։ Այդպէս չ՚եղաւ նա հայրենիքի միւս հատուածի մէջ։ Մեր տեսութեան նախորդ էջերում յիշեցինք արդէն կովկասեան ճակատամարտները. յիշենք դարձեալ, յիշելու ենք միշտ։ Այնտեղ ևս, Անդրկովկասում, մի քանի տարի սրանից առաջ, հայութիւնը դրուած էր կեանքի ու մահուան ճգնաժամի մէջ։ Երկու դրութիւնները տարբերելով հանդերձ, նման են մի քանի խոշոր գծերով։ Այնտեղ ևս, Ռուսահայաստանում, մէկ ու կէս տարի շարունակւող այդ ահաւոր շրջանի մէջ, մեր դէմ էին ռէակցիայի, յետաշրջումի բոլոր տարրերը. մեր դէմ—կառավարութիւնը, որ վճռել էր հնձել „ըմբոստ ժողովրդի“ բոլոր կենսունակ, դիմադրական ուժերը, մեր դէմ—թուրք խուժանը, իր աղաներով, իր հայատեաց մտաւորական-առաջնորդներով, որոնք թև թևի կառավարութեան հետ, վճռել էին հրով ու սրով դուրս մղել հայ կուլտուրական ժողովրդին կովկասեան հորիզոններից և հաստատել

ռէակցիայի ու վայրենութեան տիրապետութիւնը. մեր դէմ — բոլոր հարևանները, ռուս ու վրացի ժողովուրդների բոլոր գիշատիչ ու մարդատեաց վիժմունքները, մեր դէմ — նոյնիսկ նրանց ապիկար „իդէօլօգների“ մեծամասնութիւնը, որ ուրիշ միջոց չէր գտնում օգնելու հայ հոգեվարք ժողովրդին, բայց եթէ մերկացնել շարունակ „հայկական պրօվօկացիաները“, բայց եթէ քարկոծել շարունակ հայ ժողովրդական ինքնապաշտպանութեան միակ գործօն Կազմակերպութիւնը... Բոլորը — մեր դէմ, և չը կար նոյնիսկ այդ գարհուրելի տարտարոսում կովկասահայ ժողովրդի համար այն լղարիկ սփոփանքը, յոյսի այն աղօտ ճառագայթը — եւրոպական միջամտութեան հնարաւորութիւնը — որին այսպէս թէ այնպէս ապաւինում է Թիւրքահայը աղէտների վայրկեաններում...

Եւ սակայն, ինչպէ՞ս եղաւ, որ այդ անօրինակ դաւադրութեան զոհը ճողոպրեց մէկուկէս տարւայ անհաւասար պատերազմի արհաւիրքներից, նա չ՚ընկաւ հարւածի տակ, գետնատարած չ՚աղերսեց իր արիւնռուշտ ոսոխներին, աշխարհասասան լաց ու բառաչով չը խլացրեց մթնոլորտը, այլ նոյնիսկ տարաւ անմոռանալի յաղթանակներ հակայեղափոխական այդ միլիօնաւոր, կազմակերպւած խաժամուժի դէմ, յաղթեց նոյնիսկ այնպիսի գաւառներում, ուր հակառակորդը կազմում էր ճնշող մեծամասնութիւն, ահեղ իր զինւորութեամբ և հզօր ոստիկանական աջակցութեամբ...

Որովհետև, հայ-ժողովրդական իմաստութիւնը այդ միջավայրում յաղթահարել էր իր „ֆատումին“, հրաժեշտ էր տւել ճակատագրապաշտ, մեղկ ու տափակ ներշնչումներին, ըմբռնել էր աշխարհի օրէնքը, գոյութեան ցաւոտ մենամարտի անագորոյն „հրամայականը“ և առնական վճռականութեամբ ապաւինել էր իր

մարտնչող փոքրամասնութեանը, իր անձնուրաց զաւակներին, որոնց փոքրաթիւ լէգէոնը վերածել էր համաժողովրդական, լայնատարած բանակի:

Շնորհիւ մեր հին, փորձւած ղեկավարների՝ այդ կռիւը առաջ տարւեց օրինակելի մեթօդով. զինւորական արւեստի պահանջների համաձայն: Եւ որքա՜ն տարբեր էր դրսի աշխարհի վրայ կովկասեան կռիւների թողած տպաւորութիւնը *)... *Ռուս ու եւրոպական բոլոր թըղթակիցները պատկառանքով էին խօսում հայկական դիմադրութեան մասին: Այլ եւս „ջարդ“ չէր, այլ “կռիւ“...*

Այո, արիւնոտ դրւագները յաճախ են կրկնւում մեր պատմութեան մէջ, բայց նրանք անցնում են, տարաբախտաբար, անհետեւանք՝ թիւրքահայկական գիտակցական մակերեւոյթից: Ինքնապաշտպանութեան քարոզներն այնտեղ երբէք չեն հնանում, ընդհակառակը ստանում են միշտ նոր ու թարմ այժմէութիւն: Չը յոգնենք, ուրեմն, „հինը“ կրկնելուց, և կրկնենք այն մշտնջենաբար, մինչև որ փոթորկէ ստրկամտութեան դպրոցում մարզւած, ֆատալիստական թոյնով մշակւած թիւրքահայ մ ա ս ս ա յ ի գիտակցութիւնը:

---

*) Ի ն ք ն ա պ ա շ տ պ ա ն ո ւ թ ե ա ն այդ պատերազմի տպաւորութիւնը այնքան ուժեղ էր, որ Ռուսաստանի յեղափոխական կուսակցութիւններից ոմանք մտածում են ընդօրինակել Դաշնակցութեան տակտիկը, նոյն կռուելու ձեւերը:

Ցանկալի է եւ միանգամայն այժմէական՝ որ մեր ձեռնհաս զինուորական ղեկավարները, փոքրիկ, հիւթալի բրօշիւրներով պարզեն հանգամանօրէն այդ տակտիկի էական պահանջները, ըստ կարելւոյն ճոխացնելով նրանց՝ անցեալ կռիւների փաստերով: Առհասարակ պէտք է ուժ տալ այդ տեսակի գրականութեան՝ մասնաւորապէս թիւրքահայերի մէջ: Ջերմապէս յանձնարարելի են՝ Դ ո ւ մ ա ն ի հեղինակաւոր գրւածքը Ի ն ք ն ա պ ա շ տ պ ա ն ո ւ թ ե ա ն միջոցների ու եղանակների մասին եւ Ա ն դ ր ա ն ի կ ի „Մարտական հրահանգները“:

Ամբողջ ժողովուրդը միացած իր մարտական կազմակերպութեան դրօշակի տակ... Ահա ծանրակշիռ մի իրողութիւն, որ փրկեց Ռուսաստանի հայութիւնը ֆիզիքական ու բարոյական անէացումից: Առանց այդ կազմակերպուած ուժի, Ռուսահայաստանը պիտի վերածուէր մի հսկայական գերեզմանոցի *):

Որքա՜ն հրահանգիչ „նախընթացներ", քանի՜ խրատական փորձեր, իրողութիւններ... Յուլիսեան գոռ, յաղթական օրերին Դաշնակցութիւնը շատ չէր օրօրւում սին պատրանքներով: Նրա առջեւն էր ռուսական յեղափոխութեան ահեղ օրինակը: Նրա համար „հակահարւածները" միանգամայն կօնկրետ, տրամաբանական հնարաւորութիւն էին Տաճկաստանի պէս մի երկրում: Նա գիտէր Թիւրք ամբոխային ընդհանրութեան մտավիճակը, ըմբոստ ամեն նորմուծութեան դէմ, գերի հնաւանդ պաշտամունքների, պատրաստ նետելու բոլոր „օտարոտի" շարժումների պատասխանատւութիւնը „գիավուրի" վրայ, հայերի վրայ. և նա միջազգային գրկախառնումների ժխորի միջից հաւա՛ր էր կանչում հայ ժողովրդին՝ կազմակերպւել, համախմբւել ինքնապաշտպանութեան դրօշակի շուրջը: „Չը կայ—գրում էր նրա օրգանը 1908-ի օգոստոսին—չը կայ մի այլ պահանջ, աւելի հրամայական, քան կ ա զ մ ա կ ե ր պ ւ ե լ ո ւ անհրաժեշտութիւնը: Դժբախտութիւն կը լինի, եթէ չ'ըմբռնենք այն. ոճիր կը լինի, եթէ գիտակցաբար ձեռքից թողնենք այնքան նպաստաւոր վայրկեանը, չ'օգտւենք նւաճւած ազատութիւններից՝ զարկ տալու համար ժողովրդական կազմակերպման գործին... մենք

*) Տես նաև Միք. Յովհաննիսեանի „Կովկասեան Վանդէան" և մեր բրօշիւրը՝ „Համաժողովրդական բանակ":

որ ամենից աւելի պիտի տուժենք բարբարոսութեան յարձակողական վերադարձից"...

***

Կուզէինք, ա՜հ, ներշնչել խոր, անկեղծ, անվերապահ հաւատով դէպի Նոր Ռէժիմը, որի հետ կապուած ենք մեր կուսակցական ու ազգային էութեամբ, որի անունով զոհաբերել ենք այնքան կեանքեր։ Սակայն, ջարդերից ի վեր սահմանադրական կառավարութեան բռնած ընթացքը, տարաբախտաբար, չի կարող քաջալերել մեզ։ Այդտեղ երկչոտութիւնն ու աչառութիւնը կանոն են և հայ երկրի արիւնաներկ տեսարանների հանդէպ մենք չը տեսանք իշխողների մէջ այն սրտացաւ տրամադրութիւնը, որ անհրաժեշտ էր. ոճիրների քաւութեան ու յօշոտուած ժողովրդի հոգեկան վերակազդուրման համար։ Նոր կառավարութեանը հաճելի եղաւ՝ նահատակութեան նոր խարոյկներ բարձրացնել հայերի համար։ Ամբողջ աշխարհը, իրենք իսկ երիտասարդ թիւրքերը հռչակել էին բարձրաձայն, որ Կիլիկիոյ ողբերգութիւնը մի մասն է յետաշրջական լայնարձակ դաւադրութեան, կազմակերպուած Եըլդըզի ձեռքով և սակայն, Նոյն սահմանադրական աղբիւրներից հրապարակ նետուեց նաև հրէշաւոր ամբաստանութիւնը հայ տարրի, հայ յեղափոխական մարմինների մեղսակցութեան մասին... Նոյն ժամանակ, երբ Հիլմի փաշան պարլամենտական ամբիօնից հանրային ուշադրութեանն էր մատնում հայաջինջ դաւերի ճշմարիտ հեղինակներին, երբ Ֆէրիդ փաշան գրաւոր կերպով հաղորդում էր Ժընէվ, „Դրօշակի" խմբագրութեանը, ի միամտութիւն Դաշնակցութեան, թէ „կառավարութիւնը չի մեղադրում հայերին" — Նոյն այդ ժամանակ Պարիզի օսմանեան

դեսպանատունը ծանուցանում էր ֆրանսիական մեծ օրագրի մէջ, թէ կոտորածի պ ա տ ա ս խ ա ն ա տ ո ւ թ ի ւ ն ը բ՞ա ժ ա ն ւ ո ւ մ է... Հայի ու Թիւրքի միջև։

Եւ ըստ այնմ՝ բաժանւեց նաև պ ա տ ի ժ ը։ Նոր դահլիճը հրահանգեց հարիւրաւոր հայ մարդկանց բանտարկութիւն, ինքնապաշտպան գաւառների զինաթափում և ի վերջոյ—նաև մահւան դատավճիռներ՝ ինքնապաշտպան հայ երիտասարդների դէմ։

Այդ հակասական, երկչոտ ու վարանոտ ընթացքը սառը ջուր մաղեց հայութեան վրայ, որ արդէն ճաշակել էր հիասթափութիւնը նոր րէժիմի վերաբերմամբ՝ նախ քան Ադանան։ Չ'անգիտանանք, սակայն, մեդալի միւս կողմը։ Կայ մի խոշոր իրողութիւն, կայ մի կազդուրիչ նորութիւն, որ հիասթափութեան այս դառն օրերին որոշ չափով, այնուամենայնիւ, բնորոշում է հին ու նոր րէժիմների տարբերութիւնը։ Դա 30-ի չափ մահմեդական յանցագործների կախումն է։ Մի իրողութիւն՝ Թիւրքիոյ տարեգրութեան մէջ — աննախընթաց։ Յայտնի է, որ Համիդի օրով հարիւր հազարաւոր հայ նահատակների փոխարէն՝ և ոչ մի մահմեդական չը դատապարտւեց մահւան։ Այդ իրողութիւնը ինքնին — անկախ բոլոր միւս միջոցներից, որ ձեռնարկւած են ի նպաստ զոհերի—կացութեան և ժամանակի պերճախօս նշանակն է, որ հարկ է զօրացնել աստիճանաբար ուրիշ, նման միջոցներով, դարմաններով։ Մ ի ն ո ր տ ա ր ր է մտնում այդ կացութեան մէջ, այն՝ որ „գիավուրի“ դէմ գործւած ոճիրը կարող է պատժւել, նոյնիսկ մահով և նոյնիսկ այն դէպքում, երբ ինքը „գիավուրը“ ևս, հարւածներին պատասխանելով, կը ջնջէ հարիւրաւոր մուսուլման կեանքեր... Եւ այդ նոր տարրը—որքան էլ փոքրիկ իր ծաւալով—չի կա-

րող չ՛անդրադառնալ նոյնիսկ մահմեդական խուժանի մտածողութեան վրայ...

Մեղալի Թարս կողմը շօշափելուց և արդարութեանը մեր տուրքը վճարելուց յետոյ՝ պիտի շեշտենք, որ խի՛ստ լղարիկ է մեր մխիթարութիւնը.. Մեծ չարագործները, ոճրագործութեան իսկական հեղինակներն ու կազմակերպողները մնացին անպատիժ։ Այդտեղ արդէն երիտասարդ, սահմանադրական կառավարութիւնը մեղանչեց կոպիտ կերպով՝ թէ իր տարրական պարտաւորութեան և թէ երկրի ընդհանուր խաղաղութեան դէմ։ Ասենք ու անցնենք։

Այդ բոլորը „հաւա՞ր" է գոռում.. Կրկնենք դարձեալ մեր յանկերգը։ Ամեն ինչ սև ու յուսահատական չէ օսմանեան իրականութեան մէջ։ Պօլիտիկոսների, երկչոտ ու խոհեմ շօվէների կողքին՝ կան երիտասարդ-Թիւրք շարքերում՝ շիտակ, աննենգ հոգիներ, ներշնչուած ճշմարիտ լիբերալիզմի հրահանգներով, տոգորուած և կայսրութեան ամենակենսական շահերի գիտակցութեամբ—մարդիկ, որոնց սիրտը ցաւում է ի տես հայկական անհատնում մարտիրոսութեան, որոնք ոչինչ անպատեհութիւն ու ծայրայեղութիւն չեն գտնում հայոց պահանջների մէջ, և որոնք պատրաստ են անկեղծ, սրտաբաց, եղբայրաբար գործակցել մեզ ընդհանուր Հայրենիքի վերածնութեան աշխատանքում։ Նրանք առ այժմ թւով շատ քիչ են՝ տասնեակ միլիոնաւոր մահմեդական ընդհանրութեան մէջ. բայց այդ թիւը արագ-արագ աճելու վրայ է։

Թէև տանք մենք ևս անկեղծօրէն այդ գիտակից ու գաղափարական փոքրամասնութեանը և ձգտենք ընդհանուր ուժերով կառուցանել համաօսմանեան, համաժողովրդական մեծ պատնէշը՝ ընդդէմ բէակցիայի նոր դաւերի և արիւնալի փորձութիւնների։

Բայց ամենից առաջ զարկ տանք ուրոյն Նախաձեռնութեան, ամենից առաջ ապաւինենք մեր սեփական ուժերին։ Կարող են հասնել օրհասական նոր վայրկեաններ, երբ այդ թոյլ փոքրամասնութիւնն իսկ կը չէզոքանայ, անզօր կը լինի հակազդելու և մենք կը մնանք դարձեալ մեն-մենակ յարձակողական հողմերի դիմաց, ինչպէս Կիլիկիայում։ Աչքերնիս չը գոցենք իրականութեան վրայ։ Այդ իրականութիւնը՝ մեզ համար միշտ Անծանօթն է, Անակնկալը։ Թէ ներքին երերումների և թէ արտաքին հնարաւոր արշաւանքների միջիցին՝ մենք ենք, որ պիտի քամենք դառնութեան բաժակը... Բոլոր սրտով կը բաղձանք, որ անձեռնմխելի, անխախտ մնայ մեր քաղաքական իդէալը—ազատ ու անկախ Տաճկաստանը՝ իրաւահաւասար և դաշնակից ժողովուրդներով։ Բոլոր ուժով կը ջանանք ձեռք ձեռքի տուած սահմանադրական այլ տարրերի հետ, ապահովել երկրի առողջ, բնականոն զարգացումը։ Բայց մեր կամքը և մեր ճիգերը կարող են չը բաւել ախորժակների կատաղի, ոլորտապտոյտ յորձանքների մէջ, ուր կարող ենք ինքներս սուզուել ու գահավիժուել դէպի անդարձ կորստեան անդունդ։ Այդտեղ—մեր եզակի տրագիզմը...

Ինչ որ կարող ենք անել այդ անդունդը կանխելու համար, անենք անյապաղ, առանց որևէ միջոց խնայելու—և անենք ազգովին, հաւաքաբար։ Մեր *բացառիկ կացութեան* հանդէպ՝ մենք ոչ միայն չենք ձեռնարկում *բացառիկ միջոցների*, այլ նոյնիսկ չենք կատարում անհրաժեշտագոյն minimum-ը (նուազագոյն չափը) մեր հաւաքական պարտաւորութիւնների։ Ազգային պահպանութեան խնդիր է դրուած նախ և առաջ հրապարակի վրայ և մենք պէտք է ձգտենք—ըստ առաջնոյն համախմբելով բոլոր առողջ

ու կռուի տարրերը այդ ցաւատանջ մտահոգութեան շուրջը—մշակել բանաւոր և առնական ազգային քաղաքականութիւն: Մի քաղաքականութիւն, առանց գրգռիչ ցոյցերի և անհաշտ (*intransigeant*) խրոխտանքների, բայց և առանց թուլութեան: Նա պէտք է մղուի համաձայն տիեզերական մօրալի „իմպերատիւներին", հրամայականներին: Նրա գերագոյն իմպերատիւը պէտք է լինի հաւաքական ինքնապաշտպանութիւն, իր բոլոր իրաւունքներով ու միջոցներով:

Ոչ ոք չի կարող խլել մեզնից այդ սրբազան իրաւունքը: Բոլոր ուժով պէտք է դիմադրել զինաթափութեան այն փորձերին, որ ձեռնարկում են պարբերաբար հայ ժողովրդի մէջ: Ի՛նչ խօսք՝ որ դրա հետ միասին չի նկատւում տրամադրութիւն՝ զինաթափ անելու քիւրդ ու այլ մահմեդական տարրերը: Բայց եթէ անգամ այդ էլ աջողեն—դարձեալ մեզ համար մխիթարութիւն չէ: Կրիտիքական վայրկեաններին, երբ խուժադուժ, մարդասպան բնազդները, այս կամ այն միջադէպի, քաղաքական այս կամ այն տագնապի առթիւ, նորէն ազատ թռիչք կ'առնեն—մահմեդական խուժանը դարձեալ իսկոյն բեմ կը նետուի լիակատար սպառազինութեամբ, կը գտնուին միշտ ապիկար, մոլեռանդ պաշտօնեաներ, որոնք բաց կ'անեն „հաւատացեալների" առջև՝ նոյնիսկ տէրունական զինարանները: Մինչև որ պաշտօնէութիւնը ամբողջ օսմանեան կայսրութեան մէջ հիմնականապէս չը զտուի, մինչև որ վարչութիւնը բոլոր հայաբնակ գաւառներում չը դրուի բացարձակապէս յուսալի և զօրաւոր ձեռքերի մէջ—անկարելի է արգելք դնել հայ ժողովրդի զինաւորութեան պահանջներին, առանց վտանգելու նրա գոյութիւնը: Այդ մասին է, որ պիտի մտածեն բոլոր անկեղծ սահմանադրականները—հայ ու տաճիկ—աշխատելով միաժամանակ

արդար ու բաւարար կիրառումն տալ զինուորագրութեան օրէնքին—որի սկզբունքն ընդունուած է, բարեբախտաբար—մղել հայ տարրը ևս, ի միջի այլ քրիստոնեայ տարրերի, կայսրութեան բանակի մէջ...

Նոր աղէտի սրտաճմլիկ իրողութիւններն են, որ հարկադրում են մեզ ծանրանալ այդ էական պահանջի վրայ։ Նոր աղէտը չէր ստանայ այն ահռելի ծաւալը, եթէ հրդեհը հանգցնելու կոչուած վաշտերը կանգնած լինէին իրենց կոչման բարձրութեան վրայ—աւելի ևս—եթէ նրանք ընդունակ լինէին գէթ չէզոք դիրք բռնելու... Մենք տեսանք, թէ ինչպէս մակեդօնական հօրիզօններից առաքուած զօրքը խաղաղացրեց Ադանան։ Նա տեսաւ, որ մուսուլման խուժանից ևս կոտորուած են հարիւրաւորներ՝ հայ ինքնապաշտպան գնդակներով, տեսաւ նաև, որ ինքնապաշտպան հայ խմբերը, տեղի տալով հիւպատոսական թախանձանքների առջև, միամտութեամբ յանձնել էին իրենց զէնքերը—և ահա խաղաղարար զօրքը, մոռացած իր առաքելութիւնը, փոթորկուած մահմեդական դիակների տեսարանով, գրոհ տուեց անպաշտպան քաղաքի վրայ և յօրինեց այնպիսի սարսափներ, որոնց առջև նսեմանում են Սասունը և Ուրֆան...

Զինաթափութիւնը մահ է հայ ժողովրդի համար։ Աւելի ևս մահացու է նրա աղաղակող անկարողութիւնը՝ զինավարժութեան արուեստի մէջ։ Շվէյցարացի 17 տարեկան պատանիները աւելի լաւ կարող են կռուել ու պաշտպանուել, քան մեր յաղթանդամ մշեցիները, վանեցիները։ Մինչև օրս այդ իրողութիւնը ունէր խորունկ պատճառներ. բռնապետութեան մեքենան ամուր սխմում էր մեր ձեռքն ու ոտքը, մեր ամեն կարգի շարժումները։ Բայց այսուհետև այդ անկարողութիւնը պիտի հաւասարուի ոճրի։ Այսուհետև —

սահմանադրական նոր դպրոցի մէջ—հայ ժողովուրդը պիտի որդեգրէ և նոր կրթութեան մի մեթօդ, նա պիտի թողնի իր խաղաղ ու „տաղտկալի առաքինութիւնների“ մի մասը („vertus eunuyeuses“) և պիտի մարզուի գինուորական առաքինութիւնների մէջ, ինքնապաշտպանութեան նպատակով։ Կրթիչներ, դաստիարակիչներ այդ ուղղութեամբ նա շատ կը գտնի, նոյնիսկ իր հարազատ զաւակների շարքերում։ Զինուորական առաքինութիւննե՛ր... Դառնութեամբ ենք արտասանում՝ անգամ՝ խօսքը։ Բայց ժամանակի պահանջն է դա—մի դաժան, մրրկակոծ շրջանի։ Ժամանա՛կը—և միջավա՛յրը... Յիշեցէ՛ք լորդ Սօլսբիւրիի խօսքը։ Մի օր նա ազդարարեց հրապարակային մի սէնսասիօն ճառով՝ թոյլ, անզէն ժողովուրդների անխուսափելի կորուստը ժամանակի անողոք կոհակների տակ։ Իր հայրենակից Դարվինի մեծ օրէնքն էր թարգմանում՝ աւելի կոպիտ, դաժան ձևով... Եւ քիչ յետոյ ազնիւ լորդը շշնջում էր հայկական խնդրի առթիւ իրեն ներկայացած շվէյցարական հանրապետութեան նախագահ Լաշն...-ի ականջներին.

Ա՜հ, պարոն նախագահ, թէ որ հայերը ձեր քաջարի հայրենակիցների պէս հրացան բռնել գիտենային,—այդ ջարդերը չէին առաջանայ“ *)...

Չը սխալւի՛ն մեր քարոզների ու դիտաւորութիւնների վերաբերմամբ։ Թիւրիմացութիւններ չը ծագի՛ն այդ քարոզների հողի վրայ, ինչպէս մօտիկ անցեալում, երբ փորձեցին — նոյնիսկ կառավարչական, սահմանադրական շրջաններից — մեղադրել Դաշնակցութիւնը „դրդռումի“, պրօվօկասիօնի մէջ... Մենք ինքներս ենք պատերազմել միշտ ամեն կարգի պրօվօկա-

*) Մ. Վ. „Համաժողովրդական բանակ“:

տօրների դէմ և մեզ համար կը լինէր բացարձակ ինքնասպանութիւն, եթէ ստանձնէինք նրանց դերը։ Երանի թէ բոլոր օսմանեան մարմինները իբրև ուղեցոյց ունենային այն ուղղամիտ, լօյեալ ընթացքը, որին հետևում է Դաշնակցութիւնը ազգամիջեան ու միջկուսակցային քաղաքականութեան մէջ և հանդէպ Սահմանադրութեան։ Այդ ուղղամտութիւնն իսկ պահանջում է՝ պաղ, անխռով վերլուծումով մերկացնել կացութեան արատները... Եւ երբ մենք շարունակ բարոզում ենք մեր ժողովրդին ինքնապաշտպանութիւն, երբ յորդորում ենք նրան կազմակերպուել— բնաւ չենք գնում մեր ընդունած յանձնառութիւնների դէմ, ընդհակառակը վարւում ենք յօգուտ ընդհանուր համերաշխութեան, ձգտելով ամրապնդել նրա խարիսխները։

Յարձակողական ախորժակներով չենք տարւել երբէք, բայց չենք էլ կարող թոյլ տալ, որ խուժանային բարբարոսութիւնները յաւիտենականանան մեր երկրում, շնորհիւ կառավարութիւնների երկչոտ, թուլամորթ, յաճախ երկդիմի քաղաքականութեան։ Պէտք է ապրեցնել այդ դժբախտ, արիւնաքամ ժողովուրդը, որ լաւագոյն շաղախն է մերձաւոր Ասիայի հօրիզոններում նոր կեանքի ու ռէժիմի համար և որին բոլոր սանդարամետեան ուժերը ձգտում են միանգամ ընդմիշտ յօշոտել, բնաջինջ անել...

Հաւաքական, կազմակերպուած, ներդաշնակ ճի՛գ... Կազմակերպութիւնը հրապարակի վրայ է և վաղուց նա կոչ է անում բոլոր գործօն, ժողովրդասէր կամքերին։

Ինքնապաշտպանութեան խնդրի մէջ՝ նա, անշուշտ, հետևելու է իր վերջին (հինգերորդ) համագումարի որոշումին, որ տալիս է այդ պատասխանատու գործը՝ ժողովրդի ձեռքը։ Այդպէս—Կովկա-

սում և Թիւրքահայաստանում։ Բայց դա ասել չէ, թէ նա լքում է իր պարտաւորութիւնները՝ ժողովրդական գոյութեան ամենաայրող խնդրի հանդէպ։ Կազմակերպութիւնը—ինչպէս յայտնում է նոյն V Համագումարի որոշումը — „վտանգի ատեն հրապարակ կը գայ իր ամբողջ ուժով“... Աւա՛ղ, մօտիկ անցեալի տխուր փորձերը բաւականաչափ ապացուցանում են, որ ժողովուրդ-սփինքսը չի ցոյց տալիս առհասարակ նախաձեռնութիւն ու կորով „գոյութեան խնդրի“ արհաւրալի տագնապներում։ Վտանգի օրերին՝ անփոյթ ու անշարժ, զուլումի օրերին՝ թոյլ, անվճռական... Յաճախ ջլատուած իր ներսում, թայֆայական կռիւներով, յաճախ տարուած լոկ անհատական ու տեղական մտահոգութիւններով։ Այդպէս են ցոյց տալիս նոյնիսկ կովկասեան փորձերը և մեր ռազմական առաջնորդների վկայութեանց մէջ ցոլում է այդ դառն շեշտը մեր զանգուածների հեղգ անտարբերութեան մասին։ Հարկաւոր է եղել միշտ կուսակցութեան նախաձեռնութիւնը, նրա գործօն միջամտութիւնը, երբեմն նոյնիսկ նրա մտրակը՝ այդ հոյլ, չինական անշարժութիւնը ցնցելու համար։ Բայց մի անգամ ցնցւելով ու ու դէպի գործ մղւելով կազմակերպութեան դրօշակի ներքոյ—այդ զանգւածները Անդրկովկասում կորովի ու քաջութեան սքանչելի փաստեր են տւել և անպարտելի պատնէշ են կանգնել արիւնածարաւ խուժանների դէմ...

Կազմակերպութիւնը,—որքան էլ լինի ժողովրդական ծնունդ, որքան էլ ուժեղ, տարածուած—նա ժողովուրդ չէ։ „Վտանգի ատեն նա հրապարակ կը գայ իր ամբողջ ուժով“ — յայտարարում է Դաշնակցութեան V Համագումարը... Բայց այդ հանդիսաւոր յայտարարութիւնը թող չ՚ամրացնէ մեր զանգւածներին — թէ Թիւրքիայում, թէ Ռուսաստանում ու Պարսկաստա-

նում—անհոգութեան ու կրաւորականութեան իրենց գօգմի մէջ. Թող չը չլատէ հանգստացուցիչ օրօրներով նրանց ուրոյն ձեռներէցութեան ու կորովի թափերը։ Ժողովուրդը—հազարաւոր անգամ կրկնուած խօսք է—ինքը պիտի հոգայ իր գոյութեան առաջին հոգսը, պիտի պատրաստուի, զինուի ու մարզուի, սեղմէ իր շարքերը։ Այդտեղ է միակ գրաւականը՝ միշտ հնարաւոր և ահաւոր պատահականութիւնների հանդէպ։

Հեռու միանգամայն անջատողական ցնորքներից, հեռու նաև վրէժխնդրութեան ու ատելութեան ստորացուցիչ բռնկումներից—մեր պարտքն է, իւրաքանչիւր հայ մարդու պարտքն է՝ արծարծել այս տարրական ու խօսուն ճշմարտութիւնները հայկական միշտ մթագնած, չարագուշակ հօրիզոններում, ցնցել խօսքով ու գրչով աւանդական ու դաւաճան անշարժութիւնը և հնչեցնել անդադրում ու ամենուրեք ինքնապաշտանութեան ղօղանջը, տիեզերական փրկարար բնազդը, որ յատուկ է թէ անասուններին և թէ ասուններին։ Ինքնօգնութեան դրօշակի շուրջը պիտի միանան բոլոր տարրերը, քաղաքական ու հասարակական դաւանանքները։ Հայ ազգը կամ պէտք է ապրի պատուաւոր ու բանաւոր գոյութեամբ, կամ թէ բնաւ չը պէտք է ապրի։ Հայ ժողովուրդը կամ պիտի դառնայ մարտական մի համայնք, կարող ինքզինքը պաշտպանելու, կամ թէ իսպառ պիտի չքանայ երկրի երեսից...

III

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԴԱՒԱՆԱՆՔԸ

Շովինիզմի վէրքը. — Նրա արտայայտութիւնները Կիլիկիայում. — Հոգեբանական պատճառներ.—Հայ ազգասիրութեան աւետարանը. — Ազգասէրի տիպը Պօլսում ու Կովկասում. — Մտաւոր չքաւորութեան հետ սանձարձակ գոռոզութիւն.—Արքայակուլտը մեր մէջ.—Սեփական ուժերի գերգնահատում. — Ճշմարիտ հայրենասիրութեան դաւանանքը. — Ի՞նչ է „հայրենիքը“. — Դաշնակցական հայրենասիրութիւնը. — Երեք հատուածների միութիւն. — Վախճանական իդէալը. — Ջինգօներ եւ Մօնտեսկիօն.—„Հաւաքական“ հայրենիքները — Թիւրքիա, Ռուսաստան, Պարսկաստան.—Մեր դիրքը նրանց վերաբերմամբ.—Միութեան եւ խաղաղ առաջադիմութեան ջահակիր. —

Le patriotisme de l'orgueil
est le faux patriotisme.
A. de Gasparin

Ադանան մերկացրեց մի ուրիշ շարաւոտ վէրք եւս մեր հայկական օրգանիզմի վրայ։ Դա շօվինիզմի վէրքն է։ Որոշ դեր, աւա՜ղ, նա եւս խաղացել է այդ բարդ ու դաժան ողբերգութեան մէջ,—եթէ ոչ պատճառների, գէթ պարագաների շարքում։ Հարկ է, ուրեմն, ուշադրութեան առնել նաեւ այդ արատը, եւ առաւել, որ նա սոսկ տեղական բնոյթ ունեցող մի երեւոյթ չէ, այլ ընդհանուր, համահայկական։

Այո՛։ Ֆանատիկոսութեան ժայթքումը մէկ հարուած եղաւ, հակահոյ ամբաստանութիւնները—մի այլ հարուած՝ ոչ նուազ ահաւոր ու շշմեցուցիչ։ Երկրորդ հարուածի ազդեցութիւնը շուտ չքացաւ։ Համոզուեցին ամէնքն էլ, որ հայերին մեղադրել հայակործան դաւերի մէջ՝ առնուազն անհնարին է։

Ադիլ բէյի պէս տխրահռչակ բիւրոկրատներն էին, որ հրապարակ նետեցին այդ անմաքուր ամբաստանութիւնը. միւս կողմից էլ՝ արեւմտեան բուրժուազիայի անարգ, ծախու օրգանները։

Ամենից կսկծալին, հարկաւ, այդ մամուլի բռնած դիրքն էր—թէկուզ և ծախու մամուլի։ Հասարակական կարծիքը հաւատում էր։ Նա հաւատում էր „Բերլիներ Տագեբլատի“ պէս թերթերի խղճավաճառ թղթակիցներին, որոնք արիւնաներկ ու յօշոտուած Կիլիկիայի հանդէպ ապշեցուցիչ ցինիկութեամբ յօրինում էին իրենց անլուր մեղադրանքները հայութեան դէմ, հայ երիտասարդութեան ու „անկախ Հայաստանի“ երևակայական ձգտումների դէմ։

Հասարակական կարծիքը հաւատում էր և միանգամայն չ՚արդարացնելով հանդերձ կատարուած գազանութիւնները, փաստաբանում էր „մեղմացուցիչ հանգամանքներ“... ջարդարար պաշտօնէութեան, զօրքի ու խուժանի նկատմամբ։

Նոր թղթակիցներ եկան, սակայն, նոր օրգաններ խօսեցին—շիտակ, անկաշառ մամուլի օրգանները։ Եւ հանրային կարծիքի մէջ սկսուեց բարերար, նպաստաւոր շրջումն։ Էլ ոչ մի խօսք հայ տարրի „անջատական“ տենչերի մասին։ Իրողութիւնները լուսաբանեցին իրենց հարազատ լոյսի տակ։ Ողբերգութեան պարագաներն ու հերոսները պատկերացան իրենց հարազատ գոյներով։ Ընդհանուր ու կենտրոնական միտքը, որ շեշտուեց բոլոր

այդ շիտակ օրգաններում—միևնոյնն է. աւանդական հակամարտութիւն (կուլտուրական, տնտեսական և այլն) մահմեդականի ու քրիստոնիայի, մասնաւորապէս հայի միջև. աւանդական համոզումն առաջինի մէջ՝ որ բոլոր „րէֆօրմների“, յեղափոխութիւնների, բոլոր „եւրոպական“ նորմուծութիւնների բուն դրդիչը, հոգին—հ ա յ ն է... Այդտեղից և—րէակցիայի ժողեգնութիւն ու հակահայկական պօգրօմներ... Դա՝ մի էական պատճառը, ի շարս այլ պատճառների:

Պարզւեց այդպիսով բոլորի համար, որ Կիլիկեան եղեռնը—եթէ անգամ նա չի ունեցել իբրև ղեկավար՝ գահավիժւող դեսպօտի ձեռքը—իրօք „վանդէական“ մի թռիչք էր, հակայեղափոխական մի ժայթքում:

Եւ սակայն, մի բան մնում էր եւրօպական լաւ մամուլի մեկնութիւնների մէջ, մի բան, որ խորապէս վշտացնում է մեզ... Մեղադրանքի մի զօրեղ շեշտ, յանդիմանութեան ու բարեկամական յորդորների մի տարափ—Կիլիկիոյ հայ գործօղ երիտասարդութեան դէմ:

Չէին մեղադրում հայ երիտասարդութիւնը „անկախութեան“ ու պրօվօկատօրական ձգտումների համար, չէին ասում, թէ նա եղել է դրդիչ, պ ա տ ճ ա ռ, կամ թէ մէկը պատճառներից զարհուրելի ողբերգութեան: Ոչ. „Բերլիներ Տագեբլատի“ և Ադիլ բէյերի ինսինուացիան իսպառ ջրւեց, նոյնիսկ Ք ն ն ի չ Ց ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի անագան մերկացումներով ու կառավարութեան պաշտօնական յայտարարութեամբ:

Մեղադրում էին հայ երիտասարդութիւնը անգիտակից, անմտած ժեստերի համար, վայրիվերոյ յափշտակութիւնների, ցոյցերի, bravade-ների համար:

„Հայերը պ ա տ ճ ա ռ չեն եղել.—դա դուրս է տարակուսանքից. բայց հայ երիտասարդութիւնը փոքր ինչ աւելի հեռու է գնացել իր սահմանադրական համա-

կրանքների ցուցադրութեան մէջ, փոքր ինչ անզուսպ թափ է հաղորդել իր ազատապաշտ խանդավառութեան... Թատրոնական աղմկայոյզ ներկայացումներ, թագաւորների, հին փառքերի ջատագովումներ, ազգային դրօշակների ու այլ էմբլեմների թափահարում, շօվինիստական մի կատարեալ արբեցութիւն... Այդ հանգամանքը աւելի ևս զարկ է տուել մահմեդական տգէտ ամբոխի հայատեաց ու յետադէմ տրամադրութեան, նրա դարաւոր համոզումին՝ որ հայը իր ոսոխն է, որ սահմանադրական շարժումներն էլ նրա սադրանքն են, որ նա ձգտում է անկախութեան, տիրապետութեան, որ այդ տիրապետութեան հետևանքը պիտի լինի մահմեդականների ստրկացումը“ և այլն և այլն։

Այս և նման պատճառաբանութիւններ մենք հանդիպում էինք արևմտեան մամուլի օրգաններում, լսում էինք և աղէտներին ականատես հայասէր եւրոպացիներից, հրապարակական ատենախօսութիւնների միջոցին։

Երբ կարդում էինք եւրոպական վատ մամուլի վկայութիւնները, ստացուած նոյնիսկ կատաստրօֆի թատերավայրից, տեղիք ունէինք չը հաւատալու և արհամարհելու հայատեաց վիժմունքների ամբաստանութիւնները։ Բայց հետզհետէ ուրիշ, աւելի արժանահաւատ աղբիւրներից՝ մենք լսեցինք մի քանիսը նոյն վշտառիթ մեղադրանքներից։ Երբ միմիայն „Բերլիներ Տագեբլատ“-ն էր հրապարակի վրայ, կարելի էր իսպառ զանց առնել, բայց նոյն կերպ չէր կարելի վերաբերուել, օրինակ, „Ֆրանկֆուրտեր Ցայտունգին“, որի իւրաքանչիւր հաղորդագրութիւնը պատկառանքով է կարդացւում ամբողջ լուսաւոր աշխարհում և որ 30 տարուց ի վեր եղել է հայոց հարցի ամենաջերմ ու ամենահեղինակաւոր պաշտպաններից մինը։ Մեր առջևն է այդ մեծ օրգանի մէջ հրատարակուած ընդարձակ ուսումնասիրու-

թիւնը „Die Schreckenstage von Adana“, „Սարսափի օրերը Ադանայում“ խորագրով։ Ուշադիր հետազօտողի մանրակրկիտ մի վերլուծում. դրա հետ՝ անկեղծ ու կարեկցող սրտի բուռն ցասումներ և բողոքի հզօր շեշտեր—դահիճների դէմ։

Բայց այդ բոլորի հետ միասին՝ մի շարք դառն, կծու ակնարկներ ու մեղադրանքներ—հայերի հասցէին։ Այդ բոլորի հետ միասին կարդում էք՝

„Հայերը անզգուշութիւններ գործեցին, որոնք կարող էին գրգռել մահմեդականներին“...

Եւ դարձեալ յիշատակւում են „կլուբային“ գործունէութեան մանրամասները, պատմական ողբերգութիւնների դէմօնստրատիվ ներկայացումները, անմիտ ու տղայական „կեցցէ՛ Հայաստան“-ները...

„Բնականաբար, ասում է „Ֆրանկֆուրտեր Ցայտունգ“, ազգային շօվինիզմի այդ վերազարթնումը, շուտով յայտնի եղաւ իշխանութիւններին, և մինչդեռ հայերը զբաղւած էին իրենց մեծամիտ ու սնապարծ ցոյցերով, մինչդեռ նրանք ազատ ասպարէզ էին տալիս իրենց լեզուներին ու զգացումներին – թիւրք լրտեսները մութի մէջ դիտում էին նրանց շարժումները“...

Եւ գերման. օրգանը, մատնելով հանդերձ բուն պատճառները, խարանելով հանդերձ իսկական դահիճներին, ցաւ է յայտնում հայոց սանձարձակ ցոյցերի առթիւ, որոնք, անշուշտ, պ ա տ ր ւ ա կ են եղել այդ դահիճների ձեռքում։

Վրիպումներ, չափազանցութիւններ կան նաև այդ շիտակ մամուլի առաջադրած փաստերի ու մեկնութիւնների մէջ։ Բայց կայ և ճշմարտութեան բաժինը, որ հաստատւում է նոյնիսկ հարազատ աղբիւրներից։

Դա մի ծանր ու ցաւեցնող մեղադրանք է, որի վրայ պէտք է անդրադառնալ լրջօրէն ու պաղարիւնութեամբ,

առանց ոստոստելու, բայց և առանց մեծամտօրէն արհամարելու։ Այդտեղ թագնուած է հայ երիտասարդութեան մի յայտնի մասի բնորոշ ու վտանգաւոր գծերից մինը։ Ինքնախարազանումը անպատեհ չէ նոյնիսկ ներկայ օրերի մէջ, կատարուած սոսկումներից յետոյ և կատարուելիք, նոր հնարաւոր պատահականութեանց հանդէպ։ Եթէ մեր ժողովուրդը, ամբողջ թիւրքահայ ժողովուրդը, իր զանգուածային ընդհանրութեան մէջ խորապէս պախարակելի է՝ ինքնապաշտպանութեան պահանջների հանդէպ բռնած իր պաղ, անտարբեր դիրքով, ապա մեր գործօն երիտասարդութիւնը ևս, լինելով հանդերձ այդ ժողովրդի աղն ու հոգին, նրան հրահրող ու ղեկավարող մեծ ազդակը, տոգորուած լինելով գործելու անզուսպ ծարաւով, թերևս պակաս չի մեղանչում իր մի քանի ծայրայեղութիւններով, որոնք արդիւնք են յեղափոխական ու քաղաքացիական պակասաւոր դաստիարակութեան։

Տարակոյս չը կայ, որ թիւրքահայ երիտասարդութեան մէջ, երկար ժամանակից ի վեր մշակուել է շօվինիզմի, նեղ, տարամերժ ազգայնամոլութեան թունաւոր ծաղիկը։ Կարելի է բացատրել երևոյթը, կարելի է նոյնիսկ որոշ չափով արդարացնել... Աշխարհիս ո՞ր ազգն է այնքան ոտնահարուել, ո՞ր ժողովուրդն է այնքան ցինիկօրէն յօշոտուել ու անարգուել, ինչպէս հայութիւնը։ Արդ. տիեզերական ընդհանուր օրէնք է. որքան ուժեղ է գործողութիւնը (action), այնքան ուժեղ է և հակազդեցութիւնը (réaction)։ Եւ զարմանալի չէ, որ հայ երիտասարդութեան մի յայտնի մասը հակազդում է փոքր ինչ ծայրայեղ, հիւանդոտ ձևով այդ դարաւոր հալածականութեան դէմ. զարմանալի չէ, որ 600 տարուայ ազգային խաւար ու ոճրալի գիշերից յետոյ յանկարծակի լոյս աշխարհ

գալով, հայ ժողովուրդը, ի դէմս իր երիտասարդ տարրերի, արտադրում է տեղ-տեղ յախուռն շարժումներ, որ հայ երիտասարդութիւնը, յանձին իր խակ ու տաքարիւն ռահվիրաների, փարում է ըմբոստ ազգայնամոլութեան դրօշակին, նետւում է մոլեգնոտ ցոյցերի մէջ, զառանցում է „անցեալի“ մասին և դուրս է կոչում մոռացութեան անդունդներից — անգիտակցաբար, առանց յետին մտքերի — „հին փառքերի“ ուրուականները...

Այդ „փառքերը“ գուցէ աւելի թարմ ու խօսուն են Կիլիկիայում, պատմական որոշ յիշատակներ գուցէ աւելի վառ են այնտեղ — և դրա հետ կայ նաև այն հանգամանքը՝ որ Կիլիկիայի հայութիւնը ապրել է համեմատաբար աւելի ազատ, ապահով, նուազ ճնշուած ու ստրկացուած... Ուստի և այնտեղ աւելի է պահպանել ազգային արժանապատւութեան մակերևոյթը, որ, դըժբախտաբար, չափից դուրս յորդացել ու բարձրացել է յայտնի վայրկեանում, հեղեղել գիտակցութիւնները և արտադրել շօվինիստական գինովութեան թունոտ պտուղներ...

Հոգեբանօրէն միանգամայն հասկանալի՝ „ազգասիրութեան“ այդ յոռի արտայայտութիւնները, սակայն, տակտի ու ազգամիջեան համերաշխութեան տեսակէտից, միանգամայն վնասակար են ու դատապարտելի։

Կան և անուղղայ ամբարտաւաններ, — քիչ չեն նրանք — որ սիրում են պարծենալ ազգային „առաջնութեան“ ու „բարձրութեան“ պատրանքներով և հրապարակօրէն ու դէմօնստրատիվ ցուցադրում են իրենց արհամարհոտ գերազանցութիւնը հանդէպ „ստորին, վայրենաբարոյ ցեղերի“...

Դա շօվինիզմի տրամաբանական արգասիքն է, որ

թունաւորում է բոլոր—անգամ առաջադէմ—երկըրների մթնոլորտը։

Դա հայրենասիրութիւն չէ, այլ նրա կեղծումը, խեղաթիւրումը։ Դա գոռոզ, մեծամիտ հայրենամոլութիւնն է—le patriotisme de l'orgueil —*որ չունի ոչինչ առնչութիւն ճշմարիտ հայրենասիրութեան հետ։ Նրա մի ուրիշ որակումն է — ն ա ց ի օ ն ա լ ի զ մ, ազգայնամոլութիւն։*

Նացիօնալիզմը հարւածում, ստորացնում է մարդկային արժանապատւութիւնը, ծնում է սովորաբար ատելութիւն ու արհամարհանք դէպի միւս ազգերը։ Ն ա ց ի օ ն ա լ ի ս տ ը սիրում է իր ազգը, ուրիշ ազգերին ատելու պայմանով։ Ուժեղ պետութիւնների մէջ այդ ատելութիւնը յանգում է տրամաբանօրէն հալածանքի՝ ընդդէմ աւելի փոքրիկ, թոյլ, հպատակ ազգութիւնների։ Բայց նա վնասակար, ստորացուցիչ ու այլասերող ներգործութիւն ունի և թոյլ ազգերի մէջ։ Եւրոպայում „նացիօնալիստ“ անւանում են այն տարրերը, որոնք ձգտում են առաջնութեան, հեգեմօնիայի, ձգտում են տիրել, ստրկացնել. այդպէս են անգլիական ջ ի ն գ օ ն ե ր ը, գերմանական ի ւ ն կ ե ր ն ե ր ը (աւատապետ), ֆրանսիական Դրիւմօններն ու Բարրեսները։ Դրանք եւրոպական քաղաքակրթութեան մակերևոյթի քափն են, նրա աւելորդ փրփուրը, որ միշտ աւելի և աւելի ցանցառանում է ամենուրեք ռ ա մ կ ա վ ա ր ա կ ա ն հ ո ս ա ն ք ի յարաճուն ճնշման տակ։

„Ջինգօն“ *) *արդէն հրապարակ է նետել մի լօ-*

---

*) Այդ անունով կոչւում է Անգլիայի մէջ՝ համաբրիտանական ծաւալումի *(panbritanisme)* տենչով բռնւած, արկածասէր այն դասակարգը, որ ստրկացրեց Տրանսվալեան հանրապետութիւնը, որ կուզէ մշտնջենական ստրկութեան մէջ պահել նաև Իռլանդիան, Հնդկաստանը ու բոլոր գաղութները։

զունդ, մի դարձուած, որ միանգամայն բնորոշ է այդ մարդատեաց հոսանքի համար.

„My country, right or wrong“!

„Իմ երկիրը—իրաւացի, թէ անիրաւ“։ Ասել է՝ „ես պիտի պաշտպանեմ իմ հայրենիքը, եթէ անգամ նա ոճիր էլ գործէ ուրիշ հայրենիքների վերաբերմամբ“։

Այդ Փրազը դարձել է նշանաբան բոլոր երկրների շ օ վ է ն ե ր ի համար...

Ոչ մի երկիր զերծ չի մնում նացիոնալիզմի ու շօվինիզմի համաճարակից։ Վաղուց չէ, որ ֆրանսիացիք յորջորջում էին գերմանացիներին՝ „հիւսիսի բարբարոսներ“ մակդիրով։ Այն ազգին՝ որ տուել է կանտեր ու Բեթօվեններ, որ ծաղկեցրել է փիլիսոփայական և կրթական հզօրագոյն դիսցիպլինները... Դրացիական այդ „մեղմաբանութիւնը“ և՛ թէ հին է և թէ տարածուած։ Յոյները՝ անուանում էին հռոմայեցիներին՝ բ ա ր բ ա ր ո ս ն ե ր։ „Բարբարոս“ էին անուանում և հռոմայեցիները այն ամենը, ինչ որ դուրս էր իրենց աշխարհից։ Ճիշտ նոյն եղանակով „բարբարոս“ են անուանում այսօրուայ չինացիները եւրոպացիներին... Մանդարինների քարացած, փտած քաղաքակրթութիւնը, օրօրւում է միշտ իր „գերազանցութեան“ պատրանքների մէջ՝ հանդէպ ամբողջ արտաքին աշխարհի, թէկուզ և այդ աշխարհը արել է արդէն վիթխարի թռիչքներ, իսկ ինքը մնացել է ճահիճ։ Այդպէս չէ՞ արդեօք շատ „հաւատացեալների“ ու նոյնիսկ „երիտասարդների“ հոգեբանութիւնը՝ Թիւրքիոյ ու Պարսկաստանի իշխող ցեղերի մէջ... Ի՞նչ արհամարհոտ վերաբերում՝ դէպի „ռայան“ ու գիավուրը։ Նոյնը Ռուսաստանում, ուր „իսկական ռուսները“ համարում են „ռուսութիւնը“, բարձրագոյն, աստուածընտիր ազգ, նոյնը բիսմարկեան Գեր-

մանիայում, ուր խրոխտ ու ամբարտաւան հնչում է միշտ շօվինիզմի անախորժ յանկերգը՝

„Deutschland über Alles, über Alles in der Welt"!
„Գերմանիան՝ ամենից վեր, ամենից բարձր աշխարհի մէջ"...

Ամե՛ն տեղ... Մեզ մօտ էլ: Մեր իրականութեան մէջ՝ իշխելու, ուրիշներին ստրկացնելու յաւակնութիւնը տեղ չի կարող գտնել, հարկաւ. բայց մեզ մօտ էլ շօվինիստական հիւանդութիւնը արտայայտւում է յաճախ ազգայնական ունայնամիտ ինքնահաւանութեան մէջ: Մենք էլ սիրում ենք յաճախ մկրտել մեր դրացիներին ածականներով, որոնք չեն փայլում իրենց համեստութեամբ: Մեզ մօտ էլ կայ ճչան, աղմկասէր նացիօնալիզմը, որին հայ լեզուն տուել է յատուկ, զուտ հայկական մի անուն—ա զ գ ա ս ի ր ո ւ թ ի ւ ն: Զուր չէ, որ այդ բառը—ինքնին թարգման մի լաւ, դրական գաղափարի—մատնւել է վաղուց հեգնութեան ու արհամարհանքի: Պատճառը հէնց բ՛ա ռ ի ա ն հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ո ւ թ ի ւ ն ն է՝ գաղափարին: Սիրել, պաշտպանել հարազատ ազգայնութիւնը, մայրենի լեզուն, հայրենի ստացւածքները, կուլտուրական ժառանգութիւնը եայլն—դա ժամանակակից ամեն մի կրթւած անհատի յատկանիշն է՝ առանց խտրութեան դասակարգի ու դաւանանքի: Բայց մեր հայկական ծանօթ ազգասիրութիւնը այդ սիրոյ վրայ չէ, որ հիմնում է իր աւետարանը: Որքա՛ն յաճախ տեսնում ենք ազգասէրներ, որոնք հեռաւոր առնչութիւն անգամ չունին բուն ազգային առաջադիմութեան, բուն ժողովրդական բարգաւաճման խնդիրների հետ: Հայ „ազգասէրի" տիպը ճանաչում է ազգութիւնը միմիայն որոշ շրջանակներում, էֆէնտիական, բուրժուական, կղերական յատուկ աշխարհում. ազգը հէնց իրենք են—էֆէնտին, բուրժուան, կղերը: Եւ ոչ ոք գուցէ այնքան չի ճչում—

Թիւրքիայում, թէ Անդրկովկասում—ոչ որ այնքան չի չի աղմկում մթնոլորտը ազգասիրութեան ու հայրենասիրութեան ֆրազներով, ինչպէս այդ տարրերը և նրանց սպասաւոր quasi-մտաւորականները՝ թէ մամուլի մէջ և թէ ազգային այլ հաստատութիւններին։ Ժողովրդի սէրը չէ, որ ղեկավարում է նրանց, այլ միայն որոշ դասակարգի կամ դասակարգերի։ Ազգային առողջ պրօգրէսի, առաջխաղացութեան մտահոգութիւնը չէ, որ խօսում է նրանց բերանով... Ազգը, հայրենիքը նրանց համար լոկ հողմարգելներ են, դիմակներ։

Հայ „ազգասիրութիւնը“ ընդհանրապէս շօվէն ու բուրժուազական մի հոսանք է։ Նա ծայրայեղօրէն գոռոզ է, գրգռիչ, պ ր օ վ օ կ ա ն։ Մենք այն տեսանք մօտիկ անցեալում, տեսնում ենք ամեն օր։ Այդ գոռոզութիւնը դառնում է յաճախ սանձարձակ ու ծիծաղաշարժ։ Ականջ դրէք այն պօլսեցի հրապարակախօսին, որ գնում է նոյն տախտակի վրայ հ ա յ ու ֆ ր ա ն ս ի ա ց ի հանճարներին։ Լսեցէ՛ք այս միւս պօլսական թղթակցին, որ մի առանձին հաճոյքով ծաւալում է իր գոռոզ ու անհաշտ թ ի ւ ր ք ա տ ե ա ց ո ւ թ ի ւ ն ը Թիֆլիսեան հայ ազգասէրների օրգանում—մի թերթի, որ վերջին տարիներս փայլեց ամենավատ տեսակի շահատակութիւններով... „Թիւրքը ուժ ու խելք չունի“... „Թիւրքը բաշիբօզուկ ցեղ է“... „Ուր թիւրքը կ'իշխէ, հոն շուտով կը հասնի աւեր ու կործանում“—և նման թեթևամիտ ու ծայրայեղօրէն անտակտ ֆրազներ... Նոյն տխմար ու գրգռիչ թիւրքատեացութեան շունչով են վարակւած այդ թերթի ուրիշ—պօլսական, եգիպտական և այլն—թղթակցութիւնները ևս *)։ Տեսէք

*) Հայկական „ազգասիրութիւնը“, որ ընդունակ է իջնելու մինչև մատնութեան աստիճանը՝ հարազատ ա զ գ ա յ ի ն ա ր ժ է ք ն ե ր ի դէմ մղած կռւի մէջ, պատրաստ է նոյն մոլեգին եռանդով ոտնահարել

այդ ծայրայեղ ա ն հ ա շ տ ո ւ թ ե ա ն (*intransigeance*) *բռնկումները — ներսում թէ դրսում — լսեցէք խրոխտանքների այդ տարափը և այդ արհամարոտ ժեստերը դրացիների հասցէին. . . Պօլսի հրապարակագրութեան մի մասը իր փքուն, ճոռոմ, ուռուցիկ տոնով յաճախ է տալիս այդպիսի մանկական մտայնութեան ապացոյցներ: Ամբողջ սերունդներ են այդպէս մշակուել — չենք զարմանում: Անսահման խեղճութեան մէջ՝ անսահման ամբարտաւանութիւն: Մտաւոր կատարեալ բոբիկութեան հետ՝ սանձարձակ յաւակնոտութիւն ու*

ու վարկաբեկել դրացի ազգութիւնները: Այդ տխուր հաւատամքի արտայայտիչ էին երբեմն չարախօս Ն է յ մ ա ն ն ե ր ը, ի տես եւ ընդդէմ Արծրունու ու ամբողջ հայ առաջադէմ լիբերալիզմի, իսկ այսօր — 1906-ի օրերից ի վեր—նոյն հաւատամքի քարոզիչներն են հայ այլասերուած լիբերալիզմի փոքրիկ, մտաղքատ չամպիօնները՝ ի տես եւ ընդդէմ Հ. Յ. Դաշնակցութեան: Նոյն մեթօդները, ինսինուացիայի ու դօնօսի նոյն տեղը. . . Պատմութիւնը կրկնւում է զարմանալի նմանութեամբ եւ միայն բթացած խիղճն ու միտքն են, որ չեն նշմարում հայկական պատմութեան այդ ռ է ց ի դ ի վ ը...

Ժամանակը, յուսանք, կը մերկացնէ եւ անարգանքի սիւնին կը գամէ բոլոր մութ ու չարագործ դէմքերը... Այսօր արդէն, գաղտնիք չէ—գէթ մեզ համար—որ մեր նախկին պահպանողական, „Հայաստանեայց-եկեղեցական“ հոսանքի պարագլուխները՝ հայ առաջադիմական կուսակցութեան դէմ վարած իրենց անարժան պատերազմի մէջ, աստիճանաբար սայթաքելով, գահավիժելով, իջել են մինչեւ Պետերբուրգի Օ խ ր ա ն ա յ ի դահլիճներն այցելելու եւ „ըստ ծառայութեան“ վարձատրուելու աստիճան: Ուրիշները—սրանք արդէն հայկական „լիբերալիզմի“ բանակից—ըստ երեւոյթին գերադասում են դօնօսի, մատնութեան բացարձակ, հրապարակային ձեւը, ընդդէմ իրենց աւելի առաջադէմ ու ատելի հակառակորդի... Եւ մենք ուրախ կը լինէինք— հայ ժողովրդի ու ինտելիգենցիայի բարի, ազնիւ անուան համար, որ, աւա՜ղ, բաւական արդէն արատաւորուեց գրչի անարժան սպասաւորների ձեռքով,—մենք ուրախ կը լինէինք, որ բ ո լ ո ր այդ քստմնելի, հակահասարակական հերոսները իրենց տխուր կարիէրի մէջ գէթ սահմանափակուած լինէին մեզ ծանօթ արարքներով:

գոռոզութիւն։ Չափաւորող, թարմացնող հոսանքը Արևմուտքից պիտի գար, Եւրոպայից։ Բայց տեսէք թէ ինչ ծաղիկներ է մատակարարում Եւրոպան թիւրքահայ հրապարակախօսութեանը, մտաւոր կեանքին։ Ահա մարդիկ, որոնք տասնեակ տարիների իրենց արևմտեան թափառումների մէջ ոչինչ չեն սովորել բուն ռամկավարութեան հոսանքներից, որդեգրել են միայն Նոյն Դրիւմոնների ու Միլլվուաների հոգեբանութիւնն ու գաղափարաբանութիւնը, մշակել են միայն—և այն չափազանց մակերեսօրէն—ազգասիրական հաւատամքը և այսօր այդպիսի խղճուկ բագաժով, այդքան չքաւոր մտայնութեամբ՝ յաւակնում են ղեկավարել հայկական կեանքը, թիւրքահայ ժողովրդի ճակատագիրը...

Դրանց հաւատարիմ սաներն էին Կիլիկիոյ *énergumène*-ները, պատանի և չափահաս, աշխարհիկ և հոգևորական, տիրացու և եպիսկոպոս։ Ազատութեան համ առնելով՝ նրանք սկսեցին թմբկահարել ու շեփորել աջ ու ձախ իրենց գրգռիչ, մանկական „հայրենասիրութիւնը“։ Հայկն ու Արամը, Տիգրանն ու Տրդատը շռինդով հրապարակ նետուեցին և մերթ ընդ մերթ ճռճաց նոյնիսկ դօնքիշօտական յարդաձողը՝ „խաւար ու վայրենի“ դրացու դէմ...

Ցուցեր՝ ոչ միայն հին „փառքերի“, այլ և արքաների... Ի՞նչ փոյթ, թէ նրանք եղել են մի մի հոյակապ ոչնչութիւններ,—ինչպէս աշխարհի բոլոր բռնակալները—մի մի դահիճներ իրենց հարազատ ժողովրդի համար, սկսած „Մեծն“ Տիգրանից մինչև փոքրն Լևոն։ Տիրացուական ազգասիրութիւնը պատրաստ է մինչև երկինք փառաբանել նրանց, պատրաստ է արծարծել վաղուց արդէն ամբողջ ռամկավար մարդկութեան մէջ մեռած, ջնջուած՝ արքայի կուլտը, պաշտամունքը...

Այդպէս է մեր հիւանդոտ հոգեբանութեան նմուշ-
ներից, մեր հնագոյն վէրքերից մինը։ կովկասը ևս
զերծ չէ նրանից։ Հայ երիտասարդութեան մի չնչին
մասն է վարակուած այդ ամբարիշտ ու ցուցամոլ շօվի-
նիզմով, բայց դա էլ արդէն մտատանջող է։ Իր ծաւա-
լով ու արժէքով փոքրիկ այդ իրողութիւնը աղբիւր է
դառնում վտանգաւոր գաղտասուքների, մեղադրանք-
ների։ Չը նայեած հայ ժողովրդի ու մտաւորականու-
թեան շիտակ ընթացքին, չը նայեած ընդհանուր բա-
ցակայութեան յարձակողական տենչանքների, „անկախ
Հայաստանի“ ու նման սին երազանքների—մենք մերթ
ընդ մերթ թողնում ենք արտասահմանի և գուցէ նաև
մեր անմիջական շրջապատի վրայ անհեթեթ տպաւո-
րութիւնը՝ թէ իբր հայկական հայրենասիրութիւնը
անվերածելիօրէն ըմբոստ է, թէ իբր նա անհաշտօրէն
յարձակողական է և անջատական... ուղղուած կայսրու-
թեան ամբողջութեան դէմ։

Ժամանակ է խզելու այդ ճչան ու րէկլամամոլ ազ-
գասիրութեան հետ, այդ „կռւական“, աքլորային տրա-
մադրութեան հետ (*disposition guerroyante*), որ ար-
դիւնք է ս ե փ ա կ ա ն ո ւ ժ ե ր ի գ ե ր գ ն ա հ ա տ-
մ ա ն, չ ա փ ա զ ա ն ց մ ա ն։ Պէտք է հրաժարուել
միանգամ ընդմիշտ շօվինիզմի այդ վտանգաւոր արտա-
յայտութիւններից, որոնք վայրկեաններով կարող են
դառնալ ուղղակի ճակատագրական՝ մի միջավայրում, ուր
այնքան առատութեամբ ամբարուած է թոյն, քէն, կաս-
կած ու ատելութիւն... ընդմիշտ թաղելու է և հին
„փառքերի“ էմբլեմները, որոնք ժամանակակից գնա-
հատութեան չափերի տեսակէտից՝ թէական են և ար-
գահատելի։

Այդ անհրապոյր ու վնասակար պատրանքների տեղ՝
պէտք է իշխէ հայ բովանդակ երիտասարդութեան մէջ

առողջ ազգային ինքնասիրութիւնը, որ ոչինչ չունի իր մէջ գրգռիչ ու յարձակողական, որ ուզում է շեշտուել—ինչպէս ամէն մի ուրիշ ազգային ինքնասիրութիւն—ուզում է ինքզինքը պաշտպանել և ապահովել, միանգամայն յարգելով հանդերձ դրացի ազգերի իրաւունքներն ու զգացումները։

Չը պէտք է չափազանցնել մեր „ազգային“ բարձրութիւնն ու գերազանցութիւնը։ Համեստ լինելու մենք և շատ պատճառներ ունինք։ Այդ „բարձրութիւնը“ յարաբերական է և այն էլ միայն... մեր միջավայրի համեմատութեամբ։ Այդ միջավայրից փոքր ինչ աւելի բարձր լինելը դեռ հիմք չի տալիս պարծենալու, ազգային հպարտութեան թմբուկ զարնելու... Ի՞նչ ենք մենք այդ յարաբերութիւնից դուրս։ Ի՞նչ են ներկայացնում մեր ժողովրդային զանգուածները Վասպուրականի, Տարօնի, Զանգեզուրի լեռ ու ձորերում, Թէկուզ Կիլիկիայում... Մի խաւար ու գրեթէ միջնադարեան գոյութիւն, որի ծոցում տգիտութիւնն ու նախապաշարմունքը դեռ ամուր շեշտում են իրենց իրաւունքը։

Համեստ լինելու պատճառներ ունինք։ Որքան խոր է մեր հիւանդութիւնը, այնքան մեծ է մեր պատրանքը։ Մեր ազգային էութիւնը իր հրապուրիչ կողմերի հետ՝ ունի իր խիտ, իր շատ խիտ ստուերները... Ստուերներ՝ նոյնիսկ ազգայնութեան ամենատարրական պահանջների տեսակէտից։ Ահա լայնածաւալ գաւառներ, նոյնիսկ Թիւրքիայում—Կեսարիա, Կիլիկիա ևն— ուր հայ զանգուածները իրենց ճնշող մեծամասնութեամբ հայ են մնացել գրեթէ միայն իրենց ծագումով, ուր նրանք—չը նայած մեր ռէկլամասէր տիրացուական ազգասիրութեան— համարեա թէ կուլ են գնացել լեզուով, բարքով մահմեդականութեան մէջ։ Լեզուն, որ ազգայնութեան ամենաթանկագին գանձն է, դուրս է մղել

բազմաթիւ վայրերում և փոխարինել օտար բարբառներով… Եւ դա յօժարակամ ձուլումն է, յօժարակամ ազգային ինքնասպանութիւն։ Ձուլւում է սովորաբար կուլտուրապէս յետամնաց ցեղը աւելի առաջադէմ ցեղի մէջ, իսկ այդտեղ—հակառակն է… Ահա մի արատ, օտարամոլութեան մի հին ախտ, որ ճարակում է վաղուց ի վեր նաև կովկասեան հայութիւնը, որ յուսանք, կը բուժւի աստիճանաբար նոր սերունդների կորովի ճիգերով. բայց որ, յամենայն դէպս, թելադրում է հայ սակաւաթիւ չինգօներին՝ փոքր ինչ մեղմել „ազգայնական գերազանցութեան“ ֆէտիշիզմը…'

***

Նոր սերունդ պիտի ստեղծել վերածնւող Հայրենիքի մէջ. նոր դպրոց, կրթութեան, դաստիարակութեան նոր մեթօդներ, ներշնչւած արևմտեան գաղափարներով, ռամկավարութեան ազատաշունչ հաւատամքով։ Վերակազմել մեր ժողովուրդը, սկսելով թարմ, զգայուն, գաղափարատենչ երիտասարդութիւնից, վերակազմել մեր մտքերն ու հոգիները, իրագործել չէն, բարգաւաճ Հայրենիքը—ահա մեր իսկական „ռըվանշը“, մեր լաւագոյն պատասխանը դարերի մռայլ, հայահալած կօշմարին, մեր հզօրագոյն հակահարւածը արտաքին ու ներքին սև, բռնաւոր ուժերի դէմ։

Արտաքին ուժերը անզօր են խորտակելու մեզ, եթէ ներքին չարիքները չը միանան նրանց։ Հռօմն արդէն փտած, կործանւած էր, երբ բարբարոսները ներս խուժեցին։ Այդպէս՝ և շատ ուրիշ ազգային հսկայ մարմիններ՝ որ կուլ են գնացել ժամանակի հողմերին… Ազգերը մեռնում են ինքնասպանութեամբ, ոչ սպանութեամբ։

Մեր մտաւոր-հոգեկան մակարդակը շատ է իջած—պէտք է բարձրացնել անդուլ ու ներդաշնակ ճիգերով։ Նա երբէք, ի հարկէ, չի էլ եղել աւելի բարձր, քան այսօր։ Բայց այսօր մտաւոր ու բարոյական նահատակութեանը աւելանում է և ֆիզիքական ու տնտեսական յօշոտման զարհուրելի պատուհասը։ Անշուշտ, ոստիկաններով գնալ չենք կարող. ահագին է ժառանգականութեան պահպանողական ուժերի դերը և դեռ երկար ժամանակ կը մնանք կորացած դարաւոր արատների բեռի տակ։ Բայց ահագին է և կրթութեան ու դաստիարակութեան ուժը, երբ նա կիրառւում է բնածին լաւ հակումների ու տրամադրութիւնների վրայ և երբ նա տրւած է ուժեղ, խելահաս ձեռքերի մէջ։

Նոր սերունդ—տոգորւած ճշմարիտ հայրենասիրութեամբ և անչակերտ ազգասիրութեամբ։

Ճշմարիտ հայրենասէրը սիրող է, ոչ ատող։ Եթէ սէրը երբեմն, որոշ միջավայրում առժամապէս անհնարին է—գէթ հնարաւոր է բարեացակամ անտարբերութիւնը։ Ճշմարիտ հայրենասէրը ձգտում է ազնւացնել իր հարազատ ժողովրդին, բարձրացնել նրան դէպի քաղաքակրթութեան սանդուխի գագաթները, առանց ոտնահարելու և արհամարհելու ուրիշ ազգերի նոյնքան արդար ու օրինաւոր ձգտումները։

Հայրենիքի գաղափարը դաւանում ենք և մենք—հայ դաշնակցականներս, սօցիալիստներս։ Բայց մենք չենք բաժանում այն՝ միջհայրենութեան, միջազգայնութեան գաղափարից։ Բոլոր պատմական համայնքները կոչւած են հաւասար իրաւունքով տեղ բռնելու քաղաքակրթութեան մեծ խնջոյքի սեղանի առջև։ „Բարձր ու ստորին“ ցեղերի տարբերութիւնները չքանում են Իրաւունքի փիլիսոփայութիւնից և քշւում դէպի անտրօպօլօգիայի, մարդաբանութեան զուտ տե-

սական աշխարհը, այնտեղ միայն քննելու, ստուգելու նպատակով։

Հայրենիքը մեզ համար — հայկական հայրենիքը — սոսկ վերացական մի գաղափար չէ, այլ և կենդանի իրականութիւն, որ ունի իր խորունկ ու հեռաւոր պատճառները — պատմական, հոգեբանական — որ ունի իր դարաւոր էւօլիւցիոն, իր անհրաժեշտ ու կենսունակ „տարրերքները"՝ արիւնային ու հոգեկան ազգակցութիւն, ընդհանուր աւանդութիւններ, լեզու, պատմութիւն, քաղաքակրթութիւն... Մենք նրան ենք պատկանում—այդ հայրենիքին—մեր ծննդեամբ, մեր բառբառով ու բարքերով, մեր բնական, ինքնաբուխ համակրութիւններով։

Հայրենիքը, պառաւ Հերոդոտի որոշումով — „մեր հողն է, մեր մեռելները և մեր հօմերական քաղցր լեզուն"։

Մենք էլ կ՚ասենք Հերոդոտի հետ. „մեր հայկական հայրենիքը—դա մեր հողն է, ուր թաղւած են մեր մեծ մեռելները, ուր հնչել է դարերից ի վեր Եղիշէի, Նարեկացու, Ալիշանի ճկուն լեզուն"... Մի լեզու, որ իր բոլոր անկատարութիւններով հանդերձ՝ սիրելի է, նւիրական է մեզ համար, որ մեր ուրոյն ու համեստ կուլտուրայի շտեմարանն է, որ մենք երբէք չը պիտի թոյլ տանք յափշտակելու, ոտնահարելու։

Բայց հայրենիքը՝ դրանցից առաջ, ամենից առաջ՝ մի ջոկ, ուրոյն պ ա տ մ ո ւ թ ի ւ ն է, հիւսւած ընդհանուր ճիգերից ու զոհողութիւններից. հայրենիքը՝ յիշողութիւնների մի ցանց է, երկար, անվերջ մի շարան, տեղ-տեղ պայծառ, վարդագոյն, ճառագայթաւէտ, տեղ տեղ մռայլ, արիւնոտ, ողբերգական... Յիշողութիւններ, ուրախ օրերի և տխուր..., ոչ ոք չի կարող—եթէ սնւած, դաստիարակւած է բնական, նորմալ պայմաններում—

անյոյզ, անտարբեր սրտով անդրադառնալ իր հարազատ ժողովրդի այդ դարաւոր անցեալի վրայ, որ ունի միշտ որոշ հրապոյր, թովչութիւն։

Եւ այդ պատմութիւնը պարզ, մեքենական շղթայակցութիւն չէ անցքերի, իրողութիւնների, այլ մի տեսակ համադրութիւն, մի ներդաշնակ ամբողջութիւն, որի մի ծայրից մինչև միւսը կաս-կարմիր ժապաւէնով անցնում են նոյն կրքերն ու դրդումները, նոյն շունչը, նոյն գաղափարը, նոյն տ ե ն դ ե ն ց ը։ Վարդան Մամիկոնեանից մինչև Սերոբ ու Արաբօ, Եղիշէից մինչև Ալիշան ու Ահարոնեան՝ նոյն իդէալն է, որ շարժւում է, նոյն գաղափարն ու ձգտումն է, որ թափօր է անում յաւիտենօրէն մի արիւնաբոյր ու կախարդական շրջագծի մէջ, նոյն փոքրիկ, հալածական ժողովուրդն է, որ մերթ ընդ մերթ ծառանում է յուսահատութեան արիութեամբ իր անխիղճ դահիճների դէմ, բայց որ աւելի յաճախ ընկճւում է ու արտասւում և կամ երգում լալահառաչ իր ծովացած տառապանքը, իր պաշտելի հերոսների, օրհասական երերումները, իր գալոց ազատագրութեան երկչոտ, մշուշապատ արշալոյսը...

Մենք ևս, այո, հայրենասէր ենք և մենք ուզում ենք դուրս բերել այդ բազմատանջ ժողովուրդը այդ արատաւոր, կախարդական շրջանից, դնել նրան համաշխարհային քաղաքակրթութեան մեծ ճամբու վրայ, տալ նրա ձեռքը մարդկային առաջխաղացութեան բոլոր անհրաժեշտ գործիքները, ապահովել նրա քաղաքական ու սոցիալական իրաւունքները, զարգացնել նրա ուրոյն անհատականութիւնը, լեզուն, կուլտուրան, ղեկավարուելով միանգամայն ազգային ու միջազգային աւետարանի հրահանգներով, թելադրուած միանգամայն հանուր ռամկավարութեան տիրական պահանջներից։

Մենք հայրենասէր ենք և կուզէինք—առանց բնաւ

դուրս կոչելու մոռացութեան խաւարից Տիգրաններին ու Արամներին, առանց երբէք ծօծելու „անջատականութեան“ սին դրօշը — մենք կուզէինք և պիտի աշխատենք, որ վերանան սահմանները հայ ազգութեան երեք տարբեր հատուածների միջև և բովանդակ հայ ժողովուրդը, հետզհետէ տոգորուելով իր միութեան գիտակցութեամբ, հետզհետէ կրթուելով, առաջադիմելով, բարձրանայ թևթևի հարևան ժողովուրդների հետ, դէպի հասարակական կենցաղի այն կատարեալ ձևը, դէպի ազատ, իրաւահաւասար ազգերի այն գեղեցիկ դաշնակցութիւնը, որ վաղ թէ ուշ իրագործուելու է մեր արիւններկ երկրագնդի վրայ և ուր, վերջապէս, պիտի ցոլայ Հայրենիքի Գաղափարը, իր ամենաջինջ, ամենապայծառ իմաստով։ Պատռե՛լ պէտք է սահմանները — յիշենք այստեղ մեր Քրիստափորի խօսքերը, արտասանուած 1903 թուի կովկասահայ տագնապի առթիւ — պատռե՛լ պէտք է սահմանները, ջնջե՛լ պէտք է աշխարհագրական այն ներկերը, որ բաժանում են իրարից՝ թիւրքահային, ռուսահային, պարսկահային, որ չեն կարող յաւերժանալ, սրբագործուել՝ ոչ մի բնական կամ գերբնական զօրութեամբ։ Ահաւասիկ հայրենիքի մեր իդէալը։ Եւ այդ միութեան գիտակցութիւնը, չը նայեած արիւնալի ձախորդութիւններին, դարաւոր հալածանքին ու տանջանքին, այսօր հանդէս է գալիս աւելի մեծացած ու ամբողջացած՝ այն դրակօնեան հարուածների տակ, որոնց նպատակն էր իսպառ ջնջել, խաւարեցնել այն։

Մենք հայրենասէր ենք և կուզէինք շէնցնել, բարօրացնել մեր երկիրը այն աստիճան, որ նա լինէր իրօք Հայրենիք բոլորի համար, որ նա դառնար Հարազատ Մայր և ճշմարիտ հովանաւոր իր բոլոր զաւակների, որ նրա մէջ չը լինէր դասակարգերի ան-

հաւասարութեան ուրւականը, չը լինէին՝ մի կողմից արտօնեալներ, միւս կողմից՝ խորթ ու թշուառ զաւակներ, հարկադրւած գաղթելու, տարագրւելու դէպի աշխարհի չորս բոլորը։

Մենք հայրենասէր ենք և կուզէինք, որ այդ փոքրիկ հայրենիքը, որ ձգւած է Ասիական Թիւրքիայի, Կովկասի ու Իրանի խայտաբղէտ քարտէզի վրայ, շրջապատւած ու խճողւած այնքան տարբեր ու յետամնաց ցեղագրական տարրերով,—մենք կուզէինք, որ նա դառնար մի օրրան, մի քուրայ, ուր արծարծւէին եւրոպական կեանքի, քաղաքակրթութեան սկզբունքները և ուսկից նրանք ճառագայթէին դէպի հեռաւոր. շրջապատը։

Ահա այդ մտքով ենք մենք հայրենասէր։

Եւ մենք հաւատում ենք, որ մի օր — հեռու, անշուշտ, ապագայում —քաղաքակրթութեան յարաճուն հոսանքի մէջ, միջազգայնութեան գաղափարի յարանւաճ ընթացքի շնորհիւ, խտրողական սահմանները ջնջւելու են ոչ միայն առանձին ազգութիւնների—հայի, լեհի, սերբի, յոյնի—ցիր ու ցան և հարազատ բեկորների միջև, այլ նրանք ջնջւելու են և բոլոր տարբեր ազգերի միջև. մենք հաւատում ենք, որ ազգային ու ցեղական հակամարտութիւնները — ծնունդ դարաւոր նախապաշարումների, տգիտութեան, բռնակալական սադրանքների, ծնունդ նաև կապիտալիզմի թունաւոր ու պառակտիչ մրցակցութեան հոսանքների— պիտի վերանան վաղ թէ ուշ, որ երէկւան ու այսօրւան այդ մոլեգնոտ ըմբիշները վերջ ի վերջոյ պիտի միանան —ոչ թէ ձուլման, այլ ազատ դաշնակցութեան մէջ (*fédération*) — պահպանելով իւրաքանչիւրը իր ուրոյն անհատականութիւնը, իր ինքնատիպ հանճարն ու խառնւածքը, մի հանգամանք՝ որ անհրաժեշտ է նոյնիսկ

մարդկային ցեղի բազմազանութեան ու հարստութեան համար։

Այդպէս է ուսուցանում մեր սօցիալիստական աշխարհահայեացքը, պատմափիլիսոփայական մեր համոզումը, մեր իդէալը։

Եւ այդ իդէալը պէտք է ղեկավարէ մեզ՝ մեր իւրաքանչիւր քայլափոխում, այդ իդէալը պիտի առաջնորդէ մեզ՝ նաև հ ա յ ր ե ն ա ս ի ր ո ւ թ ե ա ն մեր ամենօրեայ քարոզների մէջ։

Հեռո՛ւ նեղմիտ, անհամբերող նացիօնալիզմը, որ չորացնում, գձձիացնում է մարդկանց հոգին և արտադրում ընդհանրապէս հակամարդկային ու ազգավնաս շարժումներ *)։

Բայց և հեռո՛ւ ծոյլ, լուատես ու թուլամորթ անտարբերութիւնը ազգային գոյութեան հրատապ խնդիրների հանդէպ,—անտարբերութիւն՝ որ սովորաբար կաշկանդում է ինիցիատիվի ու կորովի ճիգերը, անդամալուծում հաւաքական ինքնապաշտպանութիւնը և մատնում համայնքը՝ մերկ, անպատրաստ, ամեն տեսակ պատահարների։ Հայրենասիրութեան մեր շիտակ հաւատամքը, հիմնուած դրացիական իրաւունքների յարգանքի վրայ, բնաւ չը պէտք է արգելէ մեզ՝ մղել շարունակ ա զ գ ա յ ի ն ի ն ք ն ա պ ա շ տ պ ա ն ո ւ թ ե ա ն պրօպագանդը՝ հանդէպ ամեն պատահակա-

*) Չինգօյական դարձուածին՝ „*Right or wrong, my country*“՝ հարկ է հակադրել 18-րդ դարու մեծ ֆրանսիացի ընկերաբան Մ օ ն տ ե ս կ ի օ ի վեհանձն, մարդասէր արտայայտութիւնը. „*Si je savais quelque chose d'utile à ma patrie et qui fût préjudiciable à l'Europe et au genre humain, je le regarderais comme un crime*“։ Ասել է. „Եթէ ես գիտնայի, թէ այս ինչ բանը օգտաւէտ է իմ հայրենիքին, բայց վնասակար եւրոպայի ու մարդկային ցեղի համար, ես այդ բանը կը համարէի ոճիր“։

նութեանց։ Այդպէս է հրամայում ամեն մի առողջ ազգային էգօիզմ, ինքնասիրութիւն։

Մեր հարազատ հայրենիքից դուրս՝ մենք ունինք պարտաւորութիւններ ու իրաւունքներ՝ նաև միւս, հ ա ւ ա ք ա կ ա ն հ ա յ ր ե ն ի ք ի դիմաց — օսմանեան, ռուսական, պարսկական։ Հաւաքական հայրենիքը ևս բարգաւաճման անսայթաք ճանապարհի վրայ կարող է դրուել մ ի ա յ ն ա յ ն ժ ա մ ա ն ա կ, երբ բաղկացուցիչ հատուածները, գէթ ի դէմս իրենց գիտակից, առաջադէմ մտաւորականութեան, կը խմորուին նոյն առողջ, անատամ հայրենասիրական դաւանանքով, իրաւունքների նոյն փոխադարձ յարգանքով։

Եւ երբ մենք ինքներս կ'ազատուինք աստիճանաբար մեր սեփական „ստուերներից", երբ մեր երիտասարդութիւնը ամբողջապէս կը ներշնչուի ճշմարիտ, գիտակից հայրենասիրութեան դաւանանքով, այն ժամանակ դիւրին կը լինի նրա համար մղել նոյն պրօպագանդը իր շրջապատում, դրացիների մէջ։ Դիւրին կը լինի պատերազմել Թիւրքական, Թաթարական՝ պարսկական, ռուսական ու վրացական հայահալած նացիօնալիզմի, շօվինիզմի դէմ։ Դիւրին կը լինի ծածանեցնել խաղաղասիրութեան ու համերաշխութեան դրօշը մեր միշտ մռայլ, ամպամած հօրիզօններում, ուր այնքան վառ են պատերազմի, իրարաջնջման նախապատմական ախորժակները...

Կռի՛ւ պէտք է կազմակերպել կուլի դէմ, պատերազմ պիտի քարոզել, բոլոր անկեղծ ռամկավարական տարրերի հետ միացած, ընդդէմ այն բոլոր հնադարեան չարիքների, ընդդէմ այն խուժդուժ, արիւնարբու բնազդների, ազգային ու ցեղական գերիշխանութեան տենչանքների, կրօնական խորարմատ նախապաշարումների,

որոնք դարերից ի վեր՝ վայրագ ու սանձարձակ բռնակալութեան հետ դաշնակցած՝ թունաւորել են ամբողջ միջավայրը մեր վեհափառ Մասիսի շուրջը և այսուհետև էլ, դեռ երկար ժամանակ արգելք պիտի լինին ազատ ու խաղաղ կուլտուրայի պատւաստումին։

Մենք կը լինենք ջերմ, խանդավառ կրողը համերաշխութեան այդ ջահի, խաղաղութեան այդ դրօշակի։ Մենք այն կը կրենք հաւասար նախանձախնդրութեամբ մեր պատմական հայրենիքի բոլոր երեք հատւածներում։ Ամեն տեղ պիտի ձգտենք կիրառել աստիճանաբար ռամկավարութեան նւաճումները, մաքրել հրապարակը կուլտուրական խաղաղ առաջադիմութեան համար, կուել իշխող դասակարգերի ռազմատենչ, նւաճողական ախորժակների դէմ, որոնք գրեթէ միշտ յայտնւում են միակ խթանը ժողովրդասպան պատերազմների։ Ամեն տեղ պիտի ձգտենք — համաձայն մեր ծրագրի, միջազգային կօնգրէսների որոշումների, տիեզերական աշխատաւորութեան ծանուցած հրահանգների — արգելք լինել միջազգային ընդհարումներին, որոնցից միշտ, նոյնիսկ յաղթութեան պարագային, տուժում է աշխատաւոր ժողովուրդը, բոլոր ուժով պիտի պայքարենք միլիտարիզմի Մողոքի դէմ, որ առանձնապէս ճարակում է Թիւրքիան ու Ռուսաստանը, որ իր անհամաչափ ու յարաճուն ծախքերով կլանում է ժողովուրդների թանկագին հիւթերը, յօշոտում է իր պողպատեայ ժանիքների մէջ ազատ, բնականոն առաջադիմութիւնը, զարգացումը։ Ամեն տեղ պիտի պահանջենք — ձեռք ձեռքի տւած դրացի ազգերի առաջադէմ կուսակցութիւնների հետ — ռամկավարացնել բանակը, տեղ տալ նրա մէջ հաւասարապէս բոլոր տարրերին, ազատել այն դասակարգային, դինաստիական ու դիքտատօրական

ոգուց, ներշնչումներից, ծառայեցնել այն՝ սոսկ ընդհանուր հայրենիքի պաշտպանութեան գաղափարին. ամեն տեղ, վերջապէս, համաձայն նոյն ժողովրդապետութեան սկզբունքին, պիտի ձգտենք աստիճանական, մասնակի րէֆօրմներով դէպի միլիսի, համաժողովրդական բանակի կրթիչ ու արգասաւոր սիստեմը, որ ժամանակակից հեղինակաւոր ռազմագէտների կարծիքով իսկ՝ հանդիսանում է, որպէս անհրաժեշտ, անխուսափելի վախճանակէտը զինուորական էւօլիւցիայի, ամբողջ աշխարհում։

Այդպէս է պատկերանում, խոշոր, ընդհանուր գծերով, ճշմարիտ հայրենասիրական այն աշխատանքը, որ սպասում է մեզ և որի առթիւ դեռ կը խօսենք յետագայում։ Այդպէս միայն՝ հայ գործօն, գաղափարական մտաւորականութիւնը կարող է կատարել արժանաւոր կերպով իր դերը, իր նւիրական պարտաւորութիւնները՝ թէ դէպի փոքրիկ, հարազատ հայրենիքը, և թէ դէպի հաւաքական հայրենիքները—Ռուսաստանը, Թիւրքիան, Պարսկաստանը։

IV

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑ

Ռ Ո Ւ Ս Ա Ս Տ Ա Ն

Ընդհանուր ակնարկ.—Ազգային հարցը եւ համաշխարհային էվոլիւցիայի ձգտումը.—Հոսանքներ.—Մեր ազգային գանգատի նիւթը՝ նոյնն է երեք միջավայրում.—Ռուսական յեղափոխութիւնը, նրա վայրկենական յաղթանակը եւ նրա վիժման պատճառները.—Դրական հետեւանքներ՝ ազգային դատի տեսակէտից.—Յետաշրջում.—Նոր կուրսը.—Գօլիցինեան քամիներ.—Սադրանքները դպրոցի ու եկեղեցու դէմ, հալածանքը հայ մտաւորականութեան դէմ.— „Դաշնակցութեան“ ուրւականը.—Դիմադրութեան կազմակերպումն.—Ազգամիջեան ու միջկուսակցային համերաշխութիւն.—„Ազգերի ինքնորոշումը“, որպէս ընդհանուր նշանաբան:

> „*Les hommes naissent et demeurent libres et égaux en droit*“. (*Déclaration des Droits de l'homme et du citoyen* *).
>
> „*Tout peuple est maître chez soi, il est légitimement égal du plus grand*“ **).

Ազգային հարցը—մեր ժամանակի ծանրագոյն կընճիռներից մինը։ Նա միշտ կանգուն է և միշտ հրատապ ու սպառնական՝ չը նայած բոլոր ձուլարար ու հար-

---

*) „Մարդիկ ծնւում ու մնում են ազատ ու հաւասար՝ իրաւունքի մէջ“: (Ֆրանս. Մեծ Յեղափ. արձակած նշանաբանը):

**) „Ամեն մի ժողովուրդ տէր է իր մօտ. նա իրաւապէս հաւասար է ամենամեծին“: (Ժամանակակից Ռամկավարութեան հաւատամքից):

թարար (*niveleur*) հոսանքներին, չը նայեած և ինտեր-նացիօնալիզմի ու սօցիալիզմի խաղաղաշունչ, լաւատես մարգարէութիւններին։ Նա ջնջում է թէ քաղաքա-կիրթ և թէ կիսակիրթ ու վայրենի երկրագնտի բոլոր ծայրերում—և նա ջնջում է միշտ կատաղի, երբեմն արիւնոտ հակամարտութեամբ ու բաղխումներով։

Աւստրիան և Ռուսաստանը մինչև օրս այն պետու-թիւններն էին, ուր ազգային խնդիրը ներքին քաղաքա-կանութեան ամենամեծ կնճիռն է. այսօր նրանց աւելա-նում է ազատագրուած Տաճկաստանը, ուր ցարդ ազգերի ու դասակարգերի ներհակութիւնները արհեստականօրէն խեղդուած էին քաղաքական բռնակալութեան լծի տակ, իսկ այժմ ահա ծաւալւում են ուժով ու մոլեգնու-թեամբ։

Ազգային հակամարտութիւնը չի մեղմանում մեր աշխարհում, տեղ-տեղ նոյնիսկ թափ է առնում, սպառ-նալով վերսկսել այն արիւնոտ ու խօլական բաղխում-ների շարանը, որ անցնում է կարմիր գծով ամբողջ 19-րդ դարի միջից...

Անշուշտ, քաղաքակրթութեան և համաշխարհային էւօլիւցիայի հիմնական ձգտումը մնում է անդրդուելի. նա տանում է ոլոր-մոլոր շաւիղներով դէպի իդէալա-կան այն վիճակը, ուր պիտի մարին վերջնականապէս մարդկութիւնը պառակտող անջատական ախորժակ-ները, ուր ոչ միայն իւրաքանչիւր ազգի բոլոր անդամ-ները պիտի վայելեն լիակատար իրաւահաւասարու-թիւն, ազատութիւն ու բարօրութիւն, այլ և բոլոր ազգերը պիտի վայելեն նոյն բարօրութիւնն ու իրաւահաւասարութիւնը՝ ընդհանուր, համամարդկային գերդաստանի մէջ։ Նա տանում է դէպի այն ճշմարիտ „ոսկէ դարը“, որին ձգտել են մարդկութեան լաւա-գոյն զաւակները յընթացս ամբողջ տիեզերական պատ-

մութեան և որի գրկում ազատութեան ու հաւասարութեան գաղափարները պիտի դառնան անկապտելի սեփականութիւն այն բոլոր էակների—այսօր խուժդուժ, վայրենի ու բարբարոս—որոնք մարդկային կերպարանք են կրում...

Այդպէս է հրահանգում պրօգրէսի, առաջադիմութեան մեծ օրէնքը, որ անժխտելի կերպով հաստատուած է պատմութեան փիլիսոփայութեան մէջ. այդպէս է մարդկային բովանդակ զարգացման ու ստեղծանական կատարելագործման նպատակը։

Սարսափելի է, աւա՜ղ, այդ զարգացման ճանապարհը,—ցանուած ծայրէ-ծայր արիւնով ու արտասուքով... Երկու յարակից տիեզերական ուժերը այդտեղ ևս գործում են մշտնջենաւոր մրցութեան մէջ։ Ձ գ ո ղ ո ւ թ ի ւ ն և վ ա ն ո ղ ո ւ թ ի ւ ն (*attraction—répulsion*), կամ սօցիօլօգիական բարբառով՝ հ ա մ ե ր ա շ խ ո ւ թ ի ւ ն և կ ռ ի ւ։ Այդ երկու հակոտնեանները վարում են ամբողջ օրգանաւոր և անօրգան տիեզերքի ճակատագիրը. նրանց օրէնքին ենթարկւում է անասնական աշխարհի էւօլիւցիան, նրանցով ղեկավարւում է և մարդկային համայնքների ու նրանց փոխադարձ յարաբերութիւնների զարգացումը։

Մի կողմից կռիւ, միւս կողմից համերաշխութիւն. համերաշխութիւն—յանուն կռւի և դէպի կռիւ...

Անշուշտ և անասնական տիեզերքում այդ երկու հակոտնեանները—ձգողութիւն ու վանողութիւն—գործում են կոյր, անողոք, տարերային ճակատագրականութեամբ։ Ոչինչ չի կարող արգելել նրանց, փոխել, բարելաւել նրանց ընթացքը։ Գոյութեան կռիւը անասնական աշխարհում, չը նայած իր հակոտնեայ-համերաշխութեան բնազդին (որ շեշտւում է առանձին-առանձին տեսակների մէջ)՝ յաւիտենօրէն աւերիչ է,

յաւիտենօրէն արիւնալի։ Նրա զոհերը—իբրև կոյր գործիք տիեզերական ազդակների — չեն կարող հակազդել դարվինական այդ անողորմ օրէնքի դէմ... Բայց մարդկութիւնը անասնութիւն չէ։ Մարդիկ գիտակից էակներ են, որ կարող են միշտ միջամտել հասարակական, նոյնիսկ բնական ազդակների խաղերի մէջ և տալ նրանց իրենց շահերին նպաստաւոր ուղղութիւն։ Մարդիկ իրենք են ստեղծում իրենց պատմութիւնը—հրահանգւած յաճախ նոյն բնական ու հասարակական ազդակներից—իրենք են վարում իրենց ճակատագիրը. և հետզհետէ զարգանալով ու կատարելագործւելով, այդ գիտակից էակները պիտի կարողանան աստիճանաբար մեղմել, թուլացնել հակոտնեաներից մէկի ուժը ի նպաստ միւսի, մեղմել „կռիւը“, „վանողութիւնը“ ի նպաստ „համերաշխութեան“ կամ „ձգողութեան“։ Այդպէս է ընթանում մարդկային էւօլիւցիան, այդպէս էլ կ՚ընթանայ նա, մինչև որ հասցնէ ազգերի ու անհատների լիակատար իրաւահաւասարութեան „ոսկէ դարին“։

Մինչ այն՝ կռիւ է...

Արդարև, տեսէք ապշեցուցիչ հակօրինութիւնը ժամանակակից քաղաքակրթութեան։ Նրան իրաւամբ անւանել են կապիտալիստական, դրամատիրական քաղաքակրթութիւն։ Նրա մէջ գտնում ենք խոր ու ցայտուն երկուութիւն։ Նա մի կողմից սերտ կապերով շաղկապում է երկրագնդի բոլոր ծայրերի ազգութիւնները, հաղորդակից անելով նրանց նոյն զարգացած կապիտալիստական արդիւնաբերութեան և կուլտուրայի բարիքներին ու չարիքներին։ Բայց նա միւս կողմից և միաժամանակ խորունկ կերպով բաժանում է այդ ազգերին, թունաւորում է նրանց փոխադարձ յարաբերութիւնները, սերմանում է ատելու-

թիւն, արիւնոտ մրցակցութիւն և ձգտում է յաւերժացնել մարդասպան պատերազմների մղձաւանջը…

Տեսէք մի կողմից միջազգայնութեան, համաշխարհայնութեան այդ մեծ յորձանքը, որ կառուցանում է այնքան հոյակապ հաստատութիւններ — առևտրական, մաքսային ու այլ դաշինքներ, Համաշխարհային փոստահեռագրական ընկերակցութիւն, Համաշխարհային խաղաղութեան Բիւրօ, Միջնորդ ու իրաւարար Ատեաններ, Գրականութեան ու Մամուլի դաշնագրութիւններ և ամեն տեսակ միջազգային համագումարներ, կօնգրէսներ, որոնք բոլորն էլ, իբրև արգասիք կապիտալիստական դարաշրջանի, կոչւած են դիւրացնելու թէ նիւթական բարիքների և թէ մտքերի փոխանակութիւնը այլևայլ ժողովուրդների միջև... Տեսէք, մանաւանդ, այդ նոր, վեհապանծ Ինտերնացիօնալը, միջազգային սօցիալիստական նոր մարդկութիւնը, որ բարձրանում է ժամանակակից աշխարհի մէջ, իբրև նոյնպէս հարազատ ծնունդ կապիտալիզմի, և որ ի մի ձուլելով բոլոր ազգերի աշխատաւոր զանգւածները, մարզելով նրանց համերաշխութեան ու եղբայրութեան դպրոցի մէջ, հրաշակերտում է վաղւան իդէալական հաւասարութեան թագաւորութիւնը։

Բայց և տեսէք միւս կողմից, միջազգայնութեան այդ վիթխարի հոսանքի հանդէպ՝ նեղմիտ, գձուձ նացիօնալիզմի ու մարդակեր շօվինիզմի համաճարակը, որ վարակել է ժամանակակից գրեթէ ամբողջ մարդկութիւնը, որ ոտնահարում է աշխարհի բոլոր սրբութիւնները, որ գրոհ է տալիս համերաշխութեան ու մարդկայնութեան գաղափարի դէմ ամեն անգամ, երբ դասակարգային առանձնաշնորհումները վտանգւում են, կամ երբ նրանք ձգտում են ընդլայնել իրենց տիրա-

պետութեան հօրիզօնները և յագուրդ տալ իրենց գիշատիչ, նուաճողական ախորժակներին։

Կրօնն անգամ — քրիստոնէութիւն, բողոքականութիւն, կաթօլիկութիւն — որ է իրօք միջազգային ու համաշխարհային, որ քարոզում է ամեն օր սէր ու եղբայրութիւն մարդկանց միջև, որ ընդունում է մէկ Աստուած միայն, հովանաւորող ամբողջ մարդկութեան, մէկ Արեգակ, լուսաւորող հաւասարապէս բոլոր ազգերին, առանց խտրութեան ցեղի ու գոյնի — կրօնն անգամ ի դէմս իր բոլոր ճիւղաւորութիւնների, յանձին իր բոլոր սպասաւորող դասակարգերի՝ պատրաստ է իսկոյն դաւաճանել իր քարոզներին, պատրաստ է իսկոյն գրկել ամենաբիրտ ազգայնամոլութեան դրօշակը և խրախուսել ժողովրդասպան ընդհարումները—հէնց որ այդ կաստ-դասակարգերի նիւթական ու այլ առանձնաշնորհումները վտանգւում են, կամ հէնց որ նրանք փորձ են անում նուաճելու ազդեցութեան նոր շըրջաններ...

„Ազգային“ բառի տեղ — ժամանակակից փոթորկոտ բաղխումների ու բանակռիւների ընթացքում—յաճախ լսւում է „ցեղային“ բառը, ազգայնական հակամարտութիւնը մերթ ընդ մերթ վերածւում է ցեղականի։ Մենք տեսնում ենք երկու հզօր ցեղեր, սլավօնականութիւն և գերմանականութիւն, որ մղում են օրհասական մենամարտ՝ Արևելքի տիրապետութեան համար,—մէկը Ռուսաստանի, միւսը Գերմանիայի առաջնորդութեամբ։ Մենք տեսանք երկու տիտանների ուժգին բաղխումը Բօսնիա-Հերցեգի գրաւման ժամանակ։ Պանգերմանիզմի հռչակաւոր Drang-ը մի խոշոր քայլ ևս արեց դէպի առաջ և այդ յաղթական արշաւանքի հանդէպ սլաւօնականութիւնը մէկէն ի մէկ սասանեց Դրինայի ափերից մինչև Նեվա... Տեսանք համասլաւօ-

նութեան կատաղի ցոյցեր, սլավ ազգերի — ռուս, լեհ, չեխ և այլն — պատգամաւորական համագումարներ ու անոյժ ժեստեր... Դարձեալ նորագոյն կապիտալիզմի ամենազօր քմահաճոյքն է, որ միջազգային շուկայի շուրջը մղած իր ցասկոտ ընդհարումների մէջ կարողանում է միացնել — թէկուզ և ժամանակաւորապէս — միևնոյն ցեղի յաճախ հակամարտ հատուածները, ազգութիւնները՝ ի դէմս նրանց իշխող, բուրժուա և աւատական դասակարգերի...

Սակայն, բոլոր ժամանակակից ազգայնական հակառակութիւնները — նոյնիսկ խոշոր ազգերի միջև — ծնունդ չեն սոսկ կապիտալիստական դարաշրջանի և րէժիմի։ Բոլոր ազգային ընդհարումները չեն առաջանում իշխող, բուրժուա դասակարգերի մրցակցութիւնից, չեն պայմանաւորւում լոկ նրանց հակամարտ ախորժակներով։ Անտարակոյս, տիեզերական կապիտալիզմի մրցման քուրայում սաստկանում են այդ հակառակութիւնները, բայց այդ քուրան միայն չը ստեղծեց նրանց։ Ազգային մրցում ու կռիւներ կան, որ գոյութիւն ունին դարերից ի վեր, որ չեն վերածւում տնտեսական գործօնների խաղերին, որ բղխում են ուրիշ կարգի պատճառներից։ Ազգային ճնշումներ կան, որ չեն գալիս միմիայն իշխող դասակարգերից, այլ որ գործադրւում են ազգովին, հաւաքականօրէն. գործադրւում են տիրող ազգի ընդհանրութեան կողմից՝ ընդդէմ հպատակ ու թոյլ ազգի ընդհանրութեան։ Դասակարգերի մրցութեամբ չէ, որ պիտի բացատրել լեզուների այն ահարկու պատերազմը, որ մղւում է երկար տարիներից ի վեր աւստրո-ունգարական թագաւորութեան մէջ, չեխերի ու գերմանացիների, ռուսինների ու լեհերի, ռումինների ու մաջառների միջև։ Բոհէմիայում երբեմն ամբողջ փո-

թօրիկ էր պայթում „բառերի“ շուրջը... լինի՞ գրւած „Zdé“, թէ՞ լինի „Hier“ (այստեղ)—այս կամ այն հիմնարկութեան դրան ճակատին, այս կամ այն ցուցատախտակի վրայ... լինի՞ վերում „Zdé“ և վարում „Hier“, թէ լինի՞ հակառակը... Դժւար է ասել, թէ այդ բոլորը չեխ ու գերմանացի բուրժուազիաների, իշխող դասերի սադրանքն են։ Այդ բաղխումները ունեցել են և կունենան դեռ իրենց գոյութեան արդար իրաւունքը։

Ոչ. ժամանակակից ազգային շարժումները — նոյնիսկ *grosso modo*—անկարելի է վերածել այլևայլ երկրների իշխող դասակարգերի ձգտումներին, նրանց տնտեսական ու այլ մտահոգութիւններին։ Պատճառները բազմաթիւ են և այլազան... „Տնտեսականը“ յաճախ բոլորովին խաւարում է կրօնական ու ցեղային խթանների, կոյր ու նախապաշարւած ֆանատիկոսութեան ուրագանի մէջ... Կայ, վերջապէս, նացիօնալիզմ և նացիօնալիզմ։ Պէտք է զանազանել յարձակողական ու բռնաւոր նացիօնալիզմը այն ինքնապաշտպան նացիօնալիզմից ու հայրենասիրութիւնից, որ իւրաքանչիւր մարդկային համայնքի անբռնաբարելի սեփականութիւնն է ու իրաւունքը, որ բնորոշում է մասնաւորապէս փոքրիկ, ճնշւած ազգութիւններին։

Փոքր ազգերը ամենուրեք հզօր ու կատաղի նախանձախնդրութեամբ հաստատում են իրենց դիրքը Արեգակի տակ, պահպանում են իրենց ուրոյն կերպարանքը, իրենց լեզուն ու հաւաքական ստացւածքները։ Հրէութեան պէս ցիր-ցան ու տարագիր, լքւած ու հալածական համայնքն անգամ Ռուսաստանում ու այլ վայրերում յամառ տոկունութեամբ մաքառում է „ձուլման“ բռնաւոր ախորժակների դէմ և ընթանում է դէպի ազգային ինքնօրինութիւն, եթէ ոչ հողային

ու քաղաքական, գէթ կուլտուրական ինքնօրինութիւն։

Աւելի ուշագրաւ մի երեւոյթ։ Ազգային գաղափարը տօնում է այսօր իր հանդիսաւոր զարթնումը եւրոպական ցամաքից հեռու, տօնում է անգամ այնպիսի ժողովուրդների մէջ, որոնք դեռ գրեթէ նոր են սկսում ունենալ իրենց պատմութիւնը, որոնք մինչեւ օրս եղել են սոսկ կրօնական համայնքներ։ Նա շեշտւում է հզօրապէս վերածնւող Ցաճկաստանում, եւ — աւելի ուշագրաւը — նա ուժգին արձագանքում է անգամ աշխարհի ամենաազատ կայսրութեան՝ Մեծ Բրիտանիայի գաղութներում ու հովանաւորեալ երկրների մէջ — Հնդկաստանում, Եգիպտոսում։ Անգլիական ազատ հռչակւած րէժիմն անգամ չի աջողում ձուլել, „մարսել" հպատակ ցեղերին... Ազգայնական շարժումը ծայր է տւել երկու յիշեալ երկրներում — արաբների ու հնդիկների մէջ — եւ արդէն իսկ լուրջ մտահոգութիւն է պատճառում „ծովերի միահեծան Թագուհուն"։ Երիտասարդ հնդիկները նետւում են տերրօրական կարմիր ճանապարհը եւ անցեալ տարի նրանց մոլեռանդ, գաղափարական ռահվիրաներից մինը, ուսանող Թինգրա, Լօնդօնում օր ցերեկով գետին փռեց Հնդկաստանի վարչութեան անդամներից մէկին, հռչակելով իր այդ մահափորձը, որպէս հնդկական հայրենասիրութեան անխուսափելի ու սուրբ բռնկում...

Ահա փաստեր, մինը միւսից ուշագրաւ, մինը միւսից հրահանգիչ եւ ուսանելի։ Ազգային գաղափարը, կատարելով իր դարաւոր, հոյակապ թափօրը պատմութեան մէջ, այսօր դեռ բնաւ տրամադիր չէ իջնելու կեանքի բեմից։ Ընդհակառակը։ Մերթ կատաղօրէն յարձակողական, մերթ համրօրէն պաշտպանողական, նա շարունակում է յուզել ամենուրեք հասարակական գիտակցութիւնը եւ մտատանջել դիպլօմատներին, քաղաքագէտներին։

Նա վարակում է ինտելիգենտ, խուզարկու միտքը, նոյնիսկ այնպիսի միջավայրերում, ուր երկար ժամանակ տիրել է անտարբերութիւն ազգայնական վէճերի շուրջը, ուր վաղուց ի վեր առաջադիմական բանակների մէջ չի լսւել նացիօնալիզմի ու ազգային գերիշխանութեան նշանաբանը։

Այդպէս—Ռուսաստանում։ Ռուս առաջադէմ մտաւորականութիւնը մինչև օրս սիրում էր անւանել ինք-զինքը ապազգայնական, anational, այսինքն անտարբեր ազգային հարցերում։ Այսօր սակայն կատարւում է նրա մէջ մի նշանակալի շրջումն։ Իրօք, դա բնաւ անակնկալ չէր, միայն թէ մեր օրերում և Ռուսաստանի քաղաքական հիւանդոտ մթնոլորտում, „ազգայնական" այդ volte-face-ը կատարւում է փոքր ինչ վայրագ, անսպասելի ձևով։ Մինչ հոկտեմբերեան պահպանողականներ և կադետներ ձեռք ձեռքի տւած, պանգերմանիզմի սրարշաւ առաջադիմութեան հանդէպ՝ դուրս են կոչում 40-ական թւականների Ակսակօվեան պ ա ն ս լ ա վ ի զ մ ը (համասլաւօնութիւն) „նէօսլավիզմ" անւան տակ—նախկին մարքսիստ ու սօցիալ-դեմօկրատ Պեօտր Ս տ ր ո ւ վ է իր մի քանի համհարզների հետ արծարծում է եռանդով „իշխող տարրի" (ռուսականութեան) առանձնայատուկ իրաւունքները, խօսում է „ազգային դէմքի" ու „ինքնակալ ազգութեան" մասին (державная нація) և ուզում է վերադարձնել ռուս ինտելիգենցիան դէպի Պուշկինի ժամանակները, երբ համբաւաւոր ժողովրդական բանաստեղծը Լեհաստանի ազատագրական ու անջատական ձգտումների հանդէպ յօրինում էր իր թունոտ ու շանթոտ, ազգայնամոլ ոտանաւորը· „О чемъ шумите вы, народные витіи?"։

Ստրուվէ և իր թիկնապահները, յեղափոխութեան վիժման ծանր վայրկեաններում, ընդհանուր լքման ու

յօգնածութեան մի արտասուելի շրջանում, ուրիշ, լաւագոյն ելք չեն գտնում այդ զարհուրելի մթնոլորտից, բայց եթէ վառել ցեղային բիրտ շօվինիզմը, բայց եթէ խօսել ազգերի „վանողական“ բնազդների մասին, չեշտել ռուսական „ազգային դէմքը“, որ ոչ ոք չի փորձել ոտնահարելու, արծարծել ինքնակալ, վելիկօրուսեան նացիօնալիզմը՝ ընդդէմ հրէական ու այլ նացիօնալիզմի երևակայական ոտնձգութիւնների...

Այդպէս է „ազգային իրականութիւնը“։ Նա անդրադառնում է ամենուրեք մտածող գլուխների մէջ և նայեած տեղին ու հանգամանքներին, նայեած դասակարգին ու ազգայնական խառնուածքներին՝ այդ իրականութիւնը ծնում է որոշ իդէօլօգիա, գաղափարաբանութիւն, ծնում է այլազան քաղաքա-հասարակական հոսանքներ։

Մի կողմից ահա **հերվէիզմը**, որ մարմնացնում է բուն **ապազգային** հոսանքը (*anationalisme*), որ կղզիացած իր Ֆրանսիական հայրենիքի մէջ՝ կամենում է իր **հակապատրիօտ** ու **հակամիլիտարական** ուղղութեամբ կանգնել որպէս մի տեսակ պատուար, հակակշիռ բուրժուա-կապիտալիստական գիշատիչ նացիօնալիզմի դէմ. Նա ժխտում է բացարձակապէս ազգի ու հայրենիքի գաղափարը, համարում է այն նախապաշարմունք ու բուրժուական մի յղացում, յայտարարում է, որ նոյնիսկ վտանգի, նոյնիսկ արտաքին նուաճողական արշաւանքի հանդէպ՝ բանուոր ընդհանրութիւնը չը պիտի պաշտպանէ այդ հայրենիքը...

Միւս կողմից ահա՝ այդ հիւանդոտ ծայրայեղութեան անտիպօդը, նրա հակադիր բևեռը, բուն ագրէսիւ, աշխարհակալող ցեղա-ազգայնական շօվինիզմը, որ յորջորջւում է տարբեր տեղերում տարբեր անուններով—

պանգերմանիզմ (համագերմանականութիւն),
պանբրիտանիզմ, պանամերիկանիզմ,
պանսլավիզմ, պանիսլամիզմ — տոգորուած
ամենքն էլ իրենց յատուկ ցեղային, ազգայնական կամ
կրօնական տիրապետութեան տենչանքներով։

Միւս կողմից՝ մեր առջև պարզւում են մի շարք
աւելի մանր ազգայնական հոսանքներ — սիօնիզմ,
պանարմենիզմ, պանհելլենիզմ, պան-
պօլօնիզմ և այլն — որոնց պէտք է զանազանել
առաջիններից, որոնք իբրև էապէս պաշտպանողա-
կան հոսանքներ, չեն տարուած առհասարակ նուաճո-
ղական բռնաւոր ախորժակներով, չեն ուզում ոտնա-
հարել որևէ ազգի նւիրական իրաւունքները, այլ ձգ-
տում են ապահովել — թէկուզ և տարբեր պետու-
թիւնների սահմաններում — հարազատ ազգակիցների
ֆիզիքական յարատևութիւնը, նրանց քաղաքական ու
կուլտուրական զարգացումն ու բարգաւաճումը։

Միւս կողմից, վերջապէս, կայ հզօր ու իրօք համաշ-
խարհային հոսանքը — Սօցիալիստական Ինտերնացիօնալը,
որ միջազգայնական իր դաւանանքով կոչուած է
միակ ու լաւագոյն լուծումը տալու ազգային չարա-
տանջ ու բարդ հանգոյցին... Բայց այդտեղ ևս ազգային
գաղափարը չի լուծւում ծոյլ ու անգոյն կօսմօպօլի-
տիզմի մէջ։ Ամենևին։ Սօցիալիզմի քարոզածը ազգայ-
նական վէճերի մէջ այլ ևս նախկին „անմիս ու անա-
րիւն ինտերնացիօնալիզմը չէ“ — ըստ Պերներստօրֆերի
արտայայտութեան — որ ոգևորում էր „Կօմմունիստա-
կան Մանիֆէստի“ հեղինակներին և նոյնիսկ 80-ական
թւականների սօցիալիստներին։

Անցան այն ժամանակները, երբ սօցիալիստական
ֆրազաբանութեան մէջ հոլովւում էին շարունակ „բան-
ւորները հայրենիք չունին“ և նման պարապ ֆօրմուլ-

ները։ Կեանքը ճզմեց նրանց իր երկաթէ տրամաբանութեան տակ և այսօր աշխարհի բոլոր սօցիալիստ կուսակցութիւնների ծրագիրներում ու տակտիկի մէջ չեշտւում է առողջ ազգայնութեան դաւանանքը։

Այդ հոսանքներից որի՞ն ենք յարում մենք։ Ի՞նչ է մեր դիրքը ազգային ցաւոտ, դժուարակնճիռ պրօբլեմի դիմաց։

Մեր „ազգային գանգատի“ նիւթը էապէս նոյնն է երեք պետական միջավայրերում։ Ամեն տեղ իշխող տարրը ձգտում է գործադրել մեր վերաբերմամբ՝ յաղթողի, աշխարհակալողի խստապահանջ իրաւունքը, ձգտում է ստորադրել, ենթարկել մեզ, ինչպէս և բոլոր ուրիշ այլացեղ տարրերին, իր ճնշող „խնամակալութեան“ ու հեգեմօնիային։ Ամեն տեղ — այդ ստորադրումն ու ձուլումը առաջ բերելու նպատակով — նա հաստատում է՝ նոյնիսկ ի դէմս իր երիտասարդ, վերանորոգիչ թևերի՝ ուժեղ, կենտրօնական (*centraliste*) պետակազմ, իր, իշխողի, միահեծան, անմրցակից ղեկավարութեամբ։ Հայ ազգային կացութիւնը նոյնքան կնճռոտ ու մտատանջող է սահմանադրական Թիւրքիայում, որքան և կիսաբռնապետական Ռուսաստանում, կիսանիշխանական Իրանում։

Իրաւական տեսակէտից, անտարակոյս, ամենից աւելի նպաստաւորուած ենք Թիւրքիայում, ուր վայելում ենք նաև ներքին, մասնաւոր, կուլտուրական սահմանադրութիւն—մի բան, որ իդէալ է ռուսահայերի համար։

Բայց մենք տեսանք արդէն նախորդ էջերի մէջ, թէ որքան ուժեղ է ձ ո ւ լ մ ա ն տ ե ն չ ը „Երիտասարդ Թիւրքիայի“ մէջ, մենք բնորոշեցինք համառօտակի „պանթիւրքութեան“ վտանգը։

Ամեն տեղ,—և չը նայեած իրենց իսկ յարուցած ռամկավարական նշանաբանների ժխորին — յաղթող

տարրը բռնաբարում է պատմական իրականութիւնը, էվոլյուցիայի օրէնքները և տենդային ճիգ է թափում—ապարդիւն, բարբարոսաբար—ստեղծելու միաձոյլ, համատարր (homogène) „ազգային պետութիւն“, ի տեղի այլատարր „ազգերի պետութեան“, լուծելու բոլոր ազգայնական տարբերութիւնները միևնոյն տիրապետող ցեղային զանգուածի մէջ։ Այդպէս է դառում „Միլլէթի Հեքիմիէ“-ի թէօրիան։ Յուլիսեան օրերից ի վեր նա բազմիցս ցուցադրուեց ու հռչակուեց... վերածել բոլոր ոչ-թիւրք ազգութիւնները սոսկ կրօնական համայնքների („գրիգորեան“, „ուղղափառ“ ևլն) և ճանաչել ամենուրեք մէկ ազգ միայն—տաճկութիւնը... Այսպէս է փիլիսոփայում այդ զարմանալի թէօրիան, մոռանալով, որ հէնց ինքը, այդ „տիրապետող ցեղը“, այդ „Միլլէթի Հեքիմիէն“ գերազանցապէս կրօնական մի համայնք է, որ դեռ նոր է ոտք դնում համաշխարհային քաղաքակրթական տաճարի շէմքի վրա, որ դեռ նոր է սկսում ունենալ իր պատմութիւնն ու կուլտուրան — ամենաամուր խարիսխը ազգայնութեան գաղափարի։ Այդպէս էր փիլիսոփայում Ֆէրիդ փաշան, երբ, իբրև ներքին գործոց նախարար, թելադրում էր պարլամենտին՝ քուէարկել ընկերակցութիւնների վերաբերեալ տխրահռչակ 4-րդ յօդուածը։ Նա պահանջում էր արգելել հայ, բուլգար, յոյն, արաբ, ալբան, քիւրդ և այլն քաղաքական կազմակերպութիւնները, յանուն „Օսմանեան Ազգային Միութեան“... և նա օրինակ էր բերում Ֆրանսիային... որ պարզ ապացոյց էր, թէ ինչպէս մակերեսային ու շօվէն պօլիտիկօսները ձգտում են, յիրաւի, ջնջել, հարթել ցեղական բոլոր տարբերութիւնները... և ստեղծագործել Տաճկաստանից մի նոր Ֆրանսիա...

Այդ ձգտումը—հարկ կա՞յ շեշտելու—դատապարտւած է յաւէտ մնալու ուտօպիաների, անհող ցնորքների աշխարհում։ Թիւրքիան — ինչպէս նաև Ռուսաստանը, Իրանը — „ազգային պետութիւն“ չէ (*Nationalstaat*), այլ նա է և կը մնայ միշտ „ազգերի պետութիւն“ (*Nationalitätenstaat*)։ Նա պատկանում է աւստրիական տիպին, ոչ ֆրանսիականին, իտալականին։ Իսկ Աւստրիան կլասսիկ երկիրն է ազգայնական բաղխումների։ Կռիւը իր բոլոր աւերիչ արտայայտութիւններով, ազգային կռիւը մի տեսակ բնականոն վիճակ է այդտեղ և ոչ մէկը ցեղագրական միութիւններից չի ուզում մի նշանախեց անգամ զիջել սեփական իրաւունքներից։

Թիւրքիան—Աւստրիա էլ չէ։ Աւստրիական պետութիւնը կազմող ազգերը ունեցել են մի յայտնի չափով ընդհանուր պատմութիւն, այն մեծ գործօնը, որ քաղաքական բարեյաջող պայմանների հետ՝ երբեմն—օրինակ Հելվեցիայում—կառուցանում է այլազան տարրերից մի ներդաշնակ, ամբողջական ազգ ու հայրենիք... Աւստրիան կազմող ազգութիւնները ունեցել են պատմութեան մէջ համերաշխ գործակցութեան յիշատակելի վայրկեաններ, ուր ճաշակել են ձախորդութեան ու դառնութեան հետ՝ նաև աջողութիւն ու բերկրանք։ Հաբսբուրգեան միապետութեան դրօշակի տակ միացած՝ քանի՛ անգամ այդ այլատարր ազգութիւնները թումբ են կանգնել արևելքից գահավիժող բարբարոսութեան յորձանքների դէմ... Այնուամենայնիւ, Աւստրիան միշտ մնաց տարբեր, հակամարտ ժողովուրդների մի արհեստական հաւաքոյթ, մի կօնգլօմերատ. Նա չը դարձաւ ներդաշնակ ու միաձոյլ մի զանգւած. „աւստրիացի“ արտայայտութիւնը չեղաւ երբէք որևէ „ազգութեան“ անուն, տիտղոս, այլ իւրաքանչիւրը այդ

ցեղագրական Բաբելոնի անդամներից շարունակեց կոչել ինքզինքը իր ուրոյն ծագման անունով, — գերմանացի, լեհ, չեխ, ռուսին եւայլն։ Չը կայ „աւստրիական ազգութիւն“ — նա մի պատրանք է։ Կան միայն աւստրիական „ազգութիւններ“...

Գալիցիայի լեհը իր բովանդակ էութեամբ կապւած է մնում Վարշաւայի ու Պօզնանի լեհերի հետ, մինչդեռ նրա կապն ու ազգակցութիւնը աւստրիական միւս ազգերի հետ, որքան էլ նա ամրապնդւի կուլտուրայի առաջադիմութեան ընթացքում, մնալու է միշտ համեմատաբար աւելի թոյլ, մակերեսային։ Նոյն Գալիցիայի ռուսինը շատ աւելի մօտ է զգում իրան Ռուսաստանի, Ուկրայնայի մալօրոսներին, որոնց հետ նա նոյնպէս կապւած է պատմական անխախտելի կապերով։ Նոյն ուժերի տրամաբանութեամբ՝ գերմանական տարրը (Աւստրիայում) ձգտում է միշտ դէպի Մայր-Գերմանիան, որի հետ նա բաժանում է ընդհանուր ու մայրենի լեզուն և ազգային ճոխ գրականութեան ու քաղաքակրթութեան գանձեր։ Նոյն բնազդական հայրենակցական ձգտումը մղում է միշտ հարաւային սլաւօններին դէպի Սերբիա և Տրենտի ու Տրիեստի իտալացուն՝ դէպի Մայր-Իտալիա...

Ոչ մի ուժ չի կարող խաթարել այդ հզօր, տիրական բնազդը։ Ժողովուրդներին շաղկապողը աւելի հոգեւոր գանձերն են, քան սոսկ նիւթական քաղաքակրթութիւնը, և որքան էլ Աւստրիան զարգանայ, առաջադիմէ, որքան էլ կուլտուրայի ու միջազգայնական հոսանքների ազդեցութեան տակ աճի ազգերի փոխադարձ համերաշխութիւնը, երբէք, այնուամենայնիւ, այդ երկիրը չի կազմելու միաձոյլ, միապաղաղ մի ազգութիւն։ Լեհը միշտ մնալու է լեհ, կապւած աւելի ուժեղ կապերով միւս

երկրների իր հարազատների հետ, իտալացին մնալու է միշտ իտալացի, ռուսինը՝ ռուսին և չեխը՝ չեխ։

Եթէ այդպէս է ճակատագիրը աւստրիական միապետութեան—ուր, կրկնում ենք, տարբեր ցեղերը պատմական յայտնի վայրկեաններում ապրել են ընդհանուր ցաւերով, յետ են մղել ընդհանուր, աշխարհաւեր ոսոխներին, մշակել են կուլտուրական մի որոշ համայնակենցաղ, — եթէ այդ երկրում տակաւին խօսք չի կարող լինել մի միաձոյլ ազգային զանգւածի, „աւստրիական ազգութեան“ մասին — ապա ևս առաւել Տաճկաստանում, ուր պատմութիւնը, տարաբախտաբար, ոչ թէ չի միացրել այլազան ազգութիւններին որևէ ընդհանուր, քաղաքակրթական դատի շուրջը, այլ ընդհակառակը, միշտ բաժանել է, պառակտել, միշտ ատելութեան ու թշնամութեան որոմ է ցանել ազգերի միջև... Նոյնը, կարելի է ասել—Ռուսաստանում, նոյնը—Իրանում։

Այդտեղ է մեր երկրի դժբախտութիւնը։ Յուսահատուելու պէտք չը կայ, ի հարկէ. ազգերի համերաշխութիւնը մի օր, անշուշտ, կը դառնայ այդտեղ ևս կենդանի իրականութիւն, բայց մի բան, որ երբէք չի իրականանայ,—դա ազգերի ձ ո ւ լ ո ւ մ ն է, նրանց կլանումը (assimilation) տիրապետող ցեղագրական օրգանիզմի մէջ։ Հայը միշտ կը մնայ հայ, յոյնը միշտ յոյն, իր լեզւով ու ազգային ուրոյն քաղաքակրթութեամբ։ Եւ ինչպէս որ Գալիցիայի լեհը ձգողական մի անյաղթելի զօրութեամբ մղւում է միշտ դէպի սահմանի միւս կողմը գտնւող հարազատները, առանց անպատճառ հետապնդելու լեհական „սեպարատիզմի“, անջատման ու անկախութեան, — այնպէս և Թիւրքահայը, ապրելով հանդերձ բրդի, տաճկի հետ մէկ օճախի մէջ, մէկ ընդհանուր պետականութեան հովանիի տակ

և մի ներդաշնակ քաղաքական-հասարակական համակենցաղով, մղելով հանդերձ այդ ընդհանուր պետական իրաւակարգը դէպի աստիճանական կատարելագործում, դէպի ճշմարիտ ռամկավարութիւն, պիտի շարունակէ կապւած մնալ կովկասեան ու այլ երկրների հ ա յ ո ւ թ ե ա ն հետ աւելի ուժեղ, աւելի շեշտւած ազգակցական ու հայրենակցական շղթաներով, — շղթաներ, որոնք իրենց արիւնակուռ զանգւածի մէջ խտացնում են մի ահագին, բազմադարեայ պատմութիւն և մի սրտառուչ, արտասւացող դիւցազներգութիւն...

***

Ի՞նչ վիճակում է մեր ազգային հարցը Ռուսաստանում ու Թիւրքիայում։ Ի՞նչ ենք վաստակել Ցեղափոխութեան վերիվայրումներից. ի՞նչ է պակասում և ինչի՞ ենք ձգտում։

Նախ — Ռ ո ւ ս ա ս տ ա ն ո ւ մ։

Ազգային կնճիռը, բնականաբար, սերտ կերպով կապւած է ընդհանուր քաղաքական, համապետական յեղաշրջման հետ։ Որքա՞ն խոր է այդ յեղաշրջումը։ Որտե՞ղ է կանգ առել ազատագրական շարժման անիւը։ Անկարելի է գէթ թռուցիկ մի ակնարկ չը ձգել մեր անցած ճանապարհի վրայ, Ռուսաստանի մէջ, եթէ մանաւանդ, ուզում ենք օգտւել անցեալի դասերից և ըստ այնմ տնօրինել մեր գալոց ազգային ու կուսակցական քաղաքականութիւնը։

Ի՞նչ տւեց համառուսական մեծ փոթորիկը և ի՞նչ է ներկայացնում այսօրւան Ռուսաստանը։ Ճակատագրի քմահաճ խաղերից մէկն է, անշուշտ, քաղաքական այն ցայտուն հակադրութիւնը, որ կայ այսօր Ռուսաստանի և Թիւրքիայի միջև։ Բախտի բերմամբ՝ վերջինը կան-

խեց առաջինին։ Ասում ենք՝ „բախտի բերմամբ", որովհետև կուլտուրական առաջադիմութեան տեսակէտից, մտաւոր ու յեղափոխական (ընդհանուր մտքով՝ յեղափոխական) ուժերի կողմից՝ տարբերութիւնը ահագին է երկու երկրների միջև։ Եթէ ճիշտ լինէր ֆրանսիական յայտնի ասացւածքը՝ „*les peuples ont les gouvernements qu'ils méritent*" (ամեն մի ժողովուրդ ունի այն կառավարութիւնը, որին արժանի է),—ապա Ռուսաստանը, որի զարգացման ընդհանուր մակարդակը շատ աւելի բարձր է և որի յեղափոխական շարժումը զինւորական խլրտումների ձևով սկսել է դեռ մօտ 100 տարի սրանից առաջ, պէտք էր Թիւրքիայից շատ առաջ վայելէր սահմանադրական կառավարութիւն։ Այսօր, սակայն, հակառակն ենք տեսնում, և մինչդեռ Բալկաններում ու Փոքր Ասիայում քաղաքակրթութեան դրօշակին նոր միայն փարող Թիւրք, քիւրդ, ալբան ու այլ կիսանօմադ, թափառական ժողովուրդներն ունին արդէն նորագոյն ձևի պարլամենտական կարգեր և իրենց ուզածին պէս տապալում են անպատշաճ ու անհնազանդ կառավարութիւններին, ասդին՝ հարիւր միլիօնաւոր զանգւածը ֆիննական ապառաժներից մինչև Լեհաստանի հովիտներն ու Կովկասեան լեռնաշղթան՝ դեռ գալարւում է աշխարհի մէջ այլ ևս եզակի բռնակալութեան ճիրաններում։ Չենք ուզում, հարկաւ, որոշ մարդատեաց գիտունների, դիպլօմատների պէս անարժան հռչակել թշւառ, յետամնաց մարդկային համախմբութիւնները՝ ազատութեան ու արդարութեան կարգերի համար։ Թիւրքիոյ ժողովուրդները ևս, անշուշտ, ինչպէս երկրագնդի բոլոր ուրիշ ժողովուրդները վաղուց արժանի են այդպիսի կարգերի... Ո՞ւր արդեօք աշխատաւոր ընդհանրութիւնը իր դարաւոր տառապանքներով, իր անբաւ, ցաւոտ զոհաբերութիւն-

ներով չի արժանացել աւելի բարւոք, մարդավայել մի ճակատագրի… Սակայն, մի կողմից այդ ընդհանրութեան տգիտութիւնը, միւս կողմից իշխող դասակարգերի բազմադարեայ ժառանգական յաւակնութիւնները, բռնաւորների „աստուածային ծագման“ դաւանանքը, կրօնի ու կղերի շահախնդիր կողմնակցութիւնը բռնաւորներին և մի շարք ուրիշ ձախորդ, աղէտաւոր գործօններ՝ ձգտել են ամենուրեք յաւերժացնել կեղեքման ու հարստահարութեան ռէժիմը, բռնադրել են ամենուրեք հալալ, ազնիւ աշխատանքի բազմամիլիոն լէգէոններին անարժան կառավարութիւնների կամքն ու քմահաճոյքը… մինչև որ հանգամանքներից նպաստաւորւած, պատմական գիտակից փոքրամասնութիւնը գործօն կերպով հրապարակ է իջել և արիւնոտ կամ անարիւն ըմբոստացումով յետ է խլել ոտնահարւած իրաւունքը, հաստատել է վերջապէս գէթ մօտաւոր հաւասարակշռութիւն, գէթ մօտաւոր նմանութիւն կառավարութեան ու ժողովրդի միջև…

Թիւրքիայում այդ փոքրամասնութիւնը ասպարէզ եկաւ զրահապատ լէգէոններով—և յաղթեց։

Ռուսաստանում նոյն պատմական փոքրամասնութիւնը, աւելի ստւար ու գաղափարական, կրկէս նետւեց մերկ կուրծքերով ու անպաշտպան բազուկներով— և խորտակւեց։

Ա՜հ, անշուշտ, բազմաթիւ ու բազմազան են պատճառները այդ ցաւագին պարտութեան—և նրանք միմիայն ներքին կարգի պատճառներ չեն, այլև արտաքին… Ինչպէս որ ռուսական Յեղափոխութեան ծագման կամ, աւելի ճիշտ, բողբոջման պրօցէսի մէջ առաջնակարգ դեր խաղաց դրսի հզօր ազդակը—եապօնական ջախջախիչ գրոհը—այնպէս և Յեղափոխութեան վիժման մէջ ահագին դեր ունեցաւ

դարձեալ զուտ արտաքին մի ոյժ — եւրոպական կապիտալիզմը, որ ցարիզմի հոգեվարքի օրերում բաց արեց նրա առջև իր գանձերի դուռը և առատաձեռն փոխառութիւններով հնարաւորութիւն տուեց նրան՝ վերստին տիրանալու կացութեանը և խեղդելու մահառիթ շարժումը:

Այնուամենայնիւ, թւում է թէ ներքին պատճառը վճռական էր... Շարժումը ինքը, որքան էլ հոյակապ ու ծաւալուն, որքան էլ ջինջ, գաղափարական, տառապում էր, այնուամենայնիւ, ներքին խորունկ պատուհասներով: Նա շշմեցրեց հակառակորդին անակնկալ ու հսկայածաւալ ժայթքումներով, բայց ուժ չունեցաւ գետին փռելու, շնչահեղձ անելու այդ հակառակորդին: Նա անդամալուծեց վայրկենաբար պետութեան ամբողջ մեխանիզմը, խլեց մի շարք իրաւունքներ ու ազատութիւններ, բայց ուժ չունեցաւ նոյնիսկ ամիսներ պահպանելու նրանց: Նա ցոյց տուեց սօցիալական ու գաղափարային ճոխ, անսովոր պարունակութիւն—որպիսին չէր տեսել արևմտեան երկրների յեղափոխական ոչ մի շարժում—բայց նա չունեցաւ, տարաբախտաբար, բուն մարտական պարունակութիւն...

Այսօր կոչւած և անկոչ քննադատներ նզովքի ու ցասման մի անասելի ժխորի մէջ՝ շպրտում են ռուս մարտնչող ինտելիգենցիայի հասցէին այն միակերպ մեղադրանքը՝ թէ նա գերազանցապէս քանդող մի ուժ է, թէ նա զինւած է միայն աւերելու զէնքերով *): Սակայն, իրողութիւնն այն է, որ ռուսական

*) Հռչակաւոր „Вѣхи" գրեթէ բոլոր խմբագիրների քննադատական մարզանքների մէջ շեշտւում է այդ մեծ մեղադրանքը, ի շարս ուրիշ մեղադրանքների, որոնք ձեւակերպւում են „անկրօնութիւն", „հակապետականութիւն", „հակազգայնութիւն" եւայլն բառերով:

ինտելիգենցիային, ինչպէս և ամբողջ պայքարող ռուս ընդհանրութեանը — պրօլետարիատին, գիւղացիութեանը, բուրժուազիային — համեմատաբար շատ քիչ են տուած այդ ա ւ ե ր մ ա ն բնազդները, ռօբեսպիէռական ու դանտօնային հոգեբանութիւնն ու զէնքերը. իրողութիւնն այն է, որ ռուս յեղափոխութեան դպրոցը — չնչին բացառութիւններով, որոնք խաւարում, անհետանում են նորմալ կացութեան անմխիթար անապատի մէջ — որ այդ դպրոցը մի տեսակ ֆատալ շեղումով համաշխարհային յեղափոխական դպրոցից՝ տասնեակ տարիներ շարունակ սնուցել, մշակել ու մարզել է իր վաշտերը տարբեր, առանձնայատուկ ոգով, մեթօդով, պատրաստել է նրանց ոչ թէ հակաբռնապետական արիւնոտ ու զանգուածային գրոհների համար — որոնք ամենուրեք խոնարհեցրել են տիրանններին վառօդի խեղդիչ մառախուղի, բարրիկադային սպառազէն ճակատամարտների մէջ — այլ պատրաստել են էապէս այնպիսի կռիւների համար, որոնք մղւում են մեր օրերում արևմտեան սահմանադրական երկրների մէջ՝ ընդդէմ կ ա պ ի տ ա լ ի զ մ ի ու բուրժուազիայի տիրապետութեան։

Յեղափոխական դաստիարակութեան այդ տարամերժ մեթօդը աշխարհի ամենահզօր ու ամենակուռ բռնապետութեան դիմաց թւում էր մի տեսակ ժամանակավրէպ, անախրօնիզմ, և նա մատնեց իր արտասւելի անզօրութիւնը՝ անգամ ցարիզմի օրհասի միջոցին, անգամ դժբախտ պատերազմի յարուցած ահագնադղորդ ու մահացու տագնապի ընթացքում... Որովհետև վ ճ ռ ա կ ա ն ճ ա կ ա տ ա մ ա ր տ ն ե ր ի վայրկեաններին՝ նա, այդ մեթօդը, դատապարտւած մնաց հակադրելու սւինների անտառներին՝ լոկ իր անզէն, անպատրաստ, կրաւորական լէգէօնները...

Անշէն վաշտեր ու ցոյցեր՝ թէ բռնապետական կառավարութեան դէմ և թէ պօգրօմային, վանդէական արշաւանքների դէմ...

Կրկնում ենք, մի շարք սպօրադիկ զինուած ընդհարումները—Մօսկուա, Կրօնշտադտ և այլն—որքան էլ փայլուն, հերոսական, չեն կարող մխիթարել... Նրանք մթնում են հարիւր միլիօնաւոր ժողովրդի պաղ համակերպութեան ծոցում՝ նրանք թւում են մանկական խաղ՝ հսկայ բռնապետութեան զրահաւորուած թափերի հանդէպ...

Այդպէս էր զուտ գործօն, յեղափոխական բանակը՝ իր ջախջախիչ մեծամասնութեամբ։

Իսկ օժանդակ գործօննե՞րը...

Դարձեալ մի մեծ հարցական նշան։ Դարձեալ մի ինքնատիպ, Ռուսաստանին միայն յատուկ երևոյթ։

Օժանդակ գործօնը—բուրժուազիան էր։ Եւ նա սկզբում որոշ ժամանակ—նոյնիսկ խոշոր արդիւնաբերող բուրժուազիան—ուժեղ պատւար եղաւ յեղափոխութեան, զեմստվօների պատմական նիստերի միջոցին, մամուլի ու հրապարակական ժողովների մէջ՝ նա հանդէս եկաւ իր խիստ ու արմատական պահանջներով։

Սակայն, հետզհետէ նա պաղեց, շարժման կէսճանապարհին լքեց գործօն բանակը և մեծ մասամբ նետուեց ռէակցիայի գիրկը։ Եւ վերջինը, քաջալերուած, արագ-արագ ամրապնդեց իր դիրքերը, յաղթանակեց..

Ոչ մի ուրիշ երկրում, քաղաքական, ազատագրական բախումների միջոցին չէր տեսնուած այդքան վայրագ ու դաւաճան դիմադրութիւն, այդքան աղաղակող հակասութիւններ՝ դիմադրական բանակի ծոցում։

Բուրժուազիան ղեկավարող ու վճռական դեր է խաղացել Եւրոպայի բոլոր քաղաքական յեղափոխութիւն-

ների մէջ։ Եւ դա հասկանալի է, քանի որ — առ ի չգոյէ աշխատաւոր ժողովրդի գիտակցական, սոցիալիստական պատրաստութեան — բոլոր այդ քաղաքական յեղափոխութիւնները եղել են և պէտք է լինէին՝ էապէս բուրժուազական։ Նրանց յաղթանակը պէտք է լինէր յաղթանակ բուրժուազիայի, փողի ու արդիւնաբերութեան, մտքի ու ազդեցութեան դասակարգի։ Նրա ձեռքն է, որ պիտի փոխադրուէր քաղաքական իշխանութիւնը։ Աւատապետական և բռնապետական կարգերի դէմ մղուած կռւի մէջ՝ ամենուրեք այդ բուրժուազիան ընթացել է թև թևի տուած աշխատաւոր զանգուածների, բոլոր դիմադրական, յեղափոխական տարրերի հետ։

Բուրժուազական պէտք է լինէր իր անմիջական հետևանքներով *) նաև Ռուսաստանի յեղափոխութիւնը։ Փողի ու արդիւնաբերութեան դասակարգը այստեղ ևս, թէև համեմատաբար թոյլ ու անազդեցիկ, պիտի խաղար առաջնակարգ դեր, պիտի պայքարէր մինչև վերջ, աշխատաւոր ժողովրդի ու յեղափոխական մտաւորականութեան հետ ժամանակաւորապէս դաշնակցած։ Որովհետև, ինչպէս բոլոր միւս երկրներում, համապատասխան շրջանների մէջ, այստեղ ևս, Ռուսաստանում, ֆէօդալական, բռնապետական կարգերը կաշկանդում են արդիւնաբերական ուժերի ազատ, նորմալ զարգացումը, — և իբրև այդ օբ՛եկտիվ, առարկայական կացութիւնն իսկ պիտի մղէր բնականօրէն արդիւնաբերող դասակարգին դէպի օպպօզիցիա, դիմադրութիւն, կռիւ... Այդպէս գիտէին ամենքը և ամենից առաջ ինքը բուրժուազիան։ Ահա թէ ինչու նա սկզբ-

*) Իշխանութիւնը այստեղ ևս պիտի փոխադրուէր ոստիկան-աւատապետական կամարիլլայի ձեռքից՝ բուրժուազիայի ձեռքը։

ներում այնքան վճռական հանդիսացաւ, այնքան ուժեղ աջակցութիւն ցոյց տուեց բուն յեղափոխական բանակին, մի աջակցութիւն, որ մեծապէս նպաստեց հոկտեմբերեան շարժման ժամանակաւոր յաղթանակին (1905 թ.)։

Բայց եղաւ այնպէս, որ ռուսական խոշոր բուրժուազիան մէկէն իմէկ, կէս ճամբուն, լքեց իր սեփական, հարազատ դատը և անցաւ թշնամու կողմը։ Եւ այդ ճակատագրական նահանջը իր ուժգին անդրադարձումն ունեցաւ Յեղափոխութեան անդրագոյն զարգացման ու վախճանի վրայ։ Յետ նահանջեց բուրժուազիան—խոշորը, մասամբ և մանրը—որովհետև տեսաւ, թէ ինչպէս օրըստօրէ պարզւում, ծաւալւում էր ռուսական շարժման սօցիալական բնոյթը, և ծառանում էր իր առջև պրօլետարական դիկտատօրութեան կարմիր ուրուականը... Մի ուրուական, որ այնքան ահաւոր էր փողատէր ու արտօնատէր բուրժուազիայի համար, որքան բուն իսկ բռնապետութեան համար։

Հակաբռնապետական կռիւը Յեղափոխութեան լայնածաւալ դրօշակի տակ փոխարկւեց հակակապիտալիստական կռւի։ Պրօլետարիատ դաշնակիցն էր առել իր վրայ յեղափոխութեան ճակատագրի ղեկավարութիւնը և շարժման ամենատաք վայրկեաններում անողոք հարւածներ էր տեղում միաժամանակ իր անմիջական դասակարգային հակառակորդի—բուրժուազիայի դէմ... Վերջինը, աշխատաւորական դիկտատօրութեան հեռապատկերից սարսափած, մտածեց, որ լաւագոյն է՝ փարել նորէն հին կարգերին, միահեծան կառավարութեանը, որը թէև մի կողմից արգելք է լինում նրա դասակարգային, արդիւնաբերական ազատ թռիչքներին ու բարգաւաճման, թէև մի կողմից ձըգ-

տում է պահպանել նրան — բուրժուազիային — իբրև յաւիտենական անչափահասի, իր ճնշող խնամակալութեան տակ, ապա միւս կողմից ապահովում է նրա կապիտալը, հարստութիւնները „կարմիր, խուժդուժ“ ամբոխների դէմ... Բուրժուազիան թերևս չէր մոռանում և այն՝ որ ռուսական արդիւնաբերութիւնը ծագել ու փթթել է շատ թէ քիչ՝ շնորհիւ նոյն պետական իշխանութեան, նոյն ռէժիմի ինիցիատիվին, նախաձեռնութեան, նրա թևերի տակ, նրա գործօն հովանաւորութեան ներքոյ, կերակրել է նրա մշտնջենաւոր պատուէրներով, նպաստներով, մրցանակներով, հովանաւորող մաքսերով և այլն։

Ահա բուրժուազական volte-face-ի ու նահանջի մի շարք պատճառներ... Եւ ուշագրաւն ու ողբերգականն այն է՝ որ այդ նահանջը մի տեսակ աղդանշան եղաւ նաև եւրոպական խոշոր բուրժուազիային—ֆրանսիական ու գերմանական մեծ կապիտալիստներին—որոնք շտապեցին օգնութեան հասնել հոգեվարք բռնապետութեանը՝ հսկայական փոխառութիւնների միջոցով... Այս զուգադէպ իրողութիւնները վճռական հարուածը տուին Ռուսաստանի յեղափոխութեանը։

Այդպէս ահա վերջացրեց ռուս **դիմագրական լիբերալիզմը**—գաղափարային թարգմանը ռուսական կապիտալիզմի։ Այդպէս նա խաւարեց, չքացաւ կուլի դաշտից՝ աշխատաւոր ժողովրդի տնտեսական խորունկ պահանջների հանդէպ *)...

*) Չենք, ի հարկէ, այնքան վարակուած կուսակցական ու դօգմային անհամբերողութեամբ, որպէսզի պնդենք, թէ սօցիալիզմից ու պրօլետարիատից դուրս՝ չը կայ Ռուսաստանում լիբերալիզմ ու ռամկավարականութիւն (դեմօկրատիզմ)։ Սահմանադրական-ռամկավարականների (կադետների) մի ստուար հատուածը կայ այսօր նոյնիսկ Պետական Դումայի մէջ—ներկայացուցիչ գլխաւորապէս մանր ու միջին բուրժուա-

Տնտեսական կամ ս օ ց ի ա լ ա կ ա ն մ օ մ ե ն տ ը գերակշռեց քաղաքականի վրայ, շարժման ղեկավարութիւնը ի տեղի կենտրոնանալու բուրժուազական տարրերի ձեռքում՝ անցաւ աշխատաւորական, սոցիալիստ տարրերի ձեռքը,— ահա, կրկնում ենք, Ռուսաստանի շարժման ինքնատիպ ու տիրական փաստը։ Դրանով էր, որ այդ շարժումը եղակի տեղ գրաւեց համաշխարհային յեղափոխական տարեգրութեան մէջ։ Դրանով էր, որ դուրս մղեց կռւի կրկէսից Ռուսաստանի մեծ բուրժուազիան։ Դրա շնորհիւ էր, վերջապէս, որ հոսեցին միջազգային խոշոր բուրժուազիայի կապիտալները՝ ցարիզմի դատարկ գանձարանի մէջ.. ու վերականգնեցին նրա ուժն ու հմայքը։

Սոցիալական մօմենտը գերակշռեց, տիրապետեց։

Ո՞րտեղ են այդ ինքնատիպ, զուտ ռուսական երևոյթի պատճառները..

Նախ՝ ի հարկէ, օբ՛եկտիվ իրականութեան մէջ։ Ագրարային, գերազանցապէս հողագործական այդ երկրում՝ 80 միլիոնաւոր աշխատաւոր գիւղացիութիւնը ապրում է սև թշւառութեան մէջ, զուրկ հողից ու արդիւնագործական միջոցներից։ Հողային հարցը բոլոր հարցերի կենտրոնումն է և ոչ մի յեղափոխութիւն չի կարող յարատև աջողութիւն ունենալ, եթէ նա չը լուծէ ամենացաւոտ պրօբլեմը, եթէ չը կատարէ սոցիալական կամ տնտեսական շատ թէ քիչ խորունկ վերիվայրում,

---

զիայի—որ շարունակում է (թէև ոչ նախկին ուժեղ թափով) կռիւը յօգուտ ճշմարիտ սահմանադրական կարգերի, յանուն ժամանակակից պառլամենտարիզմի։

Կադետների մի այլ մասը շուռ է տւել իր նաւը դէպի պահպանողական, երկչոտ-սահմանադրական կամ „հոկտեմբերեան“ ջրերը, մինչդեռ հոկտեմբերեան հատւածը, որ ներկայացուցիչ է ռուսական խոշոր կապիտալիզմի շահերի, գրեթէ ջնջել է իր սահմանները ա ջ ա կ ո ղ մ ե ա ն ֆրակցիաների հետ։

եթէ չը յեղաշրջէ հողատիրական յարաբերութիւնները: Եւ զանազան ժամանակներում ռուս յեղափոխական կուսակցութիւնների ու օրգանների ընդունած անունները՝ „Հող և Ազատութիւն“, „Հաց և Ազատութիւն“՝ միանգամայն բնորոշ են այդ իրականութեան համար: Քաղաքական ազատութիւնը չէր ըմբռնւում՝ առանց „հողի“, առանց „հացի“: Եւ մենք տեսանք, թէ ինչպէս Յեղափոխութեան կարճատև յաղթանակի օրերում սոցիալիստ-յեղափոխականներն ու սոցիալ-դեմօկրատները, իրենց կարող ազդեցութեան շնորհիւ, Դումայի մէջ աջողեցին բէկարկել տալ հողերի արտագրաւումը (expropriation) ու քարշեցին իրենց ետքից բուրժուազական լիբերալիզմի մի պատկառելի մասը:

Սոցիալական խնդրի հողի վրայ բորբոքւեց դասակարգային հակամարտութիւնը, որի հետևանքը բնորոշեցինք համառօտակի.— սոցիալիստական հեգեմօնիա և բուրժուազական նահանջ *):

Դժւար է, սակայն, դասակարգային յարաբերութիւնների բորբոքման ամբողջ պատասխանատուութիւնը ձգել օբ'եկտիվ իրականութեան վրայ: Դժւար է չը խոստովանել, որ գործող, ազդեցիկ յեղափոխական կուսակցութիւնները իրենց կողմից ամեն բան արին՝ սրելու, խորացնելու համար դասակարգային թշնամութիւնը,

---

*) Բուրժուական լիբերալիզմը, իբրեւ քաղաքական կուսակցութիւն, միշտ էլ համեմատաբար թոյլ է եղել Ռուսաստանում եւ գործօն յեղափոխական կուսակցութիւնները հրապարակ են եկել սոցիալիզմի դրօշակի տակ. դրանցից ամենաուժեղը—մարքսիզմի դրօշակի տակ: Բուրժուա-դեմօկրատ կուսակցութեան այդ թուլութիւնը ժամանակակից Ռուսաստանի ամենադժբախտ երեւոյթներից մինն է, ինչպէս շատերն են խոստովանում, նոյնիսկ ռուս սոցիալիստական բանակից:

ջլատելու, վիժեցնելու բոլոր դիմադրական տարրերի համերաշխութեան այնքա՜ն անհրաժեշտ գործը։ Եւ այն սկզբից մինչև վերջ․․ Պառակտման ու բաժանութեան ոգին սկզբից ի վեր ճակատագրական պատուհասի պէս սաւառնեց Ռուսաստանի Յեղափոխութեան վրայ, և մինչդեռ բոլոր միւս երկրներում, քաղաքական վերիվայրումների երկունքներին, պրօլետարիատի, աշխատաւորութեան ու բուրժուազիայի ներկայացուցիչ-հատուածները ընդհանուր թշնամուն, բռնապետութիւնը տապալելու համար մոռացել են միշտ ժամանակաւորապէս իրենց շահերի հակամարտութիւնը և ընթացել համաձայն ծանօթ գերմանական նշանաբանին՝ „*getrennt marschieren, zusammen schlagen*“, „զատ-զատ գնալ, մէկտեղ հարուածել“—այստեղ, Ռուսաստանում, կռիւը նոյնիսկ դիմադրական բանակի ծոցում, դասակարգային կռիւը նոյնիսկ յեղափոխական փոթորկի ամենայորձանուտ հոսանքի մէջ, դարձաւ տիրական նշանաբան և պրօլետարիատի ու սօցիալիզմի կուսակցութիւնները, սկզբից ի վեր արբած իրենց զօրութեան ու մօտալուտ „անխուսափելի“ յաղթանակի անուրջներով, պատերազմ յայտարարեցին, նոյնքան անողոք՝ բուրժուազիայի դէմ, որքան անողոք՝ ցարիզմի դէմ։

„Սօցիալիստ կուսակցութիւններ“ ասելով, ներկայ դէպքում պէտք է հասկանալ „ռուսական Սօցիալ-դեմօկրատիա“, որ 10—15 տարիներից ի վեր, արևմտեան „անհաշտ“ (*intransigeant*) մարքսիստների ֆրազէօլօգիան շալակած, արշաւեց միշտ ոչ միայն բուրժուա-դեմօկրատ, այլ և բոլոր այն յեղափոխական ու սօցիալիստ հատուածների դէմ, որոնք չեն դաւանում ուղղափառ մարքսիզմի աւետարանը։ (Պէտք է խոստովանել, որ ս.-ր.-ները, լինելով հանդերձ սօցիալիստական սկըզբունքի ու տակտիկի խնդիրներում նոյնքան անհաշտ ու

խստապահանջ, որքան իրենց հայրենակից ս.-դ.-ները, այնուամենայնիւ, բռնակալութեան ջախջախիչ զօրութեան առջև, աւելի է ունեցել ի ր ա կ ա ն ո ւ թ ե ա ն զ գ ա ց ո ւ մ ը, չի չափազանցրել իր ուժերը և միշտ սիրով հանդէպ է գնացել համերաշխութեան գաղափարին, նոյնիսկ երբեմն կօնկրետ փորձեր է արել՝ ընդհանուր խորհրդաժողովների ու կօնգրէսների միջոցով համադրելու ներդաշնակ գործակցութեան մէջ կայսրութեան բոլոր դիմադրական տարրերը՝ սօցիալիստ-յեղափոխական, սօցիալ-դեմօկրատ, ազգային-յեղափոխական, բուրժուա-ռամկավարական եայլն)։ Ռուսաստանի ժողովուրդները գանգատներ շատ ունէին այդ կուսակցութեան—ռուսական մարքսիստ սօցիալ-դեմօկրատիայի—վերաբերմամբ, որ ամենատարածուած, ամենակուռ և ամենաազդեցիկ հատուածն էր ամբողջ երկրում, և որի տակտիկը թէ Յեղափոխութիւնից առաջ և թէ նրա ընթացքում քիչ չը նպաստեց դիմադրական ուժերի ջլատման և Յեղափոխութեան տխուր ֆիասկօին։

Երբէք, անշուշտ, ոչ մի ուրիշ յեղափոխական մարմնի մէջ ինքնապաշտումն ու սեփական ուժերի գերգնահատումը չի հասել այնքան այլանդակ չափերի, ինչպէս այդտեղ։ Եւ, սակայն, ո՛րպիսի ճչացող անհամապատասխանութիւն այդ ուժերի և ի ր ա կ ա ն ո ւ թ ե ա ն պահանջների միջև...

Իրականութիւնը՝ ասիական հզօր, անգութ, ճիրանաւոր բռնակալութիւնն էր, իր պողպատեայ, սւինաւոր զանգւածներով, իսկ դրա դէմ ի՞նչ էր ցուցադրում սօցիալ-դեմօկրատիան... Պրօլետարիատի ու ինտելիգենցիայի մերկ, անզէն լէգէօններ — թէկուզ և ստւար, կազմակերպուած, դաստիարակուած ու կարգապահ...

Այդ էլ մեծ բան էր, անտարակոյս։ Մեծ, անգնահատելի ծառայութիւններ մատուցեց ռուսական սօցիա-

լիզմը համաշխարհային ռամկավարութեան ու ընկերավարութեան դատին։ Նա դաստիարակեց միլիոնաւոր աշխատաւորներ, անդուլ ու անխոնջ քարոզչութեամբ համախմբեց ու լուսաւորեց ռուս խաւար ժողովրդի թէկուզ և համեմատաբար փոքրիկ մասը, մկրտեց նրան ռամկավարութեան աւազանում, ներշնչեց նրան դասակարգային ինքնագիտակցութիւն. Նա պատրաստեց միւս կողմից ստւար ու կորովի մտաւորականութիւն, տոգորւած նորագոյն գաղափարներով, — մի մտաւորականութիւն, որ այսօրւան Ռուսաստանի պարծանքն է կազմում, չը նայեած Ստրուվէների ու Իզգօյեւների ապիկար վայնասունին ու խարանումներին,— մի մտաւորականութիւն, որ այսօր բռնակալական կապանքների տակ գուցէ դեռ անզօր է, դժգոյն, ընկճւած, բայց վաղը, մօտ ապագայում, երբ շարժման նոր կոհակները գրոհ կը տան դէպի Պետերբուրգի Բաստիլը, երբ վերջապէս կը հաստատւին սահմանադրական կարգեր, պիտի նորէն ասպարէզ նետւի և պիտի հանդիսանայ կայսրութեան ամբողջ տարածութեան վրայ, որպէս մի հսկայ ջահակիր քաղաքակրթութեան ու ռամկավարութեան։

Ռուսական սօցիալիզմը—ս.-դ.-ական ու ս.-ր.-ական— արեց և ուրիշ մի ծառայութիւն միջազգային սօցիալիզմին։ Ի՛նչ հոյակապ ճակատամարտ էր 1905-ի այն վիթխարի Գ ո ր ծ ա դ ո ւ լ ը, որ բռնել էր հսկայածաւալ Ռուսաստանը, անդամալուծելով կեանքն ամենուրեք և թելադրելով իր պահանջները բռնապետութեան... Աշխարհը չէր տեսել նման մի ձեռնարկ, եզակի իր ծաւալով, իր ամբողջութեամբ, կարգապահութեամբ, և թերևս չափազանցութիւն չի լինի ասել, որ նա բացարեց մի նոր դարագլուխ Եւրոպայի, ամբողջ աշխարհի դասակարգային կռիւների պատմութեան մէջ, նոր ուժ, կորով ներշնչեց միջազգային պրօլետարիատին, որ այնու-

հետև, ռուս սօցիալիստական պայքարների թովիչ ազդեցութեան տակ, տեղ-տեղ նոյնիսկ փորձեր արեց կիրառելու „ռուսական մեթօդը“...

Շտապենք, սակայն, դարձեալ մեդալի միւս կողմը նայելու։ Այդ մեթօդը, գործադուլային այդ ճակատամարտները էապէս սօցիալական կռւի մեթօդ էին, յարմար ու ազդու՝ արեւմտեան սահմանադրական կարգերի մէջ։ Ռուսաստանում նրա յաղթանակը, որքան էլ ցնցող ու շառաչալի, յարատև չ՚եղաւ և չէր կարող լինել։ 1905-ի ընդհանուր Գործադուլը, որ առաջ եկաւ գլխաւորապէս ս.-դ.-ների ճիգերով (պատկառելի մասնակցութիւն ունեցան և ս.-ր.-ները)— ռուսական Յեղափոխութեան այդ մեծագոյն ակտը՝ դա „ճակատամարտ“ էր, մօդեռն, նորագոյն մտքով, ոչ կլասիկ յեղափոխական իմաստով... Ուստի և ճարճատեց, ընկաւ՝ անգամ հոգեվարքի դուռը հասած բռնապետութեան գրոհի ներքոյ։ Ի՞նչ կարող է լինել կրաւորական վաշտերի դիմադրութիւնը...

Իսկ այդպիսի դիմադրութեան համար էր մշակել ռուսական սօցիալիզմը իր միլիօնաւոր բանակը։ Ասենք դարձեալ—սօցիալ-դեմօկրատական բանակը։ Կրաւորականութեան դօգմի արծարծողը նա եղաւ, ոչ ս.-ր.-ները։ Սրանք իրենց գոյութեան արշալոյսից իսկ հանդէս եկան „Նարօդնայա Վօլիա“-ի մարտական լօզունգներով, անհատական ինիցիատիվի և անհատական ու մասսային տեռրօրի դաւանանքով և կրկէս նետեցին Թալմաչօվներին ու Սազօնօվներին։

Կրաւորականութեան քարոզիչը սօցիալ-դեմօկրատիան եղաւ։ Եւ նրա տակտիկը, դժբախտաբար, աւելի աջողութիւն ու տարածումն գտաւ ոչ միայն ռուսական

հողի վրայ, այլ նոյնիսկ ռազմական բնագծներով հարուստ ծայրագաւառներում, օր. Կովկասում, Վրաստանում, ուր յեղափոխութեան ամենատենդային վայրկեաններին իսկ կազմակերպուած սօցիալ-դեմօկրատիան չը տուեց մասսային ու մարտական կորովի փայլուն ապացոյցներ... Կովկասեան կամ վրացական սօցիալ-դեմօկրատիան ևս, հաւատարիմ ընդհանուր տակտիկին՝ բնաւ չէր հոգացել իր մասսաների զինաւորութեան ու մարզութեան մասին, և մենք չը տեսանք դիմադրութեան ստուերն անգամ, նոյնիսկ այն սև, ողբերգական օրերում, երբ հակայեղափոխութեան, պօգրօմային ուրագանը անցնում էր Վրաստանի գեղածիծաղ դաշտերով, երբ գեներալ Ալիխանով*) արիւն ու աւերակ էր սփռում իր յաղթական արշաւանքի ճանապարհին...

Կրաւորականութեան արծարծողը սօցիալ-դեմօկրատիան եղաւ։ Եւ նա եղաւ այդպիսին՝ իր ինքնատիպ աշխարհահայեացքի, իր սօցիալական հաւատամքի զօրութեամբ։

Այդ հաւատամքը — մարքսիզմը — ռուսական հողի վրայ այլափոխուելով, հասել էր անօրինակ պարզացման (սիմպլիզմ), սխեմացման (*schématisme*)։

Կապիտալիզմը, Կարլ Մարքսի մի անգամ ընդմիշտ տուած սխեմով պէտք է հոգար արդէն Ռուսաստանի, ինչպէս և բոլոր այլ երկրների, քաղաքական ու սօցիալական յեղաշրջման գործը։ Կապիտալիզմը պիտի հիւսէր բռնակալութեան մահապատանը, պիտի արտադրէր և նրա „գերեզմանափոր-պրօլետարիատին"... Յեղափոխութիւնը դիտուում էր, որպէս տարերային,

---

*) Վրաստանի արիւնարբու դահիճը, որ սպանեց 1907-ին, մեր ռազմիկների ձեռքով։

ճակատագրական մի պրոցէս, ուր ամեն ինչ շրջան էր առնում „պրոլետարիատ-առանցքի“ շուրջը։ Ռուս ընդհանրութեան այդ համեմատաբար չնչին բեկորը օժտւում էր արտակարգ, գրեթէ միստիկական կարողութիւններով, հասցրւում էր իդէալացման գագաթնակէտին։

Կապիտալիզմի զարգացման պրոցէսը տարերայնօրէն ու ճակատագրօրէն պիտի նետէր բուրժուազիային և՝ ցեղափոխութեան յորձանքի մէջ... Այդպիսով քաղաքական վերիվայրումի գործը գրեթէ արդէն պատրաստ էր, դիւրին... և սօցիալիզմին մնում էր կատարել իր „ամենաէական պարտաւորութիւնները“՝ լարել պրոլետարիատի ուժերը դասակարգային հակառակորդի, բուրժուազիայի դէմ, հոգալ կապիտալիզմի կործանումը... Ահա մէկը գլխաւոր պատճառներից՝ ռուս սօցիալ-դեմօկրատիայի քաղաքական ու յեղափոխական ինդիֆֆերենտիզմի, անտարբերութեան։ Ահա մէկը պատճառներից՝ թէ ինչու կռիւը կապիտալի դէմ, սօցիալական, տնտեսական լօզունգները յաճախ աւելի էին հետաքրքրում ռուս սօցիալ-դեմօկրատիային, քան զուտ սահմանադրական կռիւը, քան քաղաքական ազատութիւնները...

Բուն քաղաքական, յեղափոխական կռւի մտահոգութիւնները այնքան թոյլ էին ռուսական ամենաուժեղ կուսակցութեան մէջ, որ երբ շարժման սկզբներին (1900-ական թւերի սկիզբը), երկրի ալեծուփ վիճակի հանդէպ, ուսանողական համատարած խմորումների ու ցոյցերի, տերրօրական փորձերի դիմաց հարց էին տալիս ռուս ուղղափառ մարքսիզմի առաջնորդին, մօտ ապագայում անելիքի առթիւ, Գիօրգի Պլեխանօվ ուրիշ պատասխան չէր գտնում այդ նզովեալ հարցումին, բայց եթէ՝

— Կազմակերպուել, կազմակերպուել ու դարձեալ կազմակերպուել...

Այդ հրահանգը ըստ երևոյթին նոյն ուժը պէտք է ունենար ցարական Ռուսաստանում, ինչ որ դանտոնեան յայտնի նշանաբանը՝

— Յանդգնութիւն, յանդգնութիւն և դարձեալ յանդգնութիւն։

Այդ „յանդգնութեան հոգեբանութիւնը“ չ'արծարծուեց ս.-դ.-ների շարքերում։ Մարքսեան չափազանցրած „տարերայնութեան“ հաւատամքը, ընդհակառակը, տափակացնում էր յեղափոխութեան դերակատարներին, իջեցնում նրանց յաճախ մինչև մանր „կուլտուրականութեան“ մակերևոյթը. Նա հարւածում, թուլացնում էր ռուս իրականութեան առանց այն էլ թոյլ յեղափոխական կորովը և անհատական ինիցիատիվի ոգին. Նա ձգտում էր դեռ միւս կողմից՝ ոչնչացնել, վարկաբեկել ամբողջ Ռուսաստանի, աշխարհի առաջ, ամբողջ սոցիալիստական Ինտերնացիոնալի առաջ, այն միակ ռուսական կուսակցութիւնը—ս.-ր.-ականը—որ իր փայլուն հերոսներով կրող էր հանդիսանում դանտոնական այդ վճռականութեան ու յանդգնութեան. Նա ձգտում էր բոլոր ներելի և աններելի միջոցներով վարկաբեկ անել և այն բոլոր ազգային սոցիալիստական հոսանքները— ի թիւս նրանց և „Դաշնակցութիւնը“—որոնք բռնութեան ու հակայեղափոխութեան մութ յորձանքների դիմաց՝ չէին սահմանափակւում կրաւորական դիմադրութեան, „մերկ պարանոցների“ հաւատամքով...

Այսօր... այդ կրաւորականութեան հաւատամքից շեղւելու նշաններ տակաւին չեն երևում ռուս սոցիալ-դեմօկրատիայի աշխարհում։ Դրա տեղ՝ շարունակւում են մարքսիստական „դիագնօզները“ և խորհրդաւոր

գուշակութիւնները ապագայի մասին: Հոլովւում են դարձեալ հին, դոգմայական ֆորմուլները, „ոստիկան-ճորտատիրական պետութիւնը ինքն արդէն փորում է իր գերեզմանը, արտադրելով գերեզմանափորներին“ և այլն: Եւ բոլշեվիկներ ու մենշեվիկներ պատերազմում են այդ գուշակութիւնների ու վերացական ֆորմուլների շուրջը: Ռուս ս.-դ.-ների մի մասը, ըստ երևոյթին յուսախաբուած „պրոլետարիատ-տիտանի“ վերաբերմամբ, բուրժուազիային է յատկացնում առաջապահի դերը մօտալուտ „անխուսափելի“ վերիվայրումի մէջ... Բուրժուազիան, ասում են նրանք, պէտք է անպայման ձախանայ, գիտակցէ իր շահերը և կատարէ իր յեղափոխութիւնը... Այլապէս տնտեսական մատերիալիզմը սուտ է... Եւ մենշեվիկների կողմից իրենց ֆրակցիական հակառակորդների հասցէին տեղում են թունոտ կշտամբանքներ, թէ նրանք (բոլշեվիկները) նպաստեցին յեղափոխութեան վիժման, սարսափեցրին բուրժուազիային, „կատաղի կռիւ“ մղելով նրա դէմ մի այնպիսի ժամանակ, „երբ դեռ թշնամու ոչ մի դիրք անձնատուր չէր եղած, երբ բուրժուազիան դեռ կարող էր և պէտք էր, թէկուզ հակառակ իր կամքի, անվճռականօրէն աջակից լինել յեղափոխութեանը“ („Голосъ Соціальдемократа“ № 8—9):

Զափազանց ճնշող տպաւորութիւն են անում պատմական ծանր ֆիասկօից յետոյ ֆրակցիական այդ անվերջ և վերացական բանակռիւներն ու փոխադարձ խարանումները *):

---

*) Մինչ սօցիալ-դեմօկրատիայի հակամարտ թևերը մրցում են այդպէս „դիադոխների“ ու գուշակութիւնների շուրջը, ս.-ր.-ական շարքերից բոլորովին տարբեր, օտարոտի ձայներ են լսւում: Պարիզի „*Humanité*“-ն ներկայ տարւայ յունւարի 23-ին հրատարակեց, ի պատասխան Ժօրէսի մի

Առաջ գնանք։ Այսպէս թէ այնպէս, բռնակալութիւնը կանգուն մնաց, ինքնակալ, դիմակաւորուած բռնակալութիւնը։ 1905-ի հոկտեմբերին հրատարակել էր հռչակաւոր ազատական մանիֆեստը, իսկ 1906-ի յունիսին, իր դիրքերը բաւականաչափ ամրապնդուած տեսնելով,

---

յայտարարութեան, խմբագրական ուշադրաւ մի յօդուած, այսպիսի արտառոց վերնագրով.

„Հնարաւո՞ր է արդեօք սահմանադրական ռէժիմը Ռուսաստանում“։

Յօդուածագիրն էր այժմ հանգուցեալ Լէոնիդ Շ ի շ կ օ, ս.-ռ.-ական ամենայարգուած թէօրետիկոններից մինը։

Իր դրած հարցին Շիշկօն բացասական պատասխան է տալիս... Ահաւասիկ համառօտակի այդ ուշադրաւ պատասխանը.

„Մենք գիտենք արդէն 1906 թւի սահմանադրական փորձի արդիւնքը: Հէնց որ ժողովուրդն ստացաւ ընտրողական իրաւունքներ, օրէնսդիր ժողովները գրաււեցին աշխատաւոր դասակարգերի ներկայացուցիչներով... 41 սոցիալիստ-յեղափոխական պատգամաւորների ձեռքով խմբագրուած մի օրինագիծ, ստորագրուած 104 պատգամաւորների կողմից, քննութեան դրւեց (երկրորդ Դումայում). նա պահանջում էր՝ ա ր տ ա գ ր ա ւ ե լ մ ա ս ն ա ւ ո ր ս ե փ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն կ ա զ մ ո ղ բ ո լ ո ր հ ո ղ ե ր ը ե ւ յ ա ն ձ ն ե լ ն ր ա ն ց ա շ խ ա տ ա ւ ո ր ժ ո ղ ո վ ր դ ի ձ ե ռ ք ը... Կասկածի ստւերն անգամ չը կայ, որ 104 պատգամաւորների ստորագրած այդ օրինագծի գլխաւոր կէտերը պիտի քւէարկւէին շատ ուժեղ մեծամասնութեամբ, եթէ վրայ չը հասնէր Դումայի վայրագ լուծումը:

„Հարց է այժմ — շարունակում է Շիշկօ — թէ արդեօք բուրժուա-ռամկավարական մի ռէժիմ կարո՞ղ է հաստատւել մի երկրում, ուր գոյութիւն ունին այդպիսի տենդենցներ (ձգտումներ): Ամեն մի բուրժուա-ռամկավարական ռէժիմ հիմնւած է օրէնսդիր մի ժողովի վրայ, ուր մեծամասնութիւնը գտնւում է հարուստ ու ազդեցիկ մի բուրժուազիայի ձեռքում... Այդպիսի բան չը կայ Ռուսաստանում: Բուրժուա դասակարգն այնտեղ շատ փոքրաթիւ է եւ նրա հարստութիւնը՝ չնչին... 1906-ի ընտրութիւններին խոշոր արդիւնաբերող դասակարգը (որի ներկայացուցիչներն են այժմեան հոկտեմբերեանները) չը կարողացաւ անցկացնել եւ ոչ մէկը իր թեկնածուներից: Իսկ „կադետները“ ստացան շատ թէ քիչ կարեւոր դիրք առաջին երկու Դումաներում շնորհիւ, միայն

կառավարութիւնը մի նոր ուկազով ջնջեց առաջին մանիֆեստի ուժը, արձակեց կարմիր պարլամենտը և ընտրողական նոր օրէնք սահմանելով, գումարեց երրորդ-Դուման, „սև-Դուման“։ „Ցարը իր կամքով շնորհել էր հոկտեմբերեան մանիֆեստը, ցարն էլ ջնջեց այն, տեսնելով, որ երկիրն ընթանում է դէպի կործանում։ Ցարը նորէն ինքնակալ է, միահեծան“... Այսպէս յայտարարեց կառավարչական թերթը „Յունիսեան հարուածի“ առթիւ։

Ռուսիոյ յունիսի 3-ը նման է Թիւրքիոյ մարտի 31-ին։ Բայց մինչդեռ այնտեղ անմիջապէս սպառազինուած յեղափոխական բանակը գրոհ տուեց նենգաւոր ուզուրպատորի դէմ և յաղթական ճակատամարտով վերա-

---

այն հանգամանքի, որ դիմակաւորեցին իրենց իսկական ձգտումները ծայրայեղ դեմօկրատիզմով,—ընդհանուր ընտրողական իրաւունք, մինիստրների պատասխանատւութիւն, անհատական կատարեալ ազատութիւն եւ բռնի յետգնումն մասնաւոր հողային գոյքերի խոշոր մասի“:

Այդպէս—Շիշկօն։ Դուրս է գալիս, ուրեմն, որ սահմանադրական, բուրժուա-դեմօկրատական րէժիմը անհնարին է Ռուսաստանում, քանի որ բուրժուազիան թոյլ է, իսկ աշխատաւորութիւնը յանձին իր սօցիալիստ կուսակցութիւնների միշտ առաջադրելու է իր լիակատար ծրագրային պահանջները։ Թոյլ բուրժուազիան միանալու է միշտ բռնակալութեանը և երկուսով խեղդելու են յեղափոխութիւնը։ Սահմանադրութիւն ու ռամկավարութիւն կարող են, ուրեմն, հաստատուել միմիայն երկու պարագայում. 1) Երբ բուրժուազիան կ'աճի, կը դառնայ հարուստ ու ազդեցիկ, եւրոպականի պէս։ 2) կամ թէ երբ սօցիալիստ աշխատաւորութիւնը կը դառնայ կացութեան միահեծան տէր և առաջ կը բերէ յեղափոխութիւնը՝ ընդդէմ բռնապետութեան և ընդդէմ բուրժուազիայի...

Ե՞րբ արդեօք...

Ահա մի չափազանց յոռետես, մի սարսափելի դիագնոզ, որ տեղ է գտնում ս.-ր.-ական գրականութեան մէջ։

հաստատեց սահմանադրութիւնը, — այստեղ, Ռուսաստանում պետական հարուածին հետևեց դերեզմանային լռութիւն... և պէտք է հետևէր, քանի որ սոսկ աշխատաւոր մասսաների կրաւորական գործադուլները բաւարար զէնք չեն սուինաւոր բռնապետութեան դէմ և նրանք իսկ՝ միշտ հնարաւոր չեն։

Եւ այդ դերեզմանային լռութեան մէջ Ստօլիպինեան կառավարութիւնը, քաջալերուած սև Դումայից, առաջ տարաւ կամաց-կամաց ներքին „խաղաղացման“ գործը... դաշտային դատարանների ու անընդհատ գնդակահարութիւնների ժխորի մէջ։ Սև Դումայի գոյութիւնն անգամ անհանդուրժելի է ռէակցիային, նա կուզէր ջնջել նոյնիսկ պարլամենտարիզմի այդ ծաղրանկարը, բայց ստիպւած է, այնուամենայնիւ, պահպանել այն, պահպանել և մի շարք հաշմանդամ ազատութիւնները — մամուլի ու գումարումների — ներքին ու մանաւանդ արտաքին աշխարհի հասարակական կարծիքին թոզ փչելու և փոխառութիւնները դիւրացնելու նպատակով։

Հինգ տարի անցաւ ազատարար Մանիֆեստի օրերից և ոչ մի քայլ չ'արուեց դէպի երկրի իրական խաղաղացումը։ Իշխող կամարիլլան և մինիստրները ամեն առթիւ զգալ տուին ժողովուրդներին, որ ոչինչ չի փոխւած Ռուսաստանի դարաւոր կացութեան մէջ, որ նա մնում է նոյն միահեծան ու կամայական բռնապետութիւնը. մինիստրներից ամենամոլեռանդները չեն քաշւում նոյնիսկ հրապարակով ծաղրել ու անարգել ռուսական „պարլամենտը“, իսկ Պրէմիէրը ամբողջ 10 ամիս չը բարեհաճեց ոտք դնել այդ „պարլամենտի շէմքի վրայ..

Արտաքին աշխարհը ևս շարունակում է ժպտալ մեր բռնաւոր հրամանատարներին։ փոխառութեան ձեռնարկները պսակւում են աջողութեամբ. արևմտեան կապի-

տալիստները սնուցանում են „Համաշխարհային Բաստիլը“, թէև ներքուստ համոզուած են, որ այդ ճիգերը չեն կարող ունենալ յարատև արդիւնք, որ իրենց հովանաւորեալը մի կիսախարխուլ, փտախտով բռնւած գոյութիւն է, որի բոլոր անդամներից տարածւում է աշխարհի չորս կողմը մի անհնարին գարշահոտութիւն...

* * *

Ահա այդ վիճակումն է դժբախտ Ռուսաստանը։

Ընդհանուր, մեծ կնճռի մի անբաժան մասնիկն է— ազգային կնճիռը։ Եւ նա նոյն անլոյծ և անորոշ վիճակի մէջ է, ինչպէս քաղաքական-սահմանադրականը։

Հալածանքը յեղափոխութեան դէմ—հալածանք է մանաւորապէս ազգերի դէմ, „Ծայրերի“ դէմ։ Երկու կատէգօրիաները — յեղափոխութիւն և այլազգի—համանիշ են թէ բռնապետական կամարիլլայի և թէ դումայական հոկտեմբերեան մեծամասնութեան աչքում։ „Այլազգի“—լեհ, հայ, վրացի, ֆինն, հրէա, լատիշ ևայլն—ոչ միայն նշանակում է „յեղափոխութիւն“, այլ և գլխաւոր սատար ընդհանուր յեղափոխութեան, երբեմն նոյնիսկ միակ արծարծող համառուսական հրդեհի...

Յամառ, սիստեմատիկ ճիգերով ռէակցիան մէկ առ մէկ յետ է վերցնում „Օկրային“-ներից այն բոլոր իրաւունքները, որ զիջել էր օրհասի վայրկեանին։

Կովկասը և մանաւորապէս Ռուսահայաստանը ազատ չի մնում այդ յետախաղաց տենդի ճարակումներից։ Կովկասը, չէ՞, համարւում է յեղափոխութեան ամենահաւոր օճախը... „Ատեննտատները“, եղեռնափորձերը ծայր են տալիս արդէն հայ-ազգային այն ստացուածքների դէմ, որոնք վերադարձւել էին ազատութեան

օրերում՝ հայ ըմբոստ ժողովրդին գոհացնելու, սիրաշահելու նպատակով։ Հայ դպրոցների, եկեղեցու շուրջը նորէն յամառ պտոյտ են անում չարագուշակ շշուկները և գոլիցինեան ժամանակների դօկլադներն ու ուկազները սկսում են նորէն փոխանակուել Թիֆլիսի ու Պետերբուրգի միջև։

Դպրոցների դէմ յարուցւող կաշկանդումներն արդէն ծանօթ են հասարակութեան։ Բայց միմիայն դպրոցների դէմ չէ, որ յաղթանակող ռէակցիան թափահարում է իր սպառնագին բռունցքը, այլ բոլոր այն հաստատութիւնների դէմ, որ որևէ առնչութիւն ունին „ազգային կուլտուրայի“ և ազգային ինքնուրոյնութեան դէմ։ Կարդացէք ուշադրութեամբ մինիստր Ստօլիպինի կողմից նորերս բոլոր նահանգապետներին ուղղած հրահանգը այսպէս անուանած „նեղ նացիօնալիզմի“ առթիւ.

„1906 թ. մարտի 4-ին բարձրագոյն հաստատուած ընկերակցութիւնների և միութիւնների ժամանակաւոր կանոնների հրատարակութեամբ, Ռուսաստանում ապրող այլացեղ տարրերից իւրաքանչիւրը մի առանձին շարժում ցոյց տուեց դէպի կուլտուրա-կրթական զարգացումը նեղ ազգային-քաղաքական ինքնագիտակցութեան հողի վրայ և այդ նպատակով յիշեալ ժողովուրդներից ամեն մինը սկսեց կազմակերպել մի շարք ընկերութիւններ զանազան անունների տակ՝ զուտ ազգային շահերի հողի վրայ իւրայիններին միացնելու նպատակով։

„Հետամուտ լինելով վերոյիշեալ նպատակին, այդ տեսակ ընկերութիւնները, անկասկած, սաստկացնում են ազգային անջատողականութեան և կղզիացման սկզբունքները և այդ պատճառով պէտք է սպառնական նկատուեն հասարակական հանդստութեան և ապահովութեան համար, ինչպէս այդ բացատրել է կառավարիչ սենատը մի շարք որոշումներով *)։

*) Յիշեցէք այն անորակելի վայնասունը Կովկասեան ծանօթ հարցապնդումի միջոցին, ուղղուած մի այնպիսի համես հիմնարկութեան դէմ, որպիսին է Բագւի Հայ Կուլտուրական Ընկերութիւնը։

„Ի նկատի ունենալով այս ամէնը, այդօրինակ ընկերութիւնների օրինականացումը 1906 թ. մարտի 4-ի օրէնքի 1-ին յօդուածի հիման վրայ ես համարում եմ անթոյլատրելի և պարտականութիւնս եմ համարում մատնանշել ձեր գերազանցութեանը, որ օտարազգի որևէ ընկերութեան վաւերացման մասին ստացուած միջնորդութիւնը քննելու ժամանակ—ի թիւս այդ ընկերութիւնների՝ ուկրայնցիների և հրէաների—անկախ նրանց ընդգծած նպատակներից, տեղական նահանգական ատեանը պարտաւոր է ամէն մի դէպքում մանրամասնաբար կանգ առնել այն հարցի վրայ՝ թէ յիշեալ ընկերութիւնը հետամուտ չէ՞ արդեօք վերոյիշեալ նպատակներին, և դրական դէպքում՝ անյողդողդ մերժել օրինականացնելու նրանց կանոնադրութիւնները կառավարիչ սենատի յիշատակուած ցուցմունքների հիման վրայ։

„Ընդ սմին, պէտք է ներկայումս մանրազննին կերպով ծանօթանալ արդէն գոյութիւն ունեցող օտարազգի ընկերութիւնների գործունէութեան հետ և պատշաճ դէպքում հարց յարուցանել սահմանուած կերպով նրանց փակելու մասին“։

Մեկնութիւններն աւելորդ են։ Անցեալի փորձից գիտենք արդէն, թէ ինչ է նշանակում „անջատականութեան“ բստմնելի պատրուակը։ „Հպատակ ազգերի“ ինքնուրոյնութեան ու առաջադիմութեան ամեն մի ձգտումը „անջատականութիւն“ է, „սեպարատիզմ“ է, որ բռնապետութիւնը մարսել չի կարող...

Հայ եկեղեցին ևս, այդ դժբախտ ու ողորմելի հաստատութիւնը, սկսում է նորէն գրգռել իր դէմ կոյր բիւրօկրատիայի ատելութիւնները։ Հայ եկեղեցի, հայոց կաթողիկոսութիւն և այլն — մնում են հին սպառնալի ուրուականները, որոնց դէմ ռուս կառավարութիւնը հարկ է տեսնում շարունակելու դօնքիշօտական արշաւը։ Այն տենդային վիճաբանութիւնները, որ կաթողիկոսական ընտրութիւնից առաջ տեղի ունեցան Պետերբուրգի մինիստրական շրջաններում, Վօրօնցօվ-Դաշկօվի ներկայութեամբ, հայ լուսաւորչական եկեղեցու „բարե-

կարգման“ խնդրի շուրջը, խիստ բնորոշ են նոր կուրսի տրամադրութիւնների վերաբերմամբ... Նոր կուրսը որոշել է ն ի վ ե լ ի ր օ վ կ ա յ ի, „հարթացման“ ենթարկել ամբողջ կայսրութեան խայտաբղէտ քարտէզը՝ խմատրայից մինչև Արաքս... և, ինչպէս որ նա խողխողում է ֆինլանդական դարաւոր ինքնօրինութիւնը, նոյնպէս և կուզէ խախտել հայ եկեղեցու բազմադարեայ ինքնուրոյնութիւնը, ջնջել կաթողիկոսութեան համահայկական բնոյթը, խլել եկեղեցու պետից մի քանի աննշան ֆունկցիաները և իջեցնել կաթողիկոսին մինչև ցարական խոնարհ չինօվնիկի աստիճանը *)... Եւ կամարիլլան նոյնիսկ մեղադրանքի նիւթ է դարձնում կաթողիկոսի ուսերէն չը գիտնալը—մի հանգամանք, որի հետ հաշտուել էր իր հաչակաւոր „դօկլադների“ մէջ անգամ հայակեր Գօլիցին։

„Հարթացման“ ու ձուլման քաղաքականութիւնը, մի տեղ դանդաղ, մի այլ տեղ արագ, նայեած հանգամանքին, նայեած մանաւանդ ժողովուրդների ըմբոստութեան չափին, շարունակւելու է անդրդւելի կերպով, քանի որ նա կապւած է տիրող րէժիմի ներքին բնութեան հետ։ Յայտնի չէ, թէ ուր կարող է կանգ առնել հալածանքը, ուղղւած ազգերի ուրոյն կուլտուրայի ամենաթոյլ արտայայտութիւնների դէմ... Եղան մեզ մօտ եւս —գուցէ կան այսօր էլ — անուղղելի լաւատեսներ, որ հաւատում էին, թէ նոր րէժիմը ներշնչւած է բարեացակամ տրամադրութեամբ դէպի հայութիւնը, որ հինը այլ եւս չի վերադառնայ։ Այդ միամիտ հաւատը արձագանք է գտնում նաև Բօսֆօրի ափերին,

*) Տես Ռուս. Նախարար. Խորհրդի Մասնաւոր Տեղեկագիրը Էջմիածնայ Կաթողիկոսութեան մասին, ներկայացուած Ներքին գործ. Նախարարի կողմից ցարին, 1908 թ. օգոստ. 26: (Հրատ. „Ազատամարտի“):

որոշ գոյնի հայ գործիչների աշխարհում։ Եւ սակայն, ահա մի շարք խօսուն իրողութիւններ, որոնցից գոլիցինեան ժամանակների հոտ է բուրում *)։ Աւելի վատթարը կայ։ Ահա դրակօնեան սուրը նորէն կախուած հայ ժողովրդի, երիտասարդութեան վրայ... Հայ մտաւորականութեան լաւագոյն մասը բանտերում, մատնուած հին, հայակեր ռէժիմի ներկայացուցիչներին։ Սկսուած է մի կատարեալ որսախուճապ և խուզարկութիւններն ու ձերբակալումները վերջ չունին։ Չեն խնայում անգամ նորընտիր, ծերունազարդ կաթողիկոսին. ժանդարմական խուզարկու փոհմակը ներս է խուժում անգամ Էջմիածնի դիւանատունը, վերակենդանացնելով մեր յիշողութեան մէջ 1904-ի գոլիցինեան բաշիբօզուկութիւնների տխուր յուշերը... Օ՛, Իզմիրլեան... Եթէ անցեալում, գէթ մի վայրկեան ձեր տանջալի գոյութեան մէջ, համիդեան խեղդիչ ճիրաններում սնուցել էք անուշ պատրանքներ քրիստոնեայ ցարիզմի „գերադասութեան", գթութեան առթիւ, եթէ երբեմն, գէթ մի վայրկեան օրօրուել էք այն յոյսով՝ թէ հայ „ըմբոստ ու խուժադուժ" երիտասարդութիւնը հանդարտուելով, „հայկական դաւադրութիւնը" սպառուելով՝ կը ծագի հայ դժբախտ երկրի վրայ խաղաղութեան Արևը—այժմ կը տեսնէք սեփական փորձով, թէ ինչ արժէք ունին այդ վայրկենական պատրանքները, թէ որքան նման են հայ ժողովրդի

---

*) Բաւականաչափ արդէն զուցէ „հրահանգիչ" էր նապոլէոնեան այն ձեւը, որով ցարը ընդունեց հայոց եկեղեցու պաշտօնական ներկայացուցչին եւ որից յետոյ վերջինը, անսովոր պանիկի ենթարկուածի պէս, Կովկաս մտնելու օրից սկսած, Թիֆլիսից մինչեւ Էջմիածին անգամ Մետեխի մահուան խուցերում, անդադար հոլովում էր իր ամենախոնարհ, ցարահպատակ զգացումները, յորդորելով ու հրահանգելով նոյնը՝ իր շրջապատին: Ահաւասիկ կաթողիկոսական անդրանիկ կօնդակը եւս նոյն բառերը հոլովելիս...

մահմեդական ու քրիստոնեայ ոսոխները իրենց քաղաքական մեթօդների մէջ... և ի տեղի „փափկանալու“, աջ ու ձախ ողջմտութեան ու հնազանդութեան աղերսանքներ շռայլելու—հայութիւնը շա՜տ է մարզւել այդ երկու առաքինութիւնների դպրոցում—դուք ինքներդ գուցէ ակամայ, ճակատագրօրէն կը համակւիք այն ոգով, որ անցեալում այն աստիճան գեղեցկացրեց ձեր դէմքը և ձեր ըմբոստ Նախորդինը...

Որսախուճապ — այո՛։ Որսում են Դաշնակցութիւնը։ ճարակում են հայ ինտելիգենտ երիտասարդութիւնը՝ „դաշնակցականութեան“ ու յեղափոխութեան պատրւակի տակ... Մեղադրանքի նիւթ է անգամ 1905 – 906-ի հայկական դիմադրութիւնը Թաթարական հայաջինջ արշաւի դէմ, մի արշաւ, որի հոգին — նա ինքն էր՝ բռնապետական կառավարութիւնը... Հիրինկինեան օրերից ի վեր դիտմամբ փչւած առասպելները հայկական կազմակերպութեան „հարիւր-հազարաւոր բանակի“ և պատերազմական ու յարձակողական պատրաստութիւնների մասին, վերջին ժամանակներս որոշ, կօնկրետ ձևակերպութիւն ստացան պաշտօնական Ռուսաստանի բերանում և Պետական Դումայի հռչակաւոր հարցապնդումից յետոյ — ուր Դաշնակցութիւնը վէճերի կենտրօնական առարկայ էր—որոշեց ամեն գնով բնաջինջ անել դաշնակցական ուրւականը։

Այդպիսով՝ տիրող րէժիմը նորէն ամեն կերպ արծարծում է հայ տարրի մէջ դժգոհութեան կրակը, ամեն միջոց ի գործ է դնում հասկացնելու, զգալ տալու հայ ժողովրդին, որ փոքրոգի բռնակալութեան հռչակած խոստումները տևողական արժէք չունին, որ բիւրօկրատական սիստեմը — որի քուրայում այնքան տապակւեց նա 1905—906-ի նզովքի օրերում—նրա, ժո-

ղովրդի, մաշացու թշնամին է, նրա գոյութեան ու առաջադիմութեան խարիսխը կրծող՝ չարագործ որդը։

Արթո՛ւն լինենք։ Ամեն բան սպասելի է մի անհոգի րէժիմից, որ այսօր չի քաշւում աշխարհի առաջ—և այնքան արիւնոտ արկածներից յետոյ—վերստին պատռելու իր հանդիսաւոր, երդումնակուռ յանձնառութիւնները Ֆինլանդիայի վերաբերմամբ և վերջ դնելու նրա աւտօնօմ գոյութեան։ Եւ նա ձգտում է նոյն կերպ մկրատել, խեղդամահ անել բոլոր աւտօնօմիաները, ինքնուրոյնութեան բոլոր նմուշները, որոնցից գարշում է նա... Ի՛նչ փառահեղ „ռըվանշներ“ Մանջուրիայի ու Բօսնիա-Հերցեգօվինայի փոխարէն...

Արթո՛ւն լինենք... որպէսզի նորէն յանկարծակիի չը գանք հարւածների, զուլումների հանդէպ. որպէսզի կարողանանք կանխել, չէզոքացնել յետախաղաց հոսանքները և ապահովել հայ ժողովրդի շատ թէ քիչ նորմալ զարգացումն ու առաջադիմութիւնը։

Այդ „նորմալը“, ի՞նչ ասել կուզէ, միշտ պլատօնական բաղձանք է մնալու, միշտ երերուն ու անխարիսխ մի պատրանք, քանի դեռ կանգուն կը մնայ պատճառների ու խոչընդոտների այն հսկայ լեռը, որի տակ ճզմւում ու խորտակւում են մարդկային ամենատարրական իրաւունքները։ Բոլոր ազգերը գիտակցում են այդ, յանձին իրենց խելահաս, ինքնաճանաչ տարրերի։ Բոլորն էլ համոզւած են այդ ահաւոր ու եղերական „քանի դեռ“-ի մէջ։ Եւ նրանք բոլորն էլ կազմակերպւում են։

Կազմակերպութեան, աւելի ճիշտ, վերակազմութեան աշխատանքով բռնւած են այսօր Ռուսաստանի բոլոր դիմադիր ուժերը, կուսակցութիւնները։

Կայ, անշո՛ւշտ, նաև կազմալուծման աղէտաւոր

երևոյթը… արդիւնք ցաւագին պարտութիւնների ու յուսախաբութիւնների, արդիւնք նաև կառավարական ջախջախիչ հարւածների ու պ ր օ վ օ կ ա տ օ ր ա կ ա ն, „ազնվական“ անլուր սադրանքների… Թւում է, թէ հզօր, քայքայիչ մի հոսանք է անցնում այսօր Ռուսաստանի մէկ ծայրից միւսը։ Մտքի փտութեան ու այլասերման մի ահաւոր համաճարակ… Բռնակալութիւնը չէ միայն, որ հարւածում է Յեղափոխութեանը։ Հարւածները տեղում են բոլոր կողմերից, անգամ հասարակական այն խաւերից, որոնք երէկ խնկարկում էին այդ գաղափարին։ Գուցէ չէինք սխալւի, եթէ ասէինք, որ ահագին ռուս ընդհանրութիւնը իր ահագին մտաւորականութեամբ ապրում է այսօր *en grand* նոյն յուսախաբութեան ու վհատումի տագնապը, որ մենք ապրել ենք Թիւրքահայաստանում մեծ ջարդերից յետոյ. Նոյն խելագար վայնասունն է բարձրացել այսօր ռուս ինտելիգենցիայի մի յայտնի մասի մէջ, անիծում, քարով են տալիս յեղափոխութիւնն ու նրա գործիչներին։

Աւա՛ղ, այո՛։ Է ւ օ լ ի ւ ս ի օ ն ի շինարար, ստեղծագործող սկզբունքի հետ յար անբաժան ընթանում է դ ի ս ս օ լ ի ւ ս ի օ ն ի (քայքայումի) օրէնքը։ Դա կանոնն է ամբողջ պատմութեան, ամբողջ տիեզերական յառաջխաղացութեան։ Ասացինք արդէն. ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը ևս ժամանակին հայհոյւեց ու անարգւեց. փիլիսոփաներ ու հրապարակախօսներ չը վարանեցին մեղադրելի նստարանի վրայ նստեցնելու Ռուսսօներին ու Դիւմուլէններին։ Նոյնը երէկ մեզ մօտ էր, նոյնը այսօր՝ ռուսների մօտ։ Նայեցէք այդ ուխտադրուժ հերոսներին, ականջ դրէք նրանց զարշելի երեմիականներին։ Երէկ նրանք համակրելի „իդէօլօգների“ շարքերում էին. իսկ այսօր իրենց խելակորոյս, հակայեղափոխական վազքի մէջ՝ նետւում են բռնակալութեան,

կղերի ու կրօնի գիրկը… Մի արտառոց երևոյթ, նոյնքան քայքայիչ ու հակահասարակական, որքան արցիբաշեվեան գերհաճոյապաշտ քարոզները… Նայեցէք ապա այդ Ստրուվէին ու իր համհարզներին։ Դարձեալ երէկուայ կուռքերից… Ի՞նչ այլանդակ գահավիժումներ։ Ի՞նչ տարամերժ կերպարանափոխութիւն… Այդ գերմանածագում փիլիսոփան, նախկին մոլեռանդ մարքսիստը՝ որ մոլեգին եռանդով տապալում է իր երէկուայ սրբութիւնները, գովք է կարդում հզօր, կենտրոնացած, ռուսական—զուտ ռուսական—պետականութեանը, խարազանում է ռուս ինտելիգենցիայի, յեղափոխականների, սոցիալիստների, իբր թէ հակապետական, հակառուսական „աւանդութիւններն“ ու ձգտումները և անողորմ սլաքներ է նետում հրէականութեան ու այլ տարազգի էլեմենտներին, որոնք իբր թէ վտանգում են ռուսականութեան շահերը…

Ահա ռուսական մտաւոր փտախտի ամենացայտուն նմուշներից մինը։

Լաւ չէ կացութիւնը և բուն յեղափոխական, սոցիալիստական բանակի մէջ։ Հին բիւզանդական ու սխոլաստիկ վիճաբանութիւնները, տոգորուած մի նեղսիրտ աղանդամոլութեամբ՝ ճարակում են բոլոր շարքերը։ Սոցիալ-դեմօկրատիան պառակտուած է, բաժնուած 4—5 մասի, որոնք եռանդով կրծում են իրար… ոչ թէ գործնական, այլ յաճախ ամենավերացական, փիլիսոփայական, նոյնիսկ թէօլօգիական խնդիրների վրայ։ Խնդիրներ՝ որոնք ոչ մի առնչութիւն չունին թշուառ, հարստահարուած ժողովրդի անմիջական պահանջների հետ… Ողբալին այն է՝ որ „աստուածորոնման“ ու այլ նման մարզանքներով տարւում են հէնց նրանք, որոնք երէկ խանդավառութեամբ տրուել էին բուն գործնական-յեղափոխական աշխատանքին, որոնք երէկ ցնցում էին

երիտասարդութիւնը „մրրկահաւերի“ ու մօտալուտ տակնուվրայումների գոռ ու ահեղ շեփորումներով...

Տխուր է... Աւելի բախտաւոր չէ սօցիալիստ-յեղափոխական հատուածը։ Ազեվի դաւաճանութիւնը հասցրեց նրան ծանր, անբուժելի հարուած։ Ազգերի յեղափոխական տարեգրութեան մէջ չը տեսնուած, մի հոյակապ դաւաճանութիւն, որ անհուն կսկիծ յարուցեց ամբողջ յեղափոխական երկրագնդի վրայ և ամենից առաջ՝ ռուս յեղափոխականների աշխարհում... Լինել երկար տարիներ այնքան ցածօրէն դաւաճանուած մի ընկերից, որ վայելել է ամբողջ կուսակցութեան սէրն ու յարգանքը, իմանալ յանկարծ, որ այդ աննման, տաղանդաւոր կազմակերպողը *), բոլոր ահեղ դաւադրութիւնների այդ աներևոյթ ոգին, բոլոր կուսակցական արկածների այդ անբաժան ուղեկիցը մի սուտ, անարգ մատնիչ է, ոստիկանական մի գործակալ... կարո՞ղ է լինել աւելի անգութ, աւելի դժնդակ մի աղէտ՝ յեղափոխական մի մարմնի ալէծուփ գոյութեան մէջ... Մի գաղտնի, ամենազօր ոստիկանութիւն—սարսուռ երկրների անխուսափելի, յաւիտենական անարգանքը — իր մի հմուտ գործակալի միջոցով՝ շարունակական չփման մէջ յեղափոխական կուսակցութեան հետ... և շնորհիւ այդ սերտ կապի, նա ոչ միայն ո ր ս ե լ է ու դահճի երախը նետել հազարաւոր անձնուրաց մարտնչողներ, այլ և— մղած անձնական դժգոհութիւնից, վրէժխնդրութիւնից, տարուած կարիէրային մի զարհուրելի մրցութեամբ —

---

*) Այդ տաղանդաւոր կազմակերպողը, որ 1904-ի նոյեմբերին (Պլէվէին սպանելուց յետոյ), Պարիզում, համառուսական դիմադիր կուսակցութիւնների առաջին խորհրդաժողովին (կադետների ամենախոշոր պարագլուխների մասնակցութեամբ) յանդգնում էր մարտական հրահանգներ տալ գործող մարմիններին, ի շարս նրանց՝ Դաշնակցութեան պատգամաւորին...

դաւել է շարունակաբար բարձր, պաշտօնական ոստիկանութեան դէմ, կազմակերպել է մի շարք խոշոր մահափորձեր, մասնակցել է ամենակարող Պլէվէի ու մեծ իշխան Սերգիի սպանութեան փորձերին... Ահա վերջին տարիների հսկայական առեղծուածը, որ եկաւ մի աւելորդ անգամ իր բարոյական մահավճիռն արձակելու անորակելի ռէժիմի դէմ։

Ս.-ռ.-ական մեթօդը, գործելակերպը չ'արատաւորուեց, հարկաւ, դրանով — և կուսակցութեան համագումարը միաձայն որոշեց շարունակել այն — բայց հարուածը շշմեցուցիչ էր... Եւս առաւել, որ յետագայում նորանոր մերկացումները պարզեցին չարիքի խորարմատ ծաւալումը յեղափոխական ասպարէզում... Ցայտնուեց, որ ազեվականութեան, „ժան-պրովոկատորութեան“ պատուհասը ճարակում է և ուրիշ կուսակցութիւնների, սօցիալ-դեմօկրատների, Բունդի շարքերը. խախտուեց և դրանց հաւատը դէպի իրենց մարմինների մաքրութիւնը, հանդէս եկան նրանց շարքերում ևս մանր ու խոշոր Ազեֆներ։

Այդ անօրինակ, համառուսական աղէտը կունենայ, անշուշտ, և իր դրական, փրկարար հետևանքները։ Չարիքը յայտնագործելով՝ հնարաւոր է դառնում աւելի հաստատուն ու ապահով հիմքերի վրայ դնելու ազատագրական գործը։ Տարակոյս չը կայ, որ այդ անհամար ազեվատիպ հերոսները իրենց չարագործ ներկայութեամբ յեղափոխական շարքերի մէջ, իրենց երկդիմի խաղերով մեծապէս նպաստել են մինչև օրս բռնակալութեան յաղթանակներին։ Ճիշտ է, նրանք երբեմն, իրենց յեղափոխական դաշնակիցներին մոլորեցնելու նպատակով, խաղացել են, ինչպէս տեսանք, և դրական դեր, ջուր են ածել երբեմնապէս յեղափոխութեան ջրաղացի վրայ. ճիշտ է, Ազեվի սադրանքներով ջնջուել

են բռնապետութեան հզօր, ահարկու սիւներ... Բայց և դրա հետ՝ քանի՜ թանկագին, երիտասարդ ուժեր են մատնուել մահուան պ ա ր ա ն ի ն, քանի՜սն են շանթահարուել իրենց ձեռնարկների կէս-ճանապարհին...

*Եւ ահա մերկապարանոց հրապարակ է դրւում այդ սարսափելի ազեֆեան չարիքը և կուսակցութիւնները սթափւում են — փոքր ինչ ուշ, տարաբախտաբար, բայց լաւ է ուշ... Սթափւում են ու եռանդով դիմում „մաքրագործման" աշխատանքին։ Հսկայական, դժուարին մի աշխատանք։ Բարեբախտաբար, բռնութեան նախկին սպասաւորներն են — վաղեմի հզօր ոստիկանական վարիչներ ու գործակալներ — որ գալիս են իրենց հեղինակաւոր ցուցմունքներով դիւրացնելու գաղափարական մաքրագործումի այդ պրոցէսը։ Պատմութեան անլո՜ւր հեգնանք *)...*

Հզօր, առնական ճիգ է թափւում այսօր Ռուսաստանի բոլոր կուսակցութիւնների կողմից՝ վերակազդուրուելու, կազմակերպուելու. մենք ևս պիտի հետևենք նրանց օրինակին։ Նախորդ արտասուելի իրողութիւններն ի տես դրինք, որպէսզի ցոյց տանք, թէ ո՛րպիսի զգուշութիւն է պէտք ուժերի ընտրողութեան մէջ, որպիսի ծայրայեղ հոգացողութեան նիւթ պիտի լինի մեր շարքերի մաքրութիւնը ներկայ խառնակ ժամանակում, երբ համառուսական մթնոլորտը լի է ամեն տեսակ բախ-

---

*) Վերջապէս, նորերս Ռաչկովսկիների ու Գերասիմովների վոհմակը՝ Կ ա ր պ օ վ ի սպանութեան զարհուրելի փորձից տեսաւ, թէ ինչպիսի վտանգաւոր խաղ է ձեռնարկել, թէ որպիսի աղէտաբեր ե ր կ ս ա յ ր ի ս ո ւ ր է „ազեֆականութիւնը": Երբ Ազեֆ ե ր կ դ ի մ ի Ե ա ն ո ւ ս էր՝ զռեհիկ դաւաճանի ոգով, ապա նրա դէմ ծառացաւ իր հ ա կ ո տ ն ե ա յ ն, մի այլ Եանուս,—Պ ե տ ր օ վ ը՝ իր գաղափարային, յեղափոխական կերպարանքով... Խաղը կը շարունակուի՞...

տախնդիր տիպերով, մանր ու խոշոր լրտեսներով, պրովօկատօրներով... Հայոց մթնոլորտը, ի հարկէ, աւելի մաքուր չէ, քան ռուսականը... Վխտում են մեզ մօտ եւ ամեն կարգի սողուններ, որոնք մասամբ մերկացուած են անցեալում և արժանաւոր պատիժը կրած յեղափոխական ՙնեմեզիդայից, ուրիշները մնում են տակաւին ստուերի մէջ։ Բայց կազմակերպութեան բարոյական և ռազմական վարկը, յուսով ենք, կը կարողանայ չէզոքացնել անմաքուր շահատակութիւնները։ Դաշնակցական միջավայրը եղել է միշտ մահացու՝ դաւաճանութեան բացիլների համար և ոճրանիւթ յղացումները խեղդւել են սովորաբար սաղմի մէջ։

Կազմակերպուե՛լ... Այդպէս է Ներկայի համատարած մարտակոչը։

Ուժերը Կովկասում ջլատուած, ցիր ու ցան, կազմակերպութիւնը՝ շատ տեղերում կազմալուծուած։ Արդիւնք հիասթափութեա՞ն։ — Երբէք։ Յեղափոխական կորովը մարա՞ծ։ — Ամենևին։ Դա ռէակցիայի ժամանակաւոր յաղթանակն է, որ տարածել է իր գերեզմանային շունչը ամբողջ ռուսական կայսրութեան վրայ։ Դա ըմբոստութեան ժամանակաւոր տեղատուութիւնն է՝ իր բոլոր ցաւագին արտայայտութիւններով։

Դառն է, անշուշտ, չափազանց դառն՝ մտաբերել մօտիկ անցեալը, ազատութեան մեղրամիսը, երբ 15 տարուայ „ստորերկրեայ“ գոյութիւնից յետոյ, մէկէն ի մէկ լոյս աշխարհ ընկանք և մեր գոռ միտինգներով, խօսքի ու մտքի ազատ մարզանքներով թնդացրինք հրապարակը... Դառն է յիշել, որ այդ բոլորից յետոյ նորէն իջանք դէպի „ստորերկրեայ“ աղջամուղջը, ամբողջ յեղափոխական Ռուսաստանի հետ փարեցինք դաւադրական կարբոնարիզմին... Կորցրինք, տանուլ տուինք

յեղափոխական շրջանի մի շարք կարեւոր նուաճումներ. . .

Այդ գիտակցութիւնը ճնշում է մեզ, բայց չի վհատեցնում։ Մենք հաւատում ենք, որ շատ էլ հեռու չէ ազատագրական նոր յորձանքը, որ բռնապետական կառավարութիւնը իր գլխապատառ վազքի մէջ դէպի նախկին, ·պօբեդօնօսցեվեան օրերը՝ դատապարտուած է խորտակւելու։ Մենք հաւատում ենք, որ մեր կովկասեան դժբախտ հայրենիքը եւս գտնւում է վ ե ր ա ծ ն ո ւ թ ե ա ն ճամբու վրայ։ Պէտք է, միացած բոլոր դիմադրական տարրերի հետ, փութացնել լիակատար սահմանադրական վերածնութեան աշխատանքը։ Պէտք է—այս մէկը ամենահրամայականն է մեզ համար—հսկել, որ բռնապետութեան այդ „վազքը" թանկ չը նստի հայ ժողովրդին, չը բերէ նրան նոր աղէտներ, նման 1903-ի, 1905—906-ի աղէտներին, չը խլէ նրանից ազգային առաջադիմութեան այն լղարիկ իրաւունքներն ու հաստատութիւնները, որոնք նոյն յեղափոխական օրերի նուաճումներից են։

„Ստորերկրեայ" գործունէութիւնը նորէն, այո, ստանում է այժմէութիւն։ Ի՞նչ արած, երբ կառավարութիւնը զօռով քշում է այնտեղ յեղափոխական բոլոր մարմինները։ Մենք ուզեցինք խաղաղ պայքար սահմանադրական իրաւակարգի մէջ—մեզ մղեցին նորէն դէպի դաւադրութիւն ու արիւն։ Պէտք է համակերպել այդ ճակատագրականութեան, բայց համակերպել ոչ իբրեւ ստրուկ, այլ իբրեւ ըմբոստ, որ գնում է կատարելագործելու իր զէնքերը մութի մէջ, որպէսզի բարեպատեհ վայրկեաններին դուրս արշաւէ ժողովրդային զանգուածների հետ։ Ջեռնոցը նետուած է ամբողջ ազատատենչ ու յեղափոխական Ռուսաստանին եւ վերջինը բարձրացնում է այն, թէկուզ պէտք լինի իր լիակատար յաղ-

թուլթեան համար դարձեալ տասնեակ տարիների ճիգ ու զոհողութիւն...

Դաւադրական շրջանը վերադառնում է կայսրութեան բոլոր բաժիններում, անգամ խաղաղ, անդորրապաշտ Ֆինլանդիայում։ Ստոլիպինեան կառավարութիւնը, կախաղաններով ու մասսային գնդակահարութիւններով ձեռք բերած իր յաղթանակից յետոյ, ոչ թէ միայն անընդունակ է գտնում պետական ամենատարրական իմաստութեան, ոչ թէ միայն մերժում է ամենահրատապ րէֆօրմները, այդ ալէծուփ երկիրը հանդստացնելու համար, այլ և վճռել է տալ աշխարհին բռնակալական ամբարտաւանութեան չը տեսնուած ապացոյցներ. բոլոր „Ծայրերը“ իրար ետևից անցնում են յետադիմական քուրայի վրայից...

Դաւադրական շրջանը վերադառնում է—պէտք է շտապել։ Վերականգնել գաղտնի կազմակերպութիւնների ցանցը քաղաքներում ու գաւառներում—ինտելիգենցիայի, բանւորութեան, գիւղացիութեան շրջաններում։ Առանց ցասկոտ, հիւանդագին շարժումների, բայց և առանց ծոյլ ու իներտ յապաղումի։ Մեր թշնամիները անասելի եռանդ են թափում մեր շարքերը ճարակելու—ցոյց տանք մենք ևս համահաւասար եռանդ, տոկունութիւն։ Երէկւայ ընկերներից շատերն են գուցէ գրավւել արդէն կուլտուրական շարժման հրապոյրներով, անձնատուր եղել իրերի հոսանքին և կրաւորական հաւատամքի մէջ մոռացել են թերևս րէակցիայի այդ գահավէժ սլացքը, որ գալիս է վերստին պոկելու ամենուրեք „կուլտուրականութեան“ նորաբողբոջ ծաղիկները։

Քանի դեռ ուշ չէ, պէտք է սթափւել և վերաշինել կազմակերպութիւնը, համախմբել հին ու նոր ուժերը՝ կուսակիցներին ու համակիրներին, համախմբել դրօշակի շուրջը բոլոր նրանց, որոնք դաւանում են մեր ծրա-

գիրը, ընդունում են մեր տակտիկը և իրենց խօսքով ու գործով յարմարւում են այդ տակտիկին, այդ ծրագրին։

Վերակազմելու է հին շրջանակները, աւելացնելով նոր, թարմ, գործօն ուժերի այն պաշարը, որ արտադրում է մեր կեանքը։ Եւ շարքերը վերակազմելու հետ՝ զուգընթացաբար առաջ տանել կանոնաւոր ու մեթօդիկ աշխատանքը։ Պրօպագանդը — մեր գերագոյն միջոցը։ Արգելւում են հրապարակական ժողովները — պէտք է դիմել գաղտնի հաւաքումներին։ Արգելւում է ինտելիգենցիային՝ տալ բանւոր ու գիւղացի ընդհանրութեանը ամենատարրական ծանօթութիւնները գիտութեան ու կուլտուրայի մասին — պէտք է հիմնել, բազմացնել ընթերցանական ու ատենաբանական իլլեգալ ակումբները, ինչպէս նախնի օրերում։

Սակայն, ստւերի մէջ մտնելով հանդերձ՝ յեղափոխական կազմակերպութեան առաջին հոգսը պիտի լինի՝ չը խզել երբէք իր կապերն ու շփումը ժողովրդային զանգւածների հետ։ Ազատութեան կարճատև օրերում մենք տեսանք այդ զանգւածների ոգևորութիւնն ու հասունութեան աստիճանը, տեսանք թէ ինչպէս ագահութեամբ կլանում էին մեր խօսքը, մեր կուսակցական մամուլն ու գրականութիւնը, տեսանք, զգացինք կուսակցութեան ազդեցութիւնը այդ մասսաների վրայ։ Ո՞ւր են նրանք... Չեն անհետացել, ապրում են և կարօտով սպասում են մեր ընկերական խորհրդին ու ղեկավարութեան։ Թողնւած ի սաստ ճակատագրի, նրանք դիւրութեամբ կարող են լքւել ու ենթարկւել դէմօրալիզացիայի...

Բազմիցս արդէն ասւած է, չը կայ չարիք, առանց բարիքի։ Թուրք-հայկական աղէտաբեր պատերազմը ունեցաւ որոշ տեսակէտից նաև բարերար հետևանքներ։ Ռընան ասում է մի տեղ. „պատերազմը — դա մտրակի հարւածն է, որ արգելում է մի ժողովրդի՝ խո-

րասուզւելու մրափի մէջ և որ ստիպում է հանգիստ միջակութեանը՝ դուրս գալու իր ապատիայից (անյոյզ, կրաւորական վիճակից)։ Այդպիսի ազդեցութիւն ունեցան մասամբ Թուրք-հայկական կռիւները՝ մեր ի ծնէ կրաւորապաշտ համայնքի վրայ։ Հսկայական դիմադրութեան յորձանքի մէջ՝ նա վաստակեց մի քանիսը այն անհրաժեշտ առաքինութիւններից, որ ընծայում են ընդհանրապէս նոյնիսկ չարանիւթ պատերազմները։ Հարւածների ու հակահարւածների երկարատև հողմերի մէջ՝ նա որոշ չափով կազդուրւեց, թարմացաւ, աճեց նրա դիմադրական կորովը, նոր թափ առաւ նրա առաջադիմութեան անիւը, բարձրացաւ նրա հոգեկան տրամադրութիւնը և մանաւանդ սեփական արժանապատւութեան գիտակցութիւնը, առանց որի՝ ժողովուրդներն ու անհատները ընկղմւում են բարոյական ու մտային ճահճի մէջ։

Հսկայական է մեր պարտաւորութիւնը աշխատաւոր ընդհանրութեան հանդէպ։ Անհրաժեշտ է այս կամ այն ձևով հակազդել, արձագանք տալ նաև լէգալ, օրինական կեանքի այլազան արտայայտութիւններին ու պահանջներին. իսկ այնտեղ, ուր որ շատ թէ քիչ հնարաւորութիւն կայ ձեռք զարնելու աշխատաւորական— բանւոր կամ գիւղացի—միութիւնների, կօօպերատիվների, փոխադարձ օգնութեան միութիւնների, արհեստակցական կազմակերպութիւնների — ընկերները պիտի աշխատեն օգտագործել հանգամանքը, հիմնել այդպիսի, թէկուզ և չէզոք, անկուսակցական միութիւններ, բանւորների, գործակատարների, գիւղացիների մէջ, ուղղութիւն տալ նրանց տնտեսական պայքարին, բարձրացնել նրանց նիւթականն ու հոգեկանը մանր ու խոշոր նւաճումներով, պատրաստել նրանց միաժամանակ գալոց մեծ պայքարների համար...

Աւելացնենք։ Անդուլ կազմակերպելով ու աճեցնելով մեր շարքերը, մենք դրա հետ միասին պէտք է խոյս տանք ներվոտ, կենտրոնախոյս գործողութիւններից, չը վարենք կազմակերպական մեր աշխատանքը այն գիտակցութեամբ, թէ „վճռական ճակատամարտները“ արդէն մօտ են... Դժբախտաբար, ոչ։ Ռուսաստանի յեղափոխական ուժերի արդի վիճակում՝ մասսային քաղաքական շարժումները չեն կարող լինել մօտիկ ապագայի հնարաւորութիւն... Հարկ է ամուր դրոշմել այդ մեր մտքի մէջ և գիտակցել, որ առանձնացած, յախուռն, անսիստեմ բռնկումները միմիայն մէկ Ծայրագաւառում, միմիայն մի փոքրիկ ժողովրդի ծոցում, այժմեան ծանր պարագաների մէջ դատապարտուած են ցաւագին, աղէտաբեր վիժումների... Խնայե՛լ պէտք է յեղափոխական կորովը, մանաւանդ մեր սակաւաթիւն միջավայրում, գործադրել այն՝ միայն *in extremis*, միայն այնպիսի ծայրագոյն պայմաններում, երբ կայ մի տեսակ անդիմադրելի *force majeure* և երբ նա կարող է գործադրուել աջողութեան խոշոր հաւանականութեամբ...

Պրօպագանդը — մեր ամենօրեայ, լաւագոյն զէնքը։ Պրօպագանդը այն մեծագործ, յեղաշրջող ուժն է, որ վիթխարի պատնէշներ է վայր գլորում... Բրօշիւրների, գաղտնի ու յայտնի գրականութեան, գրաւոր ու բանաւոր քարոզի հեղեղն էր, որ մտքերը պատրաստելով, առաջ բերեց 1905-ի սոցիալիստական հոյակապ զօրաշարժը ամբողջ ռուս կայսրութեան մէջ և որ խլեց գոռոզ միապետութիւնից հոկտեմբերեան մանիֆէստը։ Քարոզենք ամենուրեք մեր կուսակցական աւետարանը և չը վհատինք, որ ժողովրդային զանգուածները փութով, դիւրութեամբ չեն իւրացնում այն։ Այդպէս է գաղափարների ճակատագիրը։ Նոյն Ռուսաստանում, չը նայեած մի շարք տասնամեակների անդադ-

րում աշխատանքին, այսօր տակաւին անջրպետներ կան աշխատաւոր ընդհանրութեան և ռամկավար ու սօցիալիստ մտաւորականութեան միջև. վերջինս փայլուն, անգնահատելի նուաճումներ է արել, բայց միայն տակաւին 80 միլիօնաւոր աշխատաւորութեան մի փոքրիկ հատուածի մէջ: Երևոյթը—որ „զանգուածային հոգեբանութեան“ մէջ ն ո ր ա տ ե ց ո ւ թ ի ւ ն (միզօնէիզմ) անունն է կրում—յատուկ է նաև արևմտեան մասսաներին, որոնք ունէին իրենց ետևում հարիւր տարուայ յեղափոխական կեանք ու ազատագրական թռիչքներ:

Գաւառը, մանաւանդ, չը լքենք: Մեր կազմակերպական ա պ ա կ ե ն տ ր օ ն ա ց ո ւ մ ը—ինքնին մեծ, համակրելի մի սկզբունք—ունի երբեմն իր սուերաւոր կողմերը: Դուռ բանալով երբեմնապէս անկարգութեան, նա յաճախ մտնում է հեռու գաւառների մարմինները կորածութեան ու մոռացութեան: Քանի՛ անգամ գանգատներ ենք լսել այդ հեռաւոր անկիւնների կօմիտէներից, իրենց լքուած ու անօգնական վիճակի մասին: Կուսակցական հրատարակութիւնները նրանց չեն հասնում, կուսակցական կենդանի խօսք նրանք չեն լսում—ձեռնհաս գործիչները խիստ սակաւ են երևան գալիս նրանց հօրիզօնում: Այն մարմինները, որոնք իրենց աշխարհագրական դիրքերով և ընդհանուր ծողովներից առած որոշ իրաւունքներով ստանում են կենտրօնական մարմինների հանգամանք, սովորաբար ծծում են կուսակցութեան լաւագոյն ուժերի մեծամասնութիւնը—և գաւառական կօմիտէները մնում են յաճախ բախտի կամքին: Հետևանքը—կազմալուծում: Աւելի ևս: Հետևանքը լինում է և այն, որ տեղ-տեղ զարգանում է շանտաժային, խուլիգանական շարժումը, նոյնիսկ կուսակցութեան անունը կրող անհատների մասնակցու-

թեամբ։ Յիշենք, թէկուզ, ամենահայաշատ Շիրակը իր զուտ հայկական ու աշխատաւորական կենտրոնով, որ մօտ անցեալում անպատիւ շանտաժների թատր էր դարձել—մի տեսակ կուսակցական վանդէա... Կազմակերպութիւնը հասնում էր, ի հարկէ, իր ժամանակին և բաւել տալիս յեղափոխութեան ազրուկներին, բայց այն էլ ցաւ է, որ նրանք կարողանում էին հրապարակ գալ և ժամանակաւորապէս տարածել իրենց թունաւոր շունչը գաւառի վրայ։ Ծրագրային կենդանարար խօսքի տեղ, ահագին հայ աշխատաւոր ազգաբնակութիւնը կերակրւում էր երկար ժամանակ շանտաժային հերոսների սխրագործութիւններով և բնականաբար պաղում էր՝ թէ դէպի կազմակերպութիւնը և թէ առհասարակ դէպի ամեն մի գաղափարական գործ։

Ապակենտրոնացումը, հեռաւոր մարմինների ինքնագլուխ ու ավտոնօմ գործունէութիւնը լաւ բան է, ի հարկէ, բայց միայն պ ա յ մ ա ն ո վ՝ որ նրանք կարողանան սեփական ուժերով զարգանալ ու բարգաւաճել։

Պէտք է դարման գտնել գաւառական անտէրութեանը։ Այնտեղ, անդրկովկասեան խուլ ու խոպան անկիւններում շատ քիչ են արծարծել մեր սօցիալական ու քաղաքական գաղափարները, և եթէ եղել են մերթ ընդ մերթ ըմբոստութեան բռնկումներ մեր դրօշակի տակ,—դա էլ եղել է գուցէ մեծ մասամբ՝ տարերայնօրէն, մղւած այն խորունկ հաւատից ու վստահութիւնից, որ ժողովուրդը տածել է միշտ դէպի այդ դրօշը։ Կովկասեան ոչ մի կուսակցութիւն—վերջին տագնապոտ շրջաններում—չի ունեցել իր տրամադրութեան տակ այնքան ընդարձակ, մասսային ուժ, ինչպէս մենք—և կարելի է ասել, ոչ մի կուսակցութիւն չի ցոյց տւել այնքան խիստ անտարբերութիւն դէպի իր մասսաների կրթութեան ու դաստիարակութեան խնդիրը—ինչպէս

մենք։ Ուժեղ կազմակերպութիւնները չեն թագցնում իրենց վրիպումները. խոստովանենք և ջանանք սրբագրել նրանց։

Ուժերի ծայրայեղ խնայողութեան հետ անհրաժեշտ է նրանց խելացի բ ա շ խ ո ւ մ ն։ Պրօպագանդի ծանրակշիռ գործը, որի աջող կամ ձախորդ տնօրինումից կախուած է կազմակերպութեան ապագան, պէտք է դրուի մեր բոլոր մարմինների մէջ ամենալուրջ վերաքննութեան։ Նա պէտք է դրուի խոր ու բանաւոր հիմքերի վրայ, որպէսզի ստեղծէ ամբողջ կուսակցական օրգանիզմի մէջ ներդաշնակութիւն ու ամբողջութիւն։ Վերջին ընդհանուր ժողովը որոշել է — նոյն ա մ բ ո ղ ջ ա ց մ ա ն նպատակով — կենդանի յարաբերութեան մէջ դնել մեր հրատարակչական մարմինները։ Միանգամայն տեղին է ընդհանրացնել այդ որոշումը և աշխատել ամենակենդանի կապ ու շփում հաստատելու կուսակցութեան կենտրոնների և հեռաւոր ծայրերի միջև։ „Շրջիկ պրօպագանդիստների“ սիստեմը, որ անցեալում շօշափելի ծառայութիւններ է մատուցել մեզ, պէտք է դառնայ իրօք սիստեմ, ոչ կցկտուր, պատահական մի մարզանք։ Գ.Է.Թ. նրա միջոցով՝ կենտրոնական հաստատութիւնները պիտի ձգտին լրացնել գաւառների կարիքները, կատարել նրանց հանդէպ իրենց պարտքը — որոշ չափով հսկողութիւն, որոշ չափով ղեկավարութիւն։

Յատուկ շրջիկ պրօպագանդիստներ — գիւղացիութեան համար։ Որքա՜ն անհրաժեշտ է այդ խաւար ու տարաբախտ աշխարհում մի հզօր ու կուռ կազմակերպութիւն, որ ամեն օր արձագանք տայ կեանքի ցաւոտ պահանջներին, հովանաւորէ մանր, անհող ու սակաւահող գիւղացիութիւնը — մեր ծրագրի ու տենչերի կենտրոնական առարկաներից մինը — ամեն կարգի գիշատիչների դէմ։

Յատուկ շրջիկ պրօպագանդիստներ—երիտասարդութեան համար։ Պէտք է պինդ պահել մեր ձեռքերում ամենաթանկագին այդ տարրը, հեռու վնասակար ազդեցութիւններից, հեռու ծուլարար, ընդարմացնող հոսանքներից։ Կենդանի, առողջ գործի երիտասարդութիւնն է եղել միշտ մեր դրօշակի տակ—ոչ ամուլ ֆրազէօլօգիայի և անհատնում բէզօնեօրութեան երիտասարդութիւնը։ Այդպէս պիտի լինի և յաւիտեան։ Սօցիալական վարդապետութիւնների ու նշանաբանների քարոզի հետ՝ պէտք է յար և միշտ արծարծել այդ երիտասարդ շարքերում ռազմական, ըմբոստ ոգին, մտցնել նրանց գիտակցութեան մէջ, որ ներկայ երևութական անդորրութիւնը ժամանակաւոր է, որ քաղաքական մթնոլորտը դառնալու է միշտ աւելի խեղդուկ ու մահաբեր, որ րէակցիայի ջանքերով իսկ, նրա գահավէժ ու խելակորոյս ընթացքով՝ համառուսական կեանքը նորէն վաղ թէ ուշ բռնուելու է օրհասական ու ազատարար ցնցումներով, որոնց—ուզենանք թէ չուզենանք—պիտի մասնակցենք մենք ևս... Գուրգուրանքո՛վ պահպանենք երիտասարդ աշխարհի մէջ ցանած մեր այն նուիրական կորիզները, այն մարտական սաղմերը, որոնց կուռ մէջքին յենուած՝ մենք վարեցինք երէկուայ անմոռանալի ճակատամարտները և որոնք ապագայում ևս—երբ շարժման կոհակները վերստին կը հեղեղեն ամենուրեք—դարձեալ հանդէս կը գան իրենց զուարթ ու կենսուրախ շարքերով և կը քաշեն իրենց ետքից մասսաներին։

Մեծ, նուիրական, դժուարակնճիռ պարտաւորութիւններ... Հարուստ, ճիւղաւորուած, բազմազան մի աշխատանք։ Այդպէս է մեր կուսակցութեան աշխատանքը։ Այդ ահագին պահանջին գոհացում տալու համար՝ անհրաժեշտ է ուժերի պատկառելի մի պաշար։ Նու-

նախ—մտաւոր ուժերի։ Պրօպագանդային այդ բարդ գործունէութիւնը պահանջում է կուսակցական հասուն, կարող ինտելիգենցիա, մտաւորականութիւն, որ պահպանէ մշտնջենական շփումն զանգուածների հետ, որ բերէ թէօրիական ծանօթութիւնների լոյսը զանազան շրջանների մէջ, ներշնչէ, կազմակերպէ, ղեկավարէ։ Մտաւորականութիւն՝ որ կարողանայ ստեղծել ամենուրեք գիտակցական վերաբերում դէպի շրջապատող երևոյթները, բացատրել, մեկնաբանել այդ այլազան խաւերին իրականութեան ու հասարակական գիտութեան բազմապիսի կնճիռները,—թև տալ անգէտ և ազնիւ աշխատաւոր մասսաներին, օգնել նրանց ընտրելու լաւագոյն ճանապարհը կեանքի ճնշող լաբիւրինթօսում,—այդպէս միայն կը պատրաստւի իրական, յեղափոխական առաջադիմութիւնը, այդպէս միայն կը սնւի ու կը բարգաւաճէ մի այնպիսի մեծ կազմակերպութիւն, որպիսին մերն է։ Գաղափարներով են ապրում, շնչում քաղաքական ու սօցիալական կուսակցութիւնները,—ցանե՛լ պէտք է այդ գաղափարները, ըստ կարելւոյն լայն չափերով կենտրօններից դէպի հեռաւոր ծայրերը։

Ունի՞նք արդեօք այդպիսի մտաւորականութիւն. . . Այստեղ դարձեալ նոյն վշտառիթ հակօրինութիւնը։ Թւում է, ունինք, բայց և չունինք։ Ասացինք քիչ առաջ, որ կովկասեան ոչ մի ուրիշ կուսակցութիւն չունի մասսաներ այնպիսի լայն համեմատութեամբ, ինչպէս մերը։ Նոյն դիտողութիւնը արդարացի է ինտելիգենցիայի նկատմամբ։ Դաշնակցութեան շրջանակներում տեղաւորւած է հայկական լաւագոյն մտաւորականութեան մեծամասնութիւնը։ Բայց այդ տհագին ուժը չի գտնում ցանկալի բաշխումն ու գործադրութիւն մեր պայքարի ուղղութեամբ։ Նա ընդհանրապէս շատ քիչ

ուշադրութիւն ու եռանդ է նւիրում քարոզչական գործունէութեանը, մանաւանդ խօսքի պրօպագանդին։ Այդ հանգամանքն ունի իր ծանօթ բացատրութիւնը, եթէ ոչ արդարացումը։ Գործի պրօպագանդը սկզբից ի վեր կուսակցութեան եղակի մտահոգութիւնն է եղել և նրա առջև սովորաբար նսեմացել են պրօպագանդի միւս ձևերը։

Բայց ժամանակ է ձեռք զարնելու ամենուրեք, մանաւանդ գաւառներում, եռանդուն, ինտելիգենտ պրօպագանդի։ Ունինք արդէն հրապարակի վրայ ուսումնաւարտ երիտասարդների պատկառելի մի պլէադ, գիտական, թէօրիական ծանօթութիւնների բագաժով։ Ուրիշները, համալսարանական նստարանների վրայ, Եւրոպայում, Ռուսաստանում, վաղը կ'երթան ստւարացնելու շարքերը։ Մեր կուսակցական ինտելիգենցիան ևս լինելութեան պրօցէսի մէջ է (im Werden), նա օրէցօր աճում է, կազմաւորւում և—կարելի է ասել—նաև համադրւում, ամբողջանում։ Միշտ աւելի միապաղաղ, ներդաշնակ, միշտ աւելի տոգորւած կուսակցական աշխարհահայեացքով։ Մեր ուսանող ընկերները, որոնք այսօր Եւրոպայի ուսման լուսագոյն տաճարներում ընդունում են գիտութեան ու հասարակականութեան ճառագայթները — գիտեն, անշուշտ, թէ որքան ծանր, բայց և հրապուրիչ, պատասխանատւութիւն է ընկնում իրենց երիտասարդ գլուխների վրայ... Պատասխանատւութիւն պատմական մեծ վայրկեանի առաջ, ժողովրդի և կուսակցութեան առաջ։ Մի ահագին օրգանիզմ—թէկուզ միայն մեր կուսակցական օրգանիզմը իր հում, խոպան զանգւածներով—սպասում է նրանց բեղմնաւոր մշակման, աջակցութեան ու գործակցութեան։

Վերածնութեան մեծ վայրկեանին—և մեծ սերո՛ւնդ...

Եւ այդ սերունդը թող հեռու մնայ այն շաբլօն ու

թեթեւսօլիկ մարզանքների գայթակղութիւնից, որ բնորոշում է մի շարք ձախակողմեան ֆրակցիաներին մեր կովկասեան ու հայկական միջավայրում։ Թող հեռու մնայ նրանից յեղափոխական մակերեսային դիլլետանտիզմը և նեղգլուխ ու ֆրազամոլ դոգմայնութիւնը։ Սօցիալիզմը չը հասկանան աղանդի մտքով, դասակարգային պայքարը չը հասկանան նեղ, գռեհիկ և տարամերժ իմաստով։ Ժողովրդի ոչ մի խաւ չը դարձնեն բացառիկ կուլտի, պաշտամունքի առարկայ, այլ ամբողջ այլազան Աշխատաւոր Ընդհանրութիւնը— բանւորութիւն, իրաւազուրկ գիւղացիութիւն, իրաւազուրկ արհեստաւորութիւն, գաղափարական մտաւորականութիւն — դարձնեն իրենց տիրական մտահոգութեան կենտրոնակէտ։

Քաղաքական ու սօցիալական դաւանանքների աշխարհում՝ պէտք է ներշնչւել եւրոպական աղբիւրներից — ոչ ռուսական։ Ռուսները մտաւոր կուլտուրայի մէջ տւել են մեզ անգնահատելի և անմոռանալի դասեր, բայց ռուսական առանձնայատուկ սօցիալիզմը—որ արդէն համառօտակի բնորոշեցինք — մենք չենք կարող ընդօրինակել։ Նրան պակասում է այն լայն ոգին, այն իրապաշտ ու ամբողջական ըմբռնումը, որ բնորոշում է արեւմտեան սօցիալիստներին։ Նրան յատուկ են վտանգաւոր ծայրայեղութիւններ, սօցիալիստական մի տարամերժ աղանդականութիւն։ Յեղափոխութիւն և սօցիալիզմ ձուլւում են այնտեղ, ձուլւել են միշտ։ Յեղափոխութիւնը, քաղաքական յեղաշրջումը աներևակայելի, անհնարին է թւում առանց սօցիալիզմի և այդ իսկ պատճառով՝ կռիւների՝ նոյնիսկ ամենասուր տագնապների ընթացքում յաճախ մերժւում է ոչ-սօցիալիստ, բուրժուա-դեմօկրատ հատւածների գործակցութիւնը։ Մերժւում է, իբրև չարիք, որ կարող է վարկաբեկել

պրօլետարիատի, սօցիալիզմի դատը, նրա „կուսական մաքրութիւնը“…

Մեր սօցիալիզմը ընդհանուր ոչինչ չը պէտք է ունենայ այդ ըմբռնումի հետ։ Քաղաքական խեղդիչ ու մահաբեր մթնոլորտում, ազատագրական մեր դժւարին աշխատանքի մէջ՝ չը պէտք է մերժենք աջակցութիւնը, նոյնիսկ ժամանակաւոր դաշինքները, այնպիսի տարրերի, որոնք թէև հակառակ մեր սօցիալական ծրագրին, բայց պատրաստ են գործակցել յանուն ընդարձակ սահմանադրութեան յաղթանակի։ „Բուրժուա“, „կոդետ“, „մանր-բուրժուա“ անունները չը պէտք է շփոթեցնեն մեզ։ Աւելի լաւ է բոլոր բուրժուա-սահմանադրական տարրերի հետ միացած դիւրացնել քաղաքական վերիվայրումը, քան թէ միայն պրօլետարիատի ու նման ուրիշ կուռքերին փարած՝ լողալ անվերջ ռէակցիայի ու ստրկութեան արիւնագոյն ճահճի մէջ։ Եթէ սպասենք, որ քաղաքական յեղափոխութեան յաղթանակի համար Ռուսաստանի բազմամիլիօն աշխատաւոր ընդհանրութիւնը գրկէ գիտակցօրէն Մարքսի կամ Լավրօվի աւետարանը, հաւանօրէն պիտի սպասենք շա՜տ երկար․․ Այդ ճշմարտութիւնը նոր-նոր են կարծես ըմբռնում ռուս սօցիալիստ կուսակցութիւնները,—դառն, աղէտալի փորձերից յետոյ․․ Եւ մինչդեռ ս.-դ.-ների մի մասը, ինչպէս տեսանք, դնում է այժմ իր յոյսերը բուրժուա-լիբերալ տարրերի վրայ, ս.ր.-ների կենտրօնական օրգանը հետեւեալ նշանակալի յայտնութիւնն է անում („Զնամիա Տրուդա“, օգոստոս 1909 թ.).

„Որքան էլ սերտ ձուլւած լինին յեղափոխութեան ու սօցիալիզմի գաղափարները մեր աշխարհահայեացքում— այնուամենայնիւ, մեր տակտիկի մէջ սօցիալիզմի և յեղափոխութեան շահերը կարող են երբեմն շատ թէ քիչ շեղւել, տարբերւել իրարից։ Աւելի ճիշտ՝ ոչ թէ առհասարակ յե-

ղափոխութեան, այլ որոշ, տուեալ յեղափոխական շարժման շահերը կարող են շատ թէ քիչ շեղուել սոցիալիզմի շահերից"։

Զգաստ, առողջ ռէալիզմը մի վայրկեան անգամ չը պիտի թողնէ մեզ՝ ազատագրական գործունէութեան մէջ։ Սոցիալիզմի ու տնտեսական ազատագրութեան դրօշակը բարձր պահելով հանդերձ՝ նախ քաղաքական կռուի վրայ է, որ Ռուսաստանի բոլոր դիմադրական կուսակցութիւնները պիտի կենտրոնացնեն իրենց ճիգերը։ Այդպէս է պահանջում իսկական, չը խեղաթիւրուած սոցիալիզմի շահը։ Աւելի ևս։ Երբ չը կայ երկրում յեղափոխական գործօն, կամքոտ ռամկավարութիւն դեմօկրատիա,—սոցիալիստական բանակը պիտի ստանձնէ, մի յայտնի չափով այդ ռամկավարութեան պաշտօնը։ Յեղափոխական կռովի ոչ մի հիւլէ չը պէտք է արհամարհել, դէն շպրտել՝ անգամ յանուն ամենահրապուրիչ ֆորմուլների ու նշանաբանների,—և երբ մենք կանգնած ենք սոցիալիստական ու բուրժուա-դեմօկրատական համերաշխ գործակցութեան որևէ ձեռնարկի հանդէպ՝ յօգուտ քաղաքական յեղաշրջումների՝ մենք դոյնանման պարագաներում չենք ղեկավարուի այն տեսակ նկատումներով՝ թէ արդեօք չե՞նք շեղւում դասակարգային պայքարի ճամբուց, չե՞նք խախտում մեր ծրագրային կուսութիւնը, չե՞նք մթնացնում աշխատաւորութեան դասակարգային գիտակցութիւնը... Եւ մենք չենք, որ կը մեղանչենք սոցիալիզմի դէմ, այլ նրանք, որոնք կը խաթարեն մարտական համերաշխութիւնը և կը վտանգեն քաղաքական յեղափոխութեան դատը՝ այդպիսի ճղճիմ մտահոգութիւններով։

Արևմտեան այդ „ռէալիզմով" հարկաւոր է ներշնչուել մանաւորապէս ազգային ծանր կնճիռների մէջ։ Այդտեղ ևս ռուսական սոցիալիզմի տիրապետող հատուածո—

սօցիալ-դեմօկրատիան—մատնում է իր արտառոց դօգմայնութիւնը... Ո՞վ չի յիշում այն տենդային ռմբակոծումները, որ կրում էր Դաշնակցութիւնը այդ կուսակցութեան դատախազների կողմից, մեր ազգային արիւնոտ ճգնաժամերի միջոցին։ Ազգային մարմնի բոլոր վէրքերը, նրա ամենաաղաղակող ցաւերը նետւում էին մետաֆիզիկայի ու վերացականութեան սահմանները և ամեն ինչ վերածւում էր „բուրժուազիայի ու պրօլետարիատի“ հակամարտութեան—անգամ թաթարական „Վանդէի“ մէջ։

Ռուս յեղափոխականները եղել են աւանդականօրէն յարգող ազգային իրաւունքների և պահանջների։ Վաթսունական թւականներին, նրանց անդրանիկ պարագլուխը, Ալեքսանդր Հերցեն իր ընկերներով, ջերմ պաշտպան էին Լեհաստանի անկախութեան... մինչդեռ—նկատենք այդ հանգամանքն ևս—ռ ո ւ ս   հ ա ս ա ր ա կ ո ւ թ ի ւ ն ն ընդհանրապէս սառցային անտարբերութիւն էր ցոյց տալիս իր կառավարութեան ու զօրքերի վայրագութիւնների հանդէպ (1863-ի լեհական ապստամբութեան միջոցին և նրանից յետոյ)—վայրագութիւններ՝ որոնց առթիւ Ջիւզեպպէ Գարիբալդի այնքան դառնութեամբ գանգատւում էր Հերցենին ուղղած իր նամակի մէջ...

Եթէ հասարակութիւնն ու ամբողջ ժողովուրդը անտարբեր էին, ապա գէթ յեղափոխականը, այդ ժողովրդի ամենահասուն, գիտակից տարրը, բողոքում էր ազգայնական իրաւունքների ճնշման ու բռնաբարման դէմ և ջերմապէս քարոզում էր ռուս-լեհական համերաշխութիւն։ Այդպէս վարւեց և աշխարհահռչակ „Նարօդնայա Վօլիան“-ն, իր քաջարի սպայակոյտով, 70-ական և 80-ական թւականներին, երբ նա նոյնիսկ „Մարտական դաշն“ կապեց լեհական „Պրօլետարիատ“

կուսակցութեան հետ (1884 թ.)—ընդհանուր թըշնամու, բռնապետութեան դէմ: Այդ համաձայնութեան առթիւ հրատարակուած նշանաւոր ազդի մէջ, ռուս մարտական կուսակցութիւնը շեշտում էր իր „յարգանքը դէպի ամեն մի ազգի անկախութիւնն ու ազատ զարգացումը":

„Նարոդնայա Վոլիա"-ին շարունակեց հաւատարմութեամբ սոց.-յեղափոխական կուսակցութիւնը, որ վերջին 10 տարուայ ընթացքում Բրեշկօվսկայաների ու Չերնօվների տաք ու պերճախօս յօդուածներով պաշտպանում էր փոքր ազգերի ինքնօրինութիւնը և պետութեան ապակենտրոն կազմը:

„Մենք գրում ենք — ասում են նրանք — մեր դրօշակի վրայ ազգութիւնների լիակատար և անպայման իրաւունք՝ իրենց վիճակը տնօրինելու: Մենք պաշտպանում ենք դ ա շ ն ա կ ց ա կ ա ն կ ա զ մ ը, տեղական ամենալայն ինքնավարութիւնը, ժողովուրդների կուլտուրական ինքնուրոյնութիւնը":

Բացառութիւն կազմեց այդ աւանդական ընթացքից՝ ռուսական սօցիալ-դեմօկրատիան, որ սիրով հանդիսանում է ա պ ա զ գ ա յ ի ն (*anational*), երբ խնդիրը վերաբերում է ո չ - ռ ո ւ ս ազգութիւններին, բայց որ անկեղծօրէն ա զ գ ա յ ի ն է և թունդ հայրենասէր՝ երբ հարկաւոր է շեշտել ռ ո ւ ս ազգութեան ու հայրենիքի իրաւունքները *): „Ազգային ինքնորոշման" բա-

---

*) Վերը յիշատակած «ստրուվէական մետամորֆօզը բերեւս առանց առնչութեան չէ ս.-դ.-ական այդ հիմնաւոր ազգասիրութեան հետ: Այդ վաղեմի սոց.-դեմօկրատ թէօրետիկոսն ու պարագլուխը այնքան հեռու գնաց „ռուս հիմնական ազգութեան" իրաւունքների փաստաբանութեան մէջ, որ ի վերջոյ գրգռեց նոյնիսկ կադետական յայտնի առաջնորդի, չափաւոր Միլիւկովի բարկութիւնը: Խիստ հետաքրքրական է բանակռիւը ռուսական կամ աւելի ճիշտ՝ վելիկօրուսեան „ազգային դիմագծի" մասին, որ տեղի ունեցաւ անցեալ տարի Միլիւկովի, Ստրուվէի, Լեվինի, Վինավերի եւ այլոց մէջ: („Ռէչ" 1909 թ. մարտ 10, 13 եւ յետագայ համարներ):

նաձևը, որ նա ընդունել է իր կօնգրէսների մէջ, հանդիսանում է, դժբախտաբար, սոսկ ծրագրային մի պաճուճանք, մի ակամայ աւելորդութիւն, որ յամենայն դէպս չի գտնում կիրառութիւն գործնականի մէջ և մինչև իսկ արգելք է լինում ուրիշ ազգերի ի ն ք ն ո ւ ր ո յ ն ո ւ թ ե ա ն ձգտումներին, ի ցոյց դնելով այդ ինքնուրոյնութիւնը յաճախ իբրև „բուրժուազական“ մի ցանկութիւն... Նոյն ֆրազէօլօգիան ծայր է տալիս և մեր հայ ս.-դ.-ական սահմանափակ գրականութեան մէջ:

Սօցիալ-դեմօկրատ կուսակցութիւնը Ռուսաստանում, հակառակ բոլոր համանուն արևմտեան կուսակցութիւնների, կողմնակից է հանդիսանում կ ե ն տ ր օ ն ա կ ա ն պ ե տ ա կ ա զ մ ի (*centralisme*)· նա հակառակորդ է դաշնակցական, ապակենտրօն սկզբունքին՝ ոչ միայն պետական սահմանադրութեան մէջ, այլև ներքին կազմակերպական խնդիրներում: Նա ուզում է լինել աւստրիական սօցիալ-դեմօկրատիայի հակապատկերը: Նա ձգտում է միացնել իր գրկում այլևայլ ազգերի աշխատաւորական կուսակցութիւնները և մ է կ կ ե ն տ ր օ ն ա կ ա ն մ ա ր մ ն ի մ ի ջ ո ց ո վ ղ ե կ ա վ ա ր ե լ շարժումները ոչ միայն ընդարձակ Ռուսաստանի մէջ, այլ և հեռաւոր Ծայրագաւառներում, ուր այնքան տարբեր ու առանձնայատուկ են սօցիալական ու քաղաքական պայմանները:

Այդ ծրագիրը՝ նա մինչև օրս չի աջողում իրականացնել և զարմանալի կը լինէր, եթէ աջողէր:

Ռուսական սօցիալ-դեմօկրատիայի պատճէնն է մեր կովկասեանը: Այդտեղ ևս „ազգային ինքնորոշման“ բանաձևը ուժ ու արժէք ունի միայն տիրապետող վ ր ա ց ա կ ա ն հ ա տ ւ ա ծ ի համար: Վրացի ս.-դ.-ները ևս յօժարասիրտ ապազգայիններ, կօսմօպօլիտներ

են, երբ խնդիրը վերաբերում է ոչ-վրացի ազգութիւններին։ Բայց նրանք մնում են ջերմ, խանդավառ վրացական հայրենասէրներ։ Այդ ինքնատիպ հայրենասիրութիւն էր, որ անզօր շանթեր էր թափում Դաշնակցութեան վրայ 1905—906-ի զուլումի օրերում, ուր մեր երդուեալ հակառակորդները փայլեցին նոյնքան անզօր ձ ե ռ ն պ ա հ ու թ ե ա մ բ... Հայ ս.-դ.-ները միանգամայն ենթարկուած վրացիների հեգեմօնիային, ոչ միայն ձայնակցում էին այդ արշաւանքին, այլ և, յաճախ իրենք էին ծառայում, որպէս թնդանօթ ռմբակոծութեան։ Չենք ծանրանում։ փաստերը անհամար են, արձանագրուած ռուսահայկական կարճատև, ազատ մամուլի էջերում։

Յուսով ենք, սակայն, որ ժամանակը և այրած փիասկօները պիտի ունենան իրենց բարերար ազդեցութիւնը, որ Ռուսաստանի սօցիալ-դեմօկրատիան պիտի սրբագրէ իր սխալները, որ „ազգային ինքնորոշման“ ֆօրմուլը ևս մետաֆիզիկայի ու ամուլ ըէզօնեօրութեան մառախուղից զատուելով, պիտի դառնայ կենդանի, իրական նշանաբան *)։ Յուսով ենք, որ այլևայլ ֆրակցիաները վաղ թէ ուշ անհրաժեշտաբար պիտի գան համաձայնութեան — կայուն, յարատև համաձայնութեան—գործնական խնդիրների շուրջը։ Հին, պառակտիչ ոգին պէտք է չքանայ և թէօրիական վէճերը պիտի մղուին այնպիսի ձևով, որ չը ձգեն անանցանելի խրամատներ՝ միևնոյն նպատակին ձգտող կուսակցութիւնների միջև։ Այդ մտքով է ձևակերպուած Դաշնակցութեան IV Համագումարի որոշումը հայ-վրացական գործակցութեան վերաբերմամբ։

*) „Ազգային ինքնորոշման“ և յարակից խնդիրների մասին—յաջորդ գլխում։

նոյն համերաշխութեան պրոպագանդը— թուրքերի մէջ։

Մօտիկ անցեալի արեան նախճիրները, անտարակոյս, մեր մահմեդական դրացիներին եւս մտածել տուին խորապէս և լրջօրէն՝ նման աղէտների պատճառների ու հետեւանքների մասին։ „Հետեւանքները“ — նոյնքան կործանաբեր իրենց համար, որքան և հայերի... Եւ արդէն, 1906-ի չարաշուք օրերից ի վեր նկատելի է որոշ փոփոխութիւն թուրք ընդհանրութեան և նրա թարգման ինտելիգենցիայի հոգեբանութեան մէջ։ Փոփոխութիւն՝ յօգուտ խաղաղ, կուլտուրական աշխատանքի և ի նպաստ ազգամիջեան համերաշխութեան։ Հին, ատավիկ արատների զարհուրելի շրջագծից դուրս նետուելով, անդրկովկասեան թուրքութիւնը ձիգ է թափում առաջադիմելու, լուսաւորուելու, մրցելու դրացիների հետ... մրցելու՝ արդէն ոչ թէ կոպիտ ուժի մարդասպան թռիչքների մէջ, այլ խաղաղ, աշխարհաշէն պրօգրէսի։ Այդ մեծ, կուլտուրական նշանաբաններին— որոնք ամենից առաջ մեր, հայերիս սիրտն են լցնում անվերապահ ուրախութեամբ—ձայնակցում են մահմեդական ներկայացուցիչները Պետական Դումայում, ուր նրանք առհասարակ ընթանում են համերաշխ սահմանադրական-ռամկավարականների հետ, թէ ազգային և թէ քաղաքական այլեւայլ հարցերի մէջ։

Թուրք-հայկական համերաշխութեանը Անդրկովկասում հզօրապէս նպաստեցին, անշուշտ, նաև Պարսկաստանի սահմանադրական կռիւները, ուր պարսիկ ու թուրք ռազմիկների հետ ձեռք ձեռքի տուած գործում էր Հ. Յ. Դաշնակցութիւնը։ Եւ մենք տեսանք վերջին տարիների ընթացքում, տեսանք անկեղծ հրճուանքով, թէ ինչպէս հինաւուրց, հայակեր թուրք իդէօլօգներ, թողած նախկին մոլորութիւններն ու ատելու-

թիւնները, հասկացած վերջապէս դաշնակցական տակտիկի ճշմարիտ դրդումներն ու նպատակները, զգացած վերջապէս այդ տակտիկի լայն, միջազգային բնոյթը— ազատ նեղ, ազգայնամոլ մտահոգութիւններից, ներշնչուած հանուր Կովկասի, Ռուսաստանի, Պարսկաստանի բարօրութեան գաղափարով—մօտենում էին մեզ ակներև զղջման ու սերտ բարեկամութեան հաւաստիքներով և կռում էին դրացիական համերաշխութեան շղթաները։ *Tandem bona causa triumphat*… Լաւ դատը ի վերջոյ յաղթանակում է… Երանի՜ սխալուած չը լինինք մեր ենթադրութեան մէջ և երկու հարևան ժողովուրդները, երէկուայ անհաշտ, իրարասպան ախոյեանները, իրօք, վերջապէս, մտած լինէին այդ համերաշխ կենակցութեան ուղիի մէջ։ Այն ժամանակ այլևս տեղիք չէր լինի անհանգստանալու մեր երկրի ապագայի վերաբերմամբ…

V

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑ

Թ Ի Ւ Ր Ք Ի Ա

Ազգամիջեան կացութիւնը Եւրոպայում եւ Թիւրքիայում.— Ատօմիստական-կենտրոնական թէօրիա.—Կենտրոնացում և ապակենտրոնացում. — Ազգային-կուլտուրական ինքնօրինութիւն.—Անհրաժեշտ, բայց ոչ բաւարար.—Ազգայնօրէն ամբողջացած շրջաններ.—Ազգը՝ օժտուած պետական-վարչական ֆունկցիաներով. — Փոքրամասնութեան իրաւունքները. — „Քրդական վտանգը“. — Ապագան· —

Թիւրքաց Հայաստանը, իբրեւ օսմանեան ֆեդերատիվ պետութեան մի մասը, վայելում է ազատութիւն իր ներքին գործերում: Նրա բոլոր շրջաններն ու համայնքները ներքին խնդիրներում նոյնպէս վայելում են տեղական ինքնավարութիւն:

Հ. Յ. Դ. ԾՐԱԳԻՐ

Մեզ պէտք է — թէ Թիւրքիայում և թէ Ռուսաստանում ու Պարսկաստանում — մի այնպիսի իրաւակարգ, ուր ամեն մի ազգ նախ և առաջ լինի ազատ, ինքնիշխան և ապա միայն օրգանապէս յարի պետական ամբողջութեան։

Այս է „ֆեդերալիզմի“ և ազգային ինքնօրինութեան մեծ սկզբունքը, որ քարոզել ենք վաղուց ի վեր։

Այս է միակ ու լաւագոյն լուծումը ազգամիջեան յաւիտենական կնճիռների։

Այդ անմահ սկզբունքները, բարձրաձայն հռչակուած Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան օրերին, նուիրագործուած ամբողջ յետագայ պատմութեամբ՝ այսօր տակաւին հեռու են յաղթանակից։ Պատմական փոքրիկ ազգութիւնները, բաղդի բերմամբ ենթարկուած այս կամ այն խոշոր ցեղին ու պետութեան, ողբում են ամենուրեք իրենց իրաւազուրկ վիճակը, ճչում են շարունակ, եռում կատաղութեամբ և ցասումով գրոհ են տալիս իշխող ցեղերի դէմ։ Այդպէս է նոյնիսկ լուսաւոր Արևմուտքում։ Քաղաքական կուսակցութիւնները իրարու են անցնում, վառուած փոխադարձ ատելութեամբ, պարլամենտների և լանդտագների կամարները թնդում են օբստրուկսիոնի վայրենի աղաղակներից, կեանքը թունաւորւում է, առաջադիմութեան գործը կանգ է առնում և մինիստրութիւնները յաջորդում են իրար, մինը միւսից անճարակ, անզօր գտնելու մի իրական դարման տիրող ախտաւոր վիճակին։

Աւստրիան կլասիկ երկիրն է ազգայնական այդ փոթորկոտ պայքարների։ Ըռնուազը ութ տարբեր ազգութիւններ—գերմանացիք, չեխեր, լեհեր, ռուսիններ, ռումէններ, իտալացիք, սլօվէններ, խորվատներ—ապրում են այդ դժբախտ հողի վրայ, և չը կան երկու հարևաններ, որ ապրեն խաղաղութեամբ։ Լեհերը և չեխերը փոխադարձաբար գրգռում են Սիլեզիայում, ռուսինները ատամներ են կրճտացնում լեհերի դեմ՝ Գալիցիայում և ռումէնների դէմ՝ Բուկօվինայում. սլօվէնները կռւում են խորվատների ու իտալացիների դէմ, և այդպէս անվերջ, և բոլորն էլ ժամանակ առ ժամանակ գրոհ են տալիս հրէաների դէմ...

Եւ ստեղծւում է այդ կենտրօնախոյս ուժերի գոր-

ծակցութիւնից մի այլանդակ քաօս, որ առիթ է տալիս ամենամռայլ գուշակութիւնների...

Այդ դեռ միայն Աւստրիան. իսկ նրա կողքին կայ 17 միլիօն բնակիչ ունեցող Ունգարիան, որը մըշտական պայքարի մէջ է Աւստրիայի հետ, բայց որը ինքն էլ ներկայացնում է սահմանադրական մի բռնապետութիւն, ուր $40^{0}/_{0}$ մաջառները—7 միլիօն ընդդէմ 10-ի—ձգտում են խեղդել, ապազգայնացնել $60^{0}/_{0}$ „այլազգիներին"՝ ռումէններին, խորվատներին ևյն։

Թիւրքիայում էապէս համանման մի կացութիւն է. այնտեղ ևս իշխող տարրը կազմում է փոքրամասնութիւն և ձգտում է բռնադրել (imposer) իր հեգեմոնիան՝ միւս, „նուաճուած" ազգութիւններին, որոնց դիտում է, իբրև սոսկ կրօնական համայնքներ։ Այդ ոգով է ներշնչուած Միթհադ փաշայի ծրագրած սահմանադրութիւնը. Նոյն կնիքն է կրում և Ցուլխեան Յեղափոխութիւնից առաջացած Սահմանադրութիւնը։

Նման կացութիւն—ամենուրեք։ Ազգերը, իբրև ուրոյն, պատմական գոյութիւններ չեն ճանաչւում իշխողների, նուաճողների կողմից. Ճանաչւում են միայն, լոկ իբրև մարդկային առանձնայատուկ համախմբումներ, ագրեգատներ՝ պետութեան մէջ։

Դա այսպէս կոչուած ատօմիստական-կենտրօնական թէօրիան է, որ տիրում է գրեթէ ամեն տեղ, բայց և ամեն տեղ խաւարելու վրայ է։ Նրա համար ազգերի հարցը, ամենաշատը, հանդիսանում է, իբրև լեզուների և պաշտօնների հարց։ Նրան հակադրւում է հաւաքական-ապակենտրօնական թէօրիան, որի համեմատ՝ այլացեղ ազգութիւններից բաղկացած պետութիւնը լոկ անհատների կամ „ատօմների" մի համախմբում չէ, այլ մի ամբողջութիւն,

կազմուած ազգայնական միութիւններից։ Ազգային խնդիրը, այդ վերջին ըմբռնումով, լեզուների ու պաշտօնների խնդիր չէ միայն, այլ շատ աւելի ծանրակշիռ մի հարց, որ վերաբերում է պետական ամբողջ կազմակերպութեան — մի քաղաքական-սահմանադրական հարց։

„Կենտրօնացման“ դաւանանքը, ասացինք, խաւարելու վրայ է։ Եւ այն՝ ոչ միայն այլատարր պետութիւնների մէջ, այլ և նոյնիսկ միապաղաղ, հօմօժէն երկրներում, ոչ միայն միապետական ռէժիմների տակ, այլ և անգամ հարիւրամեայ հանրապետութեան մէջ։ Կենտրօնացման գաղափարը, անցեալում իր դրական որոշ դերը կատարելուց յետոյ, այսօր միանգամայն դատապարտուած է թէ հասարակական գիտութիւնից և թէ համատարած ռամկավարութիւնից։ Անցեալում, այո, նրա դերը եղել է յաճախ դրական, արգասաւոր, երբ, օրինակ, հնադարեան կամ միջնադարեան քաօսից, ֆէօդալական արհաւրալի անիշխանութիւնից, ցիրցան ու հակամարտ հօրդաների շեղջակոյտերից՝ միահեծան իշխանութիւնը — թէկուզ և արեան ու կրակի ճանապարհով — կառուցանում էր մեծ, կենտրօնացած, ամբողջական պետութիւններ, մարդկային անձն ու աշխատանքն ապահովող օրէնքներով, իրաւակարգով... Բայց և յետոյ, պատմական զարգացման ընթացքում, ռամկավարական գաղափարի աստիճանական նուաճումների մէջ՝ այդ կենտրօնացման հաւատամքը միշտ աւելի և աւելի նսեմացաւ, թօրշնեց, ժողովրդական գերիշխանութեան դօգմը կամաց-կամաց դուրս մղեց այն և այսօր նրա փոխարէն շեշտւում է բոլոր դեմօկրատ տարրերի գիտակցութեան մէջ, նրա հակոտնեայն — ապակենտրօնացման հաւատամքը, այսօր այդ վերջինը ուժեղ հոսանքով ծայր է տալիս անգամ միապաղաղ ու հանրապետական

Ֆրանսիայում, որի կենտրոնական պետակազմը ամենախոշոր չարիքներից մինն է կուլտուրական առաջադիմութեան, խեղդող տեղական, համայնական նախաձեռնութեան, նպաստող բիւրօկրատական կամայականութիւնների, կաշկանդող ուժերի առողջ ու բնականոն զարգացման *)։

Եթէ այդպէս է կենտրոնացման րէժիմը միապաղաղ, հօմօժէն ազգաբնակութիւն ունեցող երկրների մէջ, ապա և առաւել վնասակար ու կաշկանդիչ է նրա ազդեցութիւնը այն երկրներում, ուր ապրում են կողք կողքի տարբեր, այլատարր ժողովուրդներ, տարբեր լեզուներով, բարքերով, կուլտուրայի աստիճաններով։ Այդպիսի խայտաբղէտ պետութիւնների մէջ՝ կենտրոնացման սիստեմը ոչ միայն դատապարտուած է տեսականապէս, այլ նաև գործնական կիրառումների մէջ հանդիպում է շարունակ ցաւագին փիասկօների. այդպիսի երկրներում ֆէդէրացիայի ու ազգային ինքնօրինութեան պահանջները ստանում են հետզհետէ այժմէական ու ստիպողական անհրաժեշտութիւն։ Ֆէդէրացիա—դաշնակցական, ապակենտրոն կազմակերպութիւն... Այդտեղ է վախճանակէտը ամբողջ պատմական էւօլիւցիայի, դէպի այդտեղ է ուղղուած համաշխարհային քաղաքական զարգացման անիւը... Որովհետև, յիրաւի, այդ զարգացման, էւօլիւցիայի ընթացքում միշտ աւելի և աւելի աճում է, պէտք է աճի անհատների, համայնքների և առանձին ազգերի ինքնուրոյնութիւնն ու ազատութիւնը, որովհետև հետզհետէ նւազում է, պէտք է նւազի մարդանհատների կամքի վրայ գործ դնելիք բռնութիւնը, կամ թէ ասենք աւելի ընդհանուր ու մեղմ բառով՝

*) Չենք ծանրանում „կենտրօնացման" սիստեմի բնորոշման վրայ, չը պիտի ծանրանանք երկարօրէն՝ եւ ապակենտրօնացման ու ֆէդէրացիայի պատմա-հասարակագիտական հիմնաւորութեան վրայ։

ճնշումը, ստիպողութիւնը (*la coercition, der Zwang*)
—մի ճնշում, որ, յայտնի է, աւելի թոյլ է ֆէդէրա-
տիվ, ապակենտրոն, քան կենտրոնական պետակազմի մէջ։
Այստեղ արդէն նշմարեցինք ֆէդէրացիայի
սկզբունքը։ Լաւ կազմակերպուած ֆէդէրատիվ
կամ դաշնակցական պետութեան մէջ ամեն մի առանձին
դաշնակից կանտօնի, նահանգի կամ ազգի՝
տրւում է կառավարչական գործառնութեան (*fonction*)
մի յայտնի մասը և միևնոյն ժամանակ իւրաքանչիւրից
առնւում է ու կենտրոն փոխադրւում նոյն կառավար-
չական գործառնութեան մի համեմատաբար փոքրիկ
մասը, որ անհրաժեշտ է ամբողջ պետական օրգանիզմը
պահպանելու համար։ Ահաւասիկ ֆէդէրացիայի իմաստը,
երկու խօսքով։

Այդ իմաստով է ձևակերպուած ժամանակակից ամե-
նախոշոր կապիտալիստական ու գաղութային պետու-
թեան, Մեծ Բրիտանիայի կազմակերպութիւնը. տեղա-
կան ինքնավարութեան սիստեմը, հռչա-
կաւոր *Self government*-ը, որի շնորհիւ և նա հասել
է անօրինակ ծաւալման ու բարգաւաճման։ Տարակոյս
չը կայ, որ ինքնավարութեան ու ինքնօրինութեան նոյն
սկզբունքը պիտի յանգի ոչ հեռու ապագայում իր
տրամաբանական կիրառութեան՝ նաև Իրլանդիայի վե-
րաբերմամբ, ինչպէս որ նա պիտի կիրառւի վաղ թէ
ուշ՝ ազգայնական կենտրոնախոյս ուժերի վրայ—նաև
միւս, հզօր կապիտալիստական պետութեան մէջ՝ Գեր-
մանիայում... Երկու մեծ արևմտեան պետութիւն-
ները, երկարատև ու ձախորդ փորձերից յետոյ, մօտե-
նում են ճակատագրաբար ազգային կնճռի արդար
լուծումին և Իրլանդիայի *Home Rule*-ի պահանջների
հետ՝ այսօր լսւում են ամենուրեք Գերմանիայում —
անգամ բարձր, պաշտօնական շրջաններում — ուժեղ,

հեղինակաւոր ձայներ՝ ի նպաստ Էլզաս-Լօտարինգիայի ինքնավարութեան։ Ռայխստագի մի շարք ազդեցիկ պատգամաւորներ—նոյնիսկ բիսմարկեան նացիօնալ-լիբերալների թևին պատկանող—ծանուցին անցեալ տարի, որ գերմանական քաղաքականութիւնը նուաճուած ու ըմբոստ Reichsland-ի մէջ հիմնականապէս պէտք է փոփոխուի և որ նրանք ոչինչ չունին նոյնիսկ էլզասեան ավտօնօմիայի դէմ...

կայսերական մի „շնորհ“ չի լինի այդ ավտօնօմիան, այլ էլզասցիների մի փառաւոր նուաճում։ Մի յաղթանակ, տարուած քառասնամեայ դրակօնեան տիրապետութեան դէմ։ Քառասուն տարուց ի վեր դիքտատօրութեան ու բացառիկ օրէնքների լուծը ծանրացած է այդ սգաւոր երկրի վրայ, որ մնում է հոգով, սրտով շղթայուած մայր-հայրենիքի, Ֆրանսիայի հետ։ Քառասուն տարուց ի վեր պրուսական Թագաւորի պաշտօնեաները, յենուած յաղթողի բռնաւոր իրաւունքի վրայ, ձգնում են դուրս մղել այդ փոքրիկ ժողովրդի գիտակցութիւնից այն ամենը, ինչ որ ֆրանսիական է. անողորմ հալածանքի էր ենթարկուած մանուանդ լեզուն... Եւ սակայն, ապարդի՛ւն։ Գերմանացման, ձուլման քաղաքականութիւնը հանդիպեց սիստեմատիկ ֆիասկօի, պարտութեան...

Նոյն պարտութիւնը՝ գերմանական Լեհաստանում։ Հպարտ իրենց ազգայնական ոգով ու համբերատարութեամբ, լեհերը ևս չ՚ընկճուեցին։ Ընդհակառակը. որքան աւելի աճեցին ճնշումները ազգային լեզուի, դպրոցների, կուլտուրայի, գոյքերի դէմ, այնքան աւելի ամրապնդուեց լեհութեան մէջ այդ համբերատարութեան ոգին, այնքան աւելի ուժեղացաւ հայրենասիրական հաւատամքը։

Իրլանդիայի, Էլզասի, Լեհաստանի օրինակին հետևում են և պիտի հետևեն բոլոր ուրիշ հարստա-

հարուած ազգութիւնները։ Ազգայնական բաղխումները զինադադար չեն ճանաչում. նրանք մղւում են անխոնջ, յարատեւ կատաղութեամբ, մինչեւ լիակատար յաղթանակ։ Իսկ յաղթանակը գալիս է այն ժամանակ, երբ գոհացում է տրւում ազգայնութեան — իբրեւ ուրոյն պատմա-հոգեբանական մի ամբողջութեան — բոլոր օրինաւոր պահանջներին, երբ նրան տրւում է իրեն պատշաճ, արժանի տեղը պետական ընդհանուր մեխանիզմի մէջ, երբ նա դառնում է պետութեան ու կառավարութեան մի անհրաժեշտ ու անկապտելի մասնիկը։

*„Մարդկային իրաւունքների“ հաւատամքի հետ՝ ազգային ինքնավարութեան գաղափարը եւս Արեւմուտքից կատարում է իր չուն դէպի ասիական Արեւելքը... Չը նայած ազատութեան առաջին օրերի գրկախառնումներին ու խոստումնալի ծանուցումներին, ազգամիջեան կռիւը այսօր ահա բորբոքւում է Թիւրքիայում եւս, նոյնիսկ պարլամենտական հողի վրայ, շուտով հաւանօրէն կը բորբոքւի, աւելի մանր ծաւալով, նաեւ Իրանում *)։*

---

*) Ազգային հեգեմոնիայի ստուերային կողմերը նշմարւում են արդէն եւ սահմանադրական Պարսկաստանի բարձր, ազդեցիկ շրջաններում։ Այն վերաբերմունքը, որ վերջինները ցոյց տւին դէպի հայ տարրը՝ պատգամաւորական ընտրութեան մէջ, չի ներշնչւած առանձին բարեացակամութեամբ ու շիտակութեամբ։ Եւ եթէ այդպէս է ներկայումս — երբ դեռ այնքան թարմ են հայ կազմակերպւած աջակցութեան յիշողութիւնները յեղափոխական օրերից, երբ հայ ռազմավարի ղեկավարութեամբ, նրա անխոնջ ու հերոսական նիզերով մին միւսի ետեւից խորտակւում են ռէակցիայի ամենաամուր պատնէշները — եթէ ներկայ այդքան հրահանգիչ վայրկեաններում, պարսիկ իշխող տարրը այդքան գձուձ ժլատութեան փաստեր է տալիս հայ տարրի հանդէպ, քաղաքական իրաւունքների բաշխման հարցում՝ ապա ի՞նչ կը լինի ապագայում...

Չենք ուզում, սակայն, յոռետես լինել եւ տեղիք կայ յուսալու, որ պարսիկ նորածին սահմանադրութիւնը — շնորհիւ Եւրոպականութեան թարմ, կենսարար հոսանքի, որ հեղեղել է նոր կեանքի ձգտող երիտա-

Գուցէ ոչ մի տեղ ազգային տարբերութիւնները այնքան խոր ու անվերածելի չեն, գուցէ ոչ մի բազմատարր պետութեան մէջ կենտրոնախոյս ձգտումները չեն շեշտուած այնքան ուժեղ ու անհաշտ, ինչպէս օսմանեան կայսրութեան մէջ: Հարկ կա՞յ բացատրելու, որ մէկ կենտրոնական օրէնսդիր պարլամենտ, գումարուած Կ. Պոլսում, չի կարող—իր կազմութեան հանգամանքով իսկ—սահմանել տեղողաբար օ ր է ն ք ն ե ր՝ համապատասխան այլ և այլ գաւառների, ցեղագրական միութիւնների պահանջներին. Նրանց մտաւոր, բարոյական, կուլտուրական աստիճաններին: Հարկ կա՞յ երկար կանգ առնելու այն իրողութեան վրայ՝ որ այդ կենտրոնական պարլամենտի մեծամասնութիւնը—եթէ անգամ նա լինի լուսաւորուած, իր կոչման բարձրութեան վըրայ—չի կարող այնուամենայնիւ լինել այնքան հանրագէտ ու բազմակողմանի, որպէսզի կարողանայ ըմբռնել կայսրութեան բոլոր այլազան հատուածների պահանջները և ըստ այնմ օրէնքներ գրել: Այդ օրէնքները իւրաքանչիւր մի վայրում կարող են լինել օգտակար ու տեղական միայն այն դէպքում, երբ նըրանք կը մշակւին նոյն այդ վայրի պատգամաւորական ժողովի ձեռքով: Ահա պարզ, անժխտելի սկզբունքներ,

---

սարդութեան գիտակցութիւնը—կը տոգորէ լայն քաղաքացիական համբերողութեան ոգով հանդէպ նաեւ ոչ-մահմեդական ժողովուրդների, հանդէպ հայերի, որոնց գործօն մասնակցութիւնը սահմանադրական կռիւների ու յաղթանակների մէջ՝ ակներեւ է...

„Համբերողութի՞ւն“... Ո՛չ. այդ տգեղ, վիրաւորական բառը պէտք է դուրս գցել միանգամ ընդմիշտ մեր բառարանից: Մենք պահանջում ենք մեր մահմեդական հայրենակիցներից—թիւրքերից, պարսիկներից — ոչ համբերողութիւն (*tolérance*), այլ յարգանք դէպի մեր բազմատանջ ժողովուրդը, որ իր գիտակից տարրերով ազատագրութեան ամենազօրաւոր խթաններից մէկն է եղել ստրուկ ու անշարժ Արեւելքում...

որ ճշմարիտ ու տիրական են բոլոր ժամանակների ու տարածութիւնների համար...

Բաւականաչափ պարզ է, ուրեմն, որ ֆէդերալիզմի, ապակենտրոնական, ազգային ու տեղական ինքնավարութեան գաղափարները ստանում են Թիւրքիայում առանձին կարևորութիւն։

Երբ ասում ենք „ապակենտրոնացում„ ու ֆէդերացիա“—դրանով ի հարկէ, դեռ չենք լուծում մեր ազգային բարդ ու կնճռոտ պրօբլէմը Տաճկաստանում, Կովկասում։ Այդ լուծումը չը պիտի էլ գայ մէկէն ի մէկ ու ամբողջապէս, օրէնսդրական մի ակտով, կառավարչական մի կարգադրութեամբ, այլ պիտի իրագործւի քայլ առ քայլ, աստիճանաբար, վարից եկող յարատև ճընշումներով ու նուաճումներով։

Ս կ զ բ ո ւ ն ք ը իր հարազատ, բիւրեղային ձևով կունենայ, թերևս, մեր մռայլ հօրիզօններում անյաղթելի խոչընդոտներ՝ իր իրականացման ճանապարհի վրայ։ „Բիւրեղային“ այդ ձևը պահանջում՝ է ազգային լիակատար ինքնօրինութիւն ու ինքնավարութիւն (ավտօնօմիա), իր բոլոր անհրաժեշտ ստորոգելիներով, շաղկապւած, հարկաւ, ընդհանուր, պետական օրգանիզմի պաշտօնավարութեան հետ։ Ազգերը կայսրութեան սահմաններում պէտք է ձեռք բերեն ի ր ա ւ ա կ ա ն ա ն հ ա տ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն, նրանք պիտի կազմեն օրգանական ամբողջութիւններ, օժտւած պետական ֆունկցիաներով։ Այն ժամանակ միայն նրանք իրօք տէր կը լինին իրենց ճակատագրին և այն ժամանակ միայն՝ թէ կը պահպանւի կայսրութեան ամբողջութիւնը և թէ նրա ազատ, բնականոն առաջադիմութիւնը։

Այդ է մեր իդէալը, որ պիտի արծարծենք յար և միշտ, որ պիտի ձգտենք իրագործել բեկոր-բեկոր, աստիճան առ աստիճան։ Ինչպէ՞ս արդեօք նա կ՚իրագործւի...

Անհնարին է մտնել այժմից մանրամասների մէջ, հնարաւոր է այժմ միայն սխեմը տալ, ապագայի ուրուագիծը։ Ֆէդերացիան, ուրոյն, անկախ ազգութիւնների դաշնակցութիւնը — ամենահեռաւոր իդէալն է։ Պայքարը յանուն նրա՝ կը լինի երկար, ու յուսահատ։ Իշխող տարրը կը դիմադրէ իր բոլոր ուժերով և չի թոյլ տայ պետութեան այդ աստիճան ապակենտրօնացում, նա դեռ կը հաշտուի վերջ ի վերջոյ շրջանային ինքնավարութեան, ազգային լայն ինքնօրինութեան գաղափարի հետ, բայց նա երբէք ինքնաբերաբար չի հաշտուի այն իրողութեան հետ, որ պետութեան բաղադրիչ այլատարր զանգւածները ճանաչւին թ ի ւ ր ք ո ւ թ ե ա ն հանդէպ, որպէս հ ա մ ա զ օ ր ք ա ղ ա ք ա կ ա ն գ ո ր ծ օ ն ն ե ր, որպէս հաւասար դաշնակիցներ...

Թիւրքաց Հայաստանում—ինչպէս կայսրութեան մի շարք ուրիշ հատւածների մէջ, ինչպէս նաև Ռուսաստանում, Աւստրիայում—ազգային հարցի բաւարար լուծումը կնճռոտւում է այն ծանր հանգամանքով, որ տարացեղ ազգաբնակութիւնները հիւսւում են, խճողւում գրեթէ բոլոր ծայրերում, քաղաքներում ու գաւառներում. կան ամեն տեղ մեծամասնութիւններ ու փոքրամասնութիւններ—վերջինները, տարաբախտաբար, մեծագոյն մասամբ բաժին են ընկած հայութեան—մի հանգամանք, որ չափազանց պիտի բարդացնէ ինքնօրինութեան ու ինքնավարութեան պրօբլեմը գալոց ապակենտրօն երկրի մէջ, թէ շրջանի, թէ գաւառի և թէ նոյնիսկ համայնքի սահմաններում։

Այդ ծանր հանգամանքը, կրկնում ենք, գոյութիւն ունի ուրիշ բազմատարր պետութիւնների մէջ ևս—և նա չի արգելում, այնուամենայնիւ, որ թէօրետիկոս մտածողներն ու քաղաքական շիտակամիտ գործիչները առաջադրեն ու արծարծեն իրենց բանաւոր ազգայնա-

կան ծրագիրները, ղեկավարուելով միանգամայն ճնշուած ազգերի ու փոքրամասնութիւնների շահերով։

Ազգային լաւագոյն ծրագիրը մշակուած է արդէն բաւական ժամանակից ի վեր հեղինակաւոր գիտնականների ձեռքով։ Նա կիրառելի է բոլոր տարացեղ պետութիւնների մէջ։ Նրա առաջին պահանջն է այսպէս անուանուած կուլտուրական ինքնօրինութիւնը, առաջին մեծ սպեղանին՝ ազգայնական վէճերով հիւանդ, տառապող պետութեան համար։ Կուլտուրական ինքնօրինութիւնը, աւտօնօմիան, արտահողային (էքստերրիտօրեալ) կամ անձնական սկզբունքի (*Personalitätsprinzip*) կիրառումն է։ Ազգը, թէկուզ և ցիրուցան պետութեան ամբողջ տարածութեան վրայ, կազմում է իրաւական ու օրգանական մի ամբողջութիւն իր ազգային կենտրօնական խորհրդով, իր գաւառական խորհուրդներով, միահեծան տէր ու տնօրէն իր բոլոր կուլտուրական ու հոգևոր հաստատութիւնների, նա իրաւունք ունի հիմնելու և վարելու քաղաքներում, գաւառներում, համայնքներում — իր սեփական դպրոցները, թէ ծխական, թէ միջնակարգ ու բարձրագոյն ակադեմիաները, համալսարանները, մուզէները, թատրօնները, հիւանդանոցներն ու բարեգործական ընկերութիւնները և այլն, մի խօսքով այն բոլոր հիմնարկութիւնները, որոնք անհրաժեշտ են մի ազգի՝ իբրև ուրոյն, առանձնատիպ ցեղապատմական ամբողջութեան՝ ազատ, անարգել առաջադիմութեան համար։

Այս է „կուլտուրական ինքնօրինութեան“ ամբողջական իմաստը։

Հայ ժողովուրդը Թիւրքիայում, Ռուսաստանում և Իրանում մի մեծ էտապ նուաճած կը լինի իր զարգացման ու ազգային ինքնորոշման ճամբու վրայ, երբ կըստանայ արտահողային ինքնօրինութեան այդ իրաւունքը իր ամբողջա-

կան կիրառութեամբ։ Նա այսօր արդէն իր երեք բնակավայրերում որոշ չափով վայելում է այդպիսի ինքնօրինութիւն։ Ամենամեծ չափով վերջինը իրագործուած է Թիւրքիայում, Հայոց Ազգային Սահմանադրութեամբ։ Բայց—այդտեղ է քաղաքական ու տրամաբանական անհեթեթութիւնը—հայ ազգային կուլտուրական ավտօնոմիան Տաճկաստանում գոյութիւն ունի de facto, ոչ de jure։ Կայ Ազգային խորհուրդ, որ տնօրինում է բոլոր „ներքին“ գործերը, կայ ազգային պաշտօնական ներկայացուցիչ կառավարութեան, պետութեան հանդէպ, բայց „ազգը“ չի ճանաչւում իրաւապէս, սահմանադրական նոր ռէժիմը ճանաչում է սոսկ կրօնական համայնքներ՝ օ ս մ ա ն ց ի ու թ ե ա ն հանրանւան տակ։

„Կայսրութեան բոլոր հպատակները անխտիր կոչւում են օ տ տ օ մ ա ն ն ե ր“.—այսպէս էր հռչակում Միթհադ փաշան իր ուրւագծած սահմանադրութեան մէջ. Նոյնը ասւում է մեր օրերում. և այդ տարտամ ու սիմպլիստ յայտարարութեամբ բնորոշւում է ազգերի իրաւական կացութիւնը, կամ ուրիշ խօսքով, ժխտւում է այդ ազգերի իրաւական պատկերը (իբրև „ազգ“)…

Այդ հակօրինութիւնը վերացնելու է։ Ա զ գ ե ր ի լիակատար իրաւահաւասարութիւնը չի գրուած օրէնքների մէջ—նա պէտք է գրւի։ Ապագայում վերաքննելիք սահմանադրութեան մէջ պիտի մտնէ առանձին յօդւած, երաշխաւորող այլևայլ ազգերի լիակատար անձեռնմխելիութեան, պիտի գրւի, իբրև հիմնական սկզբունք՝ որ պետութիւնը ճանաչում է հայ ազգութեան, ինչպէս և ուրիշների, զուտ ազգային-իրաւական դէմքը։ Պէտք է խաւարի միանգամ ընդմիշտ ատօմիստական թէօրիան, որ այնքան վիրաւորական է „ազգային դէմքերի“ համար և կաշկանդող նրանց ազատ բարգաւաճման։ Փ ա ս տ ը պէտք է անցնի թղթի վրայ, իրա-

կանութիւնը պէտք է դառնայ գրուած օրէնք։ Իսկ իրականութիւնն այն է՝ որ հայ ժողովուրդը հանդիսանում է օսմանեան կայսրութեան մէջ իր ազգային գոյութեան բոլոր անհրաժեշտ ստորոգելիներով ու օրգաններով, որպէս ուժեղ կուլտուր-տրեգեր, քաղաքակրթութեան ջահակիր։ Պիտի վերանան Ազգային Սահմանադրութեան և բոլոր ուրիշ դէֆեկտները, տարկանոնութիւնները, նա պէտք աստիճանաբար լայնացնէ իր լիազօրութիւնները, աստիճանաբար մօտենայ ազգային կուլտուրական ավտօնօմիայի ճշմարիտ կատարելատիպին։

Կուլտուրական ինքնօրինութիւնը լուծում է մի շարք ծանր կնճիռներ, բայց նա չի լուծում բոլորը։ Վերանում են մի շարք խոշոր ու չարաղէտ շփման կէտեր— չեն վերանում բոլորը։ Նոյն իսկ լեզուի ծանրագոյն կնճիռը, որ տասնեակ տարիներից ի վեր անօրինակ փոթորիկներ է յարուցանում աւելի բարձր, քաղաքակիրթ երկրներում—չի յանգում բաւարար ելքի։ Լեզուի հարցը դատարաններում պաշտօնական այլ և հիմնարկութիւններում... Ահա մի գորդեան հանգոյց ևս, որ դուրս է մնում ազգային կուլտուրական ինքնօրինութեան շրջանակներից... Ճիշտ է, ազգը, իր ընտրեալ խորհուրդների, իր պաշտօնական ներկայացուցիչների միջոցով կարող է հսկել որոշ չափով, կարող է հոգալ, որ իշխող ցեղի կամ տեղական մեծամասնութեան լեզուն չը դառնայ ճնշման գործիք, չը բռնանայ իր հարազատ անդամների վրայ, որ հայը, յոյնը պաշտօնական հիմնարկութիւնների մէջ, դատաւորների առջև կարողանան պաշտպանել իրենց դատն ու իրաւունքները իրենց մայրենի լեզուներով,— բայց դա տակաւին լուծումն չէ։

Այդտեղ, լեզուների ահաւոր մրցութեան մէջ, սոսկ

գործնական յարմարութեան մի խնդիր չէ, այլ և աւելի բարձր ու բարդ, իրաւական մի պրօբլէմ, ազգային արժանապատուութեան և ազգերի իրաւահաւասարութեան մի խնդիր։ Այդ հիմնական մտահոգութեամբ է, որ „Դաշնակցութեան“ ծրագիրը իր Նւազագոյն պահանջների 20-րդ յօդւածով յայտարարում է՝ թէ „համայնական ու կանտօնային բոլոր պաշտօնեաների համար—Թիւրքիայում, ինչպէս նաև Անդրկովկասում—պարտաւորական պէտք է լինի երկու գլխաւոր տեղական լեզուների իմանալը, իսկ ընդհանուր պաշտօնեաների համար՝ երեք գլխաւոր լեզուները“... Եթէ ուրիշ պետութիւնների մէջ—օրինակ Աւստրիայում—համեմատաբար կոշտ, աղքատիկ ու անմշակ լեզուները բարձրաձայն շեշտում են իրենց տիրական իրաւունքը հանդէպ աւելի ճոխ ու ճկուն, հին, քաղաքակիրթ լեզուների, ապա ևս առաւել մեր սեփական միջավայրում—ուր տակաւին նոր-նոր են կերպարանաւորւում մահմեդական ու այլ ցեղերի լեզուները—հայ ժողովուրդը իրաւունք ունի շեշտելու յաւակնութիւնները իր հինաւուրց գրական լեզւի, որ աւանդում է ամբողջ դարերի մի համեստ քաղաքակրթութիւն.. Ահա թէ ինչու—հակառակ „Երիտասարդ Թիւրքիոյ“ եռանդագին ձգտման՝ բռնադրելու ամենուրեք թիւրք լեզւի տիրապետութիւնը—մենք պիտի ձգտենք իրականացնել հայ ժողովուրդի բնակութեան սահմաններում մի այնպիսի վիճակ, որ այդ ժողովուրդը կարողանար կրթել իր սերունդները իր մայրենի բարբառով, որ այդ բարբառը տիրապետէր ոչ միայն տարրական, այլև միջնակարգ ու բարձրագոյն դպրոցների մէջ։

Կուլտուրական ինքնօրինութիւնը անհրաժեշտ է, բայց բաւական չէ։ Կարելի է, անշուշտ, պետական, պարլա-

մենտական միջոցով հրատարակել մի շարք օրէնքներ յապահովութիւն փոքր ազգերի իրաւունքների, կարելի է — ազգային վիճակի ճշգրիտ արձանագրութիւններ (cadastre) սահմանելով և համեմատական ընտրութեան ձևն ընդունելով — ստեղծել համեմատաբար ճիշտ ու արդար ազգայնական ներկայացուցչութիւններ՝ թէ բովանդակ կայսրութեան մէջ, թէ առանձին վիլայէթներում, գաւառներում ու համայնքներում և այդպիսով արգելք լինել մեծամասնութիւնների ճնշումներին, ապահովել որոշ չափով մեր ազգային փոքրամասնութիւնների իրաւունքները նաև ընդհանուր, զուտ վարչական ու օրէնսդրական խնդիրներում... Այդ բոլորը նոյնպէս ստիպողական անհրաժեշտութիւն է մեր վերածնուող երկրներում, բայց դրանք բոլորը կիսամիջոցներ են՝ հայ ազգային կնճռի լուծման տեսակէտից:

Անգամ բոլոր յիշատակուած պայմաններն իրագործուելով, անգամ ամեն մի ազգութիւն ունենալով իր լիակատար կուլտուրական ինքնավարութիւնը, անգամ բոլոր շրջանները սերտօրէն կապուած լինելով դաշնակցական, ապակենտրոնական կապերով — դարձեալ ազգային գերիշխանութեան ուրւականը սաւառնելու է իւրաքանչիւր մի շրջանում, նա սաւառնելու է մասնաւորապէս Թիւրքաց Հայաստանում, ուր այնքան հաւագիւտ են — քաղաքներում ու գաւառներում — հայկական մեծամասնութիւնները և այնքան շատ՝ փոքրամասնութիւնները... Մեր ազգային կացութիւնը ամենից ողբերգականն է: Միմիայն լեզուի ու դպրոցի խնդիրը չէ, որ կարող է փոթորիկ հանել մեր երկրում, միմիայն ազգային հոգևոր քաղաքակրթութեան խնդիրները չեն, որ կարող են բաժանել ու կռւացնել տարացեղ զանգւածները, այլ նաև հանրային վարչութեան ու նիւթական քաղաքակրթութեան խնդիրներ (տնտեսական

առաջադիմութիւն, առեւտուր ու արդիւնաբերութիւն, հանրային ապահովութիւն, հաղորդակցութեան միջոցների բարելաւում եւայլն), որոնք ուրիշ, աւելի քաղաքակիրթ ու բազմացեղ երկրների մէջ համարւում են ընդհանրապէս „ազգայնօրէն անտարբեր“ (*nationalindifferent*) խնդիրներ։

Մեր դժբախտ միջավայրում, ուր դարերով մթերուել է ցեղական անտագօնիզմը, հակամարտութիւնը—թւում է թէ չեն կարող լինել այդ տեսակ ազգայնօրէն անտարբեր խնդիրներ. գոնէ առայժմ չեն լինի... Ամենաչնչին հանգամանքը կարող է դառնալ մեզ մօտ՝ ահաւոր կռուախնձոր...

Կայ, վերջապէս, պետութեան ամենակարողութեան, նրա բռնաւոր միջամտութիւնների ու ոտնձգութիւնների ուրուականը։ Ազգային փոքրամասնութիւնները, եւ մասնաւորապէս մերայինները, պիտի նեղուին ոչ միայն տեղական մեծամասնութիւններից, այլ նոյնիսկ պետութիւնից։ Ի՞նչն է երաշխաւորում, որ տիրող ազգի ձեռքերի մէջ գործիք դարձած այդ պետական մեքենան մի գեղեցիկ օր չի խափանի նոյնիսկ ազգային-կուլտուրական ինքնավարութիւնները։ Չե՞նք տեսնում արդէն դրա խօսուն նշանները... Նոր ռէժիմը, բաւական չէ որ իրաւապէս վերածել է ազգութիւնները կրօնական համայնքների,—դեռ ուզում է զրկել եւ այդ „կրօնական համայնքների“ պաշտօնական ներկայացուցիչներին այն մի քանի իրաւունքներից, որ նրանք ունեցել են հին ռէժիմի գոյութեան օրով։ Այսօր սպառնագին բռունցքը թափահարւում է պատրիարքների ու նրանց աւանդական լիազօրութիւնների դէմ,—վաղը, ապագայում նա կարող է թափահարուել ասպարէզին տիրացած աշխարհիկ ազգայնական ուժերի դէմ... Թէ այսօր

և թէ վաղը մենք պիտի մղենք անդուլ կռիւ բռնապետական այդ ձգտումների դէմ։

Ազգ և պետութիւն՝ առայժմ հակամարտ կատէգօրիաներ են. պետութիւնը՝ աւելի ուժեղ՝ պիտի ճնշէ ազգութիւնը։ Կենտրօնական իշխանութեան դրակօնեան սուրը կախուած է լինելու միշտ տարացեղ ազգերի վրայ, մասնաւորապէս մ ե ր ի վրայ, որ զուրկ է խոշոր, ընդարձակ վայրերում ազդեցիկ մեծամասնութիւնից, զուրկ է հետևապէս այն բոլոր արտօնութիւններից, որոնք անհրաժեշտ են՝ ազգային էութիւնը լիակատար ու անարգել փթթման հասցնելու։

Ինչպէ՞ս պաշտպանել ազգը պետութեան դէմ... Նորէն կրկնւում է չարատանջ հարցը։ Եւ այդ հարցին մէկ պատասխան միայն կայ։ Ա զ գ ն ի ն ք ը պ է տ ք է օ ժ տ ո ւ ի պ ե տ ո ւ թ ե ա ն ս տ ո ր ո գ ե լ ի ն ե ր ո վ։ Ազգն ինքը պիտի ունենայ իր ձեռքում՝ հանրային վարչութիւնը։ Իսկ դրա համար անհրաժեշտ են ազգային հոծ համախմբումներ, իրենց որոշ բնակավայրերում։ Անհրաժեշտ է հօմօժէն, միատարր ազգաբնակութիւնների ստեղծում ու դասաւորում։ Անհրաժեշտ է՝ հնարաւորութեան սահմաններում։ Մինչև օրս հին ռէժիմի տակ, ցեղագրական այդ բաշխման, դասաւորման նպատակն էր՝ հայ տարրի ցիրցանումը, նրա ուժի ու ազդեցութեան անդամալուծումը։ Այսուհետև, նոր սահմանադրական իրաւակարգը, եթէ նա կամենայ լինել անկեղծօրէն ու շիտակօրէն մ ի ջ ա զ գ ա յ ի ն, այսինքն պաշտպան հաւասարապէս բոլոր ազգերի իրաւունքների, պիտի ընդունէ հայ ազգութեան այդ ծուատումը, որպէս քաղաքական մի ոճիր և պիտի ձգտէ—բոլոր ճշմարտապէս ռամկավար տարրերի գործակցութեամբ—վերացնել էտնօգրաֆիական այդ ոճրանիւթ յղացումը, փոխել, յեղաշրջել վիլայէթների, շրջանների բաժանումը։

Շրջանները պէտք է սահմանագծւին ըստ կարելւոյն ազգայնօրէն։ Նրանք պէտք է կազմւին այնպէս, որ ներփակեն ըստ կարելւոյն միապաղաղ ազգաբնակութիւն։

Ասում ենք դարձեալ—ըստ կարելւոյն... Բացարձակ սահմանագծում, ազգային բացարձակ ամբողջացում նոյնիսկ վիլայէթների մէջ՝ խիստ դժւար է, ի հարկէ։ Նա դժւար է և բոլոր միւս բազմալեզւեան երկրներում։ Ազգայնօրէն ամբողջացած համայնքներ ու կանտօններ աւելի դիւրին է ստեղծել, քան նոյն ձևով ամբողջացած շրջաններ։ Այդ էլ արդէն մի բան է։ Բայց թերևս անհնարին չէ ստեղծել և աւելի լայն շրջաններ... Յամենայն դէպս, հայ ժողովուրդը պիտի ըմբոստանայ շարունակ՝ վիլայէթային ներկայ բաժանման սիստեմի դէմ։

Իւրաքանչիւր ազգ պիտի ձգտի փակւել իր բնական շրջանակներում։ Ազգայնօրէն ամբողջացած շրջանների, գաւառների մէջ՝ հանրային իշխանութիւնը իր բոլոր օրգաններով գտնւում է ազգի ձեռքում։ Վերջինն ինքնագլուխ վարում է իր ոչ միայն հոգևոր-կուլտուրական, այլ և բոլոր միւս գործերը, միանգամայն շաղկապւած դաշնակցական կապերով պետութեան այլ շրջանների ու կանտօնների հետ և միաժամանակ կենտրօնի հետ (օսմանեան կենտրօնական կառավարութիւնը, հիմնւած ժողովրդական ռամկավար ներկայացուցչութեան սիստեմի վրայ, պիտի վարէ—ինչպէս ասում է Հ. Յ. Դ. Ծրագիրը — պետութեան ընդհանուր գործերը՝ արտաքին քաղաքականութիւն, զօրք, դրամ, մաքս, փոստ-հեռագիր, թողնելով պետական միւս ֆօնկցիօնները տեղական ինքնավար շրջաններին)։ Կենտրօնական իշխանութեան ձեռնհասութեանը պիտի պատկանէ նաև՝ հսկել ամբողջ Տաճկաստանի խաղաղութեան վրայ և թոյլ

չը տալ, որ այս կամ այն ծայրում խախտուի անդորր ու նորմալ կեանքը ազգերի միջև։

Հարկաւ, այն վայրերում—և բազմաթիւ են, տարաբախտաբար, այդպիսիններ—ուր Փիզիքապէս անհնարին կը լինի կազմակերպել ազգային—դիցուք հայկական—պատկառելի մեծամասնութիւն, բոլոր միջոցները պիտի ձեռք առնուին օրէնսդրական ճանապարհով՝ ապահովելու հայ փոքրամասնութեանց քաղաքացիական իրաւունքները հանրային հաստատութիւնների մէջ և ամեն ուրիշ ասպարիզում։ Նոյնը պիտի արուի ուրիշ—քրդական, տաճկական և այլն—փոքրամասնութեան վերաբերմամբ՝ հայ տարրի ազդեցութեան սահմաններում... Յամենայն դէպս, այդ „ազդեցութեան սահմանները“ ազգագրական նոր ու արդար բաժանումներով, վաղ թէ ուշ, յուսանք, պիտի ստեղծուին և հայ բազմատանջ ժողովրդի համար,—լինի այն՝ *բացառապէս հայաբնակ* վայրերի ձևով, կամ թէ լինի այն՝ խառն, այլատարր շրջանների ձևով, ուր հայ տարրը, իր պատկառելի թւի համեմատ, ձեռք բերէ և պատշաճ իշխանութիւն իր կուլտուրական ճակատագիրը արժանաւորապէս դարբնելու համար...

Երկու վերջին դէպքերումն էլ՝ մեր ժողովուրդը, պատմութեան այդ խորթ ու հալածական զաւակը, կը վերստանայ այն քաղաքական ինքնուրոյնութիւնը, որ նա կորցրել է վեց դարուց ի վեր, կը վերստանայ ոչ թէ անջատական ու բռնակալ պետութեան ձևով, այլ *դաշնակցական ռամկավարութեան*, ուր տեղ կը լինի ոչ միայն ազգի բոլոր դասակարգերի, այլև բոլոր տարացեղ ազգերի ազատ զարգացման ու առաջադիմութեան համար։ Երկու դէպքումն էլ հայ ժողովուրդը կունենայ իր ազգային կատարեալ աւտօնօմիան, ինքնավարութիւնը, գէթ լաւագոյնը, որ հնարաւոր է երևակայել մեր միջավայրում։

Հանրային վարչութիւնը ազգի ձեռքում — ահա վերջինի ինքնուրոյնութեան ամենահզօր գրաւականը։ Այն բոլոր վայրերում — վիլայէթներում, գաւառներում — ուր ազգը կազմում է ամբողջութիւն կամ տիրական մեծամասնութիւն, նա ինքնօրէն է, կատարելապէս աւ տ օ ն օ մ, կատարելապէս ինքնավար։ „Հանրային վարչութիւն“ պիտի հասկանալ, ի հարկէ, ռամկավարական մտքով, հիմնուած իր հերթին՝ ապակենտրոնական կարգերի վրայ, առանձին գաւառների ու համայնքների տեղական լայն ինքնավարութեան վրայ։

Այդպէս միայն կարող է մարմնանալ ազգային ճըշմարիտ աւտօնօմիան։ Եւ այդպէս միայն կարող է իրագործւել միջազգային արդարութեան ծանօթ սկզբունքը. „ազատ ազգութիւն՝ ազատ պետութեան մէջ“ (*Die freie Nation im freien Staat*)..

Այս բոլորը „թէօրիա“ է անշուշտ... Բայց ո՞ր իդէալը չէ առայժմ թ է օ ր ի ա... Եթէ ազգային ինքնավարութեան այս ազատարար սկզբունքները այսօր կամ վաղը իրագործելու բաներ չեն, — այդ ի հարկէ, չի նշանակում, թէ մենք պէտք է լռութեան մատնենք մեր ծրագիրը, մեր հիմնական պահանջները գալոց քաղաքական կազմակերպութեան վերաբերմամբ։ Մեզ թւում է միւս կողմից, թէ չի կարելի ողբերգականացնել, *au tragique* ընդունել մեր իրականութեան — նոյնիսկ թիւրքահայկական իրականութեան — այսօրւան տարկանոնութիւնները և այդպիսով ցաւագին ֆիասկօներ գուշակել մեր ծրագրային այդ հիմնական սկզբունքների համար։ Իրականութիւնը միանգամ ընդմիշտ տրուած, քարացած մի մեծութիւն չէ, նա ենթակայ է — մանաւանդ այժմից, սահմանադրական ռէժիմի ներքոյ — յարաճուն փոփոխութեան և այն վտանգները, որ մենք մեզ պատկերացնում ենք գալոց ապակենտրոն թիւր-

քահայկական վիլայէթներում, մեր ազգային վերածնութեան գործի համար, գուցէ մօտիկ ապագայում, մի 10—15 տարուց յետոյ—երբ կուլտուրայի հզօր ալիքը կը հեղեղէ այդ նահապետական վայրերի խոպանացած գիտակցութիւնները—գուցէ նրանք անհետանան, կամ յամենայն դէպս, նւազին խոշոր չափով.

Ահմեդական և մասնաւորապէս քրդական մեծամասնութեան ուրւականն է ցցւում այսօր մեր առջև՝ գալոց ապակենտրոն կարգերի մասին խորհելիս։ Չենք ուրանում — „վտանգ" է։ Բայց՝ նախ ապացուցելու է, որ կենտրոնական պետակարգը աւելի նպաստաւոր է. նախ հերքելու է փաստօրէն, բանաւորապէս այն բոլոր իրական վտանգները, որ այսօր իսկ ընդնշմարում ենք այդ կենտրոնացման սիստեմի մէջ. Նախ հաստատելու է փաստօրէն, որ կենտրոնական իշխանութիւնը, իր տաճկական հեգեմօնիայով պիտի կարողանայ յարատեւօրէն գոհացում տալ սարեր ու ձորեր հեռու գտնւող մեր դժբախտ վայրերի քաղաքակրթական, տնտեսական, մտաւոր ու հոգեկան անհատնում կարիքներին. Նախ հաստատելու է, որ այդ տաճկական հեգեմօնիան, ընդօրինակելով ուրիշ գերիշխող ազգերին, չը պիտի աճի աստիճանաբար, չը պիտի սաստկացնէ crescendo „պանթիւրքութեան" ու պանիսլամիզմի իր անախորժ երաժշտութիւնը և չը պիտի չեշտէ հետզհետէ—փոքր ազգերի զօրաւոր առաջխաղացման հանդէպ—իր ատելութիւնն ու հալածանքը այդ ազգերի դէմ...

Քրդական վտանգը հարկ է չը չափազանցնել։ Այստեղ ևս նախ յիշելու է մի իրողութիւն, որ ուրիշ, աւելի քաղաքակիրթ երկրներում ևս ապացուցել է իր ուժը. դա կուլտուրայի ուժն է, դա մտաւորապէս ու տնտեսապէս բարձր տարրերի ձգողական կարողութիւնն է՝ խոպան ու ճահիճ միջավայրե-

բում.. Հայ տարրը, անգամ հեռու, կորած շրջաններում, ուր պիտի լինի թոյլ, աննշան փոքրամասնութիւն,—գործելու է այնուամենայնիւ, իր պատկանելի ազդեցութիւնը, իբրև համեմատաբար աւելի զարգացած մի կատեգորիա՝ թէ տնտեսական, արդիւնաբերական ու առևտրական և թէ մտաւոր-կուլտուրական մարզանքների աշխարհում...

Հապա քիւրդ տարրն էլ, անտարակոյս, պիտի փոփոխւի եւրոպական կապիտալիզմի ու կուլտուրայի նորամուտ հոսանքների մէջ։ Կ՚անցնի ընդամենը մի 20 տարի շոգեմեքենաների սուլելուց յետոյ—և մենք կը տեսնենք Թիւրքաց Հայաստանի և Քիւրդիստանի ընդհանուր պատկերը զգալապէս փոփոխւած։ Տնտեսական մրցման ուժն իսկ կը մղէ քիւրդին—ինչպէս և բոլոր կիսավայրենի, կիսաթափառական, խաշնարած համայնքներին—յարել տենդոտ աճապարանքով նոր, „գիավուրային" դրօշակներին, հեռանել „Փլայի" գծած ճանապարհով, սովորել գրագիտութիւն, զարգացնել ուրոյն ինիցիատիվ, ձեռներէցութիւն... Քիւրդ „ազնւական" աւատականութիւնը կը հիւծւի, կը մեռնի աստիճանաբար ու արագաքայլ. Նա կը մեռնի մասամբ հայ բուրժուազիայի, հայ արդիւնաբերող ու վաճառական դասակարգի շահատենչ ու յարաբորբոք ախորժակների մշտածաւալ հոսանքում, մասամբ էլ հարազատ ժողովրդի ու արթնացող մտաւորականութեան հարւածների տակ։ Հողային ընդարձակ տարածութիւնները հետզհետէ կուլ կ'երթան փողային համայնակեր Մողոքին—այդպէս է տնտեսական էւօլիւցիայի տիեզերական օրէնքը—և մեռնող ազնւականութեան հանդէպ միշտ աւելի և աւելի կը ծառանայ քիւրդ ժողովուրդը, դարերով մտրակւած, ստրկացւած նախիրը...

Կ՚արթնանան բոլոր պ ա տ մ ա գ ո ւ ր կ *) ազգութիւն-
ները, աւելի ճիշտ՝ ցեղերը, հորդաները և եռանդուն
նախանձախնդրութեամբ տեղ կը բռնեն պ ա տ մ ա-
կ ա ն ազգերի շարքում։ Երևան կը գայ, այո, նաև
քրդական մտաւորականութիւն—նոյն տիրական ուժերի
գործակցութեամբ, նորաբողբոջ կապիտալիզմի և տնտե-
սական մրցման ծոցում—առաջ կը գան անհատներ ու
խմբումներ, արևմտեան գաղափարների համն առած և
տոգորուած իրենց ցեղը բարձրացնելու ձգտումով, ագա-
հութեամբ նրանք կը դիմեն հայրենի ժողովրդի ու-
սումնասիրութեան, կը քրքրեն նրա անփայլ անցեալի
մէջ, կը խուզարկեն նրա տիպիկ, նահապետական կեն-
ցաղի մանրամասները, նրա ուշագրաւ բարբառը, կը
մշակեն լեզու, գրականութիւն, կը հիմնեն դպրոցներ...
և քիւրդ համայնքը, վայրենութեան ու բարբարոսու-
թեան այդ արիւնազանգ բեկորը, փոքր առ փոքր հաս-
նելով ինքնաճանաչութեան, հասկանալով մտաւոր ու
նիւթական առաջադիմութեան արժէքը, կըսկսի—ինչ-
պէս այդ տեսանք մի այլ համանման պ ա տ մ ա գ ո ւ ր կ
համայնքի՝ անդրկովկասեան թաթարների մէջ—խաղաղ
մրցում իր քրիստոնեայ դրացիների հետ, պրօգրէսի, քաղա-
քակրթութեան ասպարիզում։ Կը բողբոջի ք ր դ ա կ ա ն
կ ո ւ լ տ ո ւ ր ա... Կը հաշտւին, վերջապէս, այդ երկու հա-
կացողութիւնները, այդ զոյգ դժբախտ բառերը,—քիւրդ և
կուլտուրա—որ այսօր ոռնում են իրարու հետ զուգա-
դրւելուց։ Այն օրը՝ որ նրանք հաշտւեցին, մենք այլևս
վախ չունինք քիւրդ տարրի թւական գերակշռումից։
Այն օրը՝ որ ստեղծւեց կուլտուրական որոշ կապ, գա-

*) Ընդունւած է „պատմագուրկ“ անւանել մարդկային այն համախմբումները, որոնք չունին գիր, պատմութիւն, գրականութիւն, մշակւած լեզու եւայլն։

ղափարների որոշ սերտ ազգակցութիւն երկու պատմական դրացիների միջև—մենք այլ ևս վախ չունինք մեր ազգային ինքնուրոյնութեան ու առաջադիմութեան համար։ Հայ ժողովրդին սարսափելի է դրացու մարդասպան եաթաղանը, նրա խուժանային աշխարհասասան բնազդը։ Հայ ժողովրդին բնաւ սարսափելի չէ՝ նրա կուլտուրական ու քաղաքական մրցման ուժը։

VI

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՐՑ

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԴՊՐՈՑ

Աստուածպետական սկզբունքը Ռուսաստանում ու Թիւրքիայում. — Շարիաթ.—Կրօն եւ կղեր. — Քրիստոնէական հաւատամքը. — Եկեղեցիների դերը պատմութեան մէջ. — Արեւմտեան յեղաշրջումները եւ կրօնական գաղափարը. — Ազատ մտքի նուաճումները.—Կրօն եւ գիտութիւն՝ հակամարտ. — Կրօնն ու կղերը հայոց կեանքում. — „Դաշնակցութիւն" եւ Հայաստանեայց եկեղեցի. — Քրիստոնէական մօրալի պատուիրանները՝ մեր կեանքում.—Քրիստոնէութիւնը եւ աշխարհի իրաւազուրկները. — „Ճգնութեան" քէօրհան — Աշխարհիկ կրթութեան ուժը. —

Ein neues Lied, ein besseres Lied
O Freunde, will ich euch dichten:
Wir wollen hier, auf Erden schon
Das Himmelreich errichten *).

Heine

Կրօնը անհատական խղճի գործ է:

Հ. Յ. Դ. ԾՐԱԳԻՐ

Կրօնական փէտիշը, հեռու նահանջի տրամադրութիւնից, շարունակում է իր հզօր ու բռնաւոր ազդեցութիւնը ժողովուրդների ճակատագրի վրայ: Այդպէս

---

*) Մի նոր երգ պիտի յօրինեմ,
Բարեկամներ, աւելի լաւ երգ,
Մենք ուզում ենք այստեղ արդէն,
Երկրի վրայ հիմնել դրախտը:

է անգամ արևմտեան ռամկավար աշխարհի մի պատկառելի հատուածի մէջ... Ո՞ւր առաւել այդպէս է մեր յետամնաց միջավայրում—Թիւրքիայում, Իրանում, Ռուսաստանում։ Ամեն տեղ կղերական դասը, կրթնած դարաւոր, „աստուածատուր“ առանձնաշնորհումներին, հրահանգուած նոյն կրօնի հիմնաւուրց ու անսասան պատգամներից, ձգտում է իր կնիքը դնել կեանքի բոլոր ճիւղերի վրայ և ամեն տեղ, գրեթէ ամեն տեղ այդ „պատգամները“, կղերականութեան այդ „աստուածաշունչ“, սրբազնագոյն իրաւունքները հանդէս են գալիս, իբրև պաշտպան տիրապետող կաստերի ու դասակարգերի, իբրև գործիք հարստահարութեան՝ ընդդէմ թշւառ, իրաւազուրկ ու աշխատաւոր զանգւածների, նրանց մտքի և վաստակի, նրանց տգիտութեան և թշւառութեան։

Կղերականութիւնը խրոխտ, յանդուգն շեփորում է Նեվայի ափերից, ուր նա միացած—նոյնիսկ Պետական Դումայի մէջ—ամենաամբարտաւան ու ամենաոճրագործ բռնակալութեան, դաշնակցած աջակողմեան, սև-հարիւրակեան վոհմակների հետ, կազմում է համառուսական ռէակցիայի ամենաամուր խարիսխներից մինը. Կղերականութիւնը հպարտ ու յաղթական գլուխ է բարձրացնում մասնաւորապէս մահմեդական պետութիւնների մէջ, մասնաւորապէս Տաճկաստանում, ուր Շարիաթը, չը նայեած յեղափոխական վերիվայրումներին, դեռ մնում է իր տիրական ազդեցութեան մէջ, դեռ յաւակնում է դարբնել ամբողջ պետական կեանքը իր երկաթէ, խաւարակուռ ֆօրմուլներում...

Դա մի սոսկալի աղէտ է—այդ համաճարակ, տիեզերական հաստատութիւնը։ Եւ նա առանձնապէս շեշտւում է մեր ըստ ամենայնի դժբախտ երկրներում, ուր գործ ունինք ամենախաւար զանգւածների հետ և ուր այնքան արմատացած է բարքերի մէջ ա ս տ ւ ա ծ պ ե-

տական (*théocratique*) գաղափարը։ Ցար, սուլթան, Շահնշահ՝ Աստուծոյ փոխանորդներ են, վայելում են „աստուածային ծագման“ իրաւունք, թագաւորում են Աստծոյ անունով ու ներշնչումով։ Աբդիւլ Համիդն ևս կառավարում էր Ալլահի անունով, Ռուսաստանի ցարերն ևս... Այդպէս է „Թէօրիան“, այդպէս է բոլոր բռնաւորների պետական փիլիսոփայութիւնը։ Կրօնն այդ տեսակ պետութիւնների մէջ կապուած է անխզելի կապերով պետութեան հետ. երկու գործօնները—հոգևոր և աշխարհիկ—միանգամայն ձուլուած են։

Թիւրքիան կլասիկ հողն է այդ դժբախտ ու չարաշուք ձուլման։ Ո՞վ չը գիտէ Շերիաթի անսահման լիազօրութիւնները։

Ի՞նչ է դա... Ղուրանից, սուրբ գրքերից, միջնադարեան իմամների բացատրութիւններից հիւսուած մի պաշտօնական դօքտրին-օրինագիրք, որ ոչ միայն որոշում է եկեղեցական ու հոգևոր-բարոյական յարաբերութիւնները, այլև քաղաքականն ու քաղաքացիականը. մի կօդէքս՝ ուր մարդկանց յարաբերութիւնները կանոնաւորող սկզբունքները, չարն ու բարին, արդարն ու անիրաւը, բարոյականն ու անբարոյականը—պայմանաւորւում են ոչ թէ ազատ փիլիսոփայական մտքի հրամայականներով, բղխում են ոչ թէ բանականութեան տարերքներից, այլ նեղ, կրօնական մի դօգմի պատգամներից։ „Յարգանքը դէպի մարդկային անձնաւորութիւնը“, որ կարելի է ասել, հիմնաքարն է ժամանակակից արևմտեան քաղաքակրթութեան, որի վրայ հիմնուած են այնքան այլազան քաղաքական ու սօցիալական հաստատութիւններ,—այդ յարգանքը իսլամի ու Շերիաթի օրէնքների տակ նեղցւում է, խեղաթիւրւում ու վերածւում սոսկ հաւատակցի, համակրօնի սիրոյն, մի սէր, որ էապէս տարա-

մերժ է, սահմանափակ, որ քարոզում է ընդհանրապէս — մեղմագոյն արտայայտութեամբ — անյարգանք դէպի *օտարները*, „գիավուրները“։

Օսմանեան Յեղափոխութիւնը, ի շարս այլ եւրոպական նշանաբանների — հռչակեց և *մարդկային անձի անբռնաբարելիութիւնը*։ „Անհատի ազատութիւնը միանգամայն անձեռնմխելի է և բոլոր օսմանցիք անխտիր վայելում են այն“. այսպէս է յայտարարում Միթհադեան Սահմանադրութիւնը։ Բայց և դրա հետ միասին հռչակւում է Շերիաթը, որ իր բովանդակ ոգով հակասում է անհատական ազատութեան, ժխտում է արեւմտեան պատգամները մարդու և քաղաքացու յաւիտենական իրաւունքների մասին...

Դեռ նոր էր հրատարակւել յուլիսեան սահմանադրութիւնը, նոր էր հանդարտւել ազգամիջեան համերաշխութեան, ցոյցերի ու հանդէսների ժխորը մայրաքաղաքի հրապարակներում, երբ պայթեց նոյն այդ մայրաքաղաքի մէջ մի սոսկալի դրամա, ուր ողբերգական շառաչով ցոլաց այդ կօնտրաստը, այդ ցաւագին հակասութիւնը՝ Շարիաթի ու եւրոպական գաղափարների միջև։ Դրաման ինքնին մանրարժէք մի իրողութիւն էր, բայց չափազանց բնորոշ — և իբրև այդպիսին՝ արձագանք գտաւ ամբողջ համաշխարհային մամուլի մէջ։ Հազարաւոր Թիւրք ամբոխը, ոստիկանների աչքերի առջև, բառացի կերպով ծւատեց մի քրիստոնեայ երիտասարդի — յոյն Թօդօրին — մորթազերծ արեց նրան, փշրեց գանգը և ապա յօշոտւած ու անարգւած դիակի շուրջը սկսեց դիւային խրախճան.. Պատճա՞ռը. — մի Թրքուհի սիրահարւել էր սպանւածի վրայ և միացել էր նրա հետ։ Իրողութիւնը մատնողը սիրահարւածի հայրն էր, Թիւրք Մահմուդը, որ տեսնում էր այդ անօրինակ քայլի մէջ սրբազնագոյն շերիաթի սրբա-

պղծում. Նա մատնում էր, առանց բնաւ մտածելու իր հարազատի բախտի մասին, մատնում էր, զոհաբերելով իր հայրական սէրը՝ ամենակարող Շերիաթին... Նոյն Շերիաթի անունով էր ոռնում գազանացած խուժանը քրիստոնեայի այլանդակուած դիակի առջև... Տեսարանը ցնցող էր, դրամատիկ, թէև, աւա՜ղ, ոչ եզակի—քանի՜ նման տեսարաններ պարզուել էին անկարեկիր աշխարհի առջև, Հայաստանի գաւառներում, ուրիշ տեսակ պատրուակներով... Բայց ամենից դրամատիկը այն վայրկեանն էր, երբ նորընծայ պարլամենտի նախագահը, Ահմեդ Րիզան, ցաւից ու ցասումից դողալով, եկել էր արձանացել այդ զարհուրելի պատահարի թատերաբեմում և ուժգին յանդիմանութիւններով ու բարոյական յորդորներով աշխատում էր հանդարտեցնել ֆանատիկոս խաժամուժը... Խե՜ղճ իդէօլօգը քսան տարուց ի վեր հնչեցրել էր Պարիզից այնքան խանդավառ ջատագովականներ իր հայրենի ժողովրդի համբերողութեան մասին, քսան տարուց ի վեր հաւատացրել էր եւրոպացիներին, թէ մուսուլման ընդհանրութիւնը դիւրութեամբ պիտի իւրացնէ արևմտեան կուլտուրայի արգասիքը, թէ անդունդը մուսուլմանի ու քրիստոնիայի միջև ստեղծուած է բռնակալութեան ձեռքով, արուեստական միջոցներով, թէ Շերեաթը բնաւ արգելք չի դնում նորագոյն գաղափարներին, թէ Ղուրանը դիւրութեամբ համաձայնւում է ժողովուրդների իրաւահաւասարութեան սկզբունքի հետ և այլն և այլն։

Դժբախտաբար, Շերիաթի հետ համաձայն էր ոչ թէ Րիզան իր լաւատես ու վարդագոյն ծանուցումներով, այլ Պոլսի այդ սարսափելի խաժամուժը, իր մարդասպան ոռնոցներով... Ուրիշ կրօններ ևս ստեղծում են որոշ արգելքներ տարացեղ ամուսնութիւնների խնդիրներում, բայց ամեն տեղ կրօնի հանդէպ կայ աւելի

ազատաշունչ ու մարդասէր քաղաքացիական օրէնքը, որ գտնում է միշտ որևէ ելք, *modus vivendi*. այն ինչ՝ իսլամ կրօնագիրքը միանգամ ընդմիշտ չինական պատ է կառուցել այլադաւան ժողովուրդների մէջ, միանգամ ընդմիշտ արտասանել է իր ահեղ „*non possumus!*"-ը — չե՛մ կարող — բոլոր նորագոյն գաղափարների դէմ... իսկ նրա հանդէպ՝ զուտ քաղաքացիական օրինագիրքը ողբալիօրէն խեղճ է, անազդեցիկ: Մուսուլմանը կարող է, հարկաւ, կնութեան առնել քրիստոնեայ կին, իսլամացնելու պայմանով, բայց իսլամուհին քրիստոնիայ ձեռքում — դա հաւասար է սրբապղծութեան ու ոճրի: Քաղաքացիական օրէնքի դերը զէրօ է Շերիաթի այդ ամենազօր վէտօի առջև, նա զէրօ է և բազմաթիւ ուրիշ հարցերում — իրաւական, սօցիալական, տնտեսական, քաղաքական: Ամեն տեղ Շէյխ-ուլ-Իսլամի ֆէթվան վճռող, իրաւարար գործօն է... Թէօկրատիական կարգերի, կրօնի ամենազօր տիրապետութեան ամենացայտուն ապացոյցն այն է, որ անգամ սուլթաններին գահընկէց անելու համար անհրաժեշտ է Շէյխ-ուլ-Իսլամի ֆէթվան և որ... վերջինը հաւասար իրաւունքով բազմում է մինիստրական Խորհրդի մէջ, ուր նպատակը միշտ նոյնն է՝ հսկել, որպէսզի կառավարական բոլոր գործողութիւնները համաձայն լինին Շերիաթի պատուիրաններին:

Ահա ժամանակակից Թիւրքիայի ամենախորունկ պատուհասը, որ կաշկանդում է առաջադիմութեան ազատ ընացքը և որ յաճախ առիթ է տալիս արևմտեան Եւրոպայում տխուր, յոռետես մարգարէութիւնների: Անհատի և մտքի իրական ազատութիւնը պիտի լինի միշտ երերուն պատրանք, քանի դեռ կ՚իշխէ մահմեդական մտայնութեան մէջ, իր կուռ, քարացած ձևով, այդ հնադարեան ֆէտիշը: Սահմանադրութեան

*սկզբունքն իսկ ենթակայ է յարաժամ վտանգի... Շերիաթի անունով էր ծածանւում Մարտեան օրերի հակայեղափոխական դրօշը: Ճիշտ է, այսպէս անուանուած կրօնական կազուիստիկը *) առժամապէս հաշտեցնում է — գէթ սահմանափակ ծաւալով — երկու հակամարտ գործօնները՝ Շերիաթը և իրաւակարգը: Բայց դա միայն բռնազատեալ և իմաստուն համակերպումն է զրահաւորուած ուժի առջև... Ո՞վ գիտէ, ինչ զարհուրելի գներով է եռում այսօր շէրիաթապաշտ մահմեդականութեան հրաբուխը: Իսլամը ահաւոր փորձութեան մէջ է և մօտիկ ապագան ցոյց կը տայ, թէ երկու հոսանքներից ո՞րն է աւելի կենսունակը մահմեդական աշխարհում—արևմտեա՞նը, թէ հարազատ-աւանդապաշտը...*

***

Կրօնը ինքնին չարիք չէր լինի, եթէ չը դառնար տիրապետութեան, ճնշման գործիք: Կրօնական զգացումը —որ յայտնւում է, իբրև ընդհանուր, տիեզերական մի իրողութիւն, յատուկ բոլոր մարդկային համախմբումներին—ծնունդ է առել մարդ-տեսակի ամենանախնա-

---

*) *Casuistique* — պատճառաբանութիւն ըստ դիպուածի: Կազուիստներ են նրանք, որոնք այս կամ այն գաղափարը մեկնաբանում են, յարմարեցնելով դիպուածի, պատահականութեան թելադրութիւններին: Թիւրքիայում եւ Պարսկաստանում պատճառաբանելու այդ ձեւը զաւեշտական հանգամանք առաւ վերջին յեղափոխական տարիներում: Սիւննի եւ շիա բարձր կղերը սիրով փոփոխում էր Ղուրանի իմաստը, տալիս էր յաճախ տրամագծօրէն հակառակ մեկնութիւններ, նայած թէ որ կողմն էր թեքւում շարժման անիւը եւ որն էր յաղթանակում երկու ուժերից: Ղուրանը, Շերիաթը մերթ յայտնում էին համաձայն ժողովրդական գերիշխանութեան, մերթ բացարձակ բռնապետութեան:

կան վայրենութեան շրջանում զուտ բնական գործօնների ազդեցութեան տակ, որոնց յետոյ միացել են և հասարակական ազդակներ։ Թշուառ ու անօգնական՝ բնութեան ահեղ երևոյթների, ուժերի հանդէպ, ենթակայ նրանց յարափոփոխ քմահաճոյքին և անզօր բացատրելու նրանց խաղերի յաւիտենական գաղտնիքը, մարդը միշտ հակուած է եղել տեսնելու այդ խաղերի մէջ աներևոյթ ոգիներ, ոմանք չար ու աղէտաբեր, ոմանք բարի ու մարդասէր, և նա երկար դարերի ընթացքում պաշտել է այդ ոգիներին, թէ չարերին, թէ բարիներին, ոմանց սիրաշահելու և չէզոքացնելու, ուրիշներին հաշտեցնելու նպատակով, պաշտել է բովանդակ տիեզերքը, լեռներ ու ձորեր, գետեր ու աղբիւրներ, արեգակ ու աստղեր. պաշտել է կենդանիներին, յաճախ նաև իր նմաններին, իր հանգուցեալ պապերին, իր թանկագին մեռելներին... (Անիմիզմ *), Նատուրալիզմ **), սուպրանատուրալիզմ ***), բազմաստուածութիւն, միաստուածութիւն — այլևայլ շրջաններն են կրօնական գաղափարի բազմադարեայ զարգացման, աստիճան առ աստիճան մարդկային համագրող, ամբողջացնող միտքը բարձրացել է սկզբնական ամենաբիրտ հաւատալիքներից դէպի նուրբ, վերացական պաշտամունքներ, հոգիների ու ոգիների պարզ, գռեհիկ պաշտամունքից նա հասել է կամաց-կամաց — սօցիալական բովանդակ էւօլիւցիայի թևերի վրայ — մի քանի խոշոր աստուածութիւնների, ապա ի վերջոյ մի միահեծան ու տիրական աստուածութեան գաղափարին...

Եթէ իրերի մի երջանիկ զուգադիպութեամբ հասարակական այդ դարաւոր զարգացումը տուէր ի սկզբանէ

---

*) Հոգեպաշտութիւն:

**) Բնապաշտութիւն:

***) Գերբնապաշտութիւն:

բ ա ց ա ռ ա պ է ս մտքի ու գիտութեան աշխարհակուլ հօսանքին, գուցէ այսօր անհետացած լինէին կրօնական անապաշտութեան այդ այլազան արտայայտութիւնները. գիտական անդիմադրելի ճշմարտութիւնը գուցէ արդէն յաղթահարած լինէր նուրբ ու գռեհիկ առասպելների մղձաւանջը մարդկային գիտակցութեան մէջ։ Գիտութեան պայծառ, ճառագայթաւէտ լոյսի տակ հետզհետէ ճակատագրօրէն պիտի փարատուէր այդ բոլոր երկնային ու երկրաւոր պաշտամունքների մառախուղը, որպէս ծնունդ տգիտութեան ու երկիւղի... Տգիտութիւն՝ բնական երևոյթների և բոլոր շրջապատող ազդեցութիւնների մեկնութեան մէջ, երկիւղ՝ ի տես նրանց ահեղութեան, ահագնութեան ու վսեմութեան...

Այդպէս չ՚եղաւ, տարաբախտաբար։ Գիտական մտքի ազատարար հօսանքին զուգորդուեց վաղուց ի վեր — ամենահին դարերից — դ ա ս ա կ ա ր գ ա յ ի ն տ ի ր ա պ ե տ ո ւ թ ե ա ն պատուհասը. ծնունդ առաւ ամեն տեղ հասարակական մի դասակարգ, որ հռչակեց ինքզինքը աստուածների երկրաւոր սպասաւոր և մարդկային նախիրների „հոգեփրկիչ“, խնամատար. ծնունդ առաւ ամեն տեղ կ ղ ե ր ա կ ա ն կ ա ս տ ա ն, որ դարձրեց կրօնական զգացումը շահագործման անսպառ նիւթ և դարէդար — մարդկային ծովածաւալ վշտերի ու արիւնների վրայից — նա ժառանգեց սերունդներին իր աստուածային տիտղոսները, դրա հետ և կեղեքման, շահագործման իրաւունքը. դարէ-դար, նա աճեց, զօրացաւ, ամբարեց նիւթական հարստութիւններ և դրանով իսկ՝ միշտ աւելի և աւելի ծաւալեց իր բթացուցիչ ազդեցութիւնը մարդկային զանգուածների վրայ։

Ուրւականների, երևակայական ֆէտիշների շուրջը առաջ եկան այլևայլ դաւանանքներ, եկեղեցիներ, հերձուածներ և բորբոքուեց ամենուրեք կրօնա-դաւանական

հակամարտութեան ահեղ ուժը, որ լցրեց պատմութիւնը արիւնով ու արտասուքով։

Քրիստոնէութիւնը յետ չը մնաց ուրիշ կրօններից այդ բացասական աշխատանքի մէջ։ Հիմնադրի մի շարք վեհ սկզբունքները խեղաթիւրւեցին յետագայում և խեղճերի, հալածականների կրօնը դարձաւ հետզհետէ հզօրների, հալածողների մի կրօն... Հարուստները, աշխարհի տէրերը նոյնպէս արժանացան „երկնային թագաւորութեան", ուղտն անցաւ մախաթի ծակով... Ոգիացան հաւասարութեան և եղբայրութեան մեծահռչակ պատգամները, ստըրկութիւնը նւիրագործւեց քրիստոնէութեան տաղանդաւոր իդէօլօգների կողմից (Թոմաս Ակվինացի), որպէս երկնատուր մի հաստատութիւն *) և դասակարգային տիրապետութիւնը, թոյլերի ճնշումն ու կեղեքումը հզօրների ձեռքով՝ յարատևեց, աստիճանաբար սաստկանալով, մինչև մեր օրերը։

Հալածւեց ազատ միտքը։ Չոր, քարացած դօգմը բռնակալօրէն արշաւեց գիտութեան դէմ, թունաւոր ատելութեամբ հարւածեց ու բանադրեց դարերի ընթացքում այն ամենը, ինչ որևէ առնչութիւն ունէր ազատ, խուզարկու, քննադատական մտքի հետ։ Հերձւածը դարձաւ ահաւոր մի խօսք և կռիւը նրա դէմ— նշանաբան։ Կռիւ՝ բոլոր միջոցներով, կռիւ՝ բոլոր արիւնահեղ ու աշխարհադղորդ սարսափներով։ Յիշեցէք միայն հաւատաքննութեան, ինկվիզիցիայի ոճիրները, հարիւրհազարաւոր նահատակները Եւրոպայի այլևայլ երկրներում, յիշեցէք կղերի ձեռքով խարոյկ հանւած և բանտերում կենդանի թաղւած մարդկութեան վեհանձն զաւակներին, Ջորդանօ Բրունօին, Սավանարօլ-

*) Իբրեւ պատիժ „մարդկանց մեղաց համար":

լային, Գալիլէին, Էտիէն Դոլէին, Միշել Սերվէին, յիշեցէք վերջապէս Բարդուղիմէոսեան գիշերները…

Պապականութիւնը չէր միայն ազատութեան դէմ մարտնչողը, կաթօլիկ կղերը չէր միայն, որ սրբագործում էր մտքի ու սրտի ստրկութիւնը։ Ազատասպան սխրագործութիւններով, դօգմային անհամբերողութեան մոլեգնոտ ժեստերով փայլեցին նաև միւս յիսուսապաշտ եկեղեցիները — բողոքականութիւն, կալվինականութիւն, յանձին իսկ իրենց հեղինակաւոր հիմնադիրների… Երբ 1525-ին պայթեց գիւղացիական մեծ ապստամբութիւնը Գերմանիայում և ճնշուած, իրաւազուրկ ժողովրդային ընդհանրութիւնը Թոմաս Միւնցերի ու այլոց առաջնորդութեամբ գրոհ տուեց իր դարաւոր հարստահարիչների դէմ, իբր նշանաբան ունենալով քրիստոնէութեան հռչակած հաւասարութիւնը, հողերի արդար, հաւասար բաժանումը—հնչեց Լութերի ամպրոպագոռ ձայնը ապստամբների, „խռովարարների“ դէմ… Աւետարանի ու „ճշմարիտ քրիստոնէութեան“ ռահվիրան հրահանգում էր՝ անողորմ կերպով ջախջախել այդ մասսային խլրտումները և տեղի ունեցան չը տեսնուած արեան բաղնիքներ, ուր մօտ 100,000 ապստամբներ զոհ գնացին դահիճների գազանութեան…

Կրօնը, այո՛, բոլոր կրօնները, ի դէմս իրենց սպասաւոր դասակարգերի, դաշնակցել են միշտ հզօրների հետ, թիկունք են եղել աշխարհի բոլոր բռնակալութիւններին, և առերևոյթս հաւասարութիւն ու եղբայրութիւն քարոզելով, արշաւել են միշտ այդ հաւասարութեան ու ազատութեան դէմ՝ թէ տեսական մտքի աշխարհում և թէ քաղաքական ու սօցիալական շարժումների մէջ։

Բայց ահա սկսեց Արևմուտքում յեղափոխութիւնների շարանը։ Անգլիայում, Ֆրանսիայում ըմբոստացող

ժողովուրդը դատի կոչեց „աստուածընտիր“ միապետներին և դատապարտեց ու մահացրեց։ Կարլոս I, Լոնդոնում, Լուդովիկոս XVI Պարիզում, բարձրացան կառափնարբեմ և նրանց արիւնաշաղաղ գլուխները թաւալեցին գետնի վրայ... Ի՛նչ ահարկու հարուածներ „աստուածպետութեան“ դոգմին, գաղափարին.. Կրօնն այլևս կորցնում էր առաջադէմ ու յեղափոխական մարդկութեան աչքում իր բռնակալ հմայքը, նրա ազդեցութիւնը նւազում էր, նրա տիրապետութեան սահմանները կարճւում, ծայրատւում... Արդէն 1648-ին Վեստֆալեան հռչակաւոր դաշնագրով արևմտեան պետութիւնները լուծել էին կրօնական ու դաւանական արիւնալի վէճերը, յայտարարելով, որ ամեն մի ազգ, և ազգի ամեն մի հատւած ազատ է դաւանելու իր ուզած կրօնը, որ անմտութիւն է արշաւել իրարու դէմ և արիւն թափել կրօնական տարբեր համոզումների համար։ Դա, կարելի է ասել, մարդկային մտքի ազատագրութեան առաջին մեծ հանգրւանն էր։

Պայթեց Յեղափոխութիւնը անդրովկիանոսեան մեծ երկրի, Հիւսիսային Ամերիկայի մէջ։ Հիմնւեց աշխարհի մեծագոյն հանրապետութիւնը Վաշինգտոնի հայրենիքում։ Կրօնի հարցը ծեծւում է հանրապետական պարլամենտի առաջին նիստերի մէջ։ Եւ միաձայն յայտարարւում է.

„Իւրաքանչիւր քաղաքացի ազատ է դաւանելու իր համոզումները հաւատի խնդրում“։

Այնտեղ ժողովուրդներն էին ազատ հռչակւում կրօնական բռնութիւններից, այստեղ՝ անհատները։ Մարդ-անհատը տէր է իր սեփական համոզումների. Նա ինքն իր համար աստուած է, ինքն իր համար քահանայ։ Այսպէս էր մտածում միապետութեան ու կրօնապետութեան բթացնող հեղինակութիւններից ազատագրը-

ւած երիտասարդ ժողովրդապետութիւնը։ Եւ նա այսօր էլ հաւատարիմ է այդ հինաւուրց դաւանանքին։ Աւելի ուշադրաւն այն է, որ երբ սահմանադրութեան առաջին հանդիսաւոր վիճաբանութիւնների միջոցին մի կղերական առաջարկեց առանձին մի յօդւածով յայտարարել ք ր ի ս տ ո ս ի ա ս տ ւ ա ծ ո ւ թ ի ւ ն ը — Ազգային Ժողովը մերժեց այդ միաբերան։

„Ազատ մտքի“ հաւատամքն էր, որ շեշտւում ու յաղթանակում էր հետզհետէ՝ ընդդէմ կրօնական խաւարակուռ պաշտամունքների։

Եկաւ Ֆրանսիական Յեղափոխութիւնը։ Եկան պանծալի, տիեզերական օրերը, երբ պէտք է ձեւակերպւէր ի տես ամբողջ աշխարհի Ռամկավարութեան և Ազատութեան դօգմը։ Մեղադրեալի նստարանի վրայ դրւեցին բոլոր բռնակալ հեղինակութիւնները, թէ երկրաւոր և թէ երկնային։ „Մարդկային Իրաւունքների Ծանուցման“ մէջ (*Déclaration des Droits de l'homme*) մտցրւում է կրօնի ազատութիւն հռչակելը՝

„Ոչ ոքի չի կարելի անհանգիստ անել իր կրօնական կարծիքների համար, միայն թէ նրանց արտայայտութիւնը չը վրդովէ օրէնքով սահմանւած հանրային կարգը“։

Եւ կաթօլիկ ու պապական Ֆրանսիայում, Բարդուղիմէոսեան Գիշերի և հուգենօտեան սարսափների հայրենիքում հետզհետէ շեշտւեց կատարեալ չէզոքութիւն կրօնի հարցում։ Պետութիւնը մինչև վերջին տարիներս հովանաւորում էր հաւասարապէս չորս հակամարտ եկեղեցի. կաթօլիկ, լութէրեան, մովսիսական, կալվինեան։ Պետական գանձարանը վճարում էր ռաբբիին, որ համարում է Քրիստոսին՝ խաբեբայ. վճարում էր կաթօլիկ կիւրէին, որ հռչակում է հրէային՝ աստւածասպան (յիսուսասպան), վճարում էր, վերջապէս,

բողոքական պաստորին, որ դիտում է կաթոլիկ եկեղեցին, իբրև կռապաշտութեան մի այլաձևութիւն։

Իսկ այսօր... չի վճարում և ոչ մէկին։ Այսօր կատարուած է մեծ ապահարզանը երկու ոսոխ-ուժերի միջև. պետութիւնը, աշխարհիկ ուժը զատուած է եկեղեցուց և բոլոր եկեղեցիները ձգուած են բախտի կամքին։ Նրանց պահպանումն ու բարգաւաճումը այսուհետև պիտի հոգան իսկական հաւատացեալները։ Միլիօնաւոր ֆրանսիացիները, որոնք բնաւ չեն հաւատում և չեն էլ ուզում կեղծել, բռնաբարել իրենց խիղճն ու գիտակցութիւնը, միանգամ ընդմիշտ ազատուած են այդ կիւրէների, քահանաների օրհնութիւններից ու անէծքներից, պսակի, թաղման, հաղորդութեան, ապաշխարութեան և հարիւրաւոր ծիսակատարութիւններից. ազատուած են դրա հետ միասին և անախորժ պարտաւորութիւնից՝ հարկ տալու և դաւանական բիւջէ կազմելու՝ հաւատացեալների հոգիները փրկելու համար.. Եւ դա միանգամայն տրամաբանական է. ով հաւատում է, թող և հոգայ այդ բիւջէի մասին, իսկ ով չի հաւատում, նրան հարկադրելը, նրանից տուրք առնելը՝ յայտնւում է խղճի բռնաբարութիւն։ Ազա՛տ է անհատը — հաւատալու և չը հաւատալու։ Կրօնը մասնաւոր խղճի գործ է.. Ահա ժամանակակից աշխարհի նշանաբանը։

Դա բանականութեան, առողջ դատողութեան յաղթանակն է, ընդդէմ դօգմի, կոյր, սնպաշտ հաւատամքների։

Այդ յաղթանակի համար աշխատել էր մի կողմից ռամկավարութեան, միւս կողմից՝ գիտութեան աստիճանական զարգացումը։ Փիլիսոփայութիւնն ու գիտութիւնը, ի դէմս Կանտերի ու Սպինօզաների, Դարվինների ու Լապլասների, վաղուց անողոք հարուածներ են

տեղացել երկնային ուրուականների վրայ, մանրազննին քրքրել են նրանց ներքին, երեւակայական էութիւնը և արձակել նրանց դէմ իրենց անվերապահ մահավճիռը։ Գիտութիւն և կրօն եղել են միշտ և շարունակում են լինել անհաշտ հակոտնեաներ. որքան աւելի է խտանում մեր գիտական ծանօթութիւնների ցանցը, այնքան աւելի անձկանում են խորհրդաւորի, անյայտի հօրիզօնները և այսօր վաղեմի աստուածաբանական մեթօդը աշխարհի ստեղծագործութեան, կեանքի ու այլ տիեզերական երեւոյթների մեկնաբանութեան մէջ՝ հանդիսանում է բացարձակ անհեթեթութիւն և հեգնանք մարդկային բանականութեան ու արժանապատուութեան դէմ։

Քրիստոնէութիւնը, մասնաւորապէս, ենթարկւեց անողորմ քննադատութեան. Տիւբինգենեան հռչակաւոր աստուածաբանական դպրոցը հասցրեց նրան մահացու հարւած։ Շտրաուս, Ֆօյերբախ և Հեգելեան փիլիսոփայական շկօլայի Ճախակողմեան թեւի ուրիշ հզօր հեղինակութիւններ՝ մերկացրին քրիստոնէական դօգմի, վարդապետութեան ներքին անբուժելի խոցերը, ֆիկսիոնները, կեղծիքները։ Անդին՝ յեղափոխական Ֆրանսիայի մէջ Ռընանի ահեղ գրիչը շարժւեց՝ նոյն պատրանքներն ու առասպելները խարանելու, ջրելու համար... Մի մեծ, հոյակապ ու համատարած շարժում՝ քննադատութեան ու ազատագրութեան։ Դեռ չենք խօսում այն կործանիչ աշխատանքի մասին, որ մտցրեց մատերիալիզմի տիեզերական վարդապետութիւնը՝ կրօնի խաւար ու խորհրդապաշտ աշխարհի մէջ...

Դօգմը մեռա՞ւ... Ոչ։ Դեռ ամուր էին նրա դարաւոր արմատները՝ մասսաների, ժողովրդային զանգւածների ուղեղներում և սրտերում։ Դեռ ուժեղ էին և կղերական ու այլ իշխող դասակարգերը, որոնց շահը պա-

հանջել է միշտ՝ մթնացնել այդ զանգւածների գիտակցութիւնը, թանձրացնել տիրապետող խաւարը... Թանձրացնել կրօնական առասպելների եռանդագին ուսուցումով, սնոտիապաշտութիւնը կոյր, իներտ հաւատի մէջ կրթելով ու դաստիարակելով...

Դօգմային սև կօշմարը յարատևում է։ Դեռ Նոր Հռօմի պապը ռամկավարական աշխարհի դիմաց արձակեց իր շանթալի շրջաբերականը, ուր որոտում էր աշխարհիկ (ոչ կրօնական) դպրոցների դէմ և հրատարակում էր այդ դպրոցների կրթութիւնը՝ իբրև „անմաքուր, անբարոյական“... Վաղեմի ուժը չունին, հարկաւ, այդ պապական հրովարտակները, նրանք այլևս չեն կարող ցցել նահատակութեան քստմնելի խարոյկներ արևմտեան երկրների մէջ՝ հերետիկոսներին, անհաւատներին ջնջելու համար... Հերետիկոսները այժմ անհամար լեգէօններ են—ամբողջ լուսաւոր և ռամկավար մարդկութիւնն է։ Բայց, այնուամենայնիւ, դեռ բազմաթիւ են — հասարակութիւնների ստորին ու „բարձր“ խաւերի մէջ—երկրպագուներ պապական խօսքի և կատարողներ նրա իղձերի ու հրամանների։

Հրամայում են, յանուն սրբազան, անմեղանչական դօգմերի, ոչ միայն պապերը։ Հրամայում են և բոլոր ուրիշ քրիստոնեայ քրմապետները—մետրօպօլիտներ, պատրիարքներ, կաթողիկոսներ. հրամայում են, որովհետև այդպէս է թելադրում իրենց պաշտօնը, իրենց ուռուցիկ հեղինակութիւնը, իրենց աստուածային տրիբուտը։ Անձնաւորութիւնը ջնջւում է յաճախ, և ամենահամակրելի հովւապետներն անգամ ենթարկւում են այդ հրամայելու բնազդին, ենթարկւում են իրենց պաշտօնական, աւանդական „հմայքի“ բռնակալութեան... Հրամայում է և հայոց կաթողիկոս Իզմիրլեանը, իր առատաբուղխ կօնդակներով, հրամայում է

ոչ միայն իր ստորադրեալ վարպետներին ու աբեղաներին—իր գործն է դա և մենք դրա դէմ բողոքելու պէտք էլ չունինք—հրամայում է նա և ամբողջ հայ ընդհանրութեան ու մտաւորականութեան, նոյնիսկ ընդդէմ նրանց բացորոշ տրամադրութեան ու որոշումների (հակամիտինգեան կոնդակը)...

Դ օ գ մ ն է հրամայողը, ի դէմս այդ բոլոր հովուապետների,—ամուր, քարացած և ամբարտաւան հաւատամքը։ „Հովուապետները" և նրանց հոգևոր ստորադրեալները չեն կարող չը լինել յետադէմ, պահպանողական։ Նրանք չեն կարող չը քարոզել, չը պայքարել ժամանակակից գաղափարների դէմ, նրանք չեն կարող յարմարեցնել իրենց քարոզն ու բովանդակ գործելակերպը գիտութեան ոգուն, պահանջներին... Իսկ նրանք, որոնք փորձում են յարմարեցնել, նրանք, որոնք ուզում են կրել փարաջայի ու վեղարի տակ ժամանակակից սիրտ ու ուղեղ, տոգորւած գիտական ու ռամկավարական աւետարանի լօզունգներով, նրանք ստիպւած են վերջ ի վերջոյ—եթէ չեն ուզում յաւերժօրէն կեղծել ու յամառել երկւութեան, դուալիզմի այլասեռող ճանկերի մէջ—ստիպւած են դէն շպրտել վեղարն ու փարաջան, թողնել դօգմն ու եկեղեցին... Այդպէս են անում Մ ո ւ ռ ռ ի ն ե ր ը Իտալիայում և ուրիշ տեղեր, մանր ու խոշոր հերձւածողներն ու ըմբոստները մեր կեանքում.

Քրիստոնէական դօգմը կամ հաւատոյ հանգանակը ժխտում է բացարձակապէս ժամանակակից քաղաքակրթութեան ոգին, նա այն է, ինչ որ Վատիկանի հրամանատարը գրել է իր վերոյիշեալ սէնսասիօն շրջաբերականի մէջ. նա կատաղօրէն արշաւում է ա շ խ ա ր հ ի կ ո ւ գ ի տ ա կ ա ն կ ր թ ո ւ թ ե ա ն դէմ, համարում է այն—անկեղծութեան ու տրամաբանական մտածողութեան մի բացառիկ վայրկեանում—„Վնասակար ու

անբարոյական“։ Վնասակար ու անթոյլատրելի է այն ամենը, ինչ որ դուրս է Աստուածաշնչից, հին ու նոր կտակարանից, այն ամենը, ինչ որ հակառակ է այդ կտակարանների ուսուցումին։ Իսկ „հակառակ է“ ամբողջ գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը։ Բնական է ուրեմն, որ նրանք պէտք է դատապարտուին ու բանադրուին։ Այսպէս, դոգմը, „գերագոյն, անսխալական հաւատամքը“ չի պահպանուի իր կուսական բարձրութեան վրայ, այլապէս կղերը դաւած կը լինի իր իսկ գոյութեան խարիսխների դէմ..

Վնասակար, անթոյլատրելի է ուսուցանել դպրոցներում գիտական նորագոյն տեսութիւնները — Կանտ-Լապլասեան երկնային թէօրիա, դարվինականութիւն, էւօլիւցիօնիզմ և ամբողջ բնական արարչագործութեան գաղափարը, որ մեկնաբանում է աշխարհի ծնունդն ու զարգացումը սոսկ նիւթի ու շարժողութեան օրէնքներով։ Այդտեղ ամբողջ ժամանակակից գիտութիւնն է։ Եւ հասկանալի է, որ այնտեղ, ուր կղերը ուժ ունի և ուր դպրոցական մեծ գործը յանձնուած է նրա եռանդուն խնամատարութեան, այնտեղ հոգևոր հայրերը պիտի ձգտեն դուրս վտարել դպրոցներից իրենց պաշտօնին ու բնութեանը միանգամայն հակասող այդ „աշխարհիկ ցնդաբանութիւնները“ և պիտի սահմանեն „ճշմարիտ, կրօնական ու բարոյական“ կրթութեան մեթօդը,—մի մեթօդ, որ բղխում է աւետարանի հրահանգներից, որ բացատրում է տիեզերքի ու կեանքի այլազան երևոյթները նախախնամութեան յայտնութիւններով, մի մեթօդ, որ գիտութեան փոխարէն արծարծում է մանուկ, խոպան գլուխներում անվերծանելի, անիմանալի դոգմը, գերբնականը, հրաշքն ու առասպելը, որ այդպիսով ձուլում է, կերպարանաւորում նորաբողբոջ սերունդների ուղեղները,

դաստիարակում կոյր, անպայման հաւատի մէջ, տափակացնում իմացականութիւնները, զրկում նրանց բնական վերաբերումից դէպի շրջապատող երեւոյթները և ի վերջոյ պատրաստում է աւտօմատ, վատասեռուած քաղաքացիներ հասարակական կեանքի համար։

Դօգմի հետ ամուր կապուած է դասակարգային, կաստային շահը։ Մինը միւսի թիկունքն է, մինը առանց միւսի՝ ծիւրւում է, անդամալուծւում։

„Դասակարգ“ գոյութիւն ունի և մեզ մօտ։ Նա գոյութիւն չունի միայն մեր հոգևոր ու աշխարհիկ տիրացուների ազգասիրական երևակայութեան մէջ։ Ազգը նրանց համար միապաղաղ ու ներդաշնակ մի ձուլուածք է, կամ թէ այդպէս պէտք է լինի։ Կղերականութիւնը շատ իրական և շօշափելի մեծութիւն է՝ թէ Թիւրքիայում, թէ Անդրկովկասում։ Նա կազմակերպւում է իր սեփական լօզունգներով, նշանաբաններով, որ ընդհանուր են, յատուկ բոլոր կղերներին։ Նա պատրաստւում է կռիւ մղելու աշխարհիկ ու ռամկավար գաղափարների և ուժերի դէմ, նա մղում է արդէն այդ կռիւը *sur toute la ligne*, պատգամաւորական ժողովներում, դպրոցներում մամուլի մէջ։ Ցիշեցէք միայն մօտիկ անցեալի կաթողիկոսական ընտրական պայքարը և այն ստւար հոսանքը, որ գոյացել էր — մանաւանդ Կովկասում — Օրմանեան Նախկին պատրիարքի թեկնածութեան շուրջը։ Մի մարդ, սնուած ու այլասեռուած բոլոր ախտաւոր ազդեցութիւնների տակ, խրախուսած ուղղակի և անուղղակի յետադիմութեան ու փտութեան բոլոր չարագործ ռէժիմները, պաշտպան ու ջատագով միջնադարեան սքօլաստիկ խաւարամտութեան — մի այդպիսի մարդ քիչ էր մնացել, որ բազմէր Էջմիած-

նում, իբրև ղեկավար, հրամանատար՝ ոչ միայն հայ եկեղեցու, այլ և հայկական կուլտուրայի...

Կղերականութիւնը ուժ է մեզնում։ Նոյն էական ստորոգելիներով ու յաւակնութիւններով, նոյն իշխելու և կառավարելու տենչանքով, ինչպէս ամեն տեղ։ Կայ կղեր՝ և՛ հոգևորականների և՛ աշխարհականների մէջ։ Երկու տարրերը տարբեր են միայն իրենց արտաքին զգեստաւորութեամբ, բայց ազգակից են ոգով, ձգտումով։ Ուժերը յաւերժօրէն տատանւում ու փոխադրւում են աշխարհական հասարակութեան մէջ, մերթ դէպի աջ, դէպի ճշմարիտ, պրօֆէսիօնալ կղերը, մերթ դէպի ձախ, դէպի ազատամիտ ու ռամկավար աշխարհահայեացք. պատահում է, որ հակակղերական ազատամիտները — բուրժուազական բանակից — հանրային կեանքի որոշ վայրկեանում, դաւաճանում են իրենց երբեմնի համոզումներին և շուռ են տալիս իրենց անիւը դէպի կղերական աջակողմ, երբ տեսնում են իրենց դիմաց՝ նոր, աւելի ժողովրդական ու արմատական ուժեր, որ գալիս են քանդելու նրանց, այդ դժբախտ քամէլէօնների, կուսակցական գոյութեան հիմքը։ Այդ իրողութիւնը դիտելի է՝ թէ առաջադէմ Եւրոպայում և թէ մեզ մօտ։ Եւրոպական այժմեան խոշոր բուրժուազիան, որի պապերը կատարեցին յեղափոխութիւններից ամենավսեմ ու ամենակատաղին, ոչնչով այլևս չի յիշեցնում այդ պանծալի նախնիքներին և սօցիալիզմի համաշխարհային հոսանքի առջև կամաց-կամաց յետ նահանջելով, նա նետւել է բացարձակապէս կղերի գիրկը... Երկու ուժերը —աւետարանի ու փողի ուժը—այսօր ամբողջ Արևմուտքում ամենազօրեղ սիւներն են բուրժուա-կապիտալական արատաւոր կարգերի, ժողովրդային զանգւածների ճնշման ու թշւառութեան։ Երկուսը կազմել են հզօր ու սրտառուչ մի դաշնակցութիւն այն բոլոր

հոսանքների դէմ, որոնք գալիս են մեղմելու հասարակական սիստեմի տարկանոնութիւնները, յեղաշրջելու սեփականատիրական յարաբերութիւնները, բառնալու այն չարաշուք հակասութիւնը, ուր մի բուռն ձրիակերների երջանկութիւնն ու խրախճանները հաստատուած են բազմամիլիոն ժողովրդի արցունքոտ տառապանքի վրայ։

Ուժերի այդ տեղատուութիւնը շեշտւում՝ է և մեր հայկական իրականութեան մէջ։ Տարակոյս չը կայ, այն օրից, երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր „ստորերկրեայ" գործունէութեան աշխարհից նետուել է օրինական կեանքի ասպարէզները, մի ահագին փոփոխութիւն է առաջ եկել հայկական կուսակցական քարտէզի վրայ։ Դաշնակցութիւնը իր ծրագրով ու գործելակերպով հանդէս էր գալիս, որպէս Թարգման մի նոր դասակարգի։ Այդ դասակարգը՝ հայ բովանդակ աշխատաւորութիւնն է, իր ստւար ճիւղաւորութիւններով, գիւղացի, պրօլետար, արհեստաւոր, ինտելիգենտ։ Նրանց շահերի մտահոգութիւնները մինչ այն սովորաբար լուծուել էին „ազգ" կատեգօրիայի ընդհանուր շահերի աւետարանի մէջ։ Մենք մի անգամ արդէն տեսանք, թէ ինչ ասել է այդ լուծումը կամ ձուլումը։ Կղեր ու բուրժուազիա, որպէս „ի ծնէ և ի բնէ" տէր ու խնամակալ ազգի, ժողովրդի, երկար ժամանակ միահեծան վարել էին հասարակական բոլոր հիմնարկութիւնները, վարել էին իրենց յատուկ մեթօդներով։ Այդ մեթօդների մէջ տիրել է մերթ կղերական, մերթ աղայական-բուրժուազական ոգին, բայց երբէք կամ խիստ սակաւ—բուն ժողովրդականը, ռամկավարականը։ Այդպէս է պատկերը իր ընդհանուր, խոշոր գծերով նաև Թիւրքիայում ու Պարկաստանում։ „Ազգի խնամակալները" ամուր նստել էին իրենց դիրքերում, վստահ, որ իրենք կոչուած են սերնդէ-սերունդ

ղեկավարելու հայ ժողովրդական ճակատագիրը։ Բնական էր, ուրեմն, նրանց ցասումն ու յուսահատ դիմադրութիւնը, երբ նոր ու թարմ, ռամկավար ուժեր, նորաբողբոջ սահմանադրական ազատութիւնների հովանիի տակ՝ մէկէն ի մէկ գրոհ տուին „հովանաւորող" դասակարգերի այդ ամրապինդ դիրքերի դէմ, ձգտելով ամեն ինչ, ազգային-կուլտուրական գոյութեան բովանդակ պաշտօնավարութիւնը յանձնել ժողովրդական ընտրեալների, գաղափարական տարրերի ձեռք։

Inde irae! Այդտեղից—բոլոր բարկութիւններն ու գրգռումները։ Այդտեղ է աղբիւրը այն բոլոր անարգանքների, տղմոտ ու վարակիչ հոսանքների, որ ապտագրեց հայ ազգային ճահիճը վերջին տարիների ընթացքում և որոնց տակ կամեցան խեղդամահ անել Դաշնակցութիւնը։

Կրօնն ու Հայաստանեայց եկեղեցին դարձան կուռի նշանաբան և անկրօնութեան ու ապազգայնութեան մեղադրանքը՝ չեշտակի զէնք հակառակորդի դէմ... Ինչե՞ր չը նիւթեց հայկական կոյր, անզուսպ կիրքը այդ տագնապոտ տարիներում։ Ինչե՞ր չը տեսանք ու չը լսեցինք կ ե ն տ ր օ ն ա կ ա ն ժ ո ղ ո վ ի միջոցին... Դա վայրկեանն էր, երբ կիսազատ Ռուսաստանում հայ ժողովըրդական պատգամաւորութիւնը, բաղկացած իր ճնշող մեծամասնութեամբ, իր 95 տոկոսով նոյն նորեկ, գաղափարական ուժերից, փորձում էր կիրառելու իր մեծագոյն գաղափարներից մինը,—հայ ազգային կուլտուրական ինքնօրինութիւնը։ Մեղադրանքները վերածւեցին գաղտասուքի, գաղտասուքը վերածւեց մատնութեան։ Հակառակորդութեան նզովելի տենդը հասաւ այնտեղ, որ մի օր հայ պարբերական մամուլի մէջ հռչակւեց, թէ Դաշնակցութիւնը մտադրում է բռնի ուժով հաստատել... ինչ որ „ազգային կօնսպիրատիվ կա-

ռավարութիւն": Հակառակորդութեան տենդը հասաւ այնտեղ, որ կազմակերպութեան շարքերից դուրս վտարւած ակներև չարագործներ միաժամանակ թև տուին ռուսական ոստիկանութեան և մեր հայ հակառակորդներին:

Ամեն ճիգ ի գործ դրւեց՝ լարելու մեր դէմ հայակործան կառավարութիւնը և միաժամանակ հայ ժողովուրդը: Վերջինի համար ի՞նչ կարող էր լինել աւելի ազդու, քան „անկրօնութեան" հաւա՛րը... Եւ ժողովըրդական միամտութեան կեղեքիչները առատօրէն շեփորեցին դէպի ամեն կողմ, թէ Դաշնակցութիւնը ջնջել է ուզում եկեղեցիներն ու կրօնները, Էջմիածինն ու կաթողիկոսութիւնը, թէ նա նոյնիսկ ուզում է տիրանալ Էջմիածնի եկամուտներին՝ իր կուսակցական գանձարանը հարստացնելու նպատակով... Այսօր ստոլիպինեան կառավարութեան աջակցութեամբ այդ տարրերը վերստին տիրացած են հրապարակին, բայց դեռ հին յանկերգը կենդանի է... Նա հնչում է այժմ աւելի լայն հօրիզոններում, նա անցել է մինչև Բօսֆօր, մինչև Վանայ լճի եզերքը... „Դաշնակցութիւնը ամեն ինչ քանդել է ուզում և ամենից առաջ՝ Հայաստանեայց եկեղեցին": Ապացո՞յց...

Ապացոյց այն՝ որ մենք չենք շատ ոգևորւում այդ Հայաստանեայց եկեղեցիով, նրա կուլտուրական, ազգային-լուսաւորչական պաշտօնով. ապացոյց այն՝ որ մենք կամեցանք Կենտրօնական ժողովի մէջ զատել դպրոցը եկեղեցուց, աշխարհիկը հոգևորից, որ մենք հրատարակեցինք *կրօնը, իբրև մասնաւոր խղճի գործ* և պահանջեցինք, որ եկեղեցին իր կղերով զբաղւի սոսկ դօգմային, դաւանական խնդիրներով, իր ծէսերով ու խորհուրդներով, առանց երբէք միջամտելու ժողովրդական կրթութեան ու այլ բազմաթիւ զուտ կուլտուրա-

կան խնդիրների մէջ. ահա մեր յստակ ըմբռնումը և մեր ճշմարիտ վերաբերումը դէպի կրօնն ու եկեղեցին։ Այդպէս էր նաև կենտրոնական ժողովի 95 տոկոսի բռնած դիրքը 1906 թւականի յիշատակելի օրերում։ փաստերը հրապարակի վրայ են և ոչ մի ուժ չի կարող տևականօրէն խեղաթիւրել ճշմարտութիւնն ու վարկաբեկել այդ նշանաւոր ժողովը, որ կը մնայ միշտ մեր նորագոյն պատմութեան ամենապայծառ կէտերից մինը։ Գծուծ, քարացած հակառակորդութիւնը անընդունակ է գնահատելու պատմական մի խոշոր անցք en bloc, իր ամբողջութեան ու էութեան մէջ. նա գիտէ միայն ծանրանալ այս կամ այն գռեհիկ միջադէպի, այս կամ այն կօմիկ ու անէական պատահարի վրայ և... „տրամաբանել“ ու ընդհանրացնել։

Դաշնակցութիւնը չի ուզում „կործանել հայաստանեայց եկեղեցին“։ Եկեղեցի—իր բառացի իմաստով իսկ—հաւատացեալների, աղօթողների մի ժողով է, և մենք կուզէինք, որ նա մնար լոկ իբրև այդպիսին։ Բայց նա սիրով դուրս է նետւում իր այդ բնական սահմաններից և ուզում է միջամուխ լինել հասարակական բոլոր գործերին, ձեռք բերել տիրապետութեան նոր միջոցներ, դառնալ ճնշման, հարստահարութեան մեքենայ։ Այդպէս է նա դեռ արևմտեան երկրների մեծագոյն մասում։ Այդպէս չէ նա այլևս Ֆրանսիայում, Հիւսիսային Ամերիկայում, Մեքսիկում, Բրազիլիայում, Շվէյցարիայի բազմաթիւ կանտոններում, ուր եկեղեցին իսպառ բաժնւած է աշխարհիկ հաստատութիւններից։

Այդ բաժանումը գալու է ամեն տեղ, քանի որ նա մէկն է ռամկավարութեան մշտածաւալ հոսանքի ամենահիմնական պօստուլատներից։ Ռուսաստանի ռամկավարութիւնը ևս առաջադրել է այդ պահանջը,

և դեռ վերջերս, ռուս „Սրբազնագոյն Սինոդի“ բիւդ-ջէտային վիճաբանութիւնների ժամանակ, Պետական Դումայում սօցիալիստ կուսակցութեան հռետոր Սուր-կօվ խարանեց պաշտօնական ուղղափառ կրօնը և պա-հանջեց նրա հեռացումը, այնպիսի խօսքերով, որոնք իրենց մոլեգնութեամբ խորթ են հնչում այդ մեռե-լատիպ հիմնարկութեան մէջ.

„Կրօնը ժողովրդի աֆիօնն է... Ո՛չ մի գրօշ ժողո-վըրդական փողերից մենք չենք տայ ժողովրդի այդ արիւնռուշտ ոսոխներին, որ շարունակ մթնացնում են նրա գիտակցութիւնը“...

Եւ սօցիալիստական հատուածը առաջարկում է սև Դումային իր բանաձևը.

„Ի նկատի ունենալով իշխող օրթօդօքս եկեղեցու ներկայացուցիչների ծայրայեղօրէն յետադէմ գործու-նէութիւնը, ուղղուած ամեն տեղ ժողովրդի կենսական շահերի դէմ, ս.-դ.ական հատուածը, ընդունելով որ հոգևոր դասի այդ գործունէութիւնը կարող է վերացուիլ միայն պետութեան ու եկեղեցու և դպրոցի ու եկեղեցու լիակատար բաժանումով — ներկայումս մերժում է Ս. Սինոդի ամբողջ բիւդջէտական հաշիւը“:

Թիւրքիան, Պարսկաստանը ամենաանշնորհակալ վայ-րերն են՝ կրօնական խնդիրներ արծարծելու տեսակէտից. բայց հարկ կա՞յ մարգարէանալու, որ վաղ թէ ուշ, ճակա-տագրօրէն հոգևոր ու աշխարհիկ գործօնների զատման հարցը, դրւելու է նաև այդ երկու երկրներում: Հար-կաւոր է, որ առաջ գայ մ ա հ մ ե դ ա կ ա ն ճշմարիտ ռամկավարութիւն... Երիտասարդ Թիւրքիայի լուսամիտ գլուխները այժմից արդէն զգում են այն հսկայական լուծը, որ դնում է իսլամ կրօնը և կղերը պետութեան առաջադիմութեան անիւի վրայ: Նրանք առ այժմ ուրիշ միջոց չեն հրահանգում այդ սոսկալի չարիքի դէմ,

բայց եթէ անդուլ ու համատարած կ ր թ ո ւ թ ի ւ ն...

Եկեղեցին՝ պետութիւնից և դպրոցը՝ եկեղեցուց... Առաջին գործողութեան մենք կարող ենք նպաստել անուղղակի, իսկ վերջինին՝ ուղղակի։ Ոչ միայն մահմեդական ժողովուրդներն են տառապում այն հանգամանքից, որ իսլամն ու օրթօդօքսութիւնը, Թիւրքիայում, Իրանում ու Ռուսաստանում հռչակւած են, իբրև պետական, պաշտօնական կրօններ... Տառապում են խոշոր չափով և այլադաւան ազգերը։ Տառապում ենք և մենք։ Մենք և, ուրեմն, չենք կարող անտարբեր հանդիսատես մնալ՝ „աստւածպետական", ազգաճնշում գաղափարների դէմ սկսւած և սկսւելիք պայքարներին։

Բայց մենք ունինք և մեր ներքին ցաւերը, մեր հարազատ կղերի լուծը։ Մենք այն զգում ենք հայրենիքի բոլոր երեք հատւածներում և գործունէութեան բոլոր դաշտերում։ Դա մի ծանր խոչընդոտ է և մի յարատև սպառնալիք, որի դէմ հարկ է մշտնջենական հսկողութիւն ու կռիւ։

Այդ կռւի մէջ գաղափարական կուսակցութիւնը պէտք չունի թագցնելու կամ կիսելու իր հիմնական համոզումները. Նա պէտք է հրապարակ գայ իր ծրագրի, սկզբունքների բովանդակ յստակութեամբ։ Ընդունելով հանդերձ կրօնը, իբրև մասնաւոր խղճի գործ, յարգելով հանդերձ իւրաքանչիւրի հաւատալու և աղօթելու լիակատար ազատութիւնը, ճանաչելով հանդերձ եկեղեցին, որպէս ժողով հաւատացեալների, որոնք կատարեալ ազատութեամբ, իւրաքանչիւրը իր եղանակով, յագեցնում են իրենց հոգևոր կարիքները—մենք դրա հետ միասին պիտի բարձրաձայն ծանուցանենք միշտ և ամեն տեղ, որ „Հայաստանեայց առաքելական եկեղեցին" չունի և չի կարող ունենալ այն դերը ազգային զարգացման պրոցէսի մէջ, որ վերագրում է նրան մեր փարաջաւոր ու ան-

փարաջայ կղերը։ Անցեալում, անշուշտ, նա խաղացել է որոշ դեր ազգութեան պահպանութեան գործում, բայց այսօր ռամկավարութեան և գիտութեան մթնոլորտի մէջ նոր ազգային արժէքներ են հրապարակ գալիս, որոնց առջև նսեմանում է եկեղեցու դերը։

Աւելին կասենք։ Լուսաւորչականութեան Հաւատի տեղ՝ մենք կը քարոզենք ազգութեան, հայութեան Սէր։ Սէր և հաւատ — հակամարտ են։ Նրանք հակամարտ են գրեթէ բոլոր տիեզերական կրօնների մէջ։ Քրիստոնէութիւնը միաժամանակ սէր է քարոզում և հաւատ։ Բայց ամբողջ քրիստոնէական աշխարհի մէջ սէրը փոխարկւում է ատելութեան ու թշնամանքի՝ հանդէպ ոչ-հաւատացեալների. ո՞ւր է սէրը կաթօլիկի, կալվինիստի ու բողոքականի միջև. ո՞ւր է նա քրիստոնէի ու մահմեդականի, քրիստոնէի ու բուդդիստի միջև... Միմիայն հաւատացեալների, դաւանակիցների անձուկ շրջանում է, որ գործադրւում է սիրոյ սկզբունքը. հաւատը ճնշում է նրան, խեղաթիւրում. հաւատը փակում է նրան, կղզիացնում իր տարամերժ շրջանակի մէջ։ Բայց սէրը ուժեղ ու վեհ սկզբունք է, նա ձգտում է տարածւել բովանդակ մարդկութեան վրայ, առանց խտրութեան հաւատների։ Հաւատը նեղ է, չոր, էգօիստ, սէրը՝ լայն, վեհանձն, մարդասէր... Ահա անժխտելի, փիլիսոփայական ճշմարտութիւն։

Այդպէս չէ՞ և մեր իրականութեան մէջ։ Տեսէք, թէ ինչպէս հաւատը բաժանում է արիւնակիցներին, պառակտում է դարաւոր, պատմական համայնքը։ Հայ լուսաւորչականը, կաթօլիկը, բողոքականը շարունակում են խէթ աչքով նայել իրարու վրայ. յամենայն դէպս, նրանց փոխադարձ սիրոյ մասին դժւար թէ խօսք կարող է լինել։

Հաւատը այդպէս յաճախ հանդիսանում է, որպէս խտրող, պառակտիչ ուժ և հարկ է նրան ընդդիմադրել ս ի ր ո յ շաղկապող, հաշտարար քարոզը…

Մի քայլ ևս առաջ գնանք։ Երբ մենք հրատարակում ենք կրօնը, իբրև մասնաւոր գործ, չենք ուզում անտարբեր լինել ի տես կրօնի ու կրօնների այն մի շարք բացասական արտայայտութիւնների, որոնք գալիս են խաթարելու կամ դանդաղեցնելու մեր ազգային առաջադիմութեան ընթացքը։ Արդէն նախորդ էջերում ի ցոյց դրինք այդ վնասակար արտայայտութիւններից մի քանիսը, տեսանք, թէ ինչ է ներկայացնում և ինչպէս է անդրադառնում սերունդների կեանքի վրայ կրօնական դօգմային մեթօդը, ներշնչուած կոյր, անպայման հաւատով, լուսաւորուած բացառապէս նախախնամութեան ու Աստուածաշնչի պատգամներով և հակընդդէմ զուտ գիտութեան հրահանգներին։

Մենք գիտութեան երկրպագուներ ենք և նրա դատն է, որ պիտի պաշտպանենք ամենուրեք, նրա պայծառ ճշմարտութիւններով է, որ պիտի ղեկավարենք կեանքի բոլոր ասպարէզներում։ Պիտի մաքառենք — հարկ կա՞յ արդեօք շեշտելու — այն բոլոր գռեհիկ նախապաշարումների ու սնոտիապաշտութիւնների դէմ, որոնց տակ մինչև օրս էլ հեծում է մեր ժողովուրդը, որոնք, բղխելով նոյն կրօնական հաւատալիքներից, դառնում են նոր գործիք շահագործութեան՝ կղերի ձեռքում։

Թւե՞լ արդեօք այդ լեռնացած ու կրօնասուն նախապաշարումները… Ահա մեր դժբախտ մի գաւառի կամ քաղաքի մէջ, տօթերի ու երաշտի միջոցին, հայ հոգևորականութիւնը, եպիսկոպոսով ու տէրտէրներով, ժողովըրդային հէք ու լքուած մասսաները ետևն առած, սրբերի մասունքներով, խաչերով ու խաչվառներով, բեմ է նետւում՝ թափօր անելու, աղօթելու և „բաց անելու երկ-

նային սահանքները“... Հեթանոսական ամօթալի սովորութիւններ, որ այնքա՛ն արմատացած են մեր կղերական ու մասսային գիտակցութեան մէջ և որոնք — մտքի ու հաւատքի նրբութեան տեսակէտից — ոչնչով չեն տարբերւում ամերիկական կարմրամորթների ու աֆրիկական բուշմէնների գռեհիկ հաւատալիքներից։

Ահա մի ուրիշ տեսարան կրօնասուն բարբարոսութեան։ Ահա Խաչենի, Վարանդայի ամբողջ շրջաններ տնքում են սոսկալի համաճարակների տակ. ծաղիկը, տիֆը, սկարլատինը հնձում են մանուկ սերունդը և մեր կորած, դիւրահաւատ ժողովուրդը յամառաբար մերժում է բժշկական օգնութիւնը և ողբ ու հեծեծանքի մէջ դիմում է նոյն աստուածներին ու սրբերին... „Մենք Աստուծու և սրբերի եսիրներն ենք, ուզեն, կը տանեն մեր խոխոց իրենց կուշտը, ծառայ ենք նրանց սուրբ զօրաց“... ևայլն։

Այսպէս է տպւած Թիֆլիսեան մէկ հայ օրաթերթում։

Եւ յօդւածագիրը — մեր գաւառական ամենալուրջ գրողներից մինը—կսկծալի սրտով ծանրանում է մեր այդ ամենօրեայ ցաւագին իրականութեան վրայ. „Այնտեղ, ասում է նա, գաւառի մէջ գործում են նոյն դահիճները՝ տգիտութիւն, վայրագ անկուլտուրականութիւն և կոյր, բանականութիւնից իսպառ զուրկ *հաւատը դէպի գերբնական ուժի ներգործութիւնը*... Դարերի ընթացքում անծայրածիր տգիտութիւնից բղխող այդ կոյր հաւատը քանի՛ վաղաժամ զոհեր է տարել նրա ճանկերում խեղդւող ժողովրդից և ինչքա՛ն է նպաստել նրա թւի նւազեցման—դժւար չէ երևակայել“...

Ո՞վ է մեծագոյն պատասխանատուն մեր ժողովրդական գիտակցութեան այդ սիստեմատիկ թունաւորման, բթացման մէջ...

— Նոյն կրօնի սպասաւորները։

Ահա մի երրորդ տեսարան։ Ահա նոյն կորած խաւար գաւառներում — և միթէ՞ միայն գաւառներում — նոյն բթացած, թունաւորուած ամբոխը մեր գործիչների ինքնապաշտպանութեան քարոզների հանդէպ ստրկօրէն մրմնջում են նոյն կրօնական պատգամները բերան առած. ի՞նչ հարկ կայ զինուելու, պատրաստուելու... ճակատներիս գրուածը պիտի կատարուի... աւետարանը մեզ կը փրկի... Քրիստոս կ'արգիլէ զէնք բարձրացնել" ևայլն ևայլն։

Քիչ չեն, դժբախտաբար, այդպէս մտածողներ մեր կրաւորամիտ ամբոխի մէջ։

Ինչպէ՞ս անտարբեր մնալ այդ տեսակ պարագաներում և չը քննադատել այդ աղէտաբեր մտայնութեան քաջալերիչ հեղինակութիւնը։ Ինչպէ՞ս չը խարանել եկեղեցու, վարդապետութեան այդ վտանգաւոր մօրալը (բարոյախօսութիւնը), որ ամեն տեղ նւիրագործում է բութ, սպանիչ կրաւորականութիւնը և անդամալուծում ինքնապաշտպանութեան ճիգերը՝ առանց այն էլ չափազանց „խաղաղասէր" և թուլամորթ մի ժողովրդի մէջ...

Քրիստոնէական մօրա՛լը... Գուցէ ոչ մի ուրիշ ժողովուրդ իր ալէծուփ գոյութեան ընթացքում այնքան չի տառապել այդ ինքնատիպ բարոյախօսութեան ամենօրեայ հոլովումներից, ինչպէս մեր ժողովուրդը։ Ի՞նչ է ասում այդ մօրալը։

Դա մի ամբողջ բարոյագիտական տրակտատ է, որից բղխում է և սօցիալական ու իրաւական մի յատուկ աշխարհահայեացք։

„Չարին չարով մի՛ դիմադրիր" — ասում է Նրա հիմնական պատուիրաններից մինը։ Մէկ երեսիդ զարնեն,

միւսը դարձուր“. „վերմակդ խլեն — շապիկդ տուր“։ Այսպէս է արձանագրում Մաթէոս աւետարանիչը։

Այդ սարսափելի պատուիրանների հետ սերտօրէն կապուած է մի ուշագրաւ սկզբունք, որ կարելի է ասել, կենտրոնն է քրիստոնէութեան սօցիալ-փիլիսոփայական աշխարհահայեացքի։ Դա բ ա ր օ ր ո ւ թ ե ա ն ու ե ր ջ ա ն կ ո ւ թ ե ա ն բ ա ց ա ս ո ւ մ ն է այս աշխարհի վերաբերմամբ։ Երջանկութիւնը „յետոյ է գալու“, անդըրշիրիմեան գոյութեան ծոցում, իսկ ներկայ կեանքը շաղկապուած է յաւիտենօրէն տանջանքի ու զրկանքների հետ։ Դրախտը երկնքումն է, իսկ երկիրը պիտի մնայ միշտ „տառապանքի հովիտ“... Այսպէս է խօսում այդ զարմանալի մօրալը։ Զրկանքը, աղքատութիւնը նոյնիսկ ի դ է ա լ ն է քրիստոնէութեան։ Կեանքը — փորձութիւն է...

„Աստուած ստեղծել է մեզ — այսպէս էր յայտարարում Հռօմի ամենախելացի պապերից մէկը, Լէօն XIII, իր հռչակաւոր շրջաբերականի մէջ, Բ ա ն ւ ո ր ա կ ա ն խ ն դ ր ի առթիւ — Աստուած ստեղծել է մեզ ոչ այն չնչին ու անցողական բարիքների համար և նա տուել է մեզ երկրագունդը ոչ թէ իբրև իսկական բնակատեղի, այլ իբրև աքսորավայր...

„Յաւիտենական երանութեան համար բնաւ փոյթ չէ՝ արդեօք մարդիկ կունենան առատութեամբ հարստութիւն և ուրիշ բարիքներ, թէ կունենան պակասութիւններ, զրկանքներ... Յիսուս Քրիստոս իր քաւութեամբ բնաւ չի վերացրել խաչն ու տանջանքները և ոչ ոք չը պիտի արժանանայ յաւիտենական արքայութեան, եթէ չ'ապրի մեր Տիրոջ ցաւոտ Գողգոթան։ Նրա հետ տանջւելով, Նրա հետ և կ'իշխենք։ Որովհետև մեր ներկայ թեթև ու վաղանցուկ տանջանքների փոխարէն պիտի վայելենք առատ չափով երանութիւն յաւիտենականութեան մէջ։ Սօցիալիստները կարող են

ձգտել ցնորքների իրականացման, բայց ապարդիւն է՝ կռուել բնական կարգերի դէմ։ Մարդկութիւնը մշտնջենապէս ճնշուած է մնալու ամենամեծ, ամենախորունկ անհաւասարութեամբ“։

Պապի այս հակիրճ տողերը սքանչելիօրէն յատկանշում են քրիստոնէական վարդապետութեան բովանդակ ոգին։ Պապական շրջաբերականը մխիթարում է Եւրոպայի բանւորներին՝ գալոց դրախտային երանութեամբ։ Համաշխարհային կաթօլիկութեան առաջնորդի բերանով բարձրաձայն նւիրագործւում է ճնշման, հարստահարման սկզբունքը։ Դահիճների, կեղեքիչների մի չնչին փոքրամասնութիւն ստրկացրել է բազմամիլիօն ժողովուրդներ—ոչի՞նչ, դա բնական կարգ է, ճակատագիր է։ Կապիտալի և սրի անարգ տիրապետութիւնը դարձրել է երկրագունդը մի իրական դժոխք—ոչի՞նչ, դա միայն ժամանակաւոր, վաղանցուկ պատուհաս է և Աստուած ինքն է այդպէս սահմանել՝ միւս, հանդերձեալ գոյութեան մէջ հատուցանելու պայմանով... Մերկ ու քաղցած աշխատաւոր մարդկութիւնը իրաւունք էլ չունի կռուելու իր հզօր թշնամիների դէմ, յանուն աւելի բախտաւոր հասարակական վիճակի։ Զո՞ւր, ապարդիւն ջանքեր են... Մասսային երջանկութիւնը վտարուած է այս աշխարհից, երկրագունդը աքսորավայր է, արտասուքի ու տառապանքի մի հովիտ և մարդիկ պիտի քայլեն նրա միջից, յաւիտենօրէն կորացած խաչերի ու լծերի տակ, յաւիտենօրէն տանջւելով ու հեծկլտալով, առանց երբէք յուսալու լաւագոյն հեռապատկեր, առանց երբէք տեսնելու իրենց երկրաւոր ճիգերի գէթ մասնակի պսակումը։

Ահաւասիկ այդ մօրալը—պաղ, դաժան, սարսափելի։ Կեանքի ու գործունէութեան բացասումն է դա և ճգնութեան անվերապահ ջատագովումը։

Մարդկութիւնը պիտի տառապէ, պիտի քաւէ, ապաշխարէ և աղօթէ, աղօթէ... Երբէք կռիւ, մաքառում — միշտ իմաստուն համակերպում։ Երբէք ճիգ ազատութեան, — միշտ անխռով համբերութիւն՝ թշւառութեան ու ստրկութեան շղթայի տակ..

Մենք չենք, որ պիտի գրկենք աբեղայական ճգնաւորութեան այդ մռայլ աւետարանը։ Նրանից մահւան հոտ է բուրում, անէութեան սարսուռ։ Մեր դաւանած փիլիսոփայութիւնը միանգամայն օպտիմիստ է, լաւատես, կենսուրախ։ Դա ճ ի գ ի ու գ ո ր ծ ի փիլիսոփայութիւնն է, — միակ բանաւորն ու մարդկայինը, միակ ընդունելին։ Սխալւում է Լէօն պապը, սխալւում են քրիստոնէական էտիկայի բոլոր այլազան ռահվիրաները — աշխարհը բնաւ դատապարտւած չէ մնալու յաւէտ ա ր ց ո ւ ն ք ի հ ո վ ի տ։ Ժողովրդական զանգւածներին բնաւ վիճակւած չէ՝ ապրել յաւէտ ստրկութեան ու թշւառութեան մէջ։ Այդ թշւառութիւնը մարդկային գործ է — մարդկային ձեռքով էլ պէտք է վերանայ։ Եւ նա կը վերանայ ոչ թէ անարգ համակերպումով, այլ կ ռ ւ ո վ։ „Չարին չարով չը դիմադրելու“ գաղափարը չէ, որ կոչւած է փրկազատելու մարդկութիւնը, այլ յարատև ու յուսահատ մաքառումը։ Այդպէս է ըմբռնում պրօգրէսի մեծ խորհուրդը՝ ինքը բազմատանջ, հարստահարւած ընդհանրութիւնը. և ահա նա քաղաքակիրթ երկրագնդի բոլոր ծայրերում շարժւում է, կազմակերպւում, ահա նա նետում է իշխողներին իր ահարկու ձեռնոցը և շարէշար, միլիօնաւոր զանգւածներով ընթանում է հպարտ ու անխռով — դէպի „դրախտի“ նւաճումը...

Ոչ, հեռո՛ւ ճգնաւորական միջնադարեան թէօրիաները։ Մեր տարաբախտ ժողովուրդը շատ է արդէն ճաշակել նրանց մահահոտ բուրմունքը, այժմ պէտք է

կրթել նրան լաւատեսութեան, ուրախութեան մէջ։ Այժմ պէտք է ջանալ փարատել մեր հայրենի իրականութեան մէջ այդ ստրկացուցիչ, կրաւորապաշտ հասկացողութիւնների մառախուղը, վերացնել այդ լեռնացած նախապաշարումները, որ խրախուսում, սնուցանում են յաւերժօրէն մեր կղերի, եկեղեցու հեղինակութեամբ։ Մենք նրանց միշտ կը հակադրենք նոյն զէնքը, նոյն փրկարար համադարմանը, որ գործադրում է ամբողջ կռւող, ազատատենչ մարդկութիւնը... Դա կրթութեան ուժն է, դա գիտութեան լոյսն է... Wissen ist Macht, Macht ist Wissen. „Գիտութիւնն ուժ է, ուժը՝ գիտութիւն“...

Թողնե՛նք, որ մեռելները թաղեն իրենց մեռելներին, Թողնե՛նք միջնադարեան ասկետներին, ճգնաւորներին՝ որոճալու անդրջրհեղեղեան, չնաշխարհիկ ֆորմուլները „արցունքի հովիտների“ և „երկնային հատուցումների“ մասին, Թողնենք նրանց դեգերելու յաւիտենական դօգմերի, ոգիների, ուրուականների խորհրդաւոր լաբիւրինթոսում, իսկ մենք կերթանք մեր ճանապարհով, ամուր գրկած Գիտութեան ու Աշխատանքի տիեզերական աւետարանը, մենք կերթանք խորտակելու — միահամուռ, կազմակերպուած, ժողովրդային ուժերով — այն բոլոր պատնէշները, որ տնկել են հինաւուրց ու կեղեքիչ կաստաների ձեռքով՝ ազատ մտքի ու հանրային բարօրութեան դէմ, մենք կը ձգտենք ազատելու ժողովրդային կրթութեան գործը — ամենավսեմ, ամենաթանկագին հաստատութիւնը — այդ յետադէմ կաստաների ազդեցութիւնից, ազատելու դպրոցը եկեղեցու սպասաւորութիւնից, դարձնելու այն միանգամայն աշխարհիկ, համայնացնելու գրագիտութիւնն ու ուսումը, դարձնելու այն մատչելի ժողովրդային լայն խաւերին. մենք կը ջանանք շէնցնել

վերածնուող Հայրենիքը՝ աշխատանքի կենդանարար, ազնուացնող գօգմի մէջ, տալ նրան նիւթական սնունդի հետ և մտաւորն ու բարոյականը, վերակազդուրել նրա դարաւոր վէրքերը, նրա հաշմանդամ օրգանիզմը. մենք կը լծուե՛նք կուլտուրական այդ հոյակապ աշխատանքին,—առանց երբեք կորցնելու 20 տարուայ մեր ցաւոտ ու երերուն յոյսը՝ որ մի օր այդ մթագնած երկնքի տակ „արտասուքի հովիտները“ կը վերածուին գեղածիծաղ դաշտերի,—մենք կը դիմենք՝ կորովի և զւարթ, կենսուրախ շարքերով ապագայի նուաճումին, միշտ բնաբան ունենալով բանաստեղծի խրոխտ երգը.

Wir wollen hier, auf Erden schon
Das Himmelreich errichten!...

VII

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑ

ՍՕՑԻԱԼԻԶՄ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ

Աշխատաւորական շարժումը եւրոպական Թիւրքիայում ու Կովկասում. — Ի՞նչ է սօցիալական հարցը. — Համաշխարհային զարգացման փուլերը.—Երեք բռնաւոր հեղինակութիւններ. Կրօն, Միահեծանութիւն եւ Փող.—Սօցիալիզմի գաղափարը հայկական միջավայրում. — Արծրունեան դպրոցը եւ աշխատաւորական դասը.—Սօցիալիզմը եւ դասակարգային բաղխումները պատմութեան մէջ. — Առանց այդ բաղխումների՝ չիք առաջադիմութիւն. — Աշխատաւորական միջազգայնութիւնը եւ նրա քարոզը Թիւրքիայում.—Իդէալ եւ գործելակերպ.—

„Une révolution qui n'a pas pour but d'améliorer profondément le sort du peuple, n'est qu'un crime remplaçant un autre crime" *).

Robespierre

Հէնց որ ծանուցեց հին ռէժիմի խորտակումը Թիւրքիոյ մէջ, հէնց որ տարածւեց ազատութեան դիւթիչ արձագանքը օսմանեան տարտարոսում, մէկէն ի մէկ գահավիժող հեղեղների պէս պայթեցին բանւորական մասսային գործադուլները. քրիստոնեայ և մահմեդական

---

*) „Մի յեղափոխութիւն, որ նպատակ չունի խորապէս յեղաշրջելու ժ ո ղ ո վ ր դ ի վիճակը, ոճիր է, փոխարինող մի այլ ոճրի":

ամեն կարգի աշխատաւորներ, տպարանային գործաւորներ, գրաշարներ, բեռնակիրներ, երկաթուղու և տրամվայի ծառայողներ, ծխախոտի, Թղթի ու այլ գործարանների բանւորներ, հանքային պրօլետարներ, իրար ետևից, մեծ մասամբ անկազմակերպ, ինքնաբերաբար, տարերայնօրէն բանթող հրատարակեցին, բևեռելով մի վայրկեան իրենց վրայ Եւրոպայի ուշադրութիւնը, ձգելով անակնկալի ու շւարումի տպաւորութիւնը մանաւանդ „Երիտասարդ Թիւրքիա“-ի իդէօլօգների վրայ, որոնք տասնեակ տարիների իրենց Թափառումների մէջ քաղաքակիրթ Եւրոպայում, դժբախտաբար, ոչինչ չեն սովորել նոր, կարմիր, Աշխատաւորական Ինտերնացիօնալի շարժումներից և յաւակնում են անանցանելի պատնէշ դնել նրանց հանդէպ՝ օսմանեան հայրենիքում...

Ի լրումն այդ տարերային գործադուլների՝ սկսեցին բսնել մին միւսի ետևից սինդիկատները, արհեստակցական միութիւնները... Վերջապէս, օսմանեան պարլամենտի մէջ հրապարակ եկաւ Ընկերակցութիւնների խնդիրը. տեղի ունեցան ուշագրաւ վիճաբանութիւններ սինդիկատային կազմակերպութիւնների, կապիտալի ու աշխատանքի յարաբերութեան խնդրի շուրջը, արտասանւեցին ճառեր յօգուտ մէկի և միւսի, կառավարութիւնը իր ձեռքն առաւ կապիտալի պաշտպանութիւնը, արգելեց արհեստակցական միութիւնների կազմակերպումը, տեղի ունեցան այդ վանդալական որոշման դէմ բողոքի հսկայ միտինգներ Մակեդօնիայում, մասնակցութեամբ դարձեալ այլևայլ ազգերի պատկանող համախմբումների...

Ահա մի նոր երևոյթ, մի նոր ու կենդանի գործօն, որ կոչւած է պատկառելի դեր խաղալու ժողովուրդների սիրայօժար մերձեցման մէջ, որ պիտի լինի յետագա-

յում՝ ամրագոյն շաղախը ազգամիջեան համերաշխութեան։

Ի՞նչ է դա…

Սօցիալական շարժումն է, որ ծայր է տալիս—գլխաւորապէս եւրոպական Թիւրքիայում, ուր նորագոյն արդիւնաբերութիւնը արդէն խոշոր քայլեր է արել և ուր բուլգար-մակեդօնական սօցիալիստ կուսակցութիւնները տարիներից ի վեր մղել են որոշ պրոպագանդ։ Նա ընդգրկում է, ի հարկէ, աշխատաւոր ընդհանրութեան դեռ շատ փոքրիկ մասնիկը, բայց տնտեսական զարգացման և քաղաքական բարեփոխումների հետ, նա կը տարածւի, կընդհանրանայ նաև ասիական Թիւրքիայում, նաև դաշտերում, աշխատաւոր գիւղացիութեան մէջ։ Մի փոքրիկ մասնիկն է դա այն մեծ, համաշխարհային հոսանքի, որ կոչւում է աշխատաւորական կամ սօցիալիստական, որ ապագայում պիտի միացնէ մեզ մօտ ևս՝ երեք հզօր դաշնակիցներին — հարստահարւած բանւորութիւն, հարստահարւած գիւղացիութիւն և գիտակից ժողովրդական մտաւորականութիւն…

Անդրկովկասն ևս, 5—6 տարի սրանից առաջ հեղեղւեց մէկէն ի մէկ այդ շարժման ալիքներով, որոնց նոյնպէս զարկ էր տւել ռուսական Սահմանադրութիւնը։ Շարժումը բղխում է դասակարգային շահերի հակամարտութիւնից, իսկ այդ վերջինը բռնապետական ռէժիմների տակ սովորաբար խեղդւում է, ինչպէս որ խեղդւում են կեանքի միւս բոլոր արտայայտութիւնները։

Ի՞նչ է սօցիալական խնդիրը և շարժումը։ Ի՞նչ են նրանց պատճառները և հեռաւոր ու մերձաւոր նպատակները… Մենք կատարեցինք երկարատև

զբօսանք հասարակական մի շարք պրօբլեմների աշխարհում, հարկ է այժմ կանգ առնել այդ վերջին ու ահաւոր կնճռի վրայ, որ հանդիսանում է, այսպէս ասած, վերջին օղակը մարդկային ազատութեան էւօլիւցիայի երկարաձիգ շղթայի և որի առթիւ կռիւները շարունակում են եռալ, բորբոքւիլ հին ու նոր աշխարհներում՝ ատլանտեան ու ամերիկեան եզերքներից մինչև Քռի ու Նեվայի ափերը։

Ինչպէ՞ս է նա „ազատութեան էւօլիւցիայի“ վերջին օղակ կամ հանգրուան...

Երբ բռնակալ ուժերի տակ դարերից ի վեր հեծում է մարդկութեան ահագին մեծամասնութիւնը։ Այդ ուժերն են — պարզ ու հակիրճ արտայայտութեամբ—Կրօնը, Միահեծան բռնապետութիւնը և Փողը։ Երեք հզօր հեղինակութիւններն են դրանք, մերթ հակամարտ, թշնամի, մերթ բարեկամ, դաշնակից՝ իրենց դարաւոր զարգացման ելևէջներում։ Առաջինը շա՜տ հին է, նրա խորհրդաւոր սկզբնաւորութիւնը կորչում է նախապատմական անեզր ու թանձրամած խաւարի մէջ, կարելի է ասել՝ կապւած է մարդկութեան հէնց առաջին թոթովանքների հետ։ Երկրորդը համեմատաբար աւելի նոր է, թէև նրա անթիւ արտայայտութիւնները նոյնպէս անցնում են գրաւոր պատմութեան *) շէմքից և ընկնում բարբարոսութեան հօրիզօնները։ Երրորդ ուժը աւելի ևս նոր է և իր նորագոյն արտայայտութեան՝ կապիտալի կամ դրամագլխի ձևով իշխում է, կարելի է ասել,

*) „Պատմութիւն“ սովորաբար կոչւում է ժամանակի այն շրջանը, որ սկսւում է հին եգիպտական ու ասիական քաղաքակրթութեան օրերից (8—10,000 տարիներ առաջ) եւ ձգւում է մինչեւ ներկայ օրերը։

տիրականօրէն ամբողջ ժամանակակից քաղաքակրթութեան վրայ։

Եւ այդ բռնակալ ուժերը տապալւում են իրենց հնութեան կարգով։ Խորտակւեց նախ Կրօնի հեղինակութիւնը։ Քաղաքակրթւող մարդկութիւնը ազատագրւեց՝ նախ կրօնապէս։ Տեսանք անցեալ գլխի մէջ, թէ ինչպէս այդ ուժը, երբեմն գոռոզ, բռնաւոր ու քմահաճ, երբեմն տէր ու հրամանատար հասարակական յարաբերութիւնների, կամաց-կամաց գահավիժւեց իր տիրական բարձրութիւնից, նրա ազդեցութեան շրջանը աստիճանաբար կրճատւեց, սահմանափակւեց՝ աշխարհիկ գործօնների յարաճուն ուժեղացման ու ծաւալման շնորհիւ... 1648 թւականը մարդկային ազատագրութեան այդ առաջին հանգրւանն էր։

Կրօնից յետոյ—քաղաքական բռնակալութիւնը։ Նրա մահւան տիեզերական ղօղանջն էլ հնչեց 1789-ի յիշատակելի օրերում, Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան աշխարհադղորդ անցքերի մէջ *)... Գահավիժւեցին երկրաւոր աստւածները եւ, սահմանափակւեց կամ իսպառ ջնջւեց և միահեծան արքաների սանձարձակ տիրապետութիւնը, նրա տեղը բռնեց ժողովրդային գերիշխանութեան կամ ուրիշ խօսքով, ռամկավարութեան վեհ սկզբունքը։

Դա երկրորդ մեծ հանգրւանն էր մարդկային ազատութեան էւօլիւցիայի մէջ — քաղաքական ազատագրութեան հանգրւանը։

---

*) Տիեզերական՝ իրաւամբ համարւում է Ֆրանսիական Յեղափոխութիւնը (եւ ոչ անգլիականը, որ նրանից առաջ էր կատարւել)—իր վիթխարի ծաւալով, իր ցօցափած հասարակական-ռամկավարական խնդիրների ահագնութեամբ ու խորութեամբ, վերջապէս, իր համասփիւռ ազդեցութիւններով, արձագանգներով։

Ազատութիւնը, սակայն, կատարեալ չ'եղաւ և շուտով, քաղաքական իրաւունքները ձեռք բերելուց յետոյ, յեղափոխական ժողովուրդների առջև ծառացաւ երրորդ բռնաւոր Ուժը — Փ ո ղ ի, Կ ա պ ի տ ա լ ի Հեղինակութիւնը. դրա հետ միասին ցցւեց Ս օ ց ի ա լ ա կ ա ն կամ Ա շ խ ա տ ա ւ ո ր ա կ ա ն խնդիրը—բոլոր խընդիրների Խնդիրը։ Միահեծան իշխանութիւնը տապալւել էր, ճիշտ է, բայց փողատէր, կապիտալիստ դասակարգի (ուրիշ խօսքով բ ո ւ ր ժ ո ւ ա զ ի ա յ ի) լուծը փոխարինել էր այդ իշխանութեանը։ Մարդիկ, իրաւ է, հըռչակւել էին ազատ ու հաւասար օրէնքի առջև, նրանք ձեռք էին բերել ք ա ղ ա ք ա կ ա ն իրաւունքներ, բայց ա շ խ ա տ ա ւ ո ր ժողովուրդները շարունակում էին մնալ նախկին թշւառութեան մէջ, սովի, անհողութեան, մերկ, կիսաքաղց գոյութեան ճիրաններում... ինչպէս այժմեան քաղաքականապէս ազատագրւած Թիւրքիոյ մէջ, ուր աշխատանքի բազմամիլիոն դասակարգը—գիւղացիութիւն, բանւորութիւն — չի տեսնում շատ թէ քիչ շօշափելի փոփոխութիւն ու բարւոքում իր նիւթական վիճակի մէջ՝ անգամ ազատ, սահմանադրական կարգերը հռչակւելուց յետոյ...

*Քաղաքական յեղափոխութիւնները տւել են ամենուրեք իշխանութեան ղեկը հարուստ, հողատէր ու փողատէր դասակարգերին, իսկ վերջինները, յենւած իրենց այդ „փողատուր“ *) առանձնաշնորհման վրայ, ճնշել ու հարստահարել են „ստորին“, աշխատաւոր դասակարգերը։*

Ք ա ղ ա ք ա կ ա ն ազատութիւնն ու հաւասարու-

---

*) Միապետների առանձնաշնորհումը, ինչպէս տեսանք, „աստուածատուր“ էր, այսինքն բղխող նրանց „աստուածային“ ատրիբուտներից (ստորոգելի)։ Բուրժուաների առանձնաշնորհումը փ ո ղ ա տ ո ւ ր է, այսինքն փողային հարստութեան արդիւնք։

թիւնը հռչակւել է, բայց դրա հետ շարունակւել է տնտեսական խորունկ անհաւասարութիւնն ու ստրկութիւնը։

Եւ ահա այդ աղաղակող հակասութիւնից առաջ է եկել ամենուրեք՝ սօցիալական խնդիրը։ Այդ վերջինը ծնել է սօցիալիզմը... Մի շարժում և միանգամայն վարդապետութիւն՝ որ մօտ 100 տարւայ կեանք ունի արդէն, որի կողմնակիցները հաշվւում են քաղաքակիրթ աշխարհի մէջ տասնեակ միլիօններով և որի նպատակն է՝ աստիճանաբար բարձրացնելով աշխատաւոր ընդհանրութեան նիւթական, մտաւոր ու բարոյական կենսավիճակը, աստիճանաբար մարզելով նրան իր դասակարգային շահերի գիտակցութեան մէջ՝ ջնջել, ի վերջոյ, այս աշխարհից բոլոր դասակարգային առանձնաշնորհումները, վերացնել ճնշողի և ճնշւածի, իրաւատէրի և իրաւազուրկի հասկացողութիւնը և իրականացնել Ֆրանսիական Յեղափոխութեան հռչակած ճշմարիտ հաւասարութիւնն ու եղբայրութիւնը, քաղաքական ազատութեան հետ՝ և տնտեսական ազատութիւնը։ Դա կը լինի մարդկային ազատագրութեան երրորդ ու մեծագոյն հանգրւանը, դա կը լինի երրորդ կուռքի — փողի, Կապիտալի — տապալումը, կրօնից ու միահեծան բռնապետութիւնից յետոյ...

Ի՞նչ է սօցիալիզմի էութիւնը...

Մեզ մօտ նա դեռ ահեղ, կարմիր „ուրւականն է“, որով մեր հոգևոր ու աշխարհիկ վարդապետները սարսափեցնում են իրենց բարեպաշտ հօտը և որի դէմ հրապարակ են նետում շռնդալի անաթեմաներ ու պարսաւագիրներ... Այդ տեսակ մի ուրւական էր նա և Եւրոպայում անցեալ դարի քառասնական թւականներում, երբ գրւում էր հռչակաւոր „Մանիֆեստը“։ Մեզ

մօտ նոյնիսկ զւարճալի կատակներ են անում սօցիալիզմի գաղափարի շուրջը, համարում են այն և՛ ցնորամիտ, և՛ „մոլի“, և՛ զաւեշտական… աւելի ևս զաւեշտական՝ քան երկնային դրախտի նախագիծը… Մեր գերապատիւ ու արժանապատիւ տէրտէրները մտածում են, անտարակոյս, Լէօն XIII պապի պէս, որ „ներկայ կեանքը փորձութիւն է“, որ հարուստները կոչւած են միշտ իշխելու, աղքատները՝ հնազանդւելու, տնքալու և ողորմութիւն հայցելու, որ աղքատի ու հարստի ցաւագին հակադրութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ աստւածային մի գերագոյն նախասահմանում… և նրանք կուզէին մխիթարել միլիօնաւոր քաղցածներին՝ լոկ իրենց աղօթքներով ու հանդերձեալ դրախտի, երանութեան խոստումներով…

Եպիսկոպոսական անաթեմաները մի կողմ թողնելով, յիշենք այս մի քանի տողերը պօլսական հայ, „իսկական հայ“ շաբաթաթերթից, որ ինքզինքը, ըստ երեւոյթին, համարում է ձեռնհաս քննադատ արեւմտեան հոսանքների. նա ողբում է, որ „սօցիալիզմը վերջերս ստացաւ այժմէութիւն Օսմանեան խորհրդարանի մէջ, ուր Դաշլիճին տեսակէտը յաղթանակեց, հակառակ Զօհրաբի ու Մուրատի ընկերվարապաշտպան ճառախօսութիւններուն“։ Իւ ահա շաբաթաթերթի „հակաընկերավարական“ պատճառաբանութիւնը.

„Եւրոպայի մինչև իսկ ամենէն առաջադէմ կենտրոններուն մէջ, ընկերավարականները շարունակ պարտութեան կը մատնւին կառավարական ուժին հետ ունեցած իրենց բաղխումներուն մէջ։

“Ընկերավարական բոլոր սկզբունքները վիճելի վարդապետութիւններ են և ինչպէս անոնց մուտքն ու կիրարկումը եւրոպական ազգերու մէջ ամենամեծ պա-

ռակտումներու և բաղխումներու տեղի տւած է, մինչոյն կերպով և առաւելապէս մեր երկրի մէջ...

„Անգլիացիք ուղղակի հակաընկերվարական ընկերութիւններ ու ժողովներ իսկ կազմակերպած են։

„Ֆրանսայի մէջ միլիոններով կը հաշուին այն մարդիկ, որոնք կը ծիծաղին ընկերվարապետ Ժան Ժօռէսի վրայ, որ... օդասուն վիլլայի մը խորէն ընչաղուրկ և բոկոտն պրօլետարիատի դատը կը պաշտպանէ“...

Ահա մի աւելի լուրջ հրատարակութեան, Վիեննայի „Հանդէս Ամսօրեայ“-ի մէջ՝ քննադատական նման գոհարներ։ Սլաքները նոյն Դաշնակցութեան դէմ են ուղղւած, աւելի բարեփոր եղանակով։ Ականջ դրէք.

„Ի՞նչ հարկ միջազգային միջոցներ գործածել, հոն ուր պէտք չըկայ։ Ո՞ր հայը հաւատք ունի հաւատալու փառաբանւած ընկերվարականութեան վրայ, որ եւրոպական ազգերու մէջ իսկ իբր կեղծիք ճանչցւած է (ստորագծումը յօդւածագրինն է), քանի մը ամբոխավարներու ձեռք իբր լաւ գործիք իրենց գրպանները հարստացնելու։ Վիեննական ընկերվարականաց պետը այսօր իբր առաջին *démagogue* ճանչցւած է, վանդղի տէր եղած է 19 պալատներու!! *)։ Այս պարագան ինքնին կը կործանէ ամբողջ ընկերվարական շէնքը“։

Ապա մեր բարեպաշտ հայրերի օրգանը փառաբանում է հռչակաւոր մարդատեաց Լուէգերի կուսակցութիւնը (*Christlichsozial*) և ի վերջոյ կատաղօրէն ըմբոստանում „մոլի, սուտանուն վարդապետութեան“ դէմ, որով գալիս են „թունաւորելու հայ կոյս սրտերը“...

Եթէ մեր բանասէր հայրերը, Եւրոպայի սրտում

*) Այս զւարճալի առասպելը հիւսւած է Վիկտոր Ադլերի անձնաւորութեան շուրջը: Նման լեգենդային շշուկներ տարածւած են Աւգուստ Բեբէլի մասին, իր խիստ բարեխիղճ հակառակորդների կողմից՝

քաղմած, այդքան թեթև եղանակով կ'ուսումնասիրեն համաշխարհային մի հոսանք, որ քրիստոնէութիւնից շատ աւելի ուժ ու ծաւալում ունի — ապա որքա՞ն թոյլ, երերուն պիտի լինի նրանց գիտական մեթօդն ու էրուդիսիօնը՝ առհասարակ, իրենց բոլոր տեսական մարզանքների մէջ...

Պակաս զուարճալի չեն սօցիալիզմի ու աշխատաւորական շարժման դէմ ձևակերպուած առարկութիւնները՝ մեր կովկասեան „ազգայինների“ շրջաններում։ Եւ ողբալին այն է, որ այդ տեսակ անկայուն, մանկական պատճառաբանութիւններով խօսում են յաճախ մեր դեմօկրատ-ազատամիտները — բանաստեղծներ, վիպասաններ, հրապարակախօսներ։ Հինգ տարուց ի վեր աշխատաւորական հոսանքը հեղեղել է ամբողջ Ռուսաստանն ու Կովկասը, մղել են տենդային բանակռիւներ, կատարուել են պարլամենտական փոթորկոտ ընտրութիւններ, որոնց միջոցին իշխող սօցիալիստական հատուածները տարել են յաճախ իրենց յորձանքում բուրժուազիային, — և դեռ մինչև օրս հայկական դեմօկրատները չեն կարող հասկանալ այդ գաղափարի ու հոսանքի էութիւնը։ Դատողութիւնների մէջ իշխում է կամ նզովեալ parti-pris-ն, կամ ցաւալի թերամտութիւնը։ Վերջինը — անգամ լուրջ, խելահաս ու համակրելի գործիչների մէջ։ Ճիգ չեն տալիս իրենց՝ փոքր ինչ աւելի խորը գնալու հասարակական թէօրիաների աշխարհում, ծանօթանալու, հասկանալու։ Մի քանի կանխակալ կարծիքներ բաւական են՝ դատապարտելու, վտարելու համար գաղափարներից ամենամեծը և շարժումներից ամենակենսունակն ու տարածականը։

Ոմանք կը նետեն, հրապարակօրէն, լրագրական սիւնակների մէջ ծանր ու անհեթեթ ամբաստանութիւն սօցիալիստներին, թէ նրանք „ժխտում

են ազգութիւնը"։ Ուրիշները դէմ կը խօսեն սօցիալիզմին՝ „ազգային ամբողջութեան ու ներդաշնակութեան" դաւանանքից թելադրուած։ Վերը յիշած պօլսական շաբաթաթերթը ևս արգելում է՝ „զինել ժողովուրդը կղերին դէմ, կղերը ժողովրդին դէմ, գործատէրը մշակին դէմ, աղքատը հարստին դէմ"։ Մեր կովկասեան դեմօկրատների տրամաբանութիւնը նոյն վէտօին է յանգում։ Նրանք առանձնապէս խնայում են հայ հարուստ դասակարգը։ Ազգային բազմաթիւ կրեսոսներից մի քանիսը ժամանակ առ ժամանակ իրենց ծով հարստութիւնից տալիս են, կամ աւելի ճիշտ, վերադարձնում են ժողովրդին մի քանի գրօշներ և այդ հանգամանքը բաւական է՝ նետելու համար մեր „դէմօկրատ" ինտելիգենցիային բուրժուազական ազդեցութեան շրջանը և փաստաբանելու „ներդաշնակութեան" թէօրիան... Եւ դրանք, կրկնում ենք, գրողներ ու հասարակական մտքը ղեկավարողներ են, որ դուրս են եկած ժողովրդական լայն խաւերից և որ իրենց գրուածքներում միշտ հայ աշխատաւոր ժողովրդի, հայ շինականի անունով են երդւում ու որոտում ամեն տեսակ կեղեքումների դէմ... Դա մի ծանծաղ աշխարհահայեացք է, աւելի ճիշտ՝ աշխարհահայեացքի մի ողբալի բացակայութիւն մեր այն ինտելիգենտ խաւերում, որ սերուած են արծրունական շկօլայի գաղափարներով և որ շարունակ տարուբերւում են մսի ու ձկան դրութիւնների մէջ։ Պատճառաբանելու նման ձևերը տանում են „ազգային ներդաշնակութեան" հետևողական փաստաբանին դէպի բացարձակ տրամաբանական անհեթեթութիւն. Նրանք թելադրում են մերժել ու ողբալ հակամարտ կուսակցութիւնների գոյութիւնն իսկ՝ ազգի հրջանակներում։ Չէ՞, կուսակցական կռիւները դասակարգային կռիւներ են...

Թւում է, թէ անցեալ դարու 60-ական թւականներին Հայ դեմօկրատ ինտելիգենցիան շատ աւելի արմատական էր, քան այժմեանը։ Ի՞նչ կը լինէր, եթէ Միքայէլ Նալբանդեանն ու իր քաջարի համհարզները ղեկավարուէին այդօրինակ „դասակարգերի ներդաշնակութեան“ թէօրիաներով այն ժամանակ, երբ նրանք պատրաստւում էին իրենց սուր սլաքներով ծակոտելու Հայ կղերի ու վաճառականութեան թանձրաշերտ էպիդերմը...

Փոխւե՞լ են արդեօք այդ երկու կատեգորիաները— կղեր և վաճառականութիւն—այն օրերից ի վեր։ Կաշին նրբացե՞լ է արդեօք... Դարձե՞լ է նա աւելի զգայուն՝ հրապարակախօսական սլաքների հանդէպ։ Բնաւ չի երևում։ Ցոյց տւինք արդէն նախորդ գլուխներում, թէ ինչպէս փ ո ղ ի դ ա ս ա կ ա ր գ ը մեր ազգային գոյութեան ամենադրամատիկ վայրկեանների մէջ մատնում է իր բարոյական լիակատար սնանկութիւնը։ Մեր նորագոյն պատմութեան մէջ երկու անգամ ազգովին ենթարկւեցինք ամենածանր փորձութեան. Թիւրքահայկական կոտորածների և թաթարական շարժման միջոցին։ Եւ այդ երկու վայրկեաններում էլ Հայ ժողովուրդը իր ծովածաւալ թշւառութեան ու հարիւրհազարաւոր որբերի դիմաց զո՛ւր օգնութեան աղերսանքներով խլացրեց մեր բուրժուա դասակարգի ականջները...

Այսպէս է դառն, ազգադաւ, անպատւաբեր իրողութիւնը։ Եւ կան, սակայն, ինտելիգենտ ու ժողովրդական Հայ-մարդիկ, որոնց սիրտը լցւում է խանդավառութեամբ, ի տես մի Հայ փաշայի, որ հարիւրաւոր միլիօնների շտեմարանից շպրտում է մի քանի փշրանք՝ իր սովալլուկ հայրենակիցներին, կամ այս ու այն ազգային հիմնարկութեան։

Թո՛ղ այդպիսի փաշաներ լինին նոյնիսկ հարիւրաւոր-

ներ։ Թո՛ղ հայկական հրապարակը նոյնիսկ լցուի բուրժուական առատաբուղխ նորաբերութիւններով։ Ասե՞լ է դա՝ որ պիտի խունկ ծխենք բուրժուազիային ու „դասակարգերի համերաշխութեան“ հաւատամքին։ Չը կա՞յ միթէ աւելի բարձր սկզբունք—հասարակական էւօլիւցիայի սկզբունքն իսկ—որ պիտի ղեկավարէ հայ դեմոկրատ, ժողովրդական ինտելիգենցիային...

Հարկ կա՞յ արդեօք յիշեցնելու, որ այդ պայքարը չը պէտք է մղել պատահական երևոյթների թելադրութեամբ, որ չը պէտք է հետաքրքրուել և զբաղուել անձերով, ուղղել մեր սլաքները այս կամ այն կապիտալիստի դէմ։ Դա յեղափոխականի գործ չէ։ Մասնաւոր վրէժխնդրութեան գործողութիւնները պէտք է դուրս մնան մեր տակտիկից։ մեր կռիւը սիստեմի դէմ է։

Հարկ կա՞յ նաև շեշտելու, որ այդ կռուի մէջ մենք չը պէտք է ղեկավարուենք լոկ զգացումով—թէպէտև այդ զգացումն և իր արտադրած խոլ ու ազնիւ կրքերով հսկայական դեր է խաղացել բոլոր յեղափոխական բռնկումների մէջ — այլ պէտք է ղեկավարուենք նաև մտքի, բանականութեան հրահանգներով։

Անշո՛ւշտ, երբ տեսնում էք ամբողջ սերունդներ՝ դրօշմուած բուրժուազական յատուկ ախտերով ու արատներով, երբ ձեր առջևից շարան-շարան անցնում են հարիւրաւոր կենդանի երիտասարդներ, որոնք անձնատուր են լինում հեղգ, շրջմոլիկ, հաճոյապաշտ գոյութեան այլասերող հրապոյրներին, որոնք սակայն — շըրջապատուած կեանքի բոլոր յարմարութիւններով, սպառազինուած գոյութեան կռուի ամենաանհրաժեշտ զէնքերով—կարող էին անհուն ծառայութիւն մատուցանել հարազատ ժողովրդին, ուսումնասիրել հայրենի իրականութիւնը, նուիրուել գիտական ու գրական մարզանքների, երբ տեսնում էք այդ անհամար fainéant-

ներին, սիբարիտներին, դատարկասուն „բուրժոյներին" —մեր և ուրիշ ազգերի մէջ—որ գարշում են ինտելիգենտ աշխատանքից, օգտակար գործունէութեան ազնւացնող հաճոյքներից և որ միայն սանձարձակօրէն վատնում են իրենց ժառանգած հսկայական հարստութիւնները, լողում են պերճանքի, վայելքի, շւայտութեան ալիքներում... այն ժամանակ, երբ ահագին աշխատաւոր ընդհանրութիւնը դաշտերի մէջ, քաղաքներում, ամբողջ կեանքը աշխատելով ու տնքալով, հազիւ հազ կարողանում է քարշ տալ իր կիսաքաղց գոյութիւնը, իր անլոյս, մահահոտ կացարաններում, բիւրաւոր զրկանքներով շրջապատւած—երբ դիտում էք այդ ամենը՝ ցասումի, վրդովմունքի մի հողմ է պաշարում ձեզ, և եթէ ձեր խիղճը չի բթացել, եթէ դուք պահպանել էք արդարութեան ու ողջմտութեան զգացումը, ապա չէք կարող չ՚ողբալ, չ՚անիծել այդ խորունկ անիրաւութիւնը ժամանակակից կարգերի, այդ ճչացող հակասութիւնը ժամանակակից հասարակութեան...

Բայց միմիայն այդ շարաշուք հակասութեան գիտակցումը չէ, միմիայն այդ ցասումն ու վրդովմունքը չէ, որ դարձնում է ամեն օր հազարաւոր անհատներին—սօցիալիստ։

Կայ մի ուրիշ հանգամանք. կայ պատմութեան ուսումնասիրութիւնը, կան մտքի, բանականութեան եզրակացութիւններն ու ընդհանրացումները։

Պատմութեան և իրականութեան ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, արդարև, որ մարդկութիւնը—արդիւնաբերութեան ու աշխատանքի յարաժամ կենտրոնացումով ու համայնացումով, համերաշխութեան ու գործակցութեան ծաւալումով, բարքերի աստիճանական

մեղմացումով *), ալտրուիստական (այլասիրական) գործօնների աճումով, էգօիստական մղումների նւազումով, ռամկավարական կարգերի հաստատուած պատւաստումով և աշխատաւոր բանակների մշտնջենական ստւա-

*) Որքան էլ վշտաւիթ ու աղէտաբեր լինին ժամանակակից կապիտալիստական քաղաքակրթութեան ստւերաւոր կողմերը, որքան էլ բազմաթիւ լինին, նոյնիսկ ամենաառաջադէմ երկրներում, բիրտ, շահամոլ էգօիզմի արտայայտութիւնները,—այնուամենայնիւ, ընդհանուր առմամբ ու համեմատաբար ներկան, այսօրը շատ աւելի մխիթարական է բարքերի մեղմութեան տեսակէտից, քան երէկը, միջնադարն ու հնադարը. մարդկութեան ճնշւած, հարստահարւած մեծամասնութեան կացութիւնը շատ աւելի տանելի է ներկայումս, վարձու աշխատանքի սիստեմը (salariat), որ այժմեան դրամատիրական իրաւակարգի ամենաէական յատկանիշն է, շատ աւելի բարձր ու մարդկային է—հակառակ մարքսեան մի քանի մռայլ խորհրդածութիւնների ու փորմուլների—քան միջնադարեան ճորտութիւնը (servage), քան հնադարեան ստրկութիւնը (esclavage), քան—ո՞ւր առաւել—նախապատմական որոշ շրջանների գերութեան ռէժիմը, համեմատած մարդակերութեամբ (antropophagie)... Դրանք յաջորդական շրջաններն են մարդկային հասարակութեան էւօլիւցիայի։

Այս. գոյութեան ահեղ պատերազմի յաղթւածները նախ յօշոտւել ու տապալւել են իրենց գազան յաղթողների ձեռքով (նախապատմական շրջան), ապա քշւել են մտրակով ու դագանակով դէպի ստրկական ծառայութիւն, դէպի գրաստի հլու աշխատանք, ուր ոտնահարւել է մարդկային ամեն իրաւունք ու արժանապատւութիւն, բայց պահպանւել է մարդ-էակի ամենաթանկագին ստացւածքը — կեանքը (հնադարեան շրջան). ապա նոյն յաղթւածները խմբւել են միլիօնաւոր զանգւածներով ֆէօդալական, աւատապետական կարգերի շրջանակներում, ուր կեանքի ապահովութեան հետ վայելել են մի քանի խղճուկ բեկորներ օրէնքի, իրաւունքի ու մարդկայնութեան (միջնադարեան

բացումով — մօտենում է քայլ առ քայլ, ճակատագրօրէն, հաւասարութեան այն իդէալին, որ յղացել ու քարոզել են Նրա մեծագոյն զաւակները ամենահին դարերից իվեր։

Պատմութեան ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս

շրջան), ապա վերջապէս ազատ են հռչակւել օրէնքի առաջ, ազատ ու հաւասար՝ յաղթողների շարքում, բայց տնտեսապէս դեռ ստորադրեալ, իրաւազուրկ ու թալանւած (ներկայ շրջան)։

Աստիճանաբար լայնացել են Իրաւունքի սահմանները, աստիճանաբար — տնտեսական յարածաւալ զարգացման շնորհիւ իսկ — մեղմացել են յաղթողի և յաղթւածի, հզօրի և թոյլի, տիրոջ և հպատակի փոխադարձ յարաբերութիւնները, շեշտւել, աճել է մ ա ր դ կ ա յ ն ո ւ թ ի ւ ն ը։ Յարգանքը դէպի մարդկային անձնաւորութիւնը կամ բարոյագիտական բառբառով „մերձաւորի սէրը“ անհամեմատ աւելի է շեշտւում ներկայ քաղաքակրթութեան շրջանում, քան որևէ այլ ժամանակ... Փիլիսոփայօրէն խօսելով, կարող ենք ասել, որ հասարակական զարգացման բազմադարեայ հոսանքում է գ օ ի ս տ ա կ ա ն մղիչները հետզհետէ նւազում են, տեղի տալով ալտրուիստական կամ այլասիրական մղիչներին։ Ուրիշ խօսքով, գոյութեան կռիւը իր բիրտ ու դաժան կերպարանքով հետզհետէ դուրս է մղւում աշխարհից և տեղի է տալիս մի կողմից համերաշխութեան ու գործակցութեան գաղափարին (solidarité, coopération), միւս կողմից՝ ազգերի, դասակարգերի ու անհատների խաղաղ, անարիւն ու արգասաւոր մրցակցութեան. . . Կը գայ ժամանակ — կը վերանայ և Վարձու աշխատանքի ներկայ ամօթալի սիստեմը, ինչպէս որ վերացել են իր ազգակից-նախընթացները... Ամեն ինչ, բոլոր հարստութիւնները կը դառնան ժողովրդի, համայնքի սեփականութիւն, իւրաքանչիւր մարդ կը տիրանայ իր աշխատանքի լիակատար արդիւնքին և հնաւորութիւն կունենայ գոհացնելու իր բոլոր կարիքները։ Այն ժամանակ այլևս չեն լինի յաղթողներ ու յաղթւածներ, այլ միայն ազատ, իրաւահաւասար մ ա ր դ ի կ... Դա կը լինի համայնականութեան, ս օ ց ի ա լ ի զ մ ի թագաւորութիւնը։

որ հակամարտ դասակարգերի գոյութիւնը, նրանց շահերի բաղխումը և դրա ծնունդ սօցիալական շարժումը հինաւուրց իրողութիւններ են, որ նրանք նոյնպէս փաստալ, ճակատագրական, անխուսափելի են, ինչպէս բնական երևոյթները, ինչպէս երկրաշարժը, հրաբխային ժայթքումները...

„Բոլոր հասարակութիւնների մէջ—ասում է Դաշնակցութեան ծրագիրը—դեռ անյիշատակ ժամանակներից ի վեր՝ մենք դիտում ենք դասակարգային բաժանումներ—իշխողներ և հպատակներ, կեղեքողներ և կեղեքւողներ։

„Հասարակութիւնը ամեն տեղ վերածւած է երկու անհաւասար հատւածների. — շահագործող փոքրամասնութիւնը, իր ձեռքն առած համայնքի, ցեղի հասարակական և քաղաքական կեանքի ղեկը, ստեղծում է օրէնքներ և իրաւակարգեր, որոնց միջոցով խլում է աշխատաւոր մեծամասնութեան ձեռքից նրա արտադրած բարիքները և դարձնում նոր զէնք՝ նոյն աշխատաւորներին աւելի և աւելի հպատակեցնելու, կեղեքելու համար“։

Պատմութեան ուսումնասիրութիւնը, վերջապէս, ի ցոյց է բերում, որ այլևայլ ժամանակներում—հնադարում, միջնադարում— իբրև հետևանք ու պատասխան այդ դասակարգային բաղխումների, ծնունդ են առել սօցիալական հաւասարութեան թէօրիաներ, տեսութիւններ, որոնցով այս կամ այն մեծ վերանորոգիչը փորձել է արմատական դարման անել չքաւորութեան պատուհասին և հասարակական հակադրութիւններին։

Ահա թէ ինչ է տեսնում խուզարկու միտքը, երբ քրքրում է ժամանակների արխիվի մէջ։ Եւ այդ հինաւուրց շրջանների ուսումնասիրութիւնից բղխում են ժամանակակից թէօրիաները։ Ոչ ոք ոչինչ չի հնարել,

չինծու, արհեստական եղանակով... Տեսական միտքը — նա, որ գիտէ կանգնած մնալ իր կոչման բարձրութեան վրայ, ազատ մնալ դասակարգային, կրօնական և այլ տեսակ նախապաշարումներից, ականջ դնել լոկ պատմական էւօլիւցիայի ձայնին, ղեկավարուել ամենուրեք օբ՛եկտիվ, առարկայական ճշմարտութեան պատուիրաններով — չի հնարում այս կամ այն հասարակագիտական վարդապետութիւնը, այլ նա միայն պաղ, անխռով արձանագրում է փաստերն ու երևոյթները, զատում է պատմութեան ու ժամանակակից իրականութեան հսկայական պրօցէսի մէջ գլխաւորը երկրորդականից, էականը պատահականից և այդպէս արձանագրելով ու զատելով, նա միաժամանակ եզրակացնում է, ընդհանրացնում։

Վերլուծումի և ընդհանրացումի այդ գործողութիւնն է, որ տալիս է այս կամ այն գիտական, փիլիսոփայական վարդապետութիւնը։ Ընդհանրացումի կամ համադրումի այդ մեթօդով է, որ հին ու նոր ընկերվարական մեծ դէմքերը — Բաբեօֆ և Բլանկի, Կարլ Մարքս և Պրուդօն, Չերնիշեվսկի և Լավրով, Էնգելս և Կաուցկի, Լասսալ և Ժօրէս, Բէբէլ և Լիբկնեխտ, Բերնշտայն և Գեդ, Լօմբրօզօ և Վանդերվելդ, Պրեսսանսէ և Անատօլ Ֆրանս — յանգել են այն ամուր, անխորտակելի համոզումին, որ ձևակերպւում է սօցիալիզմի դաւանանքով, ընկերվարական վարդապետութեամբ։

Ոչ. „դասակարգային կռւի“ ուրւականը չի յղացւել թեթևամիտ ու տենդենցեօզ (դիտումնաւոր) հրապարակախօսների կողմից՝ բուրժուաներին, աշխարհի մեծերին սարսափեցնելու նպատակով։ Նա արձանագրուել է, իբրև փաստ, իբրև ցայտուն մի իրողութիւն, որ կարմիր ժապաւէնով անցնում է մարդկային պատմութեան մէկ ծայրից մինչև միւսը։

Եւ անգամ այսօր, քաղաքակրթութեան պանծալի նւաճումների շրջանում, 20 դար այլասիրական, եղբայրսիրական քարոզներից յետոյ, 20 դար մարդկային գթասրտութեան հեղեղներից ու ռամկավարական հաւասարացման պարբերական փորձերից յետոյ՝ մենք դեռ տեսնում ենք դասակարգային արկածալի բաղխումները միևնոյն երկրի, միևնոյն արիւնակից ազգութեան շրջանակներում, և երկու ահեղ հակոտնեաներ—շահագործող փոքրամասնութիւն և շահագործւող աշխատաւոր մեծամասնութիւն — կանգնած են իրարու հանդէպ, լորդ Բիկօնսֆիլդի արտայայտութեամբ, որպէս երկու հակամարտ ցեղեր, պատրաստ գրոհ տալու իրարու վրայ։

Այդպէս է քաղաքակիրթ իրականութիւնը. այդպէս դառնում են հետզհետէ և ոչ-քաղաքակիրթ, յետամնաց իրականութիւնները։ Այդ վերջինների մէջ ևս շեշտւում է դասակարգերի հակամարտութիւնը, միայն տարբեր եղանակով։

Մենք չենք, ուրեմն, որ դիտմամբ ուզում ենք այլանդակել պատմութեան պրօցէսը „բաղխումների ու նախճիրների“ զառանցանքներով. — այլանդակութիւնը պատմութեան խորունկ արգանդի մէջ է։ Մենք մատնանշում ենք միայն և փորձում լուսաբանել նրա ընթացքն ու հեռաւոր, անխուսափելի եզրակացութիւնը։

Այլանդակութի՞ւն—քաւ լիցի... „Կռիւը ծնող է ամեն բանի“ —ճիշտ է ասում հին յունական իմաստութիւնը։ Կռիւը, անգամ միևնոյն ազգի ծոցում, դասակարգերի, կուսակցութիւնների, շահերի, իրաւունքների կռիւը — մերթ խուլ ու թաքուն, մերթ բացարձակ ու մոլեգնոտ—հանդիսանում է ոչ թէ աղէտ ու անէծք, այլ միանգամայն անհրաժեշտ և դրական մի գործօն, մի զօրաւոր խթան հասարակական առաջխաղացութեան,

որ մղում է ժողովուրդներին—դասակարգերի անդադրում իրարայաջորդման, յեղափոխական անդադրում վերիվայրումների ճանապարհով — դեպի վերջնական Իդեալը, դեպի բարձրագոյն, զուտ մարդկային համայնակենցաղը, ուր այլ ևս չը պէտք է լինին դասակարգեր ու առանձնաշնորհումներ, ուր դարվինեան գոյամարտը պիտի կորցնէ իր բնաջնջող, անասնական բնոյթը և պիտի վերածուի խաղաղ մտաւոր-կուլտուրական մրցակցութեան, ուր, վերջապէս, պիտի իրագործուի „մէկ, ներդաշնակ, ամբողջական մարդկութիւնը. ի տեղի այսօրուայ կտրատուած, բաժան-բաժան և հակամարտ աշխարհի“ (Ծրագիր Հ. Ց. Դ., եր. 14):

Համաշխարհային պատմութեան մէջ, արդարև, դասակարգային կռիւները առաջնակարգ և առաջատար գործօններից մէկն են: Ոչ միակը, ինչպէս հռչակում էր 1847 թուի Մարքս-Էնգելսեան Մանիֆեստը, փոքր ինչ նեղցնելով ու այլակերպելով պատմական իրականութիւնը: Կան, եղել են տիեզերական էւոլիւցիայի մեծ հոսանքում՝ ուրիշ կարգի բաղխումներ, կան ազգային կռիւները, որ չեն վերածւում ամեն տեղ ու ամեն ժամանակ դասակարգային—տնտեսական մտահոգութիւնների ու մրցումների (օր. երբեմն սուր, հպատակ երկրների մէջ, Բալկաններում, Իտալիայում, Հայաստանում, ազգային-ազատագրական շարժումների միջոցին). կան կրօնական, փիլիսոփայական և գիտական մրցումները, որ առաջին տեղ են բռնում քաղաքակրթութեան զարգացման մէջ և որ սակայն չեն կարող ամենքն էլ բացատրուել նիւթապաշտական մղումներով, տնտեսական, դասակարգային մրցումներով:

Տնտեսական գործօնը միակը չէ, բայց մէկն է ամե-

զօրաւոր գործօններից. Նրա ազդեցութիւնը, որ շատ թոյլ է համեմատաբար նախապատմական ժամանակներում ու պատմութեան առաջին դարերում, գնալով միշտ աւելի ու աւելի ուժեղանում է և նորագոյն պատմութեան մէջ՝ դառնում է գրեթէ տիրական՝ բուն արևմտեան քաղաքակրթութեան հորիզոններում։

Դասակարգերի կռիւը *) *բոլոր ազգերի պատմութեան մէջ տիրապետող իրողութիւններից մինն է, և բաւական է աչք ածել հին յոյների, հռոմայեցիների, եւրոպական բոլոր ազգերի, միջնադարեան ու նորդարեան բոլոր շրջանների վրայ, բաւական է փոքր ինչ խորասուզուել իւրաքանչիւր երկրի խոշոր անցքերի ուսումնասիրութեան մէջ, տեսնելու համար, թէ որքան ծանրակշիռ տեղ է բռնում այս կամ այն համայնքի դ ա ս ա կ ա ր գ ե ր ի շ ե ր տ ա ւ ո ր ո ւ մ ը, նրանց շահերի հակամարտութիւնն ու բաղխումները՝ երկրի*

*) Հասարակական մեծ դասակարգերն են՝ վ ա ր ի ց սկսած՝ ս ե փ ա կ ա ն ա զ ո ւ ր կ ա շ խ ա տ ա ւ ո ր ո ւ թ ի ւ ն (դաշտային կամ քաղաքային), մանր ու խոշոր հողատէր գ ի ւ ղ ա ց ի ո ւ թ ի ւ ն, մանր ու խոշոր ա ր հ ե ս տ ա ւ ո ր ո ւ թ ի ւ ն, մանր ու խոշոր վ ա ճ ա ռ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն. կապիտալիստ կամ դ ր ա մ ա տ է ր-ա ր դ ի ւ ն ա բ ե ր ո ղ ն ե ր ի դասակարգ (վերջինս, որ անւանում են ուրիշ խօսքով բուրժուազիա, համեմատաբար նոր ժամանակների ծնունդ է, նա հանդէս է գալիս 16-րդ դարում, գլխաւորապէս Անգլիայի մէջ, գործարանական կեանքի սկզբնաւորութեան հետ), ապա կ ղ ե ր ե ւ ա զ ն ւ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն: Առանձին դասակարգ կարելի է համարել եւ պաշտօնէութիւնը, բ ի ւ ր օ կ ր ա տ ի ա ն: Վերջապէս, կայ մի դաս, որ իր էութեամբ դուրս է բոլոր դասակարգերից, որ ձուլւում է գրեթէ բոլորից. դա մ տ ա ւ ո ր ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ն է, ինտելիգենցիան: Ռուսաստանում եւ ուրիշ տեղերում՝ նրա ամենափայլուն ներկայացուցիչներից շատերը առաջ են եկել ազնուականութիւնից ու կղերից, բայց լինելով էապէս գաղափարական տարր, անցել են ժողովրդի կողմը եւ ուղղել են իրենց սլաքները նոյն ազնուականութեան ու կղերի դէմ:

ընդհանուր ճակատագրի զարգացման մէջ։ Յաճախ նրանք քօղարկուած են, դիմակաւորուած ուրիշ կարգի գաղափարներով ու դրօշակներով. երբեմն ազգային ու կրօնական դիմակի տակ այնպէս են վարագուրւում ու խաւարում շահախնդիր դասակարգերի ձգտումները, որ ուսումնասիրող ընկերաբանը դժուարանում է պարզապէս հաշիւ տալ իրեն՝ կատարուող անցքերի իսկական իմաստի վերաբերմամբ։ Յամենայն դէպս, „դասակարգային կռիւ“ փաստը, որի առաջին մերկացնողն են Ֆրանսիական հռչակաւոր պատմաբանները —Գիզօ, Տիերրի, Մինիէ — որ ապա ներբողուեց բուն սօցիալիստ ռահվիրաների կողմից, դարձեալ Ֆրանսիայում (Բաբեօֆ, Բլանկի, Լուի Բլան ևայլն), որ վերջապէս, ստացաւ յետագայում իր տեսական ձևակերպումը Կարլ Մարքսի գրուածքների մէջ, „դասակարգային կռիւ“ փաստը, կամ ինչպէս ասում են „Թէօրիան“, հանդիսանում է այսօր մի չափազանց օգտակար, արգասաւոր մեթօդ իւրաքանչիւր ուսումնասիրողի, ընկերաբանի համար, որ կուզէ հետազօտել պատմական որևէ շրջան, կամ որևէ խոշոր անցք, ծանրակշիռ մի փոփոխութիւն այս կամ այն երկրի կեանքում։

Հին Հռոմի և Յունաստանի ներքին մշտնջենական խռովութիւններն ու յեղաշրջումները ծնունդ էին այդ դասակարգային հակամարտութեան, ծնունդ էին այն իրողութեան՝ որ փոքրաթիւ տէրերը, պատրիկները, ազնուականները իրենց ձեռքն էին կենտրոնացրել հողը և քաղաքական իշխանութիւնը և անողորմ կերպով ճնշում էին ստրուկներին, պլէբէյներին, աշխատաւոր ժողովրդին... Յիշենք միայն եղբարց Գրակխուսների օրով նիւթուած հսկայական հողային շարժումը, որ նպատակ ունէր սահմանել հողերի արդար բաժանում և

որ վերջացաւ այնքան տխուր, ողբերգական վիժումով։ Նոյն յարատեւ խլրտումներն ու ըմբոստացումները՝ հաւասարացման կոմմունիստական ծրագիրներով՝ տեղի ունեցան շարունակ միջին ու նոր դարերում, Դօլչինօների, Միւնցերների առաջնորդութեամբ... Շարժումներ, որոնք, աւա՜ղ, գրեթէ միշտ խեղդւում էին արեան մէջ, որովհետեւ կացութեան տէրերը, թագաւորներն ու իշխանները, ազնուականութիւնն ու կղերը դեռ եւս ուժեղ էին, իրենց մարզած բանակներով... Նրանք ուժեղ են եւ այսօր, նոյնիսկ արեւմտեան որոշ երկրներում, դեռ չեն իսպառ կորցրել իրենց վագրային ախորժակներն ու ժանիքները։ Արեւելքում՝ հողային ազնուականութիւնը դեռ միահեծան տէր է դրութեան,—Ռուսաստանում, Ռումանիայում, հեռաւոր ասիական երկրներում, նաեւ Թիւրքաց Հայաստանի մէջ (քրդական դէրէբէյութիւնը)։

Արդեօք մի՞շտ էլ եղել է դասակարգային այդ անհաշտ հակամարտութիւնը, արդեօք եղե՞լ է միշտ ժողովուրդների ծոցում գոյքերի, դիրքերի, հասարակական պայմանների այդ խորունկ անհաւասարութիւնը—իբրեւ մի տեսակ „աստուածային պատուհաս“, իբրեւ պատիժ մարդկութեան մեղքերի համար... ինչպէս որ տրամադիր են հասկանալ ու մեկնաբանել շատերը վերոյիշեալ „կացութեան տէրերից“...

Սօցիօլօգիան, հասարակական գիտութիւնը պատասխանում է—ոչ։

Եղել է ահագին ժամանակաշրջան—հազարաւոր ու տասնեակ հազարաւոր տարիներ—երբ մարդկային ցեղերը ապրել են համայնական ռէժիմի տակ, երբ ամեն մի համայնքի ծոցում, ամեն մի կտոր հողի վրայ, ընդհանուրի հաւաքական սեփականութիւն

են եղել՝ հողը, աշխատանքի միջոցները և աշխատանքի արդիւնքները։ Մի ռեժիմ, որի օրով խօսք անգամ չէր կարող լինել դասակարգային առանձնաշնորհումի ու կեղեքումի մասին։ Այդպէս է եղել հին գենսական կամ տոհմային շրջանում։ Այդպէս են վկայում իրենց փաստացի գըրուածքներով հռչակաւոր հասարակագէտներ — Սօններ Մայն, Լավըլէյ, Մաքսիմ Կօվալեվսկի և ուրիշներ։ Եւ այդ համայնական դրութիւնը որոշ, էական իր գծերով շարունակել է շատ տեղերում, նոյնիսկ գենսական կարգերի քայքայումից ու նահապետական գերդաստանների առաջանալուց յետոյ։

Այսօր իշխող՝ առանձնաշնորհեալ դասակարգերի իդէօլօգ-փաստաբանները սօցիալիզմի, կօմմունիզմի *) դէմ արշաւելով, սովորաբար պնդում են, որ նրանք ուտօպիա են, չ'եղած ու չը լինելիք մի երազանք, որ համայնական սեփականութիւնը անհնարին է։

Սակայն, քանի՛ տեսակ „կօմմունիստական", համայնատիրական սիստեմներ ենք տեսնում պատմութեան ընթացքում։ Դեռ չը խօսելով հնագոյն, նախապատմական սիստեմների մասին—քանի՛սը կան արդէն նոյնիսկ Եւրոպայում, հին ու միջին դարերի մէջ։ Յիշենք թէկուզ նախնի քրիստոնէական կօմմունիզմը։ Պէտք է իմանալ, ընթերցող, որ քրիստոնէութեան նախ-

*) Երկու բառերը գործածում ենք, իբրեւ հոմանիշ: Երկուսն էլ ընդունում են այն գալոց հասարակական կարգուսարքը, ուր աշխատանքի ու արդիւնագործութեան բոլոր միջոցները — հող, դրամագլուխ, հանքեր, գործարաններ, մեքենաներ, հաղորդակցութեան ու փոխանակութեան միջոցներ եւայլն—պիտի առնուին իւրաքանչիւր եւ կրում՝ հարստահարիչ փոքրամասնութեան ձեռքից եւ պիտի դրուին, իբրեւ ընդհանուր, համայնական սեփականութիւն, ամբողջ աշխատաւոր ընդհանրութեան ձեռքը:

նական սպասաւորները մեր օրերի կղերի պէս չէին։ Առաջին քրիստոնեայ համայնքների մէջ չէր ճանաչւում մասնաւոր սեփականութիւն՝ վայելքի առարկաների մէջ. բոլոր արտադրւած բարիքները սպառւում էին համայնօրէն, հաւասարապէս, թէ վանքերում և թէ ուրիշ կողմնակի համախմբումների մէջ։ Եղել են միջին դարերում ևս բազմաթիւ կոմմունիստական աղանդներ։ Հարկաւ, այդ բոլոր „հաւասարացման“ սիստեմները միակողմանի են, նահապետական և կղզիացած փոքրաթիւ ու սակաւանդամ համայնքների մէջ, բայց նոյնիսկ այդ մասնակի, միակողմանի կոմմունիզմը նշանակալի է, որպէս ապացոյց՝ թէ համայնատիրական կարգերը բնաւ ցնորք չեն, ոչ էլ հակառակ մարդկային բնութեան, ինչպէս պնդում են կոմմունիզմի հակառակորդները։

Այո, ամենահին, նախապատմական դարերում սեփականութիւնը եղել է համայնական. առաջին հասարակութիւնները ապրել են մի տեսակ կոմմունիզմի ռէժիմի տակ — դեռ շատ, ի հարկէ, թոյլ, անկատար—բայց մի ռէժիմի՝ որ առհասարակ չի ճանաչել մասնաւոր գոյք *), չի ճանաչել հարստի ու աղքատի տարբերութիւններ, դասակարգային հակադրութիւն ու կռիւ։

Համայնքը սուրբ էր, նւիրական։ Նոյն սրբութեան հանգամանքն ունէին համայնքները՝ և քաղաքա-

*) Ասում են՝ առհասարակ՝ որովհետեւ եղել են բացառութիւններ: Մասնաւոր սեփականութեան գաղափարն, անշուշտ, տեղ տեղ եւ մերթ ընդ մերթ ցոլացել է անհատների գլխում եւ երբեմն որոշ առարկաներ — դիցուք մի զէնք կամ մի զարդ, պաճուճանք — պատկանել են այս կամ այն անհատին. բայց դա եղել է սակաւադէպ մի երեւոյթ: Մարդիկ ընդհանրապէս, մանաւանդ առաջին մարդիկ, արտադրել են համայնօրէն (որս, ձկնորսութիւն եւայլն) եւ սպառել են նոյնպէս համայնօրէն: Ամեն բան եւ ամենից առաջ հողը կազմել է ամենուրեք ընդհանուր սեփականութիւն:

կրթութեան հորիզոններում, գրեթէ բոլոր ազգերի մէջ: *Communitas*, Հռօմում, *Gemeinde, Markgenossenschaft*, Գերմանիայում, *commune*, Ֆրանսիայում, *township*, անգլօսաքսօն երկրներում, մասնաւորապէս Ամերիկայում, „միր" կամ օ բ շ չ ի ն ա, Ռուսաստանում, հ ա մ ա յ ն ք, մեզնում,—բոլորն էլ նոյնիմաստ բառեր ու գաղափարներ են, ամեն տեղ այդ գաղափարը հանդիսանում է ժողովուրդների աչքում, որպէս գերագոյնը սրբութիւններից, ամեն տեղ համայնքն օժտուած է հզօր իշխանութեան ատրիբուտներով, ստորոգելիներով, գրեթէ ամեն տեղ նա պահպանում է իր անդամներին՝ իր բացարձակ խնամակալութեան, կարելի է ասել, բռնութեան տակ, պատժում է և մահացնում իրապէս կամ բարոյապէս իր դէմ մեղանչողներին, ըմբոստներին, դաւաճաններին: Իւրաքանչիւրը այդ համայնքներից կազմում է մի գոց, ուրոյն աշխարհ, իր յատուկ օրէնքներով ու հաստատութիւններով, իր հողային տարածութեամբ, որ մշակում է ընդհանուր, հաւաքական ուժերով:

Մի շարք ռուսական առածներ պերճախօս կերպով վկայում են այն խոր յարգանքը, որ „միրը" (համայնքը) ներշնչում է ժողովրդին: „Աստուածն է միայն միրի դատաւորը", „միրի կամքը սուրբ է, պէտք է անպայման կատարւի", „միրի հառաչանքը կարող է ժայռ խորտակել", „միրը երկրի պատուարն է" և այլն: Նման յարգանքի ու ակնածութեան արտայայտութիւններ „համայնքի" վերաբերմամբ կան բոլոր երկրներում, նաև մեզ մօտ:

Համայնական, կոմմունիստական այդ „իրաւակարգը" համատարած էր այն անյիշատակ ժամանակներում: Բայց նա իսպառ չէ չքացել, պահպանում է իր խոշոր մնացորդները և մեր օրերում: Համայնական հողատի-

րութեան ռէժիմի տակ այսօր ապրում են հարիւր միլիօնաւոր ազգաբնակութիւններ արևելեան Եւրոպայում, Ասիայում ու Աֆրիկայում։ Նա գոյութիւն ունի և Ռուսաստանում և մեզ մօտ։ Նա տարածուել է ժամանակին նաև ամբողջ արևմտեան Եւրոպայում՝ Շոտլանդիայից մինչև Իտալիա և Լեհաստան։ Նա տիրել է և նախնական գերմանների, սլավօնների ու կելտերի մօտ, երբ նրանք եկել էին յօշոտելու Հռօմը։

Իւրաքանչիւր հողակտոր, իր մշակելի և անմշակ տարածութեամբ, իր անտառներով ու արօտատեղերով — ամբողջ աշխատաւոր համայնքի սեփականութիւն։ Ծանօթ իրողութիւններ մեզ համար...

Գիւղական համայնքը (commune villageoise) կազմւում էր կամ արիւնակից տոհմից — ընդհանուր պապերից սերուած ու ճիւղաւորուած — կամ թէ մի քանի այլածագում տոհմերից — միացած, դաշնակցած մէկ ընդհանուր հողաբաժնի ու աշխատանքի շուրջը։

Հ ո ղ ը բացարձակապէս մերժում էր մասնաւոր սեփականութեան սկզբունքը։ „Հողը Աստծուն էր“... Այդպէս է դատում ժողովուրդը այսօր ևս, շատ տեղերում։ Մօտաւորապէս նոյն եղանակով դատել են մարդիկ և այն հին, նախապատմական դարերում։ Հողը, ինչպէս և օդը, ջուրը, չեն կարող դառնալ մասնաւոր սեփականութիւն։ Նրանք Աստծուն են, Բնութեանն են։ (Ո՛րպիսի անդունդ այդ գռեհիկ ժողովուրդների և ժամանակակից լէնդ-լօրդների ու պօմէշչիկների բարոյական հասկացողութիւնների մէջ, — լ է ն դ - լ օ ր դ ն ե ր ի ու այլ հողային իշխողների՝ որոնք յենւած պապական իրաւունքների, բռնի ուժի յաղթանակի վրայ, „իմի“ ու „քոնի“ չարագործ հասկացողութեամբ՝ զաւթել են հսկայական տարածութիւններ, երկրագնդի լաւագոյն, արգաւանդ հողերը և պերճանքի ու շւայտութեան խրախճաններով

թնդացնում են աշխարհը, մինչդեռ բուն հողագործ, աշխատաւոր, բազմամիլիոն զանգւածները տառապում են անհողութեան չարիքից, հեծում են սովի ու ամեն տեսակ զրկանքների մէջ...

Հողը „Աստծուն էր“. Նա պատկանում էր ամբողջ ցեղին, տոհմին կամ գերդաստանին, ամբողջ գիւղին կամ բազմաթիւ գիւղերի դաշնակցութեան։ Այնտեղ պարբերաբար կատարւում էր հողաբաժանումը, համարեա նոյն եղանակով, ինչպէս մեր օրերում։

Բայց այդ նախնական ժամանակներում, համայնական կամ հաւաքական (կօլլեքտիվ) բնոյթ է ունեցել ոչ միայն հողը, այլև աշխատանքը, արդիւնագործութիւնը։ Այդ սովորութիւնը ևս եղել է գրեթէ համաշխարհային։ Նրա մնացորդները ևս տեսնում ենք այսօր երկրագնդի բոլոր ծայրերում, նաև Ռուսաստանում ու Կովկասում։ Գրեթէ բոլոր արիական, սեմիտական, մոնգօլական ցեղերի մէջ, ինչպէս նաև Ամերիկայի կարմրամորթների, նեգրների ու այլ բարբարոս ժողովուրդների մէջ, եղել է հնում և այսօր էլ որոշ չափով շարունակւում է ընդհանուր հողամշակութեան սովորութիւնը, աշխատանքը կազմակերպւած համայնովին, միացած գործիքներով ու ճիգերով։

Համայնովին մշակել են հողերը, համայնովին կտրատել, մաքրել անտառները, ցամաքեցրել ճահիճները, համայնօրէն հնձել են արտերն ու մարգագետինները, փորել են ջրմուղներ, բաց են արել հաղորդակցութեան ճամբաներ, շտկել են աւերումները... Հսկայական աշխատանք են թափել „բարբարոս“ համայնքները՝ նոյնիսկ հինաւուրց Եւրոպայում, հազարաւոր տարիներ առաջ՝ հարթելու համար անթիւ ուղիներ, խիտ, կուսական անտառների, լեռների, ճահիճների միջից։ Այդ ահագին խոչընդոտները յաղթահարել են՝ շնորհիւ ընդհանուր,

հրաշագործ ճիգերի։ Դեռ այսօր ևս ռուս գիւղացիները, գաղթելով խմբովին դէպի Սիբիր և հաստատուելով Ամուր գետի աւազանում, մշակում են հողը համայնովին և նոյնպէս ընդհանուր ուժերով շինում են իրենց կացարանները։

Վ ա յ ե լ ո ւ մ ը միայն, բարիքների ս պ ա ռ ո ւ մ ը չի եղել հնում լայն ծաւալով համայնական։ Նա կատարուել է մեծ գերդաստանների օճախներում, զատ-զատ յարկերի տակ, մտերմական, արիւնակցական շրջաններում։ Եւ դա բնական, հասկանալի է.. Այնուամենայնիւ, համայնականութեան գեղեցիկ աւանդութիւնը վաղեմի մարդկութեան մէջ շարունակուել է յայտնի չափով նոյնիսկ սպառումի աշխարհում։ Պարբերաբար, գիւղական համայնքների մէջ կազմակերպուել են ընդհանուր հացկերոյթներ ու խրախճաններ, և դրա համար օգտուել են այլևայլ առիթներից — մեռած նախնիքների յիշատակութիւն ու տօներ, կրօնական հանդէսներ, դաշտային աշխատանքների սկզբնաւորում, ծնունդներ, ամուսնութեան ու թաղման հանդէսներ ևայլն։

Այդպէս ուրեմն, մասնաւոր սեփականութիւնը — որ այսօր շատ շատերին, մանաւանդ իշխող դասակարգերի ներկայացուցիչներին, թւում է որպէս յաւիտենական, բնատուր մի հաստատութիւն, յատուկ բոլոր ժամանակներին և բոլոր մարդկային հաւածներին — ծնունդ է առել համեմատաբար աւելի ուշ, նախապատմութեան կամ պատմութեան որոշ վայրկեաններում, իբրև հետևանք մի շարք տնտեսական ու սօցիալական պատճառների, որոնց մասին տեղը չէ ծանրանալու։

„Բնատուրը“, սկզբնականը — հ ա մ ա յ ն ա կ ա ն սեփականութիւնն էր, կամ ուրիշ խօսքով, սեփականութեան չգոյութիւնը, Երկար դարեր մարդ- էակներն ու հա-

սարակութիւնները բնազդօրէն թշնամի են եղել „իմի“ ու „քոնի“ հասկացողութեան, խտրութեան։ Աստուածը կամ աստուածները, նրանց նախնական ըմբռնումով, ստեղծել են ամեն բան՝ ամենքի համար, աշխարհի բոլոր բարիքները—ընդհանուր, համայնական բարօրութեան համար։ Այն ամենը, ինչ բսնում է դաշտերի մէջ, այն ամենը, ինչ որ ապրում, շնչում է երկրի վրայ և գետերի ու ծովերի մէջ—հաւասարապէս պատկանում է բոլոր մարդկանց և ոչ մի բուռն արտօնեալների։

Հինաւուրց համայնքների մէջ հողերի ու գործիքների, աշխատանքի ու վայելքի համայնացման հետ տիրում էր բնականաբար հաւասարութիւն մարդկանց միջև։ Եւ պատմութիւնը վկայում է, որ անգամ քաղաքակրթութեան համեմատաբար բարձր աստիճանների վրայ, Եւրոպայում, այդ համայնքները, չը նայած իրենց խոշոր չեղումներին սկզբնական կերպարանքից, չը նայած մասնաւոր սեփականութեան սկզբունքի նուաճումներին, պահպանում են իրենց էական բնոյթը, պահպանում են ռամկավարական հաւասարութիւնը. Նրանք բոլորն էլ անկախ, ինքնավար միութիւններ են, վարչական ապակենտրօնացմամբ, լուծում են իրենց ներքին վէճերը համագումարներով, պատգամաւորութիւններով ու մեծամասնութեան սիստեմով, նրանց բոլորի մէջ տիրում է կենցաղի, գոյքի, պայմանների հաւասարութիւն և արդիւնաբերութեան մեծագոյն միջոցը, հողը, իր պարբերական բաժանումների սկզբունքով, կազմում է ամենուրեք ընդհանուր, համայնական սեփականութիւն։

Հողի ընդհանուր սեփականութիւնը ինքնին արդէն մի ամուր պատուանդան էր, որ պահպանում էր պայմանների հաւասարութիւն, սահմանում էր սերտ, հա-

մերաշխ կենակցութիւն համայնքի անդամների մէջ, ապահովում էր բոլորի անհատական անկախութիւնը՝ ընդհանուր, հաւաքական սեփականատիրութեան մէջ։

Եւ ամեն տեղ, այնուամենայնիւ, պատմութեան սարսափելի անիւը կոխկռտեց „հին բարի ժամանակների“ այդ մի շարք առաքինութիւնները, գրեթէ ամեն տեղ անհետացաւ կամաց-կամաց այդ նախնական հաւասարութիւնն ու ռամկավարութիւնը... Առաջ եկաւ գոռոզ, ճնշող արիստօկրատիան, հողային ազնուականութիւնը գրեթէ բոլոր երկրներում, հաստատուեց աւատապետական կարգուսարքը իր համասփիւռ քաօսով, անիշխանական զարհուրանքներով, ապա քաօսից հետզհետէ ծնունդ առաւ միապետութիւնը, աւելի գոռոզ, աւելի ճնշող, թէև աւելի օրինաւոր ու կարգապահ,—և ամեն ինչ նա ենթարկեց իր բացարձակ, միահեծան իշխանութեան...

Ահաւասիկ հասարակական էւօլիւցիայի արիւնոտ, բայց և անհրաժեշտ, ճակատագրական սլացքը։

Ողբալու պէտք չը կայ, ի հարկէ։ Զարգացման անիւը առ երևոյթս „բացասական“ իր ընթացքի մէջ, չը պէտք է ցաւի ու ափսոսանքի ճիչեր հանէ օբ'եկտիվ դիտողի կողմից։ Քաղաքակրթութիւնը կործանեց հինաւուրց մանրանկար-ռամկավարութիւնն ու հաւասարութիւնը և բերեց անքաւ արիւն ու զարհուրանք։ Բայց դրա համար չը պէտք է անիծենք քաղաքակրթութիւնը։ Յոռետես սօցիօլօգներ արեցին այդպէս։ Կարդացէ՛ք Ռուսսօյին, Կարլայլին, Տօլստօյին։ Լսեցէք նիցշէական թունոտ ու սասանեցուցիչ անէծքները ժամանակակից կուլտուրական արժէքների հասցէին... Մոլորութի՜ւն, անտարակոյս։

Պրօգրէսի, առաջադիմութեան հսկայական սլացքը չի կարելի դատապարտել պարզ, միամիտ վայնասունով։

նախնական վայրենութիւնը մի շարք սիրուն առաքինութիւնների հետ պարփակում էր իր ծոցում և մի շարք սարսափներ։ Վայրենութիւնը, սահմանակից որոճացող անասնութեան, ինքնին արդէն սարսափ է *)։ Մարդկութիւնը չէր կարող կանգ առնել մանրիկ, խաւար համայնքների այդ առաջին աստիճանի վրայ։ Նա ձգտում էր բնազդօրէն լայնարձակ հօրիզոնների, ուր ի վերջոյ պիտի իրագործէ մարդկային իդէալական համայնակենցաղը **)։

---

*) Բարոյական մի շարք բնազդային ըմբռնումները կիրառւել են սովորաբար հ ա մ ա յ ն ք ի ն ե ր ս ո ւ մ։ „Մի՛ շնիր, մի՛ գողանար, մի՛ սպանիր“ հինաւուրց ու համամարդկային պատւիրանները ունեցել են հրամայական նշանակութիւն՝ միմիայն իւրաքանչիւր համայնքի շրջանակներում, նրա անդամների փոխադարձ յարաբերութեան մէջ։ Այն, ինչ որ ա ր գ ե լ ւ ե լ է հարազատ համայնակիցների նկատմամբ (սպանութիւն, բռնաբարութիւն և այլն) — թ ո յ լ ա տ ր ւ ե լ է սովորաբար օ տ ա ր համայնքների պատկանող անդամների վերաբերմամբ...

Հարկ չը կայ խօսելու արիւնարբու „Վենդետտայի“, վրէժխնդրութեան պաշտամունքի և նման սարսափների մասին, որ բնորոշում են այդ նախնական ցեղերի ու համայնքների փոխադարձ յարաբերութիւնները, — մանաւանդ այն վայրերում, ուր երկար ժամանակ ճարակել է պ ա տ ե ր ա զ մ ի աղէտը...

**) Պէտք է յիշատակել, որ դեռ վաղուց, մարդկային այդ նախնի հասարակակարգի մասին եղել են երկու տարբեր, տրամագծօրէն հակառակ կարծիքներ։ Մէկը, իրեն թարգման ունենալով անգլիացի հասարակագէտ Հ ո բ բ ս ի ն, ներկայացրել է այդ առաջին հասարակակարգը, որպէս Դանտէյեան մի դժոխք։ Այնտեղ, ասում է Հոբբս, բիրտ էգօիզմի և վայրագ ուժի բացարձակ տիրապետութիւնն էր... Կռի՛ւ էր բոլորի ընդդէմ բոլորի, մարդը գայլ էր իր նմանի դիմաց. *Homo homini lupus!...*

Միւս կարծիքը, ի դէմս մեծանուն Ժան Ժակ Ռուսոյի՝ իդէալացրել ու երգել է մարդկութեան նախավիճակը։ Այն-

Քաղաքակրթութիւնը միայն չի կործանում—նա և շտկում է, վերաշինում: Ազնւականութիւնը, չ՚ապ-

---

տեղ, ասում է Ժան Ժակը, Հովւերգական այն շրջանում՝ ալտրուիզմի, փոխադարձ սիրոյ, հաւասարութեան, պարզ, անվթար բարքերի համատարած թագաւորութիւնն էր, որ կուլտուրան, քաղաքակրթութիւնը յետադայում աղճատեց, թունաւորեց, ապականեց... Այնտեղ մարդը Աստւած էր, հրեշտակ էր իւր նմանի համար. Homo homini deus!:

Երկու հայեացքներն էլ մեղանչում են ծայրայեղութեամբ: Նախնական համայնքները արժանի չեն ոչ խանդավառ իդէալացման ու փառաբանութեան, ոչ էլ ատելութեան ու նշաւակման: Իրողութիւնը, պատմական, հասարակագիտական իրողութիւնն այն է, որ այդ նախնի մարդկային համայնքների մէջ եղել է, անշուշտ, գոյութեան կռւի ու էգօիստական տիրապետութեան կոշտ բնազդը, որ վայրենի ու բարբարոս համախմբումները, անշուշտ, յաճախ դրոհ են տւել իրարու դէմ, ծւատել իրար, բնաջնջել, որ „Վենդետտայի", արիւնարբու վրէժխնդրութեան ահեղ դօգմը, այո՛, եղել է մարդկային հաւածների փոխադարձ յարաբերութեան մէջ, բայց այդ բոլորի հետ միասին իրողութիւն է և այն, որ այդ վայրենութեան ու բարբարոսութեան ծոցում բաւականաչափ մշակւել ու հաստատւել է—թէկուզ անձուկ, սահմանափակ հորիզոններում—նաև ալտրուիզմի ու համայնական ներդաշնակութեան բնազդը:

Իւօլիւցիան կանգ չ'առաւ այդ կէտի վրայ և լաւ եղաւ, որ կանգ չ'առաւ: Տոհմային, համայնատիրական այդ „իդիլլիայի" (հովւերգութեան) կործանումից յետոյ, ճիշտ է, եկան հետզհետէ աւելի և աւելի մեծ զուլումներ մարդկութեան գլխին, սարսափի ու արհաւիրքի հորիզոնները միշտ աւելի ձգւեցին, լայնացան, պատերազմները գուցէ աւելի յաճախացան, ա ն հ ա տ ա կ ա ն ս ե փ ա կ ա ն ո ւ թ ե ա ն նորածագ դաւանանքի մէջ աճեցին էգօիզմի, բանի ուժի ընչաքաղց շահատակութիւնները, ծնւեցին դասակարգերը, որոնք առաջ չը կային, ծաւալւեցին դասակարգերի սանձարձակ ախորժակներն ու մրցումները, և այդ բոլորի մէջ. գուցէ, այո՛, ժամանակաւորապէս հալւեցին, անհետացան „հին, բարի ժամանակների" հովւերգական

րեց, — չ՛ապրեց և միապետութիւնը: Երկուսն էլ իրենց պաշտօնը կատարելուց յետոյ—պաշտօն դրական և բացասական — իջան բեմից և Ֆրանսիական Մեծ

ռաքինութիւնները, արեան անյագ Մողոքն, այո՛, ուղեկցեց այնուհետև երկար դարեր շարունակ ազգերի, պետութիւնների, համայնակուլ ու գժնդակ բռնապետութիւնների երկունքներին ու ծաւալումին... Ի՞նչ արած: Քաղաքակրթութեան երկունքները կատարւում են սարսափելի տանջանքներով... Մարդկութիւնը չուել էր զարհուրանքից, պիտի անցնէր զարհուրանքից, ոլոր-մոլոր ուղիներով, արիւնով ու արհաւիրքով, որպէս զի հասնէր ի վերջոյ ալտրուիզմի ու միահեծան բարօրութեան „ոսկէ դարին", որ սպասում է նրան ապագայում...

Հակադրութիւնները զարգացան կոմմունիստական համայնքների ծոցում, քայքայեցին, ժխտեցին նրանց էութիւնը և ծնունդ տուեին նոր րէժիմի, որ վաղ թէ ուշ իր հերթին ապագայում պիտի ժխտուի ու ծնունդ տայ համապարփակ ու հաշտարար սինթեզին... Տեղն է յիշել Հեգելեան հռչակաւոր տրիադը, եռաստիճան բանաձևը, իր „դրութեամբ", „հակադրութեամբ", „համադրութեամբ" (թեզ, անտիթեզ, սինթեզ): Հին, տոհմային կամ գենտական կոմմունիզմը—թեզ, դրութիւն—պիտի բացասւէր ճակատագրականօրէն և պիտի տեղի տար մասնաւոր աշխատանքի ու սեփականութեան րէժիմին (անտիթեզ, հակադրութիւն), որը տիրելով անթիւ դարեր, հասնելով մինչև ներկայ ժամանակները, պիտի „բացասուի" կամ կործանւի ապագայում, նոյն յարակայ տրամաբանական ուժերի մղումով և պիտի տեղի տայ մի նոր, աւելի բարձր տեսակ կոմմունիզմի, որը լինելով „բացասութիւն բացասութեան" — Negation der Negation — հանդիսանալով որպէս գերագոյն ու բաղձալի համադրութիւն—սինթեզ—պիտի հաստատէ վերստին համայնական սեփականութեան, աշխատանքի ու վայելումի այն նախնական րէժիմը, բայց արդէն ճոխացած, կատարելագործւած հազարաւոր տարիների կուլտուրական զարգացման արդիւնքներով, գանձերով...

Յեղափոխութեան ցնցումների մէջ դարբնեց Ռամկավարութեան նոր հաւատամքը։

Այդ հաւատամքի մէջ շօգիացան երկու հզօր ու հինաւուրց դասակարգերի—ազնուականութեան ու կղերի—աւանդական ու բռնաւոր առանձնաշնորհումները։

Եւ սակայն Յեղափոխութեան այդ արիւնազանգ ստեղծագործութիւնն ևս մատնեց շուտով իր ներքին տկարութիւնը։ Նա ևս հռչակեց անբաւարար, քանի որ տուել էր իշխանութիւնն ու մեծագոյն հարստութիւնները՝ փողի, կապիտալի դասակարգին—բուրժուազիային։

Արդարև, չը նայած իր մի շարք պատկառելի որոշումներին սօցիալական ու տնտեսական խնդիրների աշխարհում՝ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը մնաց էապէս բուրժուազական։ Ճնշողը մինչ այն ազնուականութիւնն էր, կղերն էր, այնուհետև դարձաւ հարուստ, երրորդ դասակարգը։ Լուծը մինչ այն երկաթեայ էր, այնուհետև նա ոսկեզօծուեց, նրբացաւ... բայց աշխատաւոր ընդհանրութեան համար դա միևնոյն էր։ Նրա կախումն ու ստորադրումը դարձեալ շեշտուեց. մասսաները դարձեալ մնացին չքաւորութեան, կարօտութեան մէջ։ „Հաւասարութիւնն“ ու „եղբայրութիւնը“ յայտնուեցին մի մի կեղծիքներ։ Տրամադրութիւնն իջաւ իսկական ռամկավարների բանակում, առաջ եկաւ դառն, աղէտաւոր հիասթափութիւն...

Այն ժամանակ էր, որ բուրժուազական յաղթանակների ու ցնծութեան մթնոլորտում հնչեց յանկարծ Բաբեօֆի շանթաբեր ահակոչնակը, որ գալիս էր տասնուեօթ հազար „հաւասարների“ կողմից՝ ազդարարելու Մեծ Յեղափոխութեան ֆիասկօն և պահանջելու իսկական հաւասարութիւնը՝ հողի

ու բոլոր գոյքերի համայնացումով... Դա „հաւասարների դաւադրութիւնն" էր (*Conjuration des Egaux*)— նախակարապետը 19-րդ դարի սոցիալական հոյակապ շարժումների։

Նոր դասակարգ էր բարձրանում խաւարի ու ստրկութեան անդունդներից—չ ո ր ր ո ր դ դ ա ս ա կ ա ր գ ը, ա շ խ ա տ ա ւ ո ր ո ւ թ ի ւ ն ը։ Նոր շարժում էր սկիզբն առնում... Միջնադարեան ու հնադարեան շարժումների բնական շարունակութիւնն էր դա, բայց և հիմնապէս տարբեր նրանցից։ Նրանք կցկտուր ու տարերային — սա գիտակցական ու սիստեմատիկ։ Նրանք ցիր-ցան, անկազմակերպ — սա համատարած ու կազմակերպուած։ Նրանք անդեկ ու աննպատակ — սա խորապէս նպատակաւոր և իդէալական։ Ժամանակներն արդէն հիմնականապէս տարբեր էին։ Տեխնիկական, արհեստագիտական անօրինակ թռիչքները 19-րդ դարի սկզբներից մի անսովոր մղում տւին արդիւնաբերական ուժերին, ծնունդ առաւ նորագոյն ճարտարարւեստը, ինդուստրիան, գործարանական տենդոտ կեանքով, որ կենտրոնացնում է գործավայրերում աշխատաւորների հսկայական համախմբումներ։ Այդտեղ արդէն իրագործւած է ամենաբարեյաջող պայմանը՝ աշխատաւոր դասակարգի կազմակերպման ու նրա գալոց պայքարների։

Չենք հետևի այդ կազմակերպման ու պայքարի ուշագրաւ դրւագներին, դա մեզ չափազանց հեռու կը տանէր։ Էւօլիւցիան կատարւեց և մ տ ք ե ր ի մէջ։ Գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը ևս, մասամբ ազդւած կեանքի տարկանոնութիւններից, եկան, ուղղակի կամ անուղղակի, կազմակերպելու նոր վարդապետութիւնը։ Կեանքը պատրաստել էր նրա սաղմերը, միտքը եկաւ սրբագործելու նրա սկզբունքներն ու տենչանքները։ Ահագին դեր խաղաց նորագոյն սոցիալիզմի ծագման

պատմութեան մէջ այն ընդհանուր մտաւոր մթնոլորտը, որ կազմուել էր Եւրոպայում 19-րդ դարու երեսնական ու քառասնական թւերին։ Վերանցական (*transcendental*) հէգելեանիզմը, միացած դարվինականութեան նախակարապետների ուսուցման հետ՝ մշակեցին էւօլիւցիոնիզմի մեծ ու գերազանցապէս յեղափոխական վարդապետութիւնը, որ մեր ժամանակակից աշխարհայեցութեան անկիւնաքարն է։ Կայուն, տեւական ոչինչ չը կայ, ամեն ինչ ենթակայ է յարաժամ փոփոխութեան — այսպէս էր ուսուցանում այդ վարդապետութիւնը։ Պետութիւն, հասարակութիւն, իրաւունք, բարոյականութիւն, կրօն ու աստւածութիւն մշտնջենապէս փոփոխւում ու յեղաշրջւում են, տեղի տալով նորանոր ձեւերի, ծնունդ տալով նորանոր դաւանանքների։ Էւօլիւցիոնիզմի տիրական ազդեցութեան տակ ստեղծւեց կեանքի ու գրականութեան մէջ մի համատարած ու համայնաջինջ հոսանք, որ կարելի է որակել „Նիհիլիզմ“ անունով։ *Nihilo*—բացասում եմ, ժխտում եմ... Դա ժխտական վերաբերումն էր դէպի բոլոր գոյութիւն ունեցող „հեղինակութիւնները“, ավտօրիտետները,—կրօն, աստւածութիւն, պետութիւն, կառավարութիւն եւայլն։ Զափազանց ծանր ու զգալի էր այն լուծը, որ մարդկութիւնը կրել էր բազմատեսակ հեղինակութիւններից, ժամանակը հասել էր, որ նրանք յետ նահանջէին։ „Կրօնը չի ստեղծել մեզ, մենք ենք ստեղծել նրան, հեռո՛ւ ուրւականները“ — քարոզում էր Լուդվիգ Ֆօյերբախ։ „Իմ եսն ազա՛տ է ամեն տեսակ կաշկանդիչ շղթաներից, կրօնից ու պետութիւնից, հասարակութիւնից, կառավարութիւնից, ազա՛տ եմ ուզում լինել ես, մա՛հ ամեն կարգի հեղինակութեան“. — այսպէս էր որոտում 40-ական թւականներին հռչակաւոր Շտիրները, անիշխանա-

կանութեան ու ծայրայեղ անհատապաշտութեան մոլեռանդ առաքեալը: Ասպարէզ եկան և տնտեսագիտութեան ու սօցիօլօգիայի մէջ հոգով ու գրչով յեղափոխականներ, որոնք գիտական պաշարով սպառազինուած, գրոհ տուին մոլեգնօրէն ժամանակակից հասարակական խարիսխների դէմ: Եկաւ Պ ր ո ւ դ օ ն, որ հռչակեց սեփականութիւնը—գ ո ղ ո ւ թ ի ւ ն *). „*La propriété c'est le vol!*“: Եկաւ Լ ա ս ս ա լ, որ արտասանեց տարբեր խօսքերով նոյն դատավճիռը մասնաւոր ս ե փ ա կ ա ն ո ւ թ ե ա ն հաստատութեան դէմ. „*Das heutige Eigenthum ist Fremdthum*“: (Այսօրուայ սեփականութիւնը ուրիշի գոյք է **): Եկաւ Մ ա ր ք ս,—Նրանից առաջ եկել էին Ռօդբերտուս, Սիսմօնդի և ուրիշներ — որոնք իրենց ներհուն գիտութեամբ անբուժելի հարուածներ տուին կապիտալիզմի ամբողջ սիստեմին:

Եկան և ուրիշ մտաւոր հեղինակութիւններ ***) այլ և այլ ազգերի պատկանող:

Եւ այսպէս, մի շարք գիտական հսկաների աշխատակցութեամբ ստեղծւեց նորագոյն սօցիալիզմը, իբրև հասարակա-փիլիսոփայական աշխարհահայեացք: Ս օ ց ի ա լ ա կ ա ն շ ա ր ժ ո ւ մ ը, ծնունդ օ բ ե՛ կ տ ի վ իրականութեան, արդիւնք տնտեսական ուժերի դարաւոր առաջխաղացութեան՝ նւիրագործւեց

*) Խօսքը բ ո ւ ր ժ ո ւ ա զ ա կ ա ն սեփականութեան մասին է: Այս դարձուածը չը պէտք է հասկանալ բառացի մտքով: Բացատրութիւնը—քիչ յետոյ:

**) Այսինքն արդիւնք ոչ թէ իր տիրոջ աշխատանքի, այլ ուրիշ, վարձուած աշխատաւոր ձեռքերի...

***) Նրանց մթնոլորտում ապրելով—60-ական թւականների իր կարճատեւ արեւմտեան պտոյտի միջոցին—մեր Մ ի ք ա յ է լ Ն ա լ բ ա ն դ ե ա ն ն եւս կրեց ժամանակի ու մարդկանց տիրական ազդեցութիւնը եւ սոցիալիզմի գաղափարն իւրացնելով, փորձեց — իբրեւ առաջինը—քարոզել այն հայկական իրականութեան մէջ:

և սուբե՛կտիվ (ենթակայական) գիտակցութեան կողմից, նա համաձայնեց „յաւիտենական ճըշմարտութեան ու արդարութեան" հրամայականների, պահանջների հետ։ Սօցիալիզմը ձև, կերպարանք տուեց այդ շարժման, մշակեց նրա համար անհրաժեշտ տակտիկ, հաղորդեց նրան իդէալ։ Սօցիալիզմ և սօցիալական շարժում նոյնացան և մի ամբողջ դար թաւալեցին անընդհատ ու յարաճուն ալիքներով, անցան անօրինակ փոթորիկներից, ջարդերից ու մասսային նահատակութիւններից, գրոհ տուին շարունակ կապիտալիստական ամուր միջնաբերդի դէմ, հաւաքեցին շարունակ թշւառների ու քաղցածների լէգէօններ, իրաւազուրկ բանւորութիւն, հողազուրկ գիւղացիներ, հասան ներկայ օրերին, ուր սօցիալիստ Աշխատաւորութիւնը իր բազմամիլիօն բանակով հանդիսանում է արդէն, իբրև պետութիւն պետութեան մէջ, իբրև հզօր, պատկառելի ուժ, որ թելադրում է յաճախ իր կամքը պարլամենտներին ու կառավարութիւններին։

Ի՞նչ է արդիօք պատճառը սօցիալիզմի այդ սրարշաւ առաջխաղացութեան, որտե՞ղ է նրա յարաճուն ծաւալման գաղտնիքը։

Ահա հարցումներ, որոնց անթիւ կարծիքները չեն տարբերւում, որոնց շուրջը նոյնանման պատասխաններ են ձևակերպւում ամբողջ մտածող մարդկութեան մէջ։

Պատճառն այն է, որ սօցիալիզմը նախ և առաջ տնտեսական մի թէօրիա է. գաղտնիքն այն է, որ սօցիալական կամ աշխատաւորական խնդիրը նախ և առաջ գերազանցապէս ստամոքսային մի խնդիր է՝ գերմանական փոքր ինչ կոշտ արտայայտութեամբ (*Magenfrage*)։

Իսկ այդ կարգի խնդիրները հանդիսանում են

մարդկութեան մէջ, որպէս ամենից տարրականն ու տարածուածը, որպէս ամենից զօրաւորն ու հրամայականը: Չը կայ աւելի ուժեղ բնազդ մարդկային բնութեան մէջ, չը կայ աւելի անդիմադրելի մի պահանջ, քան քաղցը: Մտաւոր, բարոյական, կրօնական, հասարակական և բազմաթիւ այլ հակումներն ու պահանջները նսեմանում, լռում են ստամոքսի անագորոյն ճիչի առջև...

*Այդտեղ է „տնտեսական մատերիալիզմի“ ամուր հիմքը *). այդտեղ է և սոցիալիզմի տարածման ամենահզօր դրդիչը:*

*Մարդկային ու մասսային դարաւոր պայքարների, ժողովրդային խօլ ու արիւնոտ ըմբոստացումների մէջ լսել ենք միշտ այդ ահաւոր ճիչը հալածուողների, տնանկների, իրաւազուրկ ըմբոստների կոկորդներից... Լսել ենք՝ անգամ „զուտ կրօնական“ պատկեր կրող շարժումների խորքի մէջ... Քրիստոնէութիւնը այնքան արագ չէր տարածւի հին աշխարհում, եթէ ինքնինքը չը յայտարարէր թշւառների, չքաւորների կրօն, եթէ չը հռչակէր բոլոր մարդկանց հաւասարութիւն **): Խաչակիրների արշաւանքները չէին կատարւի այնքան վիթխարի ծաւալով, եթէ կացութեան „տէրերը“ — պապեր, թագաւորներ, իշխաններ, ֆէօդալական առաջ-*

---

*) *Քաղցի գաղափարը ընդլայնելով, ընդհանրացնելով՝ կարող ենք ասել՝ նիւթական ախորժակներ, տնտեսական մտահոգութիւններ ու շահեր: Նրանց „տարրական և համատարած“ լինելու հանգամանքի մէջ է, որ Մարքսեան նշանաւոր թէօրիան — տնտեսական կամ „պատմական մատերիալիզմը“ — գտնում է իր գոյութեան պատճառը:*

**) Անկարելի է ժխտել, որ հաւատի կայր ու մոլեռանդ ուժը ևս, անձնազոհութեան իր հոյակապ օրինակներով, մեծ դեր է ունեցել նախնի քրիստոնէութեան տարածման մէջ:

նորդներ — չ՚ազատագրէին իրենց մարդկային նախիրները ճորտական կախումներից, եթէ միւս կողմից նոյն տէրերը չը սնուէին նոր հողային նուաճումների, նոր հարստութիւնների ու վայելքների հրապուրիչ ծրագիրներով։

Սոցիալիզմը նախ և առաջ ա ն տ ե ս ա կ ա ն վ ա ր դ ա պ ե տ ո ւ թ ի ւ ն է։ Նա պաշտպան է հանդիսանում աշխարհի բոլոր ճնշուածների ու զրկուածների, բոլոր նրանց, որոնք նեղւում են ամեն կարգի կեղեքումներից ու գիշատումներից, բոլոր նրանց, որոնք այժմեան հասարակական կարգերի մէջ չունին միջոց գոհացնելու իրենց հիմնական և տարրական ախորժակները, չունին միջոց ամոքելու ստամոքսի աշխարհաւեր աղաղակը։

Ինչպէ՞ս է, սակայն, որ սոցիալիզմի բանակն են դիմում — և միշտ աւելի ստուար շարքերով — ոչ միայն աշխարհի տնանկները, ոչ միայն ճնշուած, իրաւազուրկ, աշխատաւոր զանգուածները, այլ և բարձր ու բարեկեցիկ դասակարգերին պատկանող՝ շիտակ, ազնիւ, գաղափարական մտաւորականութիւնը։

Ինչպէ՞ս է, որ սոցիալիզմի մի շարք ծանօթ, աշխարհահռչակ թէօրիտիկոսներն ու քարոզիչները — Կարլ Մարքսից մինչև Լավրով, Էնգելսից մինչև Ժօրէս, Լաբրիօլայից մինչև Վանդերվելդ — իջել են հարուստ ու կուշտ բուրժուազիայից ու ազնուականութիւնից և գրկել են աշխատաւորութեան աւետարանը։

Ինչպէ՞ս է, որ Պրեսսանսէի ու Անատոլ Ֆրանսի պէս մարդիկ, որ կանգնած են ֆրանսիական ժամանակակից մտաւորականութեան գագաթին, մէկէն ի մէկ — Դրէյֆուսեան ալէծուփ դատի ընթացքում — երես դարձրին ցասումով ու զզւանքով իրենց ծնող բուրժուազիայից, արհամարհեցին իրենց բոլոր դասակարգային կապերն ու նախապաշարումները և եկան միանալու սև, չարքաշ

ու տրորւած պրոլետարիատին, որպէս հզօր ու պերճախօս փաստաբաններ աշխատաւորական դատի, ձգտումների, նպատակի...

Այդ երևոյթները հէնց ապացոյց են, որ „ոչ միայն հացիւ կեցցէ մարդ“, որ ստամոքսային, տնտեսական պատճառներից զատ՝ կան նաև գաղափարական պատճառներ, որոնք նոյնպէս ծանրակշիռ դեր ունին պատմական էւօլիւցիայի մէջ։ Եթէ աշխատաւոր լէգէօնները մտնում՝ են սօցիալիզմի դրօշակի տակ գլխաւորապէս տնտեսական մտահոգութիւններով, ապա Պրեսանսէներն ու Ժօրէսները, ամբողջ համաշխարհային գիտակից մտաւորականութիւնը մտնում է նոյն դրօշակի տակ՝ գաղափարի դրդումներով և հրահանգւած—ինչպէս ասացինք նախորդ էջերում—պատմութեան ու իրականութեան դասերից։

Կայ, անշուշտ, այն հանգամանքը՝ որ ինքը սօցիալիզմը չի յայտնւում, իբրև սոսկ տնտեսական ու դասակարգային մի վարդապետութիւն, որ նա ձգտում է ազատագրել ոչ միայն ստորին աշխատաւոր դասակարգերը, այլ ամբողջ մարդկութիւնը... Ի՞նչ ահռելի անկումների է հասնում նոյնիսկ „բարձր“ ու բարեկեցիկ դասակարգը—բուրժուազիան... Որքա՜ն փտութիւն, այլասերում—մտաւոր, ֆիզիքական, բարոյական։ Որքա՜ն գարշանք է ամբարւած քաղաքական, պարլամենտական և առօրեայ հանրային կեանքի անդունդներում... Կաշառակերութիւն, շանտաժ, պոռնկութիւն, նոր ձևի գերեվաճառութիւն — կանանց, մանկահասակ աղջիկների առևտուր—պարբերական տագնապներ, սնանկութիւններ ու ինքնասպանութիւններ, պարբերական պատերազմներ *) ու արիւնոտ ապստամբութիւններ, ապա

*) Տարակոյս չը կայ, որ գրեթէ բոլոր պատերազմները, մանաւանդ նոր ժամանակներում—Ֆրանս-պրուսական, Սպա-

գողութեան, աւազակութեան, մարդասպանութեան ու մանկասպանութեան մի սոսկալի համաճարակ և մի հսկայ թափօր ամեն տեսակ ոճիրների ու պատուհասների՝ որոնց գերագոյն աղբիւրն է մասնաւոր սեփականութեան ժամանակակից սիստեմը, գոյքերի, հարստութիւնների անհաւասար բաշխումը, դասակարգերի ու առանձնաշնորհումների անիրաւ տիրապետութիւնը. . Ամբողջ հասարակական օրգանիզմն է տառապում խո-

---

նօ-ամերիկեան, Չին-ճապօնական, Անգլօ-տրանսվալեան, Ռուս-ճապօնական և այլն—նիւթում են հակառակ ազգերի աշխատաւոր մեծամասնութեան՝ բարձր, իշխող, աւարատենչ դասերի կողմից, որոնք յարաժամ անուցանում են միլիտարիզմի ահեղ մեքենան—ժողովրդական փողերով, հարկաւ--աճեցնում են կանգուն բանակները և մղում դէպի նորանոր հողային նուաճումներ՝ իրենց անյագուրդ ախորժակները գոհացնելու նպատակով։

Գրեթէ բոլոր երկրներում—նաև, դժբախտաբար, Ռուսաստանում՝ ու Թիւրքիայում—կայ անհաշտ, ամբարտաւան շինուորական դասակարգը, որ փնտրում է միշտ արիւնալի արկածներ, յղանում է նուաճումների, աշխարհակալութիւնների ծրագիրներ...

Դարձեալ սօցիալիզմն է, որ այսօր ամուր պատուար է կանգնում միլիտարիզմի ու պատերազմների ահուելի չարիքի դէմ, որը ոչ միայն սպառում, քայքայում է ժողովուրդների —թէ յաղթւողի թէ յաղթողի—նիւթական տնտեսութիւնը, այլ և յօշոտում է նրանց պարբերաբար... արեան դաշտերում։ Դարձեալ սօցիալիզմն է, որ հակառակ պաշտօնական կեղծիքներին, ցարերի ու իշխանների հիպօկրիտ „մանիֆեստներին" ու միջազգային ամուլ խորհրդաժողովներին (Հաա՛գ) —առաջարկում է խաղաղութեան մեծ կնճռի միակ դրական ու գործնական լուծումը, կազմակերպելով բոլոր երկրների աշխատաւոր ժողովուրդներին և մղելով նրանց դէպի կռիւ՝ ընդդէմ եղբայրասպան պատերազմների, միլիտարիզմի և նրանց մշտնջենաւոր աղբիւր — կապիտալիզմի։ (Աւելի երկար՝ մեր գրքոյկի մէջ. „Համաժողովրդական բանակ"):

րունկ, ցաւագար տարկանոնութիւններով, ամբողջ մարդկութիւնն է պատառոտւում զուտ հարստապետական, բուրժուազական փտախտով։ Եւ ամբողջի վերանորոգութեան խնդիրն է հրապարակի վրայ, Կարմիր Ինտերնացիոնալի առջև։ Այդտեղ է սոցիալական հարցը, իր կատարեալ ծաւալով, իր ամենալայն ըմբռնումով...

„Այդ հսկայական յեղաշրջում մը—ասում է Դաշնակցութեան ծրագիրը—կը կատարուի յօգուտ ոչ միայն աշխատաւորներու, այլ և բովանդակ մարդկութեան։ Բայց որովհետև ան կը հակասէ ունեւոր, իշխող դասակարգերու անմիջական շահերուն, աշխատաւոր ընդհանրութեան ազատագրումը կարող է իրապէս կատարուել նոյն աշխատաւորներու ճիգերով, անոնց հաւաքական պայքարով։ Այդ պայքարին մէջ կը միանան և ձեռք ձեռքի կուտան քաղաքներու արդիւնաբերական պրոլետարները, աշխատաւոր գիւղացիութիւնը և յեղափոխական մտաւորականները“։

Գիտական սոցիալիզմը չի մեկնում սոսկ գեղեցիկ ցանկութիւնների, պատրանքների աշխարհից և չի տարւում ուտոպիական, մտացածին անուրջներով։ Տիեզերական թշուառութեան պատկերն, անշուշտ, ցնցում է սոցիալիստ մտածողների սրտերը. սակայն—ասացինք քիչ առաջ, փորձենք աւելի հիմնաւորել — սոսկ մարդկային ցաւերի պատճառած կարեկցութիւնն ու ցասումը չէ, որ կազմում է, այսպէս ասած, գիտական սոցիալիզմի չուկէտն ու պարունակութիւնը։ Վերջինը կանգուն է, շնորհիւ մի շարք խորունկ հետազօտութիւնների, ձեռնարկւած ոչ միայն պատմական ու պատմափիլիսոփայական կնճիռների մէջ, այլ և ամենից առաջ՝ զուտ տնտեսական ու իրաւական յարաբերութիւնների աշխարհում։

Այդ հետազօտութիւնները կատարւեցին Անգլիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում։ Երբ ամենաառաջադէմ երկրների ականաւոր տնտեսագէտները, կարելի է

ասել, յաջորդական ու համազօր ճիգերով ձուլեցին գիտական սօցիալիզմի ամուր պատւանդանը։ Տօմսօն, Օվէն, Անգլիայում, Սիսմօնդի, Սէն-Սիմօն, Ֆուրիէ, Ֆրանսիայում, Մարքս և Ռօդբերտուս Գերմանիայում — ահա այդ գլխաւոր ստեղծագործող դէմքերը։

Նրանցից շատերի ժամանակակից՝ մի ուրիշ խոշոր տնտեսագէտ, անգլիացի Ռիկարդօ, յայտարարել էր արդէն, որ բոլոր գոյութիւն ունեցող արժէքների աղբիւրը, սուբստանցը, կենսահիւթը — մարդկային աշխատանքն է։ Աշխատանքը — միակ կրիտէրիումը, չափանիշը բոլոր այլազան արժէքների։

Ուիլեամ Տօմսն, յենւած այդ նշանաւոր ճշմարտութեան վրայ, դիտել տւեց, որ իսկական աշխատաւորները, որոնք ստեղծողն են բոլոր նիւթական հարստութիւնների, իրօք վաստակում են այնքան միայն, որ կարողանան գոհացումն տալ իրենց կենսական ամենաանհրաժեշտ կարիքներին։

Ահա կապիտալիստական արդիւնագործութեան սիստեմի ամենացայտուն, ամենահիմնական և ընդվզիչ արատը։ Միլիօնաւոր աշխատաւորները, որ զրկւած հողային ու փողային սեփականութիւնից, տէր միմիայն իրենց բազուկների և ուղեղի *), աշխատում են օրավարձով հսկայական գործարաններում, մեքենաների շուրջը, կամ թէ դաշտերում, խոշոր կալւածատէրերի մօտ—չեն ստանում իրենց աշխատանքի լիուլի արդիւնքը, այլ ստանում են նրա մի մասնիկը և համեմատաբար փոքրիկը (օրավարձի ձևով)։ Աշխատանքի արդիւնքների միւս մասը և կարևորագոյնը մնում է անվճար, նա գնում է լցնելու կապի-

*) Այդ սեփականազուրկ աշխատաւորութիւնն է, որ ժամանակակից համաշխարհային բառբառով կոչւում է պրոլետարիատ։

տալիստի, այնինքն՝ գործարանատիրոջ կամ հողատիրոջ գրպանը, շահի կամ հասոյթի (րէնտա) ձեւով։

Ահա թէ ինչ իրական հրէշաւորութիւն էր արձանագրում Յօմսն։ Այդ չը վճարուած աշխատամասը, որ իւրացւում է կապիտալիստների կողմից, նա անւանեց additional value, հայերէն լեզւով՝ „յաւելեալ արժէք“ *)։

Այդ յաւելեալ արժէքներից են ամբարւում հսկայական կապիտալները, դրամագլուխները, որոնց առանձնաշնորհեալ տէրերը, հեռու չարքաշ աշխատանքից, սահմանափակւում են ընդհանրապէս ղեկավարի, վերահսկողի պաշտօնով, իսկ շատ յաճախ ազատւում են նաեւ այդ տաղտկալի պարտաւորութիւնից, յանձնում են գործերը իրենց վարձու հաւատարմատարներին եւ նւիրւում էպիկուրեան անդորրապաշտ գոյութեան վայելքներին...

Ահաւասիկ կապիտալիզմը... Իսկ անդին՝ աշխատաւորական ամբողջ սերունդներ, տղամարդիկ, կին ու երեխաներ, որ իրենց ամենօրեայ անխոնջ ու քրտ-

---

*) Ահա դիցուք Բագւի, Բաթումի, Կ. Պօլսի մի գործարանում կամ թէ մի խոշոր կալւածատիրոջ մօտ վարձով աշխատում են բանւորներ, աշխատում են դիցուք օրական 14 ժամ (լինում է եւ աւելի)։ Գործարանատէրը (նոյնը եւ հողատէրը) տալիս է գործաւորին որոշ օրավարձ կամ վարձագին, առհասարակ փողով։ Բայց այդ չնչին օրավարձը հաւասար է միայն 4, 5 կամ 6 ժամւայ բանւորական աշխատանքի արդիւնքին կամ արժէքին։ (Դրանով աշխատաւոր մարդը կարող է միայն հոգալ իր ու ընտանիքի անհրաժեշտագոյն, տարրական պէտքերը). Մնացած 10, 9 կամ 8 ժամերը մնում են անվճար։ Այդ 10, 9, 8 ժամերի ընթացքում արտադրւած բանւորական արժէքները մտնում են կապիտալիստի դրամարկղը։ Դրանք են „յաւելեալ արժէքները“։

նաթոր ճիգերով մատակարարում են կապիտալիստներին „յաւելեալ արժէքների“ անվերջ շտեմարաններ, իրենք աճում են չքաւորութեան անդունդներում, հիւծւում են սև, տաժանելի աշխատանքի բեռի տակ, փճանում են, այլասեռւում:

„Յաւելեալ արժէքներն“ են, որ արտադրում են ժամանակակից բուրժուազիայի առասպելական հարստութիւնները և ոչ այդ բուրժուազիայի մ ե ք ե ն ա ն ե ր ն ու այլ բազմաթիւ արդիւնագործութեան միջոցները, որոնք նոյնպէս ստեղծուած են աշխատաւորական բազուկներով և որոնք միայն աճեցնում են աշխատանքի արդասաւորութիւնը:

Այսպէս է հռչակում 19-րդ դարի տնտեսագիտական մեծագոյն ճշմարտութիւնը:

Աշխատա՛նքը — բոլոր հարստութիւնների մայրաղբիւրը, աշխատա՛նքը — բոլոր արժէքների աստիճանացոյցն ու գոյապատճառը... Ահա թէ ինչու սօցիալիզմը երգում է, փառաբանում աշխատանքի աւետարանը, ահա թէ ինչու բոլոր սօցիալիստ կուսակցութիւնները նրա սրբազան դատն են պաշտպանում խանդավառութեամբ՝ ընդդէմ բոլոր կեղեքումների ու անիրաւութիւնների, պաշտպանում են նրա բիւրաւոր հէգ ու չարքաշ ներկայացուցիչներին, ամբողջ տառապող ու ստեղծագործող ա շ խ ա տ ա ւ ո ր ու թ ի ւ ն ը՝ որ կոչուած է մի օր, տիտանեան երերումներով, յեղաշրջելու երկրագունդը...

Առաջ գնանք, սակայն:

Հիմնւելով վերը յիշած իրողութիւնների վրայ, մեկնելով իրաւական այդ խորունկ տարկանոնութիւնից, Տօմսօն և ուրիշ մեր յիշատակած տնտեսագէտները պահանջում են հիմնականապէս յեղաշրջել հա-

րստութիւնների բաշխման ձեւը, սահմանել այնպիսի կարգեր, ուր աշխատաւոր մարդը վայելէ իր աշխատանքի արդիւնքը, առանց շահագործւելու, կեղեքւելու, առանց „յաւելեալ արժէքներ“ մատուցանելու կապիտալիստներին ու հողատէրերին։

Ամենայստակ տրամաբանական եզրակացութիւն հանեց այդ իրաւական տարկանոնութիւններից՝ Կարլ Մարքս, որ աւելի ուժեղ և մանրազննին վերլուծման ենթարկեց կապիտալիզմի ամբողջ սիստեմը։ Մարքսը գիւտ չ՚արեց, ինչպէս հաւատացնում են իր աշակերտները. „յաւելեալ արժէքի“ գաղափարը նա չը գտաւ, այլ աւելի լուսաբանեց ու խորացրեց այն՝ իր նշանաւոր աշխատութեան, „Կապիտալ“-ի մէջ։

Իւրացումն չը վճարւած աշխատանքի, սեփականումն բանւորական յաւելեալ արժէքների—այս է կապիտալիստական հասարակութեան սկզբունքը, նրա խարիսխը։ Մի ամբողջ դասակարգ, իր ձեռքն առած արդիւնագործութեան բոլոր միջոցները—հող, փող, մեքենաներ և՛ն—յենւած տիրող օրէնքների ու բռնի ուժի վրայ, ամեն օր և ամեն վայրկեան իւրացնում է միլիօնաւոր սեփականազուրկ բանւորութեան աշխատանքը, յաւելեալ արժէքի ձեւով…

Ահա այդ պատճառով է, որ Պրուդօն հռչակում էր ժամանակակից կապիտալիստական սեփականութիւնը, իբրև գողութիւն, իսկ Լասսալ դիտում էր այն, իբրև ուրիշի, օտարի գոյք, Fremdthum։

Ի հարկէ, բացարձակ իմաստով չը պէտք է ընդունել Պրուդօնի թունոտ ամբաստանութիւնը։ Կապիտալիստները կամ բուրժուաները գողեր, ոճրագործներ չեն *)։

*) Կան, անշուշտ, եւ այդ տիպի բուրժուաներ. կան դէպքեր—մեր կեանքում շատ յաճախ—երբ այս կամ այն կապիտալիստը, չափազանց

նրանք անձամբ պատասխանատու չեն այն չարագործ սիստեմի համար, ուր մշտապէս շահագործւում է բանւորական աշխատանքը։ Լասսալեան արտայայտութեան ձևը աւելի մօտ է ճշմարտութեան։ Իսկ Մարքս միանգամայն հրաժարւեց „ագիտացիական" կարմրավառ նշանաբաններից և յստակօրէն որոշեց պատասխանատուութիւնները, բարդեց նրանց՝ ս ի ս տ ե մ ի վ ր ա յ, պատմութեան վրայ։ Կապիտալիզմը ծնունդ է պատմական դարաւոր էւօլիւցիայի և իբրև այդպիսին, բնական է, անխուսափելի...

Անհատ-բուրժուաները, հողի, փողի տէրերը — այդ տիրապետող սիստեմի հրամանով իսկ — ստիպւած են լինել այն, ինչ որ են, անել այն, ինչ որ անում են։ Նրանք ստիպւած են—քանի որ ամբողջ արդիւնաբերութեան սիստեմը հիմնւած է մ ր ց մ ա ն վ ր ա յ— լարել իրենց բոլոր ճիգը՝ կատարելագործելու մեքենա-

---

տարւած իր ընչաքաղց բնազդներով, դուրս է գալիս ընդունւած սահմաններից, հասցնում է շահագործման սիստեմը անհանդուրժելի ծայրայեղութեան, ոճրի: Այդպիսիները յաճախ են պատժւել ըմբոստացող աշխատաւորութեան բազուկներով կամ այլ ձեւերով:

Ականջ դրէք թէկուզ Բրուսայի մանարանների մէջ աշխատող հայ բանւորուհիների այս աղիողորմ գանգատին (տպւած „Ազատամարտ"-ում, № 312).

„Ալ բաւական չէ՞ մեր կրած այսքան տառապանք... Մենք, Բրուսայի բանւորուհիներս, յիշեցնելով մեր „ազգասէր" ֆաբրիքատօրներու եւ տիրէքթօրներու ըրածները, բացէիբաց հրապարակ կուգանք իրենց հարցնելու, թէ ի՞նչ իրաւունքով մեզ կը ձաղկեն, իբրեւ թէ յանցանք մը գործած ըլլանք Բանւորական Միութեան համակիր ըլլալով...

„Ո՞ր պաշտօնիոյ կին եւ աղջիկ 16 ժամ տաժանակիր աշխատութեան տակ, 15—20, 30 վայրկեան միայն հանգիստ ունենալով կ՚աշխատի ու օրավարձ 2, 3, 4, 5, 6 ղրշ.-ով կրնայ ապրիլ... Մենք աղայութիւն չենք պահանջեր, այլ որոշ աշխատութիւն մը եւ բաւարար աշխատավարձ... Մենք մեր իրաւունքին մէջն ենք, կը կազմակերպւինք մեր շահուն համար"...

ները, երկարացնելու աշխատաժամերը, աճեցնելու իրենց շահը, դրամագլուխը, ձեռք առնելու մի խօսքով բոլոր հնարաւոր միջոցները, որպէսզի կուլ չը գնան մրցութեան: Նրանց հողային ու փողային սեփականութիւնները ժառանգւած են ընդհանրապէս դարերից ի վեր, սերնդէ սերունդ, ստեղծւած են պատերազմներով ու նւաճումներով, մանր հողային տարածութիւնների բռնագրաւումով, գաղութային աշխարհակալութիւններով, այլ և պետութեան գործօն աջակցութեամբ, հովանաւորող մաքսային սիստեմներով և այլն և այլն.—այդ հեռաւոր պապերի նւիրած բռնութիւնների համար չեն կարող պատասխանատւութեան կոչւել այսօրւան կապիտալիզմի ներկայացուցիչները:

Սիստեմն է ախտաւոր, սիստեմն է, որ պէտք է ծայրէծայր յեղաշրջել, վերանորոգել:

Այդ սիստեմի զօրութեամբ՝ տեխնիկայի, արհեստագիտութեան հսկայական թռիչքները, մեքենաների անդուլ կատարելագործումներն ու նորանոր գիւտերը, շոգիի, ելեքտրականութեան խօլական կիրառումները՝ փոխանակ ծառայելու մարդկային ցեղի ընդհանուր բարգաւաճման, նետում են ժողովրդային միշտ աւելի և աւելի ստւար զանգւածներ թշւառութեան գիրկը: Մեքենան, անշունչ, անկենդան աշխատաւորը, մուտք գործելով արդիւնաբերութեան մէջ, դուրս է մղում կենդանի, աշխատաւոր ձեռքերը և սրանք օրաւուր աճելով, կազմում են „աշխատազուրկ լէգէօնները“ կամ այլ խօսքով՝ *արդիւնաբերութեան պահեստի բանակը* *): Անցէ՛ք եւրոպական մայրա-

*) Աշխատազուրկների այդ „պահեստի բանակը“ նոր եւ ուժեղ զէնք է դառնում կապիտալիստական շահագործման համար. նա հնարաւորութիւն է տալիս արդիւնաբերողներին, կապիտալիստներին՝ շեշտելու միշտ իրենց անհաշտ ամբարտաւանութիւնը աշխատաւոր ժողո-

քաղաքներից և կը տեսնէք ամենուրեք տասնեակ ու հարիւր հազարաւոր պարիաներ թափառում են անգործ ու աննպատակ, թափառում են ոչ թէ ծուլութեան ախտով բռնւած, այլ որովհետև գործ չեն գտնում, տեղ չեն գտնում՝ գործադրելու իրենց ուժեղ մկանները, վաճառելու իրենց միակ սեփականութիւն— աշխատանքի ուժը:

Ահա դարձեալ մի երևոյթ, մի ախտանիշ, որ յատուկ է կապիտալիստական տնտեսութեան ձևին: Ակամայ անաշխատութեան երևոյթն է դա:

„Արուեստի հսկայական կատարելագործումները—ասում է Հ. Յ. Դ. Ծրագիրը — ըստ երևոյթին պիտի թեթևացնէին աշխատաւոր մարդուն բեռը և քիչ աշխատանքի հետ համեմատաբար աւելի մեծ բաժին յատկացնէին անոր. բայց այդ կատարելագործումները հակառակ հետևանքներ առաջ բերին, շնորհիւ մասնաւոր տնտեսութեան սիստեմին... Մեքենաներու ներմուծման հետ՝ հետզհետէ քիչցաւ աշխատաւոր ուժերու խնդրանքը, որոնք վաճառքի նիւթ դարձած են շուկայի ապրանքի պէս: Աշխատաւորին գործօն մասնակցութեան բաժինը արդիւնագործութեան մէջ միշտ աւելի և աւելի կրճատեցաւ“:

Ինչո՞ւ է այդպէս...

Բոլոր „ինչու“-ները վերածւում են նոյն հիմնական պատճառին. այդպէս է, որովհետև դրամագլուխը, արդիւնագործութեան միջոցները մենաշնորհ են ունեւոր փոքրամասնութեան ձեռքում. այդպէս է, որովհետև այդ փոքրամասնութիւնը, նրա իւրաքանչիւր անդամը առաջ է մղում իր արդիւնաբերական ձեռնարկները մրցման տիրական նշանաբանի տակ, մտա-

---

վրդի հանդէպ, աւելացնելու ըստ կարելւոյն աշխատանքի ժամերի թիւը, նուազեցնելու օրավարձը եւայլն: „Դժգոհները“ կարող են հեռանալ. նոր աշխատաւոր ձեռքեր միշտ կը գտնուին անգործների „պահեստի բանակի“ մէջ...

ծելով յար և միշտ իր սեփական դրամագլուխը աճեցնելու մասին և ոչ երբէք ընդհանուր ժողովրդական բարօրութեան։

Ա պ ր ա ն ք ա յ ի ն արդիւնագործութիւն է։ Երբեմն այդպէս չէր։ Կար ժամանակ և այսօր էլ նոյնը դեռ յարատեւում է յետամնաց երկրներում — երբ աշխատաւոր մարդը տէր էր իր արհեստանոցի ու գործիքների, ունէր և փոքր ինչ դրամագլուխ, ունէր, մի խօսքով, անկախ, ուրոյն տնտեսութիւն։ Իսկ այսօր — քաղաքակիրթ երկրներում, նաև Ռուսաստանում, Կովկասում, մասամբ Թիւրքիայում — այդ ուրոյն տնտեսութիւնները կամ իսպառ քայքայուած են կամ թէ յարաժամ քայքայւում են, մեքենային խոշոր արդիւնագործութեան ընթացքի շնորհիւ, գիւղացիները աւերւում ու գաղթում են զանգւածներով դէպի քաղաք, արհեստաւորները՝ դէպի գործարաններ... Քայքայւում է ամենուրեք մանր առեւտուրն ու արդիւնագործութիւնը, չը դիմանալով աւելի խոշորի մրցակցութեան։

„Քանի՛ յառաջադիմէ արհեստը, քանի՛ զարգանայ մեքենական խոշոր արդիւնագործութիւնը, այնքան աւելի կ'ուժովնայ ու կը ծաւալի բուրժուազիի տիրապետութիւնը։ Մանր արտադրիչները անկարող ըլլալով մրցումի դիմանալ, հետզհետէ կը զրկուին իրենց աշխատութեան միջոցներէն ու կը խառնուին օրավարձով բանող պ ր օ լ ե տ ա ր ն ե ր ո ւ շարքերը։ Արդիւնագործութիւնը կը կեդրոնանայ։ Դրամագլուխը, հարստութիւնները կ'ամբարուին շահագործող փոքրամասնութեան ձեռքին մէջ ... (Հ. Յ. Դ. Ծրագիր)։

Կարելի է ասել, չը կայ այսօր կուլտուրական երկրներում ինքնուրոյն գիւղացի ու արհեստաւոր, — բոլորն էլ ուղղակի կամ անուղղակի կրում են կապիտալիզմի աւերիչ ազդեցութիւնները *)։

---

*) „Դրամատիրութեան ժխտական ներգործութիւնը գիւղական աշխարհին մէջ ալ կ'արտայայտուի, գիւղացիական այն

Երբեմն, օր. միջին դարերում, մարդիկ արդիւնագործում էին իրենց ընտանիքի պէտքերը գոհացնելու համար, իսկ այսօր — ապրանքային շրջանի մէջ — ամբողջ արդիւնաբերութիւնը դրսի համար է, շուկայի համար։ Երբեմն արտադրում էին սոսկ գործածական արժէքներ, այսօր արտադրում են փոխանակական արժէքներ կամ ապրանք։

Եւ կատարւում է անխուսափելին։ Արդիւնաբերութիւնը անզօր է գտնւում պահպանելու հաւասարակշռութիւն պահանջի ու առաջարկի միջև, դառնում է անկանոն, անսանձ, անիշխանական։ Անկարող լինելով հետևել շուկայի, միջազգային վաճառանոցի

տարրերու ճակատագրին վրայ, որոնք կ'ապրին իրենց սեփական աշխատանքի արդիւնքով, ըլլան անոնք գիւղական ընչազուրկ աշխատաւորներ՝ կամ իրենց կտոր մը հողին վրայ աշխատող գիւղացիներ։

„Մինչդեռ ճարտարարուեստական (ինդուստրիական) աշխարհին մէջ բանւորութիւնը ուղղակի, անմիջական կերպով կը շահագործւի դրամատէրներու կողմէ, գիւղին մէջ՝ ապրանքներու փոխանակութեան շրջանին տեղի ունեցող անուղղակի շահագործումէն զատ, մենք կը տեսնենք նաև ուղղակի շահագործում հողատէրերու և գիւղական դրամատէրերու կողմէ, կապալի, օրավարձի և փոխառութեան ձևով։

„Այս ամենուն շնորհիւ դասակարգային հակամարտութիւն առաջ կուգայ նաև գիւղին մէջ, ուր մէկ կողմը կանգնած է ձրիակեր-շահագործողներու դասակարգը՝ հողատէրն ու բուրժուան, իսկ միւս կողմը՝ իր քրտինքով ապրող աշխատաւոր գիւղացիութիւնը։

„Սրելով այդ երկու դասակարգերուն յարաբերութիւնները, դրամատիրական կարգերը անուղղակի կը ծանրանան ուրեմն նաև աշխատաւոր գիւղացիութեան լայն խաւերուն վրայ, — ծանրակշիռ հանգամանք մանաւանդ այն երկիրներուն մէջ, ուր գիւղացիութիւնը կը կազմէ ազգաբնակութեան գերակշիռ տարրը“։ (Հ. Յ. Դ. Ծրագիր)։

պահանջներին ու ելևէջներին, հետապնդելով միմիայն յաւելեալ արժէքների ու դրամագլխի ամբարումին՝ ձեռնարկուները, կապիտալիստ արդիւնաբերողները, նոյն կառաղի, օրհասական մրցմամբ բռնուած, արտադրում են յաճախ պահանջի սահմաններից դուրս. լցնում են հրապարակը արդիւնքներով, ապրանքային ամեն տեսակ գանձերով, որոնք չեն մտնում շրջանառութեան մէջ, չեն գտնում սպառողներ, գնորդներ... Պայթում են ճգնաժամերը,—բնական երևոյթի անհրաժեշտութեամբ, որպէս հետևանք գերարտադրութեան, ուրիշ խօսքով՝ չափից դուրս արտադրութեան (surproduction)—առաջ են գալիս արդիւնաբերական կրիզիսները, որոնք հարուածելով կապիտալիստ դասակարգերին, անդունդ գլորելով համեմատաբար մանր, սահմանափակ արդիւնաբերութիւնները, ամենակործանիչ կերպով անդրադառնում են մանաւանդ աշխատաւոր դասակարգի ճակատագրի վրայ, փողոց են շպրտում փակւող գործարաններից նորանոր զանգուածներ, որոնք գնում են ստուարացնելու աշխատազուրկների „պահեստի բանակը“։ Մեր կովկասեան կեանքը շատ է տեսել այդպիսի աւերիչ կրիզային յորձանքներ...

Այստեղ կապիտալիզմի ամենամեծ անհեթեթութիւնն է, ամենացաւոտ հակասութիւնը... Աշխատաւոր ժողովուրդը սովի, թշուառութեան է մատնւում հէնց այն ժամանակ, երբ հրապարակները, շուկաներն ու պահեստները լի են ամեն տեսակ բարիքներով—նոյն ժողովրդի ձեռքով արտադրուած...

„Շնորհիւ մասնաւոր տնտեսութեան սիստեմին և գործարանատէրերու անընդհատ մրցակցութեան՝ դրամատիրական արդիւնագործութիւնը անկարող է հաւասարակշռութիւն պահպանել խնդրանքին և առաջարկին միջև (offre et demande) տակէ առաջ կուգայ արդիւնագոր-

ծական անիշխանութիւն, որուն էական յատկանիշներն են՝ պարբերական տագնապներ, միահամուռ անգործութիւն, սնանկութիւններ, գոյութեան ընդհանուր անապահովութիւն եւայլն: Կրտեղծուի վիճակներու ցայտուն հակապատկեր մը. մէկ կողմէ աշխատաւոր զանգուածներու մերկ, կէսանօթի գոյութիւն, միւս կողմէ դիզուած առասպելական հարստութիւններ, որոնց մէջ կը լողայ առանձնաշնորհեալ փոքրամասնութիւնը, և որոնք սակայն նոյն այդ աշխատաւորներու ստեղծագործութիւնն են: Այսպէսով բուրժուական հասարակութեան մէջ ծայրայեղ թշուառութիւնը առաջ կուգայ ծայրայեղ առատութենէն իսկ": (Հ. Ց. Դ. Ծրագիր):

Ի՞նչ խօսք՝ որ այդ տեսակ հասարակական մի սիստեմ չի կարող յաւերժանալ, սրբագործուիլ: Ի՞նչ՝ զարմանք՝ որ սօցիալիզմը վաղուց արդէն բարձրաձայն հռչակում է նրա իրաւական ու բարոյական սնանկութիւնը, գուշակում է նրա բնական, անխուսափելի կործանումը:

„Հասարակութեան ընդհանուր բնաշրջումին այդ ընթացքը—շարունակում է Հ. Ց. Դ. Ծրագիրը — առաջ բերելով մրցում անհատ շահագործողներուն միջև, մրցում՝ տարբեր երկիրներու շահագործող դասակարգերուն միջև, կռիւ դրամատէրերուն և աշխատաւորներուն միջև, կռիւ յաճախ նոյնիսկ աշխատաւորական խումբերու միջև, պատճառ կը դառնայ մարդկային անչափ կորովի ապարդիւն վատնումին: Մարդկութեան մէկ մասին բաժին ընելով մաշող աշխատանքը, միւսին՝ պարապ և զւարճամոլ կեանքը, թողնելով որ մին քայքայուի թշուառութենէ, իսկ միւսը այլասերի հարստութենէ, ան կը հանդիսանայ հզօր խոչընդոտ մը մարդկային առաջադիմութեան գործին:

„Դրամատիրութեան սնանկութիւնը ակներև է. կուլտուրական յառաջդիմութեան դրօշակը իրապէս անցած է արդէն աշխատաւոր դասակարգերուն ձեռքը, որոնք դրամատիրութեան կը հակադրեն ը ն կ ե ր վ ա ր ո ւ թ ի ւ ն ը:

Ընկերվարութեան վարդապետութեամբ առաջնորդուելով, աշխատաւոր դասակարգերը կը ձգտին վերցնել դրամատիրական մասնաւոր սեփականութիւնը և անոր հետ կապուած

անիշխանական արդիւնագործութեան սիստեմը, հասարակութեան ընդհանուր սեփականութիւն դարձնել աշխատանքի՝ արդիւնագործութեան միջոցները—հողը, հանքերը, գործարանները, հաղորդակցութեան ու փոխանակութեան միջոցները եւայլն - բովանդակ տնտեսութիւնը կազմակերպել ու ղեկավարել հ ա ւ ա ք ա բ ա ր (Հ. Յ. Դ. Ծրագիր)։

Այդ է նպատակակէտը ներկայ հասարակական էւոլիւցիայի։ Եւ այդ ապագայ հաւաքական կամ համայնական կազմակերպութեան ուժեղ սաղմերը գտնում ենք արդէն ներկայ կարգերի մէջ. գտնում ենք նախ և առաջ այն ծանրակշիռ իրողութեան մէջ, որ ներկայումս կապիտալիզմի ծոցում, արդիւնագործութիւնը ի ր օ ք կատարւում է աշխատաւորական զանգւածների ձեռքով, համախմբւած մեքենաների շուրջը, գործարանների մէջ։ Ա ր դ ի ւ ն ա գ ո ր ծ ո ւ թ ի ւ ն ը իրօք արդէն հ ա մ ա յ ն ա կ ա ն է գործարաններում. բաշխումն է, որ մնում է մասնաւոր, անհատական։ Արդիւնքները մնում են բաժին — առիւծի բաժինը — գործատէրերին։ Այդ հակասութիւնն է, որ պիտի ջնջւի. արդիւնքների, հարստութիւնների բաշխումը ևս պիտի դառնայ համայնական, ինչպէս աշխատանքը։

„Ճարտարարուեստի—ինդուստրիայի—աշխարհին մէջ դրամատիրութիւնը (կապիտալիզմ) համայնացնելով աշխատանքը, տալով բոլոր գործառնութիւնները վարձու աշխատաւորներուն *) ձեռքը, հեռացնելով դրամատէրերը արդիւնագործութեան մէջ գործօն մասնակցութենէ, նպաստելով պրօլետարներու ինքնաճանաչութեան, աճման ու կազմակերպման՝ ատով իսկ կը նախապատրաստէ ապագայ ընկերավար հասարակութեան նիւթական ու հոգեբանական խարիսխները և կը հարթէ անոր իրագործումի ճամբան։

…„Աշխատանքը համայնացած ըլլալով արդէն, ընկերավարութեան իրագործումը կը պահանջէ միայն ա ր դ ի ւ-

*) Ձեռքի եւ մտքի աշխատաւորներուն:

նագործութեան միջոցներուն — հողի, դրամագլխի, մեքենաների — համայնացումը"…

Այն ժամանակ միայն — լիակատար համայնացման շրջանում — կը չնչուին ներկայ մարդկութիւնը պատառոտող բոլոր ցաւոտ հակասութիւնները, կը սահմանուի իւրաքանչիւր երկրի մէջ, ազգի, համայնքի շրջանակներում, արդիւնագործութեան ու բաշխման կանոնաւոր մի սիստեմ, զերծ այն բոլոր ստւերներից, որ յատուկ են ժամանակակից անիշխանական տնտեսութեան. կը սահմանուի դրա հետ միասին՝ հասարակական ներդաշնակ իրաւակարգը, ուր կը տիրեն հաւասար իրաւունքների հետ և հաւասար պարտաւորութիւններ, ուր մարդիկ կ'աշխատեն և կը վայելեն, համաձայն Սէն-Սիմոնի հռչակաւոր սկզբունքին. „իւրաքանչիւրին ըստ իր արժանիքի ու ծառայութեան. իւրաքանչիւրից, ըստ իր ուժերի, կարողութեան". „A chacun, selon ses mérites, de chacun, selon ses capacités"։

Այն ժամանակ և կ'իրագործուին ամեն մի անհատի համար՝ նորագոյն տնտեսագիտութեան հռչակած երեք հիմնական իրաւունքները.

1. **Իրաւունք ապրելու մարդկայնօրէն.** *le droit à l'existence* *)։

2. **Իրաւունք աշխատելու.** *le droit au travail*։

3. **Իրաւունք վայելելու սեփական աշխատանքի լիուլի արդիւնքը** **). *le droit au produit intégral de son travail*։

---

*) Ֆրանսիական յեղափոխութիւնը, ճիշտ է, յայտարարում էր, որ հասարակութիւնը պարտաւոր է ապրեցնել „դժբախտ քաղաքացիներին, աշխատանք մատակարարելով նրանց", բայց դա սոսկ բարեգործութեան մի ձեւ էր եւ ոչ իրաւունքի նւիրագործումն:

**) Չը պէտք է հասկանալ բացարձակ իմաստով սոցիալիզմի պահանջը՝ չնչելու մասնաւոր սեփականութիւնը: Խօսքը կապիտալիստական ձեւի սեփականութեան մասին է

Այդ մեծ յեղաշրջումը իրագործելու համար է, որ սօցիալիստ աշխատաւորութիւնը ամբողջ աշխարհում կազմակերպւում է միջազգայնօրէն *), *որպէս մի հզօր ու համատարած քաղաքական կազմակերպութիւն, որ ձգտում է իր ձեռքը գրաւելու հ ա ն ր ա յ ի ն ի շ խ ա ն ո ւ թ ի ւ ն ը: Այդ վերջինի միջոցով են կատարուել բոլոր խորունկ, պատմական վերիվայրումները:*

„Օգտուելով անցեալի փորձերէն և իրենց յարաճուն ազդեցութենէն, անոնք կը պատրաստին ձեռք ձգել քաղաքական ղեկը, որպէսզի ստեղծեն նպաստաւոր պայմաններ իրենց ընկերվարական իդէալին իրագործման համար, — ռամկավարացնել ամենալայն համեմատութեամբ քաղաքական կազմակերպութիւնը, վերածել պետութիւնները դաշնակցական-ռամկավար հանրապետութիւններու, ապակեդրոնացման էն ընդարձակ հիմերու վրայ և իրագործել արտագրաւումի միջոցով ընկերվարական կարգերը“: (Հ. Յ. Դ. Ծրագիր):

(հողերի, հանքերի, գործարանների, մեքենաների, երկաթուղիների, բանկերի եւայլն), որի վրայ երկարօրէն ծանրացանք եւ որ պէտք է դառնայ ամենուրեք ամբողջ ժողովրդի, համայնքի սեփականութիւն: Սոցիալիզմի պահանջն այդ է: Մասնաւոր սեփականութիւնը անհատական գործածութեան առարկաների վերաբերմամբ՝ բնականաբար չի կարող ջնջուել:

Զը պէտք է նոյն բացարձակ մտքով ընդունել եւ այն սկզբունքը՝ թէ իւրաքանչիւրը պէտք է ստանայ ու վայելէ իր աշխատանքի լ ի ա կ ա տ ա ր արդիւնքը: Այդ արդիւնքի մի մասնիկը, բնականաբար, կը յատկացուի ընդհանուր, հասարակական պէտքերի:

*) *Ընկերվարական շարժումը իր էութեամբ մ ի ջ ա զ գ ա յ ի ն է: Բոլոր երկիրներու աշխատաւոր տարրերը, իբրև միևնոյն տնտեսական սիստեմի զոհեր, պէտք է միանան և արդէն կը միանան համաշխարհային հզօր եղբայրակցութեան մը մէջ, ու գիտակ իրենց բարձր առաքելութեան, վստահ իրենց յաղթանակի վրայ, կը դիմեն կազմակերպուած պայքարի ճամբով դէպի նոր, ընկերվարական կարգերը: (Հ. Յ. Դ. Ծրագիր):*

Իւրաքանչիւր յեղափոխութիւն ոչ այլ ինչ է, բայց եթէ իշխանութեան փոխանցումն՝ մէկ դասակարգից դէպի միւսը։ Երբեմն, ֆրանսիական Յեղափոխութիւնից առաջ, քաղաքական ղեկը ֆէօդալիզմի, աւատականութեան ձեռքում էր (ազնւականութիւն, կղեր)․ վրայ հասաւ երրորդ դասակարգը կամ բուրժուազիան, որ—իբրև կրող արդիւնագործութեան նոր ձևերի և ուժերի, որոնք անհաշտելի էին հին, ֆէօդալական սեփականատիրութեան հետ — խլեց քաղաքական ղեկը աւատապետութիւնից։ Այսօր նոյն հանրային իշխանութիւնը — պարլամենտ, օրէնք, զօրք, ոստիկանութիւն ևայլն — գործիք է այդ բուրժուազիայի ձեռքում՝ ստրկացնելու աշխատաւոր ժողովուրդը։ Բայց ահա ծառանում է նա ինքը այդ ժողովուրդը, իբրև չորրորդ դասակարգ,—իբրև իր հերթին կրող նորագոյն, հաւաքական արդիւնագործութեան ձևերի, որոնք նմանապէս անհաշտելի են բուրժուական սեփականութեան ամբողջ սիստեմի հետ — և նա ձգտում է տիրանալու քաղաքական իշխանութեանը, ոչ թէ իր հերթին ճնշելու համար որևէ դասակարգ, այլ միանգամ ընդմիշտ ոչնչացնելու դասակարգային տիրապետութեան ու մենաշնորհի բոլոր հետքերը…

***

Ինչպէս ամեն մի ուրիշ գաղափար՝ սօցիալիզմի մեծ գաղափարը ևս չւեց Արևմուտքից դէպի Արևելք։ Նա մուտք գործեց նաև մեր իրականութեան մէջ. ուղղակի Եւրոպայից և անուղղակի՝ Ռուսաստանի միջոցով։ Ա՛հ, ի՛նչպէս մեր հայկական աւանդամոլները կուզէին թումբ կանգնեցնել նրա առջև, այլև բոլոր ուրիշ եւրօ-

պական, ռամկավարական հոսանքների առջև։ Կեանքը, սակայն, աւելի ուժեղ է, քան նրանց բարացած, ռուտինային կամեցողութիւնը։ Կեանքի մէջ արդէն ստեղծւում էին պայմաններ, ստեղծւում էր հող՝ նոր գաղափարի պատւաստման համար։ Խոշոր գործարանային ինդուստրիան զարգանում էր կովկասեան մեծ կենտրոններում, արդիւնագործութիւնը կենտրոնանում էր և հարիւր հազարաւոր աշխատաւորներ համախմբւում էին մեքենաների ու հանքերի շուրջը։ Նման պատճառներ, նման հետևանքներ։ Դասակարգային պայքարը բորբոքւեց և այդտեղ—և սօցիալիզմը յորձանք տւեց լայն ալիքներով անդրկովկասեան քաղաքների ու դաշտերի վրայից։

Յափշտակութիւններ, չափազանցութիւններ եղան, անշուշտ։ Ո՞ր մեծ գաղափարը չի արտադրել հիւանդոտ ծայրայեղութիւններ... Մեզ մօտ այդ ախտաւոր, պաթօլօգիական յափշտակութիւնը շեշտւեց գուցէ աւելի մեծ չափով։ Սօցիալիզմի մի թեւը կար—սօցիալ-դեմօկրատիզմ անունով—որ հասցրեց գաղափարը անօրինակ խեղաթիւրման և բռնեց ազգայնական և մի շարք ուրիշ հարցերի մէջ միանգամայն տարօրինակ, հակասօցիալիստական դիրք *)։ „Հիւանդոտ յափշտակութիւնը“ ծայր տւեց և մեր դաշնակցական շարքերում, դասակարգային կռիւը տեղ-տեղ այլասեռւեց, ստացաւ այն նախնական կերպարանքը, որ յատուկ է սօցիալական շարժման առաջին օրերին։ Յայտնի է, որ 19-րդ դարու սկզբներին, Եւրոպայի, Ամերիկայի այլևայլ տեղերում բանւորները իրենց կեղեքման ու թշւառութեան համար երբեմն վրէժ էին հանում գործատէրերից, կապիտալիստներից, յարձակւելով գործարանների, մեքենաների,

*) Մի քանի իրողութիւններ յիշատակւած են նախորդ էջերում։

նոյնիսկ երկաթուղիների վրայ, ջարդելով ու աւերելով։ Մեզ մօտ վանդալականութիւնը ուրիշ ձեւեր ստացաւ, բարեբախտաբար նա մնաց կղզիացած, սպորադիկ, — բացառապէս այն վայրերում, ուր չէր լսել ծրագրային առողջ խօսքը, չէր կատարել գիտակցական շարժման պրօպագանդ։

Ուրիշ մոլորութիւն։ Սօցիալիզմը, դասակարգային նկատումներից զատ, պէտք է ղեկավարուի ընդհանուր կուլտուրայի ու առաջադիմութեան նկատումներով։ Այդ առաջադիմութեան գրաւականներից մէկն է, անշուշտ, ազգային արդիւնաբերութեան, ինդուստրիայի զարգացումն ու բարգաւաճումը, որ երբեմն խաթարւում էր սօցիալիստական — գլխաւորապէս ս.-դ.-ական — տակտիկի ծայրայեղութիւններով, բացառապէս հայ կապիտալիստների դէմ ուղղուած գործադուլային համաճարակներով...

Ինքը մարքսիստական դօգմի հեղինակաւոր ներկայացուցիչ Կաուցկին բազմիցս յայտարարել է իր գրուածքներում, թէ կան վայրկեաններ, երբ սօցիալիստական կուսակցութեան համար անհրաժեշտ է լինում գերադասել պրօլետարիատի անմիջական շահերից՝ ընդհանուր հասարակական պրօգրէսի շահը։ Սօցիալիզմը ոչ այլ ինչ է, բայց եթէ տնտեսական զարգացման պրօցէս և տնտեսական մեծ խանգարումներն ու աւերումները, բնականաբար, դանդաղեցնում են նրա ընթացքը։ Դասակարգային կռիւը արդար ու օրինաւոր է, բայց նա չը պէտք է արտայայտուի նախնական բիրտ ձեւերով։ Եւ մանաւանդ մոռանալու չէ, որ ոչ մի տեղ աշխատաւորութիւնը շահագրգռուած չէ իր ազգակից բուրժուազիայի աւերումով։ Մասնաւորապէս հայ պրօլետարիատին — որ մատնուած է Անդրկովկասում բացառիկ վիճակի, դուրս վտարուած գրեթէ բոլոր օտար ու կառա-

վարչական ինդուստրիանից—բնաւ ձեռնտու չէ հայ արդիւնաբերող դասակարգի տնտեսական քայքայումը: Հայ աշխատաւորութիւնը, ձեռք ձեռքի տուած իր օտարազգի վիճակակիցների հետ, կը ձգտէ, անշուշտ—դա իր բնական, անկապտելի իրաւունքն է—կազմակերպւած կռւի ճանապարհով զիջումներ խլել հայ բուրժուազիայից, իր սև կեանքի մակերևոյթը բարձրացնելու նպատակով, բայց նա երբէք չը պիտի ցանկանայ, որ այդ համացեղ արդիւնաբերող դասակարգը կուլ գնայ ուրիշ, դրացի կապիտալիստների մրցման մէջ և տնտեսապէս կորստեան մատնուի:

Ո՞վ կարող է սակայն այդ ստուերոտ ու կղզիացած երևոյթների հանդէպ, ուրանալ սօցիալիստական պրոպագանդի դրական *կողմերը մօտիկ ալէծուփ անցեալի մէջ: Ո՞վ կարող է չափել այն ահագին փոփոխութիւնը, որ կատարւում էր մեր մասսաների գիտակցութեան ու տրամադրութեան մէջ—մասսաների՝ որ մինչ այն մատնուած էին սպարտական իլոտների վիճակին, որոնց անխնայ ոտնահարում էր և սանձարձակ շահագործում հայ նորաբուսիկ ու ամբարտաւան կապիտալը... Վերածնութեան մի պատկառելի աշխատանք էր դա, որ կատարւեց—ոչ միայն աշխատաւոր զանգւածների, այլ և շատ թէ քիչ ինտելիգենտ խաւերի մէջ—սօցիալիստական կուսակցութիւնների ձեռքով: Դեռ մի կողմ ենք թողնում այն անհամար բարելաւումները, որ նուաճւում էին Դաշնակցութեան ու այլ հատւածների ուժերով, աշխատաւոր դասակարգերի համար, քաղաքներում ու դաշտերում,—բարելաւումներ նիւթական, առողջական կացութեան տեսակէտից, որոնք, աւա՜ղ, այսօր արդէն յետ են խլւում յաղթական ռէակցիայի ճանկերով, և նորէն անդրկովկասեան աշխատաւորութիւնը—տեղատւութեան հզօր ալիքների վրայ—մղւում է դէպի նախկին իլօտական կացութեան անդունդը...*

Սակայն, նա ունի մի փառաւհեղ նուաճում, որ չեն խլի նրանից ոչ յաղթական բռնապետութիւնը, ոչ էլ վրէժխնդրութիւնից մոլեգնած կապիտալիզմը. դա նրա արթնացած գիտակցութիւնն է...

***

Սօցիալական խնդիրը՝ աշխատաւորական շարժման հետ, արդէն տեսանք, ճանապարհ է բաց անում և Թիւրքիայում։ Մենք յիշեցինք այն տարերային շարժումները, որ պայթեցին կայսրութեան եւրոպական նահանգներում, նոր ռէժիմի հռչակումից անմիջապէս յետոյ։ Կառավարութիւնը, խիստ յուզուած այդ անախորժ անակնկալից, փորձեց խեղդել շարժումը խանձարուրի մէջ։ Պարլամենտի երամական մեծամասնութեան սիրայօժար համաձայնութեամբ և հակառակ հայ ու բուլգար պատգամաւորների եռանդագին բողոքներին — ֆէրիդ փաշան արշաւեց գործադուլային իրաւունքի և նորակազմ սինդիկատների, արհեստակցական միութիւնների դէմ։

Արշաւանքը, սակայն, առաջ բերեց բուռն հակազդեցութիւն Մակեդօնիայում և շատ չ՚անցաւ, Բրիւսսէլի Սօցիալիստական Միջազգային Բիւրօն հաղորդեց „Դրօշակի“ խմբագրութեանը, որ կազմուում է կենտրօն-Սալօնիկում Ինտերնացիօնալի մի նոր ճիւղաւորութիւն։ Մինչ այս, Թիւրքիոյ կուսակցութիւններից Հ. Յ. Դաշնակցութիւնն էր միայն ընդունուած Միջազգային Աշխատաւորութեան ընտանիքի մէջ։ Յոյս կայ, այդպիսով, որ ներկայ օգոստոսին Կօպենհագում գումարուելիք համաշխարհային սօցիալիստական կօնգրէսին երկու ճիւղերը, հայկականն ու մակեդօնականը — վերջինս կազմուած մահմեդական ու քրիստոնեայ տարրերից —

կը ներկայանան թև թևի... Գաղափարը նետուած է արդէն և նա կերթայ անդիմադրելի առաջխաղացութեամբ, շարունակական նուաճումներով։

Երկու կազմակերպութիւնները բնաւ չեն տարուած ցնորքներով։ Նրանք գիտեն, որ Իդէալը,—մարդկանց ու ժողովուրդների ճշմարիտ հաւասարութիւնը համայնական գոյքերի ու կարգերի մէջ—տակաւին շատ հեռու է, որ նա հեռու է՝ անգամ զարգացած, առաջադէմ Արևմուտքում։ Այդ, ի հարկէ, չի նշանակում, թէ պէտք է մի կողմը թողնել այդ իդէալը, իբրև անօգուտ, անհասանելի։

Իւրաքանչիւր իդէալ պատմութեան յայտնի վայրկեանի մէջ եղել է „ցնորք“, բանդագուշանք։ Այդպէս— թէկուզ ժողովրդական գերիշխանութեան մեծ սկզբունքը...

Արիստոտէլի պէս մտքի տիտանը ցնորք էր համարում հասարակական մի վիճակ, առանց ստրկութեան (հնադարեան ձևի ստրկութեան)... Դէկարտի պէս փիլիսոփան անհնարին էր համարում, որ մարդիկ երբևիցէ կարողանան թևեր ստեղծել և ճախրել օդային տարածութիւնների մէջ։ Եւ սակայն տեսէ՛ք այսօր այդ թևաւոր տիտաններին—Բլէրիօներին, Լաթամներին—որ ժամերով լողում են երկնային կապուտակում, մաքառում են ահաւոր տարերքների դէմ, նուաճում են օդերն ու քամիները, յարուցանելով ամբողջ մտածող տիեզերքի հիացմունքն ու ցնծութիւնը... Մարդկային մեծագոյն իդէալներից մէկն ևս իրագործուած...

Եւ ի՞նչ են մարդիկ ու ժողովուրդները, առանց այդ ջինջ, վեհափառ, կենդանարար իդէալների...

— Խղճուկ, պրօզայիկ, անհրապոյր մի գոյութիւն, խորասուզուած գետնաքարշ իրականութեան, terre à terre ռէալիզմի ճահճի մէջ..

Իդէալները անհրաժեշտ են։ Նրանց անունով պէտք է գիտնալ ոգևորուել, նրանց պէտք է տաքացնել, ամրապնդել սրտի հզօր թռիչքների, խանդավառութեան ալիքների մէջ... „Մի՛ մոռացէք, բարեկամ, որ մեծ գործեր կատարելու համար, պէտք է լինել ոգևորուած“ — ասում էր Սէն-Սիմօն իր կեանքի վերջալոյսին, իր մահուան հանգրուանում։ Իդէալը ճառագայթաւէտ Արեւն է, որ սփռում է ամենուրեք իր կենսատու ջերմութիւնը.. Ի՜նչ ողբալի տափակութիւններ են այն մարդիկ, որոնք զուրկ են աստուածային այդ պարգևից, որոնց սիրտը չի բաբախել մեծ, վսեմ գաղափարների, գործերի համար, որոնց գաճաճ երևակայութիւնը գէթ մի անգամ չի ազատուել առօրեայ գորշ իրականութեան շրջանակներից..

Իդէալը, այո, յար և միշտ պէտք է բարոզել, արծարծել, պէտք է ձգտել ազնուացնել ժողովուրդներին, երիտասարդութիւնը, նրա երկնային, անապական մթնոլորտում, նրա բիւրեղ-յստակութեան մէջ։

Բայց և պէտք է որոշ չափով յարմարել իրականութեան. ս կ զ բ ո ւ ն ք ը բարձր ու ջինջ պահելով հանդերձ, պէտք է ունենալ միաժամանակ բանաւոր, կենսայարմար տ ա կ տ ի կ։

Համաշխարհային սոցիալիզմը տոգորուած է այդ երկու հիմնական մտահոգութեամբ։ Նա մէկ թևով ճախրում է եթերային բարձունքներում, ազդարարելով շարունակ բազմաչարչար մարդկութեանը գալոց երկրաւոր դրախտի մասին, — միւս թևով սահում է անդադար կեանքի գձուձ ու պղտոր մտահոգութիւնների, մրցումների, պայքարների վրայից, ձգտելով ըստ կարելւոյն բարւոքել այդ պղտոր իրականութիւնը, բարձրացնել աստիճանաբար նրա ալէծուփ մակերևոյթը, մօտեցնել աստիճանաբար — ի դ է ա լ ի ն։ Այնտեղ, հ օ ր ի զ օ ն ո ւ մ՝ մարդկային վերջնական ազատագրութեան պայծառ

փարոսն է, այստեղ, կեանքի մէջ՝ ամենօրեայ տաժանելի պայքարն է, ճիգերի ու մասնակի նուաճումների յաւիտենական դրաման։ Այնտեղ՝ իդէալն է, այստեղ՝ տակտիկը։ Այնտեղ՝ ծրագրի լիակատար իրականացումն է, maximum-ը, այստեղ՝ նուազագոյն ծրագրի հետապնդումն է, minimum-ը։ Մեղանչում է նա, որ տարւում է միմիայն իդէալով և անգիտանում տակտիկի մտահոգութիւնները։ Մեղանչում է հաւասարապէս և նա, որ թաղւում է գետնաքարշ ու պատեհապաշտ ռէալիզմի (իրապաշտութեան) մէջ և աչքից թողնում հեռաւոր, պայծառ փարոսը—Իդէալը։

Բոլոր երկրներում սօցիալիզմը ունի իր մաքսիմալ կամ առաւելագոյն և մինիմալ կամ նուազագոյն ծրագիրը։ Առաջինը՝ իրագործելի հեռաւոր ապագայում, սօցիալական մեծ յեղափոխութեան վաղորդայնին։ Երկրորդը՝ իրագործելի արդէն ներկայ հասարակական կարգերի մէջ։

Առաջինը կ՚իրագործւի այն ժամանակ, երբ ըստ Դաշնակցութեան ծրագրի արտայայտութեան.

„Աշխատաւոր դասակարգերը կը վերացնեն դրամատիրական մասնաւոր սեփականութիւնը և անոր հետ կապւած անիշխանական արդիւնագործութեան սիստեմը, հասարակութեան ընդհանուր սեփականութիւն կը դարձնեն արդիւնագործութեան միջոցները“։

Այն ժամանակ միայն, յիրաւի, կ՚ոչնչանան դասակարգային առանձնաշնորհումները, կը ջնջւի այս աշխարհից „ստրկի“, „հպատակի“ անպատիւ երևոյթը, հարստի և աղքատի ոճրանիւթ հակասութիւնը և ամբողջ մարդկային ցեղը կը կազմի մէկ ներդաշնակ, ամբողջական դասակարգ—աշխատանքի դասակարգը։ Այն ժամանակ միայն — ինչպէս ասում է նոյն Հ. Յ. Դ. Ծրագիրը — կը հարթւի ճանապարհը

անհատի ազատ, բազմակողմանի և ներդաշնակ զարգացման համար, որ գերագոյն նպատակն է հասարակական պրօգրէսի, մարդկային դարաւոր յառաջխաղացութեան։

Բայց „տնջւածների և հալածւածների այդ իդէալը“ չի կարող իրագործւել մոգական գաւազանի մի հարւածով. մարդկութեան այդ մեծագոյն Յեղափոխութիւնը չը պիտի կատարւի յանկարծական մի ժեստով, այլ պիտի պատրաստւի քայլ առ քայլ, աստիճանական և հիմնական ռէֆօրմներով. ռէֆօրմներ՝ որոնք արդէն ներկայ հասարակական կարգերի մէջ պիտի ձգտեն հետզհետէ բարւոքել չքաւոր և իրաւազուրկ ընդհանրութեան վիճակը, բարձրացնել նրա նիւթական և մտաւոր ու հոգեկան մակերևոյթը. մինչև որ նա ընդունակ, ձեռնհաս լինի՝ գաղափարական մտաւորականութեան հետ ձեռք ձեռքի տւած՝ նւաճել և կառավարել նոր աշխարհը...

Ահա այդ աստիճանական բարենորոգման գործին է ծառայում սօցիալիստների նուազագոյն ծրագիրը։ Նա քիչ է տարբերւում ռամկավարական, դեմօկրատ կուսակցութիւնների մաքսիմալ ծրագրից։ Եւ նա իր էական պահանջներով գրեթէ նոյնն է բոլոր երկրներում։

Ահաւասիկ Դաշնակցութեան նւազագոյն ծրագրի *) մի շարք էական կէտերը.

1. Հողերու համայնացում։
2. Հողը կը դադրի մասնաւոր սեփականութիւն և վաճառքի նիւթ ըլլալէ։
3. Արքունական, կալւածատիրական, կրօնական հիմնար-

*) Նա կրում է „սօցիալական“, „տնտեսական“ կամ „աշխատաւորական“ անունը: Այդ ծրագիրը վերաբերում է նաեւ Անդրկովկասին:

կուլթիւններուն պատկանող, ինչպէս և բոլոր այլ տեսակի հողերը դարձնել ժողովրդի սեփականութիւն։

4. Հողէն օգտուելու իրաւունքը կը պատկանի աշխատաւորներուն, — իւրաքանչիւր աշխատաւոր իրաւունք ունի այն չափով հող մշակելու, որ կարողանայ, առանց ուրիշի աշխատանքը շահագործելու, բաւարարութիւն տալ իր և իր ընտանիքի սպառողական պահանջներուն։

5. Խափանում անուղղակի հարկերու (պերճանքի առարկաներէ զատ)։

6. Յառաջատական (progressif) տուրք եկամուտի և ժառանգութեան։ Հարկէն բոլորովին ազատել որոշ չափէ մը պակաս հասոյթ ունեցողները։

7. Պետական ամենամատչելի վարկ։

8. Պետական ապահովագրութիւն երաշտի, կարկուտի, հեղեղի և ուրիշ բնական պատահարներու դէմ։

9. Զարգացում սպառողական, արդիւնաբերական և գործակցական ուրիշ բնոյթ ունեցող ձեռնարկներու։

10. Օրական 8 ժամուայ աշխատանք բանուորներու համար, թէ քաղաքներու և թէ գիւղերու մէջ։ Առողջապահական տեսակէտով առանձնապէս վտանգաւոր ու վնասակար գործերու մէջ՝ աւելի պակաս։

11. Սահմանում նուազագոյն օրավարձի՝ քաղաքներու և գիւղերու մէջ։

12. Աշխատանքի օրէնսդրական հովանաւորում գիտական, առողջապահիկ պահանջներու համեմատ։

13. Բանուորներու ապահովագրում դժբախտ պատահարներու, հիւանդութեան, ծերութեան և անգործութեան հանդէպ, պետութեան և գործատէրերու հաշւով։

Տեղը չէ մի առ մի քննել, պարզաբանել այդ ծրագրային յօդուածները։ Հողի համայնացում, Անուղղակի և ուղղակի հարկատուութիւն, Պրոգրէսիվ տուրք, Կօօպերատիվ միութիւններ քաղաքներում ու դաշտերում ևայլն—ծանրակշիռ խնդիրներ են, որոնցից իւրաքանչիւրը կարող է նիւթ լինել մի առանձին գրուածքի և որոնք պէտք է դառնան մեր գործող երիտասարդու-

թեան եռանդուն ուշադրութեան և ուսումնասիրութեան առարկայ *)։ Դրանց շուրջը մղւում է այսօր տենդային պրօպագանդ այն բոլոր երկրների մէջ, ուր ձըգտում են ստեղծել, կազմակերպել ժամանակակից ռամկավարութիւն։

Դիւրին չէ, անշուշտ, ի կատար ածել նման ծրագիր Թիւրքիայ պէս մի երկրում, ուր պարլամենտական կազմի մէջ 265 անդամներից $^{2}/_{3}$-ը մեծ կալուածատէրեր ու հօջաներ են... Բայց նախ ծրագիրները չեն ընդունւում այսօր իսկ իրագործելու համար, երկրորդ՝ պարլամենտական կազմը կարող է շուտով փոփոխուել և երրորդ՝ նոյնիսկ այսօր էլ այդ մինիմալ ծրագրի մի քանի կէտերը արծարծուելու և իրականանալու հող ունին։

Որքա՜ն մանաւանդ այժմէական և հրատապ է — մասնաւորապէս, մեր թշուառ, կողոպտուած ժողովրդի համար — հ ո ղ ա յ ի ն հ ա ր ց ը... Նա կենտրօնական պրօբլեմն է օսմանեան սահմանադրութեան և երկար ժամանակ, ըստ երևոյթին, կը մնայ այդպիսին։ Ահա միջնադարեան վայրագ ֆէօդալի տիպարներ — Մուսա բէյեր, քեօր Հիւսէյիններ — որ յենուած իրենց բռունցքի ուժի վրայ, հակառակ ամեն օրինաւորութեան, յափշտակում են հայ սովալլուկ ժողովրդի ձեռքից հողի ահագին տարածութիւններ. Վանի, Բիթլիսի վիլայէթներում — և բոլոր ցասումներն ու բողոքները մնում են առ այժմ „ձայն բարբառոյ"։ Զրկւում են և թիւրք ու քիւրդ երկրագործ համայնքներ իրենց վաստակի միակ աղբիւրից, բայց մեծագոյն զոհն է, հարկաւ, հայ աշխատաւոր գիւղացիութիւնը։ Այն ժամանակ — սև, անէծքի տարիներում — երբ ջարդի ուրագանը դուրս էր նետում այդ երկրաւոր տարտարոսից հազարաւոր „ֆլաներին",

*) Տես „Յառաջի"-ի գրադարանից լոյս տեսած հրատարակութիւնները: Տես եւ Արարատսկու „Սոցիալիստի նամակները":

այդ գիշատիչ վամպիրները անպատիժ զաւթում էին փախստականների գոյքերը իրապէս ու իրաւապէս տիրանում նրանց և այսօր նրանք ամուր նստել են յափշտակուած հողերի վրայ և սահմանադրական կառավարութիւնը չի ցոյց տալիս շիտակ, անկեղծ տրամադրութիւն՝ վերջ դնելու այդ աղաղակող անիրաւութեան։

Քանի դեռ չեն մարմնանայ մի շարք սոյնանման խորունկ ռէֆօրմներ օսմանեան կեանքում, քանի դեռ „հուրիէթի“ և „ադալէթի“ գոչիւնները կը շարունակեն սահել միայն ժողովրդական ցաւոտ կեանքի մակերևոյթից, քանի դեռ հսկայական աշխատաւոր մեծամասնութիւնը կը դեգերէ մերկ, կիսաքաղց գոյութեան ճիրաններում, — սահմանադրութիւնը պիտի մնայ մի ողբալի պատրանք, և կատարուած յեղափոխութիւնը — Ռօբեսպիէռական արտայայտութեամբ — պիտի լինի սոսկ փոխանցում՝ մէկ ոճրից դէպի միւսը։

Ռէֆօրմների այդ նուազագոյն ծրագրի շուրջը՝ մենք կը ջանանք միացնել բոլոր անկեղծ ռամկավարական տարրերը պարլամենտի մէջ և նրանից դուրս։ Շատերը կան — անբուժելի թերամտութեամբ ու կրետինիզմով վարակուած — շատ շատերը հայ ու մահմեդական շըրջաններում, որ անուանում են մեր ծրագիրը ցնորական, վնասակար, նոյնիսկ „վտանգաւոր“ պետութեան ամբողջութեան համար... Եւ սակայն, մեր պահանջները՝ թէ քաղաքական, թէ տնտեսական՝ բղխում են կենդանի իրականութիւնից, մեր բոլոր տենչերը ուղղուած են դէպի նոյն մեծ նպատակը — ազատ պահել այդ հոգևարքերկիրը, ամբողջ օսմանեան պետութիւնը, նոր, հնարաւոր արկածներից ու ցնցումներից, ա զ ա տ՝ բոլոր ազգային հատուածների բարօրութեան հաւատամքի մէջ։

Մենք ենք, որ քաղաքական ապակենտրոնացման մեր նախագծով առաջադրում ենք լաւագոյն միջոցը, ապա-

հովելու պետական ամբողջութիւնը, հանգցնելու կենտրոնախոյս լաւաների մշտաբորբոք հրաբուխը, որ այսօր իսկ ալբանական ապստամբութեամբ դող է պատճառում Թիւրք ու օտար դիւանագէտներին։ Մենք ենք դարձեալ, որ տնտեսական կամ սօցիալական մեր ծրագրով ու մեր իդէալով նպատակ ունինք և պիտի ձգտենք — մեր քսանամեայ արիւնավառ վէպերգութեան ներշնչած կորովով — ստեղծել այն կուռ, մեծագործ *շաղախը*, որ պիտի միացնէ այդ կենտրոնախոյս, հակամարտ, ատելութեան դարաւոր թոյնով մշակուած՝ այլադաւան ազգութիւնները։ Դա *միջազգայնութեան* (ինտերնացիօնալիզմ) արծարծումն է, մեր ծրագրային պրօպագանդի անհրաժեշտագոյն նիւթը, կարելի է ասել, նրա վախճանական նպատակը։ Փարած մեծ, Համաշխարհային Ինտերնացիօնալին — մենք պիտի աշխատենք կազմակերպել մեր փոքրիկ, սահմանափակ *օսմանեան ինտերնացիօնալը*, որից դուրս չիք փրկութիւն և որի աստիճանական իրականացման մէջ միայն՝ կարող է ապրել ու բարգաւաճել մեր ազգային, ժողովրդական էութիւնը ևս։

Տեսնենք, թէ ինչպէս է պատկերանում մեզ սօցիալական մեր ծրագրի պրօպագանդը, նրա աջողութիւնների և անաջողութիւնների հեռանկարը, օսմանեան և մասնաւորապէս Թիւրքա-հայկական միջավայրում։ Տեսնենք, թէ ինչ պայմաններում կարող է այդտեղ կազմակերպուել միջազգային աշխատաւորական մեծ կռիւը ընդդէմ բոլոր կեղեքիչների, աւատական, բուրժուա, կղերական, վաշխառու ևայլն տզրուկների — մի կռիւ, որի ծանօթ նշանաբանն է. „բոլոր ազգերի աշխատաւորներ, — միացէ՛ք“։

* * *

Այո՛, քսան տարի շարունակ տեսինք աշխարհին անհատական և խմբական հերոսութիւնների, չքնաղ, անձնուրաց հայրենասիրութեան բազմաթիւ ապացոյցներ — այսուհետև մեր կենտրոնական պարտաւորութիւնը պիտի լինի — հետևելով արևմտեան ռամկավարութեան, հաւատարիմ մեր ծրագրին, անցեալին, աւանդութիւններին — արծարծել ու իրագործել ներդաշնակ մ ի ջ ա զ գ ա յ ն ո ւ թ ե ա ն գաղափարը այն հաւաքական հայրենիքում, որի անունն է Տաճկաստան։

„Հաւատարիմ մեր անցեալին“ — անտարակոյս. միջազգայնութեան սկզբունքը եղել է սկզբից ի վեր անկիւնաքարը մեր հասարակական-քաղաքական դաւանանքի։ Մեր ծրագիրը նուիրագործել ու խրախուսել է այն. մեր տակտիկը, մեր ընկերների խօսքն ու գործը անխեղծօրէն հանդէպ են գնացել մեր դրացիների լաւագոյն տարրերի համերաշխութեան հազւադէպ յորդորներին ու հրաւէրներին։

Քարոզել ենք այն՝ նոյնիսկ այնպիսի ժամանակներում, նոյնիսկ այնպիսի միջավայրերում, ուր դրացինները պատասխանել են մեզ վագրի հռնդիւնով և գնդակների սուլոցներով… Մեր պաղատագին կոչերը զարնուել են ապառաժներին, մեր հօյակապ պրոպագանդիստները, համերաշխութեան ու եղբայրութեան մեր առաքեալները նամարդօրէն մորթուել են քրդերի ձեռքով։ Մի պահ, անողորմ դժոխք չէզոքացրել է ամենաազնիւ ճիգերը, չորացրել է մարդկայնութեան ու հասարակականութեան ամենաչքնաղ ծաղիկները…

Չենք վհատել և քարոզել ենք միշտ, հաւատալով, որ մի օր, վերջապէս, կ'ամոքուի նոյնիսկ այդ ամեհի գազանանոցը. կը փարատուի նախապատմական բարքերի այդ աղջամուղջը և մենք կը հնձենք մեր սերմանած գաղափարների պտուղը։

Մեր կռիւը — շարունակ յայտարարել ենք այդ — եղել է միշտ բռնակալ կառավարութեան դէմ, ոչ այս կամ այն ժողովրդի, ինչպէս ձգտել են հաւատացնել մեր թշնամիներն ու հակառակորդները, սկսած տխրահռչակ Մուրադ բէյից — որ 12 տարի սրանից առաջ իր մի բրօշիւրով *) ներկայացնում էր հայ յեղափոխականներին յաչս Եւրոպայի, իբրև մահմեդական ժողովուրդների երդուեալ ոսոխներ, նրանց դահիճներ ու կոտորողներ — մինչև „Երիտասարդ Թիւրքիա“-ի ուրիշ կարգի ռահվիրաները, աւելի անկաշառ ու գաղափարական, որոնք սակայն պատուել են հայ մարտիկներին նոյն մուրադական տերմինօլօգիայով ու եռանդով։

Եղել են, անշուշտ, զուտ վ ր է ժ խ ն դ ր ո ւ թ ե ա ն գործողութիւններ ևս հայ յեղափոխական պայքարի միջոցին, եղել են անհատական մահափորձեր այս կամ այն տաճիկ կամ քիւրդ վամպիրի դէմ, եղել է և խմբական մեծ յարձակումը Խանասօրի դաշտում մի սարսափելի աշիրէթի դէմ, բայց այդ բոլոր վրիժառու գործողութիւնները ուղղուած են եղել ոչ մահմեդականութեան, ոչ քիւրդ ու տաճիկ ժ ո ղ ո վ ո ւ ր դ ն ե ր ի, այլ միայն նրանց այն արիւնարբու ցեց-անհատների ու հատուածների դէմ, որոնք յօժարակամ գործիք են դարձել բռնակալութեան ձեռքում և անանցանելի խոչընդոտ կանգնել յեղափոխութեան ճանապարհին։ Պրօվօկացիան, գիտակցական գրգռումը դրացի ժողովուրդների դէմ երբեք տեղ չի գտել ոչ „Դաշնակցութեան“, ոչ էլ ուրիշ հայ յեղափոխական կուսակցութիւնների տակտիկի մէջ, ի բաց առեալ մի քանի թեթև վրիպումներ շարժման սկզբներում — հայ յարձակողական նացիօնալիզմի կարճատև տիրապետութեան օրով — վրի-

---

*) *Force et faiblesse de la Turquie.*

պումներ՝ որոնք, սակայն, չեն անցել ամուլ խօսքի ու թէօրիական պրօպագանդի շրջանակներից։

Քիչ բան շահեցինք համերաշխութեան երկար տարիների մեր քարոզներով. հազիւ կարողացանք զինուորագրել մեր դրօշակի տակ մի քանի տաճիկ ու քիւրդ „ընկերներ“ — տարապայման ծնունդ մի զարհուրելի իրականութեան — որոնք հաւատարմութեամբ աջակցեցին մեզ և նոյնիսկ կռուեցին մեր ազատամարտը Արաուլի ստորոտներում ու Սասունում։

Ժամանակները փոխւում են, պրօպագանդի ճանապարհը հարթւում է ու լայնանում։ Մահմեդական զանգուածների հոգեբանութիւնը առայժմ նոյնն է ընդհանուր առմամբ, բայց այլևս չը կան նախկին անջրպետները. կայ որոշ հնարաւորութիւն՝ մօտենալու, շփւելու մեր դրացիների հետ, ստեղծւում է կամաց-կամաց մի մթնոլորտ, ուր ազգերի համերաշխութեան, միջազգայնութեան գաղափարը, կարող է բողբոջել ու զարգանալ։

Կենտրօնական կառավարութիւնը իր կողմից, անտարակոյս, շատ բան կարող է անել՝ խախտուած կապերը վերահաստատելու, բացուած վէրքերը կազդուրելու և ազգամիջեան համերաշխութիւնը ամրապնդելու նպատակով։ Դրա համար պէտք է աշխատել, Թիւրքիոյ բոլոր ռամկավարական տարրերը պէտք է աշխատեն, որ միջազգայնութեան սկզբունքը միշտ աւելի և աւելի շեշտւի պետութեան բովանդակ վարչական մեխանիզմի մէջ, որ կենտրօնական կառավարութիւնը ևս դառնայ անկեղծօրէն ու շիտակօրէն ի ն տ ե ր ն ա ց ի օ ն ա լ, — ոչ սոսկ ն ա ց ի օ ն ա լ, միջազգային, — ոչ սոսկ ազգային։

Պետութիւնը, այո, ահագին դեր ունի խաղալու, բայց աւելի էական գործ է՝ զարկ տալ հասարակական ուրոյն ուժերին ու նախաձեռնութեան։

Մեզ թերևս վիճակուած է այդ նոր, բարեշրջւող

մթնոլորտում — հանդէպ թիւրքերի, քրդերի, յոյների, բուլգարների, հանդէպ ընդհանուր ու ճարակող ազգամիջեան հակամարտութեան — լինել խոշոր ու վըճռական, հաշտարար գործօններից մինը։ Հայ մտաւորականութեան դիրքը և պատասխանատուութեան զգացումը թելադրում են նրան ծանրակշիռ պարտաւորութիւններ։ Որքան որ մենք պարտաւոր ենք զգոյշ լինել ազգայնութեան ու հաւաքական ինքնապաշտպանութեան մեր ամենօրեայ քարոզների մէջ, չը տալ „պատրւակ" անգիտակից հակառակորդին, չը տալ տեղիք թիւրիմացութեան, — նոյնքան պարտաւոր ենք զգոյշ ու շրջահայեաց լինել միջազգայնութեան պրօպագանդի մէջ...

Եւ նախ՝ ընդունենք միանգամ ընդմիշտ, որ դատապարտում ենք շաբլօնը, որ չենք ուզում փոխադրուած տեսնել մեր երկրի մէջ պատրաստի ֆօրմուլներ, ձևակերպութիւններ, սքեմներ։ Եւրոպական ռամկավարութեան ու սօցիալական շարժումների նշանաբանները չի կարելի կիրառել մէկէն ի մէկ, պարզ, սիմպլիստ, շաբլօնական ձևերով, այլ պէտք է ձգտել յարմարեցնել նրանց՝ առանձնայատուկ միջավայրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական պայմաններին։ Եւրոպայից, առաջադէմ ազգութիւններից պիտի փոխառնենք նախ և առաջ անհրաժեշտագոյնը, — հետազօտութեան մեթօդը։ Նրանով զինուած՝ պէտք է նախ ուսումնասիրենք մեր միջավայրը. ուսումնասիրենք, որպէսզի գտնենք շփման կէտեր մեր և դրացի աշխատաւոր համայնքների միջև, որպէսզի որոշենք այն լաւագոյն տակտիկը, գործելակերպը, որով կարող ենք ուժգին մղում տալ միջազգայնութեան բաղձալի հոսանքին, հոգալով հանդերձ միաժամանակ մեր սեփական ազգայնութեան

շահերը, նրա տնտեսական ու քաղաքակրթական առաջադիմութիւնը։

Երկրի ուսումնասիրութիւն — ահա ինքնին պատկառելի մի գործ։ Ահա մի գործ, որով, դժբախտաբար, մինչև օրս շատ քիչ ենք զբաղուել, գրեթէ չենք զբաղուել։ Ցաւ է յիշատակել, որ քսան տարուց ի վեր յեղափոխական կազմակերպութիւնները չեն կատարել մի հատիկ լուրջ հետազօտութիւն այն տնտեսական ու ցեղագրական միջավայրի մասին, ուր խաղացուել է հայկական կռիւն ու ողբերգութիւնը։ Մենք չունինք անգամ մի հատիկ լուրջ հետազօտութիւն այն տնտեսական ու ցեղագրական միջավայրի մասին, ուր խաղացուել է հայկական կռիւն ու ողբերգութիւնը։ Մենք չունինք գէթ մի հատիկ լուրջ գործ հարկատուութեան սիստեմի կամ սիստեմների մասին, հին րէժիմի տակ. չունինք ոչինչ և հողային ու արհեստային վիճակների, այլևայլ ժողովուրդների պարապմունքի, համայնական կենցաղի, դասակարգային շերտաւորումների մասին և այլն։ Չը կայ շատ թէ քիչ արժէքաւոր ուսումնասիրութիւն մեր գրականութեան մէջ նոյնիսկ Թիւրքիոյ ընդհանուր իրաւական կացութեան մասին — հին ռէժիմի տակ — որ սահմանադրութիւնը, հաւանականօրէն, չը պիտի կարողանայ կամ չը պիտի կամենայ յեղաշրջել շուտ ու արմատապէս...

Լուրջ հետազօտութիւնների բացակայութեան մեղքը, հարկաւ, ընկնում է աւելի չէզոք մտաւորականութեան, քան յեղափոխական կազմակերպութիւնների վրայ, որոնք տարուած կաւի տիրական անհրաժեշտութեամբ, մշտնջենաւոր լարման վիճակում, քիչ կունենային ազատ ժամանակ և մանաւանդ տրամադրութիւն՝ զբաղուելու տեսական ուսումնասիրութիւններով։ Համիդեան խաւարն ու դժոխքը այդ դէպքում ևս, անտարակոյս,

հանդիսանում է, իբրև մեծագոյն յանցաւորը, նա կաշկանդել է անգամ պաղ, անդամահատող, տեսական մտքի շարժումները, որպէսզի մարդկանց գլուխների մէջ ևս թագաւորէր յաւիտենօրէն — այդ դժոխք-երկրի վերաբերմամբ — անվերծանելի քաօսը...

Այսօր հնարաւոր է մօտենալ այդ քաօսին խուզարկուի հետաքրքիր ու տենդոտ հայեացքով — և դա պէտք է լինի մեր կարդինալ պարտաւորութիւններից մինը։

Կացութիւնը Տաճկաստանում — մի ահաւոր հանգոյց է, որպիսին դժւար է գտնել երկրագնդի որևէ այլ կէտում։ Տնտեսութեան և քաղաքակրթութեան տարբեր աստիճանները խճողւում ու բախւում են իրար մի եզակի իրականութեան մէջ, ուր կրօնների տարբերութիւնը միայնակ ստեղծում է անանցանելի խրամատներ ժողովուրդների մէջ, թունաւորում է դրացիական համայնակենցաղը, պայթում է երբեմն արհաւրալի անակնկալներով...

Որքա՜ն կնճիռներ — յաղթահարելու... Որպիսի՜ գերմարդկային տակտ, համբերութիւն ու զգուշութիւն է պէտք այն գործիչներին, որոնք գիտութեան և լուսաւորութեան ջահով զինուած, պիտի շարժւին, խարխափելով այդ իրականութեան մէջ, պիտի հնչեցնեն հաշտութեան, եղբայրութեան զօղանջը, պիտի ձգտեն կառուցանելու աւերակների վրայ միջազգայնութեան հմայիչ շէնքը...

Աւերակը — ամենուրեք, կեանքի բոլոր ասպարէզներում, գործունէութեան բոլոր ճիւղերում։ Տնտեսական առաջադիմութիւնը մէկն է ամենահզօր խթաններից ամբողջ կուլտուրական առաջադիմութեան. իսկ „տնտեսականը“ խարխլւած է, չորցած, անդամալուծւած։ Համիդեան ռէժիմը, սուլթանների ռէժիմը ընդհանրապէս, դարերից ի վեր հոգացել է ամենից առաջ՝ ցամաքեցնելու

ժողովուրդների ամենասնուցիչ աղբիւրները, որպէսզի ստեղծէ աղքատների, պարիաների անմռունչ, իդէալական հպատակութիւնը։

Պետութիւնը եղել է հարազատ արտայայտիչը տնտեսութեան. թէ մէկը, թէ միւսը քարացել են, անշարժացել դարերից ի վեր, իրարու վրայ ազդելով, փոխադարձաբար պայմանաւորելով։ Այն վայրերում միայն, ուր հին, փտող օրգանիզմը, աշխարհագրական դիրքի ու այլ պայմանների շնորհիւ, շատ թէ քիչ ենթակայ է եղել եւրոպական կապիտալի ու քաղաքակրթութեան ազդեցութիւններին, դիտում ենք այսօր տնտեսութեան, արդիւնաբերութեան աւելի բարձր ձեւերի սահմանափակ ներմուծումները։ Կողք-կողքի ապրում են օսմանեան կայսրութեան մէջ—հին, միջին և նոր դարը. կողք-կողքի՝ հնադարեան ստրկութիւնը, միջնադարեան ճորտութիւնը և նորադարեան վարձու աշխատանքի ու կապիտալիզմի սիստեմը։ Մի տեղ հպարտ սուլում է շոգեմեքենան, զարգանում է գործարանային արդիւնաբերութիւնը, զարգանում է և անխուսափելի հակամարտութիւնը փողատէր ու գործաւոր դասակարգերի միջև, սկիզբ է առնում պատմական կռիւը զանգւածային գործադուլներով ու տնտեսական պահանջներով,— մի այլ ծայրում, նոյնիսկ շատ մօտիկ, հէնց այդ նորածագ „կապիտալիզմի“ քթի տակ՝ քիւրդ աւատականը քշում է դագանակով իր դարաւոր քմահաճոյքին մատնւած ստրուկների նախիրները և միահեծան շահագործում է նրանց գրաստի աշխատանքը։

Ազգաբնակութեան ճնշող մեծամասնութիւնը դեգերում է նահապետական բիրտ ու գաճաճ տնտեսութեան շրջանակներում, որը տեղ-տեղ խփում է նոյնիսկ զուտ բնական տնտեսութեան մէջ (*Na-*

turalwirtschaft)։ Եւ իբրեւ հետեւանք, իբրեւ հարազատ անդրադարձումն այդ կացութեան, մենք տեսնում ենք, որ դասակարգային զանազանաւորումը ևս, կամ դասակարգերի շերտաւորութիւնը, նոյն նահապետական վիճակի մէջ է, թոյլ ու հազիւ նշմարելի։ Այդպէս է մանաւանդ մահմեդական ընդհանրութեան մէջ։ Դասակարգերի այդ զանազանաւորումը (*différentiation*) մի տեսակ աստիճանացոյց է ժողովուրդների առաջադիմութեան, հասունութեան։ Սովորաբար, որքան աւելի յետամնաց է մի հասարակութիւն, այնքան աւելի միապաղաղ, հօմօժէն է նրա կառուցւածքը, այնքան աւելի թոյլ ու տարտամ են դասակարգերի տարբերումները։ Եւ—ընդհակառակը։ Պրօգրէսը, մարդկային յառաջխաղացութիւնը կայանում է աստիճանական զանազանաւորման մէջ, աստիճանական փոխանցումի մէջ —միապաղաղից դէպի այլազանը, համատարրից դէպի բազմատարրը, հօմօժենից դէպի հէտէրօժենը։ Եւ երբ ազգի անունով երդւող մտքի ու կորովի տիրացուները աղաղակում են, թէ „ազգը կազմող բոլոր անդամները մէկ պիտի ըլլան, մէկ համոզումով ու դաւանանքով“— նրանք փարում են անցեալին, ոչ ապագային և ոչ ներկային։

Տնտեսական զարգացումը առաջ է բերում դասակարգերի շերտաւորումն, իսկ այդ վերջինը ծնունդ է տալիս կուսակցութիւններին։ Տնտեսութեան, դասակարգերի, կուսակցութիւնների ու դաւանանքների այդ տրամաբանական շղթայակցութիւնը քաղաքակըրթութեան անհրաժեշտագոյն պահանջն է, նոյնիսկ նրա ներքին բովանդակութիւնը—և ուր չը կայ այդ շըղթայակցութիւնը, այնտեղ խաւար է, յետամնացութիւն, վայրենութիւն։

Մեր մահմեդական շրջապատի համար միանգամայն

բնորոշ է այն հանգամանքը, որ այնտեղ չի շեշտւում կամ թէ շատ թոյլ ձեւով է շեշտւում կուսակցական զանազանութիւնը։ Քրդերի մէջ՝ աւելի եւս թոյլ, քան թիւրքերի մէջ։ Դասակարգային թոյլ շերտաւորման հետեւանք, անշուշտ... Համայնքն ասես քարացել է։ Սուլթանների ու զինւորական կաստայի դարաւոր տիրապետութիւնը, միացած մի անօրինակ կղերի բռնակալ հմայքի հետ՝ տափակացրել են մահմեդական զանգւածներին, հաւասարեցրել են նրանց՝ ստրկութեան ու տգիտութեան մէջ։ „Ազգը“, „միլլէթը“ համարեա մէկ է.. Բայց դա կոպիտ, մեքենական միութիւնն է, որ նոյնանում է երամականութեան։ Դրանից էլ տառապում է այսօր եւ երկար ժամանակ դեռ կը տառապէ օսմանեան պարլամենտարիզմն ու առաջադիմութիւնը, ուր տիրապետող գործօն է հանդիսանում թիւրք միապաղաղ ու երամական մեծամասնութիւնը։ Այդ տեսակ միութեամբ ժողովուրդները կարող են թերեւս աջողութեամբ մղել գոյութեան կռիւը, բայց ոչ քաղաքակրթութեան։ Պարզ հօտային համերաշխութիւնը, ուր ծայր չեն տալիս անտագօնիզմները, հակադրութիւնները, ուր չը կայ բաղխում կարծիքների, դաւանանքների՝ սովորաբար ստեղծում է ճահիճ... Այդ տեսակ մի ճահիճ է ներկայացնում, կարելի է ասել, այժմեան հելլէն համայնքն ու պետութիւնը, ուր նոյնպէս „ազգը“ համարեա „մէկ է“, չը կան կուսակցութիւնների ու դաւանանքների խիստ տարբերումներ, մրցակցութիւն ու սուր բաղխումներ... Եւ կեանքը լճացել է այնտեղ, մտաւոր ու կուլտուրական առաջադիմութիւնը գրեթէ անդամալուծւել է ու հասցրել երկիրը „արգահատելի քանակութեան“ աստիճանին՝ միջազգային արէօպագի մէջ... այն ժամանակ, երբ շըրջապատող բալկանեան պետութիւնները տենդային աճա-

պարանքով վազում են արեւմտեան ազգերի ետեւից, իւրացնում նրանց կուլտուրայի արգասիքները և դառնում ըստ ամենայնի պատկառելի մեծութիւններ։

Այդպէս ուրեմն տնտեսութիւնը — նահապետական, ընդհանուր հասարակական կառուցւածքը — նահապետական, համարեա միապաղաղ. դասակարգային շերտաւորումները՝ տարտամ, անկերպարան, կուսակցական կեանքը իր սաղմնային վիճակում, — ահա թէ ինչպէս է պատկերանում մեզ իր խոշոր, տիրապետող գծերով՝ իրականութիւնը Տաճկաստանում, մասնաւորապէս ասիական Թիւրքիայում, մասնաւորապէս մահմեդական զանգւածների մէջ։

Մի այդպիսի միջավայրում է, որ հայ գիտակից մտաւորականութիւնը, զինւած ժամանակակից նշանաբաններով պէտք է հրապարակ իջնէ՝ ի կատար ածելու իր մեծ առաքելութիւնը։

Ի՞նչպէս...

Մտաւորականութեամբ, արդարև, մենք աւելի հարուստ ենք, և այդ է, գուցէ, որ արժանացնում է մեզ յաճախ „կուլտուր-տրեգերի“ պատւաւոր տիտղոսին։ Սակայն, խաւար ու յետամնաց է նաև մեր, հայկական իրականութիւնը։ Համեմատաբար, անշուշտ, նա փոքր ինչ աւելի բարձր է. կուլտուրայի ու առաջադիմութեան վերոյիշեալ ազդակները — արդիւնաբերական-առևտրական կեանք, դասակարգային, կուսակցական զանազանւորում, գաղափարային մրցում ևայլն—աւելի են շեշտւում մեզ մօտ. բայց այսօլիւ, բացարձակ առումով, ի դէմս մեր ժողովրդի ահագին մեծամասնութեան, մենք ևս դեռ ապրում ենք կուլտուրապէս վերին աստիճանի աննախանձելի մի շրջան։

Բայց եթէ անգամ հայկական տնտեսութիւնը լինէր զարգացած ու բարդացած, դասակարգերը աւելի զտուած ու որոշուած, հողը աւելի պատրաստ դասակարգային պայքարների համար,—հայ առաջադէմ, ռամկավար, ընկերավար մտաւորականութիւնը, այնուամենայնիւ որոշ չափով պիտի կաշկանդուէր իր պրօպագանդի մէջ... Պիտի կաշկանդուէր այն պատճառով՝ որ հայութիւնը չի ներկայացնում մի գոց, ուրոյն միջավայր, ուր կարելի լինէր ազատ թռիչք տալ գաղափարներին ու պայքարներին, վազել առանց յետ նայելու, առանց զարտուղի ճանապարհների դիմելու, դէպի բարձր առաջադիմութեան ու քաղաքակրթութեան հանգրուանները, հրապարակ նետել ռամկավարական լօզունգներն ու գիտութեան վերջին պատուիրանները, ամենասուր, ամենամաքուր, ամենացայտուն իրենց ձեւերով... Պիտի կաշկանդուէր այն պատճառով, որ գոյութիւն ունի վերը յիշատակած խառնափնդոր իրականութիւնը, ցեղերի ու տարբեր քաղաքակրթութիւնների այն անօրինակ շփոթը, որ բնորոշում է մասնաւորապէս Թիւրքահայկական միջավայրը եւ որ չափազանց պիտի բարդացնէ յետայսօրեան մեր կռիւը՝ յանուն բոլոր ճնշուածների, յանուն իսկական, սօցիալիստական հաւասարութեան:

Հակամարտութիւնը փաստ է: Թիւրք ու քրիստոնեայ տարրերի միջեւ անջրպետը կայ, նա եղել է միշտ, անկախ բռնակալութեան գրգռումներից ու դաւերից: Եւ այդ դարաւոր հակամարտութիւնը եղել է, անշուշտ, այն մեծագոյն պատճառներից մինը, որոնց շնորհիւ „մեռած տառ“ են մնացել սուլթանների այլեւայլ ժամանակ արձակած րէֆօրմային ծրագիրները — Թանզիմաթ, Հատտի-Հումայուն եւայլն — ծրագիրներ, որոնք արդիւնք են եւրոպական պետութիւնների ի գործ դրած ճնշումների՝ Տաճկաստանը ուժեղացնելու եւ ռուսական

հեռաւոր արշաւանքները կանխելու նպատակով։ Թւում է երբեմն, թէ երկու խոշոր տարրերը օսմանեան կայսրութեան մէջ — քրիստոնէութիւն ու մահմեդականութիւն — ներկայացնում են երկու տարբեր քաղաքակրթական հակումներ։ Ռամկավարական հոսանքները չեշտւում են գրեթէ բացառապէս առաջինի մէջ, այն ինչ՝ երկրորդը — մահմեդականութիւնը — իր բոլոր խաւերով, անգամ կրթւած մտաւորականութեամբ, առայժմ թւում է կանգնած ճշմարիտ ռամկավարութեան դէմ, չի ուզում թոյլ տալ քրիստոնեաների իրաւահաւասարութիւնը, նրանց մուտքը քաղաքական իշխանութեան մէջ, համարելով այդ՝ մի տեսակ ոտնձգութիւն Իսլամի կրօնական աւանդութիւնների դէմ... Բոլոր Թիւրքական վերանորոգիչները սնւած են եղել այդ ճակատագրական անվստահութեամբ դէպի քրիստոնեայ տարրը և դեռ 1876 թւի միթհատեան պարլամենտում, ուր երամականութիւնը, մեքենական համերաշխութիւնը հասնում էր իր ծայրագոյն աստիճանին (պատգամաւորները հլու հնազանդութեամբ ընդունում էին կառավարութեան ամեն մի առաջարկը, „էվէ՛թ“, „այո՛“ աղաղակելով և դրա համար ստացել էին „էվէթտուսի“ ծաղրանունը) — քրիստոնեայ պատգամաւորների ներկայութեամբ, նրանց հասցէին հնչում էր նախագահի վիրաւորական ֆրազը. „քրիստոնեաները պէտք է գոհանան այն համբերողութեամբ, որ ցոյց է տրւում նրանց նկատմամբ“...

Զարգացման անիւը այսօր փոքր ինչ առաջ է գնացել, բայց նոյն անվստահութեան ոգին է ցոլում, տարաբախտաբար, նաև „կենտրոնական նացիոնալիզմի“ այն սիստեմի մէջ, որ հաստատւել է յուլիսեան յեղափոխութիւնից ի վեր...

Ինչպէ՞ս տնօրինել այդպիսի դժւարին հանգամանքներում աշխատաւորական միջազգային

պայքարը... Ասացինք, որ նա արդէն սկսուած է։ Սկսուած է գլխաւորապէս մի այնպիսի աշխարհում, ուր գերակշռող է քրիստոնեայ տարրի մտաւոր ու կուլտուրական ազդեցութիւնը (Մակեդական վիլայէթներ)։ Մասնակցում են, սակայն, այդ նորաբողբոջ շարժումներին նաև թիւրքեր ու այլ մահմեդականներ։ Այսօր նոյնիսկ ծայր է տալիս թիւրք աշխատաւորական սօցիալիստական մամուլ։ Հիմնուած է մայրաքաղաքի մէջ „Իշթիրակ“ անունով („Համերաշխութիւն“) աշխատաւորական օրգանը։ Այս շարժումը՝ թէկուզ և փարանոտ ու սահմանափակ՝ մի գնահատելի սկզբնաւորութիւն է, որ կունենայ, անտարակոյս, իր հեռաւոր զարգացումը, համաձայն տնտեսական ընդհանուր էւօլիւցիայի օրէնքներին։

Աշխատաւոր լէգէօնների շահերի բնական եղբայրակցութիւնը պէտք է աճի՝ զուգընթաց արեան եղբայրութեան հետ։ Դասակարգերի խաղաղ պայքարը պէտք է փոխարինէ, նաև Թիւրքիայում, ազգերի արիւնոտ բախումներին։ Երբ նրա ծնունդ աշխատաւորական Ինտերնացիօնալը իր գիրկը կը քաշէ մահմեդական աշխատաւորների գէթ փոքրիկ մասը, երբ նա կը գրաւէ նաև մի համեստ հատուածը թիւրքական մտաւորականութեան — այն ժամանակ այլևս դժուար կը լինի յետադէմ տարրերի համար՝ դաւել այս կամ այն ժողովրդի դէմ, խառնել, պղտորել ազգամիջեան յարաբերութիւնները։

Բոլոր ազգերի ճնշուածներն ու կեղեքուածները — բոլոր ազգերի ճնշողների ու կեղեքողների դէմ... Միջազգայնութեան գաղափարը իր նորագոյն իմաստով հիմնուած է տնտեսական հաւասարութեան պահանջի վրայ։ Չը կայ մարդկանց իսկական հաւասարութիւն ու եղբայրութիւն, քանի դեռ չը կայ այդ

տնտեսական հաւասարութիւնը, բանի դեռ ազգերի ճնշող մեծամասնութիւնը կազմող աշխատաւոր զանգուածները կը մնան լծի տակ կորացած, իրենց օրական պարէնը հայթայթելու անողորմ անհրաժեշտութեան մէջ։

Յանուն այդ հաւասարութեան, յանուն այդ միջազգայնութեան՝ պէտք է այժմից իսկ կատարել բաղձալի ղանազանաւորումը վերածնւող Տաճկաստանում.. Իդէալը իր լիակատար իրականացմամբ հեռու է. բայց այդ իդէալը բեկոր-բեկոր իրագործելու է այժմից արդէն։

Այժմից արդէն հայ դեմօկրատ, գաղափարական մտաւորականութիւնը պիտի դիրք բռնէ նոր սկսւող շարժման հանդէպ՝ կամ կապիտալի ու շահագործման հետ՝ ընդդէմ աշխատանքի և ժողովրդի, կամ թէ այդ վերջինի հետ՝ ընդդէմ շահագործման ու ամեն տեսակ առանձնաշնորհումների։

Ինչպէ՞ս է, սակայն, պատկերանում մեզ՝ բուն գործնական շարժման հողը մեր յատուկ միջավայրում, Թիւրքաց Հայաստանի մէջ։ Ինչպէ՞ս զուգադրել երկու անհրաժեշտ ու լրացուցիչ գաղափարները — ազգայնութիւն և միջազգայնութիւն։ Ինչպէ՞ս հաշտեցնել մեր հայկական ազգային դատը՝ բոլոր ճնշւածների նւիրական դատի հետ...

*

Պէտք է կազմակերպել համօսմանեան աշխատաւորական հատւածը՝ նա այսօր արդէն ունի իր հայ ու բուլգար ներկայացուցիչները օսմանեան պարլամենտում։ Եւ նա կարող է դառնալ նոյնիսկ ոչ հեռու ապագայում թէ պարլամենտի և թէ երկրի մէջ՝ ամենաազդեցիկ,

դիմադրական թևը (*parti d'opposition*), քանի որ քրիստոնեայ հատուածների լաւագոյն, գաղափարական տարրերը — որքան էլ նրանք լինին սակաւաթիւ — տոգորուած են աշխատաւորական իդէալներով, քանի որ միւս կողմից չափազանց խեղճ է բուրժուա ռամկավարութիւնը (*démocratie bourgeoise*). այդ քրիստոնեայ ներկայացուցչութեան մէջ — ծոյլ, իներտ, առանց քաղաքացիական կորովի ու աւանդութիւնների և առանց մտաւոր ու գաղափարային պաշարի…

Այն ինչ՝ մահմեդական աշխարհում և պարլամենտի իսլամ մեծամասնութեան մէջ այդ բուրժուական ռամկավարութիւնը, տարաբախտաբար, գրեթէ բոլորովին բացակայում է։ Եւ դա մի տխուր, ճակատագրական երևոյթ է, որ խաղացել է իր բացասական դերն անցեալում, խաղում է այժմ, պիտի խաղայ և ապագայում, այն դժուարին ու դանդաղ էւօլիւցիայի մէջ, որ պիտի կրէ սահմանադրութեան ճակատագիրը։ Եթէ անցեալում բարենորոգչական ծրագիրները վիժել են Տաճկաստանում — դրա խոշորագոյն պատճառներից մէկը հէնց այն է, որ չի եղել բուրժուազական, լիբերալ, ազատամիտ դասակարգը, որը գրեթէ բոլոր երկրներում հզօր պատւար է հանդիսացել քաղաքական յեղափոխութիւնների ու սահմանադրական ռէժիմի և որ կարողացել է շատ թէ քիչ ընդարձակ ռամկավարական բնոյթ հաղորդել այդ սահմանադրութեանը, գրաւել այդպիսով ժողովրդական լայն զանգուածները, ի նպաստ նոր իրաւակարգի։ Բիւրօկրատիան (պաշտօնէութիւնը) յօրինել է ռէֆօրմների ծրագիրները, բիւրօկրատիան էլ ջնջել է նրանց փաստային գոյութիւնը… Ժողովրդի մահմեդականութեան ճնշող մեծամասնութիւնը մնացել է միշտ լուռ, կրաւորական, նոյնիսկ թշնամական դիրքում հանդէպ այդ բոլոր ռէֆօրմների, նախ որովհետև այդ

վերջինները նեղ-քաղաքական բնոյթ ունենալով, նոյն-իսկ մակերեսօրէն չէին շօշափում ժողովրդային, աշխատաւոր մեծամասնութեան շահերը, և երկրորդ՝ որովհետև այդօրինակ րէֆորմային փորձերի մէջ, տգէտ, նախապաշարուած ու ֆանատիկոս ընդհանրութիւնը տեսնում էր միշտ „գեավուրի ձեռքը“... Իսկ այդ ձեռքը նրա համար մի մահաբեր, սրբապղծող, դժոխային բան էր, որ գալիս էր տակնուվրայ անելու հաւատացեալների բովանդակ աշխարհահայեացքը, բոլոր հինաւուրց պաշտամունքները..

Բուրժուազիա չը կայ և այժմ մահմեդական աշխարհի մէջ, նրա դերը ոչինչ էր երէկւայ վերիվայրումների ընթացքում։ Չը կայ մանաւանդ ռամկավարական բուրժուազիա։

Աշխատաւորական կուսակցութեան դերը այդ պատճառով խիստ բարդանում, դժւարանում է։ Նա պէտք է ստանձնէ միաժամանակ և մասամբ այդ բուրժուա-ռամկավարութեան պաշտօնը։ Նա գրեթէ մենակ է մնում բուն ժողովրդական րէֆորմների իր ծրագրով, մենակ հանդէպ մի հզօր ու կոյր, մեքենական ու երամական մեծամասնութեան։ Գրեթէ մեն-մենակ նա պիտի ձգտէ խորտակելու այդ վերջինի անտարբերութիւնը դէպի ժողովրդի ու աշխատանքի ամենանւիրական դատը, գրեթէ մեն-մենակ պիտի պաշտպանէ անխտիր բոլոր—քրիստոնեայ ու մահմեդական—աշխատաւոր զանգւածների շահերը։

Քարացումը, սակայն, յաւիտենական չէ։ Անշուշտ, իրերի զօրութեամբ կըսկսւի վաղ թէ ուշ բաղձալի զանազանաւորումը նաև տաճկական կոյր բլօկի մէջ—նա արդէն իսկ սկսած է առաջ կը գան տարբեր հոսանքներ ու հատւածներ։ Կըստեղծւի վաղ թէ ուշ բուն ահրարեան, ազատամիտ կուսակ-

ցութեան հետ՝ իսկական ժողովրդական կու-
սակցութիւնը, որ անկեղծօրէն, համոզումով, աշ-
խարհահայեացքով և կենդանի, ռէալ գործով կը նուիրուի
ազգաբնակութեան աշխատաւոր մեծամասնութեան շա-
հերին։ Սակայն, դրա համար ժամանակ է պէտք...

Առայժմ, բուն „ժողովրդական ներկայացուցչի" պատ-
ւաւոր տիտղոսը օսմանեան պարլամենտի մէջ կը պատ-
կանէ մի բուռն գաղափարական կորիզների, գըլ-
գլխաւորապէս քրիստոնեայ տարրերից։ Նրանց ուժ ու
եռանդ կը տայ նոր սկսած ալէկոծումն ու շարժումը
օսմանեան աշխատանքի ասպարէզում և նա իր
կողմից կը տայ պատշաճ արձագանքը այդ շարժումին,
ինչպէս որ եղաւ մօտիկ անցեալում, սինդիկատների ու
գործադուլային օրէնքների վիճաբանութեան միջոցին։
Նա կը ձգտէ—մտնելով ի հարկին համաձայնութեան,
իրաւախոհութեան մէջ գոյութիւն ունեցող ուրիշ փոք-
րիկ, շատ թէ քիչ ռամկավար, տարրերի հետ — իրա-
գործելու այն մի շարք հրատապ, անյետաձգելի բարե-
նորոգումները, որոնք կարող են մի յայտնի չափով
բարձրացնել երկրի խոշոր, տիրապետող ընդհանրու-
թեան, աշխատաւոր ու հարստահարուած մասսաների
նիւթական բարօրութիւնը։

Այդտեղ է երկրի փրկութեան միակ խարիսխը.
առանց դրան չը կայ յարատև ազատութիւն, չը կայ
յարատև սահմանադրութիւն։ Մասնաւորելով խօսքը մեր
մասին—ոչ մի ռէֆորմ, սահմանադրական ոչ մի ռէժիմ
չի կարող տևողական բաւարարութիւն տալ հայ ազ-
գաբնակութեանը, եթէ նա չը շօշափէ այդ վերջինի
95 տոկոսը կազմող գիւղացիութեան ու արհեստաւո-
րութեան խորունկ շահերը։ Նոյնը ստոյգ է ուրիշ ազ-
գային համախմբումների վերաբերմամբ։

Երբ բուն քաղաքական, ռամկավարական ռէֆորմների

հետ կ՚իրագործւին և մի շարք հրատապ տնտեսական բարենորոգումները, երբ արդիւնաբերական վայրերում աստիճանաբար կը բարւոքւի գործաւոր պրոլետարիատի սոցիական կացութիւնը—աշխատանքի ժամանակի կրճատումով, վարձագնի աւելացումով, բանւորական ապահովութեան օրէնքներով ևայլն—երբ մանաւանդ դաշտերում, աշխատանքի լայնարձակ հօրիզոններում, կը մեղմանայ բազմամիլիոն պարիաների վրայ ծանրացած լուծը, երբ օսմանեան կայսրութեան մէջ համատարած խոշոր հողային սեփականութիւնների մի զգալի մասը կը գրավւի յօգուտ մշակող ու տնքացող գիւղացիութեան, երբ կը սահմանւի արդար ու բանաւոր հարկատւութեան սիստեմ, երբ այդպիսով երկրի բովանդակ աշխատաւոր ընդհանրութիւնը կը տեսնէ, որ նոր րէժիմի գլխաւոր մտահոգութիւնն ուղղւած է դէպի նրա ցաւոտ ճակատագիրը,—այն ժամանակ ինքնին արդէն կը վերանայ րէակցիայի, յետադիմական երկիւղների մշտնջենաւոր կօշմարը, որի տակ ապրում է ներկայումս ազատագրւած Տաճկաստանը, այն ժամանակ ինքնին կ՚աճի ժողովրդական վստահութիւնը դէպի սահմանադրութեան րէժիմը, ժողովուրդը իր ամբողջ էութեամբ կը փարի նոր իրաւակարգին և իր կուռ բազուկներով կը չէզոքացնէ՝ թէ համիդեանների յետադիմական սադրանքները և թէ այն բոլոր խուժդուժ ու բիրտ ախորժակները, որոնք մշտական վտանգ են սպառնում քրիստոնեաների, մասնաւորապէս հայերի, գոյութեանն ու առաջադիմութեանը... Այն ժամանակ և ազատ, անարգել թռիչք կըստանայ միջազգայնութեան հոսանքը ամբողջ երկրի մէջ։

Հրապուրի՜չ հեռապատկեր... Եւ այնքան աւելի շուտ կը հասնի այդ վիճակը, որքան աւելի շուտ կը կատարւի վերը յիշատակած զանազանաւորումը մահմե-

դական—տաճիկ, քիւրդ, արաբ, ալբան — միապաղաղ օրգանիզմի մէջ, որքան աւելի շուտ գլուխ կը գայ, թէ պարլամենտում, թէ դրսում, սերտ, համերաշխ գործակցութիւնը նախ քրիստոնեայ, դիմադրական տարրերի միջև, ի դէմս նրանց աշխատաւորական ու ռամկավարական հատուածների, որքան աւելի շուտ, վերջապէս, կը զարգանայ—իր խորութեամբ ու տարածութեամբ— *մահմեդական մտաւորականութիւնը*...

Աւելացնենք—*գաւառական, ժողովրդական մտաւորականութիւնը*։

Ահա մի տարր ևս, որ իբրև դասակարգ, գրեթէ բոլորովին բացակայում է մահմեդական համայնքների մէջ, ինչպէս որ բացակայում է ռամկավարութիւնն ու բուրժուազիան։ Դրանք բոլորն էլ յարակից, շաղկապուած երևոյթներ են, կամ աւելի շուտ չերևոյթներ, որ պայմանաւորւում են նոյն խակ ու բիրտ իրականութեամբ։ Տաճկական այն մտաւորականութիւնը, որ այսօր գլուխ է կանգնած սահմանադրական նոր կարգերի, իր այլամերժ նացիոնալիզմով, համիսլամութեան խմորով շաղախուած իր ազգայնական դաւանանքով (մի կողմն ենք թողնում յարգելի բացառութիւնները), տարաբախտաբար, հեռու է — թէ իր ծագմամբ և թէ կրթութեամբ — բուն ժողովրդական խաւերից, նրանց շահերից ու տենչանքներից։

Պէտք է ստեղծւի գաւառական մտաւորականութիւն։ Այդ բացը մեզ մօտ ևս կայ, բայց դրացիների մօտ նա ուղղակի ճակատագրական է։ (Մեր խօսքը գլխաւորապէս Թիւրքաց Հայաստանի մասին է)։ Եւ այդ չարիքի վրայ ստիպուած ենք անդրադառնալ ամեն անգամ, երբ որոնում ենք գործունէութեան մեր ծրագիրները։ Քանի դեռ կայ նա, այդ ահռելի բացը, թւում է, թէ մենք դատապարտուած ենք Թիւրքահայաս-

տանում — միջազգայնութեան, համերաշխութեան ու քաղաքակրթութեան մեր պրօպագանդի մէջ—սիզիֆեան ամուլ ու դժնդակ աշխատանքի։ Քանի դեռ կայ նա, մեր շարժումները ազատ չեն, մեր թևերը կաշկանդուած, մեր ամենաանկեղծ կոչ ու յորդորները դրացի ժողովուրդներին, նրանց ճնշուած, հարստահարուած տարրերին՝ պիտի մնան թերևս անապատի մէջ բառբառող ձայներ... Կրկնում ենք՝ մենք գոց, ուրոյն միջավայր չենք։ Բաւական չէ այդ. չենք էլ կազմում թւի ուժը, մի այնպիսի պատկառելի ուժ—որպիսին կազմում են օրինակ, սլաւօնները Մակեդոնիայում—որ տար մեզ հնարաւորութիւն՝ գնալու ուղղագիծ առաջադիմութեամբ, առանց վարանելու և առանց երկիւղ կրելու հասարակական յարաբերութիւնների „հաւասարակշռութեան խախտումներից“։ Սլաւ սօցիալիստները Մակեդոնիայում այսօր արդէն պատերազմ են յայտարարել իրենց ժողովուրդներին սորկացնող մահմէդական խոշոր հողատէրերի դէմ և նրանք ռիսկ ու երկիւղ չունին խախտելու ազգամիջեան յարաբերութիւնների վերոյիշեալ հաւասարակշռութիւնը։

Այլ բան է մեր իրականութեան մէջ... Հիւսուել ենք հզօր ու միանգամայն այլազան տարրերի հետ և թւում է թէ մեր սօցիալական ու քաղաքակրթական առաջադիմութիւնը կարող է աջողութեամբ կատարուել մէկ անհրաժեշտ պայմանով միայն՝ որ մենք քարշենք մեր ետևից աւելի յետամնաց հարևաններին... Որովհետև նրանց յետամնացութիւնը մշտնջենական վտանգ է մեր առաջադիմութեան ու քաղաքակրթութեան համար, որովհետև նա մշտապէս յղի է կուլտուրասպան դաւերով, ուղղուած... նախ և առաջ հայութեան դէմ։

Մեր գաւառական մտաւոր ուժերի վրայ է ընկնում դժուարին պարտականութիւնը՝ աշխատել, անդուլ պրօպագանդով, զինուորագրելու ռամկավարական գաղափարների համար մուսուլման ինտելիգենցիայի ցիր ու ցան բեկորները։ Վասպուրականում անցեալի մէջ կատարուած փորձերը որոշ գրաւական են, որ այդ աշխատանքն ապարդիւն չի անցնի *)։ Պէտք է ստեղծել միացնող

*) Միջազգայնութեան մեր պրօպագանդը անցեալի մէջ յիշատակելիս՝ հարկ է մանաւորապէս կանգ առնել Վասպուրականի մեր ընկերների գործունէութեան մի դրուագի վրայ, որ անմիջապէս նախորդում է Յուլիսեան Յեղափոխութեանը։ 1906-ից մինչև 1908 մենք ականատես էինք Վանի մէջ և գաւառում հայ թիւրքական համաձայնութեան ուշագրաւ փորձերի ու հետևանքների։ Դաշնակցութեան տեղական մարմինը երկարատև ու անխոնջ քարոզչութեամբ իր կողմն էր գրաւել թիւրք գաղափարական երիտասարդների մի ստուար խումբ, որի միջոցով արծարծում էր իր գաղափարները մահմեդական, թիւրք ու քիւրդ, ժողովրդի մէջ։ Էրզրումի, Բիթլիսի, Կաստեմունիի ամբոխային յուզումները ուժ էին տալիս այդ նորաբողբոջ համերաշխութեան։ Տաճիկ երիտասարդների խումբը ընդունել էր գործունէութեան մի ծրագիր—նման իր էական գծերով Դաշնակցութեան ծրագրին—հրատարակում էր իր գաղտնի, յեղափոխական շաբաթաթերթը „Սաբահ Ուլ Խայր“ անունով, որի էջերից համերաշխութեան քարոզներ էր ուղղում մուսուլման և քրիստոնեայ ժողովուրդներին։ Կայսրութեան ապագայ կազմի վերաբերմամբ՝ խումբն ընդունել էր ապակենտրօնացման սկզբունքը։

Երկու համերաշխ մարմինները հրատարակում էին ժամանակ առ ժամանակ թռուցիկներ, ուղղուած բոլոր ազգերին, հրաւիրելով նրանց միաբան ուժերով ապստամբել համիդեան բռնակալութեան դէմ։ Նրանք եռանդով տարածում էին և արտասահմանից ստացուած գաղտնի գրականութիւնը՝ թիւրք., հայ, արաբ լեզուներով։ Նրանք մերթ ընդ մերթ կազմակերպում էին նաև գործնական ձեռնարկներ։ Քիչ չէր պատահում, որ հայ և թիւրք համերաշխ կոմիտէների անունով

կ ա մ ո ւ ր ջ ը, կեանքի կոչել շատ թէ քիչ մտահաս երիտասարդութիւնը և նրա միջոցով արծարծել մահմեդական աշխարհում միջազգայնութեան մեր գաղափարները, մեր իդէալը բոլոր ճնշուածների ու հարըստահարուածների դատի նկատմամբ, հասկացնել ժողովուրդներին, որ նրանց շահը իրօք մէկ է, որ նրանք բոլորն էլ կապուած են ազնիւ ու արգասաւոր աշխատանքի աւետարանով, որ կղեր ու այլ դասակարգեր— իրենց աւելորդ գոյութիւնն ու տիրապետութիւնը յարատեւելու համար — իսկզբանէ բթացրել են նրանց, ներշնչել են մարդասպան դօգմաներ, հաւատամքներ, որոնց անունով ժողովուրդները դարեր շարունակ ծուատել են իրար...

Որքա՛ն ժամանակ ու աշխատանք է պէտք, մինչև կըստեղծուի այդ կամուրջ—մտաւորականութիւնը, մինչև կը փոթորկուի հին, չարաշուք պաշտամունքների նիւթած ճահիճը, կը մեղմանայ ազգամիջեան անվստահութիւնը,

---

մեր ֆէդայիները հետապնդում՝ էին քիւրդ աւազակներին և յետ խլում նրանց յափշտակած աւարը, ի մեծ ուրախութիւն հայ ու թիւրք գրկուած գիւղացիների: Եւ այդ տեսակ ձեռնարկներով՝ կօմիտէները, բնականաբար, գրաւում էին աշխատաւոր ու տանջւող ժողովուրդների վստահութիւնն ու համակրութիւնը. երբեմն նոյնիսկ մահմեդական գիւղացիները այլ և այլ գրկանքների ու վէճերի առթիւ ինքնաբերաբար դիմումն էին անում կօմիտէներին...

Յիշենք, վերջապէս, որ երկու մարմինները փոխադարձ ու միահամուռ համաձայնութեամբ մահուան դատավճիռ արձակեցին Վանի հռչակաւոր դահիճ, արիւնարբու Ա լ ի բ է յ ի դէմ... Եւ երբ վերջինս, փախչելով ֆէդայիներից, անցնում էր Կովկասով դէպի արտասահման, մեր ահաբեկիչները զարկեցին նրան Բաթումի մէջ (1907-ի գարնան): Բռնաւորի սպանութեան լուրը ծանուցուեց Վանի մէջ յատուկ թռուցիկով—խմբագրուած երկու կօմիտէների համաձայնութեամբ— և մեծ ուրախութիւն պատճառեց ամբողջ ազգաբնակութեան:

նախապաշարումները և թիւրք ու քիւրդ գիւղացիական զանգւածները, շատ թէ քիչ հասունութեան գալով, կը ճանաչեն, վերջապէս, իրենց իսկական թշնամիներին ու բարեկամներին...

Առայժմ ազգային մրցումն է տիրապետող իրողութիւնը մեր երկրում — և դժւար է ասել, թէ քաղաքական, „բուրժուական“ յեղափոխութիւնը կատարւելուց յետոյ՝ մենք այժմ մտնում ենք արդէն աշխատաւորական, դասակարգային սուր պայքարների մի շրջան։ Դժւար է ասել, թէկուզ հէնց այն պատճառով՝ որ „կապիտալիստական“ աւատական ուժը՝ խոշոր հողային սեփականութիւնը, գտնւելով գրեթէ բացառապէս մահմեդական տարրերի ձեռքում, մեր ժողովուրդը շատ տեղերում ենթարկւած լինելով այդ օտար ու նահապետական „կապիտալիզմի“ լծին, — մեր գաղափարական երիտասարդութիւնը անկարող է առայժմ կռիւ յայտարարել այդ լծի դէմ, առանց յարուցանելու վտանգաւոր թիւրիմացութիւններ. . . Դասակարգային կռիւը կարող է հեշտութեամբ վերածւիլ ազգային կռւի... Յիշենք, որ Կովկասում, 1905—907-ի թուրքական ծանօթ արշաւանքի մէջ հայերի դէմ՝ մի յայտնի դեր է ունեցել — թէկուզ և գուցէ „պատրւակի“ դեր — թուրք աւատական բէգերի, հողատէրերի դէմ շղթայազերծւած ագրարային շարժումը, որ մի մասնիկն էր համառուսական մեծ շարժման և որի ղեկավարներն էին ոչ-մահմեդական տարրեր՝ վրացիներ, ռուսներ և հայեր։ Բէգ-աւատականները դիւրութեամբ համոզում էին իրենց տիրական ազդեցութեանը ենթակայ մարդկային նախիրներին, որ „գեավուրի“ սադրանքները ուղղւած են ոչ թէ մի բուռն ձրիակեր գիշատիչների այլ ամբողջ ցեղի ու կրօնի դէմ...

Այո. որքան վեհ և հմայիչ է աշխատաւորական մի-

ջազգայնութեան թէօրիան, նոյնքան փշոտ է նրա իրականացման ճանապարհը *)...

---

*) Փշոտ, բայց ոչ անանցանելի։ Ահա ուշագրաւ անակնկալներ, որ գալիս են խրախուսելու մեր յոյսերը։ Թիւրքաց Հայաստանի խորքերից, վերջին պահուն լսւում են ցասկոտ ու համբաշխ բողոքներ քիւրդ, թիւրք ու հայ աշխատաւորների կողմից՝ ընդդէմ ֆէօդալ-հարստահարիչների, իրենց „տէրերի“... Եւ, որ ամենից հաճելին է, քիւրդ ու թիւրք գիւղացիների կողմից՝ այդ խմբական և աղիողորմ գանգատներն ու բողոքները ուղղւում են մի հայ թերթի—„Ազատամարտ“-ին։

Ահա մի ընդարձակ բողոք-հանրագրութիւն, աղաների կեղեքումների դէմ, ստացւած Բաբերդի շրջանից և ստորագրւած 124 գիւղացիներից — ահագին մեծամասնութիւնը մահմեդականներ—որոնց մէջ կան և իմամներ ու մըխթարներ։ (Տպ. „Ազատամարտ, № 321)։ Մի առ մի թւելով իրենց վաշխառու-հողատիրոջ, ահագին հարստութիւնների տէր դարձած՝ Հաջի Սուլէյման աղայի ու նրա որդու, Սալիհի շահատակութիւնները և նկարագրելով իրենց կրած զրկանքներն ու թշւառութիւնը, — այդ բողոքագիրն ստորագրող թիւրք, քիւրդ ու հայ գիւղացիները հաւասար անձերի անունից դիմում են „Ազատամարտի“ միջոցով պատշաճաւոր իշխանութիւններին և խընդրում են նկատի չ'առնել այդ վաշխառուների կողմից բացած դատերը...

Նոյն „Ազատամարտի“ մէջ տպւած է մի այլ բազմաստորագիր բողոք-հանրագրութիւն՝ Տիարբեքիրի Սիլվան գաւառից։ Մի երրորդը՝ Էրզրումի „Յառաջ“-ի մէջ՝ Ալաշկերտից։ Բոլորի մէջ էլ մահմեդական աշխատաւորները նկարագրում են իրենց կրած կեղեքումները քիւրդ բռնաւոր աւատապետներից, բոլորն էլ հայ օրգանների աջակցութիւնն են հայցում՝ փաստերը հրատարակելու և հանրային ուշադրութեանը յանձնելու։

Զարթնումի նշաններ չե՞ն արդեօք․ Սկիզբը չէ՞ դա վերջաւորութեան։ *Qui vivra verra*... Յամենայն դէպս, ծայրայեղօրէն զգոյշ պիտի լինել այդ ուրախառիթ ու համ-

Դասակարգային մրցակցութիւնը, թոյլերի ու կեղեքւածների պատերազմը հզօրների ու կեղեքիչների դէմ, կրկնում ենք, անհրաժեշտ է և բանաւոր, սրբագործւած թէ գիտութեան և թէ խղճի պատւիրաններով. Նա արդէն իսկ ճակատագրական մի իրողութիւն է գրեթէ բոլոր հասարակութիւնների մէջ, անկախ մարդկանց կամեցողութիւնից, ծնունդ դարաւոր տնտեսական ազդակների — արդիւնաբերական միջոցների զարգացման, անհատական սեփականութեան — մի տեղ աւելի շեշտւած, մի այլ տեղ նւազ, ճակատագրական և միանգամայն առաջադիմական իրողութիւն, քանի որ նա անդադար խթում, մղում է մարդկային հասարակութիւնները դէպի զարգացման բարձր հանգրւաններ, քանի որ նա միակ միջոցն է բարձրացնելու թշւառ, իրաւազուրկ, յաւիտենօրէն լքւած աշխատաւոր դասակարգերի բարօրութիւնը, միակ ճանապարհը դէպի մարդկանց հաւասարութեան և ազգերի համերաշխութեան գալոց աշխարհը...

Դասակարգերի հակամարտութիւն եղել է և կայ նաև մեր կեանքում, թէև նա տակաւին չէ վերածւած ամենուրեք գործօն կռւի, թէև իրենք դասակարգերը ևս միանգամայն չեն զտւած, որոշւած իրենց ուրոյն կերպարանքով (գոնէ ոչ բոլորը)։ Այդ զտումը կը կատարւի վաղ թէ ուշ տնտեսական զարգացման պրօցէսի մէջ. վաղ թէ ուշ — թւում է ոչ հեռու ապագայում — եւրոպական ու տեղական դրամագլուխների կիրառումով՝ կապիտալիզմը, քաղաքակրթութեան այդ հսկայ

բաշխ բողոքների դիմաց և պիտի հսկել, որ մութ ուժերը, նոյնիսկ պաշտօնական շրջաններից, չը կարողանան ստեղծել դիվերսիոններ, շեղումներ, և չը պղտորեն ցեղերի յարաբերութիւնները, „ազգայնական հակամարտութեան" պատրւակներ ստեղծելով։

ջահակիրը, մուտք կը գործէ նաև մեր երկրի խորքերը իր անխուսափելի չարիքներով ու բարիքներով, կը յեղաշրջէ նահապետական կացութիւնը, կը ձուլէ առանձնայատուկ դասակարգերը և կը լարէ ու կը հանէ նրանց՝ մին միւսի դէմ։

Հակամարտութիւնը այժմ ևս, այո՛, անժխտելի իրողութիւն է, և մենք չենք սպասի կապիտալիզմի ներմուծումին, որպէսզի մեր պաշտպանութեան տակ առնենք՝ ընդդէմ աղայական, վաշխառուական ու այլ մակաբոյծ ուժերի՝ Հայ ազգութեան ահագին մեծամասնութիւնը կազմող ճընշուած աշխատաւոր դասակարգերը։ Նրանց շահերի անունով է ստեղծուել մեր կազմակերպութիւնը և նրանց արդար տենչանքներն են, որ այսուհետև ևս պիտի զարդարեն մեր դրօշակը, պիտի հնչեն մեր բերաններից՝ թէ նորածին պարլամենտում, թէ ազգային երեսփոխանական ժողովում, թէ գաւառական այլևայլ հաստատութիւնների մէջ և թէ մամուլի օրգաններում ու հրապարակական ժողովներում...

Դասակարգերի հակամարտութիւնը իրողութիւն է, բայց... ի շարս տնտեսական ազդակների, գործօն մտաւորական ուժերից ևս կախուած է՝ տալ նրան, այդ հակամարտութեանը՝ թոյլ կամ ուժգին սլացք, հաղորդել նրան սուր, ծայրայեղ ու մոլեգնոտ բնաւորութիւն։ Այստեղ է ահա, որ ծագում են անխուսափելի ընդհարումներ, վերապահումներ, որոնք պայմանաւորւում են մեր բոլոր նախորդ պատճառաբանութիւններով։

Իրականութեան զգացումը (*le sens de la réalité*) երբէք չը պիտի պակասէ մեզ՝ մեր զարհուրելի միջավայրում։ Գուցէ ոչ մի տեղ հանդարտ, աստիճանական էւօլիւսիօնի մեթօդները այնքան հրամա-

յականօրէն անհրաժեշտ չեն, ինչպէս Թիւրքաց Հայաստանում...

Ազգային արդիւնաբերութիւնը մէկն է ազգային քաղաքակրթութեան զօրեղ խթաններից, իսկ նա այսօր աւեր ու կործան վիճակի մէջ է. Նրա աղբիւրները—վաճառականութիւն, արհեստ ու ճարտարարուեստ—գրեթէ ցամաքած... Պէտք է աշխատել փոքր ինչ կեանք մտցնել անապատի մէջ։ Պէտք է բարձրանան ժողովրդի արտադրողական և սպառողական կարողութիւնները։ Մեր երկիրը տառապում է ոչ այնքան կապիտալիզմի ներկայութիւնից, այլ աւելի նրա բացակայութիւնից,—այն ողբալի գաճաճ տնտեսութիւնից, այն նահապետական, վայրագ կեղեքումներից, այն խաւար, անյոյս կորածութիւնից, որի մէջ դեգերում են մեր մասսաները դարերից ի վեր։ Թիւրքահայաստանը Կովկաս չէ... Այնտեղ, Թիւրքահայկական գաւառներում, բուրժուազիան, խոշոր, ունևոր վաճառականութիւնն անգամ, իբրև դասակարգ, դեռ գոյութիւն չունի կամ թէ ունի ստուերային գոյութիւն միայն։

Ահա մի շարք ծանրակշիռ իրողութիւններ, որ պէտք է ամուր դրոշմենք մեր մտքի մէջ, մեր ամենօրեայ աշխատանքի ընթացքում։ Քարոզելով հանդերձ անդուլ, անդադրում մեր իդէալն ու ծրագիրը, արծարծելով, ժողովրդականացնելով մեր քաղաքական ու փիլիսոփայական աշխարհահայեացքը, կազմակերպելով բոլոր ճընշուածներին՝ գիւղացիական, արհեստակցական և այլ տեսակ միութիւնների մէջ, կռուելով բոլոր խաղաղ, օրինական միջոցներով—մեր աշխատաւոր ժողովրդի վաստակը ծծող ցեց, պարազիտ տարրերի դէմ — կեղեքիչ պաշտօնեաների, հարկահանների, կղերի, աղաների, վաշխառուների դէմ — մենք միևնոյն ժամանակ պէտք է ունենանք, իբրև զուգընթաց մտահոգութիւն՝ երկրի

ը ն դ հ ա ն ո ւ ր բ ա ր գ ա ւ ա ճ ո ւ մ ը, արդիւնաբերութեան, արհեստի, կուլտուրայի զարգացումը, որ չի կարելի խաթարել ու վտանգել մի միջավայրում, ուր եռում է ազգայնական մրցակցութեան տենդը...

Այդ բոլորը պէտք է յար և միշտ ունենալ մեր աչքի առջև, մեր ամենօրեայ՝ թէ գործնական և թէ տեսական պրօպագանդի մէջ, թէ մեր իդէալը քարոզելիս և թէ կեանքի մէջ նրան մօտենալիս, արհեստակցական, գործակցական կամ գործադուլային շարժումներ ձեռնարկելիս ու վարելիս։ Դասակարգային, աշխատաւորական պայքարը, երբ նա դուրս կը գայ իր սահմաններից—իսկ նրանք գծւած են բոլոր քաղաքակիրթ երկրներում—կարող է դառնալ դրական և շինարար գործօնից՝ բացասական և կործանիչ...

VIII

ՎԵՐՋԱԲԱՆ

Յառաջդիմութեան ուժը. — Ազգային անհատականութիւն եւ տիեզերական նմանողութեան օրէնքը. — Ռուսին եւ շարժում. — Դրական եւ բացասական արժէքներ.—Մեր գաղափարային հայրերը. — Կուսակցութիւններ եւ կռիւ.—Երբեմն եւ այսօր.—Պատմութեան ռիթմը. — Նոր կեանքի արշալոյսին. —

Հայրենիքը վերածնւում է։ Նոր սերունդ է բարձրանում սարսափի և թշւառութեան անդունդներից՝ պրօգրէսի, առաջադիմութեան զօրաւոր գրաւականներով,—մի նոր տարր՝ սնւած, ուժեղացած մեր հերոսների պաշտամունքով, վերամկրտւած կ ռ ւ ի և տ ա ն ջ ա ն ք ի հոյակապ աւազանի մէջ…

Կռիւը—նրա գոյութեան պատճառն ու նշանաբանը՝ Տ ա ն ջ ա ն ք ը — նրա մեծագոյն դաստիարակը, նրա կորովի, էներգիայի հզօր դարբինը, նրա անսովոր դիմացկանութեան ու տոկունութեան արարիչը…

„Tu fais l'homme, o douleur, l'homme tout entier"!

Հայրենիքը վերածնւում է… Թ՚ող գան նոյնիսկ ուրիշ հարւածներ—նրա մարմինը տրորող ու յօշոտող—նա պէտք է ապրի և առաջադիմի, քանի որ այնքան փոր-

ձուլթիւնների ու գալարումների մէջ՝ միանգամ ընդմիշտ վաստակել է ապրելու և առաջադիմելու իրաւունք։

Թող գա՛յ փորձութիւն, թող գա՛յ հալածանք,
Խաւար թող դառնայ անաղօտ լոյսը.
Սարսափելի չեն հայուն տառապանք,
Միայն... չը հատնէր խեղճուկի յոյսը...

Չէր սխալւում „Մայր Արաքսի“-ի սգատանջ հեղինակը, երբ, երեսուն տարի առաջ, հնչեցնում էր իր առնական երգը։

Յ ո յ ս ը չը հ ա տ ա ւ ճակատագրի անօրինակ զոհի մէջ։ Հայ ժողովուրդը իր տառապանքի ովկիանից իսկ միշտ բնազդօրէն նախազգաց, ընդնշմարեց ապագայի մառախլապատ անհունի մէջ իր փրկութեան արշալոյսը և նոյն բնազդային հաւատով գնաց միշտ նրան ի հանդէպ։ Իր ինքնատիպ կորովով, պաղ, գրեթէ ստօյիկեան համակերպութեամբ անցաւ նա աշխարհի ամենաանգութ տանջանքի բովից, իր հերոսների շարքերով — որ եկել էին դարբնելու իր քաղաքական ճակատագիրը—նա պատւաւոր տեղ գրաւեց ազատատենչ հայրենիքների գերդաստանում։

Հալածանքներն ու յօշոտումները չը կարողացան հասցնել նրան, դարերի մռայլ, արիւնահոս պրօցէսի մէջ, այն մահացու հարւածը, որ հասցրել էին ուրիշ, երբեմն քաղաքակիրթ ու հասակակից ժողովուրդներին։ Հրէութիւնն ևս գրեթէ մարեց, արևելեան ուրիշ ազգերից յետոյ, անցաւ պատմագուրկ համայնքների շարքը, մեռաւ նրա ազգային լեզուն, խեղաթիւրւեց, գռեհկացաւ. Նա այլևս չի ծառայում, իբրև լեզու քաղաքակրթութեան (*Kultursprache*), և այսօր Արևմուտքի ամենաառաջադէմ տարրերն անգամ, սօցիալիստները, հրաժարւում են ընդունելու հրէաների վերաբերմամբ ազգային ավտօնօմիայի գաղափարը՝ Գալիցիայում ու Ռուսաստանում,

ուր վերջերս հանդէս են գալիս հրէական սօցիալիստների զատ, անջատ խմբումներ՝ այդօրինակ պահանջներով. . .

Հայրենի հող ու լեզու, ազգայնական ինքնաճանաչութիւն, յեղափոխական կեանք, քաղաքական-մարտական կուսակցութիւն—ահա ներկայի մեր ամենամեծ „արժէքները“, որ հարկ է ամուր դրոշմել մեր գիտակցութեան ու ամենօրեայ մտահոգութիւնների մէջ, որ հարկ է միշտ աւելի և աւելի արծարծել ու կատարելագործել, որովհետև դրանք են, որ պիտի հասցնեն մեզ քայլ առ քայլ, աստիճանաբար—ռուս, թիւրք, պարսիկ պետականութեան շրջանակներում—ազգային լիակատար ինքնօրինութեան, ավտօնօմիային, որ քաղաքական վախճանակէտն է իւրաքանչիւր համայնքի գիտակցական ու նպատակաւոր գործունէութեան։

Յեղափոխական կեա՛նք, մարտական կազմակերպութի՛ւն...

Ամեն մի երկրում, Ազատութեան յաղթանակի օրերին, մարդկանց առաջին և նւիրական պարտքն է լինում՝ յիշել ժողովրդական դատի նահատակներին ու հերոսներին և մատուցանել իրենց յարգանքի տուրքը մարտնչող կազմակերպութեանը։ Մեզ մօտ, Կովկասում և Թիւրքիայում, այդ հանդիսաւոր օրերին իսկ, գտնւեցան մարդիկ, գրչի տխուր սպասաւորներ—միշտ նոյն տղրուկ ու տիրապաշտ հասարակական դասակարգերից—որ չը քաշւեցին արատաւորել ամենանւիրական գաղափարները և նրանց կրող տարրերը, որ չը խորշեցին ամենազազիր շահատակութիւններից իսկ՝ յեղափոխական կազմակերպութիւնը կործանելու նպատակով... Բարեբախտաբար, սուտ, չարանիւթ յղացումների պրօպագանդը խոր չի թափանցում ժողովրդական մտա-

ծողութեան մէջ, անցնում է միայն մակերեւոյթից և վաղ թէ ուշ գտնում իրեն արժանի դատավճիռը...

Այն օրը, որ մեր ժողովուրդը կը սովորէ կատարելապէս ըմբռնել ու գնահատել իր հերոսներին — պարտքի, պատւի, անձնազոհութեան այդ աննկուն ռահվիրաներին — այն օրը, որ մեր մասսան իր ընդհանրութեամբ կը սովորէ ոգևորւել նրանց խնկելի յիշատակով, կրել նրանց պաշտամունքը իր սրտի և ուղեղի մէջ, փարել բ ո ղ ո ք ի տիեզերական դրօշակին, — այն օրը մնա՛ս բարեաւ բ ռ ն ո ւ թ ի ւ ն՝ իր այլազան ձևերի տակ...

Եւ այդ նոր, վերանորոգիչ հոսանքի մէջ, այդ յարաժամ, ազատագործ բողոքի ճամբու վրայ՝ պիտի գիտենա՛նք կենտրոնացնել մեր ճիգերը ազգայնութեան կայուն, տևողական, ճշմարիտ արժէքների վրայ, պիտի գիտենանք զատել նրանց՝ կեղծ, անկայուն արժէքներից, թօթափել հին, աւերորդ պաշտամունքների մղձաւանջը և որդեգրել նոր, արևմտեան, ստեղծագործող լօզունգները:

Հայկ ու Արամին մոռանա՛նք, եղբարք,
Թա՛փ տանք մեզանից հնութեան փոշին...

Յիշենք նոյն սիրելի բանաստեղծի մի այլ հրահանգը: Հայկն ու Արամը միակ հնացած արժէքները չեն — ուրիշներ ևս կան...

Չենք ուզում „մերկ տախտակի“ վերածել մեր ազգային առանձնայատկութիւնների քարտէզը: Չենք ուզում բնաւ ժխտել մեր ազգային կերպարանքը, ինքնութիւնը: Հեռու ենք այդպիսի անհեթեթ ու վնասակար յղացումներից, որ կարող են ծնունդ առնել գուցէ միայն կօսմօպօլիտիզմի մի քանի թերուս նորընծաների ուղեղներում: Անշո՛ւշտ, մենք նախ և առաջ մ ե ն ք ե ն ք: Անշո՛ւշտ, ահագին է ժառանգականութեան

ու աւանդութեան դերը… Բնական—ոչ գերբնական—նախախնամութեան տնօրինութեամբ՝ իւրաքանչիւր ազգի հաւաքական բնաւորութիւնը իր էական գծերով կոփւել, ձուլւել է նրա գոյութեան արշալոյսին իսկ, միջավայրի, կեանքի կռւի տիրական ազդեցութեան տակ և յարատևել է սերունդների երկարաձիգ շղթայի մէջ։ Ամբողջ բնական, տիեզերական շրջապատը, կլիմա, հող, աշխարհագրական ու տեղագրական պայմաններ և այլն, կռելով ու կազմակերպելով ժողովուրդներին, հաղորդել են նրանց դեռ շա՜տ վաղուց —պատմութեան շէմքից անդին, հեռաւոր նախնիքների օրով—մի շարք հիմնական հակումներ, որ հետզհետէ շեշտւել, զարգացել են դարվինական մեծ օրէնքի, „գոյութեան կռւի“ զօրութեամբ և ժառանգականութեան օրէնքի ուժով՝ փոխանցւել են սերնդէ սերունդ, ամեն մի ազգի ինքնատիպ էւօլիւցիայի մէջ։

Ազգայնական մատերիալիզմը շաղկապւած է ազգայնական սպիրիտուալիզմի հետ. Ֆիզիկական, անտրօպօլօգիական գծերին միանում են — այն նախնական ժամանակներից իվեր—հոգեբանական ուրոյն գծեր, որ կազմում են „ազգային ոգին“—անշօշափելի ու անվերլուծելի այդ առեղծւածը։ Եւ թւում է թէ, այդ հաւաքական, ուրոյն ոգին անդրդւելի ձգտում ունի՝ պահպանելու յարատևութիւն՝ ժամանակի ու տարածութեան յեղյեղումների մէջ, ինչպէս ազգերի ֆիզիկական առանձնատիպարը…

Անտարակոյս, բացարձակապէս յաւիտենական ոչինչ չը կայ և ազգային ոգիների ու բնաւորութիւնների նկատմամբ ևս արդարացի է Հերակլիտեան անմահ խօսքը. „ամեն ինչ հոսում է“… Տիեզերական էւօլիւցիան իր ջնջող ու վերաշինող ալիքների մէջ—դանդա՜ղ, անշուշտ, բայց ճակատագրօրէն—փոփոխելու է ցեղա-

կան, ազգայնական բնաւորութիւնները, ինչպէս որ փոփոխում է յարաժամ կենդանական այլևայլ տեսակները։ Սակայն այդ փոփոխութիւնների հետ միասին և չը նայեած մարդկային կենսապայմանների աստիճանական հաւասարեցման երկրագնդի բոլոր ծայրերում, չը նայեած կրթութեան ու քաղաքակրթութեան „հարթարար“ ազդեցութիւններին,—իւրաքանչիւր ազգի էւոլիւցիան, զարգացումը, ընթանում է, այնուամենայնիւ, իր յատուկ աւազանով, կրում է այնուամենայնիւ իրեն յատուկ տիպ-դրոշմը, պահպանում է իր ուրոյն անհատականութիւնը, համապատասխան այն ջոկ, ուրոյն, զարմանալի բիօլօգիական տարբերքներին, որ թագնուած են ամեն մի ազգի սերնդէ-սերունդ ժառանգուած, նախնաւանդ, պապենական սաղմանիւթի մէջ...

Ո՛չ, մենք չենք ժխտում և չենք կործանում ազգային անհատականութիւնը։ Մենք նոյնիսկ համարում ենք այն՝ անհրաժեշտ՝ մարդկութեան հարստութեան համար։

„Փափագելով հանդերձ ոչնչացնել բոլոր սահմաններն ու խտրութիւնները ազգերու միջև, ձգտելով հանդերձ կազմակերպել մէկ, ներդաշնակ, ամբողջական մարդկութիւն մը, այսօրուան կտոր-կտոր, բաժան-բաժան ու հակամարտ աշխարհին տեղ,—ընկերվարութեան իրագործումը չի պահանջեր արդի ուրոյն ազգայնական միութիւններուն իսպառ ձուլումը,—միութիւններ, որոնք իրենց պատմականօրէն ժառանգած բեղմնաւոր մասնայատկութիւններով կարող են միայն ճոխացնել ապագայ ընկերավար մարդկութիւնը“։ (Հ. Յ. Դ. Ծրագիր)։

Մենք ուզում ենք միայն վերացնել այն բոլոր ստուերները մեր ազգային գոյութիւնից, որոնք թոյլ չեն տալիս, որ այդ բաղձալի անհատականութիւնը փթթի, ցոլայ իր բովանդակ պայծառութեամբ։ Մենք գիտենք նաև, որ ստիպուած ենք մեր

առաջխաղաց գործունէութեան ընթացքում հաշուի առնել մի շարք յոռի ու հնաւանդ պաշտամունքներ, — կրօնից, եկեղեցուց և ուրիշ ֆէտիշներից պատուաստուած — որոնք խորունկ արմատներ ունենալով մեր ժողովրդային զանգուածների հոգեբանութեան մէջ, թելադրում են առաջ գնալ պաղ, հանդարտ, համբերատար շրջահայեցութեամբ և ոչ գլխապատառ վազքով, անհամբեր ու գահավէժ թռիչքներով...

Այդ ասել չէ, սակայն, թէ մենք պէտք է ճշմարիտ հաւատամքի վերածենք այդ կասկածելի „ազգային արժէքները“ և ծունր իջնենք նրանց առջև, մի տեսակ միստիկական աւանդամոլութեամբ, ինչպէս անում են հայկական դեմօկրատիզմի մի քանի մոլորուած չամպիօններ։ Չը պէտք է հռչակենք վնասակար սնապաշտութիւնները, որպէս սուրբ ու անձեռնմխելի։ Յարգե՛նք, այո, մարդկանց, ժողովուրդների մտածելու, զգալու և հաւատալու ազատութիւնը, բայց և ձգտենք — օգտուելով մեր սեփական մտքի, խօսքի ազատութիւնից — բարեփոխել այդ քարացած ու յետադէմ աշխարհահայեացքները, քննադատել ու փարատել։

Յանուն „ազգային ինքնուրոյնութեան“ ու անհատականութեան՝ չը պիտի գուրգուրենք ռ ո ւ տ ի ն ը (la routine, սովորամոլութիւն, աւանդամոլութիւն) — ինչպէս հրահանգում են շահախնդիր դասակարգերը։ Յանուն այդ ինքնուրոյնութեան նրանք պատերազմ են հրատարակում բոլոր ը ն դ օ ր ի ն ա կ ո ւ մ ն ե ր ի, նորոյթների դէմ, օտար, արևմտեան գաղափարների դէմ։

Հայկական ծանօթ „ազգասիրութիւնը“ նոյնանում է այդ ռուտինին, այդ յետախաղաց հոսանքին։ Նա սնւում է նոյն աղբիւրներից, մեկնում է նոյն չուկէտներից, ինչպէս բոլոր միւս երկրների պահպանողական հոսանքները։ Նա հրահանգում է՝ պ ա շ տ ե լ ա ւ ա ն դ ը,

սովորութիւնը, պաշտել նախնիքներից կտակւած բոլոր հաւաքական ստացւածքները... Հպա՛րտ են ամենուրեք այդ „միջնադարեան տարրերը“ իրենց պաշտման առարկաներով.—գերմանական իւնկերը՝ իր հնաւանդ հօհէնցօլլերնեան թռունցքի սիստեմով, „իսկական ռուսը“՝ կնուտի ու փառութեան ռէժիմով, ցարիզմի ու օրթոդօքս եկեղեցու էմբլեմներով, համիսլամական պատրիօտը՝ իր Շերիաթով ու խալիֆական մեծութեան հմայքով, հայ ազգասէրը իր „Հայկերով ու Արամներով“, հայ կղերականը՝ իր Հայաստանեայց եկեղեցիով, դօգմերով, սրբերով, մասունքներով, թափօրներով, բելեխներով...

Ահա թէ ինչ տեսակ գործօններ են ոգևորում ժամանակակից հայ „ազգասէրներին“: Մեզ համար՝ թանկ ու պաշտելի են դրական արժէքները, նրանց համար՝ բացասական ու անցողական: Մեզ համար՝ „հայութիւն“ կամ „ազգութիւն“ գաղափարի պարունակութիւնը ժողովուրդն է իր առաջադիմութեան դրական գործօններով և երբ մենք քարոզում ենք ազգայնութեան սէր, նրա շահերի նախանձախնդրութիւն՝ ունինք միշտ աչքի առաջ այդ խոշոր, առողջ և տիրական կորիզը: Նրանց համար՝ հայութիւնը նախ և առաջ այդ „Հայաստանեայց եկեղեցին“ է, կղերը, աղաները, ապա և հին ու հոյակապ պատրանքների ժառանգութիւնը, „փառքերը“, „Արամեան“ և „Տիգրանեան“ խորհրդանշանները...

Մեզ համար, մեր ըմբռնումով ու համոզումով՝ ամբողջ ազգային քաղաքակրթութիւնը— պատմութիւն, գրականութիւն, լեզու (մշակւած, գրական լեզու և այլն)—որ մինչև օրս եղել է սեփականութիւն մի քանի առանձնաշնորհեալ դասակարգերի՝ կոչւած է և ձգտում է միշտ աւելի ընդլայնել իր ազդեցութեան սահմանները: Ազգային կուլտուրայի բարիքները —

ինչպէս ասում է „Դաշնակցութեան“ Ծրագիրը — դադարում են մի չնչին փոքրամասնութեան արտօնութիւնը լինելուց, նրանք հետզհետէ թափանցում են զանգուածների մէջ, ծաւալւում, ժողովրդականանում։ Այդ հանգամանքին յարաժամ նպաստում է ռամկավարական սկզբունքների տարածումը, նպաստում է պրօպագանդիստներից, քարոզիչներից ամենահզօրը — ժողովրդական դպրոցը. Նա, որ անդուլ արծարծում է ամենուրեք, պիտի արծարծէ մեզ մօտ եւ հայրենիքի առողջ սէրը, գիտակցական, անխարդախ ու արգասաւոր հայրենասիրութիւնը ժողովրդային լայն խաւերում։

Ազգային քաղաքակրթութիւնը պիտի դառնայ համաժողովրդական սեփականութիւն։ Ուրիշ խօսքով՝ ժողովուրդն ինքը պիտի դառնայ ազգ։ Այդպէս է ժամանակակից ռամկավարութեան նշանաբանը։ Այդպէս է և համաշխարհային պատմութեան անդրդուելի ձգտումը։

Այդպէս չէ նշանաբանը առանձնաշնորհեալ դասակարգերի։ „Ազգը“ հէնց իրենք են, ժողովուրդն էլ — իրենք... Ազգային ճշմարիտ արժէքները այլափոխւում են նրանց բառագրքում և հանդէս գալիս միջնադարեան խաւար պատկերով... Խանդավառութիւն՝ կեղծ, բացասական արժէքների համար։ Չափազանցութիւն ազգային ուրոյն հմայքի և կարծեցեալ արժանաւորութիւնների։ Կեղծ, ուռուցիկ հպարտութիւն, գոռոզութիւն... Ահա այդ խաւար ու ռուտինային պատկերի տիրապետող գծերը։

Արժէքների գնահատութեան եղանակից բղխում է տրամաբանօրէն և ազգային համապատասխան քաղաքականութիւն։ Կեղծ, միջնադարեան „արժէքների“ ջատագովումը ամեն տեղ արտադրել է յոռի պահպանողական քաղաքականութիւն. — Նաև այն ազ-

գերի մէջ, որոնք զրկուած են քաղաքական անկախութիւնից։ Կեղծ, անկայուն արժէքների անունով ամեն տեղ կռիւ են յայտարարել ընդդէմ նորագոյն գաղափարների, եւրոպականութեան ու ճշմարիտ քաղաքակրթութեան։

Նոյն անկայուն, հնադարեան արժէքների անունով՝ Հայ մարտնչող խաւարամտութիւնը պարզել է իր դրօշակը 60-ական թւերից ի վեր, կռուել է օրհասական կատաղութեամբ՝ անգամ այն համեստ, բուրժուազական լիբերալիզմի դէմ, որի ռահվիրան էր Գրիգոր Արծրունին և որ քարոզում էր՝ փոքր ինչ թարմացնել, վերանորոգել „Հայաստանեայց առաքելական եկեղեցին“։

Ազգային առողջ փիլիսոփայութիւնը գիտէ ղանազանել կեղծը հարազատից, արճիճը ոսկուց։ Անտարակոյս, հին, աւանդական ստացւածքների մէջ կան թանկագին, նւիրական գանձեր, կան իսկական արժէքներ — լեզու, գրականութիւն, պատմութիւն, արւեստ ևայլն — որոնց համար ընդունակ են ոգևորւելու ազգի բոլոր գիտակից անդամները, պահպանողականից մինչև սօցիալիստը։ Բայց անգամ դրանք փոփոխւում են և պէտք է փոփոխւին շարունակական ընդօրինակումներով, օտար, աւելի բարձր ազգերից, — ընդօրինակումներ, որ չեն խախտում ազգայնական ինքնուրոյնութիւնը։

Չի տուժում այդ վերջինը բոլոր այլազան փոխառումներից ու ազդեցութիւններից — նիւթական կուլտուրայի մէջ, գրականութեան, արւեստի մէջ ևայլն։ Բոլոր ազգերը սովորում են իրարից, ընդօրինակում են փոխադարձաբար։ Եւրոպան ընդօրինակել է Հռոմին, Հռոմը՝ Յունաստանին, Յունաստանը՝ Արևելքին։ Ֆրանսիական, գերմանական գրականութիւնն ու արւեստը

անհունապէս օգտուել է վերածնւող Իտալիայի փառապանծ արուեստից, գրականութիւնից։ Չը կայ բացարձակ իմաստով ինքնուրոյն ազգ. ազգային ուրոյնութիւնը յարաբերական է, ինչպէս անհատինը, ինչպէս ամեն բան այս աշխարհում։

Փոխառելով ու մարսելով ուրիշ ազգերի առաջադիմութեան արգասիքները, կաղապարելով հայրենի երկրի կուլտուրական հաստատութիւնները ըստ օտարի՝ իւրաքանչիւր ազգ, այնուամենայնիւ, շարունակում է պահպանել իր ինքնութիւնը։ Ռուսը, հայը, թիւրքը, վրացին, պարսիկը, ֆինը—բոլորն էլ ենթարկւում են Արեւմուտքի հզօր ու տիրական ազդեցութիւններին, բոլորն էլ որոշ չափով ընդօրինակում, որդեգրում են արեւմտեան գաղափարները, իդէալները, հաստատութիւնները. և սակայն նրանք բոլորը մնում են և պիտի մնան միշտ խորապէս տարբեր, ինքնատիպ, իրենց ուրոյն, ազգոյնական առանձնայատկութիւններով։

Նմանողութեան, ընդօրինակման այդ համաշխարհային օրէնքի մէջ (*Loi de l'imitation*) կայ մի խոշոր հոգեբանական իրողութիւն, որ բացատրում է առեղծուածը։ Ոչ մի ազգ նոյնութեամբ չի իւրացնում օտարներից փոխառած գաղափարները. ամեն մէկը իւրացնում, մարսում է իր ձեւով, համաձայն իր ինքնատիպ ոգուն ու բնոյթին. ամեն մէկը ձուլում է որոշ, համաշխարհային մի գաղափար, մի իդէալ՝ իր ներքին առանձնայատուկ քուրայի մէջ և հաղորդում է նրան իր ուրոյն դրոշմը, իրականացնում է այն կեանքի մէջ՝ ուրոյն եղանակով։ Երեւոյթը կոչւում է փիլիսոփայութեան մէջ՝ ազգային ընդհայեցութիւն կամ ներհամոզումն (*nationale Aperzeption*)։

Ահա թէկուզ Ռամկավարութեան ու Սօցիալիզմի գա-

ղափարը։ Որպիսի անվերջ այլազանութիւն՝ կիրառումների մէջ։ Որքան տարբեր են „դասակարգային կուլի“ մեթօդները տարբեր ազգային միջավայրերում։ Մի տեղ շեշտւում է քաղաքական, պարլամենտական կուլի մեթօդը, մի այլ տեղ՝ տնտեսականը, մի տեղ զարգանում է խաղաղ ու հոյակապ Տրէդ-իւնիօնիզմը, մի այլ տեղ՝ յեղափոխական սինդիկալիզմը. մի տեղ սօցիալիզմի յարաճուն ալիքը գրոհ է տալիս դէպի ազգային կենտրօնական պարլամենտը, ստւարացնելով այնտեղ իր մարտական ներկայացուցչութիւնը, մի այլ տեղ՝ նա նւաճում է առաւելապէս գաւառական հաստատութիւնները, քաղաքային խորհուրդները, մի տեղ բարգաւաճում է չափաւոր, պատեհապաշտ տակտիկը, մի այլ տեղ՝ անհաշտ-յեղափոխականը և այլն և այլն։

Այդպէս է իւրաքանչիւր մեծ, տիեզերական գաղափարի ճակատագիրը։ Ամբողջ ժամանակակից ռամկավարական հաւատամքը, Ատլանտեան եզերքներից մինչև Ճապօնական ծովը, Տիբրոսից մինչև Բալկաններն ու Բօսֆորը, մինչև հեռաւոր Իրանը՝ սնւում են նոյն հզօր արմատից, նոյն չքնաղ ու յաւերժական աղբիւրից, որ դուրս ժայթքեց 1789 անմոռանալի թւականին Դանտօնի ու Ռօբեսպիեռի հայրենիքում։ Ամենուրեք նոյն „Մարդկային իրաւունքների“ կիրառումն է, նոյն հիմնական գաղափարի պատւաստումը և ամենուրեք նա ձուլւում ու ձևափոխւում է ազգայնական քուրաներում, յարմարւում է իւրաքանչիւր համայնքի ոգուն, տեմպերամենտին, խառնւածքին։

Ոչ, ազգերը չեն կորցնում իրենց ինքնատիպ բնոյթը, ընդօրինակելով ու ազդւելով։ Չի կորցրել իր ինքնութիւնը անգամ մեր փոքրիկ հայկեան ցեղը, որ դարեր շարունակ տարուբերւել է օտար, նւաճողական յորձանքների մէջ, անդադար ենթարկւելով օտար քաղաքակըր-

թութիւնների, լեզուների, գրականութիւնների բռնաւոր կամ կամ կամաւոր ազդեցութեան։ Անշարժ ու յետ են մնացել այն ազգերն ու ցեղերը, որոնք մերժել են ընդօրինակումն ու արտաքին ազդեցութիւնները և փակուել ու յամառել են ռուտինի, աւանդապաշտ սովորութիւնների մէջ։ Ապացոյց — Չինաստանը, Թիւրքիան, իսլամական ուրիշ երկրներ։

Որքան արագ ընթանայ ընդօրինակման (ոչ, ի հարկէ, անգիտակից կապկութեան) պրօցէսը, որքան շուտով ու դիւրութեամբ յետամնաց ազգութիւնները կը թօթափեն „հնութեան փոշին“ և կ՚ենթարկուին նոր, արևմտեան գաղափարի ազդեցութեան — այնքան շուտով կը բարգաւաճին նրանք և այնքան պատւով ու համարձակ տեղ կը բռնեն տիեզերական արժէքների մրցարանում։

Ազգային բոլոր առանձնայատկութիւնները ինքնին դրական արժէքներ չեն։ Դրական են միմիայն նրանք, որ նպաստում են ազգային համայնքների աստիճանական վերելքին, աստիճանական առաջխաղացութեան՝ դէպի ժամանակակից ռամկավարութեան Իդէալը, դէպի ազատութեան և ընդհանուր, զանգուածային բարօրութեան յաղթանակը։

***

Այդ յաղթանակի գաղափարին նուիրեցինք մեր դրօշը. այդ գաղափարով ապրեց մեր կազմակերպութիւնը մինչև օրս, երբ բոլորում է իր 20-ամեայ աշխատանքի արիւնափայլ շրջանը։

Եւ այսօր, նոր կեանքի արշալոյսին, լցուած աշխատելու նոյն եռանդով, նա հաստատում է իր տեղը „հայրենական արժէքների“ շարանում, իբրև միակ կենսունակ քաղաքական մարմինը դարերով յօշոտուած,

բռնաբարուած ցեղի մէջ։ Այսօր, նոր կեանքի արշալոյսին, նա հանդէս է գալիս իր աւելի որոշուած ծրագրով ու աշխարհահայեացքով, շրջապատող գաղափարային քաօսի մէջ, ներշնչուած մի կողմից հայրենի ռահվիրաների գործերով—Աբովեանի ու Րաֆֆիի, Ալիշանի ու Պատկանեանի—միւս կողմից՝ եւրոպական մտքի ու գործի տիտաններից՝ Դարվինից, Սէն-Սիմօնից, Մարքսից, Լասսալից, Պրուդօնից...

Եւ պայքարը սաստկանում է հայկական հրապարակում, կրքերը քանի գնում, բորբոքւում են հակառակորդ բանակի մէջ, որ համարեա վերածւել է թ շ ն ա մ ա կ ա ն բ ա ն ա կ ի.. Ողբում ենք անկեղծօրէն, որ գաղափարային հակառակորդների տեղ՝ գործ ունինք պարզապէս թշնամիների հետ... Բայց անգամ թշնամիների փոխադարձ յարաբերութեան մէջ ընդունուած են համաշխարհայնօրէն որոշ, նուազագոյն շիտակութեան ու ասպետութեան կանոններ,—մեզ մօտ այդ էլ բացակայում է։ Այն ժամանակ, երբ մեր դէմ—յիշենք դարձեալ միանգամ՝ մեր եզրափակող վերջաբանում—այն ժամանակ, երբ մեր դէմ լարուած է իր խեղդիչ ախորժակների բոլոր թափով ամենաքստմնելի բռնակալութիւնը, երբ երկգլխեան արծիւը, սև-հարիւրակեան խաժամուժի յաղթական աղաղակի մէջ, կատաղօրէն հետամտում է մեզ, իբրև, ըստ բարօն Նոլդէի, „միջազգային ահաւոր, յեղափոխական մարմինը", հալածում է մեզ իր վայրագ ոստիկանութեամբ, իր գաղտնի ու յայտնի գործակալներով, ա ն գ ա մ պ ա ր ս կ ա կ ա ն մ ա ր տ ա դ ա շ տ ե ր ո ւ մ,—նոյն այդ ժամանակ մեր հայկական միջավայրում ևս, մի տեսակ „նախասահմանեալ ներդաշնակութեամբ", մղւում է նոյն նենգաւոր արշաւանքը, նոյն կործանիչ ախորժակներով և մի երկչոտ ու քծնող, անօրինակ փոքրոգութեամբ...

Տեսարանը մեզ չի վհատեցնի։ „Դաշնակցութիւնը" սովոր է տեսնել իր դէմ ուժեղ հակառակորդներ։ Նա չի էլ ուզի պայքարել ու յաղթանակել ծոյլ, փտած, դիակնացած միջավայրում, թոյլ ու գաճաճ, անկերպարան կուսակցութիւնների, ուժերի դէմ։

Թո՛ղ ծառանան հակառակորդները իրենց ամբողջ հասակով, բայց օրինաւոր զէնքերով։ Թո՛ղ աճին, կազմակերպուին ու զարգանան, եթէ կարող են, հակառակորդ դասակարգերն ու կուսակցութիւնները — բուրժուազիան, կղերը, աղաները — իւրաքանչիւրը հրապարակ գայ իր յստակ աշխարհահայեացքով ու ծրագրով, իր մտքերով ու գործերով... „Ohne Partei kein Fortschritt!" — յայտարարում է գերմանական իմաստութիւնը. „առանց կուսակցութեան չը կայ պրօգրէս, առաջադիմութիւն"...

Լա՛ւ գիտակցենք այդ ճշմարտութիւնը, ընկերներ, և աշխատենք մենք ևս ուժ դառնալ երկրի մէջ, գիտակցութիւն կրող ուժ, գիտակցութիւն սերմանող ուժ։ Մեր անցեալի և մեր կուռ համոզումների ներշնչած վճռականութեամբ՝ դէ՛մ կանգնենք բոլոր խաւար ուժերին, որպէս ձոյլ, ներդաշնակ և կարգապահ մի բանակ, յենուած միշտ՝ անաղարտ ընկերականութեան այն գեղեցիկ սկզբունքի վրայ, որով ուժեղ ու հրապուրիչ է եղել „Դաշնակցութիւնը" իր գոյութեան առաջին օրերից ի վեր։ Մեր պատասխանատուութեան զգացումի թելադրած զգուշութեամբ՝ խուսափե՛նք — անհատապէս և խմբովին — ամեն տեսակ վրիպումներից, այլասերող ծայրայեղութիւններից, անգամ ի տես ակներև գրգռումների և յանցաւոր դաւերի...

Կարգապա՛հ — նախ և առաջ։ Մի մարտական մարմնի համար անհրաժեշտագոյն պայմանն է դա, ստիպողական

պարտաւորութիւնը։ Նա պայման է մասնաւորապէս մեր արիւնաքոյր ժամանակներում և մեր բացառիկ միջավայրում։ Մենք մի փոքրիկ զօրք ենք եղել, որ աճել ենք աստիճանաբար կարգապահութեամբ, ընկերասէր ու գաղափարաշունչ դիսցիպլինով, գրաւել ենք զանգւածների վստահութիւնը և դրա շնորհիւ վարել ենք դժւարին ճակատամարտներ։ Զը խրախուսե՛նք դասալքութիւնը մեր շարքերում, չը դաւաճանե՛նք մեր այդ առողջ ու հիմնաւոր աւանդութեան և չը փորե՛նք այդպիսով մեր քսանամեայ կազմակերպութեան պատւանդանը, որ և միակ խարիսխն է մեր համայնքի քաղաքական գոյութեան ու յարատևութեան... Զափազանցնո՞ւմ ենք արդեօք... „Դաշնակցութիւնը“ տիտանեան ուժ չէ, հարկաւ, բայց յամենայն դէպս նա այն է, ինչ կարող է տալ մեր փոքրիկ ու հալածական ժողովրդի կորովը՝ կազմակերպչական ստեղծագործութեան ասպարիզում։ Նա մարմնացնում ու արտայայտում է maximum-ը, մեծագոյն աստիճանը այդ ժողովրդի կազմակերպական կարողութեան... „Աւելին“ կարելի չ՚եղաւ շօշափել ու արձանագրել այս քսանամեայ մրրկածուփ շրջանի մէջ...

Քալե՛նք, ընկերներ։ Ամո՛ւր պահենք մեր դիրքերը արտաքին և ներքին ազատասպան հողմերի դէմ, բայց դիրքերը պահպանելը դեռ բաւական չէ։ Մենք նրանց պահպանել ենք և աւելի մռայլ, կրիտիկական շրջաններում... Այսօր անթիւ ու հսկայական խնդիրներ կան մեր առջև. անհրաժեշտ է լայնացնել կազմակերպութեան շրջանակները, գրաւել միշտ աւելի և աւելի ստւար թւով համախոհներ — գրաւել ոչ թէ „հաւատացեալների“, կոյր զկուրայն հետևողների, այլ „համոզեալների“ լէգէօններ։ Համոզեալների՝ որ չ՚ընկճւին բախտի ծանր հարւածների տակ, չը դողան

ժամանակաւոր ձախորդութեան ու յուսախաբութեան ալիքներում, չը հետամտեն վայրկենական, մակերեսային ժողովրդականութեան, այլ քայլեն պաղ, անխռով վստահութեամբ դէպի ապագան, համոզուած, որ իրենց գաղափարների մէջ է ժողովրդի վերջնական և ճշմարիտ ազատագրութիւնը... Զինուորագրուե՛նք այդպիսիներին և հեռու պահուենք թոյլ, յեղյեղուկ, աննկարագիր տարրերից, որոնք յարում են մեր շարքերին պատահաբար, ոչ-գաղափարական դրդումներով ու հաշիւներով և վաղ թէ ուշ—ոմանք կուսի կէս-ճանապարհին, ուրիշները ռէակցիայի խստաշունչ օրերի մէջ—մատնում են իրենց գոյնը, լքում մեզ և յարմարւում տիրապետող գորշ ու անարգ կացութեան լօզունգներին։

Յառա՜ջ, ընկերներ։ Ճանապարհը դեռ երկար է, դժուարին, մացառապատ. խոչընդոտները — մի ամբողջ լեռ։ Գուցէ, ո՞վ գիտէ, դեռ պէտք լինին անձնազոհութեան ու հերոսութեան նոր թռիչքներ, գուցէ նոր-նոր շիրիմներ պիտի կոթողեն հանգրուանները՝ այդ երկարաձիգ ու խորհրդաւոր ճանապարհի վրայ...

Դժուարագոյնը անցել ենք արդէն. բռնապետական սառոյցը խորտակուած է... գրեթէ ամենուրեք։ Եւ մենք այլևս—փա՜ռք Բախտին—վաղեմի փոքրիկ, կղզիացած բանակը չենք, մի բուռն խիզախ ռահվիրաներ, որ տասնեակ տարիներից ի վեր, առանց ազատ և ապահով կայանների, դեգերում էին Մասիսի շուրջը, մի պաղ, անյոյս, սառցային անապատի մէջ. մենք այլ ևս չենք ապրում այն դաժան ժամանակներում, երբ ազատագրական շարժման ուժը չափւում էր մի քանի հերոս-անհատների ուղեղներով ու բազուկներով, անհատների՝ որ, զինուած հոգեկան անսովոր կարողութեամբ, քայլում էին բռնապետութեան անծայրածիր լաբիւրինթոսում, որպէս

ջինջ, կենդանի մարմնացումը յեղափոխական հաւատի ու կորովի, քայլում էին հեգնելով ճակատագրի սասանեցուցիչ հարւածները, ժպտալով արիւնների ու աւերածների վրայից, թափահարելով անդադար յեղափոխութեան դրօշը, հնչեցնելով կուփ, ապստամբութեան զօղանջը՝ այդ ցուրտ ու լքաւեր ամայութեան մէջ, յաճախ, աւա՜ղ, ապարդիւն, անպատասխան, անարձագանք... Անցա՛ն գնացին—վատ, չարաշուք երազի պէս—այդ սարսափելի ժամանակները և այսօր ռէակցիայի ու բռնութեան երերուն պատնէշների դէմ մի հսկայ, անպարտելի ուժ է տնկւած մեր ու դրացի ազգերի մէջ, Քրիստափորների և Սերոբների հազւագիւտ, առաջագնաց շարքերին՝ աւելացել են յեղափոխական արթնացած, ինքնաճանաչ զանգւածները:

Այդտեղ—մեր ճիգերի հզօրագոյն կռուանը:

Այդտեղ— և մեր գալիք յաղթանակների ամենահաստատուն գրաւականը...

Դժւարագոյնը, այո, անցել ենք: Սառուցը խորտակւած է և ներսում, մեր համայնքի անհիւրընկալ, աւանդապաշտ, ստրկական թոյներով յափրացած մթնոլորտում... Ի՞նչ փոյթ, թէ հին դարերի ժառանգութիւն—քափն ու մրուրը առատութեամբ դեռ լողում է ազատական յորձանքի մէջ...

Ներկան իր տխուր պատկերով, իր պղտոր ու ախտաւոր հոսանքներով՝ թող չը խռովէ՛ ձեզ, ընկերներ: Նրանք կը լինին և ապագայում, նրանք կան այսօր և աւելի առաջադէմ ազգերի մէջ: Պատմութեան յաւերժական ռիթմն է դա—հնի ու նորի տիեզերական մաքառումը, որ կը յարատևէ անդրդւելի անհրաժեշտութեամբ... մինչև վերջ:

Առա՜ջ գնանք մեր վերջնական յաղթանակի գիտակցութեամբ և պատասխանե՛նք մեր դէմ ուղղւած տեղա-

տարափ հարուածներին՝ մշտապէս կազմակերպուելով ու դաստիարակելով մեր շարքերը, մշտապէս ամրացնելով մեր բարոյական կապերը ժողովրդի հետ։ Առա՛ջ գնանք մեր ուժի և մեր ծանր պատասխանատուութեան զգացումով և մղե՛նք մեր կռիւը, առանց երբէք շեղուելու օրինաւորութեան, շիտակութեան ճանապարհից, առանց երբէք ընկճուելու, համակուելու յոռետես, ծերունական տրամադրութեամբ, միշտ տոգորուած մեր անմահ մեռելների, մեր նահատակ ընկերների բոցավառող յիշատակով։

Յառա՛ջ—դէպի նոր ստեղծագործող աշխատանք՝ վերածնուող Հայրենիքում... Նոր կեանք է ծլում այնտեղ հսկայական աւերակներից — „*Ein neues Leben blüht aus den Ruinen*“!—Նոր յոյսեր են ճառագայթում „արցունքի հովիտների“ վրայ...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

ՅԵՏԱԴԱՐՁ ԱԿՆԱՐԿ

ԵՐԵՍ

Կուլտուրական եւ քաղաքական վերածնութիւն. — Վերջինը՝ տրամաբանական շարունակութիւն առաջինի. — Ուժ եւ իրաւունք. — Հայ մարտական կազմակերպութիւնը, նրա միսիան. Թիւրքիայում, Ռուսաստանում, Պարսկաստանում. — Մօտիկ անցեալը. — Դիւանագիտութիւնը եւ մեր դատը . . . . 1 — 37

II

ՀԵՐՈՍՆԵՐԸ

Ո՞ւր է հայկական պանթէօնը. — Հայրենիքը՝ մի համատարած գերեզմանոց — Դէմքեր. — Արամեանը. — Հայոց կեանքի „կոնտրաստը“. — Աւօ. — Հայրենասիրութիւնը՝ միստիկական մի հաւատամք. — Սովորական կռիւները եւ հերոսների կռիւը. — „Վճռական իմպերատիվ“. — Տիպարներ ու հակոտնեաներ. — Զաքարեան եւ Մարտիկ. — Ժողովրդական քարոզչի տիպը. — Հրայր. — Պետօ-Սարուխանեան եւ Պետօ-Սերեմջեան. — Վահան Մանուէլեանը. — Դարձեալ „հակադրութեան“ ձայնը. — Կարօ-Զօրեան. — Րաֆֆիի հերոսները

ԵՐԵՍ

եւ մերոնք. — Լեռների արծիւը. — „Փաշա" եւ „Փադի-շահ".—Դաւադիր յեղափոխականը.—Բաբկէն Սիւնի.—Դերոյեան. — Հերոսացանքը Կովկասում ու Պարսկաս-տանում.—Դաւադիրներ եւ ահաբեկիչներ.—Ժամհարեան, Մարտիրոս, Ստեփանեան, Կարօ-աստրախանցի.—Անանուն հերոսներ. — „Վիտօշի բազէն". — „Աստւածատանարը"՝ ժողովրդի սրտում. — Բանտարկեալները. — Դանտէեան դժոխք. — Ողջերի պլէադը . . . . 38 -- 59

III

Ի՞ՆՉ ԱՐԻՆՔ ԵՒ Ի՞ՆՉ Չ'ԱՐԻՆՔ

Համազգային ինքնագիտակցութիւն. — Մէկ իդէալ եւ մէկ նշանաբան. — Դաշնակցութիւնը՝ սինթեզ հայ ժողովրդի երեք հատւածների. — Միջկուսակցային համերաշխութեան վրիպումները ու պատճառը. — Միջազգային համերաշ-խութեան աջողութիւնները. — Դաշնակցութիւնը եւ մա-կեդոնացիք. — Դաշնակցութիւնը եւ թիւրքերը. — Պրոպա-գանդը Եւրոպայում. — Քննադատութիւններ աջից ու ձախից. -- Եզրակացութիւն . . . . 60 — 88

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

Յ Ե Ղ Ա Փ Ո Խ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՀԱՐԻԱԾ ԵՒ ՀԱԿԱՀԱՐԻԱԾ

Օսմանեան վերիվայրումի համաշխարհային արժէքը. — Անդ-րադարձումները դրսում եւ ներսում. — „Հուրրիէթ" եւ „Ադալէթ". — Խօսքերի ուժը. — Յաղթական բանակը, նրա

ԵՐԵՍ

մտաւոր պարագլուխները. — Աղէտալի վրիպումներ. — Յուսախաբութեան ալիքը. — Պարլամենտական ընտրութիւնները եւ տիրողի ու հպատակի իրաւունքը. — Պանթուրքիզմ. — Նախապարիլեան Սահմանադրութիւնը եւ հայ ժողովուրդը.—*coup d'état*-ի նախապատրաստում եւ ժայթքում. — Պատասխանատուութիւններ.—Բռնաւորի յուղարկաւորումը. — Ադանա . . . . 91 — 99

II

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Հին վէրքը. — Ինքնապաշտպանութեան քարոզները՝ „ձայն բարբառոյ". — Զարդի կօշմարը չի փարատել. — Ոչ միայն յոռետեսութիւն, ոչ իներտ անտարբերութիւն. — Քաղաքական հորիզոնը. — Վտանգալի հեռանկար եւ մեր բացառիկ վիճակը.—Ապրել՝ նախ եւ առաջ.--Ի՞նչ ենք ձեռնահում. — Հայի պատմութիւնը՝ յաւիտենական վերսկսումն. — Ժողովուրդ եւ յեղափոխական. — Հայ զանգուածը նոյնքան մասալիտ, որքան իր դրացին. — Ինքնապաշտպանութիւնը Ռուսական Հայաստանում — V Համագումարի որոշումը. — Ազգովին հիզ. . . . 108—133

III

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԴԱՒԱՆԱՆՔԸ

Շովինիզմի վէրքը. — Նրա արտայայտութիւնները Կիլիկիայում. — Հոգեբանական պատճառներ.—Հայ ազգասիրութեան աւետարանը. — Ազգասէրի տիպը Պոլսում ու Կովկասում. — Մտաւոր չքաւորութեան հետ՝ սանձարձակ գոռոզութիւն. — Արքայակուլտը մեր մէջ. — Սեփական ուժերի գերգնահատում. — Ճշմարիտ հայրենասիրութեան դաւանանքը. — Ի՞նչ է „հայրենիքը". — Դաշնակցական հայրենասիրութիւնը. — Երեք հատուածների միութիւն. —

ԵՐԵՍ

Վախճանական իդէալը.—Զինզօները եւ Մօնտեսկիօն. — „Հաւաքական“ հայրենիքները — Թիւրքիա, Ռուսաստան, Պարսկաստան. — Մեր դիրքը նրանց վերաբերմամբ. — Միութեան եւ խաղաղ առաջադիմութեան ջահակիր . 134—158

IV

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑ

Ռ Ո Ւ Ս Ա Ս Տ Ա Ն

Ընդհանուր ակնարկ.—Ազգային հարցը եւ համաշխարհային էւօլիւցիայի ձգտումը.—Հոսանքներ.—Մեր ազգային զան-գատի նիւթը՝ նոյնն է երեք միջավայրում. — Ռուսական յեղափոխութիւնը, նրա վայրկենական յաղթանակը եւ նրա վիժման պարագաները. — Դրական հետեւանքներ՝ ազգային դատի տեսակէտից. — Յետաշրջում. — Նոր կուրսը.—Գօլիցինեան քամիներ.— Սադրանքները դպրոցի ու եկեղեցու դէմ, հալածանքը հայ մտաւորականութեան դէմ. — „Դաշնակցութեան“ ուրւականը. — Դիմադրու-թեան կազմակերպումն. — Ազգամիջեան ու միջկուսակ-ցային համերաշխութիւն. — „Ազգերի ինքնորոշումը“, որպէս ընդհանուր նշանաբան . . . . 159—230

V

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑ

Թ Ի Ւ Ր Ք Ի Ա

Ազգամիջեան կացութիւնը Եւրոպայում եւ Թիւրքիայում.— Ատօմիստական-կենտրօնական թէօրիա. — Կենտրօնացում եւ ապակենտրօնացում. — Ազգային-կուլտուրական ինք-նօրինութիւն. — Անհրաժէշտ, բայց ոչ բաւարար. — Ազ-գայնօրէն ամբողջացած շրջաններ. — Ազգը՝ օժտուած

ԵՐԵՍ

պետական վարչական ֆունկցիաներով. — Փոքրամասնութեան իրաւունքները. — „Քրդական վտանգը“. — Ապագան . . . . 231—255

VI

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՐՑ

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԴՊՐՈՑ

Աստուածպետական սկզբունքը Ռուսաստանում ու Թիւրքիայում. — Շարիաթ. — Կրօն եւ կղեր. — Քրիստոնէական հաւատամքը. — Եկեղեցիների դերը պատմութեան մէջ.— Արեւմտեան յեղաշրջումները եւ կրօնական գաղափարը.— Ազատ մտքի նուաճումները.—Կրօն եւ գիտութիւն՝ հակամարտ. — Կրօնն ու կղերը հայոց կեանքում. — „Դաւանակցութիւն“ եւ Հայաստանեայց եկեղեցի. — Քրիստոնէական մորալի պատուիրանները՝ մեր կեանքում. — Քրիստոնէութիւնը եւ աշխարհի իրաւազուրկները. — „Ազգութեան“ թէորիան.—Աշխարհիկ կրթութեան ուժը . 256—290

VII

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑ

ՍՕՑԻԱԼԻԶՄ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ

Աշխատաւորական շարժումը եւրոպական Թիւրքիայում ու Կովկասում.—Ի՞նչ է սօցիալական հարցը. — Համաշխարհային զարգացման փուլերը. — Երեք ընդհանուր հեղինակութիւններ. Կրօն, Միահեծանութիւն եւ Փող.— Սօցիալիզմի գաղափարը հայկական միջավայրում. — Արծրունեան դպրոցը եւ աշխատաւորական դասը.—Սօցիալիզմը եւ դասակարգային բաղխումները պատմութեան մէջ. — Առանց այդ բաղխումների՝ չկայ առաջադիմութիւն. — Աշխատաւորական միջազգայնութիւնը եւ նրա քարոզը Թիւրքիայում.—Իդէալ եւ գործելակերպ . . . . 291—389

VIII

ՎԵՐՋԱԲԱՆ

ԵՐԵՍ

Յարատեւութեան ուժը. — Ազգային անհատականութիւն եւ տիեզերական նմանողութեան օրէնքը. — Ռուտին եւ շարժում. — Դրական եւ բացասական արժէքներ. — Մեր գաղափարային հայրերը. — Կուսակցութիւններ եւ կռիւ.—Երբեմն եւ այսօր. — Պատմութեան րիթմը. — Նոր կեանքի արշալոյսին . . . . 390—408

Վ Ր Ի Պ Ա Կ

Երես 41, տպւած է՝ այնուհետև (Արամեանը) տասնու-
հինգ տարի կրեց անտրտունջ... Պէտք է
լինի՝ տաս տարի։

» 47, տող 21, տպւած է՝ պաղ, խորունկ... Պէտք
է լինի՝ մռայլ, խոհուն։

» 61, տող 9. պէտք է լինի՝ Կուկունեանի խմբի...

» 145, ծանօթութեան տող 13. տպւած է՝ պարա-
գլուխները։ Պէտք է լինի՝ մ ի պ ա ր ա-
գ լ ո ւ խ ը։
Նոյն տողի մէջ պէտք է կարդալ. «հայ առա-
ջադիմականների և յեղափոխականների դէմ
վարած»...

» 156, ծանօթութեան մէջ տպւած է. Մարդիկ ծնւում
ու մեռնում են հաւասար։ Պէտք է լինի՝
Մարդիկ ծնւում ու մ ն ո ւ մ ե ն...

» 203, տող 3. ո ղ ջ մ տ ո ւ թ ի ւ ն բառը առնել
չակերտների մէջ։

» 366, Մէկ դարձւած կրկնւում է երկու անգամ։

«ԴՐՕՇԱԿԻ» ՏՊԱՐԱՆԻՑ ՆՈՐ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Ֆր. ս.

Ա. ԱՐԱՐԱՏՍԿԻ, **Ուղեցոյց ընկերներին** (ընթերցանութեան համար տեսական աշխատութիւնների ցանկ եւ հրահանգներ) . . . . — 30

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ, **Համաժողովրդական բանակ** . . . — 50

Rapport, prés. au Congrés S. I. de Copenhage
(„Դաշնակցութեան" զեկուցումը Կոպենհագի Միջազգ. Սոց. Համագումարին):
Նոյնը գերմաներէն լեզուով:

—

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

Մ. Վ.-ի

ՀՈՍԱՆՔՆԵՐ

Հ. Յ. Դաշնակցութեան 20-ամեակի առիթով, «Դրօշակի» խմբագրութիւնը մտադիր է հրատարակել Պատկերազարդ Ալբօմ հայ ժողովրդական դատի հարիւրաւոր նահատակների նկարներով ու հակիրճ կենդանագիրներով։ Գործը ըստ կարելւոյն լրիւ, ամփոփ և հրապուրիչ դարձնելու համար, յանձնարարւում է ընկերներին, ընթերցողներին, նահատակների մերձաւորներին՝ ղրկել լուսանկարներ և կենսագրական ճշգրիտ տեղեկութիւններ բոլոր այն դէմքերի մասին —նշանաւոր կամ անծանօթ— որոնք ընկել են 20 — 25 տարուց ի վեր հայոց ազատութեան մարտադաշտերում, Թիւրքիա, Կովկաս և Պարսկաստան։

[illegible]010

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0040337

ՀՀ Ազգային գրադարան
NL0040336